ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ–ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015

ՀԱՏՈՐ IX

ԵՐԵՎԱՆ

2016

ՀՏԴ 347.95
ԳՄԴ 67.410
Հ 247

Կազմողներ՝ **Աշխեն Ղարսլյան,** *ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական, իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դասախոս*

Կարեն Հակոբյան, *ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ*

Նանե Սահակյան, *ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ*

Անի Համբարձումյան, *ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ*

Հ 247 *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ: ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015.-Եր.: Տիգրան Մեծ, 2016. ՀԱՏՈՐ IX.- 848 էջ:*

ՀՏԴ 347.95
ԳՄԴ 67.410

ISBN 978-99941-0-753-7

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան
© Աշխեն Ղարսլյան (բովանդակության համար)
© Կարեն Հակոբյան (բովանդակության համար)
© Նանե Սահակյան (բովանդակության համար)
© Անի Համբարձումյան (բովանդակության համար)

german
cooperation
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Հարավային Կովկասում իրավական և դատական
բարեփոխումների համար խորհրդատվություն»
ծրագիր

Programm “Rechts-und Justizereformberatung im südkaukasus“

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային
համագործակցության ընկերության (GIZ)
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,
որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները

ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչումն ու պաշտպանությունը դարձել են ողջ միջազգային հանրության առաջընթաց զարգացման նախապայմանը, հստակ ուղենիշն ու իրավական պետության սկզբունքների կյանքի կոչման ցուցանիշներից մեկը, իսկ կենսունակ արդարադատության համակարգը մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության գլխավոր երաշխիքներից մեկն է:

Մարդու իրավունքների երաշխավորված իրացման ու արդյունավետ պաշտպանության ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանն (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) օժտված է բացառիկ առաքելությամբ: Այսպես, Վճռաբեկ դատարանը, կոչված լինելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների միջոցով ստեղծում է մեկ միասնական իրավական հարթություն այդ օրենքների տարաբնույթ դրույթների գործողության համար: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանն իր ամենօրյա գործունեությամբ ապահովում է հսկայածավալ իրավանորմերի կանխատեսելիությունը և կայունությունը՝ նպաստելով իրավական որոշակիության ու իրավական անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Ուրախությամբ պետք է փաստել, որ տարեցտարի արժևորվում է Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների նշանակությունը: Վճռաբեկ դատարանի որոշումներն այսօր արդեն ոչ միայն ուղղորդող նշանակություն ունեն դատական պրակտիկայի համար, այլև որոշ դեպքերում օրենսդրական նախաձեռնությունների հիմք են հանդիսանում՝ արդյունքում ձեռք բերելով նաև օրենսդրական գործունեության համար կողմնորոշիչ բնույթ: Հատկանշական է նաև Վճռաբեկ դատարանի որոշումների դերի բարձրացումն իրավագիտության ֆակուլտետներ ունեցող բուհերի ուսումնական գործընթացում, երբ տարբեր դասընթացների շրջանակներում պարտադիր է դարձել Վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը:

Վերոգրյալը պայմանավորում է դատավորներին, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների պաշտոնատար անձանց, փաստաբաններին, իրավագիտություն ուսումնասիրող կամ իրավագիտության հարցերով հետաքրքրվող անձանց և ընդհանրապես հասարակության լայն շրջանակներին Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները հասանելի դարձնելու անհրաժեշտությունը: Այս հարցում կարևոր նշանակություն ունեն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների ընտրանիները, որոնք հրատարակվում են յուրաքանչյուր տարի: Ընտրանիները ներառում են քաղաքացիական և վարչական գործերով Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ տարվա ընթացքում կայացված այն որոշումները, որոնք ելակետային նշանակություն ունեն նույնանման փաստական հանգամանքներով դատական գործերի քննության և ճիշտ լուծման համար: Նշված ընտրանիների գործնական կիրառությունը մեծապես պայմանավորված է նաև նրանով, որ դրանք պարունակում են ոչ միայն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների ամբողջական տեքստերը, այլ նաև յուրաքանչյուր որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համառոտագրությունները, որոնք զգալիորեն հեշտացնում են այս կամ այն հարցի շուրջ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի ձևավորած իրավական դիրքորոշումների ճանաչողության գործընթացը: Այս ընտրանիների հիման վրա հաշվետու տարում իրականացվեց նաև «datalex.am» կայքի նորացումը, որն այսուհետ բովանդակում է Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները՝ համաձայն ընտրանիների դասակարգիչների:

Սույն ընտրանին թվով իններորդն է: Այն ի տարբերություն նախորդների՝ ներկայացված է որոշակիորեն նոր ձևաչափով: Մասնավորապես, բովանդակում է ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում նախորդ տարվա ընթացքում կայացված որոշումները և այդ որոշումների

համառոտագրերը: Նման ձևաչափը, կարծում ենք, ավելի արդյունավետ է, քանի որ հնարավորություն է տալիս ընթերցողին մեկ աղբյուրից տեղեկանալ Վճռաբեկ դատարանի ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների մասին:

Եվ այսպես, ինչ նախադեպային դիրքորոշումներով նշանավորվեց 2015 թվականը:

Քաղաքացիական գործերով դարձյալ արդիական էին ընդհանուր սեփականության, գործարքների անվավերության, պարտավորությունների խախտման համար պատասխանատվության, ժառանգման ինստիտուտի որոշ խնդրահարույց հարցեր: Այսպես, գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ամուսնության ընթացքում ամուսինների միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա մի ամուսնու՝ մյուս ամուսնուց ձեռք բերված գույքի նկատմամբ կարող է գործել համատեղ սեփականության ռեժիմը: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով առուվաճառքի իրավահարաբերությունների առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ վաճառողը, վաճառելով իրեն սեփականության իրավունքով պատկանող որևէ ապրանք, իսկ գնորդը, դրամական հատուցմամբ գնելով այն, երկուստեք դադարեցնում են իրենց սեփականության իրավունքը համապատասխանաբար ապրանքի և դրամական միջոցների նկատմամբ, գտել է, որ այն դեպքում, երբ նման հարաբերություններ ծավալվում են ամուսինների միջև, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը չի կարող գործել:

Մեկ այլ գործով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը զարգացրել է էական մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի անվավերության հիմքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Հատկանշական է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով պայմանագրով նախատեսված տուժանքի տոկոսադրույքը նվազեցնելու խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը, որում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը նշված հոդվածի հիմքով կարող է միայն պակասեցնել տուժանքի գումարի չափը, այլ ոչ թե նվազեցնել պայմանագրով (համաձայնագրով) սահմանված տուժանքի տոկոսադրույքը: Նշված որոշման շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերության կողմից փաստաբանի ծառայություններից օգտվելու և փաստաբանի խելամիտ վարձատրության՝ որպես դատական ծախսի փոխհատուցման հնարավորությանը:

Որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել պարտապանի մահվան դեպքում պարտատիրոջ կողմից օրենքով նախատեսված անձանց պահանջի ներկայացման ժամկետի բաց թողնման պարագայում այդ ժամկետի վերականգնման հարցի հնարավորության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին, հետևաբար ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատիրոջ կողմից պահանջը չներկայացնելու դեպքում վերջինս զրկվում է հետագայում պարտապանի ժառանգների դեմ իր պահանջը ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունից:

Գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք բոլոր դեպքերում է, որ ապահովադիր համարվող անձի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի հուզական լարված վիճակում գտնվելը կարող է դասվել ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ հայտնելու պարտականության չկատարման բացառությունների շարքին: Սնարամասն վերլուծելով օրենքով սահմանված բացառությունների դեպքերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման բացառություն է ապահովադիրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի՝ պատահարի հետևանքով անգիտակից վիճակում հայտնվելը, որպիսին, սակայն, չի կարող գնահատվել նշված անձանց՝ հուզական լարված վիճակը:

Ուղղորդող նշանակություն ունի նաև ապօրինի դատապարտման արդյունքում

պատճառված վնասների հատուցման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը, որում անդրադարձ է կատարվել արդարացվածի՝ ապօրինի դատապարտման արդյունքում կրած նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի՝ որպես սահմանադրական հիմնարար իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմաններին: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ իրավական համակարգում ապօրինի դատապարտման դեպքում փաստաբանին վճարված գումարների մասով հատուցման իրավունք ունեցող սուբյեկտների հարցին՝ նշելով, որ նման իրավունք ունի ոչ միայն արդարացվածը, այլև նրանք, ովքեր, ՀՀ օրենսդրության համաձայն, իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան: Անդրադարձ է կատարվել նաև փաստաբանին վճարված գումարները Հայաստանի Հանրապետության կողմից լրիվ ծավալով փոխհատուցման ենթակա լինելու, փաստաբանին վճարված գումարների բռնագանձման հայցապահանջներով արդարացվածից պետական տուրք գանձելու հարցերին, ինչպես նաև այն իրավական խնդրին, թե արդյոք արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ուղղորդող նշանակություն ունեն սնանկության ինստիտուտի առանձին վիճահարույց հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Հատկանշական է Վճռաբեկ դատարանի այն որոշումը, որով, անդրադառնալով պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում իր պահանջների բավարարման համար դատական կամ արտադատական կարգով գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու հարցին, Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ բացառապես գրավադրված գույքի հաշվին, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Մինչդեռ այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության վարույթի շրջանակներում իր պահանջների բավարարում ստանալու եղանակը, ապա գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և այս դեպքում գրավով ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Ուշադրության արժանի է այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը հանգամանալից վերլուծել է բաժնետիրական ընկերության տնօրենի կարգավիճակը՝ անդրադառնալով նաև այն հարցադրմանը, թե իրավաչափ է արդյոք բաժնետիրական ընկերության միանձնյա գործադիր մարմնի (ընկերության տնօրենի, գլխավոր տնօրենի) լիազորությունները բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կողմից ցանկացած ժամանակ վաղաժամկետ դադարեցնելը (ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելը): Համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ կիրառման ենթակա դրույթները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ բաժնետիրական ընկերության և վերջինիս միանձնյա գործադիր մարմնի՝ տնօրենի միջև կնքված պայմանագիրն իր բնույթով չի հանդիսանում զուտ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված՝ աշխատանքային պայմանագիր, քանի որ այն չի կնքվում ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված գործատուի և աշխատողի միջև, սակայն կարող է պարունակել նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող կարգավորումներ, հաշվի առնելով, որ բաժնետիրական ընկերության ֆիզիկական անձ գործադիր մարմնի և ընկերության միջև հարաբերություններում առկա են նաև աշխատանքային հարաբերությունների տարրեր: Հաշվի առնելով բաժնետիրական ընկերության տնօ-

րենի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հնարավորությունը բխում է բաժնետիրական ընկերության բաժնետերերի շահերից, իսկ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել ձեռնարկատիրական գործունեության զարգացման ռազմավարության և մարտավարության փոփոխությամբ, կամ ընկերության ղեկավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, կամ գործունեության նոր ուղղությունների ընտրությամբ, կարող է պայմանավորված լինել ընկերության, որպես քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցի, իրավական կարգավիճակի և գույքային դրության փոփոխությամբ, ինչպես նաև այլ պատճառներով, որոնց սպառիչ և ամբողջական ցանկը հնարավոր չէ նախապես սահմանել:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականին ընդունված մի շարք որոշումներում անդրադարձ է կատարել նաև քաղաքացիական դատավարության մի շարք ինստիտուտներին: Ուշագրավ է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցին, թե արդյոք հայցի ապահովման միջոցներից արգելանքը պետք է պահպանվի ամբողջ ծավալով, այն պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն և վճռվել է բռնագանձումը տարածել միայն կոնկրետ գույքի վրա:

Հիշատակման արժանի է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ճանաչման ներկայացնելու ժամկետների վերաբերյալ՝ արձանագրելով, որ ներպետական օրենսդրությամբ այդպիսի ժամկետ սահմանված չէ: Միաժամանակ նշված որոշման շրջանակներում անդրադարձ է կատարվել այն խնդրին, թե որ պահից պետք է հաշվարկել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ կատարողական թերթն առաջին անգամ հարկադիր կատարման ներակայացնելու մեկամյա ժամկետը՝ օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու, թե այդ դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտը, ապա այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

2015 թվականը հատկանշական էր նաև վարչական գործերով ընդունված որոշումների նշանակությամբ: Առանձնահատուկ կարևորություն ունի գործերից մեկով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում ձեռք բերված տեսանյութի կամ լուսանկարի հիմքով տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու փաստի հաստատման իրավական հնարավորության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված իրավաչափ վարքագիծ ընտրելու վարորդի հնարավորությունը, տրանսպորտային միջոցի վարորդին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանի՝ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելու մասին խոսք լինել չի կարող, եթե իրավախախտումը հիմնավորող ապացույցը (տեսանյութը

կամ լուսանկարը) հնարավորություն չի տալիս հաշվի առնել դրանում արձանագրված իրավիճակում գտնվող երթևեկության մյուս մասնակիցների՝ տրանսպորտային միջոցների վարորդների և հետիոտների դրսևորած վարքագիծը, քանի որ առանց ստեղծված իրավիճակում երթևեկության մյուս մասնակիցների վարքագիծը հաշվի առնելու՝ հնարավոր չէ պարզել՝ արդյոք վարորդի դրսևորած արարքը պայմանավորված չի եղել երթևեկության անվտանգությունն ապահովելու, վթարային իրավիճակը նախականխելու անհրաժեշտությամբ, այսինքն՝ արդյոք վարորդը տվյալ դեպքում չի ընտրել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններում սահմանվածից տարբերվող՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված այլ իրավաչափ վարքագիծ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը նախադրյալ հանդիսացավ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2015 թվականի ՀՕ–178–Ն օրենքով փոփոխություն կատարելու համար:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «խաչմերուկ» հասկացության բովանդակության բացահայտմանը և խաչմերուկի անցման կանոնների խախտումը տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված լինելու դեպքում երթևեկության մասնակցին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանների վեր հանման խնդրին: Որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել իր աշխատանքային պարտականությունները կատարող սուբյեկտի՝ վարչական պատասխանատվության ենթակա լինելու հարցի վերաբերյալ այն դեպքում, երբ վերջինս Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարում է առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու:

Ուղղորդող նշանակություն ունեն հաշվետու տարվա ընթացքում կայացված որոշումներից մեկով ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի ելքով շահագրգռված երրորդ անձանց լսված լինելու իրավունքի իրացման առանձնահատուկ իրավակարգավորումների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Ապրանքային նշանների իրավական պահպանության ինստիտուտին վերաբերող մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձը չի կարող իրավական շահագրգռվածության բացակայության պարագայում դիմել դատարան՝ ապրանքային նշանի չօգտագործման հիմքով դրա գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով:

Հարկ է առանձնացնել վարչական գործերից մեկով կայացված այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ օրենսդրական համակարգում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման իրավական կառուցակարգի առանձնահատկությունների վերլուծությանը:Վարչական գործերով հատկանշական են միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այսպես, նման որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը միջազգային իրավական և սահմանադրաիրավական համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում արձանագրել է, որ բողոքարկման իրավունքը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչներից մեկը, հետևաբար գտել է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորությունն անհամատեղելի է անձի դատական պաշտպանության իրավունքի հետ: Արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գործի վարույթը կար-

ձելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման և ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերելի են (mutatis mutandis) խնդրո առարկա որոշմանը: Հատկանշական է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը վերաքննության կարգով նույն դատարանի կողմից վերանայման խնդրի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործող կարգավորումը չի բխում բողոքարկման իրավունքի գործնականում իրացմանն ուղղված օրենսդրական կարգավորումների համակարգային տրամաբանությունից, ուստի և եզրահանգել է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով ոչ թե վարչական դատարան, այլ՝ վարչական վերաքննիչ դատարան:

Ուշագրավ է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործի քննության ընթացքում գործով պատասխանող նոտարի լիազորությունների դադարման, այդ թվում նաև՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում վերջինս պետք է փոխարինվի իրավահաջորդով, թե՝ պատշաճ պատասխանողով: Վճռաբեկ դատարանը դատավարական նշված ինստիտուտների համակողմանի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ նման իրավիճակում նոտարը պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով, որպիսին կարող է լինել ՀՀ նոտարական պալատը:

Իրավակիրառ պրակտիկայի համար ուղղորդող նշանակություն ունի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ակնհայտորեն հայց ներկայացնելու իրավունք չունեցող անձի կողմից հայցադիմումը ներկայացվելու դեպքում դրա ընդունումը մերժելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ հայցադիմումի ընդունելիության փուլում ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի միայն ընդհանրական ուսումնասիրության արդյունքում է վարչական դատարանն իրավասու հանգել այն եզրակացության, որ հայցը ներկայացվել է ակնհայտորեն նման իրավունք չունեցող անձի կողմից:

Քաղաքացիական գործերով ևս միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներում արտահայտվել են առանցքային դիրքորոշումներ: Մասնավորապես, որոշումներից մեկում անդրադառնալով դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշման բողոքարկման հնարավորության հարցին, Վճռաբեկ դատարանը գտել է, որ անմիջական կարգով բողոքարկման ենթակա է դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի կողմից կայացված որոշումը, մինչդեռ ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում ենթակա են կիրառման հետաձգված բողոքարկման կանոնները: Մեկ այլ որոշման շրջանակներում էլ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք բողոք բերած անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն այն պարագայում, երբ դատական ակտը բողոքարկել է միայն դատական ծախսերի մասով: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույքային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար, այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ, այլ ուղղված է վարույթի կանոնա-

վոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը, օրինակ՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում:

Իհարկե, վերը թվարկված որոշումներն ամբողջը չեն և առկա են նաև բազմաթիվ այլ գործեր, որոնցով կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանում:

Ընտրանին ներառում է նաև լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Հուսով եմ, որ սույն ընտրանին, ինչպես և նախորդները, շարունակելու է նպաստել կայացված նախադեպային որոշումների հասանելիության և կիրառության ապահովմանը, խթանելու է դատավորների և դատական ծառայողների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, իրավակիրառ հանրության այլ ներկայացուցիչների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատի նախագահ
Ե. Հ. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Թիվ 9 Հունվար-դեկտեմբեր 2015

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ 1
Ընդհանուր սեփականություն 1
Գործարքներ 39
Հայցային վաղեմություն 70
Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին 79
Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար 79
Պայմանագրերից ծագող պարտավորություններ 101
Ապահովագրություն 101
Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ 111
Անհիմն հարստացում 149
Ժառանգման իրավունք 157

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 181

ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ 200

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 236

ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 246

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՈՒՄ 255

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 290

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՑՈՒՄՆԵՐ 299

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 316

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 330

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼԸ 350

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 361
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ 394
ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ 440
ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 452
ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 471
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ 485
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ 507
ԼԻՑԵՆՁԱՎՈՐՈՒՄ 517

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 526

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 526
ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ 560
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 597

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱՎՈՐԻ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԸ 609
ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 617

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ 625
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 640
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 671

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ընդհանուր սեփականություն

30.04.2015թ.

1. «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ v. Վահե Բարսեղյան և Ռոստոմ Բարսեղյան, քաղ. գործ թիվ ԼԴ/0221/02/11 **էջ 1–8**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական խնդրին, թե արդյոք դատարանի կողմից ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու հայցապահանջը կարող է մերժվել այն հիմքով, որ պարտատերը չի ապացուցել ոչ պարտապան համասեփականատիրոջ հրաժարումը՝ գնելու պարտապան համասեփականատիրոջ բաժինը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200–րդ, 197–րդ հոդվածները, նշել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պարտատիրոջ պահանջի իրավունքը ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200–րդ հոդվածի 1–ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Նման իրավակարգավորումը, Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ, նպատակ է հետապնդում ապահովել ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում:

Օրենսդիրը, ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների համար իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ սահմանելով հանդերձ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում, այն է՝ ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության, ինչպես նաև ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից պարտապանի բաժինը գնելուց հրաժարվելու պարագայում, նախատեսել է այդ իրավունքների սահմանափակման հնարավորություն, որի նպատակն է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների և պարտատիրոջ իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելը: Նման իրավիճակում օրենսդիրը պարտատիրոջ իրավունքների պաշտպանության միակ հնարավոր միջոց է համարել պարտատիրոջ իրավունքը՝ պահանջելու ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով վաճառել՝ դրանից ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաշխելով և բռնագանձումը պարտապանի բաժին գումարի վրա տարածելով:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,

3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ համասեփականատեր պարտապանի բաժինը ձեռք բերելու մյուս համասեփականատիրոջ (համասեփականատերերի) ցանկության դրսևորումն առաջնահերթ պայմանավորված է նրան գործի քննությանը պատշաճ ծանուցելու հանգամանքի հետ, այսինքն՝ գործի քննության ընթացքում նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ[1] և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով[2] երաշխավորված «լսված լինելու» իրավունքի ապահովման հետ:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում պարտատիրոջ կողմից ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներին պարտապանի բաժինը գնելու առաջարկ ներկայացնելը և համապատասխանաբար այդ առաջարկին արձագանքելն իրականացվում են դատարանի անմիջական մասնակցությամբ: Նշված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, միաժամանակ վերահաստատելով իր նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը: Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Միցակցային դատավարության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն, քանի որ այդպիսի հնարավորությունն է կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցումը՝ վերջիններիս նյութական իրավունքների իրացման կարևոր նախապայման է:

---

[1] Սույն բաժնում ՀՀ Սահմանադրությունը վկայակոչված է 27.11.2005թ. փոփոխություններով:

[2] Այսուհետ սույն բաժնում՝ Կոնվենցիա:

30.04.2015թ.

2. Ստանիսլավ Հովակիմյան v. Արտաշես Դավթյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1791/02/11 **Էջ 9–27**

Խնդիր. 1) Արդյո՞ք ամուսնական պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417–րդ հոդվածի 4–րդ կետի իրավանորմի իմաստով կարող է դիտարկվել որպես պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնություն և այդ հիմքով անվավեր ճանաչվել.

2) արդյո՞ք ամուսնության ընթացքում ամուսինների միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա մի ամուսնու՝ մյուս ամուսնուց ձեռք բերված գույքի նկատմամբ կարող է գործել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201–րդ հոդվածի 1–ին կետով սահմանված համատեղ սեփականության իրավական ռեժիմն ընդհանրապես, և մասնավորապես, այն դեպքում, երբ այդպիսի պայմանագրի կնքումն ամուսիններից մեկի համար կրել է պարտադիր բնույթ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 27–րդ հոդվածի, 28–րդ հոդվածի 1–ին մասի, 31–րդ հոդվածի 1–ին մասի և 33–րդ հոդվածի 1–ին մասի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ամուսնական պայմանագիրը գործարք է, որն ունի առանձնահատուկ սուբյեկտային կազմ և կարգավորման առարկա: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել բացառապես ամուսնացող կամ արդեն իսկ ամուսնացած անձանց միջև՝ համապատասխանաբար ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ամուսնական պայմանագրի կարգավորման առարկան ամուսինների գույքային դրությունն է: Մասնավորապես, կնքելով նման պայմանագիր, ամուսինները կարող են փոփոխել համատեղ սեփականության օրենքով սահմանված ռեժիմը՝ նախատեսելով ամուսնության ընթացքում ձեռք բերվող գույքի նկատմամբ ամուսինների բաժնային կամ յուրաքանչյուրի անհատական սեփականության իրավունքը: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նաև որոշել միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտների ստեղծմանը մասնակցելու, նրանցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսերը հոգալու կարգը:

Վերը շարադրվածը, համաձայն Վճռաբեկ դատարանի եզրահանգման, վկայում է ամուսնական պայմանագրի կարգավորիչ գործառույթի մասին: Ամուսնական պայմանագիրը, սակայն, իրականացնում է ոչ միայն կարգավորիչ, այլև ապահովող գործառույթ: Ամուսնական պայմանագրի ապահովող գործառույթը նախ և առաջ արտահայտվում է ամուսիններից յուրաքանչյուրի գույքային ինքնուրույնության երաշխավորմամբ, որը հատկապես կարևորվում է քաղաքացիական շրջանառությանը մասնակցելիս, ինչպես նաև ամուսնության լուծման դեպքում:

Միևնույն ժամանակ օրենսդիրը, ելնելով քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքից, նկատի ունենալով հասարակական հարաբերությունների բազմազանությունը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ամուսնության ընթացքում ամուսիններից յուրաքանչյուրի մոտ կարող են ծագել պարտավորական իրավահարաբերություններ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33–րդ հոդվածով նպատակ է հետապնդել պաշտպանելու պարտատերերի գույքային իրավունքներն ու օրինական շահերը՝ սահմանելով, որ ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման մասին պարտապան ամուսինը պարտավոր է ծանուցել իր պարտատիրոջը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապան ամուսնու կողմից ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման (դրանց բովանդակության) մասին պարտատիրոջ ծանուցումը կարևոր երաշխիք է վերջինիս շահերի պաշտպանության առումով, քանի որ այդպիսի պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման հետևանքով կարող է արմատապես փոփոխվել ամուսինների գույքի իրավական ռեժիմը, արդյունքում նաև՝ պարտապան ամուսնու գույքային դրությունը, որն իր հերթին կանդրադառնա պարտավորության կատարման ընթացքի վրա:

Պարտապան ամուսնու կողմից ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման մասին պարտատիրոջը չծանուցելու դեպքում նա պատասխանատվություն է կրում պարտատիրոջ առջև՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից, ինչը նշանակում է, որ շարունակում է գործել մինչև նման պայմանագրի կնքումը, փոփոխումը կամ լուծումն ամուսինների միջև գործող գույքային ռեժիմը:

Ամուսնական պայմանագիրը գործարք է, հետևաբար օրենսդրի կողմից ամրագրվել է կանոն առ այն, որ ամուսնական պայմանագրի նկատմամբ գործում են գործարքների անվավերության մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ պարտապան ամուսնու կողմից պարտատիրոջն ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման (դրանց բովանդակության) մասին չծանուցելու հանգամանքն ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչելու հիմք չէ, այլ հանգեցնում է այլ իրավական հետևանքների առաջացման, մասնավորապես՝ իրավունք է վերապահում պարտատիրոջը պահանջել պարտապան ամուսնուց կատարելու իր պարտավորությունները՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք են պայմանագրերը, **վնաս պատճառելը (դելիկտային պարտավորություններ)** և օրենքով նախատեսված դեպքերում ծագած այլ հիմքերը: Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով պարտավորությունը պատշաճ կատարելու պարտապանի պարտականությունը, միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանել է, որ համաձայնությունը, որը վկայում է պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար **պատասխանատվության վերացման կամ սահմանափակման մասին, առոչինչ է:**

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով պարտավորական իրավահարաբերությունների բնույթը, դրա սուբյեկտային կազմը, գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը կարգավորում է անմիջականորեն պարտապանի և պարտատիրոջ փոխհարաբերությունները: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված դրույթով օրենսդիրն ըստ էության ամրագրել է հստակ իրավական հետևանք նախապես կնքված այնպիսի համաձայնության վերաբերյալ, որը վերացնում կամ սահմանափակում է **պարտապանի և պարտատիրոջ** միջև արդեն իսկ ծագած պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը: Օրենսդիրը նման համաձայնությունը կնքման պահից ճանաչում է առոչինչ:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով **նախատեսված համաձայնությունը կարող է կնքվել բացառապես պարտավորության կողմերի՝ պարտապանի և պարտատիրոջ միջև, այլ ոչ թե նրանցից յուրաքանչյուրի և երրորդ անձի միջև:**

Երկրորդ հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածները, արձանագրել է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը *(տե՛ս, նաև Ռաֆայել Աբազյանը և Անժիկ Երիցյանն ընդդեմ Ռոբեն Աբազյանի և «Կենտրոն» նոտարական գործարքի նոտարի թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը *(տե՛ս, նաև Ռուզաննա Ծատուրյանն ընդդեմ Գևորգ Սաղումյանի և այլոց թիվ ԵԱՔԴ/2304/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2006 թվականի որոշումը):*

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումներն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսանալու և այդ հարցում առկա բացառությունների վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ և իրավական դիրքորոշում արտահայտել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք ամուսինների միջև առուվաճառքի իրավահարաբերությունների պարագայում կարող է գործել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքա-

ցիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, **կամքի ինքնավարության** և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, **պայմանագրի ազատության**, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, **քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության,** խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով** և ի շահ իրենց: **Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման**:

Վկայակոչված սկզբունքների հռչակումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ: Ամրագրելով քաղաքացիական իրավահարաբերությունների հիմնարար, ելակետային դրույթները՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել առավելագույնս երաշխավորելու քաղաքացիական իրավահարաբերությունների բնականոն ընթացքը և շարունակական զարգացումը՝ միաժամանակ երաշխավորելով նաև այդ հարաբերությունների կայունությունը, խթանելով շուկայական տնտեսության ամրապնդումը:

Վերը նշված սկզբունքների դրսևորումներից է այն, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցները սեփական հայեցողությամբ են ընտրում միմյանց, ինչպես նաև ընտրում այն իրավահարաբերության տեսակը, որը ցանկանում են ծավալել միմյանց հետ փոխհարաբերություններում: Ընդ որում, նրանք կարող են կատարել օրենքով չարգելված ցանկացած գործողություն, ինչպես նաև կնքել ցանկացած գործարք:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, արձանագրել է, որ գործող իրավակարգավորումը որևէ արգելք չի նախատեսում ամուսինների միջև առուվաճառքի իրավահարաբերությունների ծագման առումով: Հետևաբար ամուսինները, որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցներ, ղեկավարվելով քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներով, կարող են ազատորեն միմյանց միջև առաջացնել առուվաճառքի հարաբերություններ համապատասխան գործարքի կնքմամբ:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ առուվաճառքի պայմանագիրն այն իրավական միջոցն է, որն ապահովում է ապրանքադրամական փոխանակության իրականացումը: Նշված պայմանագիրը կնքվում է գույքը սեփականության իրավունքով փոխանցելու նպատակով, ընդ որում՝ գույքը փոխանցվում է դրամական հատուցմամբ: Առուվաճառքի պայմանագրի առանձնահատկությունն այն է, որ վաճառողը, վաճառելով իրեն սեփականության իրավունքով պատկանող որևէ ապրանք, իսկ գնորդը, դրամական հատուցմամբ գնելով այն, երկուստեք դադարեցնում են իրենց սեփականության իրավունքը համապատասխանաբար ապրանքի և դրամական միջոցների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով առուվաճառքի իրավահարաբերություններ՝ վերը նշված առանձնահատկությունը, գտել է, որ այն դեպքում, երբ նման հարաբերություններ ծավալվում են ամուսինների միջև, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը գործել չի կարող: Հակառակ պարագայում խաթարվում է քաղաքացիական շրջանառության և մասնավորապես՝ առուվաճառքի բուն էությունը: Այսպես, գույքը վաճառող ամուսինը, վաճառելով իր գույքը և ստանալով դրա դիմաց փոխհատուցում և միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա դառնալով վաճառված գույքի համասեփականատեր, ըստ էության, կշարունակի մնալ իր իսկ կողմից օտարված գույքի սեփականատեր, և, ընդհակառակը, գույքը գնած ամուսինը, դառնալով առուվաճառքի առարկայի սեփականատեր, միաժամանակ կշարունակի մնալ իր իսկ կողմից վճարված դրամական միջոցների սեփականատեր՝ նկատի ունենալով, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ դրամը ևս գույք է և կարող է ներառվել ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում *(տե՛ս, նաև Սամվել Մելիքյանն ընդդեմ Առնեթ Ավաքյանի թիվ ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):* Մինչդեռ նման մոտեցումն առուվաճառքի իրավահարաբերություններում անթույլատրելի է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ քաղաքացիական օրենսդրությունը, հիմնվելով կողմերի կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության սկզբունքնե-

րի վրա, այդուհանդերձ, որոշակի իրավահարաբերությունների շրջանակներում նախատեսել է պարտադիր կարգով պայմանագիր կնքելու պարտականություն: Պարտադիր կարգով պայմանագրի կնքումը կախված չէ կողմի կամ կողմերի ազատ կամահայտնությունից: Դրա կնքումը պարտադիր է կամ մեկ կամ երկու կողմի համար: Պարտադիր կարգով պայմանագիր կնքելու պարտականությունը կարող է անմիջականորեն բխել օրենքից: Նշվածը հատկապես դրսևորվում է սնանկության վարույթի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը, 75-րդ հոդվածի 1-ին մասը, 77-րդ հոդվածի 1-ին մասը, 80-րդ հոդվածի 1-ին մասը, նշել է, որ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելուց հետո կառավարիչը ձեռնամուխ է լինում վերջինիս գույքի հարկադիր վաճառքին: Ընդ որում, վաճառքը կարող է իրականացվել կամ հրապարակային սակարկությունների միջոցով, կամ ուղղակի եղանակով: Այդպիսի վաճառքի արդյունքում ստացված միջոցները սնանկության վարույթի շրջանակներում բաշխվում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան:

Վերը շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ ամուսիններից մեկը սնանկ է ճանաչվել, և նրա լուծարման վարույթի շրջանակներում կառավարիչը հարկադիր կարգով իրականացնում է վերջինիս պատկանող գույքի վաճառք, այդ կապակցությամբ կնքվող պայմանագրերը չեն կարող լինել սնանկ ճանաչված ամուսնու ազատ կամահայտնության արդյունք և վերջինիս համար կրում են պարտադիր բնույթ: Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ այդպիսի պայմանագրերի նկատմամբ ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը գործել չի կարող, ինչը մի կողմից բխում է վերը շարադրված պատճառաբանություններից, մյուս կողմից պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկություններով: Այսպես, սնանկության վարույթի շրջանակներում պարտապան ամուսնու գույքը մյուս ամուսնուն վաճառելու դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը կիրառելու արդյունքում կստացվի, որ պարտապան ամուսինը ձեռք է բերում որոշակի գույք, որը ևս պետք է ընդգրկվի սնանկության վարույթի շրջանակներում վերջինիս գույքային զանգվածում և կրկին պետք է հարկադիր կարգով իրացվի, ինչը հակասում է այս գործընթացի տրամաբանությանը: Մյուս կողմից՝ ոչ պարտապան ամուսինն է համատեղ սեփականության իրավունք ձեռք բերում պարտապան ամուսնու գույքի հարկադիր վաճառքից ստացված դրամական միջոցների նկատմամբ և կարող է ներկայացնել որոշակի հավակնություններ, ինչն էլ կարող է իր հերթին հանգեցնել պարտատերերի իրավունքների խախտման: Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության վարույթի բնականոն ընթացքն ապահովելու նկատառումով պետք է բացառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմի կիրառումն այն դեպքում, երբ սնանկ ճանաչված ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող գույքը հարկադիր կարգով վաճառվում է մյուս ամուսնուն:

17.07.2015թ.

3. Ռոբերտ Խանդանյան v. «Դավիթ Հովհաննիսյան» ՍՊԸ, երրորդ անձ Դավիթ Հովհաննիսյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0274/02/14 **Էջ 28–38**

<u>Խնդիր.</u> 1) Արդյո՞ք ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու գործերով դատարանն իրավունք ունի քննարկման առարկա դարձնելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված կանոնները, եթե ներկայացվել է միայն բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջ.

2) արդյո՞ք ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջել ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումներին, նախկինում կայացրած որոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով

առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնություն**:** Միաժամանակ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ**,** քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն՝ մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա **համաձայնությամբ,** բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի *(տե՛ս, Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):*

Ջարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը *Նելլի Հարությունյանն ընդդեմ Աղաջան Ավագյանի թիվ ԵԷԴ/1661/02/09 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ* նշել է, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի նկատմամբ դադարում է:

Վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումներին, նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կանոնը, համաձայն որի՝ «ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն **իրավունք ունի** վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ» չպետք է մեկնաբանել որպես նշված պայմանների առկայության դեպքում դատարանի՝ տվյալ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու հայեցողական լիազորություն: Հիշյալ նորմում «իրավունք ունի» ձևակերպումը անհրաժեշտ է մեկնաբանել միայն որպես մինչ նույն հոդվածի 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքներն ապացուցված լինելը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու արգելք, իսկ հիշյալ 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքների ապացուցված լինելու դեպքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի համար ծագում է պարտականություն գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կայացնելու համար *(տե՛ս, Ազնիվ Մինասյանն ընդդեմ Օդարուհի Կիրակոսյանի և այլոց թիվ ԵԿԴ/3249/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գույքից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջն ինքնըստինքյան չի կարող ենթադրել դրա անհնարինության դեպքում բաժնի արժեքը վճարելու պահանջ, քանի որ բաժինը բնեղենով առանձնացնելու դեպքում սեփականատերը պահպանում է բաժնի նկատմամբ իր սեփականության իրավունքը, մինչդեռ բաժնի արժեքի փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնի նկատմամբ դադարում է: Այլ կերպ ասած՝ անձը, ցանկություն հայտնելով առանձնացնել իր բաժինն ընդհանուր սեփականությունից, պարտավորված չէ բաժինն առանձնացնելու անհնարինության դեպքում պահանջել դրա արժեքի վճարում, և հետևաբար նաև իր սեփականության իրավունքի դադարեցում:

Նշվածով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ

գույքից բաժինն առանձնացնելու գործերով յուրաքանչյուր դեպքում էական նշանակություն ունի պարզել այդպիսի պահանջ ներկայացրած անձի իրական կամքը, ինչը դատարանները պետք է իրականացնեն հայցի հիմքն ու առարկան ճշգրտելով:

Վճռաբեկ դատարանը, նաև վերլուծելով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետը, 274-րդ հոդվածը, 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 191-րդ հոդվածի 1-ին կետը, 192-րդ հոդվածի 1-ին կետը, փաստել է, որ բաժնային սեփականության իրավունքով մեկից ավելի անձանց պատկանող գույքի տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը պետք է իրականացվեն բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում գույքը կարող է տիրապետվել և օգտագործվել դատարանի սահմանված կարգով:

Վերոգրյալով է պայմանավորված ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից իր տիրապետության ներքո գտնվող գույքի նկատմամբ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ընդդեմ այն անձանց, որոնց գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը պատշաճ իրականացնելու իր օգտագործման, տիրապետման, տնօրինման իրավազորությունները: Սեփականատերն իրավասու է պահանջել վերացնելու իր սեփականատիրական իրավունքները լիարժեք իրականացնելու հետ կապված սահմանափակումները, ընդ որում, սահմանափակումները կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, երբ ապօրինի գործողությունների միջոցով խոչընդոտում են սեփականատիրոջը օգտագործել, տիրապետել և տնօրինել իր գույքը:

Վերը նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն այլ անձանց կողմից ապօրինի տիրապետվելու պայմաններում բաժնային սեփականության մասնակիցներից որևէ մեկը զրկված չէ իր գույքն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու հնարավորությունից:

ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

30.04.2015թ.

4. Ասյա Դավթյան և մյուսներ v. Կարինե Սիրեկանյան, քաղ. գործ թիվ ԵԱԴԴ/0134/02/13 **Էջ 39-51**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջների քննության առանձնահատկություններին այն պարագայում, երբ որպես շինծու գործարքով քողարկված իրավահարաբերություն վկայակոչվում է հիմնական պարտավորության կատարման ապահովմանն ուղղված լրացուցիչ պարտավորությունը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը նախ վերահաստատել է նախկինում արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց *(տե՛ս, «Սինկրիստալ» ՍՊԸ-ն ընդդեմ Գագիկ Բղդոյանի և մյուսների թիվ 3-623(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը նշված դիրքորոշումը, նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հայցապահանջով ապացուցման առարկան կազմում են հետևյալ փաստերը.

– օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.

– այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).

– գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը.

–վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.

–կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի ընդհանուր կանոնի համաձայն՝ նշված հանգամանքները պետք է ապացուցի այդ փաստերը վկայակոչող կողմը (*տե՛ս, Նոնյա Առաքելյանն ընդդեմ Քնարիկ Սարտիրոսյանի և մյուսների թիվ ԵԱՔԴ/1299/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ այն դեպքերին, երբ որպես շինծու գործարքով քողարկված իրավահարաբերություն վկայակոչվում է հիմնական պարտավորության կատարման ապահովմանն ուղղված պարտավորությունը (օրինակ՝ գրավի, երաշխավորության, երաշխիքի և այլն):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտավորությունների կատարման ապահովման միջոցները նպատակաուղղված են օժանդակելու իրենց նախատեսման համար հիմք ծառայած պարտավորության կատարմանը, այդ իսկ պատճառով էլ պարտավորությունների ապահովման միջոցներից որևէ մեկն ինքնուրույն գոյություն ունենալ չի կարող:

Վերը նշված առանձնահատկության հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ որպես շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառում շահագրգիռ անձը դատարանից պահանջել է կիրառել պարտավորության կատարման ապահովման միջոցներից որևէ մեկի կանոնները, վերջինս նախ և առաջ պարտավոր է ապացուցել հիմնական պարտավորության առկայության փաստը:

17.07.2015թ.

5. Նելլի Հակոբյան և մյուսներ v. «Համխաչ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1013/02/13 **էջ 52–59**

<u>Խնդիր.</u> Վճռաբեկ դատարանն այս որոշմամբ անդրադարձել է էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի առանձնահատկություններին, այն անվավեր ճանաչելու իրավական հիմքերին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 290-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար Վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի վերլուծությանը, գտել է, որ էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես՝ գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հա-

րաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ կողմերը կամ նրանցից մեկը նկատի է ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ իր հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա *(տե՛ս, Գևորգ Ջուրունյանն ընդդեմ Դավիթ Քիթապազյանի, Վարազդատ Եղոյանի թիվ ԵՔԴ/0724/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մոլորությունը գործարք կնքած կողմի կամքի շեղումն է (կամքի խեղաթյուրումը) կամ շեղման արդյունքն է, որն ունի որոշիչ ազդեցություն գործարքի կնքման և (կամ) դրա կնքման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վրա: Այն, որպես կանոն, հիմնված է սխալ ենթադրության (պատկերացման) վրա: Մոլորության ազդեցության տակ կնքված գործարքում կողմի կամքը համապատասխանում է նրա կամահայտնությանը, սակայն այն ձևավորվում է գործարքի կնքման համար նշանակություն ունեցող հանգամանքների սխալ պատկերացման արդյունքում, որոնք կարող են պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով (օրինակ՝ անուշադրությունը, կրթության ոչ բավարար մակարդակը, գործարքի առարկայի կամ գործարքի այլ պայմանների մասին անհրաժեշտ տեղեկության բացակայությունը կամ դրա ոչ բավարար կամ թերի լինելը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ մոլորությունն էական է: Մոլորության էական կամ ոչ էական բնույթը դատարանը յուրաքանչյուր դեպքում պարզում է՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից և այն իրողությունից, թե որքանով է մոլորությունը նշանակալից, զգալի գործարքի տվյալ մասնակցի համար: Ընդ որում, էական նշանակություն ունեցող մոլորությունը պետք է առկա լինի գործարքի կնքման պահին, այլ ոչ թե ծագի գործարքը (պայմանագիրը) կնքելուց հետո որոշ ժամանակ անց:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ փաստել է, որ օրենսդիրը որպես գործարքն անվավեր ճանաչելու հիմք դիտել է ***գործարքի բնույթի կամ դրա առարկայի*** վերաբերյալ էական նշանակություն ունեցող մոլորությունը: Մինչդեռ գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն ունենալ չի կարող:

Գործարքի բնույթի վերաբերյալ մոլորությունը. Գործարքի բնույթը տվյալ գործարքի մի շարք հատկանիշների (պայմանների) համակցությունն է, որը հնարավորություն է տալիս տարբերել մեկ գործարքը մեկ այլ գործարքից: Այսինքն՝ գործարքի բնույթը, ըստ էության, գործարքի տեսակն է: Գործարքի բնույթի վերաբերյալ մոլորությունն առկա է այն դեպքում, երբ կողմը, որը գործել է մոլորության ազդեցության տակ, ի վերջո չի հասել այն նպատակի իրականացմանը, որին ուղղված է եղել նրա կամքը և որը նկատի է ունեցել գործարքը կնքելիս: Այլ կերպ ասած՝ գործարքը կնքած կողմերից մեկի կամքը (ցանկությունը) ուղղված է եղել որոշակի գործարքի կնքմանը, օրինակ՝ պահատվության պայմանագրի կնքմանը, մինչդեռ գտնվելով մոլորության ազդեցության տակ՝ կնքել է մեկ այլ գործարք, օրինակ՝ վարձակալության պայմանագիր:

Գործարքի առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները. Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարել նշել, որ գործարքի առարկա կարող են լինել ինչպես նյութական առարկաները (օրինակ, առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ որոշակի ապրանքը, անշարժ գույքը), այնպես էլ որոշակի գործողությունները (օրինակ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դեպքում՝ ծառայություններ մատուցելը, կապալի պայմանագրի դեպքում՝ համապատասխան աշխատանքների կատարումը): Հետևաբար գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ գործարքի առարկան իր է, այլ նաև այն դեպքում, երբ այն որոշակի գործողություն է:

Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը դրսևորվում է այն դեպքում, երբ կնքված գործարքի առարկան չի համապատասխանում այն հատկանիշներին, որը կողմը նկատի է ունեցել ի սկզբանե նման գործարք կնքելիս: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունն անհրաժեշտ է տարբերել այն իրավիճակից, երբ պայմանագրի կողմը թույլ է տալիս պայմանագրի առարկայի որակի պայմանին ներ-

կայացվող խախտում, օրինակ՝ առուվաճառքի պայմանագրով վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 472-րդ, 485-րդ, 486-րդ հոդվածներ), կապալի պայմանագրով կատարված աշխատանքները պատշաճ որակի չեն (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 718-րդ, 719-րդ, 721-րդ հոդվածներ): Նշված դեպքերը հանգեցնում են այլ իրավական հետևանքների (օրինակ՝ պայմանագրի լուծման, պայմանագրի գնի վերանայման և այլն):

Էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը (պայմանագիրը) կարող է վիճարկվել միայն այդ գործարքի (պայմանագրի) կողմ հանդիսացող անձի կողմից: Նման սահմանափակումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի դեպքում կողմի կամքի խեղաթյուրման փաստի առկայության մասին օբյեկտիվորեն կարող է փաստարկել միայն այն անձը, ով գտնվել է էական մոլորության ազդեցության ներքո:

28.12.2015թ.

6. Վահագն Կապլանյան v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ՀՀ ֆինանսների նախարարություն և մյուսներ, քաղ. գործ թիվ ԼԴ/0435/02/13 **Էջ 60–69**

<u>Խնդիր.</u> Հարկադիր աճուրդի անվավեր ճանաչման արդյունքում դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության դեպքում ո՞վ պետք է կրի աճուրդում հաղթած մասնակցի կողմից օրենքով սահմանված կարգով մուծված լոտի գնման գինը կազմող դրամական գումարը վերջինիս վերադարձնելու պարտականությունը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ կետը, 289-րդ հոդվածը, 303-րդ հոդվածի 1-ին կետը, 304-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ցանկացած քաղաքացիաիրավական գործարք կարող է դրա մասնակիցների համար առաջացնել ցանկալի իրավական հետևանքներ, եթե այն վավեր է, այսինքն՝ համապատասխանում է օրենքից բխող որոշակի պահանջների ու պայմանների: Այն դեպքում, երբ գործարքը չի համապատասխանում այդ պահանջներին, ապա այն համարվում է անվավեր կամ օրենքով սահմանված հիմքերով դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում (վիճահարույց գործարք), կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, քանի որ այդպիսի գործարքն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա, այսինքն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ օրենքով նախատեսված չեն:

Վկայակոչելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին և 5-րդ հոդվածները, 43-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածը, 29-րդ հոդվածի 1-ին մասը, 33-րդ հոդվածի 3-5-րդ մասերը, 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը, սահմանում է, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ որպես դատական ակտի հարկադիր կատարման միջոց, եզրափակվում է աճուրդի կամ ուղղակի վաճառքի միջոցով գույքը հարկադիր իրացնելով, որը կատարվում է նույն օրենքով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանում է, որ հարկադիր աճուրդը՝ որպես սակարկությունների ձև, կազմակերպվում և կատարողական թերթին համապատասխան անցկացվում է հարկադիր կատարողի կողմից, որն աճուրդում հաղթած մասնակցի հետ միասին աճուրդն անց-

կացնելու օրը ստորագրում է դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, իսկ աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի (որոշակի նկարագրություն, մեկնարկային գին և օրենքով նախատեսված այլ տվյալներ ունեցող աճուրդով վաճառվող գույքի կամ իրավունքի) գնման գինը համապատասխան հաշվին մուծելուց հետո նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված առուվաճառքի պայմանագրի կողմեր են հանդիսանում մի կողմից աճուրդում հաղթած մասնակիցը՝ որպես գնորդ, և մյուս կողմից հարկադիր կատարողը՝ որպես վաճառող, որը տվյալ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում հանդես է գալիս պետության անունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքում ամրագրել է նաև լոտի վերաբերյալ աճուրդի անվավեր ճանաչման հնարավորություն՝ սահմանելով, որ աճուրդը կարող է անվավեր ճանաչվել միայն դատական կարգով, ինչը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության: Վճռաբեկ դատարանը գտել է, որ լոտի վերաբերյալ աճուրդը դատական կարգով անվավեր ճանաչվելու արդյունքում դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության դեպքում կիրառելի են գործարքի անվավերության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված ընդհանուր կանոնները, որոնց համաձայն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկադիր աճուրդում հաղթող ճանաչված անձի հետ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա. աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է հարկադիր կատարողին վերադարձնել լոտը, իսկ հարկադիր կատարողը պարտավոր է աճուրդում հաղթած մասնակցին վերադարձնել վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով մուծած լոտի գնման գինը կազմող դրամական գումարը:

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

17.07.2015թ.

7. «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ v. Կարեն Մկրտչյան և Նարինե Ավետիսյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0526/02/13 **էջ 70-78**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք դատարան վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի ներկայացման փաստն ինքնին բավարար հիմք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի հիմքով հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու համար:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին *(տե՛ս, օրինակ, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողլյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):*

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը, 340-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, խախտված իրավունքների պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետներ նախատեսելով, միաժամանակ սահմանել է այդ ժամկետների ընդհատման ու կասեցման կարգը և հիմքերը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ և 340-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար անհրաժեշտ է սահմանված կարգով (օրենքով սահմանված կարգով) հայցը հարուցած լինելու հանգամանքի առկայությունը, այսինքն՝ երբ հայցը հա-

րուցվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջներին համապատասխան և ընդունվել է դատարանի կողմից**:** Ի տարբերություն հայցային վաղեմության ժամկետի ընդհատման վերը նշված հիմքի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե առհասարակ ներկայացվել է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Այսինքն՝ տվյալ իրավիճակում օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի կասեցումը պայմանավորել է վճարման կարգադրություն դատարան ներկայացնելու փաստով: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել փաստել, որ օրենսդրի կողմից նմանօրինակ տարբերակված մոտեցումն արդարացիորեն պայմանավորված է հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման և ընդհատման գործընթացներին և դրանց իրավական հետևանքներին բնորոշ մի շարք առանձնահատկություններով: Այսպես, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման էությունը կայանում է նրանում, որ վաղեմության ժամկետի մեջ չի հաշվարկվում այն ժամանակահատվածը, երբ անձը զրկված է եղել իր խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան հայց հարուցելու հնարավորությունից՝ օրենքում նշված պատճառների (հիմքերի) առկայության հետևանքով: Ընդ որում, կասեցման հիմք հանդիսացած հանգամանքի վերանալու դեպքում՝ դրանից անմիջապես հետո, վաղեմության ժամկետը շարունակում է հոսել: Ինչ վերաբերում է հայցային վաղեմության ընթացքի ընդհատմանը, ապա վերջինիս յուրահատկությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել վերստին:

Վերոգրյալից զատ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով նախատեսված կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել փաստել, որ վերջինիս բովանդակության վերլուծությունից միանշանակորեն ակնհայտ է դառնում, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե համապատասխան պահանջի վերաբերյալ ներկայացվել է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Ըստ այդմ, կասեցման ժամանակահատվածն իր մեջ ընդգրկում է վճարման կարգադրությունը դատարան հանձնելու պահից (կասեցման ժամանակահատվածի մեկնարկի պահ) մինչև դրա կապակցությամբ առարկություն ներկայացնելու պահն ընկած ժամանակահատվածը (կասեցման ժամանակահատվածի հնարավոր առավելագույն վերջնաժամկետ): Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար արդեն իսկ բավարար հիմք կարող է հանդիսանալ միայն վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացումը դատարան:

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից արված՝ «դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը» ձևակերպումը վերաբերում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման ժամանակահատվածին՝ դրա հոսքը սկսված և ավարտված համարելու պահերին, այլ ոչ թե պայմանավորում է բուն կասեցման հիմքի առկայությունը: Ի տարբերություն հայցային վաղեմության ժամկետի ընդհատման դեպքի, երբ պարտադիր կերպով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված հայցի հարուցում, հայցային վաղեմության ժամկետի կասեցման պարագայում այն օրենքի ուժով ինքնաբերաբար կասեցվում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը դատարան ներկայացնելու պահից և ավարտվում է դրա առնչությամբ առարկության ներկայացման պահով: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ դիմումի քննությունն այլ ընթացք է ստանում և առարկության ներկայացման պահն օբյեկտիվորեն վրա չի հասնում, ապա հայցային վաղեմության ժամկետի կասեցումն ուժի մեջ է լինում մինչև դատարանի կողմից որոշակի գործողությունների ձեռնարկումը, մասնավորապես՝ վճարման կարգադրության արձակումը, վճարման կարգադրություն արձակելու դիմումի՝ ամբողջությամբ կամ մասնակի մերժումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում արձանագրել է, որ դատարան վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի ներկայացումն ինքնին բավարար հիմք է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված համարելու համար՝ անկախ դատարանի կողմից դիմումը մերժելու կամ բավարարելու, պատասխանողի կողմից առարկություններ ներկայացնելու կամ չներկայացնելու հանգամանքներից:

Միաժամանակ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված դրույթներով սահմանված են հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմքերի կիրառման կարգը և շրջանակը: Այսպես, այն կիրառվում է այն դեպքում, երբ վերոնշյալ հանգամանքները ծագել են կամ շարունակել են գոյություն ունենալ հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ամբողջ ընթացքում: Ընդ որում, ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը երկարաձգվում է մինչև վեց ամիս

ժամանակով, իսկ այն դեպքերում, երբ հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա կասեցումից հետո հայցային վաղեմության մնացած ժամկետը երկարաձգվում է մինչև հայցային վաղեմության ավարտը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարան վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացման փաստն ինքնին արդեն իսկ բավարար և անհրաժեշտ հիմք է հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար, իսկ պատասխանողի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու փաստը պայմանավորում է կասեցման ժամանակահատվածի ավարտը, ընդ որում՝ այն դեպքում, երբ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը մերժվել է դատարանի կողմից, կասեցման ժամանակահատվածն ավարտվում է մերժման մասին համապատասխան որոշման կայացմամբ: Այլ կերպ ասած, առարկություն ներկայացնելը կամ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի մերժումը, ըստ էության, հանդիսանում են կասեցման ժամանակահատվածի տևողության վերջնաժամկետը որոշելու հիմքեր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար

27.11.2015թ.

8. «Ֆինլեքս» ՍՊԸ-ն ընդդեմ «Մետաքս» ԲԲԸ, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0492/02/14 **Էջ 79–91**

Խնդիր. Արդյոք դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով իրավասու է պակասեցնել պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված տուժանքի տոկոսադրույքը.

** Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելու հանգամանքն ինքնին բացառում է փաստաբանի խելամիտ վարձատրության՝ որպես դատական ծախսի փոխհատուցման հնարավորությունը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական մեկնաբանությունները նշված իրավանորմերի վերաբերյալ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը *(տե՛ս, «Թամամ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ «ԱՄ-ԿԱ» ՍՊԸ-ի թիվ 3-27(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ չսահմանափակելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը՝ օրենսդիրը միևնույն ժամանակ իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապահովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Դատարաններին վերապահված նման իրավունքն իրավական այն միջոցներից մեկն է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահելու արգելքին *(տե՛ս, ըստ դիմումի «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի՝ Երևանի քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 31.10.2008 թվականի վճիռը պարզաբանելու մասին թիվ ԵՄԴ/0134/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ, իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում **տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:** Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել **տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում կամ այնպիսի չափով նվազեցում,** որը կիմաստազրկի տուժանքի ինստիտուտը և չի ծառայի իր նպատակին (պարտավորությունների կատարման երաշխիք) (*տե՛ս, Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով և զարգացնելով տուժանքի ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով իրավունք ունի ***պակասեցնել միայն տուժանքի գումարի չափը, այլ ոչ թե նվազեցնել պայմանագրով (համաձայնագրով) սահմանված տուժանքի տոկոսադրույքը:*** Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է հետևյալով.

Վերլուծելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 94-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 437-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ հոդվածների իրավական բովանդակության վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ սահմանելու, պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման որոշելու սկզբունքների իրականացումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների՝ կողմերի համար նախատեսել է հնարավորություն՝ կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր և սահմանելու ***պայմանագրի պայմանները***, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Օրենսդիրը միաժամանակ նախատեսել է մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը, որը ենթադրում է, որ պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ցանկացած այլ անձինք իրավասու չեն միջամտել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների գործերին, եթե նրանք իրենց գործունեությունն իրականացնում են օրենքի պահանջներին համապատասխան: Նշված սկզբունքը ենթադրում է նաև, որ որևէ անձ, այդ թվում նաև դատարանն իրավունք չունի կամայականորեն միջամտելու կողմերի պայմանագրային հարաբերություններին՝ իր հայեցողությամբ պայմանագրային որևէ դրույթ փոփոխելու եղանակով: Դատարանը պայմանագրի որևէ դրույթ իրավասու է փոփոխել միայն համապատասխան հայցապահանջի առկայության պայմաններում: Նման եզրահանգումը բխում է ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխի (Պայմանագիր փոփոխելը և լուծելը) իրավակարգավորումից, այլև դատարանի՝ որպես պետական իշխանության մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակից:

Տուժանքի տոկոսադրույքի մասին պայմանը Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ պայմանագրի պայման է, միաժամանակ նաև՝ այն կնքած կողմերի ազատ կամքի դրսևորում: Որպես պայմանագրի պայման՝ տուժանքի տոկոսադրույքի չափը կարող է փոփոխվել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխի (Պայմանագիր փոփոխելը և լուծելը) կանոններով: Հետևաբար դատարանն իրավասու չէ իր նախաձեռնությամբ և իր իսկ հայեցողությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով նվազեցնել պայմանագրով նախատեսված տուժանքի տոկոսադրույքի չափը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի իրավակարգավորումը, Վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ, բացառապես ենթադրում է պայմանագրով նախատեսված տոկոսադրույքով հաշվարկված տուժանքի չափի պակասեցում, ընդ որում, նման պակասեցումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ օրենսդրի կողմից կիրառված «ակնհայտ անհամաչափ» եզրույթը, ըստ էության, գնահատողական բնույթի կատեգորիա է, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ենթակա է պարզման՝ հաշվի առնելով պարտավորության խախտման հանգամանքները և վրա հասած հետևանքները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները պետք է հաշվի առնեն պարտավորության չկատարման (խախտման) տևողությունը, պարտավորության մայր գումարի և հաշվարկված տուժանքի գումարի հարաբերակցությունը, պայմանագրի (ապրանքների, մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների) գինը, պարտավորության խախտման արդյունքում կորուստների առկայությունը և այլն: Ընդ որում, վերոգրյալի վերաբերյալ դատարանների դատողությունները պետք է բխեն գործի փաստական հանգամանքներից և ի հավաստումն դրանց՝ գործում առկա ապացույցներից:

Երկրորդ հարցադրման կապակցությամբ, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 20-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիա 6-րդ հոդվածը, Վճռաբեկ դատարանը նշել է, որ սահմանադրորեն երաշխավորված յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է: Իրավաբանական օգնություն կարող է ստանալ ցանկացած անձ, ցանկացած հարցի կապակցությամբ՝ անկախ նրա կարգավիճակից, գործունեության ոլորտից, իրավահարաբերության բնույթից, պետական գործունեության տեսակից, ընթացակարգի առանձնահատկություններից և այլն: Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխիք է նաև հանդիսանում Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքների, մասնավորապես՝ իրավունքների և ազատությունների դատական, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի, իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունքի իրացման համար:

Վերլուծելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեություն է, դրսևորվում է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմամբ ու պաշտպանությամբ՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստաբանական գործունեությունը՝ որպես վստահորդի և փաստաբանի միջև ծագած իրավահարաբերություն, ներառում է տարբեր գործողություններ՝ սկսած խորհրդատվությունից, ներառյալ՝ ներկայացուցչությունը, պաշտպանությունը քրեական գործերով, օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ իրավաբանական օգնության իրավահարաբերությունը ծագում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելու պահից, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Ընդ որում, կախված փաստաբանի և վստահորդի միջև առաջացած իրավահարաբերության բնույթից, իրավաբանական օգնությունը կարող է մի դեպքում սահմանափակվել օրենքում նշված գործողություններից մեկով կամ ներառել դրանցում նշված տարբեր գործողություններ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում իրավաբանական օգնության բնույթը և շրջանակները պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստաբանի և վստահորդի միջև ծագած իրավահարաբերության քաղաքացիաիրավական հիմքին, քանի որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցուցաբերվում է համապատասխան պայմանագրի կամ այլ իրավաբանական փաստի հիման վրա: Ընդ որում, նշված դեպքերում նախատեսվում են իրավաբանական օգնության ձևերը և շրջանակները, որոնք փաստաբանը պետք է ցույց տա կոնկրետ անձին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ փաստաբանի կող-

մից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու բնույթը, դրանում ներառվող գործողությունների շրջանակները և իրավաբանական օգնության ժամանակահատվածը կարող է պարզվել կողմերի միջև իրավահարաբերության առաջացման հիմք համարվող իրավաբանական փաստերի կամ կատարված փաստացի գործողությունների ուսումնասիրության արդյունքում (պայմանագիր, լիազորագիր և այլն) *(տե՛ս, նաև Կրոմվել Գրիգորյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը)*:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածը, 73-րդ հոդվածի 1-ին կետը, 132-րդ հոդվածի 1-ին կետը, 132-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է փաստաբանի խելամիտ վարձատրության՝ որպես դատական ծախս լինելու վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախ և առաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս, թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար *(տե՛ս, Նարինե Ռոստոմյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱՔԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն իր մեկ այլ որոշմամբ անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցին, մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը *(տե՛ս, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը)*:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում բողոքի հիմքում բարձրացված հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ համապատասխան իրավական հիմքի առկայության (տվյալ դեպքում՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի) պայմաններում, իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելու հանգամանքն ինքնին բավարար չէ փաստաբանի խելամիտ վարձատրությունը՝ որպես դատական ծախսի փոխհատուցում մերժելու համար: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և փաստաբանի խելամիտ վարձատրության համար փոխհատուցում ստանալու իրավունքը չի կարող գտնվել կախվածության մեջ այնպիսի հանգամանքներից, ինչպիսին են իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելը կամ համապատասխան մասնագետ ունենալը:

27.11.2015թ.

9. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ v. «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան»» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԷԴ/0888/02/14 Էջ 92–100

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունն անհաղթահարելի ուժի հետևանքով խախտելու համար պատասխանատվության առանձնահատկություններին՝ միաժամանակ վերահաստատելով և զարգացնելով իր նախկինում արտահայտած դիրքորոշումները:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է վկայակոչված հոդվածի վերաբերյալ նախկինում կայացված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաա» ՍՊԸ-ի թիվ ԵԱԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը միևնույն ժամանակ հավելել է, որ մեղքի՝ որպես պատասխանատվության պարտադիր պայմանի առկայության մասին կանոնը կրում է դիսպոզիտիվ բնույթ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածում օրենսդիրը բացառություն է նախատեսել այն դեպքերի համար, երբ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարող է վրա հասնել անկախ մեղքի առկայությունից, դրանք են՝ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերը: Օրենքով նախատեսված դեպք է, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի իրավակարգավորումը, որի մեկնաբանությունից բխում է, որ եթե անձը պարտավորությունը չի կատարել կամ անպատշաճ է կատարել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս, ապա պատասխանատվությունը վրա է հասնում անկախ նրա մեղքի առկայությունից: Ընդ որում, օրենսդրի կողմից նման տարբերակված մոտեցում դրսևորելը արդարացված է, քանի որ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով և հետևաբար ենթադրվում է, որ նման դեպքերում բացասական հետևանքների համար պատասխանատվությունը պետք է իր վրա վերցնի հենց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձը:

Այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք՝ որպես գույքային հարաբերություններում սեփական ռիսկով գործող, գործարարության համապատասխան ոլորտում մասնագիտացված սուբյեկտներ, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում անկախ մեղքի առկայությունից:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրն ընդհանուր կանոնից նախատեսել է որոշակի բացառություն, որի դեպքում պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում**:**

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրություն

17.07.2015թ.

10. «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ v. Վաչագան Խաչատուրյան և Անդրանիկ Գուլբանյան, քաղ. գործ թիվ ՏԴ3/0222/02/13 **Էջ 101–110**

Խնդիր. Արդյո՞ք բոլոր դեպքերում է, որ ապահովադիր համարվող անձի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի հուզական լարված վիճակում գտնվելը կարող է դասվել ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ հայտնելու պարտականության չկատարման բացառությունների շարքին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021–րդ հոդվածի 1–ին կետը, 1017–րդ հոդվածի 1–ին կետի 1–ին պարբերությունը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19–րդ, 27–րդ հոդվածները, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻՄՄ խորհրդի կողմից 13.09.2010 թվականի թիվ 10–Լ որոշման 9.1 մասի 9.1.1 կետի «դ» ենթակետը, 9.1 մասի 9.1.2 կետի «բ» ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, հարկ համարելով անդրադառնալ օրենսդրի կողմից նախատեսված՝ ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու պարտականության կատարման «անհապաղության» եզրույթի ընկալմանն ու մեկնաբանմանը, գտել է, որ այն ունի հետևյալ բովանդակությունը. «անհապաղ» նշանակում է առանց հապաղելու, անմիջապես, նույն պահին, հնարավորինս արագ, առավելագույնս սեղմ ժամկետում: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, սահմանելով «անհապաղության» եզրույթը, այն չի դիտել որպես բացարձակ պայման, քանի որ իրավանորմի հետագա շարադրանքում կիրառել է նաև «ողջամիտ ժամկետում» հասկացությունը: Իսկ ողջամիտ կարող է գնահատվել այն ժամանակահատվածը, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է որևէ կոնկրետ գործողության իրականացման համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում «անհապաղության» պարտադիր պայմանի գնահատումն իրականացնելիս դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն ծանուցման անմիջապես, նույն պահին իրականացված լինելու փաստը, այլև՝ դրա իրականացման՝ առաջին իսկ օբյեկտիվ, արդարացված հնարավորությունը: Ընդ որում, եթե տեղի է ունենում ապահովագրական պատահար, ապա ապահովադրին պատճառված վնասից բխող նրա կամ շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Սակայն, ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի և (կամ) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, եթե ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով, այսինքն՝ անհապաղ (ողջամիտ ժամկետում կամ օբյեկտիվորեն առաջին իսկ հնարավորության առկայության պարագայում) ապահովագրական ընկերությանը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի 2–րդ մասի վերլուծությունից հետևում է, որ ապահովագրական պատահարի մասին հայտնելու պարտականության կատարման հարցում բացառություններ են համարվում հետևյալ դեպքերը.

1. երբ ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են **անգիտակից վիճակում,**

2. հայտնվել են այնպիսի իրավիճակում, որ **անհնարին էր** ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը,

3. ապահովադիրը **տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել** ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծության արդյունքներով ակնհայտ է դառնում, որ ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերությանն այդ մասին պարտավոր են հայտնել **ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը:** Ընդ որում, **ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը** կրում են ապահովագրական ընկերությանը նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ թե՛ ավտոտրանսպորտային միջոցի ապահովադիրը, և թե՛ այն օրինական հիմքով տիրապետող անձը կրում են ինչպես ապահովագրական ընկերությանը տեղի ունեցած ապահովագրական պատահարի իրազեկելու, այնպես էլ հետագայում դրա անհնարինության հանգամանքը ապացուցելու պարտականությունները: Ընդ որում, նրանցից որևէ մեկի կողմից այդ պարտականությունները կատարելու պարագայում դրանք համարվում են կատարված ամբողջությամբ:

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.04.2015թ.

11. «Բի Լայն» ՍՊԸ v. Արտակ Զաքարյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2128/02/13 **էջ 111–119**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք հակաիրավական գործողությունների (անգործության) կատարումից հետո մինչև բացասական հետևանքների՝ վնասի վրա հասնելը ենթադրաբար վնաս պատճառած անձի կողմից պատճառվելիք վնասի կանխմանն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկումը, տվյալ պայմաններում անհրաժեշտ հոգատարության և շրջահայացության դրսևորումը, կարող է հավաստել վերջինիս մեղքի բացակայության փաստը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 1058-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ քաղաքացիական իրավահարաբերություններում մեղքն արտահայտվում է անձի վերաբերմունքով ոչ միայն իր արարքի, այլև դրա հետևանքների նկատմամբ: Այսինքն՝ զուտ հակաիրավական արարք թույլ տալու փաստը դեռևս չի վկայում անձի մոտ մեղքի առկայության մասին, ուստի դատարանները նշված հանգամանքը գնահատելիս նաև պետք է պարզեն այդպիսի արարք թույլ տված անձի վերաբերմունքը հնարավոր բացասական հետևանքների նկատմամբ:

Եթե դիտավորության դեպքում վնաս պատճառած անձը ցանկանում է կամ անտարբերությամբ թույլ է տալիս իր հակաիրավական արարքի հետևանքների առաջացումը, ապա անզգուշության պարագայում անձը, մի դեպքում կանխատեսելով իր վարքի բացասական հետևանքները, առանց բավարար հիմքերի կարծում է, թե դրանք կկանխվեն, կամ մեկ այլ դեպքում՝ ընդհանրապես չի կանխատեսում իր արարքի հետևանքները, չնայած պարտավոր էր կանխատեսել:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ անձը հակաիրավական գործողությունների կատարումից (կամ անգործության դրսևորումից) հետո մինչև բացասական հետևանքների վրա հասնելը պատշաճ կերպով ձեռնարկում է պատճառվելիք վնասը կանխելու ուղղությամբ օբյեկտիվորեն հնարավոր, անհրաժեշտ և իրենից կախված բոլոր միջոցները, ապա տվյալ իրավիճակում կարող է հավաստել ենթադրաբար վնաս պատճառած անձի մեղքի բացակայությունը: Հետևաբար, ենթադրյալ վնաս պատճառած անձի կողմից ձեռնարկված համապատասխան միջոցների վերաբերյալ ապացույցների առկայությունը, որոնք վկայում են նաև նման պայմաններում իրենից պահանջվող պատշաճ չափով հոգատարության և շրջահայացության դրսևորման փաստի մասին, կարող է հիմք հանդիսանալ տվյալ անձին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունից ազատելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատարանները պետք է գնահատեն ոչ միայն վնաս պատճառած անձի մեղքը, այլև տուժողի մեղքը՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը, կարևորելով տուժողի մեղքի ձևը, ամրագրել է վնաս պատճառած անձին պատասխանատվությունից ազատելու կամ նրա պատասխանատվությունը նվազեցնելու հնարավորություն: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժողի դիտավորության հետևանքով ծագած վնասը չի հատուցվում: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել:

27.11.2015թ.

12. Արա Մանուկյան ն. Լեոնիդ Դավթյան և Ալլա Դուրյան, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/0233/02/11 **Էջ 120–131**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե անշարժ գույքի կառուցապատման հիմք հանդիսացող ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը որոշակի անձի անունով տրամադրված լինելու պայմաններում արդյոք այդ գույքի կառուցապատման հետևանքով այլ անձանց կամ նրանց գույքին ենթադրաբար պատճառված վնասի հատուցման պարտականությունը կարող է դրվել մեկ այլ անձի վրա:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին կետը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, 17-րդ հոդվածի 1-ին մասը, 22.1-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին պարբերությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ անշարժ գույքի հետ կապված որոշակի իրավազորությունների իրականացման, մասնավորապես՝ **կառուցապատման** ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պարտականությունը պետք է կրի **կառուցապատողը**, այսինքն՝ այն անձը, ով օրինական հիմքերով կարող է իրականացնել տվյալ անշարժ գույքի կառուցապատման աշխատանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս ապացուցում է, որ կոնկրետ իրավիճակում պատճառված վնասը ծագել է ոչ թե իր մեղքով, այլ անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Ընդ որում, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավադրույթները վկայում են, որ որպես կառուցապատող կարող է հանդես գալ միայն լիազոր մարմնի կողմից անհրաժեշտ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն ստացած սուբյեկտը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումը բացառապես վերաբերում է այն դեպքերին, երբ կառուցապատման աշխատանքներն իրականացվում են օրինական հիմքերով:

27.11.2015թ.

13. Գոզո և Վալի Ամոյաններ v. ՀՀ ֆինանսների նախարարություն, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3025/02/11 **Էջ 132–148**

Խնդիր. *1) Ի՞նչ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում անձը կարող է պահանջել ապօրինի դատապարտման արդյունքում իր կրած նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը.*

2) արդյո՞ք ՀՀ իրավական համակարգում ապօրինի դատապարտման դեպքում փաստաբանին վճարված գումարների մասով հատուցման իրավունքը երաշխավորված է բացառապես արդարացվածի համար.

3) արդյո՞ք փաստաբանին վճարված գումարները Հայաստանի Հանրապետության կողմից ենթակա են փոխհատուցման լրիվ ծավալով.

4) արդյո՞ք արդարացվածից կարող է պետական տուրք գանձվել փաստաբանին վճարված գումարների բռնագանձման հայցապահանջներով.

5) արդյո՞ք արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասը, 18–րդ հոդվածի 1–ին մասը, 19–րդ հոդվածի 1–ին մասը, 20–րդ հոդվածի 5–րդ մասը, Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 5–րդ կետը, 13–րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14–րդ հոդվածի 6–րդ մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22–րդ հոդվածի 1–ին մասը, 66–րդ հոդվածի 1–ին և 3–րդ մասերը, 67–րդ հոդվածի 3–րդ մասը, 70–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064–րդ հոդվածի 1–ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ–929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն[3] իր նախադեպային իրավունքում նույնպես ճանաչել է ապօրինի դատապարտված անձի կրած վնասների փոխհատուցման իրավունքը *(տե՛ս, Շիլևան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 06.10.2005 թվականի վճիռը, կետ 20):*

Միավորված Ազգերի Կազմակերպության 09.12.1988 թվականի «Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի» (հաստատվել է ՄԱԿ–ի Գլխավոր Ասամբլեայի 09.12.1988 թվականի 43/173 բանաձևով) 35–րդ սկզբունքով սահմանվել է, որ պետական պաշտոնատար անձի գործողությունների կամ զանցառությունների հետևանքով պատճառված վնասը՝ ի խախտումն նույն սկզբունքների բովանդակած իրավունքների, ենթակա է հատուցման՝ պատասխանատվության կիրառվող նորմերի համաձայն, որոնք նախատեսված են ներքին օրենսդրությամբ:

Վերոնշյալ իրավանորմերից և դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը նշել է, որ պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով անձին ազատությունից ապօրինի զրկելու, նրան ապօրինի դատապարտելու դեպքում վնասի հատուցման իրավունքն ունի սահմանադրական հիմնարար իրավունքի բնույթ, որը լայնորեն ճանաչված և ամրագրված է նաև միջազգային իրավական ակտերում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ հիմնարար իրավունքի կենսագործումն առաջին հերթին պետք է դիտարկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի լույսի ներքո, հատկապես այն դեպքում, երբ անձը վնաս է կրել պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով *(տե՛ս, Հայկ Սահակյանն*

[3] Այսուհետ սույն բաժնում՝ Եվրոպական դատարան:

ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ԵԿԴ/0780/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Առաջնորդվելով արդարացվածի կարգավիճակի առանձնահատկություններով, մասնավորապես՝ վերջինիս իրավական և սոցիալական վիճակի արդյունավետ վերականգնման անհրաժեշտությամբ, ինչպես նաև վերը նշված սահմանադրաիրավական ու միջազգային իրավական պահանջներով՝ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանել է արդարացվածին պատճառված վնասների հատուցման իրավունքը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը նախատեսել է արդարացվածի՝ իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը: Օրենսդիրը սահմանել է, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ ***հաշվի առնելով իրական վնասը, ինչպես նաև հնարավոր բաց թողնված օգուտները:*** Արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալու աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է, ինչպես նաև վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է նաև, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օրենսդիրը նախատեսել է անձի՝ ապօրինի դատապարտվելու, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով օրենքով սահմանված կարգով պատճառված վնասի լրիվ ծավալով հատուցման իրավունքը:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ անհրաժեշտ է համարել անդրադառնալ արդարացվածի՝ նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքի ծագման և իրացման հիմնախնդիրներին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 30.03.2010 թվականի թիվ ՍԴՈ-871 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մինչդատական վարույթում անձն արդարացվածի կարգավիճակ ձեռք է բերում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքում, իսկ դատական քննության փուլում՝ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճռի դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչ այդ գոյություն չունի կասկածյալին կամ մեղադրյալին պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք, որովհետև դեռևս նա արդարացված չէ: Անձը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա հատուցման պահանջով դատարան դիմել միայն դրանում նշված հիմքերով արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հատուցման ենթակա են միայն այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու հետևանք են:

Համանման իրավական դիրքորոշում արտահայտել է նաև Եվրոպական դատարանը: Եվրոպական դատարանը թեև ճանաչել է ապօրինի դատապարտված անձանց կրած վնասների փոխհատուցման իրավունքը, սակայն միաժամանակ նշել է, որ Կոնվենցիան չի խոչընդոտում պայմանավորվող պետություններին հատուցել վնասը, միայն այն դեպքում, երբ տուժած անձը կկարողանա ապացուցել, որ իրեն պատճառված վնասն ուղղակիորեն կապված է իր իրավունքների խախտման հետ *(տե՛ս, Շիլևան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 06.10.2005 թվականի վճիռը, կետ 20):*

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել նաև իրավունքների չարաշահման արգելքի համաիրավական սկզբունքի լույսի ներքո և արձանագրում է, որ անձին ապօրինի դատապարտման արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացում իրավական պետությունում հնարավոր է միայն այն պայմաններում, եթե չի ապացուցվում, որ այն հանգամանքների ժամանակին բացահայտումը, որոնք հիմնավորել են անձի ապօրինի դատապարտումը, լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքը ծագում է միայն անձի արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո և համապատասխան սուբյեկտները կարող են իրացնել իրենց վնասի հատուցման իրավունքը, եթե ապացուցեն, որ իրենց վնասը պատճառվել է ապօրինի դատապարման արդյունքում և չապացուցվի, որ այդ հանգամանքների ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ իրավական համակարգում վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում արդարացվածի համար երաշխավորված է փաստաբանին վճարված գումարների հատուցման իրավունքը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն նախատեսված չէ այլ անձանց կողմից փաստաբանին վճարված գումարների հատուցման իրավունքը, սակայն վերը նշվածը չի նշանակում, որ ՀՀ-ում այլ անձինք պետք է զրկված լինեն պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի, մասնավորապես՝ արդարացվածի իրավունքների վերականգնման համար փաստաբանին վճարված գումարների հատուցման իրավական հնարավորությունից հետևյալ պատճառաբանությամբ.

2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում օրենսդիրը սահմանել է, որ փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով: Այսպիսով, օրենսդիրը սահմանել է, որ քրեական գործով վարույթին փաստաբանը՝ որպես պաշտպան, կարող է ներգրավել ոչ միայն կասկածյալի կամ մեղադրյալի հրավերով, այլ նաև կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով: Հետևաբար պետական իշխանության մարմինների գործողությունների արդյունքում, մասնավորապես՝ անձին ապօրինի դատապարտելու արդյունքում նյութական վնաս կարող է պատճառվել նաև այն անձանց, ովքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար փաստաբան հրավիրելու:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «տուժողի»՝ որպես հանցագործության զոհի, հասկացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ՝ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով:

Այդպիսով, անօրինական գործողությունների, հանցագործության և իշխանության չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են, և նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով միջազգային իրավունքում առկա վերը նշված մոտեցումները, 14.12.2010 թվականի իր թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն և ներառում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիահրավական ու այլ հարաբերություններից և իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց: Ուստի ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ անձին ապօրինի դատապարտելու, այսինքն՝ հանրային իշխանության ոչ իրավաչափ գործունեության արդյունքում վնաս կարող է պատճառվել նաև այլ անձանց, մասնավորապես՝ նրանց, ովքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդ-

վածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արդարացվածի իրավունքների վերականգնման համար, փաստաբանին վճարված գումարների մասով ապօրինի դատապարտման հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված է նաև այն անձանց համար, ովքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան, ով քրեական գործով վարույթի ընթացքում կներկայացնի կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը՝ նրանց ցույց տալով իրավաբանական օգնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, ապօրինի դատապարտելու հետևանքով արդարացվածին, ինչպես նաև այն անձանց պատճառված վնասը, մասնավորապես՝ փաստաբանին վճարված գումարները, ովքեր, ՀՀ օրենսդրության համաձայն իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան, ենթակա են հատուցման լրիվ ծավալով:

3) Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է փաստաբանի վարձատրության չափի՝ որպես դատական ծախսի խելամտության որոշման հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը *(տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը)*:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում նույնպես բազմիցս անդրադարձել է ծախսերի և ծախքերի խելամտության հարցին և նշել, որ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի և ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, և դրանց չափը եղել է ողջամիտ *(տե՛ս, Շամոյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 07.01.2015 թվականի վճիռը, կետ 48*):

Ընդ որում, **իրական** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է փաստաթղթային ողջամիտ ապացույցներ ներկայացնի առ այն, որ վնասն իրականում գոյություն ունի, վնասի հատուցման պահանջը չի կարող հիմնված լինել ենթադրությունների, շահարկումների և ապագայում տեղի ունենալիք հնարավոր կամ անհնարին իրադարձությունների ու փաստերի վրա: **Անհրաժեշտ** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ այդ հատուցումն իրոք անհրաժեշտ է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ցույց տա իր կրած վնասների ու իր իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը: **Ողջամիտ** նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի չափը պետք է համարժեք լինի այդ վնասներին, ինչը հնարավոր է ապացուցել միայն հստակ փաստաթղթային եղանակով՝ բացառելով ենթադրությունները և շահարկումները:

Վերահաստատելով նախկինում իր կողմից կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստաբանի վարձատրության չափի՝ որպես դատական ծախսի խելամտության հարցի վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք նմանապես կիրառելի են նաև փաստաբանի վարձատրության չափի՝ որպես արդարացվածին պատճառված նյութական վնասի հատուցման խելամտության որոշման հարցի նկատմամբ, քանի որ փաստաբանին վճարված գումարները՝ անկախ այն հանգամանքից, թե դատական ծախսեր են, թե պատճառված նյութական վնասներ, ինչ դատավարության ընթացքում են վճարվել՝ քաղաքացիական, վարչական, թե քրեական, պետք է լինեն իրականում կատարված և անհրաժեշտ, ինչպես նաև դրանց չափը պետք է լինի ողջամիտ: Ընդ որում, քրեական դատավարության ընթացքում փաստաբանին՝ պաշտ-

պանին, վճարված գումարների իրական լինելը, դրանց անհրաժեշտությունը և ողջամտությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել քրեական դատավարության առանձնահատկությունները, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում կատարած աշխատանքի համար փաստաբաններին վարձատրելու վերաբերյալ արդեն իսկ ձևավորված և արմատավորված դատական պրակտիկայի առանձնահատկությունները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշումների վերլուծության արդյունքում արձանագրել է, որ ապօրինի դատապարտելու հետևանքով փաստաբանին վճարված իրական, անհրաժեշտ և ողջամիտ գումարները հատուցվում են լրիվ ծավալով:

4) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, իսկ նույն հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «է.1» կետի համաձայն՝ **դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են արդարացվածները**՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման հայցերով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չէ այն իրողությունը, երբ հետևողականություն չի դրսևորվում տվյալ իրավակարգավորման հարցում, և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման պարագայում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը մինչև 25.10.2011 թվականի խմբագրությամբ գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ ճանաչել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշման հիման վրա 25.10.2011 թվականին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու արդյունքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը լրացվել է նոր կետերով, որոնցից է նաև՝ «է.1» կետը, որի համաձայն՝ արդարացվածները իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավվելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման հայցերով ազատվում են դատարաններում պետական տուրքի վճարումից:

5) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման

միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել նույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է նույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետում սահմանել է պետության մեղքից անկախ պատասխանատվության ինստիտուտը՝ պետության ոչ իրավաչափ գործունեության հետևանքով վնասի հատուցման համար որպես նախապայման չսահմանելով կոնկրետ պաշտոնատար անձի մեղքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ նախ՝ արդարացվածն իրավունք ունի պահանջելու ինչպես հետաքննության, նախաքննության, դատախազության, այնպես էլ դատարանի պաշտոնատար անձանց ապօրինի գործունեության հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում՝ ամբողջ ծավալով, և երկրորդ՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

Պետության մեղքից անկախ պատասխանատվության վերաբերյալ առկա իրավակարգավորման հիմքում ընկած է այն իրավական տրամաբանությունը, որ պետության հետ հանրային իրավական հարաբերություններում մասնավոր անձանց ավելի մեծ պաշտպանության հիմնավորված անհրաժեշտություն գոյություն ունի, քանի որ պետություն-մասնավոր անձ մի շարք հարաբերություններում պետության փաստացի և ընդգծված գերակայությունն օբյեկտիվորեն պահանջում է ուժերի ակնհայտ անհավասարակշռությունը հաղթահարելու նպատակով պետության ավելի խիստ պատասխանատվություն մասնավոր անձի առջև իր ոչ իրավաչափ վարքագծի իրավական հետևանքները վերացնելու համար:

Վերը նշված խնդրի արդյունավետ լուծման անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրը մեղքի առկայությունը՝ որպես իրավահավասար կողմերի միջև իրավահարաբերություններում պատասխանատվության անհրաժեշտ տարր, չի նախատեսել իր իրավական բնույթով լիովին այլ՝ պետության պատասխանատվության դաշտում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ պետության մեղքից անկախ պատասխանատվության սահմանումը չի նշանակում, որ պետությունն առանց մեղքի պատասխանատվություն է կրում բոլոր ոլորտներում վնաս պատճառելու համար: Առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը և կիրառումը հիմնավորված և արդարացված է միայն անձի համար կենսական նշանակություն ունեցող իրավական բարիքների հանդեպ պետության միջամտության դեպքում, մասնավորապես, երբ խոսքը գնում է անձին ապօրինի դատապարտելու, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու կամ տույժի ենթարկելու մասին:

Այսպիսով, ապօրինի դատապարտելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ համապատասխան պաշտոնատար անձի, այդ թվում նաև՝ դատավորի մեղքի առկայությունից: Ինչ վերաբերում է այլ դեպքերում պետության ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում անձին վնաս պատճառելուն, ապա օրենսդիրը սահմանել է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետում նախատես-

ված հետևանքներին, հատուցվում է նույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

Օրենսդիրը նախատեսել է նաև վնասի հատուցման հնարավորությունն այն դեպքերում, երբ հետաքննության, նախաքննության և/կամ դատախազության մարմինները թույլ են տվել ապօրինի գործողություններ, որոնք, սակայն, չեն հանգեցրել ապօրինի դատապարտելուն, քրեական պատասխանատվության ենթարկելուն, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելուն, վարչական տույժի ենթարկելուն, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 3-րդ կետով առանձնացված է դատավորի պատասխանատվությունը նույն հոդվածի 2-րդ կետում ամրագրված հանգամանքների առկայության դեպքում: Հետևաբար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատավորի մեղքի ապացուցումը վնասի հատուցման նախապայման կարող է հանդիսանալ միայն այն դեպքերում, երբ դատավորի գործողությունները չեն հանգեցրել անձին ապօրինի դատապարտելուն, քրեական պատասխանատվության ենթարկելուն, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելուն կամ վարչական տույժի ենթարկելուն:

ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

17.07.2015թ.

14. Արթուր Հովհաննիսյան v. Նորիկ Սողոմոնյան, քաղ. գործ թիվ ԵԷԴ/0540/02/12 **Էջ 149-156**

Խնդիր. Արդյոք որպես առևտրային կաշառք տրամադրված գումարը կարող է հանդիսանալ անհիմն հարստացմամբ ձեռք բերված գույք, որն էլ առևտրային կաշառք ստացած անձից ենթակա լինի բռնագանձման այդպիսի կաշառք տված անձին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար պետք է, նախ և առաջ, քննարկել այն հարցը, թե արդյոք անհիմն հարստացման և առևտրային կաշառքի արդյունքում ձեռք բերված գույքերի (գումարների) իրավական կարգավիճակները, դրանց բնույթն ու էությունը որևէ պարագայում կարող են նույնացվել, թե՝ ոչ:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են ծագել քաղաքացիական շրջանառության սուբյեկտների ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ գործողություններից: Այդպիսին է, մասնավորապես, անհիմն հարստացման արդյունքում ծագած պարտավորությունը, որը թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չէ, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ անհիմն հարստացման ինստիտուտը քաղաքացիական իրավունքի ինստիտուտներից մեկն է, որի նպատակը քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանության իրականացումն ապահովելն ու դրան նպաստելն է:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցավոր արարքներից առևտրային կաշառքի առանձնահատկություններին, ապա Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը, արձանագրել է, որ հանցագործության հատկանիշներն են՝ ա) հանրային վտանգավորությունը, բ) քրեական հակաիրավականությունը, գ) մեղավորությունը: Այսպիսով, առևտրային կաշառքը, ինչպես ցանկացած այլ հանցագործություն, քրեական օրենսդրությամբ պաշտպանվող հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հանրության համար վտանգավոր ոտնձգություն է:

Վերլուծելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիշյալ հանցագործության անմիջական օբյեկտն առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Նշված հանցակազմի իմաստով՝ վկայակոչված հոդվածում թվարկված անձանց ապօրինաբար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն է խոստացվում, առաջարկվում կամ տրամադրվում, որպեսզի նրանք կաշառք տվողի կամ նրա ներկայացրած

անձի օգտին կատարեն կամ չկատարեն որոշակի գործողություններ: Ընդ որում, նշված հանցագործությունում ի թիվս այլնի՝ դրամը և այլ գույքը հանդիսանում են որպես հանցագործության առարկա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանի դատավճռում, ինչպես նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծումը կատարվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-114-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց 103.1-րդ հոդվածով, որի 1-ին մասը սահմանում է. «Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, նույն օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, **ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության»:**

Վկայակոչված քրեական և քրեադատավարական իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչ օրենսդրական վերը նշված փոփոխությունը և դրանից հետո օրենսդրի կամքն ուղղված է առևտրային կաշառքի պարագայում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը (դրամ, այլ արժեքներ և առարկաներ) հօգուտ պետության բռնագանձելուն, բացառությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման դեպքի: Մասնավորապես, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, հօգուտ պետության ենթակա է բռնագանձման հանցավոր գործունեության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները և այլն:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած անձն օրենքի ուժով զրկվում է իր գույքի (հանցագործության առարկա հանդիսացող) նկատմամբ սեփականության իրավունքից և հետագայում քաղաքացիաիրավական որևէ ինստիտուտի, այդ թվում նաև՝ անհիմն հարստացման ինստիտուտի միջոցով որևէ պահանջ ներկայացնել չի կարող:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրված քաղաքացիաիրավական և քրեաիրավական նորմերի բովանդակության շուրջ կատարված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհիմն հարստացման (քաղաքացիաիրավական) և առևտրային կաշառքի (քրեաիրավական) ինստիտուտները տարբեր իրավական ինստիտուտներ են, որոնց առանձնահատկությունները դրսևորվում են նաև սուբյեկտների, օբյեկտների, նպատակների և ծագման հիմքերի հարցում: Մասնավորապես, եթե անհիմն հարստացման դեպքում տուժող է համարվում այն անձը, ում հաշվին ձեռք է բերվել կամ խնայվել գույք, ապա առևտրային կաշառքի պարագայում տուժողը պետությունն է, քանի որ առևտրային կաշառքն, առաջին հերթին, ուղղված է պետության և հասարակության շահերի դեմ: Եթե անհիմն հարստացման օբյեկտը տուժողի գույքային իրավունքներն են, ապա առևտրային կաշառքի օբյեկտ են հանդիսանում առևտրային կամ այլ կազմակեր-

պությունների օրինական գործունեությանն ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Ընդ որում, եթե անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի վերադարձման հիմնական և առաջնային նպատակը քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանությունն ապահովելն ու դրա իրականացմանը նպաստելն է, ապա որպես առևտրային կաշառք տրամադրված գույքի բռնագանձումը հօգուտ պետության, ինչպես ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հարկադրանք, նպատակ է հետապնդում վերականգնելու սոցիալական արդարությունը, կանխարգելելու հնարավոր հանցագործությունները:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ տարբեր են նաև այս երկու իրավական ինստիտուտների ծագման հիմքերը: Անհիմն հարստացման իրավահարաբերության ծագման հիմք կարող են լինել տարատեսակ իրավաբանական փաստեր, որոնց արդյունքում տեղի է ունենում մեկ անձի հարստացում մեկ այլ անձի հաշվին:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ **հարստացումն անօրինական ձևով** *(տե՛ս, Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Զելիմ Սիմոնյանի թիվ ԵԱՔԴ/0455/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որպես առևտրային կաշառք տրամադրված գույքը հանդիսանում է հանցագործության առարկա, որը քաղաքացիական իրավունքի տեսանկյունից չի կարող ընորոշվել որպես անհիմն հարստացում, առավել ևս այդ հիմքով այն չի կարող ենթակա լինել վերադարձման առևտրային կաշառքի գումարը տված անձին:

ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

17.07.2015թ.

15. Կառլեն և Արմեն Բաղդասարյաններ ն. Ատոմ և Մարուս Բաղդասարյաններ, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0324/02/08 **Էջ 157-172**

<u>Խնդիր.</u> 1) Արդյո՞ք ըստ կտակի ժառանգությունը կարող է ընդունվել փաստացի տիրապետման եղանակով.

2) արդյո՞ք ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով կարող է ճանաչվել ժառանգի սեփականության իրավունքը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> 1) Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, 1185-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն՝ թե՛ ըստ օրենքի, և թե՛ ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը: Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որոնք պետք է ուղղված լինեն հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միտված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով: Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի *(տե՛ս, Գևորգ Բերբեր-*

յանն ընդդեմ Սարինե Բերբերյանի թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ըստ կտակի ժառանգության ընդունմանն ուղղված ակտիվ և գիտակցված գործողություն պետք է դիտարկել միայն օրենքով սահմանված ժամկետում նոտարական գրասենյակ դիմելու փաստը:

2) Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը» վերտառությամբ 172-րդ հոդվածի 3-րդ կետը, նույն հոդվածի 5-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետը, արձանագրել է, որ սեփականության իրավունքը ծագում է ոչ թե ինքնըստինքյան, այլ սեփականության իրավունքի առաջացման հիմքեր հանդիսացող իրավաբանական փաստերի ուժով: Վկայակոչված հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի շարքում որպես այդպիսի ինքնուրույն հիմքեր, ի թիվս այլնի, նախատեսել է նաև ժառանգման և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու դեպքերը:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել այդ երկու ինստիտուտների միջև անցկացնել իրավահամեմատական վերլուծություն և մասնավորապես նշել է հետևյալը.

– ժառանգական իրավահարաբերությունների դեպքում անձը, լինելով կամ ըստ օրենքի, կամ ըստ կտակի ժառանգ, սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորություն է ունենում միայն համապատասխան անձի (ժառանգատուի) մահվանից հետո՝ օրենքով սահմանված կարգով, դեպքերում և ժամկետներում ժառանգությունն ընդունելու պարագայում,

– ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտն իրենից ներկայացնում է սեփականության իրավունքի ձեռքբերման այնպիսի եղանակ, երբ անձն օրենքով նախատեսված համապատասխան նախապայմանները և ընթացակարգերը պահպանած լինելու դեպքում հնարավորություն է ստանում սեփականատիրոջ հավակնություններ ունենալու համապատասխան գույքի նկատմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ ժառանգման և ձեռքբերման վաղեմության իրավական ինստիտուտներն էականորեն տարբերվում են միմյանցից՝ իրենցից յուրաքանչյուրին բնորոշ մի շարք այլ առանձնահատկություններով: Ժառանգման իրավահարաբերություններին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված էլ ձեռքբերման վաղեմության ինստիտուտն այդ հարաբերությունների առկայության պայմաններում կարող է ստանալ որոշ չափով այլ կիրառություն և նոր մեկնաբանություն: Մասնավորապես՝ նման հարաբերությունների յուրօրինակությունը կայանում է նրանում, որ տվյալ պարագայում հնարավոր չէ որևէ անդրադարձ կատարել կոնկրետ անշարժ գույքի նախկին սեփականատիրոջ անձին, գնահատել նրա գործողությունները կամ անգործությունը, վերջինիս կողմից գույքից հրաժարման փաստի առկայությունը կամ բացակայությունը՝ հաշվի առնելով տվյալ անձի մահվան և նրա ունեցած անշարժ գույքի կապակցությամբ ժառանգական հարաբերությունների ծագման իրավաբանական փաստերը: Հետևաբար, նման պարագայում հետագայում համապատասխան անշարժ գույքը ձեռքբերող անձի բարեխղճության հարցը ևս չի կարող քննության առարկա դառնալ, հատկապես նկատի ունենալով այն իրողությունը, որ միևնույն սուբյեկտի կողմից նույն անշարժ գույքի նկատմամբ տիրապետման եղանակով ժառանգական զանգվածի ընդունման փաստ առկա լինելու պարագայում այդ զանգվածի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառումը փաստացիորեն անհնար է:

Նման պայմաններում, հաշվի առնելով նաև վերը շարադրված իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով ժառանգի սեփականության իրավունքի ճանաչման հնարավորությունը ժառանգատու անձին պատկանած և տվյալ պահին արդեն ժառանգական զանգված հանդիսացող գույքի նկատմամբ բացառվում է:

17.07.2015թ.

16. Գյուլփերի Ստեփանյան ն. Անահիտ Սմբատյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԱՐԱԴ/0416/02/13 **Էջ 173–180**

Խնդիր. Արդյո՞ք պարտապանի մահվան մասին անտեղյակ լինելը կարող է հիմք հանդիսանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243–րդ հոդվածում նշված պահանջը պարտատիրոջ կողմից նույն հոդվածում նշված անձանց սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187–րդ հոդվածի 1–ին կետը, 1188–րդ հոդվածի 1–ին կետը, 1227–րդ հոդվածի 1–ին կետը, 1242–րդ հոդվածի 1–ին կետը, 1243–րդ հոդվածը, 1244–րդ հոդվածի 1–ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ վերահաստատել է նշված հոդվածների վերաբերյալ նախկինում արտահայտած այն դիրքորոշումը, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել: Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244–րդ հոդվածի 1–ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը *(տե՛ս, Սեդա Սոնյանն ընդդեմ Իդա Էբգիմյանի, և Իդա Էբգիմյանն ընդդեմ Սեդա Սոնյանի թիվ 3-1778(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշման շրջանակներում կրկին անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243–րդ հոդվածին, արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալն իրենց պահանջները ներկայացնել նախ հետևյալ անձանց՝ ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, ապա միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին *(տե՛ս, Սերգեյ Թահիրյանն ընդդեմ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտարի թիվ ԵՔԴ/0279/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը):*

Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243–րդ հոդվածի 1–ին կետով օրենսդրի կողմից ժառանգատուի պարտատերերի համար պահանջներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ. այն կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը՝ պայմանավորված ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով:

Ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրել ժառանգատուի պարտավորությունների համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը պետք է հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմի, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ: Եթե ժառանգության զանգվածի կազմը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, այլ է իրավիճակը ժառանգատուի պարտավորությունների պարագայում: Վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, ժառանգատուի պարտատերերի համար սահմանելով պահանջների ներկայացման վերջնաժամկետ, ըստ էության, նախադրյալներ է ապահովել ժառանգի համար ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր՝ ժառանգման իրավունքի իրացման հարցը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243–րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների

շարքին, ինչը նշանակում է, որ այդ ժամկետի բացթողումը հանգեցնում է պարտատիրոջ իրավունքի կորստի: Այսպես՝ գործնականում չի բացառվում, որ ժառանգությունը բացվելուց հետո ժառանգատուի պարտատերը կարող է որոշակի տևական ժամանակ օբյեկտիվորեն չիմանալ պարտապանի մահվան մասին: Մինչդեռ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը, այնպես էլ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելուն վերաբերող մյուս իրավանորմերն այդ կապակցությամբ որևէ բացառություն չեն նախատեսում: Ավելին, ՀՀ օրենսդրությունը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող որոշակի իրավահարաբերությունների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի *(Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը)* և 1228-րդ հոդվածի 2-րդ կետի *(Ժառանգությունն ընդունելը սահմանված ժամկետի ավարտից հետո)* կարգավորումների, չի նախատեսում նաև համապատասխան անձի մահվան մասին տեղյակ չլինելու հիմքով պահանջատիրոջ կողմից ժառանգներին պահանջ ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և (կամ) այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատերերի կողմից պահանջները չներկայացնելու դեպքում նրանք զրկվում են հետագայում պարտապանի ժառանգների դեմ իրենց պահանջները ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունից:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով օրենսդիրը սահմանափակել է նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց ժառանգատուի պարտատերերը կարող են ներկայացնել իրենց պահանջները, մասնավորապես՝ պարտատերն իրավունք ունի իր պահանջը բացառապես ներկայացնել ժառանգությունն ընդունած ժառանգներին, կտակակատարին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Օրենսդիրը, ամրագրելով նշված սուբյեկտների շրջանակը և նրանց պահանջ ներկայացնելու ժամանակահատվածը, այդուհանդերձ, չի կարգավորել այդ պահանջների ներկայացման կարգը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում պարտատերն իր իրավունքը պետք է իրացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել վերը թվարկված սուբյեկտներին ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությամբ անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պահանջ կարող է ներկայացվել ժառանգման իրավունք ունեցող այն անձանց, որոնց վարքագիծը վկայում է ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Ընդ որում, նման պահանջը կարող է ինչպես անմիջականորեն հասցեագրվել ժառանգին, այնպես էլ վերջինիս ներկայացվել դատարան հայց ներկայացնելու միջոցով: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութաիրավական և դատավարական հասկացություն է, որի նյութաիրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը: Հետևաբար ժառանգատուի պարտատերը, վերջինիս հետ ունեցած պարտավորությունից բխող պահանջ ներկայացնելով դատարան ընդդեմ ժառանգման իրավունք ունեցող անձի, հայցի նյութաիրավական կողմի տեսանկյունից իրացնում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով իրենց վերապահված իրավունքը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

28.12.2015թ.

17. Գեղամ Գալստյան v. «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԿԴ/0740/02/14 **Էջ 181-187**

Խնդիր. Վճռաբեկ դատարանն այս որոշմամբ անդրադարձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողի կողմից ծանուցումը հետ վերցնելու իրավունքի իրականացման ժամկետներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Համակողմանիորեն վերլուծելով ՀՀ աշ-

խատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, 37-րդ հոդվածի 1-ին մասը, 112-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի «Աշխատանքային պայմանագրի լուծումը» վերտառությամբ գլխում (15-րդ գլուխ) ընդհանրապես և մասնավորապես աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը կանոնակարգող հոդվածում (112-րդ հոդված) նախատեսված են աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման ժամկետներ, որոնց նպատակն է հավասարապես պաշտպանել ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի շահերը: Որպես այդպիսի ընդհանրական շահեր աշխատողի համար դիտարկվում է նրա իրավունքը՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրացնելու իր հետագա կենսագործունեության ազատությունը (դադարեցնելու աշխատանքը, ընտրելու այլ աշխատանք, զբաղվելու այլ գործունեությամբ և այլն), իսկ գործատուի համար՝ իր հետագա բնականոն գործունեությունը կարգավորելու հնարավորությունը (նոր աշխատող ընտրելու իրավունք, մինչ նոր աշխատող ընտրելը տվյալ աշխատանքի կատարում պահանջելու իրավունք և այլն):

Այսպիսով, օրենսդրի կողմից ժամկետների սահմանումն ուղղված է աշխատանքային պայմանագրի կողմերի շահերի հավասարակշռմանը և դրանից բխող պարտականությունների կատարմանը: Մասնավորապես՝ աշխատանքային պայմանագրի լուծման մասին աշխատողի՝ գործատուին առնվազն երեսուն օր առաջ ծանուցելու պարտականությունն ինքնանպատակ չէ, այն միտված է ապահովելու գործատուի մոտ աշխատանքային իրավահարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը՝ կապված առաջացող թափուր հաստիքը հնարավորինս արագ համալրելու, աշխատանքային բնականոն ընթացքն արագ վերականգնելու հետ:

Ընդ որում, օրենսդիրը ՀՀ աշխատաքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասով իրավունք է վերապահել աշխատողին հետ վերցնելու աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը՝ այն ներկայացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ միևնույն ժամանակ գործատուի համար սահմանելով պարտականություն՝ դիմումին ընթացք չտալու և աշխատանքային հարաբերությունները շարունակելու:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատանքային իրավահարաբերություններում կողմերի շահերի հավասակշռման ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը անհրաժեշտ է մեկնաբանել համակցության մեջ և ոչ թե առանձին վերցված: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված աշխատողի իրավունքի իրացումը փոխկապակցված է նրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի պահպանմանը: Հետևաբար այն դեպքերում, երբ աշխատողը աշխատանքային պայմանագրի լուծման մասին իր դիմումով չի պահպանել առնվազն երեսուն օր առաջ ծանուցելու ժամկետը, նա չի կարող օգտվել նաև եռօրյա ժամկետում իր դիմումը հետ վերցնելու իրավունքից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը ներկայացնելու օրվանից հետո այն եռօրյա ժամկետում հետ վերցնելու աշխատողի իրավունքը վերաբերում է այն դեպքերին, երբ աշխատողը պահպանել է աշխատանքային պայմանագիրը լուծելու ծանուցման երեսուն օրվա ժամկետը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ ծանուցման մեջ աշխատողի կողմից նշվել է աշխատանքային պայմանագիրը լուծելու կոնկրետ ժամկետ, որը չի գերազանցում երեսնօրյա ժամկետը, գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու ծանուցման մեջ նշված ժամկետում: Միաժամանակ այն դեպքում, երբ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման մեջ նշվել է կոնկրետ ժամկետ՝ չպահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ծանուցման երեսնօրյա ժամկետը, գործատուն իրավունք ունի նաև աշխատողի կողմից նշված ժամկետում չլուծելու աշխատանքային պայմանագիրը: Այս դեպքում աշխատողն իրավունք չունի դադարեցնելու աշխատանքը՝ մինչև ծանուցման երեսնօրյա ժամկետի լրանալը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը հիմնված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման վրա, ըստ որի՝ ծանուցման երեսուն օրվա ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

28.12.2015թ.

18. Կարինե Տիտանյան ն. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1896/02/13 **Էջ 188–199**

Խնդիր. 1) Ինչպիսի՞ իրավական կարգավիճակ ունի բաժնետիրական ընկերության տնօրենը.

2) արդյո՞ք իրավաչափ է բաժնետիրական ընկերության միանձնյա գործադիր մարմնի (ընկերության տնօրենի, գլխավոր տնօրենի) լիազորությունները բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կողմից ցանկացած ժամանակ վաղաժամկետ դադարեցնելը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 1-ին մասի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատողը գործունակ ֆիզիկական անձ է, որն անձամբ, որոշակի վարձատրության դիմաց կատարում է աշխատանքային գործառույթներ՝ աշխատանք ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ բաժնետիրական ընկերության տնօրենն ընկերության կառավարման գործադիր մարմինն է, որն, իրականացնելով կառավարման գործառույթներ, ընկերության անունից կատարում է իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններն իրացնում է ընկերության՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի իրավունքներն ու պարտականությունները, ընկերության գույքը տնօրինելու իրավասությունը, աշխատանքային հարաբերություններում իրականացնում է գործատուի իրավունքներն ու պարտականությունները և այլն: Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստել է, որ բաժնետիրական ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի)՝ որպես ընկերության գործադիր մարմնի իրավական կարգավիճակն էապես տարբերվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողի՝ ընդհանուր իրավական կարգավիճակից, ինչը պայմանավորված է գործադիր մարմնի գործունեության առանձնահատկությամբ, բաժնետիրական ընկերության կառավարման համակարգում վերջինիս դերով և նշանակությամբ:

Բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատողի ընդհանուր իրավական կարգավիճակից տարբերվելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումների հիմքում ընկած է նաև այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերության տնօրենը հանդիսանում է ընկերության գործադիր մարմին, իսկ օրենսդրությամբ սահմանված է բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ նաև առևտրային կազմակերպություն (իրավաբանական անձ) լինելու հնարավորությունը, որի հետ ևս ընկերությունը կնքում է պայմանագիր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել փաստել, որ բաժնետիրական ընկերության՝ իրավաբանական անձ գործադիր մարմինն իրականացնում է այն նույն գործառույթները, որոնցով օժտված է ֆիզիկական անձ գործադիր մարմինը (տնօրենը, գլխավոր տնօրենը), մինչդեռ իրավաբանական անձի պարագայում ակնհայտ է, որ կողմերի միջև չեն կարող ծավալվել աշխատանքային հարաբերություններ, քանի որ ընկերության գործադիր մարմին հանդիսացող իրավաբանական անձը, ՀՀ աշխատանքային օրենսդրության տրամաբանության համաձայն, չի կարող համարվել աշխատող:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը ֆիզիկական անձ է (տնօրեն, գլխավոր տնօրեն), ապա վերջինիս նկատմամբ կարող են գործել **ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ աշխատողների ընդհանուր իրավական կարգավիճակի վերաբերյալ այնպիսի դրույթներ, որոնք չեն հակասում ընկերության տնօրենի՝ որպես ընկերության գործադիր մարմնի՝ օրենքով սահմանված իրավական կարգավիճակի բովանդակությանը, և չեն կարգավորվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով**:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի պարունակում բաժնետիրական ընկերության ղեկավարի հետ աշխատանքային հարաբերությունների ծագման կամ դադարման վերաբերյալ որևէ դրույթ, իսկ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ձևավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, 88-րդ հոդվածի 2-րդ կետի, 83-րդ հոդվածի 1-ին մասի իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաժնետիրական ընկերության և վերջինիս միանձնյա գործադիր մարմնի՝ տնօրենի միջև կնքված պայմանագիրն իր բնույթով չի հանդիսանում զուտ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված՝ աշխատանքային պայմանագիր, քանի որ այն չի կնքվում ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված գործատուի և աշխատողի միջև, սակայն կարող է պարունակել նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող կարգավորումներ, հաշվի առնելով, որ բաժնետիրական ընկերության ֆիզիկական անձ գործադիր մարմնի և ընկերության միջև հարաբերություններում առկա են նաև աշխատանքային հարաբերությունների տարրեր:

2) Բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ միանձնյա գործադիր մարմնի հետ պայմանագիրը ցանկացած ժամանակ լուծելու հնարավորությունը ևս պայմանավորված է բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով:

Վճռաբեկ դատարանն այս առումով նախևառաջ անհրաժեշտ է համարել արձանագրել, որ համապատասխան ընկերության սեփականատերը (այդ թվում՝ ի դեմս ընկերության խորհրդի և ընդհանուր ժողովի՝ օրենքով նախատեսված դեպքերում) բնականաբար պետք է օժտված լինի որոշակի իրավազորություններով, որոնք վերջինիս հնարավորություն կտան իր տնտեսական գործունեությունն առավել արդյունավետորեն իրականացնելու և կոնկրետ ընկերությունում իր ներդրած գույքը հնարավորինս ռացիոնալ օգտագործելու նպատակներով, իր պատասխանատվության ներքո ինչպես նշանակել (ընտրել) ընկերության ղեկավար, ում կվստահվի ստեղծված ընկերության կառավարումը, ընկերության գույքի ամբողջականության և պահպանության ապահովումը, այնպես էլ անհրաժեշտության դեպքում դադարեցնել համապատասխան անձի հետ ծավալված հարաբերությունները:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հնարավորությունը բխում է բաժնետիրական ընկերության բաժնետերերի շահերից, իսկ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել ձեռնարկատիրական գործունեության զարգացման ռազմավարության և մարտավարության փոփոխությամբ, կամ ընկերության ղեկավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, կամ գործունեության նոր ուղղությունների ընտրությամբ, կարող է պայմանավորված լինել ընկերության, որպես քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցի, իրավական կարգավիճակի և գույքային դրության փոփոխությամբ, ինչպես նաև այլ պատճառներով, որոնց սպառիչ և ամբողջական ցանկը հնարավոր չէ նախապես սահմանել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված ***«ցանկացած ժամանակ» ձևակերպումը***, որը ենթադրում է այդպիսի անհրաժեշտության առաջացման դեպքում յուրաքանչյուր պահի ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու հնարավորության առկայություն, ըստ էության, բխում է շուկայական տնտեսության պահանջներից՝ հաշվի առնելով բաժնետիրական ընկերությունների տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համապատասխան մարմնի որոշումը կարող է չպարունակել այդպիսի որոշման որևէ պատճառաբանություն, ինչը ևս բխում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության սկզբունքից, հաշվի առնելով, որ այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառները կարող են կապված լինել օրինակ, առևտրային գաղտնիքի կամ նոու-հաուի ***(know-how)*** հետ և այլն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 13.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-753 որոշմամբ նշել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն:

Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված դրույթին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն ձևակերպված է բավարար ճշգրտությամբ, և թույլ է տալիս կանխատեսել, որ բաժնետիրական ընկերության ֆիզիկական անձ գործադիր մարմնի հետ կնքված պայմանագիրը, բացի ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի, կարող է նաև լուծվել ցանկացած պահի՝ անկախ այդ դեպքերի առկայության:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

30.04.2015թ.

19. «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ v. Սարգիս Գասպարյան, քաղ. գործ թիվ ԿԴ/0033/04/13 **Էջ 200-206**

Խնդիր. Արդյոք պարտապանի համար սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություններ ներկայացնելու յոթօրյա ժամկետի ընթացքը սահմանվում է սնանկության կառավարչի կողմից սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակը մամուլում հրապարակելուց, թե պարտապանի կողմից այն ստանալուց հետո:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրել է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 28-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերը, 48-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատավարությունում կողմերի մրցակցության սկզբունքի ապահովմանը՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի իրացման կարևոր նախապայման: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության իմաստով» սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է, որն ուղղված է կողմերի դատավարական իրավունքների լիարժեք իրականացման ապահովմանը: Այսինքն՝ այն պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին (գործին մասնակցող անձանց) տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*տե՛ս, նաև «Դավիթ առևտրի տուն» ՓԲԸ-ն ընդդեմ «Դվին կոնցեռն» թիվ 3-59(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի իրավական մեկնաբանմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կառավարիչը պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, **պահանջների նախնական ցուցակը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին** և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Առանձնացնելով պարտապանին և 5 խոշոր պարտատերերին՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել սնանկության վարույթի ընթացքում այս սուբյեկտների համար սահմանելու առանձին կարգավիճակ՝ հաշվի առնելով սնանկության վարույթի հետագա ընթացքի վրա վերոհիշյալ սուբյեկտների հնարավոր ազդեցությունը, մասնավորապես՝ պահանջների դեմ պարտապանի կողմից հնարավորինս հիմնավորված առարկություններ ներկայացնելու հնարավորության ապահովումը: Հետևաբար կառավարչի պարտականությունն է ոչ միայն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում պահանջների նախնական ցուցակի հրապարակումը, այլև դրա պատշաճ ներկայացումը վերը նշված կողմերին, որպեսզի սնանկության վարույթի ընթացքում լիարժեք ապահովվեն կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության վարույթում կառավարչի կողմից պահանջների նախնական ցուցակը պարտապանին ուղարկելը չպետք է կրի ձևական բնույթ: Մասնավորապես՝ կառավարիչը պահանջների նախնական ցուցակը պարտապանին ուղարկելու և այն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակելու իր իրավունքը պետք է իրականացնի այնպես, որպեսզի ապահովվի «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի հիմքով հրապարակումից հետո՝ 7 օրվա ընթացքում, նախնական ցուցակի դեմ առարկություններ ներկայացնելու պարտապանի իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները յուրաքանչյուր դեպքում պարտատերի նախնական ցուցակը հաստատելու հարցը քննելիս և այդ ցուցակի դեմ պարտապանի կողմից առարկությունները սահմանված ժամկետում ներկայացված լինելու կամ չլինելու հարցը պարզելիս պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները՝

ա) ե՞րբ է պարտապանը ստացել կառավարչի կողմից ուղարկված նախնական ցուցակը և ե՞րբ է նախնական ցուցակը կառավարչի կողմից հրապարակվել մամուլում.

բ) արդյո՞ք այդ պայմաններում հնարավոր է եղել պարտապանի՝ սահմանված ժամկետում առարկություններ ներկայացնելու իրավունքի իրացումը:

30.04.2015թ.

20. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ v. Ջորակ Հովհաննիսյան, քաղ. գործ թիվ ՇԴ/0031/04/13 **Էջ 207-212**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է սնանկության վարույթի շրջանակներում ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու ժամկետների խնդրին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 64-րդ հոդվածի 1-ին մասը, «Մսանկության մասին» ՀՀ օրենքի «Ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները» վերտառությամբ 11-րդ գլխում տեղ գտած 94-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը նպատակ է հետապնդում հնարավորություն ընձեռելու բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել կենսունակությունը:

Միևնույն ժամանակ վկայակոչված իրավակարգավորումը կոչված է ապահովելու պարտատերերի շահերի պաշտպանությունը՝ այդ իսկ նկատառումով սահմանելով ֆինանսական առողջացման ծրագրին պարտատերերի ծանոթանալու իրավունքը, իրավաբանական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից քննարկելու և քվեարկությամբ ընդունելու կամ չընդունելու հնարավորությունը: Ընդ որում,

օրենսդիրը «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանել է նաև իրավաբանական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից քննարկելու և դրա վերաբերյալ քվեարկության միջոցով դիրքորոշումը հայտնելու ժամկետը:

Վերոգրյալով հանդերձ, ֆիզիկական անձի սնանկության առանձնահատկություններից ելնելով, օրենսդիրը վերջինիս ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկության հնարավորություն չի նախատեսել, այդուհանդերձ, հնարավորություն է տվել պարտատերերին՝ ծանոթանալու ֆինանսական առողջացման ծրագրին, և իրենց իսկ շահերի պաշտպանությունից ելնելով՝ նաև վիճարկել այն:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մսանկության մասին» ՀՀ օրենքով (*տե՛ս, «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանն ընդդեմ «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ի թիվ ԵՇԴ/0023/04/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրին ծանոթանալու և այն վիճարկելու համար «Մսանկության մասին» ՀՀ օրենքով որևէ ժամկետ սահմանված չէ, հետևաբար դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումները, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին կետը, համաձայն որի՝ դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում: Դրանց բացակայության դեպքում դատավարական գործողությունների կատարման ժամկետները սահմանում է դատարանը:

Հաշվի առնելով, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկություն օրենքը չի նախատեսում, և ֆիզիկական անձ պարտապանի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու դեպքում պարտատերերի շահերի պաշտպանության իրականացումը նշված փուլում դրսևորվում է միայն վերջիններիս կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը վիճարկելու հնարավորությամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վիճարկելու ժամկետները սահմանելիս պետք է հաշվի առնեն պարտատերերի շահերի պաշտպանությունը՝ այդ իրավունքի իրականացման համար ապահովելով իրական երաշխիքներ:

28.12.2015թ.

21. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ v. «ԱԼՏԷ» ՓԲԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1873/02/14 **Էջ 213-222**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում վերջինս կարող է իր պահանջների բավարարման համար դատական կամ արտադատական կարգով բռնագանձում տարածել գրավադրված գույքի վրա:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածը, ի թիվս այլ իրավակարգավորումների (օրինակ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, արգելվում է պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթի սկսումը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մա-

սով և այլն), 2-րդ մասի «գ» կետով նախատեսել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ պարտապանի մասով:

Նշված քաղաքացիական գործը կարող է վերսկսվել սնանկության գործի ավարտից հետո պարտապանի ֆինանսապես առողջացման դեպքում: Հակառակ դեպքում դատարանի սնանկության գործն ավարտելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը հիմք է քաղաքացիական գործի վարույթի կարճման համար՝ լուծարված պարտապանի մասով:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետին և արձանագրել է, որ դրանում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը, այն է՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը *(տե՛ս, օրինակ, ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Սպիտակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ-ի թիվ 3-1717(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության *(տե՛ս, Մարինե Ավետիսյանն ընդդեմ Արտեմ Ավետիսյանի թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը)*:

Վերոգրյալի հաշվառմամբ, միաժամանակ նկատի ունենալով բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական խնդիրը. ի՞նչ հետևանքներ կարող է առաջացնել պարտապանի սնանկությունը՝ գրավով ապահովված պարտատիրոջ համար և ի՞նչ կարգով պարտատերը կարող է ստանալ իր ապահովված պահանջների բավարարում:

Վերլուծելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը, 43-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով ապահովված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում՝ գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված

պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ սնանկության վարույթից դուրս, թե՛ սնանկության վարույթի շրջանակներում բավարարում ստանալու եղանակներն ունեն իրենց առանձնահատկությունները: Այսպես, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ բացառապես գրավադրված գույքի հաշվին, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Մինչդեռ այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության վարույթի շրջանակներում իր պահանջների բավարարում ստանալու եղանակը, ապա գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և այս դեպքում գրավով ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Այդ իսկ նկատառումով օրենսդիրը, գրավով ապահովված պարտատիրոջը հնարավորություն ընձեռելով կամովին ընտրելու իր պահանջների բավարարման եղանակը՝ շրջանցելով սնանկության վարույթը, կամ այդպիսի բավարարում ստանալ սնանկության վարույթի շրջանակներում, այդուհանդերձ, նախատեսել է որոշակի սահմանափակումներ: Այսպես՝ սնանկության վարույթի շրջանակներից դուրս իր պահանջների բավարարում ստանալու՝ գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքն օրենսդիրը սահմանափակել է գրավի արժեքի սահմաններով, ի տարբերություն քաղաքացիական շրջանառության բնականոն պայմանների, երբ գրավով ապահովված պարտատերն իրավունք ունի գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն իր պահանջները բավարարելու համար բավարար չլինելու պայմաններում պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ կետ): Միաժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջն իրավունք վերապահելով պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունն առաջնահերթ բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, պահանջի բավարարումը գրավից ազատ գույքից օրենսդիրը սահմանափակել է այնքան, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին: Ընդ որում, գրավից ազատ գույքի հաշվին գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել միայն որպես չապահովված պահանջ՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից չբավարարված պահանջի մասով՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և պայմաններով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով գրավով ապահովված պահանջի պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարում՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, և այդ բավարարման չափը սահմանափակելով բացառապես գրավադրված գույքի արժեքով, որևէ կերպ չի սահմանափակել գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված իր պահանջների բավարարման իրավունքի իրացման՝ օրենսդրությամբ սահմանված եղանակների ընտրության հնարավորությունը: Մասնավորապես՝ սահմանափակված չէ գրավադրված գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ դատական կամ արտադատական կարգով իրացնելու հնարավորությունը: Ավելին, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը, սահմանելով, որ գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթից դուրս բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի

իրացման հաշվին, մասնավորեցնելով նշել է՝ «այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու» հաշվին, ինչը նշանակում է, որ դատական կարգով գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորությունն ինքնին ենթադրվում է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ գրավով ապահովված պահանջի պարտատերն օգտվում է իր պահանջի բավարարումը սնանկության վարույթի շրջանակներից դուրս ստանալու՝ օրենքով իրեն վերապահված իրավունքից, վերջինս հնարավորություն ունի գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավադրված գույքի իրացման կանոններին համապատասխան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով սահմանված՝ մորատորիումի գործողության տարածման բացառությունը հնարավորություն է տալիս գրավով ապահովված պարտատիրոջը մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում սնանկության վարույթը շրջանցելով գրավով ապահովված պահանջների համար դրամական կամ այլ բավարարում ստանալ, կամ գրավով ապահովված պահանջների բավարարման համար կնքել ցանկացած գործարք կամ իրականացնել այդպիսի գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն կամ գործընթաց: Հետևաբար, եթե տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու մասին՝ գրավով ապահովված պահանջի պարտատերն ապահովել է սնանկության վարույթը շրջանցելով իր պահանջների բավարարում ստանալու համար օրենքով նախատեսված պարտադիր պայմանի կատարումը, այն է՝ ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին, ապա վերջինիս՝ գրավադրված գույքի արժեքի սահմաններում պահանջների դրամական կամ այլ բավարարում ստանալու իրավունքի իրացման՝ պարտատիրոջ կողմից ընտրված եղանակի վրա այլևս մորատորիումի գործողությունը չի կարող տարածվել, այդ թվում՝ չեն կարող գործել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները, այն է՝ չի կարող գործել պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթ սկսելու արգելքը, ինչպես նաև չի կարող կարճվել գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական գործի վարույթը, որը վերաբերում է գրավադրված գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջի բավարարմանը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վերը նշված կարգավորումները հավասարապես կիրառելի են նաև այն դեպքերում, երբ սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների ապահովման համար գրավադրվել է երրորդ անձին պատկանող գույք: Նման եզրահանգումը բխում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար գրավադրված գույքը (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում նույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

28.12.2015թ.

22. «Էմմել Սքայ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյան v. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1446/02/13 **Էջ 223-235**

Խնդիր. Արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանափակումները վերաբերում են բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ապահովված պահանջների բավարարման համար փոխանցված անշարժ գույքի հետ կապված բոլոր գործարքներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով «Սնանկության մասին» ՀՀ

օրենքի 54–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ սնանկ ճանաչված պարտապանի և մյուս պահանջատերերի շահերը պաշտպանելու նպատակով օրենսդիրը հնարավորություն է ընձեռել պարտապանի սնանկության գործով կառավարչին՝ դատական կարգով հետ ստանալու պարտապանի կողմից նույն հոդվածով սահմանված դեպքերում և ժամկետներում կատարված դրամային և ոչ դրամային օտարումները:

Ընդ որում, նշված հոդվածի 1–ին մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում դրանով սահմանված ժամկետներում դատական կարգով հետ վերադարձման ենթակա են՝

– պարտապանի՝ երրորդ անձանց կատարած անհատույց փոխանցումները, այդ թվում՝ ոչ դրամային,

– պարտապանի՝ պարտատիրոջը կամ վերջինիս օգտին նախկինում ստանձնած պարտավորության դիմաց կատարած ցանկացած փոխանցումները, այդ թվում՝ ոչ դրամային,

– գույքի (ծառայության, աշխատանքի) իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերությունը, որը «Մնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտվում է որպես կատարած գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնաս:

Վերլուծելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դրանով օրենսդիրը սահմանափակել է սնանկության գործով կառավարչի՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասով սահմանված ակտիվների հավաքագրման իրավունքը: Ընդ որում, եթե «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված սահմանափակումները վերաբերում են միայն նույն հոդվածի 1–ին մասի «գ» կետում սահմանված դեպքերին, ապա նույն հոդվածի 3–րդ մասով նախատեսված սահմանափակումները տարածվում են փոխանցված գույքը կամ դրա արժեքը վերադարձնելու կառավարչի իրավունքի՝ նույն հոդվածով սահմանված բոլոր դեպքերի վրա այնքանով, որքանով այդ սահմանափակումները կիրառելի են փոխանցված գույքը կամ դրա արժեքը վերադարձնելու կառավարչի համապատասխան իրավունքի նկատմամբ:

Միաժամանակ, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի ուժով նույն հոդվածով նախատեսված դեպքերում (այն է՝ 54–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված) օտարված գույքը կամ գույքի արժեքը չի կարող հետ պահանջվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

– գույքը փոխանցվել է բանկի կամ վարկային կազմակերպության՝ ապահովված պահանջների բավարարման համար,

– գույքը փոխանցվել է դրա (գույքի) հետ կապված գործարքների կատարման արդյունքում:

Ընդ որում, օրենսդիրը չի առանձնացրել որևէ կոնկրետ գործարք, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գույքի հետ կապված ցանկացած քաղաքացիաիրավական գործարքի հիման վրա, որի արդյունքում գույքը կարող է փոխանցվել բանկին կամ վարկային կազմակերպությանը՝ ապահովված պահանջների բավարարման համար, տարածվում են «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի դրույթները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

28.12.2015թ.

23. Աննա Ասատրյան v. Դավիթ Խաչատրյան, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0124/02/12 **Էջ 236–245**

Խնդիր. Իրավաչափ է արդյոք ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ քաղաքացիական գործի քննության ընթացքում դատարանի կողմից երեխայի՝ ծնողներից մեկի հետ ունեցած կապվածությունը որպես երեխայի լավագույն շահերի բացահայտման միակ չափանիշ դիտարկելը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետը, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 5-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը, 53-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 67-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր երեխա ծնունդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ *(տե՛ս, նաև Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու և երեխաների բնակության վայրի շուրջ ծնողների համաձայնության բացակայության դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի, թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը *(տե՛ս, Արա Միրզախանյանն ընդդեմ Դիանա Խաչատրյանի թիվ 3-432(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):*

05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշմամբ անդրադառնալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավադրույթում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունն)» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում և բացահայտում են վիճարկվող դրույթներում «երեխաների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդ որում, վերը նշված պայմանները սպառիչ չեն, և երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաև այլ պայմաններ հաշվի առնելը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Հետևաբար ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ

դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ երեխաների դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է գործի քննությանը մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, որին տվյալ գործով հանձնարարվում է իրականացնելու երեխայի դաստիարակությանը հավակնող անձանց կենսապայմանների ուսումնասիրություն և այդ կապակցությամբ դատարանին ներկայացնելու իր եզրակացությունը: Ընդ որում, այդ եզրակացությունը դատարանի համար թեև կրում է մասնագիտական-խորհրդատվական բնույթ, և դատարանն այն պարտավոր է գնահատել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ, այնուամենայնիվ, նմանատիպ գործերով վերոնշյալ եզրակացության առկայությունը պարտադիր է, քանի որ դրանում արտահայտված փաստարկները գործում առկա մյուս ապացույցների հետ համադրության արդյունքում դատարանին հնարավորություն են ընձեռնում կոնկրետ գործով պարզելու երեխայի լավագույն շահը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

1) երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ,

2) երեխայի տարիքը,

3) ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,

4) ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,

5) երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխայի բնակության վայրը որոշելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործեր քննելիս դատարանը կարող է բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված վերոգրյալ չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի այլ պայմաններ: Ընդ որում, երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի բացահայտման հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում առկա յուրաքանչյուր ապացույցի անմիջական գնահատման արդյունքում: Այլ կերպ ասած՝ երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի մյուս բոլոր պայմանները: Երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը: Հետ-

նաբար երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի հիման վրա հարուցված սույն քաղաքացիական գործի շրջանակներում ստորադաս դատարանները պարտավոր էին գործում առկա բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատել գործում առկա յուրաքանչյուր ապացույց՝ պարզելու համար երեխայի լավագույն շահերը որոշելու բոլոր չափանիշներն ու պայմանները:

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

28.12.2015թ.

24. «Երևան ջուր» ՓԲԸ v. «ԱՌՆԱԴՕ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/2401/02/14 **էջ 246–254**

Խնդիր. Արդյո՞ք ՀՀ կառավարության 22.01.2004 թվականի թիվ 130–Ն որոշմամբ հաստատված՝ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 25–րդ կետով նախատեսված խախտումների հայտնաբերման վերաբերյալ առանց բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի ներկայության կազմված ակտը կարող է համարվել իրավաչափ և հիմք ծառայել բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի՝ նույն կետով սահմանված կարգով վերահաշվարկման (ճշգրտման) համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ կառավարության 22.01.2004 թվականի թիվ 130–Ն որոշմամբ հաստատված՝ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 18–րդ կետը, 42–րդ կետի «ը» ենթակետը, 45–րդ կետի «բ» ենթակետը, 25–րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված դրույթները, ըստ էության, միտված են սպառողների և հանրային ծառայություններ մատուցող անձի՝ ջրամատակարարի շահերի հավասարակշռմանը: Մասնավորապես՝ կողմերի շահերի հավասարակշռմամբ է պայմանավորված «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» սահմանված բաժանորդի պարտականությունը՝ չխոչընդոտել ջրամատակարարի ներկայացուցչի մուտքն իր տարածք՝ տեղադրված ջրաչափի ցուցմունքների գրառման և ներքին ցանցերի, կառուցվածքների ու սարքերի տեխնիկական շահագործման վիճակն ուսումնասիրելու, ինչպես նաև ջրամատակարարի մոտ բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկած առաջանալու դեպքում՝ դա ճշգրտելու համար: Միաժամանակ բաժանորդի նշված պարտականությունը ծագում է բացառապես ջրամատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայականը ցույց տալու դեպքում: Մյուս կողմից, ջրամատակարարի ներկայացուցիչը, իրավունք ունենալով ծառայողական վկայականը ցույց տալու դեպքում անարգել մուտք գործել բաժանորդի տարածք՝ տեղադրված ջրաչափի ցուցմունքների գրառման և ներքին ցանցերի, կառուցվածքների ու սարքերի տեխնիկական շահագործման վիճակն ուսումնասիրելու, ինչպես նաև ջրամատակարարի մոտ բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկած առաջանալու դեպքում՝ դա ճշգրտելու համար, պարտավոր է նշված գործողություններն իրականացնել բաժանորդի հետ համատեղ, ինչը ենթադրում է, որ ջրամատակարարը (ներկայացուցիչը) պարտավոր է առնվազն ապահովել բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի պատշաճ տեղեկացումը ջրամատակարարի ներկայացուցչի գործողությունների վերաբերյալ:

Ջրամատակարարի և բաժանորդի շահերի հավասարակշռման վերաբերյալ վերն արտահայտված եզրահանգումների լույսի ներքո անդրադառնալով «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 18–րդ և 45–րդ կետերի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 45–րդ կետով սահմանված է ջրամատակարարի իրավունքը՝ կասկած առաջանալու դեպքում պահանջելու բաժանորդին պատկանող ջրաչափի ստուգում, սակայն այդպիսի ստուգումը վերջինս կարող է իրականացնել բացառապես «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 18–րդ կետի համաձայն, այն է՝ բաժանորդին ստուգաչափման մասին պաշտոնապես ծանուցելու պայմաններում և ծանուցման օրվանից տասնօրյա ժամկետում: Ստուգաչափման մասին բաժանորդին ծանուցելու ջրամատակարարի պարտականությունը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միտված է մի կողմից բաժանորդի իրավունքի իրականացման, այն է՝ ստուգաչափմանը ներկա գտնվելու ապահովմանը, մյուս կողմից ապահովում է բաժանորդի պարտականության

իրականացումը, այն է՝ ջրամատակարարի ներկայացուցչին իր տարածք անարգել մուտքի ապահովման կազմակերպումը:

Վերը նշված եզրահանգումների լույսի ներքո անդրադառնալով «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 25-րդ կետին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանով գործադիրը սահմանել է ջրամատակարարի պարտականությունը՝ խախտում հայտնաբերելու դեպքում բաժանորդին կամ նրա ներկայացուցչին մասնակից դարձնել խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն: Ընդ որում, խախտումը պետք է արձանագրվի, և խախտման մասին ակտը պետք է կազմվի խախտման հայտնաբերման պահին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործադիրի կողմից խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու ջրամատակարարի պարտականության սահմանումն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է հանրային ծառայություններ մատուցողի հետ հարաբերություններում սպառողի իրավունքների պաշտպանությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խախտումների հայտնաբերման դեպքում բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալը ենթակա է վերահաշվարկման «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 25-րդ կետով սահմանված կարգով, մասնավորապես՝ նույն կետով տարբեր բաժանորդների համար նախատեսված ժամկետով՝ հաշվի առնելով նրանցման խողովակի թողունակության ջրի քանակը, ինչը լրացուցիչ վճարային պարտավորություն է առաջացնում բաժանորդի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 25-րդ կետով նախատեսված խախտումների հայտնաբերման վերաբերյալ կազմված ակտը չի կարող համարվել իրավաչափ և հիմք ծառայել բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի՝ նույն կետով սահմանված կարգով վերահաշվարկման (ճշգրտման) համար, եթե այն կազմվել է առանց բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի մասնակցության:

Հաշվի առնելով «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 25-րդ կետով խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու ջրամատակարարի պարտականության սահմանումը և այդ պարտականությունը չկատարելու, այն է՝ ակտն առանց բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի ներկայության կազմելու դեպքում դրա ոչ իրավաչափ լինելու և բաժանորդի համար իրավական հետևանքներ չառաջացնելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» 25-րդ կետի հիմքով խախտման մասին ակտը կազմելիս բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի ներկա լինելու փաստի ապացուցման բեռը կրում է ջրամատակարար կազմակերպությունը: Ընդ որում, հաշվի առնելով, որ նույնիսկ բաժանորդի ներկայության պայմաններում վերջինս կարող է հրաժարվել ակտը ստորագրելուց, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ խախտման վերաբերյալ ակտը բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից ստորագրված չլինելն ինքնին հիմք չէ հաստատված համարելու ջրամատակարարի կողմից բաժանորդի ներկայությունը չապահովելու փաստը, եթե ջրամատակարարը ներկայացնում է վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ այնպիսի ապացույցներ, որոնք հաստատում են վերջինիս կողմից խախտման վերաբերյալ ակտը բաժանորդի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ կազմելու փաստը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՈՒՄ

17.07.2015թ.

25. «Դ.Ֆ. ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի v. «ԿՈՏԱՅՔ» գարեջրի գործարան ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԿԴ1/1302/02/13 **էջ 255-262**

Խնդիր. Արդյո՞ք սնանկության գործով կայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքները կարող են դիտարկ-

վել որպես քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքներ, որոնք այլ քաղաքացիական գործ քննելիս ապացուցման կարիք չունեն:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մսանկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ մսանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մսանկության մասին» ՀՀ օրենքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի իրավադրույթներով մսանկության գործի քննության արդյունքում կայացված ակտերի նախադատելիության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ հարաբերությունների նկատմամբ ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի իրավակարգավորումներին: Մասնավորապես, «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո դատարան ներկայացրած նոր պահանջները և պահանջների փոփոխությունները դատարանը հանձնում է կառավարչին: Կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դրա պատճենն ուղարկում է պարտապանին, պարտատերերին կամ այդ մասին ամփոփ տեղեկատվություն է հրապարակում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե պահանջի փոփոխության պատճենն ստանալուց կամ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում տեղեկատվություն հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը, պարտատերերը պահանջի, պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն չեն ներկայացնում դատարան, ապա կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունը գրանցում է պահանջների գրանցամատյանում՝ նույն օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ նշել է, որ «պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը, հետևաբար նաև պահանջների վերջնական ցուցակն ինքնին, հաշվի առնելով մսանկության վարույթի առանձնահատկությունները, պարտադիր է մսանկության վարույթի մասնակիցների իրավունքների ծավալը որոշելու համար: Հետևաբար «Մսանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավունքների և պարտականությունների առումով այն պարտադիր է նաև մսանկության վարույթում պարտատեր գրանցված անձանց համար: Ավելին, պարտատիրոջ կողմից մսանկության վարույթում պահանջ չներկայացնելը կամ դրա մերժումը բացասական հետևանքներ է առաջացնում այդ պարտատիրոջ համար: Միաժամանակ վերլուծելով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պահանջների վերջնական ցուցակը մսանկության վարույթի շրջանակներում կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների, ինչը վկայում է այն մասին, որ համապատասխան դատական ակտով հաստատված պարտատերերի ցուցակը և նրանց պահանջների չափն իրենց բնույթով չեն կարող միանշանակորեն համարվել վերջնական և անփոփոխելի հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով մսանկության վարույթի առանձնահատկությունները, գտել է, որ «պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը չի կարող ունենալ օրինական ուժ ստացած վճռի կարգավիճակ և նախադատելի լինել այլ քաղաքացիական գործ քննելիս: Այդուհանդերձ «պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը կարող է դիտվել որպես ինքնուրույն գրավոր ապացույց, որը կարող է պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

27.11.2015թ.

26. Աշոտ Ղազարյան, Մարգարիտ Դալլաքյան v. «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Արուսյակ Ազարյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԼԴ/0898/02/13 **Էջ 263–269**

Խնդիր. Արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթի կարճման որոշմամբ հաստատված հանգամանքները կարող են դիտվել որպես քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներ և նախադատելի լինել քաղաքացիական գործ քննելիս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար հետևյալ շրջանակներում.

1. արդյոք կատարվել են որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյոք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից (հանցագործության սուբյեկտ) *(տե՛ս, Կարապետ Գրաչյանն ընդդեմ Ափոմ Ղազազյանի թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ նախադատելի նշանակություն ունեցող դատական ակտը դատավճիռն է, քանի որ քաղաքացիական դատավարության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները՝ անձը (հանցագործության սուբյեկտ) և գործողությունները (հանցագործության օբյեկտիվ կողմ), կարող են հաստատված համարվել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների կողմից քրեական գործի վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումներում հաստատված՝ հանցավոր արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների վերաբերյալ եզրահանգումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով չունեն նախադատելի նշանակություն:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների կողմից քրեական գործի վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումները դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

27.11.2015թ.

27. ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչություն v. Ա/Ձ Գուրգեն Այվազյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵՇԴ/3780/02/14 **Էջ 270–276**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել դատարանների կողմից սեփական նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորության իրականացման խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացությունն

ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ *(տե՛ս, «Օրիենթ Սթոուն» ՍՊԸ-ն ընդդեմ «Վագ քար» ՍՊԸ-ի և մյուսների թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից *(տե՛ս, Ռազմիկ Սարգսյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի թիվ 3-259(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է նաև այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից *(տե՛ս, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ «Չայլդ» ՍՊԸ-ի թիվ 0351/02/08-(ԾԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը):*

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ գործող քաղաքացիադատավարական իրավակարգավորման պայմաններում դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն ինչպես կողմի միջնորդությամբ, այնպես էլ իր նախաձեռնությամբ: Այսինքն՝ օրենսդրորեն սահմանվել է դատարանի հայեցողական լիազորությունը՝ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: «Հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանի բնորոշմամբ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գոր-

ծողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է: «Դատական հայեցողությանը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն: Իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ երաշխավորվի կամայականության արգելքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները: Ըստ այդմ, «դատական հայեցողության» սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, միաժամանակ պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննության նշանակումը թեև դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ լիազորությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված և երաշխավորված գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ներքին համոզման հանգելու պարտականության լիարժեք իրականացումը՝ միաժամանակ երաշխավորելով կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքները, անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև վիճելի իրավահարաբերության բնույթը և կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

17.07.2015թ.

28. «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյան v. Կարեն Ավսիկյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԷԴ/1284/02/12 **էջ 277-289**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք գործում առկա երկու փորձագիտական եզրակացությունները կարող են գնահատվել որպես իրար հակասող, եթե փորձաքննությունները նշանակվել են ըստ էության տարբեր հարցադրումների պարզաբանման նպատակով:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 60-րդ հոդվածը, 62-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածում սահմանված ապացույցներից որևէ մեկը, այդ թվում նաև՝ փորձագետի եզրակացությունը որևէ առավելություն չունի գործում առկա մյուս ապացույցների նկատմամբ և ենթակա է գնահատման ընդհանուր կարգով՝ վերաբերելիության, թույլատրելության, արժանահավատության տեսանկյունից:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով: Հետևաբար անգամ ընդհանուր կարգով գնահատումն անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել առանձնացնել այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս:

Վերաբերելիության առումով փորձագետի եզրակացությունը գնահատելիս նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին: Ընդ որում, հարցադրումների բովանդակությունը ոչ միայն էական նշանակություն ունի փորձագե-

տի եզրակացության վերաբերելիության գնահատման տեսանկյունից, այլև կարևորվում է երկու և ավելի եզրակացությունների պարագայում դրանց միջև առկա հակասությունները վեր հանելու առումով:

Փորձագետի եզրակացությունը ***թույլատրելիության տեսանկյունից*** գնահատման ենթարկելիս առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, նշված անձի օբյեկտիվությունը, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելը, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպումը:

Արժանահավատության տեսանկյունից փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-5-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ առկա են էական և առանցքային տարբերություններ լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նպատակների և նշանակման հիմքերի միջև:

Այսպես, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հիմքը փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու հանգամանքն է: Լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել միայն փորձագիտական եզրակացությանը ծանոթանալուց հետո, եթե պարզվի, որ փորձաքննությանն առաջադրված հարցադրումների կամ դրանց մի մասի վերաբերյալ պատասխանը հստակ կամ ամբողջական չէ, ինչպես նաև այն դեպքում, երբ փորձագիտական եզրակացությանը ծանոթանալուց հետո դրանում լուսաբանված հարցերի վերաբերյալ նոր հարցադրումներ են առաջանում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով: Ըստ այդմ, լրացուցիչ փորձաքննություն կարող է չնշանակվել, եթե գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետի կողմից դատական նիստում տրված բացատրությունների արդյունքում լրացվում, ամբողջականացվում և հստակեցվում են փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի պատասխանները, ինչը բխում է նաև արդարադատության արդյունավետության և ողջամիտ ժամկետում գործերի քննության պահանջից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ լրացուցիչ փորձաքննությունն իր բնույթով ուղղված չէ սկզբնական փորձաքննության հետ մրցակցելուն, այլ ուղղված է սկզբնական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացության մեջ առկա անհստակությունները լրացնելուն, այդ պատճառով էլ, ի տարբերություն կրկնակի փորձաքննության, օրենսդիրը հնարավոր է համարել լրացուցիչ փորձաքննությունը հանձնարարել ինչպես մեկ այլ, այնպես էլ սկզբնական փորձաքննությունն իրականացրած փորձագետին:

Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննությանը, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետով օրենսդիրը սպառիչ կերպով սահմանել է վերջինիս հիմքերը, այն է՝ փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ առաջանալը, կամ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությունը:

Անդրադառնալով փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ առաջացած կասկածներին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք չեն կարող կրել բացառապես սուբյեկտիվ բնույթ, այլ պետք է հիմնավորվեն օբյեկտիվ հանգամանքներով: Մասնավորապես, փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին, փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու,

փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացություն տալու իրավասություն չունի, եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս ապացույցների ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլն:

Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննություն նշանակելու մյուս հիմքին, այն է՝ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությանը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ երկու և ավելի եզրակացություններում հակասությունների մասին կարելի է դատողություններ անել միայն այն դեպքում, երբ եզրակացությունները տրվել են ըստ էության միևնույն հարցերի պարզաբանման նպատակով, և առաջադրված միևնույն հարցադրումների վերաբերյալ տարբեր փորձագետներ փորձաքննությունների արդյունքում հանգել են տրամագծորեն տարբեր և իրար հակասող հետևությունների:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

27.11.2015թ.

29. Նունե Աբրահամյան v. Արամ Գրձելյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2953/02/13 **Էջ 290–298**

<u>Խնդիր.</u> Արդյոք դատարաններն իրավասու են շահագրգիռ անձի միջնորդությունը մասնակիորեն բավարարել և պետական տուրքի վճարումը հետաձգել այն պարագայում, երբ համապատասխան անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Բողոքի հիմքում բարձրացված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը նախ և առաջ վկայակոչել է պետական տուրքի գծով արտոնությունների սահմանման անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը, ինչպես նաև վերահաստատել է նախկիում կայացրած որոշումներում իր կողմից արտահայտած դիրքորոշումները: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը, իր 2010 թվականի մայիսի 25-ի թիվ ՍԴՈ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: ... «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետը դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորություն է երաշխավորում ոչ բավարար ֆինանսական միջոցներ ունեցող անձանց համար: Ընդ որում, համապատասխան արտոնությունները, ի թիվս այլնի, ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանը ևս, իր նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով պետական տուրքի հետ կապված խնդիրներին, մասնավորապես՝ փաստել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից, և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև *(տե՛ս,*

Արմենակ և Գոհար Սահակյաններն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի թիվ 3-734(ՎԴ) որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, գանգատ թիվ 21638/03, կետ 44):

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է նաև, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նման արտոնություն կիրառելու հնարավորություն ընձեռել է դատարաններին կամ դատավորներին այն դեպքերում, երբ թեև բացակայում են նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հիմքերը, սակայն ելնելով կողմերի գույքային դրությունից՝ անհրաժեշտ է սահմանել նման արտոնություն՝ երաշխավորելու անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը *(տե՛ս, Շամամ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանները պետական տուրքի գծով արտոնություններ կիրառելու հարցը կարող են քննարկել և համապատասխան արտոնություններ սահմանել դատավարության մասնակցի կողմից կոնկրետ միջնորդության ներկայացման դեպքում: Ընդ որում, դատարաններն իրավասու են սահմանելու «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով պետական տուրքի գծով նախատեսված ոչ թե ցանկացած արտոնություն, այլ միայն այն արտոնությունը, որը հստակորեն նշվել է շահագրգիռ անձի ներկայացրած միջնորդության մեջ:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը նախ և առաջ պայմանավորված այն հանգամանքով, որ մրցակցային դատավարության պայմաններում դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, որոշակի դատավարական գործողությունների կատարմանը ձեռնամուխ է լինում միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը հայցում է համապատասխան գործողության կատարումը: Այսինքն՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված դատարանը հանդես է գալիս որպես միայն վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով: Մասնավորապես՝ դատարանի կողմից դատավարական որոշակի գործողությունների կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի շահագրգիռ անձը գրավոր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև բանավոր, հայցի համապատասխան գործողության կատարումը: Հետևաբար, համապատասխան միջնորդության առկայությունն այն նախապայմանն է, որը վկայում է շահագրգիռ անձի կողմից համապատասխան գործողության հայցման մասին, ինչն էլ դատարանի կողմից պետք է ենթակա լինի քննության: Մյուս կողմից, քաղաքացիադատավարական հարաբերությունները ծավալվում և գործառնում են տնօրինչականության սկզբունքի շրջանակներում: Քաղաքացիադատավարական այս սկզբունքի բովանդակությունը ներառում է այն դատավարական իրավունքները, որոնք թույլ են տալիս կանխորոշել դատական պաշտպանության առարկան և ազդել դատավարության ուղղվածության և ընթացքի վրա: Տնօրինչականության սկզբունքի դրսևումներից է դատական ակտի բողոքարկումը: Օրենսդիրն այդ իրավունքի իրացումը, ի թիվս այլ պայմանների, պայմանավորել է օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու հանգամանքով կամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետական տուրքի գծով որևէ կոնկրետ արտոնության հայցմամբ: Հետևաբար այն դեպքում, երբ անձը, իրացնելով իր բողոքարկման իրավունքը, դրա շրջանակներում հայցում է պետական տուրքի գծով որևէ արտոնություն, շահագրգիռ անձի նման իրավունքին համապատասխանում է դատարանի՝ այդ իսկ միջնորդությունը քննելու և լուծելու պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանը որոշում է կայացնում միայն համապատասխան միջնորդության կամ դիմումի առկայության

պարագայում և դրա քննարկման արդյունքում կարող է լուծում տալ բացառապես միջնորդության կամ դիմումի մեջ բարձրացված հարցին (հարցերին), հետևաբար, ներկայացված **միջնորդության քննարկման արդյունքներով** դատարանի կողմից չի կարող լուծում տրվել մի հարցի, որը չի բարձրացվել շահագրգիռ անձի կողմից, չի բխում դրա բովանդակությունից:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շահագրգիռ անձն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենսդրությամբ նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված կոնկրետ հարցի որոշակի և վերջնական լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի՝ միջնորդություն հարուցելու իրավունքին միանշանակորեն համապատասխանում է տվյալ միջնորդության մեջ շարադրված հարցի քննարկման արդյունքներով հստակ եզրահանգումներ պարունակող որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: Հետևաբար այն դեպքում, երբ շահագրգիռ անձը, միջնորդություն ներկայացնելով, հայցում է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ արտոնություն, դատարանը պետք է քննության առարկա դարձնի և որոշում կայացնի բացառապես այդ հարցերից որևէ մեկ վերաբերյալ:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

30.04.2015թ.

30. ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարան ν. Ստյոպա Հովհաննիսյան, քաղ. գործ թիվ ՍԴ2/0196/02/13 **Էջ 299–306**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել պատշաճ ծանուցված չլինելու փաստը այն դեպքում, երբ վերջինս բարեխղճորեն չի օգտվել իր դատավարական իրավունքներից և պարտականություններից՝ անտեսելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված՝ ծանուցման հասցեի փոխոխության վերաբերյալ դատարանին տեղեկացնելու պարտադիր պայմանը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 28-րդ հոդվածները, մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ վերահաստատել է նշված իրավանորմերի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի բովանդակությանը, նշել է, որ դրանով նախատեսված նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը *(տե՛ս, Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը գտել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Նման կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների

իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերն ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից: Դրանով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրն իր դատավարական իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվող կողմի վրա է թողնում հետևանքները կրելու ռիսկը, այն է՝ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու հանգամանքից *(տե՛ս, Արամ Մակարյանն ընդդեմ Խաչիկ Մանուկյանի թիվ ԵԱՆԴ/0326/02/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատաքննության մասնակիցներից յուրաքանչյուրն ինքը պետք է շահագրգռված լինի իր իրավունքների պաշտպանությամբ և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ավարտվելու հարցում և չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կխոչընդոտեն գործի քննության բնականոն ընթացքին և կձգձգեն դատավարությունը: Հակառակ պարագայում կստացվի այնպես, որ կողմերից մեկը, ունենալով անսահմանափակ իրավունքներ, պաշտպանության գործող մեխանիզմը կօգտագործի մյուս կողմին ի վնաս՝ խախտելով վերջինիս իրավունքները և օրինական շահերը, ինչը կհակասի արդարադատության բուն էությանն ու դատավարության նպատակին, քանի որ դատավարությունը կոչված է վերականգնելու և պաշտպանելու մարդու իրավունքները և օրինական շահերը:

30.04.2015թ.

31. Խաչիկ Պողոսյան v. Ժենյա և Հարություն Պողոսյաններ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2767/02/09 **Էջ 307–315**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ դատարանում դատական նիստերի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցման հարցին, ինչպես նաև վերջիններիս պատշաճ չծանուցելու դեպքում՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտման իրավական խնդրին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները *(տե՛ս, օրինակ՝ «Հայկապ» բանկ ՓԲԸ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարն ընդդեմ Շահեն Բաբայանի թիվ 2-2128(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի, Շենգավիթի թաղապետարանն ընդդեմ Ալվինա և Լիանա Կազկոների, Արամ, Ֆրունզ և Նարեկ Մարկոսյանների թիվ 3-2236(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Ամահիտ Խաչատրյանի թիվ 3-1689(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումները),* նախ հարկ է համարել անդրադառնալ այն հարցին, թե որքանով են դրանք կիրառելի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 03.07.2014 թվականից գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածի նկատմամբ: Վերլուծելով վկայակոչված հոդվածի՝ նոր խմբագրությամբ բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխությունները կրում են զուտ խմբագրական բնույթ և, ըստ երևույթին, որևէ նոր կանոնակարգում չեն նախատեսում: Ինչ վերաբերում է նույն հոդվածի 2-րդ կետին, ապա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այդ իրավանորմում կատարված փոփոխությունների արդյունքում ընդլայնվել է դատական ծանուցման եղանակների շրջանակը, առավել մանրակրկիտ և հստակ ամրագրում են ստացել դատական ծանուցագրերը դատավարության մասնակիցներին հանձնելու միջոցները: Ներկայումս գործող կանոնակարգումների համաձայն՝ այդ եղանակներն են.

1) ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելը, ընդ որում՝ հանձնման մասին ծանուցմամբ,
2) ծանուցագիրը դատավարության մասնակցին առձեռն հանձնելը,
3) էլեկտրոնային եղանակով ուղարկելը, որը, ընդ որում, իրագործելի է միայն նույն հոդվածի համապատասխան կետերով նախատեսված դեպքերում և կարգով:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է կատարի դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և պետք է ձեռնարկի օրենսդրությամբ նախատեսված՝ կոնկրետ իրավիճակում հնարավոր բոլոր ծանուցման միջոցները և եղանակները: Նոր իրավակարգավորումների պարագայում ևս, անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության համապատասխան մասնակիցների՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը:

Հետևաբար վերահաստատելով դատական ծանուցումների դատավարական ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք կիրառելի են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի՝ 03.07.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ նախատեսված իրավակարգավորումների նկատմամբ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածը: Վերլուծելով նշված հոդվածի կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանում դատական նիստին ներկա գտնվելու իրավունքն անվերապահորեն ճանաչել է միայն բողոք բերող անձի առնչությամբ, չնայած, միաժամանակ, թե՛ բողոք բերող անձին, թե՛ գործին մասնակցող անձանց դատական նիստին կանչելը (հրավիրելը, ծանուցելը) սահմանվել է որպես վերաքննիչ դատարանի «հայեցողական լիազորություն», քանի որ վերջինս այդ գործողությունները կատարում է միայն համապատասխան «անհրաժեշտության դեպքում»:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել փաստել, որ դատական նիստերին ներկա գտնվելու, իր իրավունքների պաշտպանության դատավարական միջոցներն օգտագործելու իրավունքը (օրինակ՝ դատական կազմի մեջ ընդգրկված դատավորին ինքնաբացարկի միջնորդության ներկայացում և այլն) չի կարող համարվել միայն վերաքննիչ բողոք բերած անձին պատկանող իրավունք, այն իրավաչափորեն և արդարացիորեն պետք է վերապահվի նաև գործին մասնակից հանդիսացող մյուս բոլոր անձանց: Հետևաբար, բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կրում է գործին մասնակցող անձանց դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցելու պարտականություն:

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

27.11.2015թ.

32. Միեր Ավետիսյան և մյուսներ v. «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1807/02/13 **Էջ 316-329**

Խնդիր. Արդյոք հայցի ապահովման միջոցներից արգելանքը պետք է պահպանվի ամբողջ ծավալով, այն պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն և վճռվել է բռնագանձումը տարածել միայն կոնկրետ գույքի վրա:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի վերը նշված հիմնական իրավունքների լույսի ներքո:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, 97-րդ հոդվածի 1-ին կետը, 98-րդ հոդվածը, 101-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հայցի ապահովումն օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Այն ուղղված է անձանց խախտված գույքային իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ դրանով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը:

Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ավնեա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը*):

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանելու հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են **մինչև վճռի կատարումը,** ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է, իսկ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում՝ **մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:** Օրենսդիրը միաժամանակ, հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի առանձնահատկությունները, հստակ սահմանել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու, հայցի ապահովումը վերացնելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու լիազորությամբ օժտված է բացառապես դատարանը, որն իր այդ լիազորությունն իրականացնում է համապատասխան որոշում ընդունելով:

Իրավական պետության սահմանադրական սկզբունքի և իրավունքի գերակայության երաշխավորման նպատակով օրենսդիրն ամրագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ միաժամանակ սահմանելով դատական ակտերի կատարումն ապահովելու պայմանները և կարգը, նշելով, որ դատական ակտերի հարկադիր կատարումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության խնդիրն է, որը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն իրականացնում է հարուցված կատարողական վարույթի շրջանակներում՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կատարողական գործողություններ իրականացնելու միջոցով *(տե՛ս, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձ Իզաբելլա Վանյանի թիվ ՎԴ/2127/05/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով հայցի ապահովման ինստիտուտի և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարման վերաբերյալ վերը արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև հետևյալը.

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, իր բազմաթիվ որոշումներում նշել է, որ այն բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն, ընդհանուր շահից ելնելով, վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (*տե՛ս, օրինակ, Սպորրոնգը և Լոնրոդն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 61*):

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով
2. բխում է հանրային շահից
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի թիվ 1 արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*տե՛ս, Զեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*տե՛ս, Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*տե՛ս, Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, կետ 32, Բելեներն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 05.01.2000 թվականի վճիռը, կետ 98, Իսմայլովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 06.11.2008 թվականի վճիռը, կետ 28)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը պետության կողմից միջամտություն է մասնավոր անձի սեփականությանը, այլ կերպ ասած՝ սեփականության օգտագործման նկատմամբ պետության վերահսկողության դրսևորում է: Ընդ որում, Եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչների լույսի ներքո անդրադառնալով որպես հայցի ապահովման միջոց՝ պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելու իրավահարաբերություններին՝ Վճռաբեկ դատարանն փաստել է հետևյալը.

ա) միջամտության օրինականության վերաբերյալ

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետը, 98-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, 101-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգր-

քով սահմանված է որպես հայցի ապահովման միջոց պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելը, որը պահպանվում է մինչև վճռի կատարումը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետության կողմից անձի սեփականությանը միջամտությունը տվյալ դեպքում նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, որի կիրառումը բավականաչափ կանխատեսելի է:

բ) ընդհանուր շահերի առկայության վերաբերյալ

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ որպես իրավական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունն ունի պարտավորություն երաշխավորել իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մաս է հանդիսանում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումը:

Նշվածով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի ապահովման միջոցների կիրառումը, այդ թվում՝ պատասխանողի գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելն այն դատավարական միջոցներն են, որոնք երաշխավորում են դատական ակտերի կատարումը, հետևաբար պատասխանողների գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելը համապատասխանում է իրավական պետությունում իրավունքի գերակայությունն ապահովելու ընդհանուր շահին: Այլ կերպ ասած՝ որպես իրավական պետություն, նպատակ ունենալով ապահովելու իրավունքի գերակայությունը, հայցի ապահովման միջոցը միտված է պաշտպանել հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը, արդյունքում՝ այն միտված է ապահովելու անձի «դատարան դիմելու իրավունքը»:

գ) ընդհանուր շահերի և անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության վերաբերյալ.

Ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռությունն ապահովվում է միջամտության համաչափությամբ: Համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի: Ըստ այդմ, համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ *պիտանիության, անհրաժեշտության և չափավորության*: Այսինքն՝ գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի՝ հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից պետությունը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որը, առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: Չափավորությունը ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը միևնույն ժամանակ պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հայցի ապահովման ինստիտուտի պարագայում ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության պահպանման հարցի պարզումը յուրաքանչյուր դեպքում հարկ է իրականացնել՝ հաշվի առնելով ապահովման ենթակա հայցի տեսակը և առարկան, հայցագինը, ձեռնարկված հայցի ապահովման եղանակը: Մասնավորապես՝ որքանով է պիտանի և անհրաժեշտ տվյալ հայցի ապահովման միջոցի կիրառումը նմանատիպ հայցապահանջներով, առկա է արդյոք ողջամիտ հարաբերակցություն հայցագնի և ձեռնարկված հայցի ապահովման ծավալի միջև և այլն:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չնայած այն հանգամանքին, որ օրինական ուժի մեջ մտած վճռով բռնագանձումը տարածվել է միայն գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա, արգելանքը շարունակվել է պահպանվել ոչ միայն Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի

գրավի առարկա չհանդիսացող գույքի վրա, այլև այլ անձանց՝ Մինիկա Քլոյանի և Նունե Նասոյանի գույքի վրա, որոնք չեն հանդիսանում պատասխանող թիվ ԵԿԴ/2769/02/10 քաղաքացիական գործով, ավելին՝ պարտապաններ չեն Բանկի, Ընկերության, Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի միջև կնքված պայմանագրերից ծագած հարաբերություններում:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա է պարտադիր կատարման այն ծավալով, որը որոշված է տվյալ դատական ակտով: Մասնավորապես, եթե սույն գործով վճռում հստակ նշվել է, որ բռնագանձումը պետք է տարածել Մհեր Ավետիսյանին և Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա, ապա, բնականաբար, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի մասով ենթակա է կատարման միայն գրավադրված գույքի սահմաններում, ուստի հայցի ապահովման միջոց հանդիսացող արգելանքը՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման երաշխիք, ենթակա է պահպանման վճռում նշված գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա:

Այսինքն՝ անձի սեփականությանը միջամտությունը (արգելանքի պահպանումը) տվյալ դեպքում հետապնդվող նպատակին (դատական ակտի կատարմանը) կարող է համաչափ գնահատվել միայն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած դատական ակտում նշված ՝ գրավի առարկաներ հանդիսացող գույքի մասով, իսկ գրավադրված գույքից բացի այլ գույքի և/կամ դրամական միջոցների վրա արգելանքի պահպանումը չի կարող դիտարկվել որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս կազմող՝ դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարման երաշխիք, քանի որ չի բխում դատական ակտի բովանդակությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ մինչև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը սույն գործով հայցվորների՝ գրավադրված գույքից բացի այլ գույքի և/կամ դրամական միջոցների վրա արգելանքի պահպանումը չի բխում ընդհանուր շահերի և անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության պահպանման սկզբունքից՝ անհարկի սահմանափակելով նշված գույքային միավորների սեփականատերերի իրավունքները:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

27.11.2015թ.

33. Սուսաննա Արարատի Միրզոյան v. Սուսաննա Միհրանի Միրզոյան, քաղ. գործ թիվ ԱՐԱԴ/0170/02/14 **Էջ 330–338**

Խնդիր. Վերաքննիչ դատարանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում կարող է արդյոք իրավաչափ համարվել բողոք բերած անձի կողմից վերստին ներկայացված «վերաքննիչ բողոքի» վարույթ ընդունումն այն պարագայում, երբ բողոք բերած անձի կողմից չի ներկայացվել ոչ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բաղթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, ոչ էլ առավել ևս՝ վերաքննիչ բողոք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, 92-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում սահմանված է դատական եռաստիճան համակարգ, որը գործում է դատական ներհամակարգային աստիճանակարգության

հիման վրա, ինչը ենթադրում է վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայման հնարավորություն: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն իրենց բողոքարկման իրավունքն իրացնում են վերադաս ատյաններ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան և ՀՀ վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու միջոցով: Վերադաս (տվյալ դեպքում՝ վերաքննիչ) բողոքարկումը ոչ միայն խախտված և վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման միջոց է, այլև դատական սխալների բացահայտմանն ու վերացմանն ուղղված որոշակի կառուցակարգ է, որն ապահովում է արդարադատության իրականացման ոլորտում օրինականությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը չի կարող համարվել բացարձակ իրավունք, այն կարող է անհրաժեշտաբար ենթարկվել ողջամիտ և իրավաչափ սահմանափակումների, այդ իրավունքի իրացումն օբյեկտիվորեն ունի որոշակի սահմաններ և շրջանակներ:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին կետը, 140-րդ հոդվածի 1-ին կետը, 207-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նշված հոդվածների վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքով սահմանված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից: Միաժամանակ անդրադառնալով վերաքննիչ բողոք բերելու ժամկետները բաց թողնելու կամ բաց թողած ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու դեպքում օրենսդրի նախատեսած որոշակի իրավական հետևանքների վրա հասնելուն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը *(տե՛ս, օրինակ, Վարդան Պողոսյանն ընդդեմ Տիգրան Արշակյանի թիվ ԵՇԴ/0021/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, 213-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 214-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում և այն պարագայում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին օրենքով ներկայացվող պահանջները, վերաքննիչ դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա վերաքննիչ դատարանը երկշաբաթյա ժամկետ է տրամադրում դրանք վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ մնացած բոլոր դեպքերում արձանագրված խախտումը շտկելու համար ժամկետ չի տրամադրվում:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի վերը նշված լիազորությունների իրականացումը (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, վերադարձնելու մասին որոշումներ կայացնելը) անմիջականորեն կապված է վերաքննիչ բողոքի առկայության հետ: Ընդ որում, օրենսդիրը վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու հանգամանքը պայմանավորել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության հետ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանում դատական ակտի վերանայում կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով ներկայացված վերաքննիչ բողոքի առկայության դեպքում *(տե՛ս, Անժելա Գևորգյանն ընդդեմ Նիկոլ Շահվերդյանի թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը, համակարգային վերլուծության ենթարկելով

վերը շարադրված իրավական կարգավորումները, փաստելով, որ ցանկացած դատավարական գործողություն կարող է կատարվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում վերաքննիչ դատարանը կարող է կայացնել բացառապես այն դեպքում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը, գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի կողմից կայացվում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում, որում վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու համար ժամկետ չի սահմանվում և նման պայմաններում կրկին ներկայացվում է վերաքննիչ բողոք, ապա **վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցը պետք է որոշվի կոնկրետ դատական ակտի բողոքարկման համար օրենքով նախատեսված ժամկետների հաշվառմամբ:**

Այսպիսով, անձը հնարավորություն ունի վերաքննիչ բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետում, որին կարող է հավելվել նաև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ տրամադրվող երկշաբաթյա ժամկետը (բողոքի ձևի և բովանդակության կապակցությամբ արձանագրված թերությունները շտկելու համար): Հետևաբար այդ ժամկետների ավարտից հետո վերստին ներկայացված բողոքը վերաքննիչ դատարանի կողմից կարող է վարույթ ընդունվել միայն այն դեպքում, երբ բողոքին կից ներկայացվել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և այն բավարարվել է վերաքննիչ դատարանի կողմից:

17.07.2015թ.

34. «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ v. «Հինգերորդ Աստղ» ՍՊԸ և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԱԴԴ/0199/02/11 **Էջ 339–349**

<u>Խնդիր.</u> Արդյոք գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի հիման վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարող է բեկանվել ամբողջ ծավալով, եթե գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և օրինական շահերին դատական ակտն առնչվում է մասնակի:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել և գնահատման առարկա է դարձել այն դեպքերը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների խախտում և բեկանել է դատական ակտը *(տե՛ս, օրինակ, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ Ֆելիքս Թորոսյանի թիվ 3-2343(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ **միայն** այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց **իրավունքների և պարտականությունների վերաբերյալ** *(տե՛ս, ՀՀ Արագածոտնի մարզի Քոչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մալխասյանի թիվ ԱՐԱԴ/0242/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա:

Այս կողմից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքին, նշել է, որ այն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի

նախաբանի լույսի ներքո, որը, ի թիվս այլնի, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության բաղադրատարրերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է *res judicata* սկզբունքի հարգում: Վերջինս էլ նշանակում է, որ որևէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական և կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու և վեճը նորից լուծելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դատարանի իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները և արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական և կատարման ենթակա դատական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական և անհետաձգելի հանգամանքների դեպքում *(տե՛ս, Ռյաբիխին ընդդեմ Ռուսաստանի Եվրոպական դատարանի 24.07.2003 թվականի վճիռը, գանգատ թիվ 52854/99, կետ 51–52):*

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ իրավունքների իրացումը չի կարող կրել բացարձակ բնույթ: Մասնավորապես, գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում հարկ է պահպանել անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից գործին մասնակցող անձանց սահմանադրական իրավունքների ու պարտականությունների, մյուս կողմից՝ գործին մասնակից չդարձված այն անձանց իրավունքների և պարտականությունների միջև, որոնց իրավունքներին և պարտականություններին առնչվում է դատական ակտը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում այն կարող է բեկանվել միայն այն մասով, որով այդ դատական ակտը առնչվում է նշված անձանց իրավունքներին և պարտականություններին, ինչը կարող է ապահովել գործին մասնակցող և գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների միջև հավասարակշռությունը:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼԸ

30.04.2015թ.

35. «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0024/16/12 **Էջ 350–360**

<u>Խնդիր.</u> 1) Արդյո՞ք ներպետական օրենսդրությամբ սահմանված է օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ճանաչման ներկայացնելու ժամկետ.

2) արդյո՞ք այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ՀՀ իրավասու դատարանի կողմից ճանաչելու մասին որոշման հիման վրա տրված կատարողական թերթ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ կատարողական թերթն առաջին անգամ հարկադիր կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը պետք է հաշվարկել օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու, թե՞ այդ դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> 1) Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ենթադրում է պետական իշխանության գերակայություն, ինքնուրույնություն և անկախություն, ինչն իր մեջ ներառում է նաև պետության ամբողջ տարածքում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությունը: Հետևաբար օտարերկրյա դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ինքնըստինքյան չեն կարող

ունենալ իրավական գործողության այն հատկանիշները (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն, նախադատելիություն), ինչ ունեն ներպետական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Միևնույն ժամանակ պետության ինքնիշխանությունը չի բացառում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչը նախ և առաջ միջազգային համագործակցության դրսևորում է:

Վերը նշվածով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման կարգ՝ այդ ակտերի ճանաչման իրավասությունը վերապահելով ՀՀ դատարաններին:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի ճանաչումն իրենից ներկայացնում է ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրում, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և թույլատրում այդ ակտի իրավական գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ կերպ ասած՝ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտը միայն ճանաչման արդյունքում է Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^{6}-րդ հոդվածի 1-ին կետի և 247^{7}-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ-ում ճանաչման ենթակա են օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները, ինչպես նաև միջազգային արբիտրաժի որոշումները, որոնք կատարում են ենթադրում:

Վերլուծելով «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա, Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիային միացել է ՀՀ Ազգային ժողովի 18.11.1997 թվականի թիվ Ն-210-1 որոշմամբ) 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վկայակոչված կոնվենցիան հավասարապես կիրառելի է ինչպես օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռների և որոշումների, այնպես էլ միջազգային արբիտրաժի որոշումների նկատմամբ:

Միաժամանակ կոնվենցիոն և ներպետական իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) որոշումը ճանաչելու և կատարելու հարցը լուծելիս ՀՀ դատարանները չունեն նշված որոշումն ըստ էության վերանայելու իրավասություն և պետք է սահմանափակվեն միայն այն պայմանների առկայության ստուգումով, որոնց դեպքում թույլատրվում է համապատասխան որոշման ճանաչումն ու կատարումը, և պարզեն այն պայմանների բացակայությունը, որոնք հիմք են ճանաչումը մերժելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ թե՛ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիան և թե՛ ներպետական օրենսդրությունն օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) որոշումը **ճանաչման ներկայացնելու ժամկետ չեն նախատեսել:**

2) Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^{7}-րդ հոդվածի 2-րդ կետը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը, 4-րդ հոդվածը, 18-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք ներմուծվեց «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 18.02.2004 թվականի թիվ ՀՕ-39-Ն օրենքով: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվեց 247^{6}-րդ և 247^{7}-րդ հոդվածներով, որոնցով հանգամանալից կերպով կարգավորում ստացան օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հետ կապված հարցերը: Մինչ այդ այս ինստիտուտին առնչվող առանձին հարցեր (օտարերկրյա դատական ակտի կատարման հետ կապված) կարգավորված էին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածն օրենքի ընդունման պահին (05.05.1998թ.) գործող խմբագ-

րությամբ նախատեսում էր, որ հարկադիր կատարման ենթակա են՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և միջնորդ դատարանների վճիռներն ու որոշումները, իսկ արդեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 04.02.2004 թվականի թիվ ՀՕ-32-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ հարկադիր կատարման ենթակա են՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև քրեական գործերով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^7-րդ հոդվածի 2-րդ կետի հետ համակցության մեջ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը, օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հնարավորություն նախատեսելով, միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանել է ոչ թե անմիջականորեն օտարերկրյա դատական ակտի կատարման, այլ **օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշման կատարման հնարավորություն**, որն իր հերթին ենթակա է կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կատարման ենթակա է **օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը,** որի հիման վրա էլ տրամադրվում է կատարողական թերթ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը պետք է հաշվարկել օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից: Այսպիսով, քանի դեռ օտարերկրյա դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել, այսինքն՝ ձեռք չի բերել պարտադիրության ու կատարելիության հատկանիշներ, այն Հայաստանի Հանրապետությունում ենթակա չէ կատարման՝ անկախ այն հանգամանքից, թե օտարերկրյա պետությունում երբ է կայացվել նշված դատական ակտը կամ երբ է այն մտել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգման համար հիմք են հանդիսացել նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին կետի, 36-րդ հոդվածի 4-րդ կետի իրավակարգավորումները: Վկայակոչված իրավանորմերի համակողմանի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից հստակ տարանջատվել են «արբիտրաժային տրիբունալ» և «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալ» հասկացությունները: Մասնավորապես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված «արբիտրաժային տրիբունալ» հասկացությունը կիրառվում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ տարածքում ձևավորված և գործող արբիտրաժային դատարանների առնչությամբ և չի կարող նույնացվել «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալ» և «օտարերկրյա դատարան» հասկացությունների հետ: Օրենսդիրը տարանջատել է նաև «արբիտրաժային տրիբունալի վճիռներ» և «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռներ և որոշումներ» հասկացությունները: Մասնավորապես՝ «արբիտրաժային տրիբունալի վճիռներ» եզրույթի պարագայում հարկադիր կատարման ենթակա են ներպետական արբիտրաժային տրիբունալի վճիռները և կատարողական թերթ

անմիջականորեն տրվում է նշված վճիռների հիման վրա, իսկ «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռներ և որոշումներ» եզրույթի դեպքում հարկադիր կատարման ենթակա են ՀՀ դատարանների կողմից օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտերը, և կատարողական թերթ տրվում է ՀՀ իրավասու դատարանի կողմից կայացված՝ ճանաչման համապատասխան դատական ակտի հիման վրա:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել սկսած այն օրվանից, երբ կայացվել է արբիտրաժային տրիբունալի վճիռը: Մինչդեռ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտը, ապա այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

30.04.2015թ.

36. Ահդա Նազարյան ն. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/6199/05/13 **Էջ 361–368**

Խնդիր. 1) Արդյո՞ք խաչմերուկից առաջ գտնվող «Կանգ–գիծ» գծանշումը հատելու, սակայն (հետիոտնային անցումը չհատելու) խաչմերուկ մուտք չգործելու, այսինքն՝ տվյալ ուղղությամբ խաչմերուկի սահմանը չհատելու դեպքում կարող է առաջանալ վարչական պատասխանատվություն՝ խաչմերուկների անցման կանոնների խախտման համար, և

2) արդյո՞ք երթևեկության մասնակիցը կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել խաչմերուկի անցման կանոնների խախտման համար, եթե խախտումը հայտնաբերվել է տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով, և դրանցով արձանագրված իրավիճակների համար ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված է իրավաչափ վարքագիծ ընտրելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 5–րդ մասով նախատեսված իրավախախտման (զանցանքի) օբյեկտիվ կողմը դրսևորվում է խաչմերուկների անցման կանոնները խախտելով, հետևաբար վկայակոչված իրավախախտման համար անձին պատասխանատվության ենթարկելու համար էական նշանակություն ունի խաչմերուկի սահմանների որոշումը և խաչմերուկի տարածքի բնութագրումը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի 1–ին հոդվածի «ը» կետով և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածով ամրագրված «խաչմերուկ» հասկացության սահմանումներից հետևում է, որ խաչմերուկը միևնույն մակարդակի վրա ճանապարհների հատման, միացման կամ անջատման տարածքն է, իսկ դրա սահմանները որոշվում են այն երևակայական գծերով, որոնցով միանում են երթևեկելի մասերի կորացումների հակադիր սկզբնակետերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ կանոնավոր խաչմերուկում սովորաբար մայթերն ընդհատվում են, և մայթերի ընդհատման հատվածում, որպես կանոն, ճանապարհը կորացվում է երթևեկելի մասն ընդարձակելու և ավտոմեքենաների մանևրը հեշտացնելու համար: Խաչմերուկի բնութագրում օգտագործվող հակադիր մայթերի այդ կորացումով էլ, հաշվի առնելով խաչմերուկի կենտրոնից ընկած ամենամեծ հեռավորությունը, որոշվում է խաչմերուկի սահմանը: Սակայն որոշ անկանոն խաչմերուկներում (օրինակ T–աձև, Y–աձև) հնարավոր է մայթեզրի ընդհատման և հետևաբար նաև՝ կորացման բացակայություն: Այս դեպքում խաչմերուկի սահմանը Վճռաբեկ դատարանի

գնահատմամբ պետք է որոշել՝ հաշվի առնելով ճանապարհի երթևեկելի մասի հատման սահմանները:

«Խաչմերուկ» հասկացության և խաչմերուկի սահմանների վերաբերյալ վերը նշված եզրահանգումների լույսի ներքո անդրադառնալով «Կանգ-գիծ» գծանշման հատման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Կանգ-գիծ» գծանշման հատումն ինքնին չի նշանակում, որ տրանսպորտային միջոցը մուտք է գործել խաչմերուկ, քանի դեռ վերջինս չի հատել խաչմերուկի սահմանը: Այսինքն՝ միայն «Կանգ-գիծ» գծանշման հատումը դեռևս չի կարող համարվել խաչմերուկների անցման կանոնների խախտում, քանի որ խաչմերուկի անցման կանոնների խախտումը դրսևորվում է խաչմերուկ մուտք գործելուց՝ խաչմերուկի սահմանը հատելուց մինչև խաչմերուկի սահմաններից դուրս գալը՝ երթևեկության ընթացքում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների X բաժնով սահմանված կանոնները խախտելով:

Ինչ վերաբերում է ինքնին «Կանգ-գիծ» գծանշման հատմանը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, եթե տրանսպորտային միջոցը, հատելով «Կանգ-գիծ» գծանշումը, դեռևս մուտք չի գործել խաչմերուկ, ապա ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 18-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ պայմանավորված կարող է վրա հասնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվությունը, որով սահմանված իրավախախտման (տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը) օբյեկտիվ կողմն էականորեն տարբերվում է նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ խաչմերուկների անցման կանոնների խախտման զանցանքի օբյեկտիվ կողմից:

Վճռաբեկ դատարանը, «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 08.11.1968 թվականի կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ մասերով ամրագրված դրույթները համադրելով ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների հետ, գտել է, որ ՀՀ ճանապարհային երևեկության կանոնների Ձև 2 «Ճանապարհային գծանշումներ» բաժնում նախատեսված 1.12 «Կանգ-գիծ» ճանապարհային հորիզոնական գծանշման պահանջի խախտումը, եթե տրանսպորտային միջոցը մուտք է գործել խաչմերուկ, ինքնըստինքյան չի կարող հիմք հանդիսանալ տրանսպորտային միջոցի վարորդին խաչմերուկի անցման կանոնների (ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 93-րդ կետի) խախտում վերագրելու համար: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ խաչմերուկ մուտք գործած տրանսպորտային միջոցի վարորդի համար սահմանելով խաչմերուկն ազատելու պարտականություն՝ օրենսդիրը նպատակ է ունեցել ապահովելու տրանսպորտային բարձր թողունակություն և բացառելու տրանսպորտային խցանումները: Միևնույն ժամանակ, սակայն, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ճանապարհային երթևեկության ընթացքում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ տրանսպորտային միջոցի վարորդը, ելնելով այդ պահին երթևեկության ձևավորված դինամիկ իրավիճակից, հարկադրված լինի ընտրել ճանապարհային երթևեկությունը կանոնակարգող իրավական ակտերով նախատեսված այլ վարքագիծ, որն ուղղված կլինի երթեկության այլ մասնակիցների (այդ թվում նաև՝ հետիոտների) անվտանգության ապահովմանը և վթարային իրավիճակներից խուսափելուն, որոնք կարող են առաջանալ ինչպես խաչմերուկում, այնպես էլ խաչմերուկ չհանդիսացող ընդհանուր օգտագործման ճանապարհների հատման կամ ճյուղավորման դեպքերում: Ի վերջո, ճանապարհային երթևեկությունը կանոնակարգող իրավական ակտերի նպատակը հենց ճանապարհային երթևեկության մասնակիցների անվտանգության ապահովումն է, ճանապարհատրանսպորտային պատահարների նախականխումը, դրանց ծանրության և հետևանքների նվազեցումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքով և (կամ) այլ իրավական ակտերով նախատեսված է երթևեկության մասնակցի հնարավոր այլ իրավաչափ վարքագիծ (օրինակ՝ լուսացույցի թույլատրված լույսի առկայությամբ տրանսպորտային միջոցի վարորդը մուտք է գործել խաչմերուկ, սակայն հարկադրված կանգ է առել երթևեկությունը հանկարծակի խոչընդոտող հանգամանքի պատճառով), ապա վարչական պատասխանատվության հարցը լուծելիս հարկ է պարզել՝ արդյո՞ք ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված այլ կանոնով ղեկավարվելիս տրանսպորտային միջոցի վա-

րորդը նպատակ չի հետապնդել խուսափելու իրական վթարային իրավիճակ ստեղծելուց կամ երթեւեկության այլ մասնակիցներին սպառնացող վտանգից զերծ մնալուն:

«Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նշված օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրավախախտման հատկանիշների պարզմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված իրավաչափ վարքագիծ ընտրելու վարորդի հնարավորությունը, տրանսպորտային միջոցի վարորդին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանի՝ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելու մասին խոսք լինել չի կարող, եթե իրավախախտումը հիմնավորող ապացույցը (տեսանյութը կամ լուսանկարը) հնարավորություն չի տալիս հաշվի առնել դրանում արձանագրված իրավիճակում գտնվող երթեւեկության մյուս մասնակիցների՝ տրանսպորտային միջոցների վարորդների և հետիոտների դրսևորած վարքագիծը, քանի որ առանց ստեղծված իրավիճակում երթեւեկության մյուս մասնակիցների վարքագիծը հաշվի առնելու՝ հնարավոր չէ պարզել՝ արդյոք վարորդի դրսևորած արարքը պայմանավորված չի եղել երթեւեկության անվտանգությունն ապահովելու, վթարային իրավիճակը նախականխելու անհրաժեշտությամբ, այսինքն՝ արդյոք վարորդը տվյալ դեպքում չի ընտրել ՀՀ ճանապարհային երթեւեկության կանոններում սահմանվածից տարբերվող՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված այլ իրավաչափ վարքագիծ:

17.07.2015թ.

37. Սամվել Ղուկեյան v. ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, երրորդ անձ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ, վարչ. գործ թիվ ՎԴ/2602/05/14 **Էջ 369-375**

<u>Խնդիր.</u> Արդյոք իր աշխատանքային պարտականությունները կատարող սուբյեկտը ենթակա է վարչական պատասխանատվության, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարում է առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը հստակ և ոչ երկիմաստ ձևով սահմանել է, որ բացի օրենքով սահմանված բացառություններից՝ յուրաքանչյուր ոք սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար պարտավոր է մշտապես ունենալ ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր: Այսպիսով, օրենսդիրը Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր

ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարձակալների համար սահմանել է պարտականություն՝ մշտապես ունենալ ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱՀ պայմանագիր, միաժամանակ օրենսդիրը վերը նշված պարտականությունը չկատարելու համար ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարձակալների համար նախատեսել է անբարենպաստ իրավական հետևանքներ, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին մասում սահմանելով, որ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի քան տասն օր՝ առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տասն օրվա համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը նախատեսել է նաև արգելող նորմ՝ սահմանելով, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով արգելվում է ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե առկա չէ այն վարելու պահին գործող ԱՊՊԱՀ պայմանագիր: Այսպիսով, օրենսդիրն արգելել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարել ավտոտրանսպորտային միջոցներ, եթե առկա չէ դրանք վարելու պահին գործող ԱՊՊԱՀ պայմանագիր, միաժամանակ օրենսդիրը վերը նշված արգելքը չպահպանելու համար նախատեսել է անբարենպաստ իրավական հետևանքներ, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 2–րդ մասում սահմանելով, որ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերում նախատեսել է տարբեր զանցակազմեր: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասում նախատեսված զանցակազմերի օբյեկտը և սուբյեկտիվ կողմը նույնական են: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասում նախատեսված զանցակազմերի օբյեկտը՝ հասարակական հարաբերությունները, որոնք ոտնահարվում են իրավախախտի կողմից՝ ճանապարհային երթևեկության ոլորտում առաջացող հասարակական հարաբերություններն են, իսկ զանցակազմերի սուբյեկտիվ կողմը՝ իրավախախտի հոգեբանական վերաբերմունքը հակաիրավական արարքի նկատմամբ, կարող է արտահայտվել մեղքի երկու ձևով էլ, ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության ձևերով:

Սակայն, միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասում ամրագրված զանցակազմերի օբյեկտիվ կողմը և սուբյեկտները տարբեր են:

Եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը՝ ոչ իրավաչափ արարքի արտաքին կողմը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարձակալի ավելի քան տասն օր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալն է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն է՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱՀ պայմանագիր ունենալու:

Ինչ վերաբերում է վերը նշված զանցակազմերի սուբյեկտներին, ապա եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված զանցակազմի սուբյեկտը՝ հակաիրավական, մեղավոր արարքը կատա-

րած անձը տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ վարձակալն է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի սուբյեկտը՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոցը վարող անձն է:

Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն արգելվում է, և տվյալ արգելքը խախտած սուբյեկտի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն: Ընդ որում, պատասխանատվությունը վրա է հասնում տրանսպորտային միջոցը վարելու համար, հետևաբար, ԱՊՊԱ պայմանագիրը կնքված չլինելու պատճառները, վարորդի՝ տվյալ տրանսպորտային միջոցի սեփականատերը չլինելու հանգամանքը, ինչպես նաև վարորդի կողմից աշխատանքային պարտականությունների կատարումը չեն կարող դիտվել պատասխանատվությունը բացառող հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության արդյունքում արձանագրել է, որ նշված հոդվածի զանցակազմի օբյեկտիվ կողմը Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն է՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու, այսինքն՝ պատասխանատվությունը վրա է հասնում տրանսպորտային միջոցը վարելու համար, հետևաբար ԱՊՊԱ պայմանագիրը կնքված չլինելու պատճառները, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարումը չեն կարող դիտվել պատասխանատվությունը բացառող հանգամանք:

27.11.2015թ.

38. Արման Մարտիրոսյան v. ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/1091/05/14 **Էջ 376–384**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցին, թե արդյոք «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում տեսանյութը կամ լուսանկարը բավարար են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստը հաստատված համարելու և նույն հոդվածի սանկցիայի կիրառմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու համար վարչական պատասխանատվություն նախատեսել է միայն այն դեպքերում, երբ կանգառի և (կամ) կայանման կանոնների խախտումով կանգառ կամ կայանում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված չէ՝

1. տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հետ, կամ
2. վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ:

Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման դեպքի (զանցանքի) առկայության համար անհրաժեշտ է տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու, ինչպես նաև կանգառի և (կամ) կայանման կանոնի խախտելը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված չլինելու փաստերի միաժամանակյա առկայությունը: Այսինքն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու փաստի առկայության պարզումն ինքնին բավարար չէ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-

րդ հոդվածի 21–րդ մասով նախատեսված սանկցիան կիրառելու համար, այլ նշված հոդ–վածի դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) հիշյալ փաստը պարզելու հետ միա–ժամանակ պետք է պարզի նաև՝ արդյոք տրանսպորտային միջոցների վարորդների կող–մից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ և դրանից հետո միայն գործով կայացնի համապատասխան որոշում:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույ–թի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1–ին, 3–րդ, 5–րդ, 6–րդ հոդվածների վերաբերյալ *Միդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստի–կանություն» ծառայության թիվ ՎԴ/6199/05/13 վարչական* գործով *30.04.2015 թվակա–նին կայացրած որոշման* շրջանակներում արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ վկայակոչված օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լու–սանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկա–րահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևե–կության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրա–վախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը:

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարա–նը հարկ է համարել անդրադառնալ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սար–քերով հայտնաբերված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստի ապացուցման հիմնախնդրին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկություն–ների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչական վարույթի իրականացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքե–րով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերա–բերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման փաստը համարվում է հաստատված, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Նշված հանգամանքով պայմանավորված՝ օրենսդիրը տե–սանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վար–չական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման հատկա–նիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլե–րը: Նշված վարչական վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավա–խախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավա–խախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգա–մանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը:

Մինչդեռ ըստ Վճռաբեկ դատարանի՝ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկություն–ների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, ինչն անհրաժեշտություն է առաջացնում պարզելու կանգառ կատարելու անհրաժեշ–տությունը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առող–ջական վիճակի հետ կապված լինելու հանգամանքը: Օրենսդրական համապատասխան

կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը զրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքը կարող է խախտում որակվել միայն այն դեպքում, երբ վարչարարության արդյունքում կբացառվեն նույն իրավանորմում թվարկված՝ կանգառի անհրաժեշտությունը տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակով կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակով պայմանավորված լինելու հանգամանքները: Ընդ որում, նշված հանգամանքները ենթակա են պարզման մինչև վարչական մարմնի կողմից վարչական պատասխանատվության մասին որոշում կայացնելը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքերի վերաբերյալ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում այդ դեպքերով վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածով և 2–րդ հոդվածի 3–րդ մասով ամրագրված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով, իսկ այդ օրենքով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43–րդ հոդվածով նախատեսված ապացուցման պարտականությունները վարույթի մասնակցի և վարչական մարմնի կողմից կարող են կատարվել միայն այն դեպքում, երբ վարչարարությունն իրականացվի ընթացիկ փուլով, մինչդեռ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթում ընթացիկ փուլը բացակայում է, ինչն օբյեկտիվորեն բացառում է կանգառի և (կամ) կայանման կանոնի խախտելը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված չլինելու փաստերի միաժամանակյա առկայությունը վարչական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից պարզելու հնարավորությունը:

Վերոգրյալ վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստը կարող է հաստատվել կամ հերքվել բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացիկ փուլում համապատասխան միջոցներ ձեռնարկելով, քանի որ միայն այդ փուլում է հնարավոր ձեռք բերել տեղեկություններ և ապացույցներ կանգառ կատարելու անհրաժեշտության հանգամանքների, մասնավորապես՝ կանգառի կանոնները խախտելը տրանսպորտային միջոցի տեխնիկական անսարքության կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված չլինելու վերաբերյալ:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև «Հարկադրված կանգառ» հասկացությանը, մասնավորապես, նշելով, որ «Հարկադրված կանգառ» հասկացության սահմանումը տրված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության

ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որից հետևում է, որ հարկադրված կանգառը տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելն է՝ պայմանավորված տրանսպորտային միջոցի անսարքության, վարորդի (ուղևորի) ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակով և (կամ) բեռի փոխադրման ժամանակ առաջացած վտանգի կամ խոչընդոտի պատճառով: Ընդ որում, կանգառի համար օրենսդրությամբ սահմանված կանոնները չեն տարածվում հարկադրված կանգառի դեպքերի վրա, իսկ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված է արգելված վայրերում հարկադրված կանգառի դեպքում տրանսպորտային միջոցի վթարային լուսային ազդանշանը միացրած լինելու պահանջ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ հարկադրված կանգառի դեպքում տրանսպորտային միջոցի վթարային լուսային ազդանշանը միացրած լինելու՝ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնների 22-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը տրանսպորտային միջոցի վարորդի կողմից չկատարելը միանշանակ չի կարող հիմնավորել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված իրավախախտման առկայությունը, քանի որ տրանսպորտային միջոցի վթարային լուսային ազդանշանը չմիացնելը դեռևս չի բացառում տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնների խախտման՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակով, կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակով պայմանավորված լինելու հանգամանքը:

27.11.2015թ.

39. Հովհաննես Հովհաննիսյան v. ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԴ/5166/05/13 **Էջ 385-393**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտումն առկա է այն պայմաններում, երբ իրավասու պետական մարմնի հանձնարարագրի հիման վրա տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվել է նրա գործունեության ուսումնասիրություն:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտումը, և արդյոք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով *(տե՛ս, Սուրեն Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավա-

խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու համար, որը կարող է դրսևորվել հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

- իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը,
- տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի մուտք գործելն արգելելը,
- ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձին չտրամադրելը,
- կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը,
- օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը:

Փաստորեն, ըստ Վճռաբեկ դատարանի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությունից բխում է, որ նշված հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ անձը, կատարելով վերոգրյալ արարքներից որևէ մեկը, խոչընդոտում է ստուգումներ իրականացնող իրավասու պետական մարմինների աշխատանքին: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման առկայության փաստը բացահայտելու համար վարչական մարմինը նախևառաջ պետք է պարզի, թե արդյոք տնտեսավարող սուբյեկտի մոտ օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացվել է, թե՝ ոչ: Այնուհետև համապատասխան վարչական մարմինը պետք է պարզի ստուգում իրականացնող պաշտոնատար անձին խոչընդոտելու փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման փաստը կարող է առկա լինել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվում է ստուգում,

բ) տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտում է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում սահմանել է ստուգման և ուսումնասիրության՝ որպես առանձին և իրարից տարբերվող ընթացակարգերի բովանդակությունը և առանձնահատկությունները: Այսպես, ըստ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ ստուգումն իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (...) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին պարզելուն ուղղված և օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ: Իսկ ուսումնասիրությունը ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշ-

ռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է: Որպես բացառություն՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի 8-րդ պարբերությամբ սահմանվում է, որ հսկիչ գնումների իրականացման նպատակով ևս հարկային մարմինները կարող են իրականացնել ուսումնասիրություններ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որն ուղղված է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվության արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին պարզելուն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ուսումնասիրությունը, որպես առանձին ընթացակարգ, հետապնդում է այլ նպատակ, մասնավորապես՝ ուսումնասիրությունը ներքին ընթացակարգ է, որն իրականացվում է ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը պարզաբանելու նպատակով, իսկ որպես բացառություն՝ օրենսդիրը սահմանել է, որ ստուգող մարմինն ուսումնասիրություն կարող է իրականացնել նաև հսկիչ գնումների իրականացման նպատակով:

Վկայակոչված իրավանորմերի և նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ իրավական համակարգում ստուգումը և ուսումնասիրությունը տարբեր իրավական ընթացակարգեր են, հանգել է այն եզրակացության, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել բացառապես այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվել է ստուգում, և տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտել է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերը նշված հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված զանցակազմն առկա չէ, և, համապատասխանաբար, դրանով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը չի կարող կիրառվել այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում իրականացվել է ուսումնասիրություն:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

30.04.2015թ.

40. Գիթա Հեյդարիմարանջեհ v. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, վարչ. գործ թիվ ՎԴ/6781/05/12 **Էջ 394-403**

<u>Խնդիր.</u> 1) Արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու վերաբերյալ վարչական վարույթի նկատմամբ,

2) արդյո՞ք վարչական ակտը, որը չի պարունակում բոլոր էական փաստական հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել նման բովանդակությամբ վարչական ակտ կայացնելու համար, սակայն չի խախտում շահագրգիռ անձանց սուբյեկտիվ իրավունքները և ազատությունները, միանշանակ ենթակա է անվավեր ճանաչման:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u>Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված կարգի 1-ին կետի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու և այն մերժելու իրավասությունը վերապահված է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը: Օրենսդիրը «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում նախատեսել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում իրավասու վարչական մարմինը կարող է կա-

ցության կարգավիճակ տալը մերժել: Օտարերկրացու կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերից են նաև «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի «զ» կետում օրենսդրի կողմից սահմանված հետևյալ հիմքերը՝ եթե կացության կարգավիճակ հայցողն իր մասին ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «ժե» կետով ազգային անվտանգության մարմինների համար սահմանել է օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն ու նրա սահմաններից դուրս գալուն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը մասնակցելու պարտականություն: Հայաստանի Հանրապետությունում անձին կացության կարգավիճակ տալու իրավական գործընթացին մասնակցում է նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, որն անձին կացության կարգավիճակ տալու կամ այն մերժելու ընթացքում պարտավոր է կացության կարգավիճակ հայցողի վերաբերյալ հայտնել դիրքորոշում:

ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշմամբ սահմանված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու գործընթացին մասնակցում է նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, սակայն նման կարգավիճակ տալու կամ նման կարգավիճակի տալը մերժելու իրավասությունը վերապահված է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, որն էլ օրենքով սահմանված կարգով ընդունում է համապատասխան որոշում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

Այսպիսով, ՀՀ իրավական համակարգում օտարերկրացուն կացության կարգավիճակ տալուն ուղղված վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները կարգավորվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտի հիմնավորմանը վերաբերող որևէ առանձնահատկություն, ինչը նշանակում է, որ գրավոր վարչական ակտի հիմնավորման պահանջի վերաբերյալ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածում սահմանել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ

վարչական ակտն ընդունելու համար: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտը հիմնավորելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների՝ սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը: Նման եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում *(տե՛ս, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/03/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական հիմքերը: Օրենսդրի կողմից սահմանված՝ վարչական ակտում բոլոր էական փաստական հանգամանքները նշելու վարչական մարմնի պարտականությունն ինքնանպատակ չէ, քանի որ իրավական նորմում ամրագրված իրավական հետևանքներն անձի նկատմամբ կիրառելու նախապայման է հանդիսանում իրավական նորմում առկա փաստակազմի առկայության բացահայտումը: Իրավական նորմերում օրենսդիրն ամրագրում է որոշակի փաստակազմեր, որոնց գործնականում առկայությունն է միայն անձանց համար կոնկրետ գործով առաջացնում օրենքով սահմանված իրավական հետևանքները, այսինքն՝ վարչական մարմինն իրավասու է ընդունելու վարչական ակտ, որով իրավական նորմում ամրագրված իրավական հետևանքները կիրառվում են կոնկրետ անձի նկատմամբ, եթե առկա է օրենքում նկարագրված փաստակազմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի իրավաչափության իրավական հիմքերը սահմանվում են նյութական և ընթացակարգային իրավական նորմերում: Իրավաչափ վարչական ակտը պետք է համապատասխանի իր նկատմամբ կիրառելի բոլոր նյութական և ընթացակարգային իրավական նորմերին: Վարչական դատարանը վարչական ակտի իրավաչափությունն ստուգելիս պետք է պարզի՝ արդյոք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի նյութական իրավաչափությանը ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է նյութական իրավական նորմերին, թե՝ ոչ և պետք է պարզի նաև՝ արդյոք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի ձևական իրավաչափությանը ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է ընթացակարգային նորմերին, թե՝ ոչ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ի տարբերություն նյութական իրավունքի պահանջների խախտման, ընթացակարգային պահանջների խախտումը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի վարչական ակտի վերացմանը՝ հետևյալ պատճառաբանությամբ. թեև իրավական պետության պայմաններում մասնավոր անձանց առնչվող վարչական մարմինների կողմից իրականացվող գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ, և վարչական մարմնի գործունեությունը նաև պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, սակայն միաժամանակ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ: Ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի

իրավական բնույթն այն է, որ ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է, և այն իրավահարաբերություններում որտեղ ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքները գործնականում արդյունավետ պաշտպանելու միջև անմիջական կապը բացակայում է, ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արձանագրել է, որ վարչական ակտում համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական հանգամանքները նշելու հիմնական նպատակը վարչական վարույթի մասնակիցների՝ սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունն է, ինչպես նաև վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին իրական հնարավորություն ընձեռելը՝ պարզելու այն փաստական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վարչական վարույթի ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելու միջև ուղղակի կապի բացակայության դեպքում ընթացակարգային պահանջների և դրանց խախտման իրավական հետևանքները կրում են հարաբերական բնույթ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշված իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պայմաններում, երբ վարչական մարմինը, ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա փաստական հանգամանքները, այսինքն՝ բացահայտելով կիրառելի իրավական նորմում առկա փաստակազմը, իրավաչափորեն վարչական ակտի հասցեատիրոջ նկատմամբ կիրառում է իրավական նորմում նախատեսված իրավական հետևանքները, այսինքն, երբ անձին իրավաչափորեն տրամադրում է իրավունք կամ անձի վրա իրավաչափորեն դնում է որևէ պարտականություն, սակայն վարչական ակտի տեքստում չի նշում իր կողմից արդեն իսկ բացահայտված փաստական հանգամանքները, այդպիսի վարչական ակտը ենթակա չէ անվավեր ճանաչման: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ վարչական ակտում այն ընդունելու բոլոր էական փաստական հանգամանքները նշված չեն, այդ վարչական ակտը չի կարող համարվել անվավեր, քանի որ գործնականում չի խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները և ազատությունները, անձանց հնարավորություն է ընձեռում գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում, քանի որ այդ փաստական հանգամանքներն առկա են վարչական գործում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության իրավունքը, ինչպես նաև արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, վարչական ակտի ձևական իրավաչափության վերաբերյալ ընդհանուր հայեցակարգային մոտեցումները և օրենսդրի կողմից ՀՀ իրավական համակարգում ներդրված վարչական ակտի ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը, գտել է, որ այն պայմաններում, երբ վարչական ակտում նշված չեն այդ ակտն ընդունելու համար բոլոր էական փաստական հանգամանքները, սակայն դրա արդյունքում որևէ կերպ չի խախտվում շահագրգիռ անձանց սուբյեկտիվ իրավունքները և ազատությունները և տվյալ ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի նյութական իրավաչափությանը ներկայացվող բոլոր պահանջներին, ապա այդ վարչական ակտը ենթակա չէ անվավեր ճանաչման:

30.04.2015թ.

41. «Եվրոթերմ» ՓԲԸ v. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն, երրորդ անձ ««Արարատ»» սննդի կոմբինատ» ՍՊԸ, վարչ. գործ թիվ ՎԴ/1567/05/12 **Էջ 404–414**

Խնդիր. Արդյոք վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր իրավակարգավորումները կիրառելի են ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ վարչարարության հիմունքների, վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և անձանց միջև ծագած հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է նաև, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով: Այլ խոսքով, օրենսդիրը չի բացառում վարչական վարույթների առանձին տեսակների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ այդ հարաբերությունները կարգավորված չլինեն հատուկ օրենքներով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրը վարչական վարույթին վերաբերող հատուկ օրենքներում նախատեսել է հատուկ կարգավորումներ, ապա իրավասու վարչական մարմինները պարտավոր են կիրառել հատուկ օրենքը:

Օրենսդիրն ապրանքային նշանի գրանցման գործընթացը (հայտի նախնական փորձաքննություն, հայտի հրապարակում, հայտի ըստ էության փորձաքննություն, դիտողությունների և առարկությունների քննարկում և այլն) կարգավորել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքային նշանի գրանցման գործընթացն առանձին տեսակի վարչական վարույթ է, որի առանձնահատկությունները սահմանված են «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում առկա վարչական վարույթին վերաբերող կարգավորումները կիրառելի են ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունների նկատմամբ այնքանով, որքանով դրանք կարգավորված չեն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ իրավական համակարգում ապրանքային նշանների բնագավառում վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները կարգավորվում են «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով:

Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում սահմանել է, որ վարչական վարույթում երրորդ անձինք այն անձինք են, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, այլ խոսքով՝ այն անձինք, որոնց համար վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը կարող է առաջացնել իրավական հետևանքներ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը

չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ *(տե՛ս, Իվանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի* գործով *Սնարդս իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, կետ 70)*: Հետևաբար վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին *(տե՛ս, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վայերի Օվսյաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը)*:

Ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ ՀՀ իրավական համակարգում օրենսդրի կողմից երրորդ անձանց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորություն նախատեսելու հիմնական նպատակը երրորդ անձանց սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելն է: Սակայն օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը *(տե՛ս, Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի, երրորդ անձ Ամուշ Տարախչյանի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը, կարգավորելով ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի առանձնահատկությունները, սահմանում է այդ վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության առանձնահատուկ կարգ, որը տարբերվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգից: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը սահմանում է հարուցված վարույթի ելքով շահագրգռված անձանց ծանուցելու առանձնահատուկ եղանակ, այն է՝ հայտի հրապարակումը «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում: Օրենսդիրն այնուհետև սահմանել է, որ հայտի հրապարակումից հետո երկամսյա ժամկետում ցանկացած անձ կարող է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ ներկայացնել իր գրավոր առարկություններն ու դիտողությունները, որոնք ենթակա են պարտադիր քննարկման «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ կարգավորումների հիմքում ընկած է այն իրավական տրամաբանությունը, որ ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի ելքով կարող է շահագրգռված լինել անձանց ավելի լայն շրջանակ, քանի որ տվյալ վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով կարող են շոշափվել լայն շրջանակի անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այդ իսկ պատճառով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44-րդ և 46-րդ հոդվածները սահմանում են խնդրո առարկա վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության առանձնահատուկ կարգ, որը տարբերվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով նախատեսված ընդհանուր կարգից: Այլ կերպ ասած՝ օրենսդիրն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակում ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթին մասնակցելու լայն հնարավորություն է ընձեռում ցանկացած շահագրգիռ անձի, ում իրավունքները կամ օրինական շահերն անմիջականորեն կարող են շոշափվել այդ վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Այսպիսով, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը համապատասխան վարչական մարմնի համար ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին երրորդ անձանց անմիջականորեն ծանուցելու լիազորություն չի սահմանում: Սակայն այդ հան-

գամանքը որևէ կերպ չի խաթարում տվյալ անձանց՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված պետական մարմինների առջև իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ վարչական վարույթում երրորդ անձանց ներգրավելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում վարույթին մասնակցող անձանց համար ապահովել սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության իրական հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44-րդ և 46-րդ հոդվածներով սահմանված իրավադրույթների գործնականում պատշաճ իրացումն ապահովում է ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի ելքով շահագրգռված երրորդ անձանց լսված լինելու իրավունքը, և հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը գործնականում լիարժեքորեն կենսագործել: Նման պայմաններում ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի նկատմամբ վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր իրավակարգավորումները կիրառելի չեն, և խնդրո առարկա վարչական վարույթի վրա տարածվում են միայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44-րդ և 46-րդ հոդվածներով նախատեսված առանձնահատուկ իրավադրույթները:

30.04.2015թ.

42. Ռոբերտ Հովհաննիսյան v. Երևանի քաղաքապետարան և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ/4651/05/12 **Էջ 415-430**

<u>Խնդիր.</u> 1) Արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է իրավունք հաստատող փաստաթղթերը (քաղաքաշինական փաստաթղթեր, հողհատկացման հիմքեր և այլն) չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ վարչական վարույթի նկատմամբ.

2) արդյո՞ք վարչական մարմնի կողմից ընդունված անհատական իրավական ակտը, որը ճանաչում է արդեն իսկ ծագած իրավունքի առկայությունը դրա վերականգնման միջոցով, հանդիսանում է վարչական ակտ.

3) արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթին պետք է մասնակից դարձվեն այդ անշարժ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող բոլոր անձինք.

4) արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով կարող է վերականգնվել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն այն պայմաններում, երբ այդ անշարժ գույքը փաստացի որպես սեփական գույք տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձի կողմից, որը ևս համապատասխան իրավունք ունի:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը կարգավորել է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված որոշակի կատեգորիայի անշարժ գույքի նկատմամբ այդ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման և պատշաճ ձևակերպման հետ կապված հարաբերությունները: Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաս-

տաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը (քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կամ հողհատկացման հիմքերը) չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքը համարվում է այն որպես սեփական գույք տիրապետող ֆիզիկական անձանց սեփականությունը:

Նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով նշված օրենքի կարգավորման առարկային՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են օրենքով սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի սեփականատիրոջ իրավունքների վերականգնման հարցերը: (...) Վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման համար միայն այդ հասցեում հաշվառվելը և բնակվելը բավարար չեն «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար, քանի որ օրենքը կարգավորում է ոչ թե սեփականության իրավունքի ծագման, այլ արդեն իսկ ծագած սեփականության իրավունքի վերականգնման խնդիրը *(տե՛ս, Նարինե, Լիանա և Օֆելյա Թովմասյաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Գագիկ Թովմասյանի և այլոց թիվ ՎԴ/1864/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010 թվականի որոշումը):*

Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքի նկատմամբ վերականգնվում է այն ֆիզիկական անձի սեփականության իրավունքը, ով փաստացի տիրապետում է այդ անշարժ գույքը՝ որպես սեփական գույք: Ընդ որում, խոսքը վերաբերում է այն ֆիզիկական անձանց, ովքեր ոչ միայն փաստացի տիրապետում են համապատասխան անշարժ գույքը, այլ նաև հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, որոնց սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման գործընթացն իրենից ներկայացնում է համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթ, քանի որ եզրափակվում է համապատասխան վարչական ակտով, այն է՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական վարույթը վարչական մարմնի, մասնավորապես՝ ՀՀ նախարարությունների և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինների տեղական ինքնակառավարման մարմինների՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է, իսկ վարչական ակտն իրենից ներկայացնում է արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նշված դրույթի շրջանակներում, որպես վարչական ակտի տարատեսակ, ներառված է բարենպաստ վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված՝ վարչական ակտի հասկացության սահմանման՝ վարչական ակտին բնորոշ հատկանիշներն են՝ վարչական մարմնի անհատական ակտ լինելը, արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի ոլորտում ընդունված լինելը, կոնկրետ գործի կարգավորումը, իրավունքների և պարտականությունների սահմանումը, փոփոխումը, վերացումը կամ ճանաչումը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

- վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

- վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

- վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքների և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևանի քաղաքապետի կողմից ընդունված անհատական իրավական ակտը, որն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով ճանաչում է անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց արդեն իսկ ծագած իրավունքի առկայությունը դրա վերականգնման միջոցով, հանդիսանում է վարչական ակտ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեության՝ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման համար անհրաժեշտ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը: Երևանի քաղաքապետը կարող է որոշում կայացնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքները վերականգնելու մասին միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում եկել է այն եզրահանգման, որ դիմում ներկայացրած ֆիզիկական անձի, ինչպես նաև այդ դիմումում նշված անշարժ գույքի կարգավիճակը լիովին համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության

ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին իրավունք է վերապահում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը:

Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է, որ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում Երևանի քաղաքապետի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում: Եթե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը, որը համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է մի քանի ֆիզիկական անձանց կողմից, որոնք այդ անշարժ գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներ ունեն, ապա վարչական մարմինն իրավասու չէ վերականգնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն ամբողջ անշարժ գույքի նկատմամբ: Տվյալ պարագայում իրավասու վարչական մարմինը կամ կարող է իր որոշմամբ վերականգնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն անշարժ գույքի այն մասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի որպես սեփական գույք տիրապետվում է կամ կարող է վերականգնել այդ անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետող բոլոր ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը՝ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի տեսքով, եթե առկա է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը: Սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը չի պահանջվում միայն այն դեպքում, եթե ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը:

Հետևաբար ըստ Վճռաբեկ դատարանի՝ վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, inter alia, այն հանգամանքը, թե արդյոք ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումում նշված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, թե՝ ոչ: Այն դեպքում, երբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը դիմում ներկայացրած անձից բացի փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, վարչական մարմինը պարտավոր է այդ ֆիզիկական անձանց ևս մասնակից դարձնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վարչական վարույթին՝ նրանց որպես երրորդ անձ ներգրավելու միջոցով, ինչը թույլ կտա ապահովել վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում: Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահ-

պանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ իրավական համակարգում սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի սեփականատիրոջ իրավունքների վերականգնման վերաբերյալ վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները կարգավորվում են իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ վերը նշված վարչական վարույթում երրորդ անձանց վերաբերյալ որևէ առանձնահատկություն, ինչը նշանակում է, որ այդ վարչական վարույթում երրորդ անձանց կարգավիճակին առնչվող հարցերի վերաբերյալ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է, որ երրորդ անձինք վարչական վարույթի այն մասնակիցներն են, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, այսինքն՝ այն անձինք, որոնց համար վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը կարող է առաջացնել իրավական հետևանքներ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովելու վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ *(տե՛ս, Իվանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի* գործով *Սարդոն իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, պարբ. 70)*: Հետևաբար վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին *(տե՛ս, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների*

րի խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ իրավական համակարգում օրենսդրի կողմից երրորդ անձանց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորություն նախատեսելու հիմնական նպատակը երրորդ անձանց սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելն է: Սակայն օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքների պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը *(տե՛ս, Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարել հավելել նաև, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 27.04.2010 թվականի թիվ ՀՕ-50-Ն ՀՀ օրենքով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, ինչի արդյունքում օրենսդիրն իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակին վերաբերող իրավակարգավորումները հավասարապես տարածել է ոչ միայն Երևան քաղաքի վարչական տարածքում, այլև Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների վարչական տարածքներում գտնվող համապատասխան կատեգորիայի անշարժ գույքի վրա՝ սահմանելով, որ յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքում գտնվող օրենքով նախատեսված պայմաններին ու պահանջներին բավարարող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված տվյալ համայնքի ղեկավարի որոշումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իրավադրույթների մեկնաբանության դեպքում:

27.11.2015թ.

43. «Նոյան Տապան» ՍՊԸ v. ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԴ/12145/05/13 **Էջ 431–439**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի հիմքով կնքված պահանջի զիջման (ցեսիայի) պայմանագրին առնչվող վարչական մարմնի գործողությունը (անգործությունը) հանդիսանում է վարչարարություն և արդյո՞ք դրա իրավաչափությունը ենթակա է քննարկման ու գնահատման վարչադատավարական կարգով:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Անդրադառնալով հանրային իրավահարաբերությունների հատկանիշների մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշմամբ նշել է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում *(տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ*

ԵԱՔԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ հանրային իրավահարաբերությունների մեկ այլ բնորոշ առանձնահատկությունն այն է, որ պետական կառավարման մարմինների համար սահմանված լիազորությունների նպատակն այդ մարմինների կողմից իրենց վրա դրված հանրային պարտականությունների կատարումն է: Այդ պատճառով էլ հանրային իրավահարաբերությունների նորմերը, որպես կանոն, սահմանում են, թե ինչպես պետք է իշխանական լիազորություններով օժտված մարմիններն օգտվեն իրենց լիազորություններից: Այլ կերպ ասած՝ հանրային իրավահարաբերությունում իշխանական լիազորություններով օժտված մարմինները գործում են օրենքով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում և պարտավոր են կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային իրավահարաբերությունների բովանդակությունը պետք է կազմի հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների գործողությունը կամ անգործությունը չի կարող որակվել որպես քաղաքացիաիրավական, քանի որ քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներն իրենց իրավազորությունների ինքնուրույն տիրապետողներն են: Մինչդեռ պետական մարմինները՝ որպես հանրային իրավահարաբերություններում իշխանության կրողներ, իրենց իրավազորությունների լիիրավ տիրապետողներ չեն, քանի որ վերջիններս, ըստ էության, իրականացնում են պետության իրավունքներն ու պարտականությունները:

Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հանրային իրավունքի նորմերը, պետական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում ընձեռելով որոշակի իրավունքներ, միաժամանակ սահմանում են, թե ինչպես այդ մարմինները պետք է օգտվեն նշված իրավունքից: Ընդ որում, իրավական պետությունում օրինականության սկզբունքին համահունչ գործադիր-կարգադրիչ գործունեություն իրականացնելիս վարչական մարմինների համար, որպես կանոն, այդպիսի իրավունքներից օգտվելը վերջիններիս համար կրում է պարտադիր բնույթ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին համահունչ, վարչական մարմիններն իրավունք ունեն գործելու միայն Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան և դրանց շրջանակներում, վարչական մարմիններն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Այլ կերպ ասած՝ վարչական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության համար ընձեռնված իրավունքներն ինքնանպատակ չեն, այլ գործիք են և միջոց՝ իրականացնելու իրավական պետության բովանդակային սկզբունքները:

Վերլուծելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դրանով հարկային մարմնին վերապահվել է հարկ վճարողի հետ պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելու իրավունք, որով հարկային մարմինը ձեռք է բերում պարտապանի նկատմամբ հարկ վճարողի պահանջի իրավունքը, և որի նպատակն է հարկ վճարողի չկատարած հարկային պարտավորությունների գանձումը՝ պարտապանից ստացված գումարները հարկ վճարողի պարտավորությունների մարմանն ուղղելու միջոցով:

ՀՀ սահմանադրական դատարանը, 10.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1106 որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը, նշել է, որ վիճարկվող նորմում հիշատակված ցեսիայի պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, իսկ տվյալ օրենսդրական դրույթների հիման վրա առաջացած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, անկախ այն հանգամանքից, որ դրանք առնչվում են նաև հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերին:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ հարկային իրա-

վահարաբերությունները կանոնակարգող օրենսդրության շրջանակներում ցեսիայի ինստիտուտի նախատեսումը կարևոր նշանակություն ունի ինչպես հարկատուների և պետության միջև բնականոն հարկային իրավահարաբերությունները պահպանելու, հարկատուների հարկային պարտավորությունների կատարմանն օժանդակելու, այնպես էլ գործարար շրջանակներում պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարումը երաշխավորելու և տնտեսվարողների բնականոն գործունեության շարունակականությունն ապահովելու տեսանկյունից: Նշված ինստիտուտի նախատեսումը կարևոր կանխարգելիչ նշանակություն ունի և կոչված է ապահովելու տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունն այն իրավիճակներում, երբ վերջիններս չեն կարողանում ժամանակին կատարել պետության առջև իրենց հարկային պարտավորությունները:

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն գտել է, որ ցեսիայի պայմանագրի կնքումը չի կարող ինքնանպատակ լինել: Թեև ցեսիայի պայմանագրի կնքման վերաբերյալ վիճարկվող օրենսդրական դրույթները կրում են դիսպոզիտիվ բնույթ, այդուհանդերձ, նման ընթացակարգով հարկատուի հարկային պարտավորությունների կատարման ինստիտուտը կիրառելիս հարկային մարմինները պետք է ձեռնամուխ լինեն ցեսիայի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը և ստացված գումարը հարկատուի հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելուն:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման՝ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտն ավելի մեծ երաշխիքներ է ստեղծում իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու տնտեսավարման բնականոն պայմաններ երաշխավորելու առումով: Խնդիրն այն է, որ այդ ինստիտուտի կիրառումը բխի իրավակարգավորման բովանդակությունից և ոչ իրավաչափ վարչարարությամբ չոտնահարվեն տնտեսվարող սուբյեկտների իրավունքները:

Վարչական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության համար ընձեռված իրավունքների վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունների և ՀՀ սահմանադրական դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավական հիմքով ցեսիայի պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները: Այդուհանդերձ, այդ պայմանագրի կնքմամբ ծագած հարաբերությունները կրում են երկակի բնույթ՝ բովանդակելով ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական իրավահարաբերություններին բնորոշ տարրեր: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ նշված հարաբերությունների քաղաքացիաիրավական տարրն արտահայտվում է ցեսիոների (հարկային մարմնի)՝ երրորդ անձի (ցեդենտի պարտապանի) հետ փոխհարաբերություններում: Վերջինիս պարտավորությունները պետության հանդեպ պայմանավորված են ոչ թե հարկային կամ այլ բնույթի՝ պարտադիր պարտավորությունների առկայությամբ, այլ ի սկզբանե ցեդենտի (հարկատուի) նկատմամբ քաղաքացիաիրավական որոշակի պարտավորություն ունենալու հանգամանքով: Վերոգրյալով պայմանավորված՝ երրորդ անձի հետ փոխհարաբերություններում իրավասու պետական մարմինը հանդես է գալիս որպես մասնավոր հարաբերությունների հավասար մասնակից՝ այդ իրավահարաբերությունների մասնակիցներին բնորոշ առանձնահատկություններով: Այլ են քննարկվող պայմանագրի հիման վրա ցեդենտի և ցեսիոների միջև ծագած հարաբերությունները: Ցեդենտի պարտավորությունները պետության հանդեպ շարունակվում են պահպանվել, քանի դեռ ցեսիայի պայմանագիրը կատարված չէ, հետևաբար այդ հարաբերություններն իրենց բնույթով շարունակում են մնալ հանրային, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում: Հետևաբար նշված իրավահարաբերություններից ցեդենտի և ցեսիոների միջև ծագած վեճերը ևս իրենց բնույթով հանրային են և ընդդատյա են ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասով (իրավահարաբերության ծագման պահին գործող

խմբագրությամբ) հարկային մարմնին վերապահված իրավունքները սերտորեն շաղկապված են, և մեկի կատարումը ենթադրում է նաև մյուսի կատարում: Ընդ որում, եթե պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքի գիջման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքը հարկային մարմինը ձեռք է բերում որպես քաղաքացիահրավական հարաբերության սուբյեկտ, և այդ հարաբերության նկատմամբ կիրառելի են քաղաքացիական իրավունքի նորմերը, ապա նշված պայմանագրով ձեռք բերած իրավունքներն իրացնելը և պայմանագրի հիման վրա ստացված գումարները հարկ վճարողի պարտավորությունների մարմանն ուղղելն արդեն իսկ հետապնդում են հանրային շահ, ուղղված են հարկային մարմնի՝ որպես հարկային օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմնի՝ օրենքով սահմանված խնդիրների իրագործմանը և դասվում են հանրային իրավահարաբերությունների շարքին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտի կիրառումը դիտարկվում է իբրև վարչարարություն, ինչը համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը: Նման պայմաններում ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտի կիրառման առնչությամբ հարկային մարմնի կողմից տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ դրսևորված և անձանց համար փաստական հանգամանքներ առաջացրած անգործության իրավաչափությունը ենթակա է գնահատման բացառապես վարչադատավարական կարգով՝ հանրային հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի կիրառմամբ:

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

30.04.2015թ.

44. Ռուբեն Հակոբյան v. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԴ/0052/05/12 **Էջ 440–451**

Խնդիր. 1) Արդյո՞ք բազմաբնակարան շենքում մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ-238-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածում կատարված փոփոխությունը քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրված լինելու, սակայն շինարարությունը նշված օրենքով կատարված փոփոխությունից հետո ավարտվելու պարագայում դրա արդյունքում ավելացված տարածքի նկատմամբ իրավունքի գրանցման համար անհրաժեշտ է մյուս սեփականատերերի համաձայնությունը, և

2) արդյո՞ք այդ դեպքում տեղի է ունենում հողամասի ընդհանուր սեփականության մեջ բաժինների փոփոխություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Նշված հարցադրումներին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ բազմաբնակարան շենքում հողամասի ընդհանուր բաժնային սեփականությունում բաժինների փոփոխության իրավակագավորումներին՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո և դրանցից առաջ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ՝

1. բնակարանի կամ ոչ բնակելի տարածքների սեփականատիրոջ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի բաժինները սահմանվում և գրանցվում են շենքի կառուցման ու սպասարկման համար նախատեսված հողամասի գրանցման հետ միասին, այսինքն՝ հողամասի բաժնային սեփականության մեջ բաժիններն ի սկզբանե սահմանվում են շենքի կառուցման ու սպասարկման համար նախատեսված

հողամասի գրանցման ժամանակ՝ ըստ գրանցման պահին առկա յուրաքանչյուր սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի և այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսների հարաբերությամբ արտահայտված կոտորակների.

2. հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինները գրանցելուց հետո դրանք կարող են փոփոխվել միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու դեպքում,

բ) շենքի բոլոր սեփականատերերի համաձայնությամբ:

Որևէ այլ կերպ կամ պայմաններով հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինները ենթակա չեն փոփոխության:

3. բնակարան կամ ոչ բնակելի տարածք կամ առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերն ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու համար մյուս սեփականատերերի համաձայնությունն ինքնըստինքյան նշանակում է նաև հողամասի բաժնի փոփոխության համաձայնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինների փոփոխությունների համար ուղղակիորեն սահմանել է բոլոր սեփականատերերի համաձայնության առկայության անհրաժեշտությունը:

Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանը նշել է, որ մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը, կարգավորելով բազմաբնակարան (ստորաբաժանված) շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր գույքի վերաբերյալ հարցերը, որևէ դրույթ չի պարունակել բնակարան կամ ոչ բնակելի տարածք կամ առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերն ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու համար մյուս սեփականատերերի համաձայնության անհրաժեշտության վերաբերյալ:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով շինարարության թույլտվության տրամադրման պահին՝ 15.08.2005 թվականին, բազմաբնակարան շենքում տարածք ավելացնելու դեպքում ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժինների փոփոխության հնարավորություն ընդհանրապես նախատեսված չի եղել:

Այսպիսով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից առաջ և հետո բազմաբնակարան շենքում տարածք ավելացնելու դեպքում ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժինների փոփոխության վերաբերյալ կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է՝

- մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխությունները բազմաբնակարան շենքում տարածք (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացնելու համար մյուս սեփականատերերի համաձայնությունը չի պահանջվել.

- մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխությունները բազմաբնակարան շենքում տարածքի (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացումը հողամասի բաժնային սեփականությունում բաժինների փոփոխության չի հանգեցրել.

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կա-

տարված փոփոխություններից հետո բազմաբնակարան շենքում տարածք (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացնելու, և (կամ) դրա հետևանքով բաժնային սեփականությունում բաժինների փոփոխությունների համար անհրաժեշտ է մյուս սեփականատերերի համաձայնությունը:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

27.11.2015թ.

45. ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչություն ն. անհատ ձեռնարկատեր Մանուկ Նազարյան, վարչ. գործ թիվ ՎԴ/9439/05/13 **էջ 452–460**

Խնդիր. 1) Արդյո՞ք ապահովադիր հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունը հաշվարկելու համար հարկային մարմինը պարտավոր է պարզել ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը,

2) անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն վճարների գծով պարտավորության դիմաց գումար բռնագանձելու պահանջներով վարչական դատավարությունում ո՞վ պետք է կրի անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը հարկային մարմնին հանձնելու փաստի ապացուցման բեռը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պետությունը ճանաչում է անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը վերջինիս ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում հաշվառման պահից մինչև նրա հաշվառումից հանելու մասին պետական հաշվառման գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահը, ուստի լիազորված մարմնում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գրանցվելու և հաշվառվելու փաստով անհատ ձեռնարկատերը՝ որպես ապահովադիր, կրում է օրենքով սահմանված պարտադիր վճարներ կատարելու պարտականություն: Այսինքն՝ ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում հաշվառման և լիազորված մարմնում գրանցվելու պահից սկսած մինչև հաշվառումից հանելու պահն անհատ ձեռնարկատերը հանդիսանում է ապահովադիր և պարտավոր է կատարել ապահովադրի համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում նաև՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է՝ 26.12.1997 թվականին, ուժի մեջ է մտել՝ 31.12.1997 թվականին, ուժը կորցրել է՝ 01.01.2013 թվականին) սահմանված պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարելու պարտականությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապահովադիր հանդիսանալու ժամանակահատվածում պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարելու պարտականություն չկրելու միակ պայմանն օրենսդրի կողմից սահմանվել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի մինչև 25.07.2012 թվականը գործող խմբագրությամբ 5-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ պարբերությամբ (ուժը կորցրել է 19.03.2012 թվականին ընդունված և 25.07.2012 թվականից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-152-Ն օրենքով), որի համաձայն՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր լիազորված մարմնին հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը (ձեռներեցը) նույն պարբերությամբ սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար անհատ ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը կարող է նշանակություն ունենալ միայն 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշր-

ջանին վերաբերող մասով, այն էլ այն դեպքում, երբ վերջինս պետական գրանցման վկայականը ժամանակավոր հանձնել է լիազորված մարմնին, իսկ 25.07.2012 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքի պարզման անհրաժեշտությունն ընդհանրապես բացակայում է, քանի որ պետական ռեգիստրի մարմիններում անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում գործում է ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու կանխավարկածը, որի պարագայում վերջինս պարտավոր է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կատարել իր պարտականությունները:

30.04.2015թ.

46. Երևան համայնք v. Ավետիս Ափիյան, վարչ. գործ թիվ ՎԴ/7703/05/13 **Էջ 461–470**

<u>Խնդիր.</u> Արդյոք ֆիզիկական անձանց պատկանող փոխադրամիջոցն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ Երևան քաղաքի ավագանին, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 06.07.2009 թվականին կայացրել է թիվ 10-Ա որոշումը, ըստ որի՝ 2009 թվականի մնացած ժամանակահատվածի համար Երևան քաղաքում գույքահարկի, հողի հարկի և հողի վարձավճարների օրենքով սահմանված կարգով գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները պատվիրակվել է Երևանի վարչական շրջանների ղեկավարներին, իսկ վերջիններիս պատվիրակված լիազորությունների կատարման վերահսկումն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը կրում է համընդհանուր բնույթ, այն տարածվում է բոլոր անձանց վրա: Սահմանադրի կողմից նախատեսված այս պարտականության մեջ արտահայտված են հասարակության հանրային շահերը: ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածում ամրագրված «յուրաքանչյուր ոք պարտավոր է» ձևակերպումից ակնհայտ է, որ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները կրում են համապարտադիր բնույթ: Համապարտադիրությունը, որպես անվերապահորեն կատարման ենթակա պահանջ, տարածվում է բոլոր վճարողների վրա: Գործնականում համապարտադիրության պահանջը կյանքի է կոչվում սեփականատիրոջ գույքի մի մասի՝ հարկի կամ այլ պարտադիր վճարումների ձևաչափով, պետության օգտին փոխանցելու միջոցով: Համապարտադիրության պահանջն արտահայտվում է նաև նրանում, որ կամավոր մուծումներ չկատարելու դեպքում դրանք պետության կողմից հարկադրաբար են գանձվում *(տե՛ս, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Լիլիթ Բաբասիևայի թիվ ՎԴ/7537/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի, Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, իսկ կոնկրետ հարկատեսակները սահմանում է օրենսդիրը: Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված հարկատեսակ է գույքահարկը, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից, այլ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց սեփականության իրավունքով պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է: Օրենսդիրը գույքահարկով հարկվող օբյեկտները սահմանելիս նշել է, որ գույքահարկով հարկվող օբյեկտ է հանդիսանում նաև ավտոմոբիլային տրանսպոր-

տի միջոցը, իսկ փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ), միաժամանակ փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսդիրը ֆիզիկական անձանց համար որպես գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան սահմանել է օրացուցային տարին՝ միաժամանակ ամրագրելով, որ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարն օրենքով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը նախատեսել է, որ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից, գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Միաժամանակ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորմամբ սահմանել էր, որ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործող իրավակարգավորման պայմաններում օրենսդիրը, գույքահարկի վճարման պարտավորության առաջացման և դադարեցման կարգը նախատեսելիս, սահմանելով, որ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները, վերը նշված ընդհանուր կանոնից փոխադրամիջոցների մասով նախատեսել է բացառություն: Մինչդեռ իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորմամբ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ փոխադրամիջոցների մասով, առանց որևէ բացառության ենթակա էին փոխանցման նոր սեփականատիրոջը:

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

27.11.2015թ.

47. ՀՀ ֆինանսների նախարարություն v. Կարինա Աբրամյան, վարչ. գործ թիվ ՎԴ/2224/05/13 **էջ 471-484**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու համար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվության կիրառման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ ՀՀ մաքսային օրենսդրությամբ անձին իրավունք է վերապահված ընտրելու համապատասխան մաքսային ռեժիմ կամ փոփոխելու իր կողմից ընտրված մաքսային ռեժիմը: ՀՀ մաքսային օրենսդրությամբ նախատեսված այս իրավունքն անձանց համար երաշխավորում է հետևյալ իրավական հնարավորությունները. առաջին՝ ընտրել օրենքով սահմանված մաքսային ռեժիմներից որևէ մեկը՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները, երկրորդ՝ փոփոխել իր կողմից ընտրված մաքսային ռեժիմն օրենքով սահմանված մաքսային ռեժիմով՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ ապրանքների բացթողումը «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում թույլատրվում է հայտա-

րարատուի խնդրարկած ժամկետով, որը չի կարող մեկ տարուց ավելի լինել: Այդ ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է դրանք վերահայտարարագրել «վերաարտահանում» մաքսային ռեժիմով կամ հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը, որի դեպքում միայն անձի կողմից հետագա արտահանման պարտավորությունը համարվում է չխախտված: Միաժամանակ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում այդ ապրանքները վերահայտարարագրել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաներմուծում» մաքսային ռեժիմներից որևէ մեկով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը *(տե՛ս, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Լիլիթ Բաբասիևայի թիվ ՎԴ/7537/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է սահմանել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են ապրանքների հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորության պատշաճ կատարման հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման՝ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով սահմանված կարգի դեմ: Խնդրո առարկա իրավախախտումը դրսևորվում է հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 50.000 ՀՀ դրամի չափով:

Վերը նշված իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ մաքսային տարածք ներմուծված և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքների հետագա արտահանման պարտավորության խախտումը, որը դրսևորվում է այդ ապրանքներն օրենքով նախատեսված ժամկետում չարտահանելու ձևով, առաջացնում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվություն: Մաքսային կանոնների նշված խախտման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է ընտրել տուգանքը, որի չափը կախված է ներմուծված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունից և կազմում է դրա 50 տոկոսը, բայց ոչ պակաս քան 50.000 ՀՀ դրամ: Հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը հաշվարկելու համար անհրաժեշտ է նախևառաջ հաշվարկել «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը, որի 50 տոկոսն էլ կկազմի նշանակվող տուգանքի չափը: Իսկ այն դեպքում, երբ «ժամանակավոր ներմուծում» մաքսային

ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսը պակաս է 50.000 ՀՀ դրամից, ապա ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը կկազմի 50.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի իմաստով մաքսային վճարներ են համարվում ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված մաքսատուրքը, մաքսավճարը, ինչպես նաև հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Հետևաբար «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարները կազմում են ՀՀ մաքսային սահմանով այդ ապրանքների տեղափոխման համար օրենքով սահմանված մաքսատուրքի, մաքսավճարի, ինչպես նաև հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հանրագումարը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 98-րդ և 99-րդ հոդվածներով սահմանված իրավանորմերի բովանդակությունից բխում է, որ մաքսատուրքն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է, որը վճարվում է ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար:

Ամդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետի իրավակարգավորմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ նշված իրավադրույթով օրենսդիրը ֆիզիկական անձանց համար սահմանել է արտոնություն, այն է՝ առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը, և որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում,

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանված ապրանքատեսակների *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Վահե Հարությունյանի թիվ ՎԴ/5170/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համադրված վերլուծությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք ազատված են մաքսատուրքի վճարման պարտականությունից ՀՀ մաքսային սահմանով այնպիսի ապրանքներ տեղափոխելու դեպքում, որոնք գտնվում են ֆիզիկական անձանց հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռում և չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 109-րդ 1-ին կետի և 111-րդ հոդվածի «բ» ենթակետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը ֆիզիկական անձանց համար սահմանել է մաքսավճարի՝ մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով օգտագործվող պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճարի, վճարման արտոնություն: Այսպես՝ ֆիզիկական անձինք ազատված են մաքսավճարի վճարման պարտականությունից ՀՀ մաքսային սահմանով այնպիսի ապրանքներ տեղափոխելու դեպքում, որոնց համար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավահարաբերության ծագման պահին

գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 111-րդ հոդվածի «բ» ենթակետի և 105-րդ հոդվածի 5-րդ կետի համադրված վերլուծությունից բխում է, որ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ մաքսային սահմանով անձնական օգտագործման իրերի տեղափոխման համար մաքսավճարի դեպքում ևս գործում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսատուրքի գծով սահմանված արտոնյալ ռեժիմը, որի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսավճարի վճարման տեղափոխել իրենց հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռում գտնվող գործարանային փաթեթավորում ու պիտակավորում չունեցող ապրանքները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ օրենսդրությամբ մաքսային մարմինների կողմից գանձվող ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծման համար այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ սահմանված չեն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ ֆիզիկական անձինք ազատված են ՀՀ մաքսային տարածք ներմուծված և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին բավարարող անձնական օգտագործման իրերի համար մաքսատուրքի և մաքսավճարի վճարման պարտականությունից: Ֆիզիկական անձինք միաժամանակ անձնական օգտագործման իրերի ներմուծման համար որևէ հարկային պարտավորություն չունեն: Հետևաբար ֆիզիկական անձանց անձնական օգտագործման իրերի, այսինքն՝ ֆիզիկական անձանց հետ միաժամանակ ՀՀ մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռում գտնվող գործարանային փաթեթավորում ու պիտակավորում չունեցող ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը հավասար է զրոյի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

30.04.2015թ.

48. Արարատ Ափոյան v. ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/6690/05/13 **Էջ 485–495**

Խնդիր. Զինվորական ծառայությունից արձակված զինծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար արդյոք կիրառելի են մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորումները, եթե զինծառայողը ծառայությունից արձակվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո (ուժի մեջ է մտել 01.01.2011 թվականին):

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Հետևաբար զինվորական կենսաթոշակի իրավունքը ծագում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում նշված անձանց մոտ, եթե վերջիններս բավարարում են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պայմաններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված պայմանները հանդիսանում են այնպիսի իրավաբանական փաստերի ամբողջություն, որոնց հիման վրա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում նշված անձանց մոտ ծագում է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը: Այդ փաստերն են՝ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելը և արձակվելու օրվա դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ ունենալը: Այսինքն՝

երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման համար հիմք է հանդիսանում ծառայությունից արձակվելը և ծառայությունից արձակելու հիմքով պայմանավորված՝ ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ 20 օրացուցային տարվա զինվորական ստաժ ունենալը:

Ըստ այդմ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել են, թե զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում ծառայության (աշխատանքի) իրականացման փաստացի ժամանակահատվածից բացի ինչ հավելյալ ժամկետներ են ներառվում: Դրանք այնպիսի ժամկետներն են, որոնց ընթացքում անձն իրականացրել է այնպիսի գործունեություն, կամ վերջինիս նկատմամբ առկա են եղել այնպիսի հանգամանքներ, որոնք հավասարեցված են զինվորական ծառայությանը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժն իր մեջ ներառում է փաստացի զինվորական ծառայության և դրան հավասարեցված այլ գործունեության և/կամ օրենքով սահմանված՝ զինվորական ծառայությանը հավասարացված հանգամանքների ժամանակահատվածները, և դրանց հանրագումարը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված 20 օրացուցային տարվան հավասար և ավելի տարի լինելու դեպքում անձի մոտ կարող է ծագել երկարամյա կենսաթոշակի իրավունք:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքն այդպիսի կենսաթոշակի իրավունք ունեցող անձի մոտ ծագում է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու հիմքով կենսաթոշակ նշանակելու պարագայում: Ընդ որում, երկարամյա կենսաթոշակի իրավունքի առկայության դեպքում անձին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելիս պետք է հաշվի առնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնյալ ժամկետների հիմքերի առկայությունը: Այսինքն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնյալ ժամկետները կազմում են երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքի իրացման բաղադրատարրեր՝ ի տարբերություն նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների, որոնք հիմք են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման համար:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ զինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 01.01.2011 թվականը, կարգավորվել են նախ՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-49 օրենքով և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների նշանակման կարգի և նրանց ապահովության և արտոնությունների մասին» ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ, այնուհետև՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-258 օրենքով, ««Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում, այդ ակտի գործողությունը տարածվում է միայն մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, չի տարածվում դրանից հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ թե՛ «Զինծառայողների

և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-49 օրենքով, թե՛ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-258 օրենքով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը պայմանավորվել է ծառայությունից ազատվելու պահին որոշակի զինվորական ստաժի առկայությամբ, այսինքն՝ նախկինում գործող կարգավորումներով ևս երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքն անձի մոտ կարող էր ծագել միայն ծառայությունից արձակվելու պահին, եթե առկա էր համապատասխան ծառայության ստաժ: Այսպիսով, թե՛ նախկին, թե՛ ներկա կարգավորումներով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագումն օրենսդիրը պայմանավորել է զինվորական ծառայությունից անձին արձակելու հետ:

Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 15.01.2008 թվականի թիվ ՍԴՈ-723 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, եզրահանգել է, որ ՀՀ սահմանադրական դատարանն անձի կենսաթոշակ ստանալու լեգիտիմ իրավունքը կապել է կենսաթոշակ ստանալու իրավունքի հետ, մինչդեռ սույն գործով նախկինում գործող օրենսդրության հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման փաստ առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում կիրառելի են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի կարգավորումները, որոնք երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի, ինչպես նաև զինվորական ստաժի արտոնյալ հաշվարկի (մեկուկես անգամ ավել չափով) համար նախատեսում են 20 օրացուցային տարվա ստաժի առկայություն:

17.07.2015թ.

49. Մայիս Հակոբյան v. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Մարտունու սոցիալական ապահովության տարածքային բաժին, վարչ. գործ թիվ ՎԴ2/0584/05/13 **Էջ 496–506**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունքի իրացման առանձնահատկություններին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Սոցիալական պետության կարևորագույն բնութագրիչներից մեկը մարդկանց սոցիալական պաշտպանվածության արդյունավետ երաշխիքների ապահովումն է: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուր անձի սոցիալական ապահովության իրավունքը, որը ենթադրում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ օրենքով սահմանված ձևերով ու ծավալով:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.10.2006 թվականի թիվ ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հիշատակել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ *(տե՛ս, օրինակ, Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.06.2009 թվա-*

կանի վճիռը, 55-րդ կետ): Միաժամանակ Եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար *(տե՛ս, «Պրեսոս Կոմպանիա Նավիերա ՍԱ»-ն և այլոք ընդդեմ Բելգիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը):* Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել *(տե՛ս, Բոյդոմն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետ):*

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, իր նախկին որոշումներում արձանագրել է, որ կենսաթոշակի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային իրավունք է *(տե՛ս, օրինակ՝ Թերեզա Գևորգյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն է, որը սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու, նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը: Օրենսդիրը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ամրագրելով պետական կենսաթոշակների տեսակները, դրանց շարքում սահմանել է նաև մասնակի կենսաթոշակը, որը դասվում է աշխատանքային կենսաթոշակների շարքին («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ) և նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իմաստով ֆիզիկական անձանց կենսաթոշակ նշանակելը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին հնարավորություն է տալիս անարգել օգտվելու իր՝ կենսաթոշակ ստանալու իրավունքից: Օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնակի կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար տվյալ ֆիզիկական անձի մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողները կարող են ձեռք բերել մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին լրացել է նրանց 55 տարին, ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և մինչև 01.08.2003 թվականն ընկած ժամանակահատվածում առնվազն 12 օրացուցային տարի աշխատել են մասնակի կենսաթոշակի իրավունք տվող համապատասխան մասնագիտություններով կամ պաշտոններում: Ընդ որում, կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը սահմանված է ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կրթության, մշակույթի աշ-

խատողը կարող է ձեռք բերել մասնակի աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմելու պահին լրացել է կրթության, մշակույթի բնագավառի տվյալ աշխատողի 55 տարին,

2) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմելու պահին կրթության, մշակույթի բնագավառի տվյալ աշխատողն ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

3) կրթության, մշակույթի բնագավառի տվյալ աշխատողի՝ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 01.08.2003 թվականն ընկած ժամանակահատվածում աշխատած մասնագիտական աշխատանքային ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական անձի՝ մասնակի աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքն իրացվում է տվյալ ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից կայացվող որոշման հիման վրա: Այդ վարչական վարույթի ընթացքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար դիմում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված վերը նշված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում, ի թիվս այլ պաշտոնների, ներառված է նաև պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնը**:** Փաստորեն, ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման համաձայն՝ դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնը համարվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոն:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

27.11.2015թ.

50. ՀՀ ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչություն ց. «Վարդանի Ջարթոնքը» ՍՊԸ, վարչ. գործ թիվ ՎԴ/11193/05/13 **Էջ 507-516**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք պետական տուրքի գծով տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված վճարումները վարչական մարմինն իրավասու է ուղղել նույն սուբյեկտի նկատմամբ հետագայում հաշվարկված պարտավորությունների մարմանը:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է առանցքային նշանակություն ունեցող սահմանադրական պահանջ, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները պետք է սահմանված լինեն ՀՀ Սահմանդրությամբ կամ օրենքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է օրինականության ենթասկզբունք հանդիսացող օրենքի վերապահումը: Օրենքի վերապահում նշանակում է, որ վարչական մարմինը որևէ գործողություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում նաև այլ իրավական ակտով:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հարկերի և պարտադիր այլ վճարների առնչությամբ ծագած հարաբերությունները նույնպես կարգավորված են ՀՀ Սահմանադրությամբ, ինչն ինքնին վկայում է հասարակության և պետության համար դրանց կարևորության և էա-

կան նշանակության մասին: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում օրենսդիրը պետական տուրքը սահմանել է որպես պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված պարտադիր վճար, որն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից գանձվում է պետական և (կամ) համայնքների բյուջեներ:

Օրենսդիրը պետական տուրք վճարողների համար սահմանել է պարտականություն ժամանակին և լրիվ վճարել օրենքով սահմանված պետական տուրքերը, ինչպես նաև պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է նաև պետական տուրքի գանձման պահը՝ նախատեսելով, որ եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ, ապա պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է, որ օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի տրման ամսաթվից ոչ ուշ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրն անձանց համար նախատեսել է օրենսդրությամբ սահմանված չափից ավել վճարված պետական տուրքի վերադարձի իրավական հնարավորություն: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ պետական տուրքի գումարը վճարվի սահմանված չափից ավել: Այդ դեպքում պետական տուրքը կարող է վերադարձվել միայն վճարողի դիմումի համաձայն, եթե դիմումը ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը, որի համաձայն՝ պետական տուրքերի պարտավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև պետական տուրքերի պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Վճարողի լուծարման դեպքում պետական տուրքերի մինչև հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները և գերավճարներն անտեսվում են:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ, նախ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման առարկան վերաբերում է գումարի հաշվառման արժույթին, այլ ոչ թե ավել վճարված պետական տուրքն այլ պարտավարությունների մարմանն ուղղելուն: Երկրորդ, թեև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «հաշվանցում» տերմինը, այդուհանդերձ դրանից ուղղակիորեն չի բխում ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում ամրագրելով պետական տուրքերը ժամանակին և լրիվ վճարելու պարտականություն՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է պետական տուրքը վերադարձնելու կարգը՝ այդ գործողությունը պայմանավորելով վճարողի կողմից դիմումի ներկայացմամբ: Հարկ է նկատել, որ հարկային օրենսդրությունը նույնպես ավել վճարված գումարները վերադարձնելու հանգամանքը պայմանավորել է վճարողի կողմից դիմումի ներկայացմամբ: Ընդ որում, ի տարբերություն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի, որով ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու որևէ կարգ նախատեսված չէ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանել է հարկերի հաշվանցման և (կամ) վերադարձման կարգն ու ժամկետները: Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային մարմնի կողմից հաշվանցվում են հարկ վճարողի այլ պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Իսկ հարկերի հաշվանցման և (կամ) վերադարձման կարգն ու ժամկետները սահմանվել են «Հարկերի

մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածով, որով ամբողջությամբ կանոնակարգված են հարկերի հաշվանցմանն և (կամ) վերադարձմանն առնչվող իրավահարաբերությունները:

Այսպիսով, ի տարբերություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու որևէ կարգ չի նախատեսել, հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասում «հաշվանցում» տերմինի օգտագործված լինելու հանգամանքը բավարար իրավական հիմք չէ ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու գործողությունը կատարելու համար:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումը համահունչ է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորմանը, որի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Տվյալ դեպքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման իմաստով պետական տուրքերի պարտավորությունների մարումներ են դիտարկվել ինչպես վճարումը, այնպես էլ հաշվանցումը: Սակայն հաշվանցման մասով նշված իրավանորմի պահանջի կատարումն ուղղակիորեն պայմանավորված է հաշվանց կատարելու կարգ ու ժամկետներ սահմանող իրավական այլ ակտի ընդունմամբ: Հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հաշվանցում կատարելու մասով կարող է գործել միայն հաշվանց կատարելու կարգ ու ժամկետներ սահմանող իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից: Հարկ է նաև նկատել, որ ավել վճարված պետական տուրքի՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վերադարձման կանոններն օրենքի անալոգիայի ուժով հաշվանցի նկատմամբ կիրառելի համարելու պարագայում անգամ հաշվանցի կատարում իրականացնելու համար վճարողի կողմից պետք է ներկայացվի համապատասխան դիմում: Ընդ որում, հաշվանց կատարելու վերաբերյալ վճարողի դիմումը մերժելու վերաբերյալ վարչական մարմնի ընդունած որոշման իրավաչափության գնահատումը կարող է իրականացվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով այդ որոշումը բողոքարկելու կամ վիճարկելու դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում սահմանել է, որ պետական տուրքի վճարման՝ իրավաբանական անձանց պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով: Նույն օրենքում օրենսդիրը նախատեսել է նաև, որ անկախ վերը նշված պետական տուրքի վճարման պարտավորության դադարման հիմքերից, կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է նաև այդ պարտավորության կատարմամբ՝ օրենքով սահմանված դրույքաչափերով ու ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքի գումարների (պետական տուրքի գումարը համարվում է վճարված Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ, տարեկան պետական տուրքի վճարումից ազատումով, օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաև ֆիզիկական անձի մահվան դեպքում և մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) դեպքում:

30.04.2015թ.

51. «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ v. ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարար, վարչ. գործ թիվ ՎԴ/9358/05/12 **էջ 517-525**

<u>Խնդիր.</u> Իրավաչափ է արդյո՞ք այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստանալու հայտի մերժումն այն հիմքով, որ հայտատուի նախկին լիցենզիայի գործունեությունը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով դադարեցվելուց հետո մեկ տարվա ժամկետը չի լրացել:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լիցենզավորման, այսինքն՝ լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման իրավական գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 33-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ այլ վայրում ևս զբաղվելու համար առանձին լիցենզիա ստանալու իրավական կառուցակարգերը: Ընդ որում, օրենքի նշված հոդվածում օրենսդրի կողմից նախատեսված կարգավորումները կիրառելի են միայն այն դեպքում, երբ հայտատուն ունի լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեությամբ զբաղվելու պաշտոնապես հաստատված իրավունք (լիցենզիա) և ցանկանում է այլ վայրում ևս իրականացնել լիցենզավորման ենթակա նույն գործունեությունը: Միաժամանակ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածում նախատեսված կարգավորումները տարածվում են միայն լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների վրա, որոնք օրենքի համաձայն պետք է իրականացվեն միայն լիցենզիայում նշված վայրում:

Օրենսդիրը, սահմանելով, որ լիցենզավորման ենթակա են միայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում ընդգրկված գործունեության տեսակները, միաժամանակ ամրագրել է նաև, որ եթե նշված աղյուսակի 10-րդ սյունակում՝ լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեության անվանման դիմաց, նշված է «Վ» տառը, ապա լիցենզավորման ենթակա գործունեության այդ տեսակը պետք է իրականացվի միայն լիցենզիայում նշված վայրում:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածում «Վ» տառով նշվում են գործունեության այն տեսակները, որոնց իրականացման համար տրվող լիցենզիայում նշված է այդ գործունեության իրականացման թույլատրելի վայրը, իսկ այլ վայրում նույն գործունեությամբ զբաղվելու դեպքում անհրաժեշտ է ստանալ նոր լիցենզիա *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունն ընդդեմ «Ամելիք Բանկ» ՓԲԸ-ի թիվ 3-1894(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում՝ «Առողջապահության բնագավառ» վերտառությամբ 3-րդ բաժնի «Դեղատնային գործունեություն» վերտառությամբ 2-րդ կետի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը: Հետևաբար դեղատնային գործունեության՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակի իրականացման համար տրվող լիցենզիայում նշվում է դրա իրականացման թույլատրելի վայրը, իսկ այլ վայրում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու դեպքում անհրաժեշտ է ստանալ նոր լիցենզիա:

Անդրադառնալով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավադրույթով օրենսդիրը լիցենզիայի գործողության դադարեցումից բացի տնտեսվարող սուբյեկտների համար լրացուցիչ բացասական իրավական հետևանքներ առաջացնելու նպատակ է հետապնդում՝ ժամանակային սահմանափակում նախատեսելով նոր լիցենզիա ստանալու համար հայտ ներկայացնելու վերջիններիս իրավունքի իրացման նկատմամբ: Այսպես, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից բխում է, որ նույն հոդվածով սահմանված որոշ հիմքերով լի-

ցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմել լիցենզավորող մարմին միայն լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո: Եթե համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձը կամ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ սուբյեկտը նոր լիցենզիա ստանալու համար դիմել է լիցենզիայի գործողությունն օրենքով սահմանված որոշ հիմքերով դադարեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ապա լիցենզավորող մարմինը պարտավոր է մերժել վերջինիս լիցենզիա ստանալու հայտը:

Այսպիսով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավադրույթի խախտման հիմքով նոր լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) լիցենզավորման ենթակա որոշակի գործունեությամբ զբաղվող անձի լիցենզիայի գործողությունը դադարեցվել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով,

բ) նոր լիցենզիա ստանալու համար այդ անձը դիմել է լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից է նաև իրավահավասարության սկզբունքը: Վճռաբեկ դատարանը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը վերլուծելով իրավահավասարության համընդհանուր սկզբունքի լույսի ներքո, արձանագրել է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սահմանափակումը կիրառելի է բոլոր այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնց լիցենզիայի գործողությունը դադարեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով, անկախ այն հանգամանքից, թե տվյալ տնտեսվարող սուբյեկտի լիցենզիայի գործողության դադարեցումից հետո վերջինս շարունակում է հանդիսանալ լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեությամբ զբաղվող անձ, թե՝ ոչ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ լիցենզիաներից մեկի գործողության դադարեցումից հետո տնտեսվարող սուբյեկտի կողմից դեղատնային գործունեությամբ զբաղվող անձ հանդիսանալը բավարար չէ, որպեսզի «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սահմանափակումը կիրառելի չլինի տվյալ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

30.04.2015թ.

52. Լյուբով Փիլոյան v. «Սոգլասիե-Արմենիա» ՍՊԸ և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ/2085/05/12 **Էջ 526-540**

Խնդիր. Արդյո՞ք իրավաչափ է վարչական մարմնի իրավասության շրջանակներում ընդունված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի տնօրինմանն ուղղված վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի բավարարումն այն պայմաններում, երբ տվյալ հողամասի նկատմամբ հայցվորի ենթադրյալ գույքային իրավունքները դադարել են չվիճարկված և ոչ իրավաչափ չճանաչված մեկ այլ վարչական ակտով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Եվրոպական դատարանն իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք

է կազմենն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (*տե՛ս, Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով Եվրոպական դատարանի 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթհեմն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով Եվրոպական դատարանի 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32):*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ, որպես ընդհանուր կանոն, դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Ամնը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՝ ոչ *(տե՛ս, Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

3. Դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում, չի կարող անվավեր ճանաչվել

այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք *(տե՛ս, Սվետլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը մեկ անգամ ևս փաստել է, որ անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը վարչական դատավարության կարգով վիճարկելու դեպքում, մասնավորապես՝ անձը պետք է հիմնավորի, որ այդ վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը: Եթե գործի քննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ հայցով դատարան դիմած անձի որևէ իրավունք չի խախտվել, կամ վիճարկվող վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը որևէ կերպ չեն առնչվում տվյալ անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, ապա պետք է վճիռ կայացնի վերջինիս հայցը մերժելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ Վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: Այսպես՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց *(տե՛ս, օրինակ՝ Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):*

27.11.2015թ.

53. Սերժիկ Պողոսյան v. ՀՀ կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյան, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյան, վարչ. գործ թիվ ՎԴ/4901/05/11 **Էջ 541–550**

<u>Խնդիր.</u> 1) Արդյո՞ք անձը դատարան դիմելու պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է՝ 28.11.2007 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) համաձայն իրավունք ուներ վիճարկման հայցով պահանջելու անվավեր ճանաչել ժառանգության իրավունքի վկայագիրը,

2) արդյո՞ք ՀՀ իրավական համակարգում ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ է:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 8-րդ հոդվածներում սահմանել էր վարչական դատարանի իրավասության շրջանակը: Ինչպես ցանկացած դատարան, վարչական դատարանն իրավասու էր իրականացնել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված էր հատուկ տեսակի իրավասությամբ: 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 8-րդ հոդվածներում օրենսդիրը սահմանել էր այն սուբյեկտների ցանկը, ովքեր կարող էին դիմել ՀՀ վարչական դատարան, ինչպես նաև՝ ՀՀ վարչական դատարանի ընդդատության

շրջանակը, իսկ նույն օրենսգրքի 64–րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն էր: 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում օրենսդիրը սահմանել էր հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների վարչական դատարան դիմելու հայցատեսակները, ինչպես նաև՝ հատուկ վարույթները և դրանց դատավարական առանձնահատկությունները:

Վկայակոչված իրավանորմերը սահմանում էին, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար իրավունք ուներ դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում էր, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ուներ և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ուներ դիմելու վարչական դատարան:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձի մոտ վարչական դատարան դիմելու իրավունքի առկայության հարցը պետք է դիտարկվեր հետևյալ պայմանների համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ իրավական նախադրյալները.

- սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարում,
- համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայություն,
- հանրային իրավահարաբերություններից ծագող իրավական վեճի առկայություն,
- 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65–68–րդ հոդվածներով կամ հատուկ վարույթներով նախատեսված հայցի առկայություն:

Օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65–րդ հոդվածում, որպես առանձին հայցի տեսակ, նախատեսել էր վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածում ամրագրված վիճարկման հայցին՝ նշելով, որ վիճարկման հայցի առարկան է միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու կամ փոփոխելու պահանջը: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*տե՛ս, Սամվել Մելքումյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):*

Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի, 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ էր, որն ուղղված էր դատական ակտով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն: Հետևաբար վիճարկման հայցով հայցվորն իրավունք ուներ պահանջել վերացնելու իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը: Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքի առկայության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե՝ ոչ:

Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53–րդ հոդվածի 1–ին մասում վարչական ակտը սահմանել է որպես իրավական ակտ, որն ընդունում է վարչական մարմինը՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում արդեն իսկ անդրադարձել է վարչական ակտին բնորոշ հատկանիշներին: Համաձայն Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտին բնորոշ հատկանիշներն են վարչական մարմնի անհատական ակտ լինելը, արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի ոլորտում ընդունված լինելը, կոնկրետ գործի կարգավորումը, իրավունքների և պարտականությունների սահմանումը, փոփոխումը, վերացումը կամ ճանաչումը *(տե՛ս,*

Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ նոտարի կողմից անձին տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ համարվելու համար պետք է օժտված լինի վարչական ակտին բնորոշ վերը նշված բոլոր հատկանիշներով: Այսպես, Վճռաբեկ դատարանը ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ դիտարկելու համար նախևառաջ անհրաժեշտ է համարել պարզել, թե արդյոք այն ընդունվում է հանրային իրավունքի ոլորտում վարչական մարմնի կողմից:

Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում վարչական մարմնի հասկացությունը նախ սահմանել է ինստիտուցիոնալ առումով՝ ամրագրելով, որ վարչական մարմիններ են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, այնուհետև վարչական մարմնի հասկացությունը սահմանել է գործառութային առումով՝ նշելով, որ վարչական մարմիններ են նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև օրենսդիրը սահմանել է, որ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ, հետևաբար նոտարն ինստիտուցիոնալ առումով վարչական մարմին չէ, նոտարն օժտված չէ նաև այլ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կարգավիճակով, այսինքն՝ նոտարը ՀՀ իրավական համակարգում գործառութային առումով նույնպես վարչական մարմին չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ ժառանգական իրավունքի կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ՝ ի տարբերություն վարչական ակտի, որն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում:

Հետևաբար նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում չի կարող հանդիսանալ վարչական ակտ, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ անձն իրավունք չուներ պահանջելու վիճարկման հայցով վերացնել իր ենթադրյալ իրավունքները և ազատությունները խախտող ժառանգության իրավունքի վկայագիրը, քանի որ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից նախատեսված հայցի տեսակ էր, որն ուղղված էր դատական ակտով միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելուն կամ փոփոխելուն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նոտարի կողմից հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է նոտարների հանրային-իրավական կարգավիճակը և պայմանավորում է նրանց գործունեության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացման իրավական անհրաժեշտությունը: Ըստ այդմ, օրենսդիրը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը կարող են բողոքարկվել դատարան: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը քննվում են վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նոտարի գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 28-րդ գլխի 161-րդ հոդվածով սահմանել էր նոտարական գործողության կամ նոտարական անգործության վիճարկելու վերաբերյալ գործերի քննության կարգը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր

տրամադրելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում:

Այսպիսով, օրենսդիրը նոտարական գործողության կատարման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերն ընդդատյա էր համարել վարչական դատարանին, քանի որ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա էին հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Հետևաբար այն դեպքերում, երբ վեճը վերաբերում էր ոչ թե հանրային իրավահարաբերություններին, այլ մասնավոր իրավահարաբերություններին, մասնավորապես՝ ժառանգական իրավունքին, ապա տվյալ գործերը վարչական դատարանում քննության ենթակա չէին:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ երբ հայցի առարկան ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելն էր, ապա անձը դատարան չէր կարող ներկայացնել վիճարկման հայց, քանի որ անձը վիճարկման հայցով կարող էր պահանջել ամբողջությամբ կամ մասնակի վերացնել վարչական ակտը, իսկ ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ չի հանդիսանում: Ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիտարկվել նաև որպես նոտարական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը:

27.11.2015թ.

54. Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերություն v. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ի դեմս Մտավոր սեփականության գործակալության, վարչ. գործ թիվ ՎԴ/9190/05/13 **Էջ 551–559**

<u>Խնդիր.</u> 1) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը կարո՞ղ է արդյոք դատարան ներկայացվել «իրական (ռեալ)» իրավունքներ չունեցող անձի կողմից,

2) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «ցանկացած անձ» եզրույթի կիրառումից հետևո՞ւմ է արդյոք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով դատարան դիմելու իրավունք ունեն նաև այն անձինք, որոնց իրավունքների խախտում կամ խախտման առաջացման հնարավորություն առկա չէ:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիք՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձը ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և

հասցեատեր ու կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Եվրոպական դատարանն իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա *(տե՛ս, Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով Եվրոպական դատարանի 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթեմեն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով Եվրոպական դատարանի 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32):*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը: Նշվածից հետևում է նաև, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգիռ անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ, որոնք խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ անձանց՝ իրենց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունք տրամադրելով հանդերձ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, վերջիններիս համար, սակայն, չի ընձեռում հանրության շահերը պաշտպանելու հնարավորություն, այն է՝ չի թույլատրում անձանց իրականացնել վարչական մարմինների վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության իրավաչափության օբյեկտիվ վերահսկողություն: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար, պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ որոշում, գործողություն կամ անգործություն, այլև նշված ոչ իրավաչափ որոշման, գործողության կամ անգործության արդյունքում անձանց սուբյեկտիվ իրավունքների խախտում կամ խախտման առաջացման վտանգ: Այսինքն՝ վարչական արդարադատություն, բացառությամբ նույն օրենսգրքով սահմանված դեպքերի, կարող է հայցել միայն այն անձը, ով հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, կամ այլ կերպ ասած՝ այն անձը, ում սուբյեկտիվ իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական արդարադատություն հայցող անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերից յուրաքանչյուրով պետք է պարզվի՝ արդյոք հայցվորը հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, այսինքն՝ «շահագրգիռ անձ», քանի որ միայն իրավական շահագրգռվածության

առկայության պարագայում անձը կարող է ակնկալել իր խախտված իրավունքների դատական պաշտպանություն: Ընդ որում, իրավունքների խախտման, կամ այլ կերպ ասած՝ դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ լինելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է հենց հայցվորը:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրանով օրենսդիրը նախատեսել է դատարանի կողմից ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հիմքերը, այն է՝ ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանը չօգտագործվելը կամ իրական օգտագործման մեջ չդրվելը: Ընդ որում, նշված հիմքերի առկայության դեպքում դատարանի կողմից ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելն օրենսդիրը հնարավոր է համարել ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի կամ հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում:

Այդուհանդերձ, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վարչական դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտների վերաբերյալ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը դատարան դիմելու իրավունքը չի կապել անձանց իրավունքների ենթադրյալ խախտման հետ՝ հնարավորություն տալով «ցանկացած անձի» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ պահանջ ներկայացնել դատարան, այնուամենայնիվ, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «ցանկացած անձ» եզրույթը չի կարող մեկնաբանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասից անկախ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն է այն ընդհանուր օրենքը, որով սահմանվում է վարչական գործերով դատական պաշտպանության իրավունքի իրականացման հիմքերը և կարգը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատարան դիմելու իրավունքը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով «ցանկացած անձին» վերապահելու իրավակարգավորումից չի կարող հետևել, որ անձն իրավական շահագրգռվածության բացակայության պարագայում ևս կարող է ակնկալել դատական պաշտպանություն: Ցանկացած պարագայում դատարան դիմելը ենթադրում է խախտված իրավունքների վերականգնում՝ լինի դա մասնավոր իրավահարաբերությունից ծագած վեճի արդյունք, թե հանրային իրավահարաբերությունից ծագած վեճի արդյունք: Բացի այդ, դատական պաշտպանության իրավունքը չի կարող լինել ինքնանպատակ, և անձը չի կարող դիմել դատարան, եթե առկա չէ վերջինիս «իրական (ռեալ)» իրավունքների խախտում կամ խախտման վտանգ:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

27.11.2015թ.

55. Ջաջուռի գյուղապետարան ն. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանում և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ5/0029/05/14 **էջ 560–570**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական դատավարությունում ապացույցների գնահատման օրենսդրական չափանիշների պահպանման և դրա հիման վրա պատճառաբանված դատական ակտ կայացնելու դատարանի պարտականության իրավական խնդրին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն

արձանագրել է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ, օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մաս, 126-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետ, 130.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ Եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարաններին կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է արդյոք դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկ-

րետ գործի հանգամանքների լույսի ներքո *(տե՛ս, օրինակ՝ Սալովն ընդդեմ Ուկրաինայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ):*

Վերոնշյալ հարցի վերաբերյալ 09.04.2007 թվականի թիվ ՍԴՈ-690 որոշմամբ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ նշելով, որ պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում ևս բազմիցս անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս, օրինակ՝ Ռազմիկ Սարոսյանն ընդդեմ Սյուֆիան և Անահիտ Սարոսյանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):*

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը, որը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանին ընձեռված իրավական հնարավորությամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված):

Իր նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Զորջ ընդ Բրանդն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մաս-

ցած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Միքանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ3/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը)*:

27.11.2015թ.

56. Զոյա Սիմեոնիդու v. Երևան համայնք և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ/10507/05/13 **Էջ 571–586**

Խնդիր. Արդյո՞ք վարչական դատավարության շրջանակներում հարցաքննված վկայի ցուցմունքը կարող է դիտարկվել որպես անարժանահավատ ապացույց միայն այն հիմքով, որ նշված ցուցմունքով ներկայացված փաստական տվյալները վերաբերում են այդ վկայի մերձավոր ազգականներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները, նշել է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների արժանահավատության հարցին, նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա *(տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ «Զարյա» արտադրական կոոպերատիվի թիվ 3-81 (ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով: Մասնավորապես՝ եթե վկայի ցուցմունքը գնահատելիս դատարանը նախևառաջ պետք է հաշվի առնի վկայի անձնական հատկանիշները (ունակ է արդյոք նա ընկալել և վերարտադրել համապատասխան փաստը, ինչ փոխհարաբերությունների մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց հետ և այլն), ապա գրավոր ապացույցների պարագայում դատարանը նախևառաջ պետք է պարզի այդ ապացուցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին *(տե՛ս, Արմեն Կոտղինյանն ընդդեմ Սեդա Խոտշոտյանի թիվ ԵԴԴ/1342/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը)*:

Ամփոփելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի ճիշտ լուծման նպատակով դատարանը պարտադիր կերպով պետք է ստուգի ապացույցների արժանահավատությունը, քանի որ միայն արժանահավատ ապացույցն է հնարավորություն տալիս հաստատելու կամ հերքելու գործի լուծման

համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Գործով ձեռք բերված որոշ ապացույցների ոչ հավաստիության վերաբերյալ կարող է վկայել դատարանի կողմից միևնույն հանգամանքի կամ փաստի վերաբերյալ հակասական, միմյանց բացառող տեղեկությունների, տվյալների ստացումը: Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել՝ առաջին հերթին ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից), այսինքն՝ ապացույցների արժանահավատությունն առաջին հերթին կախված է տեղեկատվության աղբյուրի որակից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապացույցների արժանահավատությունը կախված է նաև գործով ձեռք բերված տարբեր ապացույցների՝ միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից, քանի որ գործով ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը միայն կարող է վերհանել ապացույցների միջև եղած հակասությունները և արդյունքում որոշել ապացույցների հավաստիությունը: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության վերաբերյալ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել՝ տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ապացույցների հավաստության և փոխադարձ կապի տեսանկյունից դրանց գնահատման նպատակն այն է, որ վերացվեն ձեռք բերված և հետազոտվող ապացույցների միջև առկա հակասությունները, փարատվեն ստացված ապացուցողական տեղեկատվության ողջ համակցության հետազոտման արդյունքում կատարված եզրահանգման հավաստիության վերաբերյալ բոլոր կասկածները: Պարզելով ապացույցների արժանահավատությունը՝ դատարանը որոշում է դրանց բավարար լինելը, բացահայտում է ձեռք բերված և հետազոտված ապացույցների հիման վրա որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացություն անելու հնարավորությունը, ինչը թույլ է տալիս ստուգել նաև գործով հավաքված ապացույցների լրիվությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ վկայի ցուցմունքը համարվում է վարչական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու ինքնուրույն միջոց՝ դատական ապացույցի առանձին տեսակ, որին վերաբերող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ վկան, որպես ապացուցողական տվյալների ստացման աղբյուր, գործի ելքում իրավաբանական շահագրգռվածություն չունեցող այն ֆիզիկական անձն է, որը կանչվում է դատարան՝ գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին իր կողմից անմիջականորեն ընկալված կամ այլ անձանց կողմից իրեն հաղորդված տեղեկությունները դատարանին հայտնելու համար: Վկայի ցուցմունքների գնահատումը դրանց տրամաբանական վերլուծությունն է, որի նպատակն է գործի իրական փաստական հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություններին վերհանումը: Գնահատելով վկայի ցուցմունքները՝ դատարանը վերլուծում է վկայի անձնական հատկանիշները, նրա փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ, վկայի կողմից տեղեկությունների ընկալման, պահպանման և փոխանցման ողջ գործընթացը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը որոշ դեպքերում անձանց ազատել է որպես վկա ցուցմունք տալու պարտականությունից՝ սահմանելով վկայի իմունիտետ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ որոշակի կատեգորիայի անձանց ազատելով որպես վկա ցուցմունքներ տալու պարտականությունից՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում ապահովել կոնկրետ հասարակական հարաբերությունների գաղտնիությունը, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և պաշտպանվող որոշակի արժեքների պահպանումը և անխոչընդոտ իրացումը: Նման իրավակարգավորումը, ըստ էության, բխում է հանրային և մասնավոր շահերի փոխպայմանավորված հարաբերակցությունից: Հանրային շահը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուրն աջակցի իրավապահական գործառույթներ իրականացնող մարմիններին՝ իրավախախտումները բացահայտելու և կանխելու գործում՝ ցուցմունք տալով: Միևնույն ժամանակ, այդ աջակցությունը չպետք է ապահովվի՝ անձանց պատճառելով անընդունելի բարոյական զրկանքներ: Սահմանելով ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը կոնկրետ դեպքերում՝ ՀՀ Սահմանադրությունը և ճյուղային օրենսդրությունը վերացնում են ցուցմունք տալու

հարցում հանրային և մասնավոր շահերի միջև հակասության դրսևորումներից մեկը՝ նախապատվություն տալով անձնական շահերին:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ամրագրված է վկայի հարաբերական իմունիտետը, որի դեպքում իմունիտետով օժտված վկան ինքն է որոշում՝ օգտվել ցուցմունք տալու ընթացքում որոշակի հարցերի պատասխանելուց հրաժարվելու իր իրավունքից, թե՝ ոչ, ինչը հիմնված է սահմանադրական այն դրույթի վրա, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վկայի հարաբերական իմունիտետի դատավարական ինստիտուտը վերաբերում է բացառապես վկայի՝ իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքին և չի կարող մեկնաբանվել այնպես, որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ վկայի տված ցուցմունքներն անպայմանորեն համարվեն անարժանահավատ ապացույցներ: Այլ կերպ ասած՝ վկայի կողմից տրված ցուցմունքներն ինքնըստինքյան չեն կարող դիտվել որպես ոչ արժանահավատ ապացույցներ միայն այն հիմքով, որ այդ ցուցմունքները վերաբերում են այդ վկայի ամուսնուն կամ մերձավոր ազգականին: Հետևաբար վկայի՝ դատավարության մասնակիցների մերձավոր ազգականը կամ դատավարության մասնակցի ամուսինը հանդիսանալու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ վկայի տված ցուցմունքներն արժանահավատ ապացույց չհամարելու և գործով ձեռք բերված ապացույցների կազմից հանելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցի հավաստիության մասին կարելի է եզրահանգում կատարել նախևառաջ այդ տեղեկատվության աղբյուրի բնույթն ու հատկանիշները բացահայտելու միջոցով: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ յուրաքանչյուր դեպքում գործով վկայի ցուցմունքները գնահատելիս դատարանը պարտավոր է հաշվի է առնել հետևյալ հատկանիշները.

- վկայի փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ,
- փաստերի մասին վկայի իրազեկության աղբյուրը,
- այն պայմանները, որոնց առկայությամբ վկան ընկալել է որոշակի փաստեր (այսինքն՝ տեղը, ժամանակը, անձի ֆիզիկական և հոգեկան վիճակը, տարիքը),
- վկայի սուբյեկտիվ հատկանիշներն այն առումով, թե նա իր ունակություններով ի վիճակի է արդյոք ճիշտ ընկալել իրադարձություններն ու գործողությունները, ընկալածը պահել հիշողության մեջ և ճիշտ վերարտադրել ու հաղորդել դատարանին:

Նշված հատկանիշների վերհանումը դատարանի կողմից հնարավորություն է տալիս գնահատելու վկայի կողմից հայտնած տեղեկությունների հավաստիության աստիճանը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ դատարանը, նախազգուշացնելով վկային սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, կարող է ակնկալել, որ վկայի հայտնած տեղեկություններն արժանահավատ են, քանի դեռ հակառակը չի հիմնավորվել:

Այնուամենայնիվ, ըստ Վճռաբեկ դատարանի, ինչպես ցանկացած ապացույցի, այսպես էլ վկայի ցուցմունքների արժանահավատության վերաբերյալ վերջնական գնահատական տալու նպատակով դատարանը պարտավոր է վկայի ցուցմունքները համադրել գործով հավաքված այլ ապացույցների, այդ թվում՝ այլ անձանց ցուցմունքների հետ: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են հարուցվում՝ կապված գործով հրավիրված վկաների ցուցմունքների հավաստիության ու արժանահավատության հետ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել վկաների ցուցմունքներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով՝ դատական ակտում պարտադիր պատճառաբանելով, թե ինչու են այս կամ այն ցուցմունքները դիտվել որպես ոչ արժանահավատ և իրականությանը չհամապատասխանող:

27.11.2015թ.

57. ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչություն ն. անհատ ձեռնարկատեր Մանուկ Նազարյան, վարչ. գործ թիվ ՎԴ/9439/05/13 **Էջ 587–596**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույց ներկայացնելու պարտականության և ապացուցման բեռի հարաբերակցությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն, համաձայն որի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ վարչական մարմինը բոլոր դեպքերում, անկախ ապացուցման բեռը կրելու կամ չկրելու հանգամանքից, ունի իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած ապացույց ներկայացնելու պարտականություն, ինչը, սակայն, չի նշանակում, որ այդպիսիք ներկայացնելու անհնարինության դեպքում վարչական մարմինը պետք է կրի չապացուցված փաստով պայմանավորված բացասական իրավական հետևանքներ:

Միաժամանակ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասում, որպես ընդհանուր կանոն, նախատեսել է վարչական դատավարությունում գործի ելքը պայմանավորող որևէ փաստի չապացուցված մնալու իրավական հետևանքները՝ սահմանելով, որ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է նաև վարչական դատավարությունում գործող տարբեր հայցատեսակների հիման վրա հարուցված գործերի շրջանակներում ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բոլոր այն դեպքերում, երբ վարչական դատարանի վարույթում քննվող գործերով կիրառելի չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները, դատարանը պետք է ղեկավարվի ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնով, համաձայն որի՝ կողմերը պարտավոր են դատարանին ներկայացնել իրենց տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով հիմնավորում են իրենց պահանջները կամ առարկությունները, իսկ դրանք չապացուցելու դեպքում կրելու են բացասական հետևանքները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, երբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը կրող կողմը չի կարողանում ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում դրված որևէ փաստ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ուղղակի արդյունք է:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից ակնհայտ է, որ գործի ելքը պայմանավորող փաստի չապացուցված մնալու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է ոչ թե ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող, այլ ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող և այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը, հետևաբար նշված փաստը չապացուցելու բացասական հետևանքները պետք է դրվեն այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը ողջամտորեն կարող է կրել միայն այն կողմը, ում պնդմամբ վիճելի փաստը տեղի է ունեցել, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը կիրառելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել, թե դատավարության մասնակիցներից որ կողմն է կրում գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի գործողությունը չի տարածվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա, հետևաբար դրանցով սահմանված պարտականությունները վարչական մարմնի կողմից պահպանված չլինելու փաստը հաստատված համարելու պարագայում անգամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը չի կարող վրա հասնել:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու, ինչպես նաև անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված իրավակարգավորումները վարչական դատավարությունում կիրառելի չեն, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածներում սահմանված պարտականությունը վարչական մարմնի կողմից չկատարելը չի կարող առաջացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

30.04.2015թ.

58. «Ն. Ռ. Վ. Ա. Դ.» ՍՊԸ v. ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԴ/0079/05/12 **Էջ 597-608**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատարանի կողմից վերադաս դատական ատյանի սահմանած ծավալին համապատասխան գործի նոր քննության իրականացման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերադաս դատական ատյանի սահմանած ծավալով գործի նոր քննության իրականացման հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարությունում գործի նոր քննության ծավալը պայմանավորված է վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով: Վերջիններս ընդգծում են այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է իրականացվի գործի քննությունը դատական ակտի բեկանումից հետո: Այդ դատողությունների և եզրահանգումների բնույթը չի կարող լինել սահմանափակված միայն դատավարական իրավունքի կամ միայն նյութական իրավունքի նորմերի կիրառման շրջանակով: Բողոքի ցանկացած հիմքի և դրանում ներառված ցանկացած փաստարկի վերաբերյալ դատարանի եզրահանգումները կարող են պայմանավորել գործի նոր քննության սահմանները: Հետևաբար, եթե վերադաս դատական ատյանում բարձրացված հարցի վերաբերյալ դատարանը եկել է որոշակի հետևության և դրանով պայմանավորել գործի նոր քննության ծավալը, ապա ստորադաս դատական ատյանում գործի նոր քննությունը պետք է իրականացվի նույն ծավալի շրջանակներում (նույն սահմաններում) *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի թիվ ՎԴ3/0011/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վարչական վերաքննիչ դատարանի լիազորությունը բխում է Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությամբ ամրագրված ոչ լրիվ վերաքննության հայեցակարգի բովանդակությունից. այն նպատակ ունի լրացնելու վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու վարչական վերաքննիչ դատա-

րանի իրավազորության բացակայությունը, կանխելու վարչական վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը, ապահովելու դատական ատյանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը, երաշխավորելու դատավարության մասնակիցների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ վարչական վերաքննիչ դատարանի որոշումը պետք է հստակ եզրահանգումներ բովանդակի գործի նախորդ քննության ընթացքում թույլ տրված նյութական և (կամ) դատավարական նորմերի խախտումների և դրանց վերացմանն ուղղված դատավարական գործողությունների վերաբերյալ: Ընդ որում, գործի նոր քննության արդյունքում կայացված վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով վերանայելու ընթացքում վարչական վերաքննիչ դատարանը նախ և առաջ պետք է ստուգի, թե վարչական դատարանը գործի նոր քննությունն արդյո՞ք իրականացրել է վերադաս դատական ատյանի կողմից սահմանված ծավալի շրջանակներում, թե՝ ոչ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29-րդ, 124-րդ հոդվածներով ամրագրված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության հարցը պարզելու համար դատարանը պարտավոր է անմիջականորեն գնահատել այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված և գործում եղած ապացույցները, ապա դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ լուծել վիճարկման հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը: Հետևաբար, եթե վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված և գործում եղած բոլոր ապացույցները հետազոտելուց հետո վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱՎՈՐԻ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԸ

21.10.2015թ.

1. Անուշ Մարալյան v. Էմին Գեղամյան, Ստյոպա Մանուկյան, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/1109/02/13 **էջ 609–616**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության[4] 18–րդ, 19–րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի[5] (այսուհետ՝ Կոնվենցիա) 6–րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1–ին հոդվածի 1–ին կետը, 21–րդ հոդվածի 1–ին կետը, 22–րդ հոդվածի 1–ին կետը, 23–րդ, 24–րդ, 140[1]–րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 4–րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ–918 որոշմամբ նշել է, որ քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորման ընագավառում դատավորի ինքնաբացարկի ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21–րդ, 22–րդ, 23–րդ, ինչպես նաև 24–րդ հոդվածների դրույթներով և, միաժամանակ, այդ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածով, որով սահմանված են դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը: Այդ հոդվածների նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ.

– դատավորի ինքնաբացարկի հիմք կարող են լինել այնպիսի փաստերը և հանգամանքները, որոնք ողջամիտ կասկած կարող են հարուցել տվյալ գործով դատավորի անկողմնակալության հարցում (ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին պարբերություն),

– նման հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել,

– ի թիվս այլոց, դատավորի ինքնաբացարկ հայտնելու կոնկրետ հիմքերը հստակեցված են ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին, 2–րդ, 3–րդ և 4–րդ կետերում,

– ինքնաբացարկ հայտնելիս դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, կարող է կողմերին առաջարկել իր բացակայությամբ քննել ինքնաբացարկի անտեսման հարցը,

– դատավորի ինքնաբացարկը պետք է լինի պատճառաբանված,

– ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի հիմքերով դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել (ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 4–րդ մաս):

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «... քաղաքացիադատավարական հարաբերություններում դատավորի ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում օրենսդրորեն ամրագրվել են հետևյալ մոտեցումները.

– ինքնաբացարկի վերաբերյալ որոշումը դիտարկվում է որպես գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտ,

– դատավորի ինքնաբացարկի մասին որոշման կայացումը ոչ թե դատավորի հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը,

– դատավորի՝ իր անմիջական պարտականության կատարումից հնարավոր խուսափելը բացառելու իրավական միջոց է հանդիսանում նրա կողմից կայացված ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորությունը,

– ինքնաբացարկի հանգամանքների օբյեկտիվ բացահայտման և դատարանի իրավազորության երաշխավորման կարևոր նախադրյալ է դատավորի ինքնաբացարկի վե-

[4] Սույն բաժնում ՀՀ Սահմանադրությունը վկայակոչված է 27.11.2005թ. փոփոխություններով:

[5] Այսուհետ սույն բաժնում՝ Կոնվենցիա:

րաբերյալ գործին մասնակցող անձանց կողմից միջնորդություն ներկայացնելու ինստիտուտը,

– դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական դատական բողոքարկման կարգ ու պայմաններ (ժամկետներ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսել՝ չբացառելով նման բողոքի քննությունը գործով կայացրած դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Միևնույն ժամանակ գնահատելով վերը նշված իրավակարգավորումների ազդեցությունն արդար և անկողմնակալ դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացման երաշխիքների վրա՝ ՀՀ սահմանադրական դատարանը 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին և նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է դատավորի ինքնաբացարկին, որը նա պարտավոր է իրականացնել օբյեկտիվ հիմքերի առկայության դեպքում, ինքնաբացարկի միջնորդության մերժումը չի կարող բողոքարկման առարկա չդառնալ: Ավելին, միջազգային փորձի և տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ **ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կարգի և ժամկետների որոշումն օրենսդրի հայեցողության հարցն է:** Որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը նույնպես ապահովում է դատարանի իրավազորության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը:

Ներկայացված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը և, միաժամանակ, ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ **ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում և** արձանագրել է, որ դա բխում է նաև «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» ԵԽ նախարարների կոմիտեի թիվ R 95 (5) հանձնարարականի դրույթներից (հոդված 3):

Այսպիսով, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ ինքնաբացարկի մասին դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավորի ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորության առկայության անհրաժեշտությունը կոչված է երաշխավորելու արդար դատաքննության իրավունքի իրացումը բոլոր այն դեպքերում, երբ դատավարության կողմը ողջամիտ կասկածներ ունի գործը քննող դատավորի կողմից իր ինքնաբացարկի հարցի լուծման իրավաչափության հարցում: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ինքնաբացարկի մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված կանոններով:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև փաստել, որ վերը նշված մոտեցումն ակնհայտորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետից և 140[1]-րդ հոդվածի 2-րդ կետի իրա-

վական բովանդակության վերլուծությունից, համաձայն որոնց՝ ՀՀ-ում քաղաքացիական դատավարության կարգը սահմանվում է թե՛ նույն օրենսգրքով, թե՛ **Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով,** ինչպես նաև դատարանի գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **թե՛ նույն օրենսգրքով, թե՛ այլ օրենքներով նախատեսված դեպքերում**: Այսինքն՝ որպես վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման անհրաժեշտ նախադրյալ՝ հանդես է գալիս այն հանգամանքը, որ կարելի է բողոքարկել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով (այլ կերպ՝ ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այնպես էլ օրենսդրական այլ ակտերով) նախատեսված՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը. հակառակ պարագայում՝ վերաքննությունը բացառվում է: Ըստ այդմ՝ նույնիսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով անմիջականորեն նախատեսված չլինելու պայմաններում **ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի** կիրառման արդյունքում ակնհայտ է դառնում, որ դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը, որպես ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության չլուծող դատական ակտ, կարող է ենթակա լինել վերաքննության կարգով բողոքարկման:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ օրենսդրական կարգավորումները, դրանց շուրջ կատարված իրավական վերլուծությունները և նպատակ ունենալով դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում, հարկ է համարել արձանագրել հետևյալը.

1. դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան կայացված որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով.

2. դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշման բողոքարկումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման կանոններով:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

11.03.2015թ.

2. «Ռեքվիեմ» ՍՊԸ v. «Մեգարոն» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵՇԴ/1017/02/14 **Էջ 617-624**

<u>Խնդիր.</u> 1) արդյո՞ք Վերաքննիչ դատարանն իրավասու է վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ իր որոշման եզրափակիչ մասում որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոք բերած անձի՝ «Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին» միջնորդությանը և որևէ եզրահանգում չի արել այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ,

2) արդյո՞ք բողոք բերած անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն այն պարագայում, երբ դատական ակտը բողոքարկել է միայն դատական ծախսերի մասով:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության 144-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, 210-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը, 210-րդ հոդվածի 4-րդ կետը, 213-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը եկել է այն հետևության, որ վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարված չլինելու հանգամանքը և պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության բացակայությունը: Վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է նաև պետական տուրքը վճարված չլինելու դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության մերժումը Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքին կցված է կամ բողոքում ներառված է պետական տուրքի վճարման արտո-

նություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն, ապա Վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը և դրա քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում թեև անդրադարձել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությանը, սակայն այդ միջնորդության քննարկման արդյունքում որևէ որոշում չի կայացրել միջնորդությունը մերժելու կամ բավարարելու՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, ինչն անձի դատական պաշտպանության իրավունքի խախտում է: Մասնավորապես՝ շահագրգիռ անձը, իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմանը ներկայացվող պարտադիր պահանջ է քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրահանգումը, հետևաբար այդպիսի եզրահանգման բացակայության պայմաններում բացակայում է նաև դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով բացակայել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վկայակոչելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, 21-րդ հոդվածի «ա» կետը, 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետը, Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից, և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*տե՛ս, Արմենակ և Գոռլա Սահակյաններն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի թիվ 3-734(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նման արտոնություն կիրառելու հնարավորություն ընձեռել է դատարաններին կամ դատավորներին այն դեպքերում, երբ թեև բացակայում են նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հիմքերը, սակայն ելնելով կողմերի գույքային դրությունից՝ անհրաժեշտ է սահմանել նման արտոնություն՝ երաշխավորելու անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը *(տե՛ս, Շամամ*

Կարապետյանն ընդդեմ Արային Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառումը պետք է հիմնվի դատարանի ներքին համոզման վրա (սուբյեկտիվ չափորոշիչ), որը, սակայն, ձևավորվում է ապացույցների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի հետազոտման վրա (օբյեկտիվ չափորոշիչ): Բացի այդ, ներքին համոզման հիման վրա ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի բաղկացուցիչ մաս, չպետք է լինի կամայական, այլ պետք է ուղղված լինի քաղաքացիական դատավարության նպատակների իրականացմանը, որոնցից ամենահիմնականը՝ իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է (*տե՛ս, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Հասմիկ Ծատինյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0536/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.06.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության առկայության պայմաններում դատարանները պետք է նշված միջնորդությունները քննության առնեն և լուծեն՝ հաշվի առնելով նաև գործի հանգամանքները: Այսպես, օրինակ, օրենսդիրը, ամրագրելով հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք վճարելու պարտականություն, տարբերակված մոտեցում է դրսևորել պետական տուրքի չափի հարցում՝ հիմք ընդունելով վիճելի իրավահարաբերության բնույթը՝ գույքային կամ ոչ գույքային: Դատարանները միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրությունը գնահատելիս որպես ուղղորդող չափանիշ հիմք են ընդունում նաև վճարման ենթակա պետական տուրքի չափը, հետևաբար վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելը յուրաքանչյուր դեպքում օբյեկտիվորեն անհրաժեշտ է կամ միջնորդություն հարուցած անձի գույքային դրության վերաբերյալ փաստարկները կարող են հիմնավորվել քննվող գործի շրջանակներում ձեռնարկված դատավարական միջոցներով (օրինակ՝ որպես հայցի ապահովման միջոց՝ արգելանք է դրվել անձի դրամական միջոցների վրա):

Վերոգրյալից հետևում է, որ միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրության գնահատումը չի կարող իրականացվել՝ անտեսելով գործի հանգամանքները, հետևաբար դատարանները նման միջնորդություններ քննության առնելիս պետք է ուսումնասիրեն նաև համապատասխանաբար հայցադիմումները, վերաքննիչ և վճռաբեկ բողոքները:

Վկայակոչելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ և 7-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանն աճանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.05.2010 թվականի թիվ ՍԴՈ-890 որոշմամբ անդրադառնալով նշված իրավանորմերին՝ նշել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն առանձնացնում է գույքային պահանջի և ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքերը՝ դրանց համար սահմանելով հաշվարկման միմյանցից էապես տարբերվող կարգ, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է այդ պահանջների բնույթով և առանձնահատկություններով: Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքը համամասնական տուրք է, և հաշվարկվում է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող տուրքը պարզ տուրք է, և գանձվում է հաստատագրված գումարի չափով: Եթե հայցադիմումը ներառում է գույքային և ոչ գույքային պահանջներ, ապա օրենքը, այդ պահանջներից յուրաքանչյուրի քննությունը դիտարկելով որպես օրենքի իմաստով ինքնուրույն և առանձին գործողություն, պահանջում է, որ պետական տուրք վճարվի միաժամանակ և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջների առնչությամբ (հոդվ. 32-րդ, մաս 4-րդ)՝ այդպիսով հետապնդելով իրավաբանորեն հիմնավոր փաստարկված նպատակ:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներին, գտել է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույ-

քային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար, այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը, օրինակ՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում:

Վերը քննարկված իրավիճակը կարող է արտահայտվել նաև այն դեպքում, երբ անձը դատական ակտը բողոքարկում է միայն դատական ծախսերի մասով: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի քննությանը և լուծմանը, ընդհակառակը՝ շահագրգիռ անձը տվյալ դեպքում վիճարկում է այդ պահանջի լուծման արդյունքում բաշխված դատական ծախսի իրավաչափության հարցը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում: Ընդ որում, դատական պրակտիկան զարգացել է հենց նշված ուղղությամբ, որպիսի հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ-ում դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» մասին 29.01.2013 թվականի թիվ 129 որոշման մեջ: Համաձայն նշված որոշման 10-րդ կետի՝ եթե բողոքարկվում է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով, ապա ներկայացված բողոքի համար պետական տուրք չի վճարվում:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

14.01.2015թ.

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչություն ն. Գայանե Սողոմոնյան, վարչ. գործ թիվ ՎԴ/8923/05/11 **էջ 625-630**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելու դատարանի հայեցողության հարցին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սարդու իրավունքների եվրոպական դատարանի[6] նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակ-

[6] Այսուհետ սույն բաժնում՝ Եվրոպական դատարան:

ցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով *(տե՛ս, Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգատով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, պարբ. 57):*

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի *(տե՛ս, Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93գանգատով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55):*

Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքը դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պետք է իրականացնի՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները *(տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ–ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի և այլոց թիվ ԱՐԱԴ/0716/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ գործն ըստ էության լուծող դատական ակտը գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ ՀՀ դատավարական օրենսդրության իրավակարգավորումներով սահմանված է վճռի (գործն ըստ էության լուծող դատական ակտի) հրապարակմանը գործին մասնակցող անձանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը վերջինիս ուղարկելու դատարանի պարտականությունը: Ընդ որում, օրենսդիրը դատական ակտը գործին մասնակցող անձի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ վերջինիս ներկայացուցչին ուղարկելու հանգամանքը չի նախատեսել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության այլընտրանք, հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելը դատարանի հայեցողությունն է, սակայն այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության պատշաճ կատարում, եթե գործին մասնակցող անձը նման միջնորդությամբ չի դիմել դատարան:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, այլ ուղղված է անձի՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովմանը: Անձը կարող է լիարժեք իրականացնել վերաքննիչ բողոք բերելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ ծանոթ է ստորադաս դատարանի կողմից իր իրավունքների (պարտականությունների) կամ օրինական շահերի վերաբերյալ կայացված դատական ակտին և դրա բովանդակությանը:

15.07.2015թ.

4. Հովհաննես Չամսարյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/7268/05/14 **Էջ 631–639**

Խնդիր. 1) Վիճարկման հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու վերաբերյալ փաստը հաստատելու իրավական հնարավորության բացակայության պատճառով հայցադիմումի ընդունումը մերժելու միջոցով դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումն արդյո՞ք համատեղելի է անձի դատական պաշտպանության իրավունքի հետ,

2) վիճարկվող վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու վերաբերյալ փաստը վիճելի լինելու հետևանքով այդ ակտի ուժի մեջ մտնելու օրը որոշելու և դատավարական ժամկետը հաշվարկելու անհնարինության պարագայում արդյո՞ք առկա է ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու ու այն բավարարելու անհրաժեշտություն և հիմք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ սահմանադրական դատարանը 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ–719 որոշմամբ նշել է, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով *(տե՛ս, Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգատով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, պարբ. 57):*

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից,

հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի *(տե՛ս, Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգատով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55):*

Վճռաբեկ դատարանը նշել է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Ազգային-դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ 12.05.2004թ. R (2004)6 հանձնարարականում սահմանվել է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների հնարավոր խախտման վերաբերյալ հայցերի քննության առարկա դարձնելու չափանիշները. Մասնավորապես՝

– անդամ երկրները պետք է արդյունավետ ընթացակարգեր նախատեսեն ըստ էության քննության առնելու և լուծում տալու մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներին,

– բողոքների ընդունման և քննության ընթացակարգերը պետք է դիտարկվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում,

– ներպետական համակարգերում դատական բողոքները պետք է հանգամանալից ու հիմնավոր քննության առարկա դառնան,

– Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանությունն ազգային-իրավական համակարգում պետք է արդյունավետ ձևով երաշխավորված լինի և այլն:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ վիճարկման հայցադիմումը դատարան ներկայացնելու դատավարական ժամկետ սահմանելով՝ օրենսդիրը թեև նախատեսել է դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմք, այդուհանդերձ այդ ժամկետները բաց թողնված լինելու կամ չլինելու հարցի գնահատումը թողել է դատարանի հայեցողությանը:

Վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները սահմանելու հետ միաժամանակ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածում սահմանել է ինչպես դատավարական ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքները, այնպես էլ այդ ժամկետները վերականգնելու ինստիտուտը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հոդվածով սահմանված իրավակարգավորումները կիրառելի են այն պարագայում, երբ վիճարկման հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում վիճարկվող վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու փաստն անվիճելի է: Մինչդեռ այն դեպքերում, երբ անձը վիճարկում է վարչական ակտն առձեռն ստորագրությամբ ստանալու փաստը, ինչի պարզումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտական գիտելիքների օգնությամբ, մասնավորապես՝ փորձաքննության կատարմամբ, վերը նշված իրավակարգավորումները կիրառելի չեն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների բովանդակությունից ակնհայտ է, որ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահն օրենսդիրը պայմանավորել է այդ ակտի մասին վարչական վարույթի մասնակիցների իրազեկման հանգամանքով, ինչը նշանակում է, որ ակտի հասցեատիրոջ համար ևս վարչական ակտը կարող է ուժի մեջ մտնել իրազեկվելու հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ: Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, գտել է, որ վարչական ակտի վիճարկման

պարագայում անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման մասին, այլ խոսքով, օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո *(տե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբալթյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը)*:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ, 60-րդ հոդվածների և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծությունից հետևում է, որ հայցադիմումը դատավարական ժամկետների պահպանմամբ ներկայացված լինելու հանգամանքը հնարավոր է անսխալ որոշել միայն այն դեպքում, երբ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվա մասին փաստն անվիճելի է: Ցանկացած այլ դեպքում, երբ դատական պաշտպանություն հայցող անձը վիճարկում է վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրը և դատարանին տեղեկություն հայտնում իր իրազեկման օրվա մասին, որը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, ըստ էության, դատարանին հայտնի միակ տեղեկությունն է լինում, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, որպես իրազեկման օր, դատարանը պետք է հիմք ընդունի նշված օրը, հետևաբար վիճարկման հայց ներկայացնելու համար դատավարական ժամկետների հաշվարկն էլ պետք է կատարվի այդ օրվանը հաջորդող օրվանից և, եթե այդ պարագայում վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը բաց չի թողնվել, այն վերականգնելու միջնորդությունը դառնում է առարկայազուրկ, որի պատճառով միջնորդությունը քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու դատավարական ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշմանն ի հավելումն նշել, որ այն դեպքում, երբ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը վիճելի է, այսինքն՝ առկա է դատական պաշտպանության դիմած անձի կողմից դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ ողջամիտ կասկած, անձը գործնականում պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պարտավոր է քննարկման առարկա դարձնել և գնահատել դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները, որովհետև այդ փաստը վիճելի մնալու դեպքում անձին դատական պաշտպանության տրամադրման մերժումը կհանդիսանա դատարանի մատչելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում, ինչի հետևանքով կխախտվի այդ իրավունքի բուն էությունը, քանի որ անձն այլևս կզրկվի իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումները լրացուցիչ երաշխիք են հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը չսահմանափակելու իրավաչափ նպատակի իրագործման համար, քանի որ դատավարական նորմերի ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում գործնականում ապահովվում է դատավարական ժամկետները բաց չթողնելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները քննարկելու և համապատասխան եզրահանգում կատարելու օբյեկտիվ հնարավորություն:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

18.03.2015թ.

5. «Լուվի» ՍՊԸ-ի տնօրեն Հասմիկ Հովհաննիսյան v. ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԴ/4009/05/14 **էջ 640-649**

Խնդիր. 1) Արդյո՞ք վարչական դատարանը պարտավոր է մատնանշել հայցադիմումում առկա ձևական սխալները,

2) արդյո՞ք վարչական դատարանն իրավասու է միայն հայցադիմումի ձևական կողմի ուսումնասիրության արդյունքում մերժել հայցադիմումի ընդունումը՝ հայցադիմումը դրա իրավունքն անկիայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված լինելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով

անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ (*տե՛ս, Կարինե Զլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են *(տե՛ս, Սվետլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն տեսակետը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՝ ոչ:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու այն հիմքին, որ հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավակարգավորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների: Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված «ակնհայտություն» եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակներևություն: Այսինքն՝ սույն իրավական

կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու՝ չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն, երբ դատարանն աններկայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ակնհայտորեն նման իրավունք չունեցող անձի կողմից հայցադիմում ներկայացվելու պարագայում հայցադիմումը վարույթ չի ընդունվում, քանի որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլում ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայցվորն այդ գործով շահագրգիռ անձ չի հանդիսանում *(տե՛ս, Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադարձ կատարելով սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու համար վարչական դատարանը նախ և առաջ պետք է պարզի, թե տվյալ դեպքում հայցադիմումը կոնկրետ ում անունից է ներկայացվել և արդյոք տվյալ սուբյեկտը հանդիսանում է իր առերևույթ խախտված «իրական (ռեալ)» իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեցող շահագրգիռ անձ, թե՝ ոչ:

Եթե իր առերևույթ խախտված «իրական (ռեալ)» իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեցող շահագրգիռ սուբյեկտը կոնկրետ դեպքում իրավաբանական անձ է, ապա իրավաբանական անձի՝ առերևույթ խախտված «իրական (ռեալ)» իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեն օրենքով և վերջինիս կանոնադրությամբ նախատեսված մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք կարող են ինքնուրույն, առանց լիազորագրի ստորագրել և դատարան ներկայացնել հայցադիմումը, ինչպես նաև դատարանում հանդես գալ տվյալ իրավաբանական անձի անունից կամ օրենքով սահմանված կարգով լիազորել այլ անձի՝ տվյալ իրավաբանական անձի անունից հայց ներկայացնելու և նրա դատավարական ներկայացուցչությունն ապահովելու նպատակով:

Այսպիսով, իր առերևույթ խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու՝ իրավաբանական անձի իրավունքն իրականացվում է վերջինիս համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ երրորդ անձանց համապատասխան լիազորություններով օժտելու եղանակով: Բոլոր դեպքերում, երբ հայցը ներկայացվում է իրավաբանական անձի անունից, հայցադիմումը նախ պետք է նշում պարունակի այն մասին, որ գործով հայցվորն իրավաբանական անձն է՝ մատնանշելով վերջինիս անվանումը և օրենքով սահմանված այլ տվյալները: Այնուհետև, հայցադիմումը պետք է նշում պարունակի այն մասին, թե ով է տվյալ իրավաբանական անձի անունից ներկայացնում այն, մասնավորապես՝ օրենքով և այլ նորմատիվ ակտերով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրավաբանական անձը ներկայացնելու լիազորությամբ օժտված անձը, թե՝ վերջինիս ներկայացուցիչը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հայցադիմումին ներկայացվող վերոգրյալ ձևական պահանջների պահպանումը կարևոր նշանակություն ունի դատարանի կողմից հայցադիմումը ներկայացրած իրական սուբյեկտին պարզելու և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման հարցը լուծելու համար:

Այնուհանդերձ, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ դատարան հայց ներկայացնելու իրավունքը կոնկրետ իրավաբանական անձին պատկանելով հանդերձ՝ դատարան ներկայացվող հայցադիմումի ներածական և (կամ) եզրափակիչ մասերում որպես հայցվոր նշվում է ոչ թե տվյալ իրավաբանական անձը, այլ վերջինիս համապատասխան մարմինը (պաշտոնատար անձը): Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դեպքերում վարչական դատարանը կարող է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում կայացնել միայն հայցադիմումի և կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրության արդյունքում ձևավորված այն համոզմունքի հիման վրա, որ հայցն իրականում չի ներկայացվել իրավաբանական անձի անունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հանգամանքը բացահայտելու համար վարչական դատարանը պետք է ուսումնասիրի ներկայացված հայցադիմումի ոչ միայն ձևական կողմը, այլ նաև վերջինիս բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ պարզելու համար, թե հայցադիմումը կոնկրետ ում անունից է ներկայացվել, դատարանը պետք է ոչ միայն ուսումնասիրի հայցադիմումի ներածական կամ եզրափակիչ մասերը, այլ նաև՝ դրա բուն բովանդակությունը (հայցի էության հակիրճ նկարագրությունը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը, հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները, ինչպես նաև հայցվորի պահանջը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցադիմումի ընդունելության փուլում ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի միայն ընդհանրական ուսումնասիրության արդյունքում է վարչական դատարանն իրավասու հանգել այն եզրակացության, որ հայցը ներկայացվել է ոչ թե շահագրգիռ իրավաբանական անձի, այլ վերջինիս համապատասխան պաշտոնատար անձի՝ որպես ֆիզիկական անձի անունից, որն այդ գործով չի կարող պատշաճ հայցվոր հանդիսանալ:

13.05.2015թ.

6. Սպարտակ Մարտիրոսյան v. Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմա Շաբոյան, վարչ. գործ թիվ ՎԴ/5014/05/09 **Էջ 650–662**

Խնդիր. 1) Արդյո՞ք իրավական հիմքերի և իրավաբանական հետևանքների տեսանկյունից դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման վարչադատավարական ինստիտուտները նույնական են,

2) արդյո՞ք ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, թե հանդես է գալիս որպես մասնավոր իրավահարաբերության մասնակից,

3) արդյո՞ք նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործի քննության ընթացքում գործով պատասխանող նոտարի լիազորությունների դադարման, այդ թվում նաև՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում վերջինս պետք է փոխարինվի իրավահաջորդով, թե՝ պատշաճ պատասխանողով,

4) նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործի քննության ընթացքում զբաղեցրած պաշտոնից ազատված նոտարի փոխարեն ո՞վ պետք է ներգրավվի վարչական դատավարությանը՝ որպես պատշաճ պատասխանող:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով կարգավորել է վարչական դատավարությունում դատավարական իրավահաջորդության ծագման հիմքերի, կատարման կարգի և իրավական հետևանքների հետ կապված հարաբերությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ դատավարական իրավահաջորդությունը վիճելի իրավահարաբերություններից կողմերից մեկի դուրս գալու դեպքում դատավարության կողմի փոխարինումն է նրա իրավահաջորդով: Ընդ որում, դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում, իսկ իրավահաջորդին դատավարությանը թույլատրելը ձևակերպվում է դատարանի համապատասխան որոշմամբ՝ առանձին դատական ակտի տեսքով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է դատավարական իրավահաջորդության ծագման հիմքերը. այսպես՝ վարչական դատավարությունում իրավահաջորդությունը տեղի է ունենում դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու հետևյալ դեպքերում.

1. իրավաբանական անձի վերակազմակերպում,
2. վարչական մարմնի վերակազմակերպում,
3. ֆիզիկական անձի մահ,
4. պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր:

Այսպիսով, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում թվարկել է այն փաստակազմերի սպառիչ ցանկը, որոնց գործնականում առկայությունը հնարավորություն է ընձեռում վարչական դատարանին՝ կիրառելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրա-

վական հետևանքը, այն է՝ դատավարության կողմին փոխարինել նրա իրավահաջորդով: Այսինքն՝ վարչական դատարանն իրավասու է դատավարության կողմին նրա իրավահաջորդով փոխարինելու մասին որոշում կայացնել միայն վերը նշված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում: Հետևաբար վարչական դատարանն իրավասու չէ դատավարության կողմին փոխարինել նրա իրավահաջորդով՝ հիմնվելով այնպիսի փաստակազմերի վրա, որոնք նախատեսված չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում: Ավելին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից բխում է, որ դատավարական իրավահաջորդությունը ենթադրում է, որ իրավահաջորդը շարունակում է մասնակցել վարչական դատավարությանը դատավարական իրավահարաբերությունների ամբողջ ծավալով՝ իրավանախորդի ունեցած բոլոր իրավունքներով ու պարտականություններով: Քանի որ դատավարական իրավահաջորդության դեպքում իրավահաջորդը շարունակում է մասնակցել վարչական դատավարությանը, ուստի այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են մինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը, վերջինիս համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով կարգավորել է վարչական գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու դատավարական կառուցակարգի առանձնահատկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթներից բխում է, որ ոչ պատշաճ պատասխանողը դատավարության մասնակից այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան, սակայն հետագայում գործի հանգամանքներով ժխտվել է դատավարության այդ մասնակցի՝ վիճելի պարտականության կրող լինելու, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության սուբյեկտ հանդիսանալու ենթադրությունը: Այլ կերպ ասած՝ եթե վարչական գործի քննության ընթացքում ժխտվում է այն ենթադրությունը, որ պատասխանողը հանդիսանում է վիճելի իրավահարաբերության սուբյեկտ, ապա այդ դեպքում վերջինս ճանաչվում է ոչ պատշաճ պատասխանող և պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումը կարող է կատարվել վարչական դատարանի նախաձեռնությամբ կամ հայցվորի միջնորդությամբ, բայց բոլոր դեպքերում միայն հայցվորի համաձայնությամբ, որը բխում է տնօրինչականության սկզբունքից: Փաստորեն, ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումն առանց հայցվորի համաձայնության հնարավոր չէ, իսկ եթե հայցվորը համաձայն չէ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուն, ապա վարչական դատարանը կարող է պատշաճ պատասխանողին, այսինքն՝ այն սուբյեկտին, որը պետք է պատասխանի ըստ ներկայացված հայցի, ներգրավել որպես երկրորդ պատասխանող: Բացի այդ, վարչական գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողի կատարած գործողությունները դատավարությանը մասնակից դարձված պատշաճ պատասխանողի համար նշանակություն չունեն և վերջինիս համար որևէ իրավունք կամ պարտականություն չեն առաջացնում: Պատշաճ պատասխանողի համար ծագում են նոր վարչադատավարական իրավահարաբերություններ, հետևաբար պատշաճ պատասխանողի համար գործի քննությունը սկսվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլից՝ անկախ նրանից, թե դատավարության որ փուլում է բացահայտվել ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման անհրաժեշտությունը:

Վերոգրյալ իրավական վերլուծությունից ակնհայտ է, որ քննարկվող վարչադատավարական ինստիտուտների՝ դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման միջև առկա են էական տարբերություններ՝ ինչպես ըստ հիմքերի, այնպես էլ ըստ դատավարական հետևանքների: Եթե դատավարական իրավահաջորդության հիմքը կողմի՝ նյութական իրավունքներում կամ պարտականություններում տեղի ունեցած իրավահաջորդությունն է, ապա ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումն իրար փոխարինող անձանց միջև, որպես կանոն, ոչ մի նյութահիրավական կապ չի ենթադրում: Այսպիսով, դատավարական հետևանքների տեսանկյունից՝ դատավարական իրավահաջորդության դեպքում վարչադատավարական իրավահարա-

բերությունները պահպանվում են, իսկ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դեպքում վարչադատավարական իրավահարաբերությունները դադարում են, և ծագում են նոր վարչադատավարական իրավահարաբերություններ:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նոտարի իրավական վիճակին վերաբերող կարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ առաջին՝ նոտարի գործունեության նպատակը ոչ թե նոտարի շահերն են, այլ՝ հանրության շահերը: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունում նոտարներն իրականացնում են հանրային նշանակության գործառույթներ, որոնք սահմանվում են օրենքով: Երկրորդ՝ նոտարները, ինչպես պետական մարմինները և պաշտոնատար անձինք, իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են ոչ թե մասնավոր անձանց ներհատուկ կամքի ազատ արտահայտմամբ, այլ գործում են հանրային իշխանությանը ներհատուկ ընթացակարգերի շրջանակներում: Երրորդ՝ նոտարները նշանակվում են պաշտոնատար անձանց համար օրենքով հատուկ սահմանված կարգով: Չորրորդ՝ նոտարները կարգապահական պատասխանատվության են ենթարկվում, նրանց լիազորությունները դադարում են նույնպես օրենքով սահմանված հատուկ հիմքերի առկայության պայմաններում և հատուկ կարգով: Այսինքն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Միաժամանակ, նոտարը մի շարք իրավահարաբերություններում հանդես է գալիս նաև որպես անհատ ձեռնարկատեր, ինքնուրույն, իր ռիսկով իրականացնում է գործունեություն, որի նպատակը շահույթ ստանալն է, իր ունեցած պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով և կրում է պատասխանատվություն՝ իր կողմից այլ անձանց պատճառված վնասի համար: Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հենվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում: Տվյալ իրավահարաբերությունների հանրային լինելու մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերն ընդդատյա է համարել վարչական դատարանին, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

Տվյալ իրավահարաբերություններում հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է նոտարների հանրային-իրավական կարգավիճակը և պայմանավորում է նրանց գործունեության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացման անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ օրենսդիրը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը կարող են բողոքարկվել դատարան: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը քննվում են վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 31-րդ գլխի

220–222–րդ հոդվածներով սահմանել է նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերի քննության կարգը:

Այսպիսով, ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարը՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ, իրականացնում է հանրային գործառույթներ՝ նպատակ հետապնդելով ապահովել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի գործնականում իրացումը և պաշտպանությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31–րդ գլխում ամրագրված իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործերի շրջանակում նոտարը հանդես է գալիս պատասխանողի դերում, որի դեմ կարող են ներկայացվել հետևյալ հայցապահանջները՝

1) նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ,

2) նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ,

3) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ նշված գործի քննության ընթացքում նոտարն ազատվում է իր գբաղեցրած պաշտոնից, կամ նրա լիազորություններն օրենքով սահմանված կարգով դադարում են, ապա դադարում է նաև վերջինիս՝ հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքից բխող հանրային-իրավական կարգավիճակը: Հետևաբար նոտարի պաշտոնից ազատված կամ նոտարի լիազորությունները դադարած անձը նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործերի շրջանակներում այլևս չի կարող համարվել պատշաճ պատասխանող՝ 1) նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև 2) նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջների մասով: Այդ դեպքում վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածով սահմանված կարգով լուծել այդ նոտարին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին դատավարությանը որպես երկրորդ պատասխանող ներգրավելու հարցը: Այսինքն՝ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում նոտարի դեմ ներկայացված՝ 1) նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև 2) նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով իր գբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարը պետք է ճանաչվի ոչ պատշաճ պատասխանող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածով սահմանված կարգով փոխարինվի պատշաճ պատասխանողով: Տվյալ պարագայում վարչական դատարանն իրավասու չէ նոտարի պաշտոնից ազատված կամ նոտարի լիազորությունները դադարած անձին փոխարինել նրա իրավահաջորդով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 1–ին մասում դատավարական իրավահաջորդության այդպիսի հիմք նախատեսված չէ, իսկ վարչական դատարանն իրավասու է դատավարության կողմին նրա իրավահաջորդով փոխարինելու մասին որոշում կայացնել միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում, մինչդեռ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 1–ին մասում թվարկելով վարչական դատավարությունում դատավարական իրավահաջորդության հիմքերը, դրանց շարքում չի նախատեսել նոտարի՝ իր գբաղեցրած պաշտոնից ազատվելու պատճառով դատավարությունից դուրս գալու վերաբերյալ որևէ դրույթ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն դեպքում, երբ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործով պատասխանող նոտարն ազատվում է իր գբաղեցրած պաշտոնից, կամ նրա լիազորությունները դադարում են, ապա նոտարի դեմ ներկայացված՝ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության

կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով պատշաճ պատասխանող պետք է համարվի ՀՀ նոտարական պալատը, որը պետք է ներգրավվի դատավարությանը կամ որպես նոտարին փոխարինող պատշաճ պատասխանող կամ որպես երկրորդ պատասխանող հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ նոտարական պալատը նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն է, որը, ի թիվս ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև իր կանոնադրությամբ սահմանված գործառույթների, օժտված է նաև նոտարների շահերը ներկայացնելու և պաշտպանելու իրավասությամբ: ՀՀ նոտարական պալատն իրավասու է ներկայացնել և պաշտպանել նոտարների շահերն այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ունեցած հարաբերություններում, այդ թվում նաև դատարանում: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջի քննության շրջանակներում ՀՀ նոտարական պալատն իրավասու է դատարանում ներկայացնել և պաշտպանելու իր գբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարի շահերը, քանի որ նշված հայցապահանջներով վիճարկվում է նոտարի՝ հանրային-իրավական կարգավիճակից բխող գործողությունների իրավաչափությունը: Հետևաբար նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում նոտարի՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ լիազորությունների դադարման դեպքում նոտարի դեմ ներկայացված՝ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով վարչական դատարանը պարտավոր է իր զբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարին ՀՀ վարչական դատավարության կարգով փոխարինել պատշաճ պատասխանողով՝ ՀՀ նոտարական պալատով:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում առկա այն իրավակարգավորումներին, որ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված հայցը բավարարելու դեպքում դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու վերաբերյալ, իսկ նման պահանջի և համապատասխան հիմքերի առկայության դեպքում նաև պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու դեպքում դատարանը պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հատուկ նշել, որ ՀՀ իրավական համակարգում անձանց համար երաշխավորվում է արդար դատաքննության և խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցների իրավունքները, ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունն անձի համար երաշխավորում է տվյալ անձի իրավունքների ենթադրյալ խախտման համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, այդ թվում նաև դատարան դիմելու իրավունք: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածը պետք է մեկնաբանեն այնպես, որպեսզի գործնականում հնարավոր լինի ապահովել անձանց իրավունքների առավելագույն պաշտպանություն: Այսինքն, եթե դատարանը պարզի, որ առկա են նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարման մերժումը ոչ իրավաչափ ճանաչելու բավարար հիմքեր, նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարման մերժումը պետք է ճանաչվեն ոչ իրավաչափ, ինչը նշանակում է նաև, որ հետագայում ՀՀ իրավական համակարգում գործող որևէ նոտար իրավասու չէ նույն անձի վերաբերյալ միևնույն փաստական և իրավական հիմքերով կատարելու հայցվող նույն նոտարական գործողությունը կամ մերժելու հայցվող նույն նոտարական գործողության կատարումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանն իրավասու չէ պարտավորեցնել պաշտոնաթող նոտարին կատարելու հայցվող գործողությունը, քանի որ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության շրջանակում բացի տվյալ վարչական գործով պատասխանող նոտարից գոյություն չունի որևէ այլ իրավունքի սուբյեկտ, որն իրավասու է կատարելու հայցվող

նոտարական գործողությունները: Հետևաբար վարչական դատարանը չի կարող պարտավորեցնել հանրային-իրավական կարգավիճակից զրկված նախկին նոտարին, ով այլևս իրավասու չէ կատարել նոտարական գործողություններ, կատարելու հայցվող նոտարական գործողությունները: Վարչական դատարանն իրավասու չէ նաև ՀՀ նոտարական պալատին պարտավորեցնել կատարելու հայցվող նոտարական գործողությունը, քանի որ ՀՀ նոտարական պալատն իրավասու չէ կատարել նոտարական գործողություններ: Նկատի ունենալով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության շրջանակում նոտարի՝ իր գբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ լիազորությունների դադարման դեպքում ներկայացված՝ նոտարին հայցվող գործողությունը կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը ենթակա է մերժման:

29.07.2015թ.

7. Շուշանիկ Տրդատյան v. ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողով, վարչ. գործ թիվ ՎԴ/6072/05/14 **Էջ 663-670**

<u>Խնդիր.</u> Իրավաչափ է արդյո՞ք վարչական դատարանի կողմից գործողության կատարման հայցով դատարան դիմած անձի հայցադիմումի ընդունումը մերժելը՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, եթե հայցվորը վարչական մարմնից պահանջել է կատարելու որոշակի գործողություններ, որոնք, ուղղված չլինելով վարչական ակտի ընդունմանը, կարող են ապահովել անհրաժեշտ պայմաններ իր իրավունքների իրականացման համար կամ վերացնել վերջինիս իրավունքների իրականացման խոչընդոտները:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> ՀՀ սահմանադրական դատարանը, 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշմամբ անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնահարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (...): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է (...) իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: (...) Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության (...)»:

ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչությամբ սահմանել է վարչական դատարան դիմելու իրավունքի իրականացման հստակ իրավական նախապայմաններ, ըստ որի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է իրականացնել դատարան դիմելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գոր-

ծողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ եթե խոչընդոտներ են հարուցվել կամ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 10-րդ հոդվածներում սահմանել է վարչական դատարանի իրավասության շրջանակը: Ինչպես ցանկացած դատարան, վարչական դատարանն իրավասու է գործադրել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված է հատուկ տեսակի իրավասությամբ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Ըստ Հայաստանի Հանրապետության գործող վարչադատավարական օրենսդրության՝ վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող հայցատեսակներից է գործողության կատարման հայցը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված գործողության կատարման հայցի հասկացության վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հայցատեսակով հայցվորը կարող է վարչական մարմնից պահանջել՝ կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Փաստորեն, գործողության կատարման հայցով դատարան դիմած անձը կարող է վարչական մարմնից պահանջել դրսևորելու վարչական ակտի ընդունման հետ չկապված՝ ինչպես ակտիվ վարքագիծ՝ կատարելու որոշակի գործողություններ, այնպես էլ պասիվ վարքագիծ՝ ձեռնպահ մնալու որոշակի գործողությունների կատարումից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավադրույթը ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի վերոգրյալ մեկնաբանությունների լույսի ներքո դիտարկելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործողության կատարման հայցով անձը վարչական մարմնից կարող է պահանջել դրսևորելու միայն այնպիսի վարքագիծ (թե՛ ակտիվ, թե՛ պասիվ), որը չդրսևորելը խախտում է կամ անմիջականորեն կարող է խախտել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Հետևաբար, գործողության կատարման հայցով անձը կարող է վարչական մարմնից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնց համապատասխանաբար կատարումը կամ չկատարումը կարող է ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ վերացնել վերջինիս իրավունքների իրականացման խոչընդոտները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործողության կատարման հայցով դատարան դիմած անձի հայցադիմումի ընդունելիության փուլում վարչական դատարանը պարտավոր է պարզել, թե պահանջվող վարքագիծը վարչական մարմնի կողմից չդրսևորելը կարող է արդյոք առերևույթ ոտնձգել վերջինիս իրավունքներին և օրինական շահերին: Մասնավորապես՝ վարչական դատարանը գործողության կատարման հայցադիմումի ընդունելիության փուլում պարտավոր է բացահայտել, թե հայցվորի կողմից ակնկալվող վարքագիծը կարող է արդյո՞ք առերևույթ ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ առերևույթ վերացնել այդ իրավունքների իրականացման խոչընդոտները:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատարանն իրավասու է մերժել գործողության կատարման հայցով դատարան դիմած անձի հայցադիմումը վարույթ ընդունելը՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով միայն այն դեպքում, եթե հայցվորի կողմից ակնկալվող վարքագիծը չդրսևորելն ակնհայտորեն որևէ կերպ չի կարող խախտել տվյալ անձի իրավունքները, մասնավորապես՝ ակնկալվող վարքագիծը չի կարող ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ վերացնել այդ իրավունքների իրականացման խոչընդոտները:

04.03.2015թ.

8. «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԴ3/0347/05/13 **Էջ 671-680**

Խնդիր. 1) Արդյո՞ք բողոքարկման իրավունքը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչներից մեկը,

2) արդյո՞ք գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունը համատեղելի է անձի դատական պաշտպանության իրավունքի հետ,

3) արդյո՞ք գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից առավել նման է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, թե՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին,

4) արդյո՞ք գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական գործի վարույթը կարճելու հիմքերը՝ ամրագրելով, որ գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը կայացնում է որոշում: Միաժամանակ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածում ամրագրելով գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը չի դիտարկել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ: Օրենսդիրը սույն իրավակարգավորման շրջանակներում կատարել է ընդամենը մեկ բացառություն՝ ամրագրելով, որ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ՝ այդ դատական ակտը համարելով գործն ըստ էության լուծող դատական ակտի տարատեսակ:

Այսպիսով, օրենսդիրը, սահմանելով, որ գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը կայացնում է որոշում (բացառությամբ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով, որի դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ), միաժամանակ չի սահմանել, թե ինչպիսի դատական ակտ է հանդիսանում գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի երկու տեսակ՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները» վերտառությամբ 125-րդ հոդվածում գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ, նախատեսված չէ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ

դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում չի սահմանել, որ գործի վարույթը կարճելու որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում ամրագրելով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը՝ դրանց թվում չի նշել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, կարգավորելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ դրանով իսկ բացառելով դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, այնինչ, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքից:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի վարույթի կարճումը վարույթն ավարտելու ինքնուրույն ձև է, որն իր դատավարական ձևակերպումն ստանում է որոշման տեսքով, ուստի կարճելու մասին որոշումը կարող է բնորոշվել որպես վարույթը եզրափակող դատական ակտ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ և 97-րդ հոդվածների և ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը: Ավելին, վարչական գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե առկա է նույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքը: Համադրելով նշված հոդվածներով ամրագրված իրավադրույթները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշման կայացումը, օրենքով նախատեսված որոշ խիստ սահմանափակ դեպքերից բացի, արգելափակում է անձի՝ իր խախտված իրավունքների պաշտպանությամբ կրկին նույն հայցով դատարան դիմելու իրավունքի իրացումը և իր առաջացրած իրավական հետևանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին:

Համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ: Այս որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա իրավակարգավորումներով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին, նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, ՀՀ սահմանադրական դատարանն էական է համարում այն հարցադրումը, թե գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկելիության

տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, թե գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին բնորոշ իրավակարգավորումներին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշմամբ դատավարությունը՝ որպես այդպիսին, և վարույթը՝ որպես ընթացակարգ, ավարտվում են, որպիսի պայմանը բացառում է վարույթի հետագա վերսկսումը: Բացի դրանից, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր առաջացրած իրավական հետևանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Հետևաբար մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ և ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և դրա կարևոր բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական բնույթը, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումները, գտել է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները և նպատակ ունենալով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում, արձանագրել է.

4. գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածին համապատասխան կայացված որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով,

5. գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերելի են (mutatis mutandis) խնդրո առարկա որոշմանը,

6. գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վարչական վերաքննիչ դատարանի կողմից կայացրած որոշումը ենթակա է բողոքարկման Վճռաբեկ դատարան՝ վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի՝ վճռաբեկության կարգով վերանայման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ գլխով սահմանված կանոններով:

27.07.2015թ.

9. Ասահիտ Եփրեմյան v. ՀՀ կառավարություն, վարչ. գործ թիվ ՎԴ/6478/05/14 **ԷՋ 681-689**

<u>Խնդիր.</u> Արդյոք նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով նույն դատարանի կողմից վերանայման ենթակա լինելու մասին իրավակարգավորումը համապատասխանում է բողոքարկման իրավունքի գործնականում իրացմանն ուղղված օրենսդրական կարգավորումների համակարգային տրամաբանությանն

ու իրավաչափ նշանակությանը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորվածությունը և լիարժեք իրացման պատշաճ կառուցակարգերի անհրաժեշտությունը, ինչպես նաև դատական պաշտպանության ինստիտուտի էության ու բովանդակության, դրա օրենսդրական կարգավորման արդյունավետության ու սահմանադրականության խնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 և 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովել Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության հիմնարար սկզբունքների գործնականում իրացումն իրավակիրառ պրակտիկայում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում սահմանել է, որ ՀՀ իրավական համակարգում օրենքները, ոչ միայն պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, այլ նաև չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին: ՀՀ սահմանադրական դատարանը, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192 որոշման մեջ անդրադառնալով օրենքների՝ Սահմանադրական դատարանի որոշումներին համապատասխանելու իրավական խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության և արդյունավետության հիմնախնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներով, Կոնվենցիայում և միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով:

ՀՀ սահմանադրական դատարանը, 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի

թիվ ՍԴՈ–1037 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի 1–ին մասով և Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ–719 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունն ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ–1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Սակայն դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում սահմանված է դատական եռաստիճան համակարգ, որը գործում է դատական ներհամակարգային աստիճանակարգության հիման վրա, ինչը ենթադրում է վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայման հնարավորություն:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական արդարադատության բնագավառում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները, ՀՀ դատական օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական դատարանի և վարչական վերաքննիչ դատարանի կառուցվածքային առանձնահատկությունները և գործառութային հատկանիշներն ու հնարավորությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է նաև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի իրականացման կարգը և պայմանները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131–րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ

դատական ակտերը: Բողոքարկումն այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է: Նախատեսելով, որ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերվում է վարչական վերաքննիչ դատարան, միաժամանակ, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ օրենսդիրը նախատեսել է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ՀՀ իրավական համակարգում ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենսդիրը, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ նախատեսելով բացառություն, կարգավորել է բացառապես երկու հարց. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննող մարմնի, ինչպես նաև այդ մարմնի կազմի հետ կապված հարցերը: Իսկ մի շարք այլ կարևոր հարցեր, ինչպիսիք են վերաքննիչ բողոքների քննության կարգը, այդ բողոքները քննելու ընթացքում վարչական դատարանի լիազորությունները, բողոքների քննության արդյունքում ընդունվելիք ակտերի հնարավոր տարբերակներն առհասարակ կարգավորված չեն: Այսպիսով, օրենսդիրը նախատեսելով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը վարչական վերաքննիչ դատարանում անմիջականորեն բողոքարկելու իրավունքը, վերապահում է կատարել նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքների հարցում, միաժամանակ, չկարգավորելով թե ինչ ընթացակարգով է վարչական դատարանը քննելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները:

Սույն գործով քննության առարկա հարցը դիտարկելով ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վարչական վերաքննիչ դատարանում բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունը, ինչպես նաև նմանատիպ գործերով վարչական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքների քննության և լուծման որևիցե ընթացակարգ և/կամ լիազորություն նախատեսված լինելու բացակայությունն արգելափակում է ոչ միայն դատարանի մատչելիության իրավունքը, այլև անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտը բողոքարկելու իրական հնարավորությունից: Երկրորդ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ բացառություն նախատեսելիս ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրը բավարար հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ օրենսդրական կանոնակարգումները զարգացնելու առումով, ինչպես նաև չի ապահովել իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, ճշգրտության և կանխատեսելիության որակները: Երրորդ՝ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությանը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները կամ դրանց գործնականում իրացման արգելք հանդիսանալ: Ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակար-

գային օրենսդրական այնպիսի կարգավորումը, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում Վճռաբեկ դատարանը հատուկ կարևորել է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և գործնականում կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքության համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերադաս դատական ատյանում բողոքարկման իրավունքի երաշխավորումը կընդլայնի դատական պաշտպանության արդյունավետության և օբյեկտիվության նկատմամբ հանրային վստահությունը, կապահովի խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը, թույլ կտա վերադաս ատյանի դատարանին վերացնել ստորադաս ատյանի թույլ տված դատական սխալները, ուղղված կլինի վերադաս դատական ատյանների մատչելիության ապահովմանը և կնպաստի դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությանը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական բողոքարկման իրավունքը վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է, որը հետևողականորեն պետք է իր արտացոլումը գտնի իրավակիրառ պրակտիկայում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորումը չի համապատասխանում ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև չի համապատասխանում իրավական որոշակիության, ճշգրտության և կանխատեսելիության պարտադիր որակներին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ գլխով նախատեսված վերաքննիչ վարույթի հստակ կանոնակարգման պայմաններում նույն օրենսգրքի 196-րդ հոդվածում առկա իրավակարգավորումն իր տրամագծորեն հակառակ կարգավորմամբ արգելափակում է դատարանի մատչելիության իրավունքը՝ անձին ոչ իրավաչափորեն զրկելով դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտը վերադաս դատարանում բողոքարկելու իրավունքից:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության հիմնարար սկզբունքները, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումները և նպատակ ունենալով բողոքարկման իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում, արձանագրել է.

1. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով՝ վարչական վերաքննիչ դատարան,

2. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները ենթակա են քննության և լուծման վարչական վերաքննիչ դատարանի կողմից կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով,

3. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկումն իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար սահմանված ընդհանուր իրավակարգավորումներով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերելի են խնդրո առարկա որոշմանը:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0221/02/11
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ի. Վարդանյան
Ա. Պետրոսյան

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0221/02/11**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Ռուբեն Հլղաթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Վահե Բարսեղյանի և Ռոստոմ Բարսեղյանի՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու, գումարի բռնագանձումն այդ բաժնի վրա տարածելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը հետագայում ընդհանուր սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 77/16 հասցեում գտնվող բնակարանի՝ Վահե և Ռոստոմ Բարսեղյանների հա-

մատեղ սեփականությունից առանձնացնել Վահե Բարսեղյանի բաժնեմասը և 23.09.2009 թվականի թիվ ԵՄԴ/0668/02/09վճռով բռնագանձման ենթակա գումարի բռնագանձումը տարածել այդ բաժնեմասի վրա, իսկ դրա անհնարինության դեպքում վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ, ինչպես նաև բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Վ. Հովնանյան) (այսուհետ՝ Դատարան) 09.04.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.07.2014 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.04.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչ Ռուբեն Հլղլաթյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ և 197-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ տվյալ դեպքում բացակայում է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը շուկայական գնով ձեռք բերելուց հրաժարվելու պարտադիր պայմանը, հանգել է այն հետևության, որ նման պայմաններում Դատարանի համար չէր կարող ծագել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իրավունք: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ եթե նույնիսկ ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները կամ նրանց մի մասը չեն հրաժարվել գնելու պարտապանի բաժինը, դա դեռևս չի նշանակում, որ Դատարանը Բանկի հայցը պետք է մերժեր, քանի որ պարտապանի բաժինը գնելուց հրաժարվել կամ չհրաժարվելը հանդիսանում է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքը և նրանք կարող են ընդհանրապես չհրաժարվել պարտապանի բաժինը գնելուց, բայց և չգնել այն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ օրենքը հստակ սահմանել է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներին շուկայական գնով պարտապանի բաժինը գնելու պահանջ ներկայացնելու պարտատիրոջ իրավունքը, և ոչ թե՝ պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 23.09.2009 թվականի թիվ ԵՄԴ/0668/02/09 օրինական ուժի մեջ մտած վճռով Բանկի հայցն ընդդեմ Կարինե Նազարյանի և Վահե Բարսեղյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է **(հատոր 1-ին, գ.թ.10-12):**

2) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետի 25.11.2009 թվականի թիվ 13770 գրությամբ պարտատիրոջը՝ Բանկին, հայտնվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի թիվ 77/16 հասցեի բնակարանը համասեփականության իրավունքով պատկանում է պարտապա-

նին, և առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով դիմել դատարան՝ վերջինիս բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու համար **(հատոր 1-ին, գ.թ.13):**

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից 26.08.2009 թվականին տրված թիվ 1/3-2737 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Վահե Բարսեղյանի անվամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 77/16 հասցեում գտնվող բնակարան, որի նկատմամբ համասեփականատեր է նաև Ռոստոմ Բարսեղյանը **(հատոր 2-րդ, գ.թ. 90):**

4) ՀՀ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի կողմից 20.07.2013 թվականին տրված մասնագիտական եզրակացության համաձայն՝ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 77/16 հասցեում գտնվող բնակելի տնից Վահե Բարսեղյանի բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու և առանց լրացուցիչ շինարարական աշխատանքներ իրականացնելու **(հատոր 3-րդ, գ.թ. 13-18):**

5) Դատարանը Վանաձորի քաղաքապետ պարոն Ս. Դարբինյանին հասցեագրված 26.02.2014 թվականի գրությամբ հայտնել է, որ համաձայն փոստից ստացված նամակների՝ Վահե և Ռոստոմ Բարսեղյանները **Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի թիվ 77/16 հասցեում չեն բնակվում, տեղափոխված են:** Միաժամանակ, Դատարանը հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 94-րդ հոդվածի 1-ին կետը, առաջարկել է համայնքի ղեկավարին դատարան ուղարկել ծանուցում ստանալու փաստը հավաստող մակարգրությամբ հաղորդագրություն, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ տեղեկություններ հայտնել նրանց գտնվելու վայրի մասին, բնակվելու դեպքում՝ ապահովել ծանուցագրի հանձնումը և դատարանին տրամադրել համապատասխան ստացական **(հատոր 4-րդ, գ.թ.7):**

6) ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի՝ Դատարանին հասցեագրված 04.03.2014 թվականի գրությամբ հայտնվել է, որ **ք. Վանաձոր, Տիգրան Մեծի թիվ 77/16 հասցեում** Վահե և Ռոստոմ Բարսեղյանները չեն բնակվում **(հատոր 4-րդ, գ.թ. 16):**

7) Բանկի ներկայացուցչի 05.03.2014 թվականի միջնորդության համաձայն՝ Բանկը դատարանին հայտնել է, որ սույն գործով պատասխանողներ **Ռոստոմ և Վահե Բարսեղյանների** հնարավոր բնակության հասցեն է նաև քաղաք Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի թիվ 39-16 հասցեն և միջնորդել է պատշաճ ծանուցումն ապահովելու համար ծանուցագրերն ուղարկել նաև այդ հասցեով **(հատոր 4-րդ, գ.թ.7):**

8) Դատարանը **04.04.2014** թվականին, ժամը 15:20-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին **Վահե Բարսեղյանին** 14.03.2014 թվականին ուղարկել է ծանուցում: Ծանուցագիրն ուղարկվել է **ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի թիվ 39-16 հասցեով:** Դատարանի կողմից ուղարկված ծանուցագիրը հետ է վերադարձվել <<տեղափոխված է, բնակարանը վաճառված է>> նշումով **(հատոր 4-րդ, գ.թ. 10, 12):**

9) Դատարանը **04.04.2014** թվականին, ժամը 15:20-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին Ռոստոմ Բարսեղյանին 14.03.2014 թվականին ուղարկել է ծանուցում: Ծանուցագիրն ուղարկվել է **ք. Վանաձոր, Տիգրան Մեծի թիվ 77/16 հասցեով:** Դատարանի կողմից ուղարկված ծանուցագիրը հետ է վերադարձվել <<տեղափոխված է>> նշումով **(հատոր 4-րդ, գ.թ. 11, 14):**

10) Դատարանի 04.04.2014 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ կողմերը դատական նիստին չեն ներկայացել: Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 94-րդ հոդվածի 1-ին կետով և 118-րդ հոդվածով, որոշել է գործի քննությունը շարունակել կողմերի բացակայությամբ: Նույն օրը Դատարանը հայտարարել է դատաքննությունն ավարտված և վճռի հրապարակման օր է նշանակել 09.04.2014 թվականի ժամը 17:15-ը **(հատոր 4-րդ, գ.թ. 21-22):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ, 197-րդ հոդվածների սխալ մեկնաբանության, դրա արդյունքում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ խնդրին. արդյո՞ք Դատարանի կողմից ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու հայցապահանջը կարող է մերժվել այն հիմքով, որ պարտատերը չի ապացուցել ոչ պարտապան համասեփականատիրոջ հրաժարումը՝ գնելու պարտապան համասեփականատիրոջ բաժինը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով վկայակոչված հոդվածները, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պարտատիրոջ պահանջի իրավունքը ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ

ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում:

Օրենսդիրը, ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների համար իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ սահմանելով հանդերձ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում, այն է՝ ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության, ինչպես նաև ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից պարտապանի բաժինը գնելուց հրաժարվելու պարագայում, նախատեսել է այդ իրավունքների սահմանափակման հնարավորություն, որի նպատակն է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների և պարտատիրոջ իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելը: Նման իրավիճակում օրենսդիրը պարտատիրոջ իրավունքների պաշտպանության միակ հնարավոր միջոց է համարել պարտատիրոջ իրավունքը՝ պահանջելու ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով վաճառել՝ դրանից ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաշխելով և բռնագանձումը պարտապանի բաժին գումարի վրա տարածելով *(տե՛ս, Լուսրա Դավթյանն ընդդեմ Արսեն Սակարյանի և մյուսների թիվ ԼԴ4/0280/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադարձել է այն իրավական հարցին, թե երբ է կարելի պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով վաճառել: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,

3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը *(տե՛ս, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Դերենիկ Մարգարյանի և մյուսների թիվ ԳԴ4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ համասեփականատեր պարտապանի բաժինը ձեռք բերելու մյուս համասեփականատիրոջ (համասեփականատերերի) ցանկության դրսևորումն առաջնահերթ պայմանավորված է նրան գործի քննությանը պատշաճ ծանուցելու հանգամանքի հետ, այսինքն՝ գործի քննության ընթացքում նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված <<լսված լինելու>> իրավունքի ապահովման հետ:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվորը չի ներկայացրել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց, որը կհիմնավորեր փաստն այն մասին, որ Բանկը պահանջ է ներկայացրել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 77 շենքի 16-րդ բնակարանի ընդհանուր համատեղ սեփականության ոչ պարտապան մասնակից Ռոստոմ Բարսեղյանին՝ շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը, իսկ Ռոստոմ Բարսեղյանը ստացել է և հրաժարվել նշված բաժինը ձեռք բերելուց: Միաժամանակ, Դատարանն արձանագրել է, որ գործի քննության ընթացքում հնարավոր չի եղել պատշաճ ծանուցել Ռոստոմ Բարսեղյանին:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, արձանագրել է, որ համապատասխանող Ռոստոմ Բարսեղյանը չունի որևէ պարտավորություն հայցվորի նկատմամբ և վիճելի գույքում նրա բաժնի սեփականության իրավունքի դադարեցումը, առանց նրա գիտության, չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածների դրույթներից: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ քննարկվող գործում բացակայում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված թույլատրելի և վերաբերելի ապացույցներ այն փաստի մասին, որ Ռոստոմ Բարսեղյանը հրաժարվել է ձեռք բերել Վահե Բարսեղյանի բաժինը, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքերը բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը հարկ է գնահատել ոչ պարտապան համասեփականատիրոջը գործի քննությանը պատշաճ ծանուցելու հանգամանքի համատեքստում՝ նկատի ունենալով, որ արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում պարտատիրոջ կողմից ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներին պարտապանի բաժինը գնելու առաջարկ ներկայացնելը և համապատասխանաբար այդ առաջարկին արձագանքելն իրականացվում են դատարանի անմիջական մասնակցությամբ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով կամ ուղարկվում է էլեկտրոնային փոստով՝ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով(այսուհետ՝ պատշաճ ձևով):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածի կիրառման հարցին և նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը *(տե՛ս, Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, նշել է, որ

դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը կողմերի միջև <<արդարացի հավասարակշռության>> իմաստով հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում *(տե՛ս, Ակերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, Գյումրու քաղաքապետի հայցն ընդդեմ <<Չապ>> ՍՊԸ-ի թիվ ՇԴ/0351/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Միցակցային դատավարության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն, քանի որ այդպիսի հնարավորությունն է կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցումը՝ վերջիններիս նյութական իրավունքների իրացման կարևոր նախապայման է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկը 05.03.2014 թվականի միջնորդությամբ Դատարանին հայտնել է, որ սույն գործով պատասխանողներ Ռոստոմ և Վահե Բարսեղյանները հնարավոր է բնակվում են **Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորչի թիվ 39-16 հասցեում** և միջնորդել է պատշաճ ծանուցումն ապահովելու համար ծանուցագրերն ուղարկել նաև այդ հասցեով:

04.04.2014 թվականի ժամը 15:20-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին Վահե Բարսեղյանին հասցեագրված ծանուցումը Դատարանի կողմից ուղարկվել է **ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի թիվ 39-16 հասցեով:** Նշված ծանուցագիրը հետ է վերադարձվել <<տեղափոխված է, բնակարանը վաճառված է>> նշումով:

Մինչդեռ, Ռոստոմ Բարսեղյանին 04.04.2014 թվականի ժամը 15:20-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումը դատարանի կողմից ուղարկվել է **ք. Վանաձոր, Տիգրան Մեծի թիվ 77/16 հասցեով:** Դատարանի կողմից ուղարկված ծանուցագիրը հետ է վերադարձվել <<տեղափոխված է>> նշումով:

Գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ 04.04.2014 թվականի ժամը 15:20-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումը Ռոստոմ Բարսեղյանին ուղարկվել է նաև **ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի թիվ 39-16 հասցեով:**

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատշաճ ծանուցումն ապահովելու համար Դատարանն պարտավոր էր ձեռնարկել դրա համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը:

Մասնավորապես՝ Ռոստոմ Բարսեղյանին 04.04.2014 թվականի, ժամը 15:20-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումն ուղարկելով **ք. Վանաձոր, Տիգրան Մեծի թիվ 77/16 հասցեով և հետագայում այն** «տեղափոխված է» նշումով Դատարան վերադարձվելու պայմաններում Դատարանը գործում պատասխա-

նողի այլ հասցեի առկայության պայմաններում պետք է ծանուցումն ուղարկեր նաև **թ. Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի թիվ 39–16 հասցեով:** Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում պատասխանողի ծանուցման այլ հասցեի առկայության պայմաններում Դատարանը պարտավոր էր ապահովել նաև այդ հասցեով վերջինիս ծանուցումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր Դատարանի կողմից օրենքով սահմանված գործողություններ ձեռնարկելու և ոչ պարտապան պատասխանողին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կերպով ծանուցելու փաստերը, որպիսի պայմաններում միայն Դատարանը կարող էր հաստատված համարել, որ հայցվորը չի ապացուցել ոչ պարտապան համասեփականատեր Ռոստոմ Բարսեղյանի կողմից պարտապան համասեփականատիրոջ՝ Վահե Բարսեղյանի բաժինը գնելուց հրաժարվելու փաստը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3–րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241[2]–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1791/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1791/02/11**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նաիրա Իսահակյանի և Ստանիսլավ Հովակիմյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ստանիսլավ Հովակիմյանի ընդդեմ Արտաշես Դավթյանի, Նաիրա Իսահակյանի և սնանկության գործով նախկին կառավարիչ Արման Սարգսյանի՝ առոչինչ գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու համար բռնագանձումը պատասխանողի գույքի, այդ թվում՝ նրա աշխատավարձի վրա տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ստանիսլավ Հովակիմյանը պահանջել է 25.07.2008 թվականի թիվ 5327 ամուսնական և 25.07.2008 թվականի թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքների անվավերության հետևանքներ, այն է՝ դադարեցնել Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի նկատմամբ Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունքը, նշված բաժնեմասի նկատմամբ վերականգնել Արտաշես Դավթյանի սեփականության իրավունքը և իրեն պատճառված վնասը՝ 44.000.000 ՀՀ դրամը, հատուցելու համար բռնագանձումը տարածել Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի վրա՝ ի կատարումն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ

1-15/2005 դատավճռի պահանջների, ինչպես նաև բռնագանձումը տարածել Արտաշես Դավթյանի դրամական միջոցների, այդ թվում՝ աշխատավարձի նկատմամբ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) 11.12.2012 թվականի վճռով հայցը՝ 25.07.2008 թվականի թիվ 5327 ամուսնական և 25.07.2008 թվականի թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ առոչինչ գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու, այն է՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի նկատմամբ Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունքը դադարեցնելու և նշված բաժնեմասի նկատմամբ Արտաշես Դավթյանի սեփականության իրավունքը վերականգնելու մասով, մերժվել է, իսկ քաղաքացիական գործի վարույթը՝ ի կատարումն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ 1-15/2005 դատավճռի պահանջների՝ Ստանիսլավ Հովակիմյանին պատճառված վնասը՝ 44.000.000 ՀՀ դրամը հատուցելու համար բռնագանձումը Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի, ինչպես նաև Արտաշես Դավթյանի դրամական միջոցների, այդ թվում՝ աշխատավարձի նկատմամբ տարածելու մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան, դատավորներ՝ Ն. Տավարացյան, Դ. Խաչատրյան) 25.04.2013 թվականի որոշմամբ Ստանիսլավ Հովակիմյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.12.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործը լրիվ ծավալով ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.06.2013 թվականի որոշումներով սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանի և Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Վարդազարյան) (այսուհետ՝ Դատարան) 11.02.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Արտաշես Դավթյանի և Նաիրա Իսահակյանի միջև 25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագրի նկատմամբ մասնակիորեն՝ Ստանիսլավ Հովակիմյանի մասով՝ որպես Ստանիսլավ Հովակիմյանի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման երաշխիք՝ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի նկատմամբ 1/4 մասով դադարեցնել Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունքը և նշված բաժնեմասի նկատմամբ ճանաչել Արտաշես Դավթյանի սեփականության իրավունքը: Թիվ ԵԿԴ/1791/02/11 քաղաքացիական գործի վարույթը՝ 44.000.000 ՀՀ դրամը և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվեգրվող տոկոսները հատուցելու համար բռնագանձումը Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի և Արտաշես Դավթյանի աշխատավարձի, ինչպես նաև դրամական միջոցների վրա տարածելու մասով ի կատարումն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ 1-15/2005 դատավճռի պահանջների՝ կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2014 թվականի որոշմամբ Նաիրա Իսահակյանի և Ստանիսլավ Հովակիմյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 11.02.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Նաիրա Իսահակյանը և Ստանիսլավ Հովակիմյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

2. Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ, 304-րդ հոդվածները, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ստանիսլավ Հովակիմյանը Դատարանին չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ վիճարկվող պայմանագրերը կեղծ են, այսինքն՝ կնքվել են առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածը, հաշվի չի առել, որ անվավեր գործարքը, որոնցից է նաև առոչինչ գործարքը, չի հանգեցնում իրավական հետևանքների և անվավեր է կնքման պահից: Բացի այդ, եթե ամուսնական պայմանագիրն անվավեր է, ապա այն անվավեր է ամբողջությամբ, այլ ոչ թե՝ Ստանիսլավ Հովակիմյանի մասով:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33-րդ հոդվածը և ամուսնական պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելով, անտեսել է, որ պարտապան ամուսնու՝ Արտաշես Դավթյանի պարտավորությունների չկատարման համար վրա հասնող հետևանքների ծանր բեռն ըստ էության կրում է ոչ պարտապան ամուսինը (կինը)՝ կորցնելով իր սեփականությունը, որի արդյունքում խախտվում է որևէ պարտավորություն չունեցող անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, ամուսնական պայմանագրի անվավեր ճանաչման հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը, հանգել է սխալ հետևության, քանի որ ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագիրը չի կարող դիտարկվել նշված հոդվածի իմաստով կայացված համաձայնություն: Այսպես, կնքված ամուսնական պայմանագիրը ոչ թե պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին համաձայնություն է, այլ օրենքի շրջանակներում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավական ռեժիմից տարբերվող կարգավորում սահմանելու մասին գործարք է, ըստ որի՝ ամուսնության ընթացքում ամուսիններից յուրաքանչյուրի ձեռք բերած գույքը նրա անձնական սեփականությունն է և չի կարող համարվել ընդհանուր համատեղ սեփականություն:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի մեկնաբանությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ այդ հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է պարտավորության մասնակիցների միջև նախապես կնքված համաձայնություններին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ արդեն իսկ օրենքի ուժով համատեղ սեփականություն ճանաչված գույքը կրկին չի կարող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի ուժով ճանաչվել համատեղ սեփականություն մեկ ամուսնու կողմից մյուսի բաժինը ձեռք բերելու դեպքում: Նման անտրամաբանական մոտեցման պարագայում կստացվի, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկը, օտարելով իր բաժինը, մնում է նույն գույքի սեփականատեր, ինչը հակասում է սեփականության իրավունքի և դրա՝ տնօրինման իրավազորության էությանը: Բացի այդ, Արտաշես Դավթյանի բաժնի դիմաց վճարված գումարն ուղղվել է հենց Արտաշես Դավթյանի պարտավորությունների մարմանը սնանկության վարույթի շրջանակներում:

Ավելին, Արտաշես Դավթյանի բաժնեմասի ձեռքբերման գործարքը կնքվել է՝ բացառապես վստահելով թիվ ԵՔԴ/0361/04/10 քաղաքացիական գործով 28.06.2008 թվականին կայացված որոշման վերջնականությանը, որը, սակայն, նույն դատական համակարգի մեկ այլ ատյանի կողմից անտեսվում է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է <<բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2014 թվականի որոշումը>>:

2.1 Ստանիսլավ Հովակիմյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածը, 199-րդ հոդվածի 2-րդ կետը, 201-րդ հոդվածը, 304-րդ հոդվածի 2-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործի նախորդ քննության փուլում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, իր 25.04.2013 թվականի որոշմամբ դատական ակտը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, հաստատված է համարել Նաիրա Իսահակյանի և սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանի միջև 25.07.2008 թվականին կնքված թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի առարկայի բացակայությունը, որի շրջանակներում սույն քաղաքացիական գործի նոր քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պետք է քննարկվեր նշված պայմանագիրն օրենքի պահանջներին համապատասխանելու հարցը և հետևություն արվեր այդ պայմանագրի անվավերության հետևանքների կիրառման արդյունքում վիճելի բնակարանի նկատմամբ Արտաշես Դավթյանի համատեղ սեփականության իրավունքը վերականգնելու մասին, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով կկազմեր վիճելի բնակարանի 1/2 մասը: Մինչդեռ սույն քաղաքացիական գործի նոր քննությանն առաջադրված հարցերը չեն պարզաբանվել և այդ հարցերի ու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ կետի, 304-րդ հոդվածի 1-ին կետի և 448-րդ հոդվածի 1-ին կետի համադրմամբ դատական ակտ չի կայացվել: Այսինքն՝ անտեսվել են նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջները, որպիսի պայմաններում խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, գործում առկա ապացույցները համադրելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33-րդ հոդվածի պահանջներին, չնայած եզրահանգել է, որ Արտաշես Դավթյանի գործողությունները, այդ թվում՝ ամուսնական պայմանագիր կնքելը, ուղղված են եղել նրա կողմից Ստանիսլավ Հովակիմյանին հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելուց խուսափելուն, այնուամենայնիվ, վերականգնել է Արտաշես Դավթյանի սեփականության իրավունքը վիճելի բնակարանի նկատմամբ ունեցած բաժնի 1/4 մասի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի նկատմամբ դադարեցնել Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունքը և այդ բաժնեմասի նկատմամբ ճանաչել Արտաշես Դավթյանի սեփականության իրավունքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Արտաշես Դավթյանը և Նաիրա Իսահակյանն ամուսնացել են 03.04.1987 թվականին, որի վերաբերյալ տրվել է թիվ III-UL300927 ամուսնության վկայականը **(հատոր 1-ին, գ.թ. 104):**

2) 22.09.1998 թվականին տրված թիվ 022190 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանը սեփականության իրավունքով գրանցվել է Արտաշես Դավթյանի անվամբ, որի համար հիմք է հանդիսացել 02.09.1998 թվականի թիվ 1-1747 առուծախի պայմանագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 11-13):**

3) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի թիվ 1-15/2005 քրեական գործով 14.11.2005 թվականին կայացված օրինական ուժի մեջ մտած դատավճռով Արտաշես Դավթյանը և Բորիս Առաքելյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, միաժամանակ նշված դատավճռով մասնակիորեն՝ 44.000.000 ՀՀ դրամի չափով, բավարարվել է Ստանիսլավ Հովակիմյանի գումարի բռնագանձման մասին քաղաքացիական հայցն ընդդեմ Արտաշես Դավթյանի և Բորիս Առաքելյանի և վճռվել է Արտաշես Դավթյանից և Բորիս Առաքելյանից հօգուտ Ստանիսլավ Հովակիմյանի բռնագանձել 44.000.000 ՀՀ դրամ՝ դրան հաշվեգրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները **(հատոր 1-ին, գ.թ. 18-41):**

4) ՀՀ տնտեսական դատարանի թիվ ՏՄ-903 քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Արտաշես Դավթյանը ճանաչվել է սնանկ **(հատոր 1-ին, գ.թ. 46-47):**

5) 23.10.2007 թվականին Նաիրա Իսահակյանը դիմում է ներկայացրել Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարչին, որով հայտնել է, որ ինքը հանդիսանում է Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի համասեփականատեր և խնդրել է, որ նշված գույքի նկատմամբ համապատասխան գործողություններ ձեռնարկելիս հաշվի առնվի իր՝ գույքի ձեռքբերման նախապատվության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 10):**

6) Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանը 27.06.2008 թվականին <<Զեկուցագիր-Միջնորդություն>> է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան, որով միջնորդել է թույլատրել Արտաշես Դավթյանի բաժնեմասն ուղղակի գործարքով 11.500.000 ՀՀ դրամով վաճառել Նաիրա Իսահակյանին **(հատոր 1-ին, գ.թ. 8-9):**

7) Երևանի քաղաքացիական դատարանի թիվ ԵՔԴ/0361/04/08 քաղաքացիական գործով **28.06.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշման համաձայն՝** Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանին թույլատրվել է պարտապանին պատկանող՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի բաժնեմասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Նաիրա Իսահակյանին ոչ պակաս 11.500.000 ՀՀ դրամից՝ համաձայն <<Պարտեր>> ՍՊԸ-ի և <<Էսկո Կոնցեռն>> ՓԲԸ-ի կողմից տրված գնահատման ակտերի **(հատոր 1-ին, գ.թ. 48-49):**

8) Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանի և Նաիրա Իսահակյանի միջև 25.07.2008 թվականին կնքված թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանը (այսուհետ՝ Վաճառող), գործելով ՀՀ տնտեսական դատարանի 01.08.2007 թվականի վճռի և Երևանի քաղաքացիական դատարանի 28.06.2008 թվականի թիվ ԵՔԴ/0361/04/08 որոշման հիման վրա, վաճառում է, իսկ Նաիրա Իսահակյանը (այսուհետ՝ Գնորդ) ձեռք է բերում Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի նկատմամբ Արտաշես Դավթյանի համատեղ ընդհանուր սեփականության իրավունքի բաժինը: Նույն պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված գույքի արժեքը կազմել է 11.500.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 14-16):**

9) Արտաշես Դավթյանի և Նաիրա Իսահակյանի միջև 25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Արտաշես Դավթյանը և Նաիրա Իսահակյանը (այսուհետ՝ Կողմեր) պայմանավորվել են, որ նույն պայմանագրի կնքման պահից ի վեր նրանցից յուրաքանչյուրի ձեռք բերած անշարժ գույքի կամ անշարժ գույքի ձեռքբերման որևէ գործարքի նկատմամբ չի տարածվելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմի պահանջները, և Կողմերից յուրաքանչյուրը լինելու է իր ձեռքբերած գույքի միանձնյա սեփականատերը **(հատոր 1-ին, գ.թ. 104):**

10) 17.09.2008 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 260316 վկայականի համաձայն՝ Նաիրա Իսականյանը Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի սեփականատերն է **(հատոր 1-ին, գ.թ. 110):**

11) Երևանի քաղաքացիական դատարանի 08.08.2008 թվականի թիվ ԵՔԴ/0361/04/08 օրինական ուժի մեջ մտած վճռով ավարտվել է Արտաշես Դավթյանի սնանկության գործը **(հատոր 1-ին, գ.թ. 50-52):**

12) Գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ 25.07.2008 թվականին ամուսնական պայմանագիր կնքելու մասին Արտաշես Դավթյանը ծանուցել է Ստանիսլավ Հովակիմյանին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

1) Քննելով Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը, բացահայտելով ամուսնական պայմանագրի դերը և նշանակությունը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

ա. արդյո՞ք ամուսնական պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետի իրավանորմի իմաստով կարող է դիտարկվել որպես պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնություն և այդ հիմքով անվավեր ճանաչվել.

բ. արդյո՞ք ամուսնության ընթացքում ամուսինների միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա մի ամուսնու՝ մյուս ամուսնուց ձեռք բերված գույքի նկատմամբ կարող է գործել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված համատեղ սեփականության իրավական ռեժիմն ընդհանրապես, և մասնավորապես, այն դեպքում, երբ այդպիսի պայմանագրի կնքումն ամուսիններից մեկի համար կրել է պարտադիր բնույթ:

ա. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնական պայմանագիրն ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականություններն ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարող է ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործարքների անվավերության մասին քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսինը պարտավոր է ծանուցել իր պարտատիրոջը (պարտատերերին) ամուսնական պայմանագրի կնքման, դրա փոփոխման կամ լուծման մասին: Այդ պարտականությունը չկատարելու դեպքում ամուսինը պատասխանատու է իր պարտավորություններով՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ամուսնական պայմանագիրը գործարք է, որն ունի առանձնահատուկ սուբյեկտային կազմ և կարգավորման

առարկա: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել բացառապես ամուսնացող կամ արդեն իսկ ամուսնացած անձանց միջև՝ համապատասխանաբար ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ամուսնական պայմանագրի կարգավորման առարկան ամուսինների գույքային դրությունն է: Մասնավորապես, կնքելով նման պայմանագիր, ամուսինները կարող են փոփոխել համատեղ սեփականության օրենքով սահմանված ռեժիմը՝ նախատեսելով ամուսնության ընթացքում ձեռք բերվող գույքի նկատմամբ ամուսինների բաժնային կամ յուրաքանչյուրի անհատական սեփականության իրավունքը: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նաև որոշել միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտների ստեղծմանը մասնակցելու, նրանցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսերը հոգալու կարգը:

Վերը շարադրվածը վկայում է ամուսնական պայմանագրի կարգավորիչ գործառույթի մասին: Ամուսնական պայմանագիրը, սակայն, իրականացնում է ոչ միայն կարգավորիչ, այլև՝ ապահովող գործառույթ: Ամուսնական պայմանագրի ապահովող գործառույթը նախ և առաջ արտահայտվում է ամուսիններից յուրաքանչյուրի գույքային ինքնուրույնության երաշխավորմամբ, որը հատկապես կարևորվում է քաղաքացիական շրջանառությանը մասնակցելիս, ինչպես նաև ամուսնության լուծման դեպքում:

Միևնույն ժամանակ օրենսդիրը, ելնելով քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքից, նկատի ունենալով հասարակական հարաբերությունների բազմազանությունը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ամուսնության ընթացքում ամուսիններից յուրաքանչյուրի մոտ կարող են ծագել պարտավորական իրավահարաբերություններ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33-րդ հոդվածով նպատակ է հետապնդել պաշտպանելու պարտատերերի գույքային իրավունքներն ու օրինական շահերը՝ սահմանելով, որ ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման մասին պարտապան ամուսինը պարտավոր է ծանուցել իր պարտատիրոջը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պարտապան ամուսնու կողմից ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման (դրանց բովանդակության) մասին պարտատիրոջ ծանուցումը կարևոր երաշխիք է վերջինիս շահերի պաշտպանության առումով, քանի որ այդպիսի պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման հետևանքով կարող է արմատապես փոփոխվել ամուսինների գույքի իրավական ռեժիմը, արդյունքում նաև՝ պարտապան ամուսնու գույքային դրությունը, որն իր հերթին կանդրադառնա պարտավորության կատարման ընթացքի վրա:

Պարտապան ամուսնու կողմից ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման մասին պարտատիրոջը չծանուցելու դեպքում նա պատասխանատվություն է կրում պարտատիրոջ առջև՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից, ինչը նշանակում է, որ շարունակում է գործել մինչև նման պայմանագրի կնքումը, փոփոխումը կամ լուծումն ամուսինների միջև գործող գույքային ռեժիմը:

Ինչպես արդեն նշվեց, ամուսնական պայմանագիրը գործարք է, հետևաբար օրենսդրի կողմից ամրագրվել է կանոն առ այն, որ ամուսնական պայմանագրի նկատմամբ գործում են գործարքների անվավերության մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պարտապան ամուսնու կողմից պարտատիրոջն ամուսնական պայմանագրի կնքման, փոփոխման կամ լուծման (դրանց բովանդակության) մասին չծանուցելու հանգամանքն ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչելու հիմք չէ, այլ հանգեցնում է այլ իրավական հետևանքների առաջացման, մասնավորապես՝ իրավունք է վերապահում պարտատիրոջը պահանջել պարտապան ամուսնուց կատարելու իր պարտավորությունները՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից:

Սույն գործով Դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի և 417-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառմամբ Արտաշես Դավթյանի և Նաիրա Իսահակյանի միջև 25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագիրն Արտաշես Դավթյանի մա-

սով առոչինչ ճանաչելով, նշել է. <<...Նաիրա Իսահակյանի և Արտաշես Դավթյանի միջև կնքված պայմանագրով վերջինս, ըստ էության, հակված է եղել խուսափել Ստանիսլավ Հովակիմյանի նկատմամբ պարտավորության կատարումից, ինչը Դատարանի գնահատմամբ հանգեցնում է նշված պայմանագրի՝ որպես պատասխանատվությունից խուսափելու վերաբերյալ համաձայնության առոչնչության, որից էլ հետևում է, որ Արտաշես Դավթյանը՝ որպես պարտապան պատասխանատու է իր գույքով, որը դրսևորվում է վիճելի գույքի 1/4 բաժնեմասում>>:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, արձանագրել է, որ Նաիրա Իսահակյանի և Արտաշես Դավթյանի միջև կնքված պայմանագրով վերջինս, ըստ էության, հակված է եղել խուսափել Ստանիսլավ Հովակիմյանի նկատմամբ պարտավորության կատարումից՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամուսնական պայմանագիրը կնքվել է վերջիններիս ամուսնության այն ընթացքում, երբ Արտաշես Դավթյանն ունեցել է դրամական պարտավորություններ, բացի այդ, պայմանագրից հետո վերջինս շարունակել է բնակվել և մինչ օրս էլ հաշվառված է տվյալ բնակարանում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Արտաշես Դավթյանը և Նաիրա Իսահակյանն ամուսիններ են, ամուսնացել են 03.04.1987 թվականին: 02.09.1998 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի թիվ 1-1747 պայմանագրով Արտաշես Դավթյանը սեփականության իրավունքով ձեռք է բերել Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանը, որի համար տրվել է 22.09.1998 թվականի թիվ 022190 սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի թիվ 1-15/2005 քրեական գործով 14.11.2005 թվականին կայացված օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ **Արտաշես Դավթյանը** և Բորիս Առաքելյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դատավճռով **մասնակիորեն՝ 44.000.000 ՀՀ դրամի չափով, բավարարվել է Ստանիսլավ Հովակիմյանի գումարի բռնագանձման մասին քաղաքացիական հայցն ընդդեմ Արտաշես Դավթյանի** և Բորիս Առաքելյանի և **վճռվել է Արտաշես Դավթյանից** և Բորիս Առաքելյանից **հօգուտ Ստանիսլավ Հովակիմյանի բռնագանձել 44.000.000 ՀՀ դրամ՝ դրան հաշվեգրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները**:

ՀՀ տնտեսական դատարանի 01.08.2007 թվականի թիվ ՏՄ-903 օրինական ուժի մեջ մտած վճռով Արտաշես Դավթյանը ճանաչվել է սնանկ: Նաիրա Իսահակյանը, դիմելով Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարչին, հայտնել է, որ ինքը Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի համասեփականատերն է և խնդրել է, որ նշված գույքի նկատմամբ համապատասխան գործողություններ ձեռնարկելիս հաշվի առնվի իր՝ գույքի ձեռքբերման նախապատվության իրավունքը:

Երևանի քաղաքացիական դատարանի թիվ ԵՔԴ/0361/04/08 քաղաքացիական գործով 28.06.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ թույլատրվել է Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանին պարտապանին պատկանող, Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի բաժնեմասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Նաիրա Իսահակյանին ոչ պակաս 11.500.000 ՀՀ դրամից՝ համաձայն <<Պարտեր>> ՍՊԸ-ի և <<Էսկո Կոնցեռն>> ՓԲԸ-ի կողմից տրված գնահատման ակտերի:

25.07.2008 թվականին կնքված թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանը Նաիրա Իսահակյանին վաճառել է Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի նկատմամբ Արտաշես Դավթյանի համատեղ սեփականության իրավունքի բաժինը: Նշված պայմանագրի հիման վրա վիճելի բնակարանի նկատմամբ 17.09.2008 թվականին կատարվել է Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Արտաշես Դավթյանի և Նաիրա Իսահակյանի միջև **25.07.2008 թվականին կնքված**

ամուսնական պայմանագրով Արտաշես Դավթյանը և Նաիրա Իսահակյանը պայմանավորվել են, որ նույն պայմանագրի կնքման պահից ի վեր նրանցից յուրաքանչյուրի ձեռք բերած անշարժ գույքի կամ անշարժ գույքի ձեռքբերման որևէ գործարքի նկատմամբ չեն տարածվելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմի պահանջները, և կողմերից յուրաքանչյուրը լինելու է իր ձեռք բերած գույքի միանձնյա սեփականատերը:

Սույն գործով հայցվորը, որպես գործարքների առոչնչության իրավական հիմք, վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը և 417-րդ հոդվածի 4-րդ կետը:

Վերը նշված իրավական վերլուծությունների հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ 1-15/2005 քրեական գործով 14.11.2005 թվականին կայացված օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա Արտաշես Դավթյանի և Ստանիսլավ Հովակիմյանի միջև ծագել են պարտավորական իրավահարաբերություններ: Միաժամանակ նկատի ունենալով, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց պարտապան ամուսնու՝ Արտաշես Դավթյանի կողմից իր պարտատիրոջ՝ Ստանիսլավ Հովակիմյանին, ամուսնական պայմանագրի կնքման մասին ծանուցելու մասին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արտաշես Դավթյանը պատասխանատվություն է կրում պարտատիրոջ՝ Ստանիսլավ Հովակիմյանի առջև՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից: Այսինքն՝ ամուսնական պայմանագրի դրույթները, որոնցով փոփոխվել է ամուսինների գույքային ռեժիմը, կիրառելի չեն Ստանիսլավ Հովակիմյանի և Արտաշես Դավթյանի միջև ծագած պարտավորական իրավահարաբերությունների նկատմամբ և չեն առաջացնում որևէ իրավական հետևանք (ամուսնական պայմանագիրն անվավեր (առոչինչ) ճանաչելու), բացառությամբ այն հետևանքի, որն իրավունք է վերապահում պարտատիրոջը պահանջել պարտապան ամուսնուց կատարելու իր պարտավորություններն անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից:

Միաժամանակ անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման հիմքով 25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագիրն առոչինչ ճանաչելուն՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարող է ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործարքների անվավերության մասին քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3Հ03-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ **պարտավորության խախտում է համարվում** այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար **պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնությունն առոչինչ է:**

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք են պայմանագրերը, **վնաս պատճառելը (դելիկտային պարտավորություններ)** և օրենքով նախատեսված դեպքերում ծագած այլ հիմքերը: Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով պարտավորությունը պատշաճ կատարելու պարտապանի պարտականությունը, միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանել է, որ համաձայնությունը, որը վկայում է պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար **պատասխանատվության վերացման կամ սահմանափակման մասին, առոչինչ է:**

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով պարտավորական իրավահարաբերությունների բնույթը, դրա սուբյեկտային կազմը, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը կարգավորում է անմիջականորեն պարտապանի և պարտատիրոջ փոխհարաբերությունները: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված դրույթով օրենսդիրն ըստ էության ամրագրել է հստակ իրավական հետևանք նախապես կնքված այնպիսի համաձայնության վերաբերյալ, որը վերացնում կամ սահմանափակում է **պարտապանի և պարտատիրոջ** միջև արդեն իսկ ծագած պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը: Օրենսդիրը նման համաձայնությունը կնքման պահից ճանաչում է առոչինչ:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով **նախատեսված համաձայնությունը կարող է կնքվել բացառապես պարտավորության կողմերի՝ պարտապանի և պարտատիրոջ միջև, այլ ոչ թե նրանցից յուրաքանչյուրի և երրորդ անձի միջև:**

Սույն գործով 14.11.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա պարտավորական իրավահարաբերությունները ծագել են պարտապան Արտաշես Դավթյանի և պարտատեր Ստանիսլավ Հովակիմյանի միջև:

25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագրով Արտաշես Դավթյանը և Նաիրա Իսահակյանը կարգավորել են ամուսնության ընթացքում իրենց գույքային դրությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագրով, ըստ էության,

ա. համաձայնություն է կնքվել ամուսինների միջև, որոնցից միայն մեկն է պարտավորական իրավահարաբերությունների սուբյեկտ՝ պարտապան ամուսին Արտաշես Դավթյանը, և

բ. համաձայնությունը կնքվել է ամուսինների գույքային իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որն իր հերթին կարգավորում է նրանց միջև առկա ամուսնաընտանեկան իրավահարաբերությունները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արտաշես Դավթյանի և Նաիրա Իսահակյանի միջև 25.07.2008 թվականին կնքված ամուսնական պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417–րդ հոդվածի 4–րդ կետի հիմքով պարտավորության կողմերի միջև նախապես կնքված պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը վերացնող կամ սահմանափակող համաձայնություն չէ, որպիսի պայմաններում ամուսնական պայմանագիրն այդ հիմքով չի կարող առոչինչ ճանաչվել, մինչդեռ ստորադաս դատարանները, անտեսելով վերոգրյալը, կողմերի հարաբերությունների սխալ իրավական գնահատման արդյունքում սխալ եզրահանգման են եկել նաև ամուսնական պայմանագրի՝ մասնակի առոչինչ լինելու վերաբերյալ:

բ. Երկրորդ հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26–րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում՝ ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201–րդ հոդվածի 4–րդ կետի համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը *(տե՛ս, Ռաֆայել Աբազյանը և Անժիկ Երիցյանն ընդդեմ Ռոբեն Աբազյանի և <<Կենտրոն>> նոտարական գործարքի նոտարի թիվ 3–415(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):*

Վերը նշված հոդվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսին–

ներից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը *(տե՛ս, Ռուզանա Ծատուրյանն ընդդեմ Գևորգ Սաղումյանի և այլոց թիվ ԵԱՔԴ/2304/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2006 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումներն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսանալու և այդ հարցում առկա բացառությունների վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ և իրավական դիրքորոշում արտահայտել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք ամուսինների միջև առուվաճառքի իրավահարաբերությունների պարագայում կարող է գործել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, **կամքի ինքնավարության** և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, **պայմանագրի ազատության**, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, **քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության,** խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով** և ի շահ իրենց: **Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման**:

Վկայակոչված սկզբունքների հռչակումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ: Ամրագրելով քաղաքացիական իրավահարաբերությունների հիմնարար, ելակետային դրույթները՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել առավելագույնս երաշխավորելու քաղաքացիական իրավահարաբերությունների բնականոն ընթացքը և շարունակական զարգացումը՝ միաժամանակ երաշխավորելով նաև այդ հարաբերությունների կայունությունը, խթանելով շուկայական տնտեսության ամրապնդումը:

Վերը նշված սկզբունքների դրսևորումներից է այն, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցները սեփական հայեցողությամբ են ընտրում միմյանց, ինչպես նաև ընտրում այն իրավահարաբերության տեսակը, որը ցանկանում են ծավալել միմյանց հետ փոխհարաբերություններում: Ընդ որում, նրանք կարող են կատարել օրենքով չարգելված ցանկացած գործողություն, ինչպես նաև կնքել ցանկացած գործարք:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթները, արձանագրում է, որ գործող իրավակարգավորումը որևէ արգելք չի նախատեսում ամուսինների միջև առուվաճառքի իրավահարաբերությունների ծագման առումով: Հետևաբար ամուսինները, որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցներ, ղեկավարվելով քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներով, կարող են ազատորեն միմյանց միջև առաջացնել առուվաճառքի հարաբերություններ համապատասխան գործարքի կնքմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ առուվաճառքի պայմանագիրն այն իրավական միջոցն է, որն ապահովում է ապրանքադրամական փոխանակության իրականացումը: Նշված պայմանագիրը կնքվում է գույքը սեփականության իրավունքով փոխանցելու նպատակով, ընդ որում՝ գույքը փոխանցվում է դրամական հատուցմամբ: Առուվաճառքի պայմանագրի առանձնահատկությունն այն է, որ վաճառողը, վաճառե-

լով իրեն սեփականության իրավունքով պատկանող որևէ ապրանք, իսկ գնորդը, դրամական հատուցմամբ գնելով այն, երկուստեք դադարեցնում են իրենց սեփականության իրավունքը համապատասխանաբար ապրանքի և դրամական միջոցների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով առուվաճառքի իրավահարաբերությունների՝ վերը նշված առանձնահատկությունը, գտնում է, որ այն դեպքում, երբ նման հարաբերություններ ծավալվում են ամուսինների միջև, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը գործել չի կարող: Հակառակ պարագայում խաթարվում է քաղաքացիական շրջանառության և մասնավորապես՝ առուվաճառքի բուն էությունը: Այսպես, գույքը վաճառող ամուսինը, վաճառելով իր գույքը և ստանալով դրա դիմաց փոխհատուցում և միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա դառնալով վաճառված գույքի համասեփականատեր, ըստ էության, կշարունակի մնալ իր իսկ կողմից օտարված գույքի սեփականատեր, և, ընդհակառակը, գույքը գնած ամուսինը, դառնալով առուվաճառքի առարկայի սեփականատեր, միաժամանակ կշարունակի մնալ իր իսկ կողմից վճարված դրամական միջոցների սեփականատեր՝ նկատի ունենալով, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ դրամը ևս գույք է և կարող է ներառվել ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում *(տե՛ս, Սամվել Մելիքյանն ընդդեմ Առլեթ Ավաքյանի թիվ ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):* Մինչդեռ նման մոտեցումն առուվաճառքի իրավահարաբերություններում անթույլատրելի է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քաղաքացիական օրենսդրությունը, հիմնվելով կողմերի կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության սկզբունքների վրա, այդուհանդերձ, որոշակի իրավահարաբերությունների շրջանակներում նախատեսել է պարտադիր կարգով պայմանագիր կնքելու պարտականություն: Պարտադիր կարգով պայմանագրի կնքումը կախված չէ կողմի կամ կողմերի ազատ կամահայտնությունից: Դրա կնքումը պարտադիր է կամ մեկ կամ երկու կողմի համար: Պարտադիր կարգով պայմանագիր կնքելու պարտականությունը կարող է անմիջականորեն բխել օրենքից:

Վերը նշվածը հատկապես դրսևորվում է սնանկության վարույթի շրջանակներում: Մասնավորապես՝ <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կառավարիչը նույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը:

<<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքը թույլատրվում է միայն պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելուց հետո, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

<<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կառավարիչը մտադիր է պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացնել ուղղակի գործարքով, ապա նա հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում՝ ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ, և խորհրդի նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատարան: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը: Դատավորն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին:

<<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխ-

վում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան:

<<Մնանկության մասին>> ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելուց հետո կառավարիչը ձեռնամուխ է լինում վերջինիս գույքի հարկադիր վաճառքին: Ընդ որում, վաճառքը կարող է իրականացվել կամ հրապարակային սակարկությունների միջոցով, կամ ուղղակի եղանակով: Այդպիսի վաճառքի արդյունքում ստացված միջոցները սնանկության վարույթի շրջանակներում բաշխվում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան:

Վերը շարադրվածից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ամուսիններից մեկը սնանկ է ճանաչվել, և նրա լուծարման վարույթի շրջանակներում կառավարիչը հարկադիր կարգով իրականացնում է վերջինիս պատկանող գույքի վաճառք, այդ կապակցությամբ կնքվող պայմանագրերը չեն կարող լինել սնանկ ճանաչված ամուսնու ազատ կամահայտնության արդյունք և վերջինիս համար կրում են պարտադիր բնույթ: Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ այդպիսի պայմանագրերի նկատմամբ ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը գործել չի կարող, ինչը մի կողմից բխում է վերը շարադրված պատճառաբանություններից, մյուս կողմից պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկություններով: Այսպես, սնանկության վարույթի շրջանակներում պարտապան ամուսնու գույքը մյուս ամուսնուն վաճառելու դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը կիրառելու արդյունքում կստացվի, որ պարտապան ամուսինը ձեռք է բերում որոշակի գույք, որը ևս պետք է ընդգրկվի սնանկության վարույթի շրջանակներում վերջինիս գույքային զանգվածում և կրկին պետք է հարկադիր կարգով իրացվի, ինչը հակասում է այս գործընթացի տրամաբանությանը: Մյուս կողմից՝ ոչ պարտապան ամուսինն է համատեղ սեփականության իրավունք ձեռք բերում պարտապան ամուսնու գույքի հարկադիր վաճառքից ստացված դրամական միջոցների նկատմամբ և կարող է ներկայացնել որոշակի հավակնություններ, ինչն էլ կարող է իր հերթին հանգեցնել պարտատերերի իրավունքների խախտման: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության վարույթի բնականոն ընթացքն ապահովելու նկատառումով պետք է բացառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմի կիրառումն այն դեպքում, երբ սնանկ ճանաչված ամուսնուն սեփականության իրավունքով պարտականող գույքը հարկադիր կարգով վաճառվում է մյուս ամուսնուն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանի և Նաիրա Իսահակյանի միջև 25.07.2008 թվականին կնքված թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Արման Սարգսյանը վաճառել, իսկ Նաիրա Իսահակյանը ձեռք է բերել Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի նկատմամբ Արտաշես Դավթյանի համատեղ սեփականության իրավունքի բաժինը:

Սույն գործով Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով, պատճառաբանել է, որ առուվաճառքի արդյունքում Նաիրա Իսահակյանը ձեռք է բերել համատեղ սեփականություն հանդիսացող գույքի՝ Արտաշես Դավթյանի 1/2 բաժնեմասը, ըստ որի նույնպես հաշվի առնելով ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը՝ Նաիրա Իսահակյանի կողմից ձեռք բերված գույքի 1/2 բաժնեմասի 1/4 բաժնեմասը համարվում է Արտաշես Դավթյանի սեփականությունը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, համաձայնել է Դատարանի վերը նշված եզրահանգմանը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործով հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտաշես Դավթյանն ամուսնական պայմանագրի մասին չի ծանուցել իր պարտատիրոջը՝ Ստանիսլավ Հովակիմյանին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պայմանագրի դրույթները ՀՀ ընտանեկան օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կիրառելի չեն վերջիններիս հարաբերություններում: Միաժամանակ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ռեժիմի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 25.07.2008 թվականի պայմանագրով ամուսիններ Արտաշես Դավթյանի և Նաիրա Իսահակյանի միջև ծագել են առուվաճառքի իրավահարաբերություններ, մասնավորապես՝ Արտաշես Դավթյանը դրամական հատուցման դիմաց օտարել, իսկ Նաիրա Իսահակյանը ձեռք է բերել Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի նկատմամբ Արտաշես Դավթյանի համատեղ սեփականության իրավունքի բաժինը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված պայմանագրի կնքումն Արտաշես Դավթյանի համար կրել է պարտադիր բնույթ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջինիս պատկանող գույքը հարկադիր կարգով օտարվել է սնանկության վարույթի շրջանակներում՝ դատարանի համապատասխան որոշման և սնանկության կառավարչի կողմից կնքված պայմանագրի հիման վրա:

Ամուսինների միջև առուվաճառքի հարաբերությունների դեպքում, և մասնավորապես, սնանկության վարույթի շրջանակներում նման իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ռեժիմի կիրառելիության վերաբերյալ վերը նշված դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արտաշես Դավթյանը նշված առուվաճառքի պայմանագրի կնքմամբ դադարեցրել է իր համատեղ սեփականության իրավունքը վիճելի բնակարանի նկատմամբ և նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ռեժիմն իրավահարաբերության նման տեսակում կիրառելի չէ, վերջինս չէր կարող 1/2 բաժնեմասով սեփականության իրավունք ձեռք բերել իր իսկ կողմից օտարված գույքի նկատմամբ՝ մնալով այդ գույքի 1/4 մասի սեփականատեր: Մինչդեռ ստորադաս դատարաններն առուվաճառքի ինստիտուտի էության սխալ բացահայտման և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի սխալ մեկնաբանության արդյունքում սխալ եզրահանգման են եկել սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ, ինչն ազդել է նաև գործի ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքն ամբողջությամբ ենթակա է բավարարման:

4.2 Քննելով Ստանիսլավ Հովակիմյանի վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14–րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քննելով Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռում նշել է. <<Դատարանը կրկնում է, որ 6–րդ հոդվածի 1–ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է <<դատարան դիմելու իրավունք>>–ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6–րդ հոդվածի 1–ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6–րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում հավանաբար կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6–րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես <<դատավարության>> բաղկացուցիչ մաս *(տե՛ս, նաև Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի որոշումը՝ կետ 34)*>>:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերաբերվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը:

Միևնույն ժամանակ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում նաև այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, և կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի: Ավելին, Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որն ի թիվս այլոց, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից է **իրավական որոշակիության սկզբունքը**, որն inter alia պահանջում է, որպեսզի դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի *(տե՛ս, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

<<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 77–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ եթե կառավարիչը մտադիր է պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացնել ուղղակի գործարքով, ապա նա հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում՝ ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի

որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ, և խորհրդի նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատարան: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը: Դատավորն առանց դատական նիստ հրավիրելու **որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին:**

<<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի վկայակոչված հոդվածով, օրենսդիրը, նախատեսելով առուվաճառքի պայմանագրի պարտադիր կնքման դեպք, այդպիսի պայմանագրի կնքումը բացառապես պայմանավորել է դատարանի կողմից պարտապանի գույքի հարկադիր վաճառքը թույլատրելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին որոշման կայացման հանգամանքով: Ընդ որում, նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի այդպիսի որոշումը պետք է դրույթներ բովանդակի օտարման ենթակա գույքի, այսինքն՝ պայմանագրի առարկայի, դրա վաճառքի գնի և հնարավոր գնորդի վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է դատարանի որոշման հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագիր, դատարանները պարտավոր են ղեկավարվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափության կանխավարկածով՝ բավարարվելով միայն պայմանագրում և դատական շարադրված դրույթների՝ առուվաճառքի առարկայի և գնի վերաբերյալ, համապատասխանության ստուգումով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտաշես Դավթյանը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ: Սնանկության վարույթի շրջանակներում 28.06.2008 թվականին Երևանի քաղաքացիական դատարանի թիվ ԵՔԴ/0361/04/08 **օրինական ուժի մեջ մտած որոշման** հիման վրա թույլատրվել է Արտաշես Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանին պարտապանին պատկանող՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի բաժնեմասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Նաիրա Իսահակյանին ոչ պակաս 11.500.000 ՀՀ դրամից՝ համաձայն <<Պարտեր>> ՍՊԸ-ի և <<Էսկո Կոնցեռն>> ՓԲԸ-ի կողմից տրված գնահատման ակտերի:

Ի կատարումն նշված որոշման՝ այդ որոշման եզրափակիչ մասում շարադրված առուվաճառքի առարկայի և գնի վերաբերյալ պայմաններին համապատասխան՝ 25.07.2008 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5328 պայմանագիրը, որի հիման վրա 17.09.2008 թվականին Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի նկատմամբ գրանցվել է Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Կոնվեցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Հաշվի առնելով վերը նշված իրավական վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նաիրա Իսահակյանի՝ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքում ընկած է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որպիսի պայմաններում վերջինս ունեցել է բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այդ դատական ակտի իրավաչափ լինելուն, որն իր հերթին ուղղված է եղել նրա համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, այն է՝ վիճելի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ծագմանը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 28.06.2008 թվականի թիվ ԵՔԴ/0361/04/08 օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում 25.07.2008 թվականի թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի անվավերության վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկներն ըստ էության առարկայազուրկ են՝ նկատի ունենալով, որ նշված պայմանագրի կնքումն ուղղված է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարմանը, հակառակ պարագայում՝ կասկածի տակ կդրվի օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտը, ինչն իր հերթին կհանգեցնի իրավական որոշակիության սկզբունքի խախտման:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ստանիսլավ Հովակիմյանի հայցը մասնակիորեն բավարարելով՝ ստորադաս դատարանների կողմից անտեսվել է Երևանի քաղաքացիական դատարանի թիվ ԵՔԴ/0361/04/08 քաղաքացիական գործով 28.06.2008 թվականի **օրինական ուժի մեջ մտած դատական ակտը**, որի հետևանքով խախտվել է նաև Նաիրա Իսահակյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ստանիսլավ Հովակիմյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Այսպիսով, Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավա-

րարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ստանիսլավ Հովակիմյանի կողմից վճռաբեկ բողոքի համար վճարվել է օրենքով սահմանված 40.000 ՀՀ դրամ պետական տուրքը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.07.2014 թվականի <<Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին>> որոշմամբ բավարարվել է Նաիրա Իսահակյանի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ, և որոշվել է այդ հարցին անդրադառնալ գործի ըստ էության քննության ժամանակ:

Սույն գործով նկատի ունենալով, որ Ստանիսլավ Հովակիմյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքը՝ բավարարման, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նաիրա Իսահակյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի չվճարված և հետաձգված պետական տուրքի գումարը՝ 40.000 ՀՀ դրամը, հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման Ստանիսլավ Հովակիմյանից: Միաժամանակ Ստանիսլավ Հովակիմյանից հօգուտ Նաիրա Իսահակյանի ենթակա է բռնագանձման վերջինիս կողմից վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ստանիսլավ Հովակիմյանի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ստանիսլավ Հովակիմյանի հայցը՝ 25.07.2008 թվականի թիվ 5327 ամուսնական և 25.07.2008 թվականի թիվ 5328 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ առոչինչ գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու, այն է՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի թիվ 12 շենքի 45-րդ բնակարանի 1/2 բաժնեմասի նկատմամբ Նաիրա Իսահակյանի սեփականության իրավունքը դադարեցնելու, նշված բաժնեմասի նկատմամբ Արտաշես Դավթյանի սեփականության իրավունքը վերականգնելու պահանջների մասով, մերժել:

2. Ստանիսլավ Հովակիմյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես Նաիրա Իսահակյանի վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.07.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ստանիսլավ Հովակիմյանից հօգուտ Նաիրա Իսահակյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0274/02/14

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0274/02/14**
2015թ.

Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոբերտ Խանդանյանի ներկայացուցիչ Վանյա Բալասանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.11.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռոբերտ Խանդանյանի ընդդեմ «Դավիթ Հովհաննիսյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ Դավիթ Հովհաննիսյանի՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Դավիթ Հովհաննիսյանի ընդդեմ Ռոբերտ Խանդանյանի՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Խանդանյանը պահանջել է Ընկերությանը վտարել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մ. Խորենացի փողոցի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքից, ինչպես նաև Ընկերությունից բռնագանձել նախապես վճարված պետական տուրքը և փաստաբանի վարձատրության գումարը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Դավիթ Հովհաննիսյանը պահանջել է, Երևանի Մ. Խորենացի փողոցի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել իր 1/2 բաժինը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.07.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.11.2014 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Դավիթ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 30.07.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Խանդանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 8-րդ և 31-րդ հոդվածները, «Սեփականության իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ, 203-րդ և 274-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ, 205-րդ, 208-րդ, 210-րդ և 213-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վիճելի անշարժ գույքը, հանդիսանալով Դավիթ Հովհաննիսյանի և Ռոբերտ Խանդանյանի ընդհանուր բաժնային սեփականությունը, պետք է տնօրինվի փոխադարձ համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատարանի կողմից սահմանված կարգով: Սակայն վիճելի անշարժ գույքն ապօրինի կերպով տիրապետում է Ընկերությունը, և տիրապետումը հիմնված չէ ոչ օրենքի, ոչ էլ պայմանագրի վրա: Ավելին, վիճելի անշարժ գույքն օգտագործվում է Ընկերության կողմից առևտրային նպատակով՝ առանց Ռոբերտ Խանդանյանի համաձայնության:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը և Ընկերության տնօրեն Դավիթ Հովհաննիսյանը քաղաքացիաիրավական հարաբերություններում տարբեր սուբյեկտներ են, և վիճելի անշարժ գույքն ապօրինի տիրապետում է Ընկերությունը, ոչ թե՝ Դավիթ Հովհաննիսյան ֆիզիկական անձը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն հայցվորը, պատասխանողը և երրորդ անձինք: Սույն քաղաքացիական գործով հակընդդեմ հայցով երրորդ անձինք առկա չեն: Հակընդդեմ հայցով վերաքննիչ բողոք կարող էր բերվել միայն ֆիզիկական անձ Դավիթ Հովհաննիսյանի կամ Ռոբերտ Խանդանյանի կողմից: Տվյալ դեպքում նշված անձանց կողմից վերաքննիչ բողոք չի ներկայացվել, ուստի հակընդդեմ հայցի մասով Դատարանի 30.07.2014 թվականի վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հակընդդեմ հայցին, նշել է, որ Դատարանը պետք է անդրադառնար նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանված՝ գույքից բաժինն առանձնացնելու համար նախատեսված մյուս եղանակների հնարավորության հարցի քննարկմանը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի կողմից վճռում հստակ նշվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառելի չլինելու հանգամանքը՝ հաշվի առնելով կողմերի շահերը և կամքը: Ավելին, Վերաքննիչ դատարանը, մատնանշելով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի թիվ ԵԿԴ/3249/02/09 որոշումը, հաշվի չի առել, որ այդ որոշմամբ, ըստ էության, խոսքը գնում է այն մասին, որ ստորադաս դատարանի կողմից հրապարակային սակարկությունների վերաբերյալ վճիռ պետք է կայացվի, եթե ապացուցված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերով նախատեսված հանգամանքները: Մինչդեռ սույն գործով ոչ միայն ապացուցված չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերով նախատեսված հանգամանքները, այլև կողմերից ոչ մեկը նշված կետերով նախատեսված պահանջ չի ներկայացրել, հետ-

ևաբար Դատարանն իրավացիորեն նշված կետերով սահմանված դեպքերը քննարկման առարկա չի դարձրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 30.07.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 04.05.1999 թվականին տրված թիվ 0143892 վկայականի համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի փողոցի թիվ 74 բնակելի տան նկատմամբ 1/2-ական բաժնեմասերով գրանցված է Դավիթ Հովհաննիսյանի և Ռոբերտ Խանդանյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 17-19):**

2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.11.2013 թվականի թիվ ԱՏ-18/11/2013-1-0272 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի փողոցի թիվ 74 հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված վարձակալության իրավունք առկա չէ **(հատոր 1-ին, գ.թ. 24):**

3) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչության կողմից 02.04.2014 թվականին տրված թիվ 1757 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 01.01.2002 թվականից Երևանի Մ. Խորենացի թիվ 74 հասցեում զբաղվում է հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 63):**

4) Երևանի քաղաքապետի 08.10.2012 թվականի թիվ 6783-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի փողոցի թիվ 74 հասցեում գտնվող Դավիթ Հովհաննիսյանի և Ռոբերտ Խանդանյանի սեփականությունը հանդիսացող բնակելի տան գործառնական նշանակությունն առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների՝ փոխվել է և սահմանվել որպես հասարակական նշանակության տարածք **(հատոր 2-րդ, գ.թ. 38):**

5) ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 10.06.2014 թվականի թիվ 14-0242Դ եզրակացության համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի փողոց թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքից հնարավոր չէ 1/2 բաժնեմասին համապատասխան բաժինն առանձնացնել **(հատոր 2-րդ, գ.թ. 120-126):**

6) Սույն գործով հակընդդեմ հայցով պահանջ է ներկայացվել վիճելի գույքից բնեղենով առանձնացնել Դավիթ Հովհաննիսյանի կողմից փաստացի օգտագործվող 1/2 բաժինը, իսկ Դատարանի 30.07.2014 թվականի վճռի դեմ 29.08.2014 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացվել Ընկերության տնօրեն Դավիթ Հովհաննիսյանի կողմից՝ պահանջելով բեկանել Դատարանի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել, իսկ հակընդդեմ հայցը բավարարել **(հատոր 2-րդ, գ.թ. 87-89, հատոր 3-րդ, գ.թ. 7-13):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու կանոնների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ և 274-րդ հոդվածների չկիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու գործերով դատարանն իրավունք ունի քննարկման առարկա դարձնելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված կանոնները, եթե ներկայացվել է միայն բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջ,

- արդյո՞ք ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ուրիշի ապօրինի տիրապետումից հետո պահանջել ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է դրա մասնակիցների միջև բաժանվել նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի համաձայն, բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն՝ մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնելու գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումներին, նախկինում կայացրած որոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև **բացակայում է** ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին **համաձայնություն:** Միաժամանակ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրեն-

քով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց **համաձայնությամբ,** քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի **կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության** սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն՝ մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա **համաձայնությամբ,** բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի *(տե՛ս, Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):*

Ջարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Նելլի Հարությունյանն ընդդեմ Աղաջան Ավագյանի թիվ ԵԷԴ/1661/02/09 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ* նշել է, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի նկատմամբ դադարում է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումներին, նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կանոնը, համաձայն որի՝ «ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն **իրավունք ունի** վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ» չպետք է մեկնաբանել որպես նշված պայմանների առկայության դեպքում դատարանի՝ տվյալ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու հայեցողական լիազորություն: Հիշյալ նորմում «իրավունք ունի» ձևակերպումը անհրաժեշտ է մեկնաբանել միայն որպես մինչ նույն հոդվածի 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքներն ապացուցված լինելը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու արգելք, իսկ հիշյալ 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքների ապացուցված լինելու դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի համար ծագում է պարտականություն գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կայացնելու համար *(տե՛ս, Ազնիվ Մինասյանն ընդդեմ Օդարուհի Կիրակոսյանի և այլոց թիվ ԵԿԴ/3249/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գույքից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջն ինքնըստինքյան չի կարող ենթադրել դրա անհնարինության դեպքում բաժնի արժեքը վճարելու պահանջ, քանի որ բաժինը բնեղենով առանձնացնելու դեպքում սեփականատերը պահպանում է բաժնի նկատմամբ իր սեփականության իրավունքը, մինչդեռ բաժնի արժեքի փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնի նկատմամբ դադարում է: Այլ կերպ ասած՝ անձը, ցանկություն հայտնելով առանձնացնել իր բաժինն ընդհանուր սեփականությունից, պարտավորված չէ բաժինն առանձնացնելու անհնարինության դեպքում պահանջել դրա արժեքի վճարում, և հետևաբար նաև իր սեփականության իրավունքի դադարեցում:

Նշվածով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ գույքից բաժինն առանձնացնելու գործերով էական նշանակություն ունի պարզել այդպիսի պահանջ ներկայացրած անձի իրական կամքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Ռոբերտ Խանդանյանին և Դավիթ Հովհաննիսյանին: Սույն գործում առկա չէ վիճելի գույքը Ռոբերտ Խանդանյանի կողմից Ընկերության օգտագործմանը և տիրապետմանը տրամադրելու վերաբերյալ որևէ համաձայնություն կամ պայմանագիր: Հայցվոր Ռոբերտ Խանդանյանը, դիմելով Դատարան, պահանջել է Ընկերությանը վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մ. Խորենացու փողոցի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքից, իսկ հակընդդեմ հայցով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի, 2-րդ կետի և **3-րդ կետի 1-ին պարբերության** կարգավորումները՝ Դավիթ Հովհաննիսյանը պահանջել է 347քմ մակերեսով հողամասի վրա գտնվող 101,1քմ մակերեսով սննդի օբյեկտից և 21,8քմ մակերեսով շինությունից բաղկացած Երևանի Մ.Խորենացի փողոցի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքում առանձնացնել **իր կողմից փաստացի օգտագործվող** 1/2 բաժինը:

ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 10.06.2014 թվականի թիվ 14-0242Դ եզրակացության համաձայն՝ Երևան, Մ. Խորենացի փողոց թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքից հնարավոր չէ 1/2 բաժնեմասին համապատասխան բաժինն առանձնացնել:

Դատարանը, սկզբնական հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ Ռոբերտ Խանդանյանի և Դավիթ Հովհաննիսյանի անշարժ գույքի նկատմամբ գրանցված վարձակալության իրավունք առկա չէ, և առկա չեն այն իրավական հիմքերը (քաղաքացիաիրավական գործարք, ինչպես նաև դրանից բխող իրավունքների պետական գրանցում), որոնց պարագայում Ընկերությունը կհամարվեր Երևանի Մ. Խորենացի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքի օրինական տիրապետող: Ավելին, Ընկերությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհաստատվեր վերջինիս՝ Երևանի Մ. Խորենացի թիվ 74 հասցեում գտնվող անշարժ գույքի օրինական տիրապետող լինելու փաստական հանգամանքը:

Ինչ վերաբերում է Ընկերության և երրորդ անձ Դավիթ Հովհաննիսյանի դիրքորոշմանը, որ Երևանի քաղաքապետի 08.10.2012 թվականի թիվ 6783-Ա որոշմամբ Երևանի Մ. Խորենացի թիվ 74 հասցեում գտնվող բնակելի տան գործառնական նշանակությունը փոխվել է հասարակական նշանակության, ապա Դատարանը գտել է, որ դրանով չի կարող հիմնավորվել Ընկերության կողմից գույքն օրինական տիրապետելու հանգամանքը, քանի որ Երևանի քաղաքապետի նշված որոշումը՝ որպես վարչական ակտ, ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով (գործառնական նշանակության փոփոխություն): Նշված որոշման հասցեատերերը հանդիսացել են Ռոբերտ Խանդանյանը և Դավիթ Հովհաննիսյանը, սակայն դրանով Ընկերության համար գույքի տիրապետման իրավունք չի սահմանվել:

Հակընդդեմ հայցը մերժելիս Դատարանը պատճառաբանել է, որ դրանով պահանջ է ներկայացվել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել Դավիթ Հովհաննիսյանի 1/2 բաժինը, ինչը, սակայն, ըստ գործում առկա փորձագիտական եզրակացության, հնարավոր չէ: Միաժամանակ Դատարանը փաստել է, որ Ռոբերտ Խանդանյանի կողմից չի դրսևորվել կամահայտնություն՝ մյուսի բաժնեմասի գնման մասով, և հաշվի առնելով կողմերի շահերը և կամքը, Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի մյուս կետերը տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ չի կիրառել:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելով և Դատարանի վճիռը բեկանելով, պատճառաբանել է, որ բաժինն առանձնացնելու անհնարինության պայմաններում Դատարանը չի անդրադարձել բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-ից 6-րդ կետերով սահմանված մյուս ձևերին, ինչն էլ Վերաքննիչ դա-

տարանի համար հիմք է հանդիսացել Դատարանի վճիռն ամբողջությամբ բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Մինչդեռ վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը դրանք անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցի հիմքին և առարկային, նախկինում կայացրած որոշմամբ ձևավորել է այն դիրքորոշումը, որ հայցի առարկան այն նյութահիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ *(տե՛ս, օրինակ՝ Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):*

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն *Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշմամբ* արձանագրել է, որ հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը միևնույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութահիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն այն հանգամանքների փոփոխությունն է, որոնց վրա հիմնվում է այդ նյութահիրավական պահանջը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետ): ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Դատարանը չի անդրադարձել բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-ից 6-րդ կետերով սահմանված մյուս ձևերին, մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հակընդդեմ հայցով գույքի համասեփականատեր Դավիթ Հովհաննիսյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ից 3-րդ կետերի (3-րդ կետի 1-ին պարբերության) հիմքով պահանջելով բնեղենով առանձնացնել իր 1/2 բաժինը, պահանջ չի ներկայացրել իր բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության դեպքում գույքի բաժինն առանձնացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-ից (3-րդ կետի 2-րդ պարբերությունից) 6-րդ կետերում նշված տարբերակներով: Այսինքն՝ հակընդդեմ հայցով հայցվորի կամքն ուղղված է եղել ընդհանուր սեփականության մեջ իր բաժինը բնեղենով առանձնացնելուն՝ պահպանելով սեփականության իրավունքը՝ առանց ցանկություն հայտնելու փոխհատուցմամբ դադարեցնել այն: Հետևաբար գործով գույքի բաժինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությունից մինչև 6-րդ կետերում սահմանված ձևով պահանջ ներկայացված չլինելու պայմաններում դրանցից որևէ մեկով գույքը բաժանելու հարցի քննարկմամբ Դատարանը դուրս կգար հակընդդեմ հայցի շրջանակներից: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն իրավաչափ կլիներ, եթե հակընդդեմ հայցվորը պահանջ ներկայացրած լիներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի հիմքով գույքը բաժանելու մասին, սակայն գույքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությունից մինչև 6-րդ կետերի հիմքով բաժանելու պահանջի բացակայության պայմաններում, փաստելով, որ գույքի բաժինը բնեղենով առանձնացնել հնարավոր չէ, Դատարանն իրավաչափորեն մերժել է գույքը բնեղենով առանձնացնելու պահանջը:

Ինչ վերաբերում է Դատարանի վճիռը հակընդդեմ հայցի մասով օրինական ուժ ստացած լինելու և հետևաբար Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննության կանոնները խախտելու մասին բողոք բերած անձի պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դրանք անհիմն են, քանի որ թեև հակընդդեմ հայցը ներկայացվել է ֆիզիկական անձ Դավիթ Հովհաննիսյանի կողմից, սակայն դրա բավարարման կամ մերժման հարցում հնարավոր չէ բացառել գործին մասնակցող անձ «Դավիթ Հովհաննիսյան» ՍՊԸ-ի շահագրգռվածությունը, մասնավորապես՝ վեճի բնույթից բխում է, որ Ընկերությունը ցանկացել է իր գործունեությունը շարունակել միայն ֆիզիկական անձ Դավիթ Հովհաննիսյանի բնեղենով առանձնացված գույքի օգտագործմամբ: Հետևաբար վերաքննիչ բողոքը բերվել է գործին մասնակցող շահագրգիռ անձի կողմից, այն ենթակա էր քննարկման Վերաքննիչ դատարանում, սակայն գործի վերոշարադրյալ հանգամանքներում, մասնավորապես՝ գույքը բնեղենով առանձնացնելու անհնարինության պայմաններում, Ընկերության բողոքը ենթակա էր մերժման:

Անդրադառնալով Դատարանի կողմից հայցը բավարարելու հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գույքի ապօրինի տիրապետումն առկա է ցանկացած պարագայում, երբ տիրապետումը հիմնված չէ օրենքի կամ պայմանագրի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով: Գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բաժնային սեփականության իրավունքով մեկից ավելի անձանց պատկանող գույքի տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը պետք է իրականացվեն բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում գույքը կարող է տիրապետվել և օգտագործվել դատարանի սահմանված կարգով:

Վերոգրյալով է պայմանավորված ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից իր տիրապետության ներքո գտնվող գույքի նկատմամբ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ընդդեմ այն անձանց, որոնց գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը պատշաճ իրականացնելու իր օգտագործման, տիրապետման, տնօրինման իրավազորությունները: Սեփականատերն իրավասու է պահանջել վերացնելու իր սեփականատիրական իրավունքները լիարժեք իրականացնելու հետ կապված սահմանափակումները, ընդ որում, սահմանափակումները կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, երբ ապօրինի գործողությունների միջոցով խոչընդոտում են սեփականատիրոջը օգտագործել, տիրապետել և տնօրինել իր գույքը:

Վերը նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն այլ անձանց կողմից ապօրինի տիրապետվելու պայմաններում բաժնային սեփականության մասնակիցներից որևէ մեկը զրկված չէ իր գույքն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու հնարավորությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի փողոցի թիվ 74 բնակելի տան նկատմամբ 1/2-ական բաժնեմասերով գրանցված է Դավիթ Հովհաննիսյանի և Ռոբերտ Խանդանյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը: Նշված հասցեում Ընկերությունը 01.01.2002 թվականից զբաղվում է հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ:

Գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր Ընկերության կողմից Մ. Խորենացի փողոց թիվ 74 հասցեի անշարժ գույքն օրենքի կամ պայմանագրի հիման վրա տիրապետելու հանգամանքը, ավելին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.11.2013 թվականի թիվ ԱՏ-18/11/2013-1-0272 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Մ. Խորենացի փողոց թիվ 74 հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված վարձակալության իրավունք առկա չէ:

Վերը նշված իրավական վերլուծությունները համադրելով սույն գործում առկա փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը իրավաչափ է համարում Դատարանի եզրահանգումներն առ այն, որ Ընկերության կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհաստատվեր վերջինիս կողմից վիճելի հասցեի անշարժ գույքն օրինական տիրապետելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ Երևանի քաղաքապետի վարչական ակտն ինքնին Ընկերության համար գույքն

օրինական տիրապետելու հիմք չէ, քանի որ դրանով Ընկերության համար գույքը տիրապետելու որևէ իրավունք սահմանված չէ:

Նման պայմաններում, հաշվի առնելով, որ գույքն Ընկերության կողմից տիրապետվում է սեփականատերերից առնվազն մեկի համաձայնության բացակայությամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սկզբնական հայցը բավարարելու մասով Դատարանի եզրահանգումները ևս հիմնավոր են, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերը շարադրված հանգամանքները, գործն անհիմն կերպով նոր քննության է ուղարկել նաև հայցի մասով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվել է միայն դատական նիստի վերաբերյալ պատշաճ ծանուցված չլինելու հիմքով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ Ռոբերտ Խանդանյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռոբերտ Խանդանյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման համապարտության կարգով Ընկերությունից և Դավիթ Հովհաննիսյանից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.11.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.07.2014 թվականի վճռին:

2. «Դավիթ Հովհաննիսյան» ՍՊԸ-ից և Դավիթ Հովհաննիսյանից համապարտության կարգով հօգուտ Ռոբերտ Խանդանյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում — Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԴԴ/0134/02/13**
2015թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0134/02/13
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինե Սիրեկանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ասյա Դավթյանի, Արմեն Բաղդասարյանի, Մարգարիտա Խաչատրյանի, Լիանա Բաղդասարյանի, Լուսինե Բաղդասարյանի ընդդեմ Կարինե Սիրեկանյանի՝ 26.02.2009 թվականին կնքված Երևանի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ բնակարանի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ գրավի պայմանագրի կանոնները կիրառելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Կարինե Սիրեկանյանի ընդդեմ Ասյա Դավթյանի, Արմեն Բաղդասարյանի, Մարգարիտա Խաչատրյանի, Լիանա Բաղդասարյանի, Լուսինե Բաղդասարյանի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումները վերացնելու՝ զբաղեցրած տարածքից վտարելու և որպես անհիմն հարստացում՝ խնայված գումարների բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ասյա Դավթյանը, Արմեն Բաղդասարյանը, Մարգարիտա Խաչատրյանը, Լիանա Բաղդասարյանը, Լուսինե Բաղդասարյանը պահանջել են Ասյա Դավթյանի, Մարգարիտա Խաչատրյանի, Լիանա Բաղդասարյանի, Լուսինե Բաղդասարյանի, Արմեն Բաղդասարյանի և Կարինե Սիրեկանյանի միջև 26.02.2009 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագիրը ճանաչել անվավեր և որպես անվավերության հետևանք՝ կիրառել գրավի պայմանագրի կանոնները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարինե Սիրեկանյանը խնդրել է զբա-

ղեցրած բնակարանից վտարել Ասյա Դավթյանին, Մարգարիտա Խաչատրյանին, Արմեն, Լիանա և Լուսինե Բաղդասարյաններին, և նրանցից որպես անհիմն հարստացում՝ բռնագանձել ամսական 250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ սկսած 26.02.2010 թվականից մինչև սույն գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնական կատարման պահը:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սմբատյան) (այսուհետ՝ Դատարան) 19.02.2014 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել մասնակիորեն՝ վճռվել է Ասյա Դավթյանին, Արմեն Բաղդասարյանին, Մարգարիտա Խաչատրյանին, Լիանա Բաղդասարյանին և Լուսինե Բաղդասարյանին վտարել Կարինե Սիրեկանյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ բնակարանից: Ասյա Դավթյանից հօգուտ Կարինե Սիրեկանյանի բռնագանձել ամսական 250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ սկսած 11.07.2011 թվականից մինչև վճռի փաստացի կատարումը, իսկ ՀՀ պետական բյուջե բռնագանձել բռնագանձվող գումարի երկու տոկոսը՝ որպես պետական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.05.2014 թվականի որոշմամբ Ասյա Դավթյանի, Արմեն Բաղդասարյանի, Մարգարիտա Խաչատրյանի, Լիանա Բաղդասարյանի, Լուսինե Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 19.02.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Սիրեկանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ և 306-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 562-րդ, 563-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը ճիշտ չի վերլուծել կողմերի միջև ծագած իրավահարաբերությունները, դրանց տվել է սխալ իրավական գնահատական, մասնավորապես՝ կողմերի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը գնահատել է որպես գրավի պայմանագիր՝ շինծու գործարք:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել ու գնահատել գործով ձեռք բերված ապացույցները և հաշվի չի առել, որ կողմերի միջև 26.02.2009 թվականին կնքված ու նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրով Ասյա Դավթյանը, Մարգարիտա Խաչատրյանը, Լիանա Բաղդասարյանը վաճառել են, իսկ Կարինե Սիրեկանյանը գնել է Երևանի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ հասցեում գտնվող բնակարանը՝ ընդհանուր 42,3քմ մակերեսով, որի արժեքը կազմում է 9.210.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, կատարելով <<շինծու գործարք>> հասկացության վերլուծությունը, հանգել է սխալ հետևության և հաշվի չի առել, որ կողմերը վիճելի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելիս գործել են ազատ կամահայտնության սկզբունքով, այսինքն՝ նրանց կամքը համապատասխանել է պայմանագրում շարադրվածին:

Վերաքննիչ դատարանը նաև անտեսել է, որ Կարինե Սիրեկանյանի կողմից կազմված առանց վերտառության գրությունը, հարևանների կողմից տրված հայտարարությունները, Ասյա Դավթյանի կողմից կատարված կոմունալ վճարումները նույնպես բավարար չեն գործարքի շինծու լինելը հաստատված համարելու համար:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ և 1095-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգքրի 52-րդ հոդվածը, անտեսել է, որ քրեական գործի քննությամբ հաստատվել է, որ կողմերի միջև գործել են նաև վարձակալության իրավահարաբերություններ, որպիսի պայմաններում Դատարանի կողմից ճիշտ է հաշվարկվել նաև անհիմն հարստացման հետևանքով վճարման ենթակա գումարը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.05.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.02.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 02.06.2000 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2578340 վկայականի համաձայն՝ Կենտրոն համայնքի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է Ասյա Դավթյանին, Մարգարիտա Խաչատրյանին, Լուսինե և Լիաննա Բաղդասարյաններին **(հատոր 1-ին, գ.թ. 13):**

2) 26.02.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Ասյա Դավթյանը, Մարգարիտա Խաչատրյանը, Լիանա (Լիաննա) Բաղդասարյանը, Լուսինե Բաղդասարյանը (այսուհետ՝ Վաճառողներ) վաճառում են, իսկ Կարինե Սիրեկանյանը (այսուհետ՝ Գնորդ) որպես սեփականություն ձեռք է բերում բնակարան՝ 42,3քմ ընդհանուր մակերեսով տարածք (այսուհետ՝ Օբյեկտ), որը գտնվում է Երևան քաղաքի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ հասցեում: Բնակարանի գինը կազմում է 9.210.000 ՀՀ դրամ և այն սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողներին: Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողները պարտավոր են հանձման-ընդունման ակտով Գնորդին փոխանցել պայմանագրի 1-ին կետում նշված Օբյեկտը պայմանագիրը ստորագրելու օրվանից 240 օրվա ընթացքում, իսկ պայմանագրի 3.2-րդ և 3.3-րդ կետերի համաձայն՝ Գնորդը պայմանագիրը կնքելու պահին վճարում է Վաճառողներին՝ Օբյեկտի վաճառքի գինն ամբողջությամբ: Պայմանագիրը նոտարական կարգով վավերացվել է **(հատոր 1-ին, գ.թ. 15):**

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 02.03.2009 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 257840 վկայականի համաձայն՝ Երևանի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Կարինե Սիրեկանյանին **(հատոր 2-րդ, գ.թ. 10):**

4) Կարինե Սիրեկանյանի կողմից ստորագրված գրության համաձայն՝ <<Ես՝ Կարինե Արտավազդի Սիրեկանյանս, պարտավորվում եմ ինձ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Նար-Դոսի թիվ 73ա շենքի 71-րդ հասցեում գտնվող բնակարանը 2009-2010 թվականների ընթացքում եթե ցանկություն ունենամ վաճառելու, ապա առաջնահերթությունը տալ Դավթյան Ասյային: Պարտավորագիրը գրված է իմ ձեռքով, որի համար ստորագրում եմ (ստորագրություն) Սիրեկանյան, անձնագիր՝ AF 0459886, 012, 28.11.2001 թվականին>>: Միաժամանակ տվյալ փաստաթղթում առկա է հետևյալ գրառումը՝ <<Արմեն Արշավիրի Բաղդասարյանից ստացել եմ 3.200 ԱՄՆ դոլար գումար>> **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

5) <<Կենտրոն>> վարչական շրջանի <<Կենտրոն-1>> համատիրության նախագահի

04.02.2012 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ասյա Դավթյանը բնակվում է <<Կենտրոն-1>> համատիրության Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ բնակարանում **(հատոր 1-ին, գ.թ. 8):**

6) Երևանի Նար-Դոսի թիվ 73ա շենքի բնակիչներ Մերի Պողոսյանի և Ստելլա Շողունցի կողմից 04.02.2012 թվականին տրված նույնաբովանդակ հայտարարությունների համաձայն՝ վերջիններս չեն իմացել, որ Ասյա Դավթյանը վաճառել է կամ ցանկանում է վաճառել բնակարանը: Միաժամանակ նշել են, որ Ասյա Դավթյանը 1981 թվականից մինչ օրս բնակվում է Նար-Դոսի թիվ 73ա շենքի 71-րդ բնակարանում **(հատոր 1-ին, գ.թ. 9-10):**

7) Աղբահանության վճարումների ընդունման 07.02.2012, 05.04.2012, 10.05.2012, 04.07.2012, 06.09.2012, 07.10.2012, 07.11.2012, 09.11.2012, 04.02.2013 թվականների անդորրագրերի համաձայն՝ Նար-Դոսի թիվ 73ա-71 հասցեի կենցաղային աղբի վճար վճարող է Ասյա Դավթյանը, իսկ Կենտրոն վարչական շրջանի <<Կենտրոն-1>> համատիրության պարտադիր նորմերի իրականացմանն ուղղված վճարների վճարման 2010, 2011, 2012 և 2013 թվականների անդորրագրերի համաձայն՝ պարտադիր վճարների վճարող է Ասյա Դավթյանը **(հատոր 1-ին, գ.թ. 22-50):**

8) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 16.08.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ ԵԱԴԴ/0010/01/12 որոշմամբ ճանաչվել է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող Կարինե Արտավազդի Սիրեկանյանի անմեղությունը և վերջինս արդարացվել է՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Միաժամանակ որոշմամբ նշվել է, որ <<քրեական գործով ձեռք չի բերվել որևէ այլ գրավոր ապացույց այն մասին, որ ամբաստանյալը տուժողին գումարը տրամադրել է տոկոսով և որ երբևէ տոկոսների դիմաց գումարներ է ստացել: (...) համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի՝ ամբաստանյալը բնակարանի դիմաց տուժողին վճարել է 9.210.000 ՀՀ դրամ, որը զգալիորեն գերազանցում է վերջինիս կողմից նշված 20.000 ԱՄՆ դոլարին: Այն, որ ամբաստանյալը տուժողից միանվագ ստացել է 3.200 ԱՄՆ դոլար և դրա վերաբերյալ տվել է ստացական, համապատասխանում է ամբաստանյալի կողմից նշված ժամանակահատվածի համար պայմանավորված բնակարանի վարձավճարի չափին, և որևէ այլ գրավոր ապացույց ամբաստանյալի կողմից տուժողից գումարներ ստանալու մասին գործում առկա չէ>> **(հատոր 1-ին, գ.թ. 75-81):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջների քննության առանձնահատկություններին այն պարագայում, երբ որպես շինծու գործարքով քողարկված իրավահարաբերություն վկայակոչվում է հիմնական պարտավորության կատարման ապահովմանն ուղղված լրացուցիչ պարտավորությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքն առոչինչ է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց *(տե՛ս, <<Միակրիստալ>> ՍՊԸ-ն ընդդեմ Գագիկ Բղդոյանի և մյուսների թիվ 3-623(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը նշված դիրքորոշումը, նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հայցապահանջով ապացուցման առարկան կազմում են հետևյալ փաստերը.

– օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.

– այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).

– գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը.

– վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.

– կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի ընդհանուր կանոնի համաձայն՝ նշված հանգամանքները պետք է ապացուցի այդ փաստերը վկայակոչող կողմը *(տե՛ս, Նունյա Առաքելյանն ընդդեմ Քնարիկ Մարտիրոսյանի և մյուսների թիվ ԵԱՔԴ/1299/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն դեպքերին, երբ որպես շինծու գործարքով քողարկված իրավահարաբերություն վկայակոչվում է հիմնական պարտավորության կատարման ապահովմանն ուղղված պարտավորությունը (օրինակ՝ գրավի, երաշխավորության, երաշխիքի և այլն):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ պարտավորությունների կատարման ապահովման միջոցները նպատակաուղղված են օժանդակելու իրենց նախատեսման համար հիմք ծառայած պարտավորության կատարմանը, այդ իսկ պատճառով էլ պարտավորությունների ապահովման միջոցներից որևէ մեկն ինքնուրույն գոյություն ունենալ չի կարող:

Վերը նշված առանձնահատկության հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ որպես շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառում շահագրգիռ անձը դատարանից պահանջել է կիրառել պարտավորության կատարման ապահովման միջոցներից որևէ մեկի կանոնները, վերջինս նախ և առաջ պարտավոր է ապացուցել հիմնական պարտավորության առկայության փաստը:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելու հիմքում դնելով այն հանգամանքը, որ հայցվորները չեն ներկայացրել որևէ հիմնավոր ապացույց, որ իրականում կողմերի միջև կնքվել է ոչ թե առուվաճառքի, այլ գրավի պայմանագիր, հաստատված է համարել, որ տվյալ դեպքում կողմերի միջև տեղի է ունեցել օրենքով նախատեսված կարգով բնակարանի առուվաճառքի գործարք:

Վերաքննիչ դատարանը վճռի բեկանման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Դատարանը չի անդրադարձել գործարքի շինծու լինելու հանգամանքի գնահատմանը, մասնավորապես՝ գործի քննությունը չի իրականացրել այնպիսի հարցադրումների շուրջ, ինչպիսիք են՝ արդյո՞ք կողմերի կամքն ուղղված է եղել 26.02.2009 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով բնակարանի գրավադրման գործարքը քողարկելուն, արդյո՞ք նշված գործարքն իրականում կնքվել է այն ստորագրած անձանց միջև, այն ստորագրած անձանց կամքը համապատասխանում է պայմանագրում շարադրվածին, թե՝ ոչ:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ Կարինե Սիրեկանյանի կողմից

առանց վերտառության գրության առկայությունը, վիճելի բնակարանում մինչ օրս Ասյա Դավթյանի բնակվելու և վճարումներ կատարելու փաստերն իրական հնարավորություն են ստեղծում հանգել Արմեն Բաղդասարյանի և Կարինե Սիրեկանյանի միջև առկա փոխառության հարաբերությունների և այդ կապակցությամբ բնակարանը գրավադրելու տրամաբանական հետևության:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 26.02.2009 թվականին Ասյա Դավթյանի, Մարգարիտա Խաչատրյանի, Լիանա (Լիաննա) Բաղդասարյանի, Լուսինե Բաղդասարյանի (Վաճառողներ) ու Կարինե Սիրեկանյանի (Գնորդ) միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Վաճառողները վաճառել են, իսկ Գնորդը, որպես սեփականություն, ձեռք է բերել բնակարան՝ 42,3քմ ընդհանուր մակերեսով, որը գտնվում է Երևան քաղաքի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ հասցեում: Պայմանագրի համաձայն՝ բնակարանի գինը կազմել է 9.210.000 ՀՀ դրամ, որը Գնորդը պայմանագիրը կնքելու պահին ամբողջությամբ վճարել է Վաճառողներին:

Հայցվորները նշված պայմանագիրը շինծու լինելու պահանջը հիմնավորել են այն փաստարկմամբ, որ կողմերից Արմեն Բաղդասարյանի և Կարինե Սիրեկանյանի միջև առկա են եղել փոխառության իրավահարաբերություններ և, որ վիճելի պայմանագրի կնքումն ըստ էության ուղղված է եղել այդ իրավահաբերությունների ապահովմանը՝ իրականում նպատակ ունենալով նշված պայմանագրի կնքմամբ առաջացնել գրավի հարաբերություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությու-

նը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով ***գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից:*** Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը ***վիճելի լինելու դեպքում*** դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը *(տե՛ս, Էդգար Մարկոսյանն և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը, սույն գործում առկա ապացույցները գնահատելով համակցության մեջ, արձանագրում է, որ որևէ կերպ չի հիմնավորվում հայցվոր Արմեն Բաղդասարյանի և պատասխանող Կարինե Սիրեկանյանի միջև փոխառության իրավահարաբերությունների առկայության փաստը: Մասնավորապես՝ սույն գործում առկա չէ որևէ ապացույց՝ ի հավաստումն նշված անձաց միջև փոխառության պայմանագրի կնքման (օրինակ՝ փոխառուի կողմից տրված ստացական կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար տալը հավաստող այլ փաստաթուղթ):

Անդրադառնալով Կարինե Սիրեկանյանի կողմից առանց վերտառության գրությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանում միայն <<Արմեն Արշավիրի Բաղդասարյանից ստացել եմ 3.200 ԱՄՆ դոլար գումար>> Կարինե Սիրեկանյանի կողմից գրառում կատարված լինելու հանգամանքը բավարար չէ հաստատված համարելու, որ կողմերի միջև գործել են փոխառության իրավահարաբերություններ՝ նկատի ունենալով, որ գրության մեջ առկա չէ որևէ նշում տվյալ գումարի փոխանցման հիմքի վերաբերյալ:

Նման պարագայում հերքվում է նաև հայցվորների փաստարկն առ այն, որ վիճելի պայմանագիրն ուղղված է եղել գրավի իրավահարաբերությունների քողարկմանը: Այսպես, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ գրավը, լինելով պարտավորության կատարման ապահովման միջոց, ըստ էության կոչված է ծառայելու գոյություն ունեցող հիմնական պարտավորությանը: Այսինքն՝ առանց հիմնական պարտավորության առկայության (սույն գործով՝ փոխառության), լրացուցիչ պարտավորությունը (գրավի պայմանագիր) գոյություն ունենալ չի կարող:

Ինչ վերաբերում է վիճելի բնակարանում մինչ օրս Ասյա Դավթյանի բնակվելու և վճռումներ կատարելու փաստերին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ փաստերը բավարար չեն վիճելի գործարքի շինծու լինելը հաստատված համարելու համար:

Անդրադառնալով նաև Կարինե Սիրեկանյանի կողմից առանց վերտառության գրությամբ վիճելի բնակարանն Ասյա Դավթյանին վաճառելու վերաբերյալ ստանձնած պարտավորությանը՝ Վճռաբեկ դատարանը նշված գրության բովանդակության համակողմանի վերլուծության և գնահատման արդյունքում արձանագրում է, որ Կարինե Սիրեկանյանը նշված գրությամբ հետվաճառք իրականացնելու իմպերատիվ պարտականություն չի ստանձնել, այլ բնակարանի հետվաճառք իրականացնելը բացառապես պայմանավորված է եղել նրա ցանկությամբ, ինչը քաղաքացիական շրջանառությունում առուվաճառքի իրավահարաբերությունների դեպքում ընդունված վարքագիծ է: Հետևաբար, նշված գրությամբ ևս չի հիմնավորում կողմերի միջև իրականում գրավի իրավահարաբերությունների առկայության փաստը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի սխալ մեկնաբանության և գործում առկա ապացույցների սխալ գնահատման արդյունքում, ոչ ճիշտ եզրահանգման է եկել գործարքի շինծու լինելու փաստի վերաբերյալ, հետևաբար բողոքի առաջին հիմքը հիմնավոր է:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ

Սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք կողմերի միջև առկա են եղել վարձակալության իրավահարաբերություններ, որպիսի պայմաններում Ասյա Դավթյանից 250 ԱՄՆ դոլարի չափով ՀՀ դրամ բռնագանձելն իրավաչափ է.

2. արդյո՞ք սույն գործով առկա է անհիմն հարստացում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար *(տե՛ս, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված ապացույցների թույլատրելիությանը, գտել է, որ դատարանը պետք է վերոնշյալ հոդվածը կիրառելիս ցույց տա, թե որ հոդվածով է արգելված ապացույցի նման տեսակով նման փաստի հաստատումը *(տե՛ս, Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի և այլոց թիվ ԱՎԴ/0235/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):*

Սույն գործով Դատարանը, Ասյա Դավթյանից հօգուտ Կարինե Սիրեկանյանի ամսական 250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի բռնագանձման պահանջը բավարարելու հիմքում դնելով վիճելի բնակարանի գնման և Վաճառողների կողմից այն Գնորդին չհանձնելու, Կարինե Սիրեկանյանի՝ Արմեն Բաղդասարյանից 3.200 ԱՄՆ դոլար ստանալու փաստերը, հաստատված է համարել, որ կողմերի միջև գործել են վարձակալության պայմանագրից ծագող իրավահարաբերություններ: Միաժամանակ Դատարանն արձա-

նագրել է, որ Կարինե Սիրեկանյանի՝ Դատարանին ներկայացրած 1 տարվա վարձավճարի՝ 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի հաշվարկով ստացած գումարի փաստը վկայում է, որ 1 ամսվա հաշվարկով վարձավճարը կազմում է 250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը բեկանելով, պատճառաբանել է, որ Դատարանը, հաստատված համարելով կողմերի միջև վարձակալության պայմանագրից ծագող իրավահարաբերությունների առկայությունը, չի պարզել այն հարցը, թե ինչով է հիմնավորվում վարձակալության իրավահարաբերությունների առկայությունը, որ ապացույցով է հիմնավորվում այն հանգամանքը, որ կողմերի միջև առկա է եղել բնակելի տարածության վարձակալության պայմանագիր և վարձավճարը կազմել է 250 ԱՄՆ դոլար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր: Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է պայմանագրի կողմից:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վարձակալության իրավահարաբերությունների փաստի հաստատված լինելը պայմանավորել է գրավոր կնքված վարձակալության պայմանագրի առկայությամբ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ նաև նոտարական վավերացմամբ: Ընդ որում, անշարժ գույքի վարձակալության պայմանագրի գրավոր ձևը չպահպանելու դեպքում կողմերը զրկված են ի հավաստում վարձակալության պայմանագրի հիմնվել վկաների ցուցմունքների վրա, բայց զրկված չեն այլ ապացույցներ ներկայացնելուց: Այսինքն՝ վարձակալության իրավահարաբերությունների փաստի առկայությունը կարող է հաստատվել միայն այդ փաստը հիմնավորող վերաբերելի և թույլատրելի ապացույցներով, այն է՝ օրենքին համապատասխան գրավոր կնքված վարձակալության պայմանագրով, այլ ապացույցներով, որոնք իրենց համակցության մեջ գնահատման արդյունքում կարող են վկայել կողմերի միջև առկա վարձակալության իրավահարաբերությունների մասին: Վկաների ցուցմունքները վերը նշված փաստի հաստատված լինելու մասին թույլատրելի ապացույցներ չեն:

Վերը նշված վերլուծությունների և սույն գործում առկա ապացույցների համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց այն մասին, որ կողմերի միջև առկա են եղել վարձակալության իրավահարաբերություններ, և որ վիճելի բնակարանի ամսական վարձը կազմել է 250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Ավելին, գործում առկա՝ Կարինե Սիրեկանյանի կողմից ստորագրված փաստաթղթի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարինե Սիրեկանյանի՝ Արմեն Բաղդասարյանից 3.200 ԱՄՆ դոլար ստանալու փաստը, չի կարող դիտվել որպես Ասյա Դավթյանի և Կարինե Սիրեկանյանի միջև առկա վարձակալության պայմանագրի պայմանները կատարելուն ուղղված գործողություն:

Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 16.08.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ ԵԱԴԴ/0010/01/12 որոշմանը, ապա դրանում բովանդակվող տեղեկությունները ևս բավարար չեն կողմերի միջև վարձակալության իրավահարաբերության առկայությունը հաստատված համարելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից վիճելի բնակարանի ամսական վարձը 250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ հաստատված համարելը և այն սկսած 11.07.2011 թվականից Ասյա Դավթյանից հօգուտ Կարինե Սիրեկանյանի բռնագանձելը իրավաչափ չէ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Դատարանի կողմից ճիշտ է հաշվարկվել նաև անհիմն հարստացման հետևանքով վճարման ենթակա գումարը՝ ամսական 250 ԱՄՆ դոլարի չափով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածին 1-ին կետի հիմքով՝անհիմն հարստացման առկայությունն ինքնին բացառում է վարձակալության իրավահարաբերությունների առկայությունը և դրանից բխող իրավական հետևանքները հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածին 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ նույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1093-րդ հոդվածին 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև՝

1) անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ.

2) **սեփականատիրոջ կողմից իր գույքն ապօրինի տիրապետողից հետ ստանալու պահանջների նկատմամբ.**

3) պարտավորության մեկ կողմի՝ մյուսից այդ պարտավորության կապակցությամբ կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածին 2-րդ կետի համաձայն՝ անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, կամ ուրիշի ծառայություններից, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 26.02.2009 թվականին կնքված պայմանագրի 2.1-ին կետով Վաճառողները՝ Ասյա Դավթյանը, Մարգարիտա Խաչատրյանը, Լիանա (Լիաննա) Բաղդասարյանը, Լուսինե Բաղդասարյանը պարտավորվել են **պայմանագիրը ստորագրելու օրվանից 240 օրվա ընթացքում** հանձման-ընդունման ակտով Գնորդին՝ Կարինե Սիրեկանյանին փոխանցել Երևան քաղաքի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ հասցեում գտնվող բնակարանը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վաճառողները մինչ օրս չեն կատարել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 2.1-ին կետով սահմանված իրենց պարտավորությունը, որպիսի պայմաններում նրանք Երևան Երևան քաղաքի Նար-Դոսի փողոցի թիվ 73ա շենքի 71-րդ հասցեում գտնվող բնակարանը տիրապետում են ապօրինի:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորներն առանց որևէ օրինական հիմքի պայմանագրի 2.1-ին կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո շարունակելով բնակվել Կարինե Սիրեկանյանին սեփականության իրավունքով պատկանող վիճելի բնակարանում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածին 1-ին կետի, 1093-րդ հոդվածին 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով Կարինե Սիրեկանյանի (տուժողի) հաշվին խնայել են իրենց գույքը (դրամական միջոցները), հետևաբար պարտավոր են նրան վերադարձնել անհիմն խնայած գույքը (անհիմն հարստացումը) այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի քննության շրջանակներում որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստ չի մատնանշվել անհիմն խնայած գումարի հաշվարկման հիմքը և այդ գումարի չափը, գտնում է, որ գործն՝ անհիմն հարստացման հետևանքով խնայված գումարը բռնագանձելու պահանջի մասով, ենթակա է նոր քննության՝ վերոնշյալ հանգամանքները պարզելու համար, հետևաբար Վերաքննիչ դատարանի որոշումն այդ մասով պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորների պահանջը 26.02.2009 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելն է և որպես անվավերության հետևանք՝ գրավի պայմանագրով նախատեսված կանոնները կիրառելն է:

Հակընդդեմ հայցով հայցվոր Կարինե Սիրեկանյանի պահանջն է վիճելի բնակարանից Ասյա Դավթյանին, Մարգարիտա Խաչատրյանին, Արմեն, Լիանա և Լուսինե Բաղդասարյաններին վտարել, և նրանցից որպես անհիմն հարստացում՝ ամսական 250 ԱՄՆ դոլարին համարժեք վարձավճար բռնագանձել՝ սկսած 26.02.2010 թվականից մինչև սույն գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնական կատարման պահը:

Սույն գործով հայցվորները հայցադիմումի համար վճարել են 8.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար (հատոր 1-ին, գ.թ. 3), իսկ հակընդդեմ հայցով հայցվորը վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար (հատոր 1-ին, գ.թ. 66): Դատարանի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն:

Հայցվորները, դատական ակտը բողոքարկելով, վերաքննիչ բողոքին կից ներկայացրել են <<Պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ>> միջնորդություն (հատոր 2-րդ, գ.թ. 39), որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի <<Պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին>> 07.04.2014 թվականի որոշմամբ բավարարվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2014 թվականի որոշմամբ Ասյա Դավթյանի, Արմեն Բաղդասարյանի, Մարգարիտա Խաչատրյանի, Լիանա Բաղդասարյանի, Լուսինե Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 19.02.2014 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

Հակընդդեմ հայցով հայցվոր Կարինե Սիրեկանյանը Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկելով՝ վճռաբեկ բողոքի համար վճարվել է 30.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Կարինե Սիրեկանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի <<Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին>> որոշմամբ ընդունվել է վարույթ:

Հիմք ընդունելով վերը նշվածը և նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվորներ Ասյա Դավթյանից, Արմեն Բաղդասարյանից, Մարգարիտա Խաչատրյանից, Լիանա Բաղդասարյանից, Լուսինե Բաղդասարյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և Վերաքննիչ դատարանի կողմից հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև հայցվորներ Ասյա Դավթյանից, Արմեն Բաղդասարյանից, Մարգարիտա Խաչատրյանից, Լիանա Բաղդասարյանից, Լուսինե Բաղդասարյանից հօգուտ Կարինե Սիրեկանյանի ենթակա է բռնագանձման 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ անհիմն հարստացման հետևանքով խնայված գումարը բռնագանձելու պահանջի մասով գործն ենթակա է նոր քննության՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2014 թվականի որոշումը՝ հայցի մասով և հակընդդեմ հայցի՝ վտարման պահանջի մասով գործը նոր քննության ուղարկելու մասերը, և այդ մասերով օրինական ուժ տալ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.02.2014 թվականի վճռին:

Որոշումը՝ հակընդդեմ հայցի՝ անհիմն հարստացման գումարի բռնագանձման պահանջի մասով գործը նոր քննության ուղարկելու մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Ասյա Դավթյանից, Արմեն Բաղդասարյանից, Մարգարիտա Խաչատրյանից, Լիանա Բաղդասարյանից, Լուսինե Բաղդասարյանից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի <<Պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին>> 07.04.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ասյա Դավթյանից, Արմեն Բաղդասարյանից, Մարգարիտա Խաչատրյանից, Լիանա Բաղդասարյանից, Լուսինե Բաղդասարյանից հօգուտ Կարինե Սիրեկանյանի համապարտության կարգով բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Անհիմն հարստացման գումարի բռնագանձման պահանջի մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1013/02/13
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Հ. Ենոքյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1013/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով <<Համխաչ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Արայիկ Ալվանդյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նելլի Հակոբյանի, Ստան և Արթուր Գևորգյանների ընդդեմ Ընկերության՝ 13.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նելլի Հակոբյանը, Ստան և Արթուր Գևորգյանները պահանջել են 13.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 4.1 կետը փոփոխել և վարձավճար սահմանել ամսական 600.000 ՀՀ դրամ:

11.08.2014 թվականին Նելլի Հակոբյանը, Ստան և Արթուր Գևորգյանները ներկայացրել են հայցի հիմքն ու առարկան փոփոխելու մասին միջնորդություն, որով պահանջել են անվավեր ճանաչել իրենց և Ընկերության միջև 13.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.09.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.12.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.09.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նելլի Հակոբյանի, Ոստան և Արթուր Գևորգյանների ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտում, այլապես կհանգեր այն եզրակացության, որ Նելլի Հակոբյանը, Ոստան և Արթուր Գևորգյաններն առկա պայմաններով գիտակցաբար են կնքել վարձակալության պայմանագիր, չեն ունեցել որևէ կաշկանդվածություն իրենց սեփական տարածքը ցանկացած գնով վարձակալության տրամադրելու հարցում, հետևաբար անհիմն են այն պնդումները, թե գործարքը կնքվել է մոլորության ազդեցության տակ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվոր կողմի այն փաստարկը, որ կողմերի միջև եղել է նախնական համաձայնություն, որ վարձավճարի գումարը տարիների ընթացքում պետք է աճի շուկայական գներին համապատասխան, առարկայազուրկ է: Ավելին, կողմերի միջև երբևէ որևէ բանավոր պայմանավորվածություն չի եղել պայմանագրի փոփոխման վերաբերյալ, հակառակ դեպքում՝ այդպիսի փոփոխություններ կատարելու վերաբերյալ դրույթները ժամանակին կարտացոլվեին վարձակալության պայմանագրում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ վիճելի գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, ավելին՝ պատասխանողը, իր վարքագծով խախտելով Նելլի Հակոբյանի, Ոստան և Արթուր Գևորգյանների իրավունքները, վերջիններիս դրել է ծանր ֆինանսական դրության մեջ՝ զրկելով բավարար կենսապայմաններ ունենալու իրավունքից: Հայցվորները, կնքելով անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, նպատակ են ունեցել ստանալ ավելի բարձր եկամուտ, որով կկարողանան վարել բարեկեցիկ կյանք, սակայն պատասխանողի գործողությունների արդյունքում զրկվել են իրենց հիմնական եկամտի աղբյուրից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Նելլի Հակոբյանի, Ոստան, Արթուր Գևորգյանների և Ընկերության միջև նոտարական վավերացմամբ 13.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի համաձայն՝ Նելլի Հակոբյանը, Ոստան և Արթուր Գևորգյանները սեփականության իրավունքով իրենց պատկանող Երևանի Խանջյան փողոցի 33-րդ շենքի թիվ 2 տարածքը և հողատարածքը 10 տարի ժամկետով, ամսական 85.000 ՀՀ դրամ վարձավճարով հանձնել են Ընկերության ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

2. Սույն գործում առկա չէ որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց այն մասին, որ հետագայում կողմերի միջև կնքված վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխվելու է:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի անվավերության առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման, դրա արդյունքում նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի առանձնահատկություններին, այն անվավեր ճանաչելու իրավական հիմքերին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար Վճռաբեկ դատարանը հարկ է համարում բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի** և **արտաքին կամահայտնության համակցությունն է**: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ:

Սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ, մասնավորապես, նկատի ունենալով, որ վիճարկվող գործարքի անվավերության պահանջի հիմքում վկայակոչված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցադրումները՝

- ինչ է մոլորությունը

- արդյո՞ք գործարքը ցանկացած մոլորության ազդեցության տակ կնքված լինելն ինքնին բավարար է գործարքն անվավեր ճանաչելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով:

Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն չունի:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված հոդվածի վերլուծությանը, գտել է, որ էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել **այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին**: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես՝ գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հարաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ կողմերը կամ նրանցից մեկը նկատի է ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ իր հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա *(տե՛ս, Գևորգ Ջուրունյանն ընդդեմ Դավիթ Քիթապազյանի, Վարազդատ Եղոյանի թիվ ԵՔԴ/0724/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):*

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մոլորությունը գործարք կնքած կողմի կամքի շեղումն է (կամքի խեղաթյուրումը) կամ շեղման արդյունքն է, որն ունի որոշիչ ազդեցություն գործարքի կնքման և (կամ) դրա կնքման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վրա: Այն, որպես կանոն, հիմնված է սխալ ենթադրության (պատկերացման) վրա: Մոլորության ազդեցության տակ կնքված գործարքում կողմի կամքը համապատասխանում է նրա կամահայտնությանը, սակայն այն ձևավորվում է գործարքի կնքման համար նշանակություն ունեցող հանգամանքների սխալ պատկերացման արդյունքում, որոնք կարող են պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով (օրինակ՝ անուշադրությունը, կրթության ոչ բավարար մակարդակը, գործարքի առարկայի կամ գործարքի այլ պայմանների մասին անհրաժեշտ տեղեկության բացակայությունը կամ դրա ոչ բավարար կամ թերի լինելը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, ***երբ մոլորությունն էական է:*** Մոլորության էական կամ ոչ էական բնույթը դատարանը յուրաքանչյուր դեպքում պարզում է՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից և այն իրողությունից, թե որքանով է մոլորությունը նշանակալից, զգալի գործարքի տվյալ մասնակցի համար: Ընդ որում, էական նշանակություն ունեցող մոլորությունը պետք է առկա լինի գործարքի կնքման պահին, այլ ոչ թե ծագի գործարքը (պայմանագիրը) կնքելուց հետո որոշ ժամանակ անց:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ փաստում է, որ օրենսդիրը որպես գործարքն անվավեր ճանաչելու հիմք դիտել է *գործարքի բնույթի կամ դրա առարկայի* վերաբերյալ էական նշանակություն ունեցող մոլորությունը: Մինչդեռ գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն ունենալ չի կարող:

Գործարքի բնույթի վերաբերյալ մոլորությունը. Գործարքի բնույթը տվյալ գործարքի մի շարք հատկանիշների (պայմանների) համակցությունն է, որը հնարավորություն է տալիս տարբերել մեկ գործարքը մեկ այլ գործարքից: Այսինքն՝գործարքի բնույթը, ըստ էության, գործարքի տեսակն է: Գործարքի բնույթի վերաբերյալ մոլորությունն առկա է այն դեպքում, երբ կողմը, որը գործել է մոլորության ազդեցության տակ, ի վերջո չի հասել այն նպատակի իրականացմանը, որին ուղղված է եղել նրա կամքը և որը նկատի

է ունեցել գործարքը կնքելիս: Այլ կերպ ասած՝ գործարքը կնքած կողմերից մեկի կամքը (ցանկությունը) ուղղված է եղել որոշակի գործարքի կնքմանը, օրինակ՝ պահատվության պայմանագրի կնքմանը, մինչդեռ գտնվելով մոլորության ազդեցության տակ՝ կնքել է մեկ այլ գործարք, օրինակ՝վարձակալության պայմանագիր:

Գործարքի առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները. Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ գործարքի առարկա կարող են լինել ինչպես նյութական առարկաները (օրինակ, առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ որոշակի ապրանքը, անշարժ գույքը), այնպես էլ որոշակի գործողությունները (օրինակ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դեպքում՝ ծառայություններ մատուցելը, կապալի պայմանագրի դեպքում՝ համապատասխան աշխատանքների կատարումը): Հետևաբար գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ գործարքի առարկան իր է, այլ նաև այն դեպքում, երբ այն որոշակի գործողություն է:

Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը դրսևորվում է այն դեպքում, երբ կնքված գործարքի առարկան չի համապատասխանում այն հատկանիշներին, որը կողմը նկատի է ունեցել ի սկզբանե նման գործարք կնքելիս: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունն անհրաժեշտ է տարբերել այն իրավիճակից, երբ պայմանագրի կողմը թույլ է տալիս պայմանագրի առարկայի որակի պայմանին ներկայացվող խախտում, օրինակ՝ առուվաճառքի պայմանագրով վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 472-րդ, 485-րդ, 486-րդ հոդվածներ), կապալի պայմանագրով կատարված աշխատանքները պատշաճ որակի չեն (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 718-րդ, 719-րդ, 721-րդ հոդվածներ): Նշված դեպքերը հանգեցնում են այլ իրավական հետևանքների (օրինակ՝ պայմանագրի լուծման, պայմանագրի գնի վերանայման և այլն):

Էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը (պայմանագիրը) կարող է վիճարկվել **միայն այդ գործարքի (պայմանագրի) կողմ հանդիսացող անձի կողմից:** Նման սահմանափակումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի դեպքում կողմի կամքի խեղաթյուրման փաստի առկայության մասին օբյեկտիվորեն կարող է փաստարկել միայն այն անձը, ով գտնվել է էական մոլորության ազդեցության ներքո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով**,** գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած **բոլոր** ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է **գործում եղած բոլոր** ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ըստ վկայի ցուցմունքի՝ Ընկերությունը պայմանագրով նշված վարձավճարի գինը պետք է վճարեր մոտ երկու տարի, իսկ հետագայում վարձավճարի չափը պետք է բարձրանար շուկայական արժեքին համապատասխան: Հետևաբար 13.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքվել է մոլորության ազդեցության տակ, ինչը հիմք է պայմանագիրն անվավեր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի 16.09.2014 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ <<Դատարանն իրավացիորեն հանգել է հետևության, որ 13.08.2010 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը կնքվել է մոլորության ազդեցության տակ՝ արձանագրելով, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա բավարարման>>:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

13.08.2010 թվականին կնքված վարձակալության պայմանագրով Նելլի Հակոբյանը, Ռստան և Արթուր Գևորգյանները սեփականության իրավունքով իրենց պատկանող Երևանի Խանջյան փողոցի 33-րդ շենքի թիվ 2 տարածքը և հողատարածքը 10 տարի ժամկետով, **ամսական 85.000 ՀՀ դրամ վարձավճարով հանձնել են Ընկերության ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը**: Հայցվորները, որպես էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարք, 13.08.2010 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը վիճարկել են այն հիմքով, որ ըստ կողմերի միջև եղած պայմանավորվածության՝ վարձավճարի չափը պայմանագիրը կնքելուց հետո որոշ ժամանակ անց պետք է ավելանար, մինչդեռ պատասխանող կողմը այդ պարտավորությունը չի կատարում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորները որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույցով չեն հիմնավորել, որ 13.08.2010 թվականին կնքված վարձակալության պայմանագիրն իրենց կողմից կնքվել է էական մոլորության ազդեցության ներքո: Ավելին, 13.08.2010 թվականի վարձակալության պայմանագրի կնքման պահին հայցվորները գործարքի բնույթի կամ դրա առարկայի հատկանիշների վերաբերյալ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ չեն գտնվել, քանի որ հստակ գիտակցել են, որ կնքում են 85.000 ՀՀ դրամ վարձավճարով անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար: Այսինքն՝ կնքված գործարքն արտահայտել է հայցվորների իրական կամքը, հանգեցրել է այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին:

Մինչդեռ ստորադաս դատարանները կիրառման ենթակա նյութաիրավական նորմի սխալ մեկնաբանության հիմքով գործում առկա ապացույցների սխալ գնահատման արդյունքում սխալ եզրահանգման են եկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Վերը նշված պատճառաբանությամբ հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝

յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է փոփոխման, այն է՝ Նելլի Հակոբյանի, Ռստան և Արթուր Գևորգյանների հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը, գտնում է, որ Նելլի Հակոբյանից, Ռստան և Արթուր Գևորգյաններից համապարտության կարգով հօգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Նելլի Հակոբյանի, Ռստան և Արթուր Գևորգյանների հայցն ընդդեմ <<Համխաչ>> ՍՊԸ-ի՝ 13.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Նելլի Հակոբյանից, Ռստան և Արթուր Գևորգյաններից համապարտության կարգով հօգուտ <<Համխաչ>> ՍՊԸ-ի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողո-

քի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0435/02/13
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Ի. Վարդանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0435/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վահագն Կապլանյանի ներկայացուցիչ Շիրվանզադե Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վահագն Կապլանյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երկրորդ պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), երրորդ անձինք Օլյա Կոզաևայի, Տիգրան Մատինյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վահագն Կապլանյանը պահանջել է Ծառայությունից հօգուտ իրեն բռնագանձել 9.380.000 ՀՀ դրամ:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.08.2013 թվականի արձանագրային որոշմամբ գործով երկրորդ պատասխանող է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Վ. Հովնանյան) (այսուհետ՝ Դատարան) 30.06.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է և Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, հօգուտ Վահագն Կապլանյանի բռնագանձվել է 9.430.000 ՀՀ դրամ, որից 9.380.000 ՀՀ դրամը՝ որպես գոր-

ծարքի անվավերության հետևանքով վերադարձման ենթակա գումար, 50.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.10.2014 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 30.06.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վահագն Կապլանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը:

2.1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 303-րդ, 304-րդ, 345-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ, 35-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ, 51-րդ, 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ ՀՑՔԴ2/0024/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 26.09.2012 թվականի վճռի համաձայն՝ 17.02.2014 թվականին կատարված հարկադիր աճուրդը և դրա հիման վրա Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև 17.04.2004 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրը ճանաչվել են անվավեր, իսկ Վահագն Կապլանյանի կողմից վճարված 9.380.000 ՀՀ դրամը, որը կազմում է այդ պայմանագրի գինը, չի վերադարձվել վերջինիս: Մինչդեռ այդ գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության կողմից, քանի որ թիվ 03-2396 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2003 թվականի վճռի հարկադիր կատարման ընթացքում Ծառայությունը հանդես է եկել որպես պետական գործադիր մարմին՝ իրականացնելով ՀՀ օրենսդրությամբ իր վրա դրված՝ դատական ակտը կատարելու պարտականությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ 03-2396 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2003 թվականի վճռի հարկադիր կատարման շրջանակներում որպես պահանջատեր հանդես եկած Սամվել Աբգարյանը չի կարող կրել Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև 17.04.2004 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչվելու արդյունքում այդ պայմանագրի գինը կազմող գումարը Վահագն Կապլանյանին վերադարձնելու պարտականությունը, քանի որ Սամվել Աբգարյանն այդ պայմանագրի կողմ չի հանդիսանում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.10.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ օրինական ուժ տալ Դատարանի 30.06.2014 թվականի վճռին:

2.2. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Սույն գործով Ծառայությունը հանդիսանում է ոչ պատշաճ պատասխանող, քանի որ վերջինս գործել է ի շահ պահանջատիրոջ՝ Սամվել Աբգարյանի, որը, որպես թիվ 06-88/04 կատարողական վարույթով պահանջատեր, ստացել է Վահագն Կապլանյանի կողմից ներկայացված հայցով պահանջվող գումարը: Հետևաբար Վահագն Կապլանյանը պետք է իր պահանջն ուղղի ոչ թե դատական ակտը կատարող մարմնին, որը վիճարկվող գումարը չի ստացել, այլ Սամվել Աբգարյանին՝ որպես անհիմն հարստացողի, իսկ վերջինիս պահանջները պետք է բավարարվեն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 32.3-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան նոր կազմակերպված աճուրդով:

Բացի այդ, Ծառայությունը միջոցներ է ձեռնարկել Վահագն Կապլանյանի գումարը

հետ վերադարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ Ծառայությունը հայց է ներկայացրել ընդդեմ Սամվել Աբգարյանի և թիվ ԼԴ/0562/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում թիվ 06-88/04 կատարողական վարույթով պահանջատեր Սամվել Աբգարյանից պահանջել է հետ վերադարձնել անվավեր ճանաչված աճուրդի հետևանքով ստացված գումարը՝ այն Վահագն Կապլանյանին հանձնելու նպատակով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թիվ 03-2396 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2003 թվականի վճռով Սամվել Աբգարյանի հայցն ընդդեմ Մելսիկ Այվազյանի, Սուրեն Մովսիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է. վճռվել է՝ Մելսիկ Այվազյանից հօգուտ Սամվել Աբգարյանի բռնագանձել 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված գումար, և 300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի դատարանում վճարված պետական տուրքի գումար, իսկ գումարի բռնագանձումը տարածել Վանաձորի Կնունյանց փողոցի թիվ 49ա հասցեում գտնվող գրավադրված տան վրա **(հատոր 1-ին, գ.թ. 73-74):**

2. 09.01.2004 թվականին թիվ 03-2396 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից տրամադրվել է կատարողական թերթ **(հատոր 1-ին, գ.թ. 60):**

3. Ծառայության Լոռու մարզային բաժնի Վանաձորի բաժանմունքի հարկադիր կատարող Տիգրան Մատինյանի «Արգելադրված գույքը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» 04.02.2004 թվականի որոշմամբ որոշվել է 17.02.2004 թվականին կայանալիք աճուրդով հրապարակային սակարկությունների միջոցով հարկադիր վաճառել պարտապան Սուրեն Մովսիսյանին պատկանող Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեի բնակելի տունը **(հատոր 1-ին, գ.թ. 56):**

4. Աճուրդի մասնակցության 16.02.2004 թվականի հայտի համաձայն՝ Վահագն Կապլանյանը ներկայացրել է Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեի տունը գնելու հայտ և պարտավորվել է վճարել 466.500 ՀՀ դրամ՝ որպես նախավճար **(հատոր 1-ին, գ.թ. 57):**

5. Գույքն աճուրդով վաճառելու մասին 17.02.2004 թվականի թիվ 18 արձանագրության համաձայն՝ Վահագն Կապլանյանը 9.380.000 ՀՀ դրամով գնել է Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեի տունը **(հատոր 1-ին, գ.թ. 58):**

6. Ծառայության (ի դեմս Ծառայության Լոռու մարզային ստորաբաժանման պետի)՝ որպես «Վաճառողի» և Վահագն Կապլանյանի՝ որպես «Գնորդի» միջև 17.02.2004 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ծառայությունը վաճառել է, իսկ Վահագն Կապլանյանը որպես սեփականություն ձեռք է բերել Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեում գտնվող 222,6քմ մակերեսով շենքը, շինությունը և 0,0321հա մակերեսով հողամասը՝ 9.380.000 ՀՀ դրամով **(հատոր 1-ին, գ.թ. 55):**

7. Թիվ ՀՅՔԴ2/0024/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.09.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ծառայության Լոռու մարզային բաժնի Վանաձորի բաժանմունքի հարկադիր կատարող Տիգրան Մատինյանի «Արգելադրված գույքը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» 04.02.2004 թվականի որոշումը և 17.04.2004 թվականին տեղի ունեցած աճուրդը ճանաչվել են անվավեր, որպես հետևանք՝ անվավեր են ճանաչվել նաև աճուրդի հիման վրա Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև 17.04.2004 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, և վերականգնվել է Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեում գտնվող տնատիրության նկատմամբ Սուրեն Մովսիսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը **(հատոր 1-ին, գ.թ. 15-30, 51-54):**

8. Վահագն Կապլանյանի և փաստաբան Շիրվանզադե Վարդանյանի միջև

25.06.2013 թվականին կնքված «Փաստաբանական վճարովի ծառայության մասին» պայմանագրով Շիրվանզադե Վարդանյանը պարտավորվել է սույն քաղաքացիական գործով իրավաբանական (փաստաբանական) վճարովի օգնություն ցույց տալ Վահագն Կապլանյանին ՀՀ դատական բոլոր ատյաններում, որի դիմաց Շիրվանզադե Վարդանյանը Վահագն Կապլանյանից ստացել է 50.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 87):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. հարկադիր աճուրդի անվավեր ճանաչման արդյունքում դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության դեպքում ո՞վ պետք է կրի աճուրդում հաղթած մասնակցի կողմից օրենքով սահմանված կարգով մուծված լոտի գնման գինը կազմող դրամական գումարը վերջինիս վերադարձնելու պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրա անվավերության հետևանքները կիրառելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (...) հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ցանկացած քաղաքացիաիրավական գործարք կարող է դրա մասնակիցների համար առաջացնել ցանկալի իրավական հետևանքներ, եթե այն վավեր է, այսինքն՝ համապատասխանում է օրենքից բխող որոշակի պահանջների ու պայմանների: Այն դեպքում, երբ գործարքը չի համապատասխանում այդ պահանջներին, ապա այն համարվում է անվավեր կամ օրենքով սահմանված հիմքերով դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում (վիճահարույց գործարք), կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, քանի որ այդպիսի գործարքն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա, այսինքն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձ-

նել գործաքով իր ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ օրենքով նախատեսված չեն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝ 1) պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, սահմանափակում կիրառելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք) (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանի գույքի գնահատումը և իրացումը կատարվում են նույն օրենքով և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի (...) իրացման (...) հետ կապված հարաբերությունները (...):

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները. աճուրդը սակարկություններին ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին, իսկ լոտնաճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույք կամ իրավունք է, որն ունի համապատասխան նկարագրություն, նույն օրենքով նախատեսված այլ տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին համապատասխան, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-5-րդ մասերի համաձայն՝ աճուրդում հաղթած մասնակիցը և հարկադիր կատարողն աճուրդն անցկացնելու օրը ստորագրում են դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: (...) Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից երեք բանկային օրվա ընթացքում հարկադիր կատարման ծառայության ստորաբաժանման դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին մուծել լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք մուծած նախավճարը: (...) Աճուրդում հաղթած մասնակցի կողմից գնման գինը ծառայության ստորաբաժանման դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին մուծելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հարկադիր կատարողը նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը, սահմանում է, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ որպես դատական ակտի հարկադիր կատարման միջոց, եզրափակվում է աճուրդի կամ ուղղակի վաճառքի միջոցով գույքը հարկադիր իրացնելով,

որը կատարվում է նույն օրենքով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանում է, որ հարկադիր աճուրդը՝ որպես սակարկությունների ձև, կազմակերպվում և կատարողական թերթին համապատասխան անցկացվում է հարկադիր կատարողի կողմից, որն աճուրդում հաղթած մասնակցի հետ միասին աճուրդն անցկացնելու օրը ստորագրում է դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, իսկ աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի (որոշակի նկարագրություն, մեկնարկային գին և օրենքով նախատեսված այլ տվյալներ ունեցող աճուրդով վաճառվող գույքի կամ իրավունքի) գնման գինը համապատասխան հաշվին մուծելուց հետո նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված առուվաճառքի պայմանագրի կողմեր են հանդիսանում մի կողմից աճուրդում հաղթած մասնակիցը՝ որպես գնորդ, և մյուս կողմից հարկադիր կատարողը՝ որպես վաճառող, որը տվյալ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում հանդես է գալիս պետության անունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքում ամրագրել է նաև լոտի վերաբերյալ աճուրդի անվավեր ճանաչման հնարավորություն՝ սահմանելով, որ աճուրդը կարող է անվավեր ճանաչվել միայն դատական կարգով, ինչը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լոտի վերաբերյալ աճուրդը դատական կարգով անվավեր ճանաչվելու արդյունքում դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության դեպքում կիրառելի են գործարքի անվավերության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված ընդհանուր կանոնները, որոնց համաձայն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր աճուրդում հաղթող ճանաչված անձի հետ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա. աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է հարկադիր կատարողին վերադարձնել լոտը, իսկ հարկադիր կատարողը պարտավոր է աճուրդում հաղթած մասնակցին վերադարձնել վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով մուծած լոտի գնման գինը կազմող դրամական գումարը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ 03-2396 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.12.2003 թվականի վճռով Մելսիկ Այվազյանից հօգուտ Սամվել Աբգարյանի բռնագանձվել է 15.300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և բռնագանձումը տարածվել է Վանաձորի Կնունյանց փողոցի թիվ 49ա հասցեում գտնվող գրավադրված տան վրա, իսկ 09.01.2004 թվականին նշված քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից տրամադրվել է կատարողական թերթ: Ծառայության Լոռու մարզային բաժնի Վանաձորի բաժանմունքի հարկադիր կատարող Տիգրան Սատինյանի «Արգելադրված գույքը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» 04.02.2004 թվականի որոշմամբ որոշվել է 17.02.2004 թվականին կայանալիք աճուրդով հրապարակային սակարկությունների միջոցով հարկադիր վաճառել պարտապան Սուրեն Սիվսիսյանին պատկանող Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեի բնակելի տունը, իսկ Վահագն Կապլանյանը ներկայացրել է Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեի տունը գնելու հայտ և 17.02.2004 թվականի աճուրդում 9.380.000 ՀՀ դրամով գնել է այն:

Ծառայությունը՝ որպես վաճառող, և Վահագն Կապլանյանը՝ որպես գնորդ,

17.02.2004 թվականին կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի առարկան հանդիսանում է Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեում գտնվող անշարժ գույքը, իսկ պայմանագրի գինը կազմում է 9.380.000 ՀՀ դրամ:

Թիվ ՀՑՔԴ2/0024/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.09.2012 թվականի վճռով Ծառայության Լոռու մարզային բաժնի Վանաձորի բաժանմունքի հարկադիր կատարող Տիգրան Սմատինյանի «Արգելադրված գույքը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» 04.02.2004 թվականի որոշումը և 17.04.2004 թվականին տեղի ունեցած աճուրդը ճանաչվել են անվավեր, որպես հետևանք՝ անվավեր են ճանաչվել նաև աճուրդի հիման վրա Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև 17.04.2004 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և վերականգնվել է Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեում գտնվող տնատիրության նկատմամբ Սուրեն Սիվսիսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վահագն Կապլանյանի հայցի հիման վրա հարուցված սույն քաղաքացիական գործի շրջանակներում վերջինս պահանջել է Ծառայությունից հօգուտ իրեն բռնագանձել 9.380.000 ՀՀ դրամ՝ որպես Ծառայության և իր միջև 17.02.2004 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք:

Դատարանի 13.08.2013 թվականի արձանագրային որոշմամբ գործով երկրորդ պատասխանող է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Դատարանը, բավարարելով ՀՀ ֆինանսների նախարարությունից 9.380.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին Վահագն Կապլանյանի հայցը, պատճառաբանել է, որ Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև 17.04.2004 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը թիվ ՀՑՔԴ2/0024/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.09.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել, սակայն ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանն ամբողջությամբ չի կիրառել նշված գործարքի անվավերության հետևանքները, մասնավորապես՝ չի լուծել Վահագն Կապլանյանի կողմից վճարված գումարը նրան վերադարձնելու հարցը: Ըստ Դատարանի վճռի՝ անվավեր ճանաչված գործարքի կողմ է հանդիսացել պետական մարմինը, հետևաբար Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, պարտավոր է Վահագն Կապլանյանին վերադարձնել վերջինիս կողմից աճուրդում ձեռք բերված գույքի համար վճարված գումարը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ծառայության վերաքննիչ բողոքը և գործը նոր քննության ուղարկելով, պատճառաբանել է, որ անկախ անվավեր ճանաչված գործարքի՝ Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև կնքված լինելու հանգամանքից, Ծառայությունը, գործելով պահանջատիրոջ շահերից, չէր կարող հանդիսանալ գործարքի կողմ, առավել ևս, ստանալ գործարքով Վահագն Կապլանյանի կողմից անշարժ գույքի ձեռք բերման դիմաց վճարված գումարը: Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի՝ Ծառայությունը չի կարող կրել անվավեր ճանաչված գործարքով ստացածը Վահագն Կապլանյանին վերադարձնելու պարտականություն:

Վերը շարադրված իրավական վերլուծությունների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ ինչպես ցանկացած վիճահարույց գործարք, այնպես էլ հարկադիր աճուրդում հաղթող ճանաչված անձի հետ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ, հանգեցնում է երկկողմանի ռեստիտուցիայի, որի դեպքում աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է հարկադիր կատարողին վերադարձնել լոտը, իսկ հարկադիր կատարողը պարտավոր է աճուրդում հաղթած մասնակցին վերադարձնել վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով մուծած լոտի գնման գինը կազմող դրամական գումարը:

Սույն գործի քննությամբ հիմնավորվել է, որ 17.02.2004 թվականին կայացած հարկադիր աճուրդի արդյունքում Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև նույն օրը կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը թիվ ՀՅՔԴ2/0024/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 26.09.2012 թվականին կայացված վճռով ճանաչվել է անվավեր: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված պայմանագիրն անվավեր ճանաչելու հետևանքը հանգեցնում է նրան, որ այդ պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը պետք է մյուս կողմին վերադարձնի գործարքով իր ամբողջ ստացածը: Այսինքն՝ Վահագն Կապլանյանը պարտավոր է Ծառայությանը վերադարձնել Վանաձորի Կնունյանց թիվ 49ա հասցեում գտնվող անշարժ գույքը, իսկ Ծառայությունն իր հերթին պարտավոր է Վահագն Կապլանյանին վերադարձնել անվավեր ճանաչված պայմանագրի գինը կազող 9.380.000 ՀՀ դրամը:

Մինչդեռ թիվ ՀՅՔԴ2/0024/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 26.09.2012 թվականին կայացված վճռով Վահագն Կապլանյանի կողմից Ծառայությանը վճարված գումարի վերադարձման հարցը չի լուծվել: Դատարանն իրավացիորեն է եզրահանգել, որ այդ գումարը ենթակա է վերադարձման Վահագն Կապլանյանին՝ որպես Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք: Սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված գումարը Վահագն Կապլանյանի օգտին ենթակա է բռնագանձման ոչ թե Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, այլ գործարքի կողմ հանդիսացած Ծառայությունից:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Ծառայությունը տվյալ դեպքում հանդես է եկել որպես հարկադիր աճուրդի կազմակերպիչ և չի կարող կրել 17.02.2004 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի գինը կազմող գումարը Վահագն Կապլանյանին վերադարձնելու պարտականությունը՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ կարևորում է այն հանգամանքը, որ վերը նշված առուվաճառքի պայմանագրի կողմերն են՝ մի կողմից աճուրդում հաղթած մասնակից Վահագն Կապլանյանը՝ որպես գնորդ, և մյուս կողմից Ծառայությունը (ի դեմս Լոռու մարզային բաժնի Վանաձորի բաժանմունքի հարկադիր կատարողի)՝որպես վաճառող:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ծառայության և Վահագն Կապլանյանի միջև 17.02.2004 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր ճանաչված լինելու պայմաններում Ծառայությունն է կրում պայմանագրի գինը կազմող դրամական գումարը՝ 9.380.000 ՀՀ դրամը, Վահագն Կապլանյանին վերադարձնելու պարտականությունը, ինչը հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–րդ հոդվածի 1–ին կետի 4–րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.02.2015 թվականի որոշմամբ Վահագն Կապլանյանի ներկայացուցչի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը՝ 281.400 ՀՀ դրամը (9.380.000 ՀՀ դրամ × 3%), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման Ծառայությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը *(տե՛ս, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո սույն գործի բարդությունը և փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը համադրելով գործում առկա՝ Վահագն Կապլան-

յանի և փաստաբան Շիրվանզադե Վարդանյանի միջև 25.06.2013 թվականին կնքված «Փաստաբանական վճարովի ծառայության մասին» պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարի չափի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ողջամիտ է ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հօգուտ Վահագն Կապլանյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2014 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հօգուտ Վահագն Կապլանյանի բռնագանձել 9.380.000 ՀՀ դրամ:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 281.400 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.02.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հօգուտ Վահագն Կապլանյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0526/02/13
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Հ. Ենոքյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0526/02/13**
2015թ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Արսեն Թավադյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի ընդդեմ Ընկերության՝ պայմանագրով նախատեսված տույժի գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կարեն Մկրտչյանից և Նարինե Ավետիսյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 2.896.850 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով վճարման ենթակա գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարեն Մկրտչյանը և Նարինե Ավետիսյանը պահանջել են Ընկերությունից բռնագանձել 8.788.000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժի գումար, ինչպես նաև 300.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Ընկերությունը, ավելացնելով հայցային պահանջների չափը, պահանջել է Կարեն Մկրտչյանից և Նարինե Ավետիսյանից բռնագանձել նաև 21.12.2009 թվականից մինչև 06.05.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար 18.723.936 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ՝ շարունակելով տույժի հաշվեգրումը և բռնագանձումը սկսած 07.05.2013 թվականից մինչև վճռի փաստացի կատարումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2013 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը՝ հակընդդեմ հայցը մերժելու մասով, մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը՝ վճռի հայցը մերժելու մասի դեմ, բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2013 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի 16.04.2014 թվականի որոշմամբ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 07.11.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Կարեն Մկրտչյանից և Նարինե Ավետիսյանից համապարտության կարգով հօգուտ Ընկերության բռնագանձել 5.396.850 ՀՀ դրամ, հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.02.2015 թվականի որոշմամբ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 07.11.2014 թվականի վճիռը մասնակիորեն՝ հայցը բավարարելու մասով, բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է, իսկ վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-337-րդ և 339-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ դրույթները, ինչով պայմանավորված վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցումը հնարավոր է միայն դատարանի կողմից վճարման կարգադրություն արձակելու և համապատասխանաբար պատասխանողի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու դեպքում: Մինչդեռ, հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմք է հանդիսանում վճարման կարգադրության ներկայացումը, հետևաբար Վերաքննիչ դատարանը հայցային վաղեմության ժամկետի կասեցումը չպետք է պայմանավորեր առարկության ներկայացման հանգամանքով:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ վկայակոչված հոդվածների միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.02.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ օրինական ուժ տալ Դատարանի 07.11.2014 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է, քանի որ այդ որոշմամբ, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին տրվել է հստակ մեկնաբանություն, այն է՝ վճարման կարգադրություն արձակելու պա-

հանջով դատարան դիմում ներկայացնելու փաստն ինքնին չի կարող բավարար համարվել այդ հոդվածի հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու համար, քանի որ քննարկվող դրույթը նախատեսում է նաև կոնկրետ իրավական հետևանք, մասնավորապես՝ պատասխանողի կողմից դատարանին գրավոր առարկություն ներկայացնելու հանգամանքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 18.09.2007 թվականին Ընկերության և Կարեն Մկրտչյանի ու Նարինե Ավետիսյանի միջև կնքված պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Ընկերությունը վաճառել է Երևանի Աջափնյակ համայնքի Վահագնի թաղամասի երրորդ տեղամասի Հրազդան թիվ 12 հասցեի մենատունը (այսուհետ՝ Տուն) **(հատոր 1-ին, գ.թ. 9-11):**

2. Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Կարեն Մկրտչյանն ու Նարինե Ավետիսյանը պարտավորվել են Ընկերությանը վճարել 2.896.850 ՀՀ դրամ՝ Ընկերության կողմից Տան դիմացի ավտոճանապարհի, բետոնահարթակի, քիվերի և նկուղի պատուհանների պաշտպանիչ պատերի կառուցումից հետո՝ երեք բանկային օրվա ընթացքում **(հատոր 1-ին, գ.թ. 9):**

3. 18.12.2009 թվականին Ընկերության և «Շինֆորում» ՍՊԸ-ի միջև կազմված շինմոնտաժային աշխատանքների ընդունման ակտի համաձայն՝ կատարվել է Վահագնի թաղամասի ճանապարհների ասֆալտապատում, մասնավորապես, հետևյալ փողոցներում՝ Հրազդան, Արփա, Արարատյան, Դեբետ, Սևակ և Քուչակ, Նարեկացի և Ջոր. Անդրանիկ **(հատոր 1-ին, գ.թ. 7-8):**

4. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.11.2012 թվականի որոշմամբ Ընկերության՝ Կարեն Մկրտչյանից և Նարինե Ավետիսյանից 2.896.850 ՀՀ դրամ բռնագանձելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ 09.11.2012 թվականի դիմումը մերժվել է **(հատոր 3-րդ, գ.թ. 12-13):**

5. 05.03.2013 թվականին Ընկերությունը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի՝ 2.896.850 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին **(հատոր 1-ին, գ.թ. 5-6):**

6. 27.09.2013 թվականին Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի ներկայացուցիչը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն **(հատոր 2-րդ, գ.թ. 108):**

7. Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի կողմից բերված վերաքննիչ բողոքում Դատարանի վճիռը բողոքարկվել է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

ա) Դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը, այն է՝ հայցային վաղեմության ընթացքի կասեցման ժամանակահատվածի ավարտը չի պայմանավորել պատասխանողի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու հանգամանքով, ինչը չի բխում այդ իրավադրույթի բովանդակությունից.

բ) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 502-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-3-րդ կետերը, չի պարզել վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, պատշաճորեն չի իրականացրել ապացույցների հետազոտման և գնահատման իր գործառույթը, մասնավորապես, չի ուսումնասիրել, թե Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերով հիմնավորվող աշխատանքների կատարումը որքանով է վերաբերում Պայմանագրի առարկային և արդյոք իրականացվել է ամբողջ ծավալով **(հատոր 4-րդ, գ.թ. 52-60):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդու-

նելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-337-րդ և 339-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք դատարան վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի ներկայացման փաստն ինքնին բավարար հիմք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի հիմքով հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին *(տե՛ս, օրինակ, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողլյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ **հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե ներկայացվել է վճարման կարգադրությունը՝ այն դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի համաձայն՝ **հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով,** ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով: Ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» 36.1-րդ գլխի դրույթներով սահմանված են քաղաքացիական դատավարությունում վճարման կարգադրություններ արձակելու առանձնահատկությունները: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.5-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է դիմումը ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ձեռնարկել հետևյալ գործողություններից մեկը.

1) արձակել վճարման կարգադրություն.

2) ամբողջովին մերժել վճարման կարգադրություն արձակելու դիմումը.

3) մասամբ մերժել վճարման կարգադրություն արձակելու դիմումը՝ մյուս մասով արձակելով վճարման կարգադրություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մերժման մասին որոշումը խոչընդոտ չէ, որ հայցվորը հայցի ձևով ներկայացնի իր պահանջի մերժված մասը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.7-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված ժամկետում վճարման կարգադրության վերաբերյալ դատարանում առարկություն ստացվելու դեպքում կարգադրությունը վերանում է: Այդ դեպքում պահանջը կարող է ներկայացվել ընդհանուր հայցային վարույթի կարգով:

Վկայակոչված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը, խախտված իրավունքների պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետներ նախատեսելով, միաժամանակ սահմանել է այդ ժամկետների ընդհատման ու կասեցման կարգը և հիմքերը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ և 340-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի **ընդհատման** համար անհրաժեշտ է **սահմանված կարգով** (օրենքով սահմանված կարգով) հայցը հարուցած լինելու հանգամանքի առկայությունը, այսինքն՝ երբ հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջներին համապատասխան **և ընդունվել է դատարանի կողմից:** Ի տարբերություն հայցային վաղեմության ժամկետի ընդհատման վերը նշված հիմքի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը **կասեցվում է,** եթե առհասարակ ներկայացվել է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Այսինքն՝ տվյալ իրավիճակում օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի կասեցումը պայմանավորել է վճարման կարգադրություն դատարան ներկայացնելու փաստով: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ օրենսդրի կողմից նմանօրինակ տարբերակված մոտեցումն արդարացիորեն պայմանավորված է հայցային վաղեմության ժամկետի ընթացքի **կասեցման և ընդհատման** գործընթացներին և դրանց իրավական հետևանքներին բնորոշ մի շարք առանձնահատկություններով: Այսպես, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման էությունը կայանում է նրանում, որ վաղեմության ժամկետի մեջ չի հաշվարկվում այն ժամանակահատվածը, երբ անձը զրկված է եղել իր խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան հայց հարուցելու հնարավորությունից՝ օրենքում նշված պատճառների (հիմքերի) առկայության հետևանքով: Ընդ որում, կասեցման հիմք հանդիսացած հանգամանքի վերանալու դեպքում՝ դրանից անմիջապես հետո, **վաղեմության ժամկետը շարունակում է հոսել**: Ինչ վերաբերում է հայցային վաղեմության ընթացքի ընդհատմանը, ապա վերջինիս յուրահատկությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային **վաղեմության ժամկետը սկսում է հոսել վերստին**:

Վերոգրյալից զատ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով նախատեսված կարգավորմանը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ վերջինիս բովանդակության վերլուծությունից միանշանակորեն ակնհայտ է դառնում, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե համապատասխան պահանջի վերաբերյալ ներկայացվել է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում: Ըստ այդմ, կասեցման ժամանակահատվածն իր մեջ ընդգրկում է վճարման կարգադրությունը դատարան հանձնելու պահից (կասեցման ժամանակահատվածի մեկնարկի պահ) մինչև դրա կապակցությամբ առարկություն ներկայացնելու պահին ընկած ժամանակահատվածը (կասեցման ժամանակահատվածի հնարավոր առավելագույն վերջնաժամկետ): Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար արդեն իսկ բավարար հիմք կարող է հանդիսանալ միայն վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացումը դատարան:

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից արված՝ **«դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը»** ձևակերպումը վերաբերում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման

ժամանակահատվածին՝ դրա հոսքը սկսված և ավարտված համարելու պահերին, այլ ոչ թե պայմանավորում է բուն կասեցման հիմքի առկայությունը: Ի տարբերություն հայցային վաղեմության ժամկետի ընդհատման դեպքի, երբ պարտադիր կերպով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված հայցի հարուցում, հայցային վաղեմության ժամկետի կասեցման պարագայում այն օրենքի ուժով ինքնաբերաբար կասեցվում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը դատարան ներկայացնելու պահից և ավարտվում է դրա առնչությամբ առարկության ներկայացման պահով: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ դիմումի քննությունն այլ ընթացք է ստանում և առարկության ներկայացման պահին օբյեկտիվորեն վրա չի հասնում, ապա հայցային վաղեմության ժամկետի կասեցումն ուժի մեջ է լինում մինչև դատարանի կողմից որոշակի գործողությունների ձեռնարկումը, մասնավորապես՝ վճարման կարգադրության արձակումը, վճարման կարգադրություն արձակելու դիմումի՝ ամբողջությամբ կամ մասնակի մերժումը:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.6-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վճարման կարգադրությունը պարունակում է կարգադրություն՝ երկու շաբաթվա ընթացքում կատարելու հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ դատարանին առձեռն կամ փոստով՝ ստացման մասին հետադարձ ծանուցմամբ (տեղեկացմամբ), ներկայացնել գրավոր առարկություն, եթե պատասխանողը ներկայացված պահանջը դիտում է որպես չհիմնավորված: Պատասխանողն **իրավունք ունի** գրավոր առարկություն ներկայացնելու նաև պահանջի միայն մի մասի վերաբերյալ՝ մյուս մասով կատարելով վճարման պահանջը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում արձանագրում է, որ դատարան վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի ներկայացումն ինքնին բավարար հիմք է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված համարելու համար՝ անկախ դատարանի կողմից դիմումը մերժելու կամ բավարարելու, պատասխանողի կողմից առարկություններ ներկայացնելու կամ չներկայացնելու հանգամանքներից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է միայն այն դեպքում, երբ նույն հոդվածում նշված հանգամանքները ծագել են կամ շարունակել են գոյություն ունենալ վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ **վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք ծառայած հանգամանքը դադարելու օրվանից շարունակվում է ժամկետի ընթացքը: Ժամկետի մնացած մասը երկարաձգվում է մինչև վեց ամիս,** իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից մինչև վաղեմության ժամկետը:

Վերը նշված հոդվածների բովանդակության վերլուծությունից ակնհայտորեն հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով են սահմանվում հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմքերի կիրառման կարգը և շրջանակը: Այսպես, այն կիրառվում է այն դեպքում, երբ վերոնշյալ հանգամանքները ծագել են կամ շարունակել են գոյություն ունենալ հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ամբողջ ընթացքում: Ընդ որում, ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը երկարաձգվում է մինչև վեց ամիս ժամանակով, իսկ այն դեպքերում, երբ հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա կասեցումից հետո հայցային վաղեմության մնացած ժամկետը երկարաձգվում է մինչև հայցային վաղեմության ավարտը:

Սույն գործով Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով, պատճառաբանել է, որ Ընկերության կողմից հայցային վաղեմության ժամկետը բաց չի թողնվել, քանի որ վերջինիս կողմից դատարան մուտքագրված վճարման կարգադրություն արձակելու

մասին դիմումը 23.11.2012 թվականին մերժվել է, ինչից հետո սահմանված ժամկետում՝ 05.03.2013 թվականին, Ընկերությունը հայցադիմումով դիմել է դատարան:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելով, հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ վճարման կարգադրություն արձակելու պահանջով դատարան դիմում ներկայացնելն ինքնին բավարար չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու համար, քանի որ քննարկվող իրավադրույթը նախատեսում է նաև որոշակի իրավական հետևանք, մասնավորապես՝ պատասխանողի կողմից դատարանին գրավոր առարկություն ներկայացնելու հանգամանքը: Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման ժամանակահատվածն ավարտվում է այն ժամանակ, երբ դատարան ներկայացված դիմումի վերաբերյալ արձակվում է վճարման կարգադրություն և պատասխանողի կողմից դատարանին ներկայացվում է գրավոր առարկություն:

Մինչդեռ վերոնշյալ իրավական վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարան վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ներկայացման փաստն ինքնին արդեն իսկ բավարար և անհրաժեշտ հիմք է հայցային վաղեմության ժամկետի կասեցման համար, իսկ պատասխանողի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու փաստը պայմանավորում է կասեցման ժամանակահատվածի ավարտը, ընդ որում՝ այն դեպքում, երբ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը մերժվել է դատարանի կողմից, կասեցման ժամանակահատվածն ավարտվում է մերժման մասին համապատասխան որոշման կայացմամբ: Այլ կերպ ասած, առարկություն ներկայացնելը կամ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի մերժումը, ըստ էության, հանդիսանում են կասեցման ժամանակահատվածի տևողության վերջնաժամկետը որոշելու հիմքեր:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 18.09.2007 թվականին Ընկերության և Կարեն Մկրտչյանի ու Նարինե Ավետիսյանի միջև կնքված Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Կարեն Մկրտչյանն ու Նարինե Ավետիսյանը պարտավորվել են Ընկերությանը վճարել 2.896.850 ՀՀ դրամ Ընկերության կողմից Տան դիմացի ավտոճանապարհի, բետոնահարթակի, քիվերի և նկուղի պատուհանների պաշտպանիչ պատերի կառուցումից հետո՝ երեք բանկային օրվա ընթացքում: 18.12.2009 թվականին Ընկերության և «Շինֆորում» ՍՊԸ-ի միջև կազմված շինմոնտաժային աշխատանքների ընդունման ակտի համաձայն՝ կատարվել է Վահագնի թաղամասի ճանապարհների ասֆալտապատում, որը, ի թիվս այլ փողոցների, ներառել է Հրազդան փողոցը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.11.2012 թվականի որոշմամբ Ընկերության՝ Կարեն Մկրտչյանից և Նարինե Ավետիսյանից 2.896.850 ՀՀ դրամ բռնագանձելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ 09.11.2012 թվականի դիմումը մերժվել է: 05.03.2013 թվականին Ընկերությունը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Կարեն Մկրտչյանի՝ 2.896.850 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վիճելի պարտավորության կատարման համար սահմանված է որոշակի ժամկետ, գործում համապատասխան աշխատանքների կատարման վերաբերյալ ապացույցի առկայության պայմաններում գտնում է, որ Կարեն Մկրտչյանի ու Նարինե Ավետիսյանի կողմից դրանց դիմաց վճարում կատարելու պարտականությունը կարող էր ծագել առնվազն 23.12.2009 թվականին՝ 18.12.2009 թվականին Ընկերության և «Շինֆորում» ՍՊԸ-ի միջև կազմված շինմոնտաժային աշխատանքների ընդունման ակտով համապատասխան աշխատանքների կատարմանը հաջորդող երեք բանկային օրվա ավարտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան իրավունքի խախտման սկզբնապահ է համարվել հենց հիշյալ աշխատանքների կատարումից հետո երեք բանկային օրվա ավարտի պահը, ապա այդ օրվանից սկսած հաշվարկելու դեպքում հայցային վաղեմության երեք տարին լրանում է 24.12.2012 թվականին: Հետևաբար, ակնհայտ է դառնում, որ վճարման կարգադրություն

արձակելու մասին Ընկերության՝ 09.11.2012 թվականի դիմումը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքում: Ընդ որում, 23.11.2012 թվականին Դատարանի կողմից այդ դիմումը մերժելու մասին որոշման կայացումից հետո Ընկերության կողմից 05.03.2013 թվականին դատարան ներկայացված հայցը ևս բերվել է ժամկետների պահպանմամբ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով՝ եթե հայցային վաղեմության մնացած մասը ժամկետի կասեցումից հետո պակաս է վեց ամսից, ապա տվյալ պարագայում հայցային վաղեմության ժամկետը երկարաձգվում է մինչև վեց ամիս:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ կետի սխալ մեկնաբանության արդյունքում սխալ եզրահանգման է եկել սույն գործով հայցային վաղեմության ժամկետը բաց թողնված լինելու հանգամանքի վերաբերյալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, հայցային վաղեմության ժամկետը բաց թողնված լինելու պատճառաբանությամբ գալով այն եզրահանգման, որ Դատարանի վճիռը ենթակա է բեկանման, այլևս չի անդրադարձել վերաքննիչ բողոքի մյուս հիմքին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված Վճռաբեկ դատարանի լիազորությունը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վերաքննիչ բողոքի մյուս հիմքը քննության առնելու համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0492/02/14
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Ա. Հունանյան
Մ. Հարթենյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0492/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ֆինլեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Աշոտ Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ֆինլեքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Մետաքս» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ տույժի և տոկոսների բռնագանձման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Կազմակերպության ընդդեմ Ընկերության՝ 27.12.2013 թվականին կնքված թիվ 02/12-Ի/2 համաձայնագրի 6-րդ և 7-րդ կետերը և 27.12.2013 թվականին կնքված թիվ 03-12/3 համաձայնագրի 5-րդ և 6-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 813.866 ՀՀ դրամ, որից 680.256 ՀՀ դրամը՝ որպես պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում հաշվեգրված տույժ և տոկոս, 120.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության վճարման ենթակա գումար, 13.610 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է անվավեր ճանաչել 27.12.2013 թվականին կնքված թիվ 02/12-Ի/2 համաձայնագրի 6-րդ և 7-րդ կետերը և 27.12.2013 թվականին կնքված թիվ 03-12/3 համաձայնագրի 5-րդ և 6-րդ կետերը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Կարապետյան) (այսուհետ՝ Դատարան) 15.08.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Ընկերության պահանջած տույժերի չափը նվազեցնել՝ դարձնելով օրական 0,2 տոկոս և Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձել 287.856 ՀՀ դրամ: Հայցը՝ մնացած մասով, և հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.01.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.08.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ, 372-րդ, 437-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ և 131-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով Կազմակերպությունը տուժանքը պակասեցնելու որևէ պահանջ չի ներկայացրել, որպիսի պայմաններում անհասկանալի է Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով տուժանքի չափի պակասեցման համար Դատարանը պարտավոր էր ուսումնասիրել պատասխանողի կողմից գործով ներկայացված ապացույցները՝ պարտավորության խախտման հետևանքների մասով, մինչդեռ Դատարանը, առանց տիրապետելու պարտավորությունների խախտման հետևանքների չափին վերաբերող գեթ մեկ ապացույցի, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգքրի 372-րդ հոդվածը:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 20-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը, փաստաբանի խելամիտ վարձատրության և որպես գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարի բռնագանձման պահանջը մերժելով, անտեսել է, որ Ընկերության կողմից իրավաբանական օգնության դիմելը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հայեցողական իրավունք է, և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի հիմքով փաստաբանն իրավունք ունի հատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.01.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության և Կազմակերպության միջև 28.02.2012 թվականին կնքված թիվ 03-12 ծառայությունների մատուցման պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Կազմակերպությանը մատուցել հետևյալ ծառայությունները՝ հայկա-

կան ծրագրերի (հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր) միջին փաթեթում պահոցի (բազա) ստեղծում կամ դրա առկայության դեպքում՝ վերջինիս արդիականացում և դրա կիրառմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հաշվապահական բոլոր պարտադիր գրանցամատյանների վարում, հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրության և ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների) վարում՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ-ում գործող օրենսդրությամբ սահմանված և գլխավոր հաշվապահի ֆունկցիոնալ պարտականություններից բխող հարկային և այլ հաշվետվությունների, տեղեկությունների և հաշվարկների (այսուհետ բոլորը միասին՝ Հաշվետվություններ) պատրաստում և հանձնում համապատասխան մարմիններին, կադրային գործի վարում, մատուցվող ծառայությունների շրջանակներում ներկայացուցչության ապահովում պետական և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններում **(հատոր 1-ին, գ.թ. 12-13):**

2. Ընկերության և Կազմակերպության միջև 29.06.2012 թվականին կնքված իրավաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ թիվ 02/12-Ի/1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Կազմակերպության հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված իրավաբանական ծառայությունները, իսկ Կազմակերպությունը պարտավորվել է ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց համար Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում **(հատոր 1-ին, գ.թ. 14-15):**

3. Ընկերության և Կազմակերպության միջև 27.12.2013 թվականին կնքված թիվ 03-12/3 համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ կողմերը որոշել են 31.12.2013 թվականից լուծել Ընկերության և Կազմակերպության միջև 28.02.2012 թվականին կնքված ծառայությունների մատուցման թիվ 03-12 պայմանագիրը: Համաձայնագրի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի լուծումը Կազմակերպությանը չի ազատում փաստացի մատուցված ծառայությունների դիմաց առկա վճարային պարտավորություններից, որոնք ենթակա են կատարման պայմանագրում սահմանված ժամկետներում, իսկ համաձայնագրի 5-րդ կետի համաձայն՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության կողմից վճարման պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում Կազմակերպությունն Ընկերության գրավոր պահանջով պարտավորվում է վերջինիս վճարել տույժ՝ չվճարված պարտքի գումարի 0,5 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր կետանցված օրվա համար: Համաձայնագրի 6-րդ կետի համաձայն՝ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 27.12.2013 թվականից և գործում է մինչև Կողմերի կողմից համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարումը **(հատոր 1-ին, գ.թ. 18):**

4. Ընկերության և Կազմակերպության միջև 27.12.2013 թվականին կնքված թիվ 02/12-Ի/2 համաձայնագրի 1-ին կետի համաձայն՝ կողմերը որոշել են 31.12.2013 թվականից լուծել Ընկերության և Կազմակերպության միջև 29.06.2012 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 02/12-Ի պայմանագիրը: Համաձայնագրի 5-րդ կետի համաձայն՝ պայմանագրի լուծումը Կազմակերպությանը չի ազատում փաստացի մատուցված ծառայությունների դիմաց առկա վճարային պարտավորություններից, որոնք ենթակա են կատարման պայմանագրում սահմանված ժամկետներում: Իսկ Համաձայնագրի 6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության կողմից վճարման պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում Կազմակերպությունն Ընկերության գրավոր պահանջով պարտավորվում է վերջինիս վճարել տույժ՝ չվճարված պարտքի գումարի 0,5 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր կետանցված օրվա համար: Համաձայնագրի 7-րդ կետի համաձայն՝ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 27.12.2013 թվականից և գործում է մինչև կողմերի կողմից համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարումը **(հատոր 1-ին, գ.թ. 19):**

5. Ընկերության կողմից 05.03.2014 թվականին Կազմակերպությանն ուղարկվել է պահանջագիր այն մասին, որ Կազմակերպությունը չի վճարել 2013 թվականի հոկտեմ-

բեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար մատուցված ծառայությունների արժեքը, որի արդյունքում հաշվարկվել է տույժ **(հատոր 1-ին, գ.թ. 27-28):**

6. Ընկերության և «Այվազյան և ընկերներ փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի միջև 04.03.2014 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ LSA-FIN-14 պայմանագիրը: Նշված պայմանագրով ծառայությունների արժեքը սահմանվել է 120.000 ՀՀ դրամ: Ընկերության կողմից 14.03.2014 թվականին տրված լիազորագրով Արթուր Այվազյանը լիազորվել է ներկայացնելու Ընկերության իրավունքները և շահերը ՀՀ դատական բոլոր ատյաններում **(հատոր 1-ին, գ.թ. 32, 35-36):**

7. 11.07.2014 թվականին կայացած դատական նիստում Կազմակերպությունը հայտնել է, որ Ընկերությունը պատշաճ չի կատարել իր պարտականությունները և տույժերի գումարը վճարելու պահանջ ներկայացնելիս դրսևորել է անգործություն՝տույժերի գումարը վճարելու պահանջն ուշ է ներկայացրել, բացի այդ, նշել է նաև, որ տույժերի գումարը կազմում է մատուցված ծառայությունների արժեքի մոտավորապես 40 տոկոսը և վերոգրյալի հիման վրա Դատարանին խնդրել է տույժերի գումարը համամասնորեն մեղմել **(հիմք՝ դատական նիստի արձանագրության էլեկտրոնային կրիչ, հատոր 1-ին, գ.թ.121):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝տուժանքի չափը պակասեցնելու հիմքերի, կարգի և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ, 372-րդ, 437-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը բողոքի 1-ին և 2-րդ հիմքերում բարձրացված հարցերին պատասխանելու համար հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդիրներին.

1. արդյո՞ք դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով իրավասու է պակասեցնել պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված տուժանքի տոկոսադրույքը.

2. արդյո՞ք իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելու հանգամանքն ինքնին բացառում է փաստաբանի խելամիտ վարձատրության՝ որպես դատական ծախսի փոխհատուցման հնարավորությունը:

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վկայակոչված հոդվածների իրավական վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը *(տե՛ս, «Թամամ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ «ԱՄ-ԿԱ» ՍՊԸ-ի թիվ 3-27(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ չսահմանափակելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը՝ օրենսդիրը միևնույն ժամանակ իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապահովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Դատարաններին վերապահված նման իրավունքն իրավական այն միջոցներից մեկն է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահելու արգելքին *(տե՛ս, ըստ դիմումի «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի՝ Երևանի քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 31.10.2008 թվականի վճիռը պարզաբանելու մասին թիվ ԵՄԴ/0134/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ, իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում **տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել **տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում կամ այնպիսի չափով նվազեցում,** որը կիմաստազրկի տուժանքի ինստիտուտը և չի ծառայի իր նպատակին (պարտավորությունների կատարման երաշխիք) *(տե՛ս, Երևանի քաղաքապետարանի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով և զարգացնելով տուժանքի ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով իրավունք ունի ***պակասեցնել միայն տուժանքի գումարի չափը, այլ ոչ թե նվազեցնել պայմանագրով (համաձայնագրով) սահմանված տուժանքի տոկոսադրույքը:*** Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է հետևյալով.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատա-

րելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 94–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1–ին հոդվածի 1–ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է նույն օրենսգրքով, օրենքով կամ կամովին ստանձնած պարտավորությամբ: Նույն հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր: Նույն հոդվածի 4–րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438–րդ):

Վերոնշյալ հոդվածների իրավական բովանդակության վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական օրենսդրության վերը նշված սկզբունքներից կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ սահմանելու, պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման որոշելու սկզբունքների իրականացումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների՝ կողմերի համար նախատեսել է հնարավորություն՝ կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր և սահմանելու ***պայմանագրի պայմանները***, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Օրենսդիրը միաժամանակ նախատեսել է մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը, որը ենթադրում է, որ պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ցանկացած այլ անձինք իրավասու չեն միջամտել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների գործերին, եթե նրանք իրենց գործունեությունն իրականացնում են օրենքի պահանջներին համապատասխան: Նշված սկզբունքը ենթադրում է նաև, որ որևէ անձ, այդ թվում նաև դատարանն իրավունք չունի կամայականորեն միջամտելու կողմերի պայմանագրային հարաբերություն-

ներին՝ իր հայեցողությամբ պայմանագրային որևէ դրույթ փոփոխելու եղանակով: Դատարանը պայմանագրի որևէ դրույթ իրավասու է փոփոխել միայն համապատասխան հայցապահանջի առկայության պայմաններում: Նման եզրահանգումը բխում է ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխի (Պայմանագիր փոփոխելը և լուծելը) իրավակարգավորումից, այլև դատարանի՝ որպես պետական իշխանության մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակից:

Տուժանքի տոկոսադրույքի մասին պայմանը Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ պայմանագրի պայման է, միաժամանակ նաև՝ այն կնքած կողմերի ազատ կամքի դրսևորում: Որպես պայմանագրի պայման՝ տուժանքի տոկոսադրույքի չափը կարող է փոփոխվել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխի (Պայմանագիր փոփոխելը և լուծելը) կանոններով: Հետևաբար դատարանն իրավասու չէ իր նախաձեռնությամբ և իր իսկ հայեցողությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով նվազեցնել պայմանագրով նախատեսված տուժանքի տոկոսադրույքի չափը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի իրավակարգավորումը, Վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ, բացառապես ենթադրում է պայմանագրով նախատեսված տոկոսադրույքով հաշվարկված տուժանքի չափի պակասեցում, ընդ որում, նման պակասեցումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդրի կողմից կիրառված «ակնհայտ անհամաչափ» եզրույթը, ըստ էության, գնահատողական բնույթի կատեգորիա է, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ենթակա է պարզման՝ հաշվի առնելով պարտավորության խախտման հանգամանքները և վրա հասած հետևանքները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանները պետք է հաշվի առնեն պարտավորության չկատարման (խախտման) տևողությունը, պարտավորության մայր գումարի և հաշվարկված տուժանքի գումարի հարաբերակցությունը, պայմանագրի (ապրանքների, մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների) գինը, պարտավորության խախտման արդյունքում կորուստների առկայությունը և այլն: Ընդ որում, վերոգրյալի վերաբերյալ դատարանների դատողությունները պետք է բխեն գործի փաստական հանգամանքներից և ի հավաստումն դրանց՝ գործում առկա ապացույցներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը *(տե՛ս, Ռոզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Կազմակերպության միջև 28.02.2012 թվականին և 29.06.2012 թվականին համապատասխանաբար կնքվել են թիվ 03-12 և թիվ 02/12-Ի/1 ծառայությունների մատուցման պայմանագրերը: Հետագայում՝ Ընկերության և Կազմակերպության միջև 27.12.2013 թվականին կնքված թիվ 03-12/3 և թիվ 02/12-Ի/2 համաձայնագրերի 1-ին կետով 31.12.2013 թվականից լուծվել է Ընկերության և Կազմակերպության միջև կնքված ինչպես 28.02.2012 թվականի ծառայությունների մատուցման թիվ 03-12 պայմանագիրը, այնպես էլ 29.06.2012 թվականի իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 02/12-Ի/1 պայմանագիրը: Նշված համաձայնագրերով սահմանվել է, որ պայմանագրերի լուծումը Կազմակերպությանը չի ազատում փաստացի մատուցված ծառայությունների դիմաց առկա վճարային պարտավորություններից, որոնք ենթակա են կատարման պայմանագրում սահմանված ժամկետներում: Պայմա-

նագրով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության կողմից վճարման պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում Կազմակերպությունն Ընկերության գրավոր պահանջով պարտավորվում է վերջինիս վճարել տույժ՝ չվճարված պարտքի գումարի 0,5 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր կետանցված օրվա համար: Միաժամանակ համաձայնագրերով սահմանվել է, որ համաձայնագրերն ուժի մեջ են մտնում 27.12.2013 թվականից և գործում են մինչև կողմերի կողմից համաձայնագրերով սահմանված պարտավորությունների կատարումը: Սույն գործով չի վիճարկվել փաստն այն մասին, որ Կազմակերպությունը 2013 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար մատուցված ծառայությունների արժեքը՝ 1.800.000 ՀՀ դրամը վճարել է 17.03.2014 թվականին, որպիսի հիմքով հաշվարկված տոկոսները և տույժերը կազմել են 680.256 ՀՀ դրամ:

Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով, արձանագրել է, որ հայցվորի կողմից հաշվարկված տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, մասնավորապես, Դատարանը պատճառաբանել է, որ եթե դրամական շրջանառության հիմնական մասնակիցներ բանկերի համար, որոնց նկատմամբ կետանցված դրամական պարտավորությունների հետևանքները, գործունեության ընույթից ելնելով, ավելի ծանր են, քան ծառայություններ մատուցող ցանկացած կազմակերպության համար, տուժանքի նորմալ չափը, որպես կանոն, 0,2 տոկոսն է վարկի մայր գումարի համար, ապա վարկային գործունեության համեմատությամբ ֆինանսական տեսանկյունից պակաս ռիսկային գործունեություն իրականացնող Ընկերության համար օրական 0,5 տոկոս տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին: Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտել է, որ համաձայնագրերով նախատեսված օրական 0,5 տոկոսի չափով տույժերի չափը պետք է նվազեցնել՝ դարձնելով օրական 0,2 տոկոս:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, ըստ էության, համաձայնել է վերջինիս եզրահանգումներին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը շարադրված վերլուծությունների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների իրավաչափությունը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործով հայցվորը Դատարան է ներկայացրել 680.256 ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում հաշվեգրված տույժ և տոկոս բռնագանձելու վերաբերյալ պահանջ, մինչդեռ Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով և վճռելով կողմերի միջև կնքված համաձայնագրերով սահմանված օրական 0,5 տոկոսի չափով տույժերի չափը նվազեցնել՝ այն դարձնելով օրական 0,2 տոկոս, անտեսել է, որ օրական 0,5 տոկոսի չափով տույժ սահմանելը կողմերի ազատ կամահայտնության արդյունքն է, նրանց կողմից կնքված համաձայնագրերով դրսևորած վարքագիծը, որպիսի պայմաններում Դատարանն իրավունք ուներ, այն էլ այն դեպքում, երբ տուժանքն ակնհայտ անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, պակասեցնելու միայն հաշվարկված տուժանքի գումարի չափը, այլ ոչ թե փոփոխության ենթարկեր պայմանագրով սահմանված տուժանքի տոկոսադրույքը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, նվազեցնելով կողմերի միջև կնքված համաձայնագրերով նախատեսված տուժանքի տոկոսադրույքի չափը և այն օրական 0,5 տոկոսից դարձնելով օրական 0,2 տոկոս, իսկ Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի եզրահանգմանը, խախտել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, արդյունքում նաև՝ պայմանագրի ազատության և մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքները:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը համապատասխան իրավական գնահատման չի արժանացրել այն, որ Դատարանը չի մատնանշել այն ապացույցները, որոնց հիման վրա հանգել է այն հետևության, որ կողմերի միջև կնքված համաձայնագրերով սահմանված և հաշվարկված տուժանքն ակնհայտ անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոք բերած անձի այն փաստարկին, որ Կազմակերպությունը տուժանքը պակասեցնելու որևէ պահանջ չի ներկայացրել, որպիսի պայմաններում իրավաչափ չէ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառումը, ապա Վճռաբեկ դատարանն գտնում է, որ այն անհիմն է, քանի որ գործում առկա՝ Դատարանի 11.07.2014 թվականի դատական նիստի արձանագրության ուսումնասիրությունից հետևում է, որ Կազմակերպությունը Դատարանին խնդրել է տույժերի գումարը համամասնորեն պակասեցնել:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Սահմանադրորեն երաշխավորված յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է: Իրավաբանական օգնություն կարող է ստանալ ցանկացած անձ, ցանկացած հարցի կապակցությամբ՝ անկախ նրա կարգավիճակից, գործունեության ոլորտից, իրավահարաբերության բնույթից, պետական գործունեության տեսակից, ընթացակարգի առանձնահատկություններից և այլն: Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխիք է նաև հանդիսանում Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքների, մասնավորապես՝ իրավունքների և ազատությունների դատական, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի (ՀՀ Սահմանադրության հոդված 18, մաս 1), իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունքի (ՀՀ Սահմանադրության հոդված 18, մաս 2) իրացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008 թվականի թիվ ՍԴՈ-765 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի վերաբերյալ, մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝

1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադ-

րելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն).

2) ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն).

3) քրեական գործերով պաշտպանություն.

4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը:

Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների (ընդունվել են հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրեսի կողմից, ուժի մեջ է մտել 07.09.1990 թվականին) 13-րդ կետի համաձայն՝ իրենց հաճախորդների նկատմամբ իրավաբանները կատարում են հետևյալ գործառույթները.

ա) խորհրդատվություն հաճախորդներին՝ նրանց իրավաբանական համակարգի աշխատանքի վերաբերյալ այն չափով, որքանով դա վերաբերում է հաճախորդների իրավաբանական իրավունքներին ու պարտականություններին.

բ) մատչելի բոլոր միջոցներով հաճախորդներին օգնություն ցույց տալը և նրանց շահերը պաշտպանելու համար օրենսդրական միջոցներ ձեռնարկելը.

գ) անհրաժեշտության դեպքում հաճախորդներին օգնություն ցույց տալը դատարաններում, տրիբունալներում կամ վարչական մարմիններում:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեություն է, դրսևորվում է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմամբ ու պաշտպանությամբ՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստաբանական գործունեությունը՝ որպես վստահորդի և փաստաբանի միջև ծագած իրավահարաբերություն, ներառում է տարբեր գործողություններ՝ սկսած խորհրդատվությունից, ներառյալ՝ ներկայացուցչությունը, պաշտպանությունը քրեական գործերով, օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ իրավաբանական օգնության իրավահարաբերությունը ծագում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելու պահից, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Ընդ որում, կախված փաստաբանի և վստահորդի միջև առաջացած իրավահարաբերության բնույթից, իրավաբանական օգնությունը կարող է մի դեպքում սահմանափակվել օրենքում նշված գործողություններից մեկով կամ ներառել դրանցում նշված տարբեր գործողություններ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում իրավաբանական օգնության բնույթը և շրջանակները պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստաբանի և վստահորդի միջև ծագած իրավահարաբերության քաղաքացիաիրավական հիմքին, քանի որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցուցաբերվում է համապատասխան պայմանագրի կամ այլ իրավաբանական փաստի հիման վրա: Ընդ որում, նշված դեպքերում նախատեսվում են իրավաբանական օգնության ձևերը և շրջանակները, որոնք փաստաբանը պետք է ցույց տա կոնկրետ անձին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու բնույթը, դրանում ներառվող գործողությունների շրջանակները և իրավաբանական օգնության ժամանակահատվածը կարող է պարզվել կողմերի միջև իրավահարաբերության առաջացման հիմք համարվող իրավաբանական փաստերի կամ կատարված փաստացի գործողությունների ուսումնասիրության արդյունքում (պայմանագիր, լիազորագիր և այլն) *(տե՛ս, Կրոմվել Գրիգորյանն*

ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրությանև գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132–րդ հոդվածի 5–րդ կետի 4–րդ ենթակետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ.

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է փաստաբանի խելամիտ վարձատրությանը՝ որպես դատական ծախս լինելու հանգամանքին, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախևառաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս, թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար *(տե՛ս, Նարինե Ռոստոմյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ–ի թիվ ԵԱՔԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մեկ այլ որոշմամբ անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցին, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը *(տե՛ս, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Սույն գործով Դատարանը, փաստաբանի խելամիտ վարձատրության վճարման ենթակա գումարի բռնագանձման պահանջը մերժելով, պատճառաբանել է, որ հայցվորը իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է, նրա աշխատակից–ներկայացուցիչները, որոնք մասնագիտությամբ իրավաբաններն են, ակտիվորեն մասնակցել են բոլոր նիստերին: Միաժամանակ Դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12–րդ հոդվածը, պատճառաբանել է, որ Ընկերության շահերը պաշտպանելու համար փաստաբան լինելը պարտադիր չէ, միայն աշխատակից լինելը բավարար է, որ–

պիսի պարագայում որևէ նշանակություն չունի հայցվորի՝ փաստաբան աշխատակիցներ չունենալու հանգամանքը: Դատարանն արձանագրել է, որ «հայցվոր կողմի աշխատակից-ներկայացուցիչներն են հիմնականում դատական նիստերի ընթացքում պաշտպանել հայցվորի շահերը, իսկ այն դեպքում, երբ հարցերին պատասխանել է փաստաբան Արթուր Այվազյանը, կամ պատասխանելիս հուշել են պատասխանը, կամ լրացրել այն, հետևաբար հայցվորի ներկայացուցիչների նման վարքագծի արդյունքում Դատարանի մոտ ներքին համոզմունք է ձևավորվել, որ հայցվորի կողմից իր իրավունքի իրացումն իրականացվել է չարաշահման միջոցով՝ արտաքուստ իրեն պատկանող իրավունքի շրջանակներում»:

Վերաքննիչ դատարանն իր հերթին նշել է, որ հայցվորը հանդիսանում է իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն, հետևաբար նա իր իրավունքները դատարանում պաշտպանելու հնարավորությունն ունեցել է՝ առանց նշված պայմանագրով մատուցած ծառայությունների և դրանք սույն գործի պարագայում անհրաժեշտ չեն եղել, ուստի դրանց վարձատրությունը խելամիտ համարվել չի կարող, որպիսի պայմաններում փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջը Դատարանի կողմից իրավաչափ է մերժվել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և «Այվազյան և ընկերներ փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի միջև 04.03.2014 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ LSA-FIN-14 պայմանագիրը և որպես ծառայություններ արժեք նախատեսվել է 120.000 ՀՀ դրամը: Ընկերության կողմից 14.03.2014 թվականին տրված լիազորագրով Արթուր Այվազյանը լիազորվել է ներկայացնելու Ընկերության իրավունքները և շահերը ՀՀ դատական բոլոր ատյաններում: Արթուր Այվազյանն Ընկերության ներկայացուցիչների հետ միաժամանակ մասնակցել է Դատարանի 20.06.2014 թվականի (հատոր 1-ին, գ.թ. 79), 30.06.2014 թվականի (հատոր 1-ին, գ.թ. 81), 11.07.2014 թվականի (հատոր 1-ին, գ.թ. 101), 30.07.2014 թվականի (հատոր 1-ին, գ.թ. 113) դատական նիստերին:

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը, օգտվելով իր իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքից, կնքել է իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր փաստաբանական գրասենյակի հետ՝ լիազորելով փաստաբան Արթուր Այվազյանին ներկայացնելու դատարանում իր շահերը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համապատասխան իրավական հիմքի առկայության (տվյալ դեպքում՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի) պայմաններում, իրավաբանական ծառայություններ մատուցող Ընկերություն լինելու հանգամանքն ինքնին բավարար չէ փաստաբանի խելամիտ վարձատրությունը՝ որպես դատական ծախսի փոխհատուցում մերժելու համար: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և փաստաբանի խելամիտ վարձատրության համար փոխհատուցում ստանալու իրավունքը չի կարող գտնվել կախվածության մեջ այնպիսի հանգամանքներից, ինչպիսին են իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելը կամ համապատասխան մասնագետ ունենալը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջը մերժելով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ մասով Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, սահմանափակել են Ընկերության՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ տույժի և տոկոսների, փաստաբանի վարձատրության գումարների բռնագանձման պահանջների մասով,

նոր քննության ուղարկելու համար՝ գործի փաստերը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պարզելու և գնահատելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2015 թվականի որոշումը և գործը՝ ըստ հայցի «Ֆինլեքս» ՍՊԸ-ի ընդդեմ «Մետաքս» ԲԲԸ-ի՝ տույժի և տոկոսների, փաստաբանի վարձատրության գումարների բռնագանձման պահանջների մասով, ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0888/02/14
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Հ. Ենոքյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0888/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան»» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Նիկոլայ Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան»» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 1.313.605 ՀՀ դրամ, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 08.09.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 08.09.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության և Կազմակերպության միջև 11.01.2013 թվականին կնքված պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ անհաղթահարելի ուժ է դիտվել նաև նշված պայմանագիրը կնքելուց հետո ծագած ցանկացած ակտը կամ գործողությունը, որպիսիք տվյալ դեպքում դրսևորվել են ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից կազմված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և դրա հիման վրա վագոնն ի պահ հանձնելու եղանակներով: Ընդ որում, անհաղթահարելի ուժն առաջացել է վագոնն ի պահ հանձնելու պահից և շարունակվել է մինչև վարչական վարույթի արդյունքում համապատասխան որոշում կայացնելը:

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Ռուսաստանի Դաշնության երկաթուղային տրանսպորտի կանոնադրության մասին» դաշնային օրենքի 22-րդ հոդվածը, ինչը հանգեցրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի խախտմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 08.09.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 11.01.2013 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է Հարավկովկասյան երկաթուղում իրականացվող բեռնափոխադրումների և ծառայությունների մատուցման հետ կապված հաշվարկների կազմակերպման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) **(հատոր 1-ին, գ.թ. 10-17)**.

2) Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրը կարգավորում է դրա կողմերի փոխհարաբերությունները՝ կապված հաշվարկների կազմակերպման և փոխադրավճարների, գանձումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության երկաթուղով բոլոր տեսակի հաղորդակցություններում երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ժամանակ Ընկերությանը հասանելիք այլ վճարների հետ **(հատոր 1-ին, գ.թ. 10-17)**.

3) Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ Ընկերության կայարաններում բեռնափոխադրումների կազմակերպման հետ կապված լրացուցիչ գանձումները և այլ վճարները հաշվարկվում են Ընկերության պաշտոնական կայքում տեղադրված «Բեռնափոխադրումների կազմակերպման ժամանակ Ընկերության կողմից տրամադրվող աշխատանքների և ծառայությունների գնացուցակ»-ի այն դրույքաչափով, որը գործում է փոխադրման փաստաթղթերում բեռը փոխադրման ընդունելու մասին օրացուցային դրոշմակը դնելու ամսաթվին **(հատոր 1-ին, գ.թ. 10-17)**.

4) Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կողմերից և ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով իր ցանկացած պարտավորությունների ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու համար, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, այն է՝ ջրհեղեղ, հրդեհ, երկրաշարժ և այլ բնական աղետներ, Պայմանագրի կնքման պահից հետո ծագած ցանկացած ակտեր կամ գործողություններ: Եթե այդ հանգամանքներից որևէ մեկն անմիջական ազդեցություն է ունեցել Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավորությունների կատարման վրա, ապա պարտա-

վորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան որ գործել են այդ ուժերը **(հատոր 1-ին, գ.թ. 10-17)**.

5) 07.12.2013 թվականին կազմվել է ընդհանուր ձևի ակտ այն մասին, որ Գյումրի-Մասիս ուղի ժամանելիս թիվ 95012951 վագոնի զննությունից պարզվել է, որ դրա վրայից բացակայում է մաքսային կապարակնիքը **(հատոր 1-ին, գ.թ. 56)**.

6) 10.12.2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն այն մասին, որ վերը նշված վագոնի վրայից բացակայում է «Այրում» մաքսային կետում տեղադրված մաքսային ապահովման միջոցը **(հատոր 1-ին, գ.թ. 58)**.

7) 18.12.2013 թվականի գրությամբ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալը Կոմիտեի համապատասխան աշխատակիցներին գրավոր հանձնարարել է բեռի բացթողումը թույլատրել միայն նյութերի վերջնական ընթացքը լուծելուց հետո՝ այդ փաստաթղթի պատճենը նաև ուղարկելով Կազմակերպությանը **(հատոր 1-ին, գ.թ. 79)**.

8) 08.01.2014 թվականին Կազմակերպության գլխավոր տնօրենը դիմել է Կոմիտեին՝ խնդրելով թույլատրել հանձնաժողովի ներկայությամբ բացել վագոնը և դատարկել բեռը: Ի պատասխան՝ Կոմիտեն 31.01.2014 թվականին հայտնել է, որ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 29.01.2014 թվականի գրությամբ թույլատրվել է բեռի բացթողումը **(հատոր 1-ին, գ.թ. 77, 80)**.

9) Ընկերության կողմից կազմված ընդունող հանձնողի թիվ 002108 հուշաթերթիկի համաձայն՝ թիվ 95012951 վագոնի բեռնային աշխատանքը, տվյալ դեպքում՝ բեռնաթափումը, ավարտվել է 01.02.2015 թվականին՝ ժամը 13:50-ին, նույն օրը ժամը 15:10-ին նշված վագոնը հավաքվել է և ժամը 19:35-ին կայարանից ուղարկվել է **(հատոր 1-ին, գ.թ. 106)**.

10) 05.02.2014 թվականին Ընկերության Գլխավոր տնօրենը Կազմակերպության գլխավոր տնօրենին պահանջագիր է ներկայացրել 01.02.2014 թվականի դրությամբ առաջացած 1.313.600 ՀՀ դրամի չափով պարտքը վճարելու մասին՝ նաև կազմելով ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ: Ի պատասխան դրան՝ Կազմակերպության գլխավոր տնօրենը 10.02.2014 թվականին նաև հայտնել է, որ միայն 01.02.2014 թվականին է թույլատրվել բեռնաթափել վագոնը, բայց քննությունը դեռևս չի ավարտվել, և հենց պարզվի, թե ով է մեղավոր կապարակնիքի բացակայության հարցում, ապա վագոնի պարապուրդի գումարը կարող է պահանջել նրանից **(հատոր 1-ին, գ.թ. 72, 73, 75)**.

11) Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության 27.02.2014 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 298 որոշմամբ Կազմակերպության տնօրեն Ռոբերտ Սարգսյանի նկատմամբ վարչական գործի վարույթը կարճվել է իրավախախտման կազմի բացակայության պատճառաբանությամբ, քանի որ մաքսային ապահովման միջոցը կորել է ոչ թե վերջինիս, այլ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Թումանյանի բաժնի աշխատակից Բագրատ Թամազյանի կողմից վագոնի պահպանությունը ոչ պատշաճ կատարելու հետևանքով **(հատոր 1-ին, գ.թ. 59-61)**:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունն անհաղթահարելի ուժի հետևանքով խախտելու համար պատասխանատվության

առանձնահատկություններին՝ միաժամանակ վերահաստատելով և զարգացնելով իր նախկինում արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից վեճերի և այլ գործերի լուծման ժամանակ այլ պետության իրավունքի նորմերի կիրառելիության հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների** հավասարության, **կամքի ինքնավարության** և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, **պայմանագրի ազատության**, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց**: **Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման**:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածին, արձանագրել է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական օրենսդրության վերը նշված սկզբունքներից կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ սահմանելու, պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման որոշելու իրականացումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների՝ կողմերի համար նախատեսել է հնարավորություն՝ կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր և սահմանելու պայմանագրի պայմանները *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ընդդեմ «ԼԵՎ ԳՐՈՒՊ ԻՐԱՎԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/1489/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի,** այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ

պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաա» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը միևնույն ժամանակ հավելում է, որ մեղքի՝ որպես պատասխանատվության պարտադիր պայմանի առկայության մասին կանոնը կրում է դիսպոզիտիվ բնույթ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածում օրենսդիրը բացառություն է նախատեսել այն դեպքերի համար, երբ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարող է վրա հասնել անկախ մեղքի առկայությունից, դրանք են՝ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերը: Օրենքով նախատեսված դեպք է, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի իրավակարգավորումը, որի մեկնաբանությունից բխում է, որ եթե անձը պարտավորությունը չի կատարել կամ անպատշաճ է կատարել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս, ապա պատասխանատվությունը վրա է հասնում անկախ նրա մեղքի առկայությունից: Ընդ որում, օրենսդրի կողմից նման տարբերակված մոտեցում դրսևորելը արդարացված է, քանի որ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով և հետևաբար ենթադրվում է, որ նման դեպքերում բացասական հետևանքների համար պատասխանատվությունը պետք է իր վրա վերցնի հենց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձը:

Այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք՝ որպես գույքային հարաբերություններում սեփական ռիսկով գործող, գործարարության համապատասխան ոլորտում մասնագիտացված սուբյեկտներ, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում անկախ մեղքի առկայությունից:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրն ընդհանուր կանոնից նախատեսել է որոշակի բացառություն, որի դեպքում պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում**:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ 10.12.2013 թվականին Կոմիտեի կողմից կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն այն մասին, որ թիվ 95012951 վագոնի վրայից բացակայում է «Այրում» մաքսային կետում տեղադրված մաքսային ապահովման միջոցը**:** 18.12.2013 թվականի գրությամբ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալը Կոմիտեի համապատասխան աշխատակիցներին գրավոր հանձնարարել է բեռի բացթողումը թույլատրել միայն նյութերի վերջնական ընթացքը լուծելուց հետո: 08.01.2014 թվականին Կազմակերպության գլխավոր տնօրենը դիմել է Կոմիտեին՝ խնդրելով թույլատրել հանձնաժողովի ներկայությամբ բացել վագոնը և դատարկել բեռը, որին ի պատասխան՝ Կոմիտեն 31.01.2014 թվականին հայտնել է, որ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 29.01.2014 թվականի գրությամբ թույլատրվել է բեռի բացթո-

դումը: Դրանից հետո Ընկերության կողմից կազմված՝ ընդունող հանձնողի թիվ 002108 հուշաթերթիկի համաձայն՝ թիվ 95012951 վագոնի բեռնային աշխատանքը, տվյալ դեպքում՝ բեռնաթափումը, ավարտվել է 01.02.2015 թվականին, նույն օրը նշված վագոնը հավաքվել և կայարանից ուղարկվել է:

Դատարանը, հաստատված համարելով, որ Պայմանագրի 5.1-րդ կետով սահմանվել է, որ Պայմանագրի կողմերից և ոչ մեկը պատասխանատվություն չի կրում իր ցանկացած պարտավորությունների ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու համար, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, այն է՝ ջրհեղեղ, հրդեհ, երկրաշարժ և այլ բնական աղետներ, նույն պայմանագրի կնքման պահից հետո ծագած ցանկացած ակտեր կամ գործողություններ, ինչպես նաև արձանագրելով, որ 2013 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 2014 թվականի փետրվարի 01-ն ընկած ժամանակահատվածի նկատմամբ առկա է (առաջացել է) անհաղթահարելի ուժի հանգամանքներ (ֆորս-մաժոր), քանի որ Կոմիտեի կողմից վերոնշյալ ժամանակահատվածում մաքսային ձևակերպումներ և բեռի բացթողում չի թույլատրվել, գտել է, որ պատասխանողը որևէ պատասխանատվության ենթարկվել չի կարող, ու հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով 14.02.1992 թվականին ընդունված և նույն օրն ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Անկախ պետությունների համագործակցության երկաթուղային տրանսպորտը համակարգող մարմինների մասին» համաձայնագրի և դրա շրջանակներում 13.02.2008 թվականին կնքված կոնցեսիոն պայմանագրի դրույթներին, կիրառել է «Ռուսաստանի Դաշնության երկաթուղային տրանսպորտի կանոնադրության մասին» դաշնային օրենքի 22-րդ հոդվածը, ու գտնելով, որ անհիմն է Դատարանի եզրահանգումն այն մասին, որ Կազմակերպությունը որևէ պատասխանատվություն չի կարող կրել, վերաքննիչ բողոքը բավարարել է և Դատարանի վճիռը բեկանելով՝ գործն ուղարկել է նոր քննության:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, Պայմանագիրը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, արձանագրում է, որ դրա կողմերը, ելնելով կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ սահմանելու սկզբունքներից, Պայմանագրի 5.1-րդ կետով որպես անհաղթահարելի ուժ են դիտել ու որպես դրա հետևանքով պարտավորության կատարումից ազատվելու հիմք են նախատեսել նաև «Պայմանագրի կնքման պահից հետո ծագած ցանկացած ակտերը կամ գործողությունները», «եթե այդ հանգամանքներից որևէ մեկն անմիջական ազդեցություն է ունեցել Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավորությունների կատարման վրա»:

Հիմք ընդունելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պայմանագիրը կնքելուց հետո Պայմանագրի 5.1-րդ կետի իմաստով ծագել է այնպիսի ակտ, տվյալ դեպքում՝ 10.12.2013 թվականին Կոմիտեի կողմից կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որն անմիջականորեն ազդեցություն է ունեցել Կազմակերպության կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում պարտավորությունը կատարելու վրա, և այդ ժամկետն ավարտվել է միայն Կոմիտեի կողմից բեռի բացթողումը թույլատրելուց հետո:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում չի կարող վրա հասնել Պայմանագիրը չկատարելու համար Կազմակերպության պատասխանատվությունը, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել կողմերի կամահայտնությամբ պայմանագրում սահմանված իմաստով անհաղթահարելի ուժի հետևանքով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոք բերած անձի փաստարկը՝ վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը խախտելու վերաբերյալ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի հա-

մաձայն՝ դատարանը վեճերը և այլ գործերը լուծում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանն օրենքին կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան կարող է կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության դատարանները վեճերը և այլ գործերը լուծելիս պետք է ղեկավարվեն ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով, իսկ այլ պետության իրավունքի նորմը Հայաստանի Հանրապետության դատարանները կարող են կիրառել միայն Հայաստանի Հանրապետության օրենքին կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վեճը լուծելիս կիրառել է այլ պետության, տվյալ դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության իրավունքի նորմը՝ «Ռուսաստանի Դաշնության երկաթուղային տրանսպորտի կանոնադրության մասին» դաշնային օրենքի 22-րդ հոդվածն այն պատճառաբանությամբ, որ «14.02.1992 թվականին ուժի մեջ մտած՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Անկախ պետությունների համագործակցության երկաթուղային տրանսպորտը համակարգող մարմինների մասին» համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը, որը կատարում է Հայաստանի երկաթուղային տրանսպորտի համակարգի կոնցեսիոն կառավարումը 13.02.2008 թվականին կնքված կոնցեսիոն պայմանագրով, իր գործունեությունն իրականացնում է երկաթուղով բեռի փոխադրման հետ կապված ծառայությունների մատուցման միասնական կանոններով, որոնք նախատեսված են Երկաթուղային տրանսպորտի կանոնադրությամբ»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ 14.02.1992 թվականին ուժի մեջ մտած «Անկախ պետությունների համագործակցության երկաթուղային տրանսպորտը համակարգող մարմինների մասին» համաձայնագիրը, և ոչ էլ 07.02.2008 թվականին ՀՀ կառավարության թիվ 83-Ա որոշման հավելված հանդիսացող «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲ ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությանը փոխանցելու մասին» 13.02.2008 թվականին ստորագրված կոնցեսիոն պայմանագիրը նման կարգավորում չեն նախատեսում:

Ավելին՝ վերոնշյալ կոնցեսիոն պայմանագրի 2-4-րդ հոդվածի համաձայն՝ «կոնցեսիոն ժամկետի ամբողջ ընթացքում կոնցեսիոները («Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն) պարտավոր է ղեկավարվել և իր գործունեությունն իրականացնել կիրառվող օրենսդրությանը համապատասխան»: Նույն պայմանագրի 1-1-ին հոդվածի համաձայն՝ «կիրառվող օրենսդրություն՝նշանակում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ռուսաստանի Դաշնության երկաթուղային տրանսպորտի կանոնադրության մասին» դաշնային օրենքը սույն գործով կիրառելի չէր, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, այն սխալ կիրառելով, սխալ եզրահանգման է եկել նաև գործի նոր քննության անհրաժեշտության վերաբերյալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրա-

քանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ Կազմակերպության ներկայացուցիչը վճռաբեկ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և այդ ծավալով վճարված պետական տուրքի գումարից, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի, միայն 39.400 ՀՀ դրամն է անհրաժեշտ եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարից 39.400 ՀՀ դրամը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2014 թվականի որոշումն ու օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2014 թվականի վճռին:

2. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ից հօգուտ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան»» ՓԲԸ-ի բռնագանձել 39.400 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված գումարից փոխհատուցման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՏԴ3/0222/02/13
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ՏԴ3/0222/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Ռուզաննա Թադևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Վաչագան Խաչատուրյանի և Անդրանիկ Գուլքանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Վաչագան Խաչատուրյանից և Անդրանիկ Գուլքանյանից համապարտության կարգով բռնագանձել Ընկերության կողմից հատուցված 849.840 ՀՀ դրամ ապահովագրական հատուցման գումարը:

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչիկյան) (այսուհետ՝ Դատարան) 05.09.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.12.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.09.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը և 2-րդ կետի «բ» ենթակետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, հաստատելով Դատարանի դիրքորոշումը, արձանագրել է, որ Անդրանիկ Գուլքանյանը՝ որպես ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձ, չի խախտել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի, ինչպես նաև թիվ SC138136 ԱՊՊԱ վկայագրի 13-րդ կետի, դրա անբաժանելի մաս հանդիսացող «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010 թվականի թիվ 10-Լ որոշմամբ հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմաններ»-ի 7-րդ գլխի 7.1 կետի պահանջները, քանի որ տուժողին վրաերթի ենթարկելու հետևանքով՝ վերջինիս կյանքի հետ կապված առաջին օգնությունը ցուցաբերելու և հիվանդանոց տեղափոխելու անհրաժեշտությամբ, ոստիկանության բաժնում կատարված համապատասխան քննությամբ պայմանավորված գտնվել է այնպիսի գերլարված և գերհույզ վիճակում, որ հնարավոր չի եղել պատահարի մասին անհապաղ տեղեկացնել ապահովագրական ընկերությանը:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածին, այն մեկնաբանել է յուրովի, ինչի արդյունքում գտել է, որ Անդրանիկ Գուլքանյանի գերլարված և գերհույզ վիճակում գտնվելու հանգամանքը դասվում է վերը նշված հոդվածով նախատեսված բացառությունների շարքին:

Ինչպես Վերաքննիչ դատարանը, այնպես էլ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի պահանջները, հիմք ընդունելով միայն վկաների ցուցմունքները և չունենալով որևէ բժշկական հաստատության կողմից Անդրանիկ Գուլքանյանի հոգեվիճակի վերաբերյալ տեղեկանք, անհիմն հանգել են այն եզրակացությանը, որ Անդրանիկ Գուլքանյանը գտնվել է գերլարված և գերհույզ վիճակում, ինչի հետևանքով էլ չի զանգահարել Ընկերություն: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Անդրանիկ Գուլքանյանը դեպքից հետո զանգահարել է շտապօգնություն և ոստիկանություն, սակայն անհապաղ չի զանգահարել նաև Ընկերություն և չի տեղեկացրել վթարի մասին, որը 28.12.2012 թվականին կնքված թիվ SC138136 ԱՊՊԱ պայմանագրով հանդիսանում է վերջինիս պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.12.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 28.12.2012 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SC138136 վկայագրի (այսուհետ՝ Վկայագիր) համաձայն՝ Վաչագան Խաչատուրյանն ապահովագրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող «ՎԱԶ 21061» մակնիշի 160S516 հաշվառման համարանիշով ավտոմեքենան (այսուհետ՝ Ավտոմեքենա) **(հատոր 1-ին, գ.թ. 8).**

2. Վկայագրի 6-րդ կետի համաձայն՝ Ավտոմեքենայի լիազորված տիրապետող է համարվում Անդրանիկ Գուլքանյանը **(հատոր 1-ին, գ.թ. 8).**

3. 29.05.2013 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման համաձայն՝ 24.04.2013 թվականին ժամը 21:30-ի սահմաններում Անդրանիկ Գուլքանյանն իր վարած Ավտոմեքենայով խախտել է «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 28.07.2007 թվականի թիվ 955-Ն որոշման (այսուհետ՝ Ճանապարհային երթևեկության կանոններ) 65-րդ և 66-րդ կետերի պահանջները և վրաերթի է ենթարկել ճանապարհով անցնող Սասուն Գալստյանին ու նրա առողջությանն անզգուշությամբ պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս **(հատոր 1-ին, գ.թ. 19).**

4. Տեղի ունեցած պատահարի վերաբերյալ 17.06.2013 թվականի թիվ 13-043 եզրակացության համաձայն՝ տեղի ունեցած պատահարը ճանաչվել է ապահովագրական և Սասուն Գալստյանին պատճառված վնասի համար վճարվել է 849.840 ՀՀ դրամ, որից 680.000 ՀՀ դրամը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ին, իսկ 169.840 ՀՀ դրամը՝ Սասուն Գալստյանի ներկայացուցիչ Սուսաննա Գալստյանին **(հատոր 1-ին, գ.թ. 14).**

5. Վկայագրի՝ պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետի և կարգի մասին 13-րդ կետի համաձայն՝ Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով: Վկայագրի 14-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010 թվականին հաստատված՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները» Վկայագրի անբաժանելի մասն են **(հատոր 1-ին, գ.թ. 8).**

6. «Հեռախոսազանգերի համակարգման կենտրոն» բաժնի կողմից տրամադրված զանգերի ցանկի համաձայն՝ Անդրանիկ Գուլքանյանի կինը՝ Մերի Գուլքանյանը, ապահովագրական պատահարի մասին Ընկերությանը հայտնել է 25.04.2013 թվականին, ժամը 09:47-ին **(հատոր 1-ին, գ.թ. 10):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյոք բոլոր դեպքերում է, որ ապահովադիր համարվող անձի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի հուզական լարված վիճակում գտնվելը կարող է դասվել ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ հայտնելու պարտականության չկատարման բացառությունների շարքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ

բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը **վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրով ապահովադիրն ապահովագրական պատահարի վրա հասնելն իրեն հայտնի դառնալուց հետո պարտավոր է այդ մասին **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: **Եթե պայմանագրով նախատեսված է ծանուցման ժամկետ** և (կամ) եղանակ, **ապա դա պետք է արվի սահմանված ժամկետում** ու պայմանագրում նշված եղանակով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով ապահովադիր համարվող անձը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի դեպքում պարտավոր են այդ մասին հայտնել ապահովագրական ընկերությանը: Ապահովագրական պատահարիմասինհայտնելու ժամկետները և կարգը, ինչպես նաև ապահովագրական պատահարից հետո ապահովագրական ընկերության և պատահարի մասնակիցների այլ գործողությունները սահմանվում են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»-ի կանոններով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից ԱՊՊԱ պայմանագրով սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ **ապահովադիրը և (կամ)ավտոտրանսպորտայինմիջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնել,** կամ ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են ապահովագրական ընկերությանը նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Նույն մասով նախատեսված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի մասին տեղեկացվելու) դեպքում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի մասին պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով անմիջապես հայտնել ապահովագրական ընկերությանը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը **հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած անձի նկատմամբ,** եթե ԱՊՊԱ **պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել** ապահովագրական պատահարիմասին:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը **հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ,** եթե ԱՊՊԱ **պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել** ապահովագրական պատահարիմասին:

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010

թվականի թիվ 10-Լ որոշման 9.1 մասի 9.1.1 կետի «դ» ենթակետի համաձայն՝ ապահովագրողն հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե **վկայագրով սահմանված ժամկետում** և կարգով **ապահովագրողը չի տեղեկացվել** ապահովագրական պատահարիմասին:

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010 թվականի թիվ 10-Լ որոշման 9.1 մասի 9.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ ապահովագրողն հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառածավտոտրանսպորտայինմիջոցի սեփականատիրոջ (Ապահովադրի) նկատմամբ, եթե վկայագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարիմասին:

Վկայագրի՝ պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետի և կարգի մասին 13-րդ կետի համաձայն՝ Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, հարկ համարելով անդրադառնալ օրենսդրի կողմից նախատեսված՝ ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու պարտականության կատարման «անհապաղության» եզրույթի ընկալմանն ու մեկնաբանմանը, գտնում է, որ այն ունի հետևյալ բովանդակությունը. «անհապաղ» նշանակում է առանց հապաղելու, անմիջապես, նույն պահին, հնարավորինս արագ, առավելագույնս սեղմ ժամկետում: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, սահմանելով «անհապաղության» եզրույթը, այն չի դիտել որպես բացարձակ պայման, քանի որ իրավանորմի հետագա շարադրանքում կիրառել է նաև «ողջամիտ ժամկետում» հասկացությունը: Իսկ ողջամիտ կարող է գնահատվել այն ժամանակահատվածը, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է որևէ կոնկրետ գործողության իրականացման համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում «անհապաղության» պարտադիր պայմանի գնահատումն իրականացնելիս դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն ծանուցման անմիջապես, նույն պահին իրականացված լինելու փաստը, այլև՝ դրա իրականացման՝ առաջին իսկ օբյեկտիվ, արդարացված հնարավորությունը:

Ընդ որում, եթե տեղի է ունենում ապահովագրական պատահար, ապա ապահովադրին պատճառված վնասից բխող նրա կամ շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Սակայն, ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի և (կամ) վնաս պատճառածավտոտրանսպորտայինմիջոցի սեփականատիրոջ նկատմամբ, եթե ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով, այսինքն՝ անհապաղ (ողջամիտ ժամկետում կամ օբյեկտիվորեն առաջին իսկ հնարավորության առկայության պարագայում) ապահովագրական ընկերությանը չի տեղեկացվել ապահովագրական պատահարիմասին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ ապահովագրական պատահարի մասին հայտնելու պարտականության կատարման հարցում բացառություններ են համարվում հետևյալ դեպքերը.

1. երբ ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են **անգիտակից վիճակում,**

2. հայտնվել են այնպիսի իրավիճակում, որ **անհնարին էր** ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասինտեղեկացնելը,

3. ապահովադիրը **տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել** ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը, փաստել է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը *(տե՛ս, օրինակ, «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ընդդեմ Իսկուհի Ավագյանի և մյուսների թիվ ԵԱԴԴ/0417/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, վկայակոչել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչի արդյունքում հանգել է այն եզրակացությանը, որ Անդրանիկ Գուլքանյանը, գտնվելով հոգեկան գերլարված և գերհույզ վիճակում, ի վիճակի չի եղել պատահարի մասին անհապաղ հայտնել ապահովագրական ընկերությանը, և գտել է, որ այդպիսի վիճակում գտնվելու հանգամանքը դասվում է նշված օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունների շարքին:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանություններն առ այն, որ տուժողին վրաերթի ենթարկելու հետևանքով վերջինիս կյանքի հետ կապված առաջին օգնություն ցուցաբերելու և հիվանդանոց տեղափոխելու անհրաժեշտությամբ պայմանավորված, իսկ այնուհետև ոստիկանության բաժնում կատարված համապատասխան քննության կապակցությամբ Անդրանիկ Գուլքանյանը գտնվել է այնպիսի գերլարված և գերհույզ վիճակում, որ հնարավոր չի եղել պատահարի մասին անհապաղ տեղեկացնել Ընկերությանը:

Մինչդեռ վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների կողմից արված եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վկայագրով Վաչագան Խաչատուրյանն ապահովագրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող Ավտոմեքենան, որի լիազորված տիրապետող է նշվել Անդրանիկ Գուլքանյանը: 29.05.2013 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման համաձայն՝ 24.04.2013 թվականին ժամը 21:30-ի սահմաններում Անդրանիկ Գուլքանյանն իր վարած Ավտոմեքենայով խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների 65-րդ և 66-րդ կետերի պահանջները և վրաերթի է ենթարկել ճանապարհով անցնող Սասուն Գալստյանին ու նրա առողջությանն անզգուշությամբ պատճառել է կյանքին վտանգ սպառնացող՝ ծանր վնաս: «Հեռախոսազանգերի համակարգման կենտրոն» բաժնի կողմից տրամադրված զանգերի ցանկի համաձայն՝ Անդրանիկ Գուլքանյանի կինը՝ Մերի Գուլքանյանը, ապահովագրական պատահարի մասին Ընկերությանը հայտնել է 25.04.2013 թվականին, ժամը 09:47-ին՝ մոտ 12 ժամ անց, մինչդեռ 28.12.2012 թվականին Վաչագան Խաչատուրյանի և Ընկերության միջև կնքված Վկայագրի՝ պատահարի մասին Ապահովագրողին ծանուց-

ման ժամկետի և կարգի մասին 13-րդ կետի համաձայն՝ Վաչագան Խաչատուրյանը և (կամ) Անդրանիկ Գուլքանյանը պարտավորվել են ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ընկերությանը՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով: Տեղի ունեցած պատահարի վերաբերյալ 17.06.2013 թվականի թիվ 13-043 եզրակացության համաձայն՝ տեղի ունեցած պատահարը ճանաչվել է ապահովագրական և Սասուն Գալստյանին պատճառված վնասի համար վճարվել է 849.840 ՀՀ դրամ, որից 680.000 ՀՀ դրամը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ին, իսկ 169.840 ՀՀ դրամը՝ Սասուն Գալստյանի ներկայացուցիչ Սուսաննա Գալստյանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, վերլուծելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, գտել են, որ գերլարված և գերհույզ վիճակում գտնվելը դասվում է նշված հոդվածով նախատեսված բացառությունների շարքին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ կերպով ամրագրել է այն բոլոր բացառությունների շրջանակը, որոնց առկայության պարագայում է միայն հնարավոր վնաս պատճառած անձի կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վրա դրված՝ ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու պարտականության չկատարումը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակում Անդրանիկ Գուլքանյանը կարող էր գտնվել հուզական լարված վիճակում, սակայն վերջինս փաստացիորեն չի հայտնվել **անգիտակից վիճակում,** այսինքն՝ ամբողջությամբ գիտակցել է տեղի ունեցած պատահարը, առկա իրողությունը և համապատասխան իրադրությունում կարողացել է ձեռնարկել մի շարք գործողություններ, մասնավորապես՝ տուժողին ուղեկցել է հիվանդանոց, ոստիկանության բաժնում տվել է բացատրություններ: Ավելին, գործում առկա փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ Անդրանիկ Գուլքանյանը տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարին հաջորդող ժամանակահատվածում գտնվել է ֆիզիկական և հոգեկան բավարար վիճակում, որպեսզի կարողանար պատշաճորեն կատարել օրենքով և պայմանագրով իր վրա դրված՝ Ընկերությանն ապահովագրական պատահարի մասին անհապաղ տեղեկացնելու պարտականությունը:

Ինչ վերաբերում է Անդրանիկ Գուլքանյանի՝ Ընկերությանը պատահարի մասին տեղեկացման անհնարինության հանգամանքի պարզման անհրաժեշտությանը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերջինիս կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որը կարող էր հաստատել տվյալ իրավիճակում այնպիսի իրական և օբյեկտիվ պատճառների առկայությունը, որոնք կարող էին հիմք հանդիսանալ համապատասխան գործողության կատարման անհնարինության ստեղծման և հետագայում այդպիսի անհնարինության հիմնավորման համար: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում բացառապես սուբյեկտիվ գործոնների առկայությունը, որոնցից են՝ սթրեսային վիճակում գտնվելը, տուժողի կյանքի և առողջության վերաբերյալ անհանգստությունը, գերլարված և գերհուզական հոգեվիճակում հայտնվելը, դեռևս բավարար չէ Ընկերությանը՝ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացման անհնարինության հանգամանքի առկայությունը հիմնավորված համարելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վաչագան Խաչատուրյանի կողմից ևս չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր ապահովադրի՝ ապահովագրական պատահարի մասին հայտնելու պարտականության կատարման հարցում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված բացառությունների առկայությունը:

Վերը նշված իրավական վերլուծությունների և մեկնաբանությունների համատեքստում համադրելով և գնահատելով սույն քաղաքացիական գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Անդրանիկ Գուլքանյանը և/կամ Վաչագան Խաչատուրյանը չեն կատարել թե՛ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով, թե՛ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի համապատասխան որոշմամբ, և թե՛ Վկայագրով հստակորեն իրենց վրա դրված պարտականությունը, այն է՝ Ընկերությանն **անհապաղ (ողջամիտ ժամկետում)** չեն տեղեկացրել ապահովագրական պատահարի մասին, ուստի հիշյալ պարտավորության չկատարման պայմաններում Ընկերությունը Սասուն Գալստյանին պատճառված վնասի համար վճարված 849.840 ՀՀ դրամի մասով, որից 680.000 ՀՀ դրամ վճարվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ին, իսկ 169.840 ՀՀ դրամը՝ Սասուն Գալստյանի ներկայացուցիչ Սուսաննա Գալստյանին, ունի հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք:

Մինչդեռ ստորադաս դատարանները, չիրականացնելով սույն գործի փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, վերոնշյալ հանգամանքների անտեսման արդյունքում հանգել են հայցի՝ անհիմն լինելու վերաբերյալ սխալ եզրահանգման այն պարագայում, երբ վերը շարադրված պատճառաբանությունների հիմքով ներկայացված հայցապահանջը ենթակա էր բավարարման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ընկերությունը պահանջել է Ընկերության կողմից հատուցված 849.840 ՀՀ դրամ ապահովագրական հատուցման գումարը համապարտության կարգով բռնագանձել Անդրանիկ Գուլքանյանից և Վաչագան Խաչատուրյանից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ քաղաքացիական իրավունքում համապարտ պատասխանատվության ինստիտուտին և նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից: Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համապարտ պատասխանատվության ինստիտուտը կոչված է առավելագույնս երաշխավորելու պարտատիրոջ իրավունքները՝ հնարավորություն ընձեռելով վերջինիս ցանկացած պարագայում ստանալու իր պահանջի բավարարումը:

Միևնույն ժամանակ սույն որոշման շրջանակներում հիշատակված՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծության արդյունքներով ակնհայտ է դառնում, որ ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերությանն այդ մասինպարտավոր են հայտնել **ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը:** Ընդ որում, **ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը** կրում են ապահովագրական ընկերությանը նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը:

Այսպիսով, թե՛ավտոտրանսպորտային միջոցի ապահովադիրը, և թե՛ այն օրինական

հիմքով տիրապետող անձը կրում են ինչպես ապահովագրական ընկերությանը տեղի ունեցած ապահովագրական պատահարի իրազեկելու, այնպես էլ հետագայում դրա անհնարինության հանգամանքը ապացուցելու պարտականությունները: Ընդ որում, նրանցից որևէ մեկի կողմից այդ պարտականությունները կատարելու պարագայում դրանք համարվում են կատարված ամբողջությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ավտոմեքենայի սեփականատեր հանդիսացող Վաչագան Խաչատուրյանը և Ավտոմեքենան օրինական հիմքով լիազորված տիրապետող Անդրանիկ Գուլքանյանը պատշաճորեն չեն կատարել իրենց վերապահված հիշյալ պարտականությունները: Հետևաբար, վերը նշված իրավանորմերի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ընկերության կողմից պահանջվող գումարը Վաչագան Խաչատուրյանից և Անդրանիկ Գուլքանյանից ենթակա է բռնագանձման համապարտության կարգով, որպիսի հանգամանքներն էլ ամբողջությամբ անտեսվել են ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին

և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորի պահանջն է Վաչագան Խաչատուրյանից և Անդրանիկ Գուլքանյանից բռնագանձել 849.840 ՀՀ դրամ:

Սույն գործով նկատի ունենալով, որ Ընկերությունը հայցադիմումի համար վճարել է 16.997 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 7),** վերաքննիչ բողոքի համար 25.495 ՀՀ դրամ **(հատոր 3-րդ, գ.թ. 2)** և վճռաբեկ բողոքի համար՝ 25.495 ՀՀ դրամ, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել բողոք բերած անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը համապարտության կարգով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Անդրանիկ Գուլքանյանի և Վաչագան Խաչատուրյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2014 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ Անդրանիկ Գուլքանյանից և Վաչագան Խաչատուրյանից համապարտության կարգով հօգուտ «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի բռնագանձել 849.840 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի համար վճարված գումար:

2. Անդրանիկ Գուլքանյանից և Վաչագան Խաչատուրյանից համապարտության կարգով հօգուտ «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի բռնագանձել 16.997 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 25.495 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև 25.495 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2128/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2128/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արտակ Զաքարյանի ներկայացուցիչ Մարիամ Ղուլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի <<Բի Լայն>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Արտակ Զաքարյանի՝ 7.639.837 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արտակ Զաքարյանից բռնագանձել 7.639.837 ՀՀ դրամ՝ որպես պատճառված նյութական վնասի հատուցում, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 153.000 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 16.06.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.09.2014 թվականի որոշմամբ Արտակ Զաքարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.06.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտակ Զաքարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ, 232-րդ, 237-րդ հոդվածները, <<Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 54-րդ և 220-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ակտով առաջադրված տուգանքը վերաբերում է ոչ թե 2010 թվականին թույլ տրված խախտմանը, այլ 2013 թվականին՝ 01.01.2013 թվականին ուժի մեջ մտած <<Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին>> ՀՀ օրենքի շրջանակներում ճշգրտված հաշվարկներ ներկայացնելուն, որի արդյունքում էլ հաշվարկվել են տույժերն ու տուգանքները, իսկ այդ ժամանակ Ընկերության տնօրեն է հանդիսացել Հայկ Խանջյանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Արտակ Զաքարյանը 24.01.2013 թվականին գրավոր նամակ է ուղարկել Ընկերության մասնակիցներին և խնդրել է <<Ավելացված արժեքի հարկի մասին>> ՀՀ օրենքի մասով կատարել ճշտումներ Ընկերության հարկային հաշվետվություններում՝ խուսափելու համար հետագա լրացուցիչ ծախսերից, հանձնարարել ստուգել հնարավոր ռիսկերը, հատկապես՝ ծառայություն մատուցող բոլոր ոչ ռեզիդենտ գործընկերների գործարքները, քանի որ <<Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին>> ՀՀ օրենքով Ընկերության տնօրինությանը և հաշվապահությանը հնարավորություն է ընձեռվել, կատարելով ներքին աուդիտ, վճարել հնարավոր հարկերը կամ տուրքերը՝ առանց որևէ տույժի կամ տուգանքի, և զրոյացնել Ընկերության համար բոլոր հնարավոր հարկային ռիսկերը: Նման առաջարկություններ Արտակ Զաքարյանը ներկայացրել է նաև Ընկերության 2013 թվականի հունվարին կայացած ընդհանուր ժողովի ժամանակ՝ պատրաստակամություն հայտնելով աջակցել ներքին աուդիտի աշխատանքներին, սակայն Ընկերության մասնակիցներն այդ առաջարկին դեմ են քվեարկել:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արտակ Զաքարյանը կատարել է հնարավոր բոլոր գործողությունները պատճառվելիք վնասը կանխելու՝ ակտով առաջադրված տույժերից և տուգանքներից խուսափելու համար, մինչդեռ Ընկերության ղեկավարության անգործության հետևանքով ակտը կազմվել է և չի վիճարկվել, ավելին՝ 25.04.2013 թվականին էլեկտրոնային նամակով Արտակ Զաքարյանն Ընկերությանը տեղեկացրել է նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/3059/05/11 վարչական գործի առկայության մասին, որով ՀՀ վարչական դատարանն անվավեր է ճանաչել ստուգման ակտը, և այդ վճիռը ստացել է օրինական ուժ, և հորդորել է Ընկերության տնօրեն Հայկ Խանջյանին բողոքարկել վարչական ակտը, սակայն, անկախ այդ դատական ակտի վերաբերյալ տեղեկացված լինելու հանգամանքից՝ Ընկերության տնօրեն Հայկ Խանջյանը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության կողմից կազմված թիվ 1004280 ստուգման ակտի դեմ միայն առարկել է, իսկ հետագայում չի ձեռնարկել որևէ գործողություն այդ ակտի բողոքարկման ուղղությամբ՝ վճարելով անհիմն առաջադրված տույժերը և տուգանքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.09.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 01.07.2005 թվականին Ընկերության և Արտակ Զաքարյանի միջև կնքված թիվ

Ա–003 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Արտակ Ջաքարյանը նշանակվել է Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնում: Նույն պայմանագրի 2–րդ հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ Արտակ Ջաքարյանը պարտավորվել է կատարել ձեռնարկության ընդհանուր ղեկավարումը, ապահովել ձեռնարկության բանկային, պայմանագրային, մաքսային, հարկային և իրավաբանական ապահովումը, ապահովել փոխհաշվարկները ներքին և արտասահմանյան մատակարարների հետ, կազմակերպել բանակցություններ հաճախորդների և մատակարարների հետ **(հատոր 1–ին, գ.թ. 22):**

2. Համաձայն կողմերի բացատրությունների՝ Արտակ Ջաքարյանը 28.06.2012 թվականին ազատվել է գբաղեցրած պաշտոնից **(հատոր 1–ին, գ.թ. 185):**

3. 24.01.2013 թվականի գրությամբ Արտակ Ջաքարյանն Ընկերության տնօրեն Հ. Խանջյանին, Ընկերության մասնակիցներ Ռ. Ավագյանին և Ս. Կարապետյանին առաջարկել է Ընկերությունում կատարել ներքին աուդիտ և ստուգել հնարավոր ռիսկերը, հատկապես ծառայություն մատուցող բոլոր ոչ ռեզիդենտ գործընկերների գործարքները՝ վճարել հնարավոր հարկերը կամ տուրքերը առանց որևէ տույժի կամ տուգանքի, և զրոյացնել Ընկերության համար բոլոր հնարավոր հարկային ռիսկերը **(հատոր 1–ին, գ.թ. 95):**

4. 25.04.2013 թվականին Արտակ Ջաքարյանի կողմից էլեկտրոնային նամակով Ընկերության տնօրեն Հ. Խանջյանին, Ընկերության մասնակիցներ Ռ. Ավագյանին և Ս. Կարապետյանին ուղղված գրության մեջ նշված է, որ նախկինում առաջացած նմանատիպ իրավիճակում նույն փաստական հանգամանքներով թիվ ՎԴ/3059/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 12.07.2012 թվականի վճռով ստուգման ակտն անվավեր է ճանաչվել և այդ վճիռը մտել է օրինական ուժի մեջ **(հատոր 1–ին, գ.թ. 96–99):**

5. 12.08.2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության կողմից կազմված թիվ 1004280 ակտ–ի համաձայն՝ Ընկերությունում կատարվել է ՀՀ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգմամբ պարզվել է, որ Ընկերությունը 01.01.2010 թվականից մինչև 31.03.2013 թվականն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված համակարգչային ծրագրերի, լիցենզիայի և երաշխիքի երկարացման դիմաց <<Մայքրոսոֆթ Այրլենդ Օփերեյշնս>>, <<Ֆորս Յուրոփ>> և <<Հյուլեթ–Պակարդ Յուրոփ>> ոչ ռեզիդենտ կազմակերպությունների անուններով դուրս է գրել 517.424.826 ՀՀ դրամ ընդհանուր գումարով հարկային հաշիվներ, որոնց ավելացված արժեքի հարկը կազմել է 103.484.965 դրամ: Ընդհանուր առմամբ ստուգման արդյունքներով ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա ԱԱՀ–ի գումարը տույժերի և տուգանքների հետ միասին կազմել է 15.151.683 ՀՀ դրամ, որից միևնույն ժամանակ տնտեսվարող սուբյեկտին ենթակա է եղել վերադարձման վերջինիս կողմից ավել վճարված 7.511.846 ՀՀ դրամը, հետևաբար, վճարման ենթակա գումարը կազմել է 7.639.837 ՀՀ դրամ **(հատոր 1–ին, գ.թ. 26–31):**

6. Թիվ 499–13 և թիվ 500–13 վճարման հանձնարարագրերի համաձայն՝ 15.08.2013 թվականին Ընկերությունը վճարել է թիվ 1004280 ստուգման ակտի գումարը՝ 7.639.837 ՀՀ դրամ **(հատոր 1–ին, գ.թ. 32–33):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17–րդ և 1058–րդ հոդվածների միատեսակ կիրառության համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48–րդ հոդվածի 2–րդ կետի և 53–րդ հոդվածի խախտման, դրա արդյունքում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17–րդ և 1058–րդ հոդվածների սխալ մեկնաբանության հետ–

ևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք հակահիրավական գործողությունների (անգործության) կատարումից հետո մինչև բացասական հետևանքների՝ վնասի վրա հասնելը ենթադրաբար վնաս պատճառած անձի կողմից պատճառվելիք վնասի կանխմանն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկումը, տվյալ պայմաններում անհրաժեշտ հոգատարության և շրջահայացության դրսևորումը, կարող է հավաստել վերջինիս մեղքի բացակայության փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին, մասնավորապես՝ արձանագրել է, որ վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման *(տե՛ս, Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը: Նշված հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից վնաս կրած անձի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, վնաս պատճառողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների և ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է վնաս կրած անձը, իսկ պատճառված վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով կրում է ենթադրյալ վնաս պատճառած անձը *(տե՛ս, <<Էքսոլյո>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ <<Արմենտել>> փակ բաժնետիրական ընկերության թիվ ԵՔԴ/0036/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը):*

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ վերահաստատելով իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել առավել մանրամասն անդրադառնալ պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին:

Վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է,որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապըենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում:

Միաժամանակ նշված որոշման շրջանակներում անդրադառնալով աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվություն առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում.

1) պատճառված է վնաս.

2) վնասը պատճառվել է անօրինական գործունեության հետևանքով.

3) առկա է պատճառական կապ անօրինական գործունեության և վնասի առաջացման միջև.

4) առկա է խախտողի մեղքը.

5) խախտում թույլ տված և տուժած կողմերն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ.

6) վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է՝

1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով.

2) նյութերի գերածախս թույլ տալու հետևանքով.

3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքերում.

4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից.

5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով.

6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գործատուին ունեցած աշխատողի պարտքերը մարելու համար աշխատավարձից պահվում կամ գանձվում է աշխատողի մեղքով գործատուին պատճառված վնասի հատուցման գումարը:

Վկայակոչված հոդվածների վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկությունները հանգում են հետևյալին՝ պատճառված վնասի համար պատասխանատվության վերը շարադրված պայմաններին ավելանում են ևս երկու պայման, այն է՝ վնաս պատճառողն ու տուժողն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ, և վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ: Ընդ որում, պատճառված վնասի համար պատասխանատվության մյուս տարրերն աշխատողի նյութական պատասխանատվության դեպքում հարկ է դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համատեքստում, որը թվարկում է աշխատողի նյութական պատասխանատվության դեպքերը՝ սպառիչ սահմանելով վնաս պատճառելուն ուղղված հակաիրավական վարքագծի դրսևորումները *(տե՛ս, Նելլի Մկրտչյանն ընդդեմ <<Երևան հյուրանոց>> բաց բաժնետիրական ընկերության թիվ ԵԿԴ/2600/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել վնասի պատճառման հարցում անձի մեղքի առկայության կամ բացակայության հարցը ենթադրաբար վնաս պատճառած անձի կողմից հնարավոր բացասական հետևանքների՝ վնասի, նախականխմանն ուղղված որոշակի գործողությունների կատարման կամ չկատարման համատեքստում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քաղաքացիական իրավահարաբերություններում մեղքն արտահայտվում է անձի վերաբերմունքով ոչ միայն իր արարքի, այլև դրա հետևանքների նկատմամբ: Այսինքն՝ զուտ հակաիրավական արարք թույլ տալու փաստը դեռևս չի վկայում անձի մոտ մեղքի առկայության մասին, ուստի դատարանները նշված հանգամանքը գնահատելիս նաև պետք է պարզեն այդպիսի արարք թույլ տված անձի վերաբերմունքը հնարավոր բացասական հետևանքների նկատմամբ:

Եթե դիտավորության դեպքում վնաս պատճառած անձը ցանկանում է կամ անտարբերությամբ թույլ է տալիս իր հակաիրավական արարքի հետևանքների առաջացումը, ապա անզգուշության պարագայում անձը, մի դեպքում կանխատեսելով իր վարքի բացասական հետևանքները, առանց բավարար հիմքերի կարծում է, թե դրանք կկանխվեն, կամ մեկ այլ դեպքում՝ ընդհանրապես չի կանխատեսում իր արարքի հետևանքները, չնայած պարտավոր էր կանխատեսել:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը հակաիրավական գործողությունների կատարումից (կամ անգործության դրսևորումից) հետո մինչև բացասական հետևանքների վրա հասնելը պատշաճ կերպով ձեռնարկում է պատճառվելիք վնասը կանխելու ուղղությամբ օբյեկտիվորեն հնարավոր, անհրաժեշտ և իրենից կախված բոլոր միջոցները, ապա տվյալ իրավիճակում կարող է հավաստել ենթադրաբար վնաս պատճառած անձի մեղքի բացակայությունը: Հետևաբար, ենթադրյալ վնաս պատճառած անձի կողմից ձեռնարկված համապատասխան միջոցների վերաբերյալ ապացույցների առկայությունը, որոնք վկայում են նաև նման պայմաններում իրենից պահանջվող պատշաճ չափով հոգատարության և շրջահայացության դրսևորման փաստի մասին, կարող է հիմք հանդիսանալ տվյալ անձին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունից ազատելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ մեղքի ձևը հատկապես կարևորվում է աշխատանքային հարաբերություններում պատճառված վնասի համար պատասխանատվության հարցը լուծելիս: Այսպես, օրինակ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափից, բացառությամբ նույն օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, եթե վնասը պատճառվել է դիտավորությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանները պետք է գնահատեն ոչ միայն վնաս պատճառած անձի մեղքը, այլև տուժողի մեղքը՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը, կարևորելով տուժողի մեղքի ձևը, ամրագրել է վնաս պատճառած անձին պատասխանատվությունից ազատելու կամ նրա պատասխանատվությունը նվազեցնելու հնարավորություն:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժողի դիտավորության հետևանքով ծագած վնասը չի հատուցվում: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել:

Սույն գործով Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ Ընկերությունն Արտակ Զաքարյանի մեղքով կրել է վնաս, Արտակ Զաքարյանի ոչ իրավաչափ գործողությունների և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ, հետևաբար Ընկերությանը պատճառված 7.639.837 ՀՀ դրամ վնասը ենթակա է հատուցման Արտակ Զաքարյանի կողմից:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Արտակ Զաքարյանը կատարել է մեղավոր ոչ օրինաչափ արարք, որի արդյունքում Ընկերությանը պատճառվել է վնաս՝ 7.639.837 ՀՀ դրամի չափով: Հետևաբար, ակնհայտ է, որ առկա է ուղղակի պատճառահետևանքային կապ Արտակ Զաքարյանի անգործության և Ընկերության կրած վնասների միջև, քանի որ իրավունքների խախտման, ոչ օրինաչափ արարքի կատարման պահին Արտակ Զաքարյանը հանդիսացել է Ընկերության տնօրենը, և վնասն առաջացել է տնօրենի աշխատանքային գործունեության (անգործության) հետևանքով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների պատճառաբանությունները չեն բխում սույն գործի փաստերից, քանի որ թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանն անտեսել են այն հանգամանքը, որ թեև Արտակ Զաքարյանի կողմից <<Ավելացված արժեքի հարկի մասին>> ՀՀ օրենքի գծով հաշվետվությունները հարկային տեսչություն թերի են ներկայացվել, սակայն վերջինս ձեռնարկել է հնարավոր վնասի կանխմանն ուղղված մի շարք միջոցներ: Այսպես, տեղեկանալով <<Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին>> ՀՀ օրենքի (մասնավորապես, դրա 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման) վերաբերյալ՝ Արտակ Զաքարյանը 24.01.2013 թվականին կազմված գրությամբ Ընկերության գործող տնօրեն Հ. Խանջյանին, Ընկերության մասնակիցներ Ռ. Ավագյանին և Ս. Կարապետյանին առաջարկել է Ընկերությունում կատարել ներքին աուդիտ և ստուգել հնարավոր ռիսկերը, հատկապես՝ ծառայություն մատուցող բոլոր ոչ ռեզիդենտ գործընկերների գործարքները, վճարել հնարավոր հարկերը կամ տուրքերը՝ առանց որևէ տույժի կամ տուգանքի, և զրոյացնել Ընկերության համար բոլոր հնարավոր հարկային ռիսկերը՝ պատրաստակամություն հայտնելով աջակցել ներքին աուդիտի աշխատանքներին: Բացի այդ, 25.04.2013 թվականին Արտակ Զաքարյանի կողմից էլեկտրոնային նամակով Ընկերության գործող տնօրեն Հ. Խանջյանին, Ընկերության մասնակիցներ Ռ. Ավագյանին և Ս. Կարապետյանին տեղեկացվել են, որ նախկինում առաջացած նմանատիպ իրավիճակում նույն փաստական հանգամանքներով թիվ ՎԴ/3059/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 12.07.2012 թվականի վճռով ստուգման ակտն անվավեր է ճանաչվել, և այդ վճիռը մտել է օրինական ուժի մեջ, հետևաբար, այդպիսի

ստուգման ակտ կայացվելու դեպքում այն հնարավոր է բողոքարկել դատական կարգով՝ ակնկալելով դրական արդյունք:

Սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Ընկերության գործող տնօրեն Հ. Խանջյանը, Ընկերության մասնակիցներ Ռ. Ավագյանը և Ս. Կարապետյանը միջոցներ են ձեռնարկել Արտակ Զաքարյանի կողմից կատարված առաջարկներն իրականացնելու ուղղությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար կարևորվում են հետևյալ հարցադրումները՝

ա) արդյո՞ք պատասխանողը տվյալ հանգամանքներում ձեռնարկել է օբյեկտիվորեն հնարավոր, անհրաժեշտ և իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցներն Ընկերության հավանական վնասները կանխելու համար.

բ) արդյո՞ք նման միջոցներն իրապես բավարար էին հնարավոր վնասը կանխելու համար.

գ) արդյո՞ք հայցվոր Ընկերության տնօրենը և մասնակիցները դրսևորել են բավարար շրջահայացություն հնարավոր բացասական հետևանքները բացառելու հարցում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի իրականացրել, ամբողջությամբ չի պարզել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, որպիսի պարագայում չէր կարող իրավաչափ հետևության հանգել պահանջի հիմնավորվածության վերաբերյալ, որպիսի խախտումներն անտեսվել են Վերաքննիչ դատարանի կողմից, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն՝ վերը նշված հանգամանքները սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում պարզելու և գնահատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.07.2014 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.01.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0233/02/11
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/0233/02/11**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արա Մանուկյանի ներկայացուցիչ Վահագն Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.10.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցիԱրա Մանուկյանի ընդդեմ Լեոնիդ Դավթյանի և Ալլա Դուրյանի՝ վնասի հատուցման և փաստաբանական ծառայության ծախսերի գումարի բռնագանձման պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Լեոնիդ Դավթյանի ընդդեմ Արա Մանուկյանի՝ վնասի հատուցման, փաստաբանական ծառայության և փորձաքննության ծախսերի գումարների բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արա Մանուկյանը պահանջել է Լեոնիդ Դավթյանից և Ալլա Դուրյանից բռնագանձել 702.800 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցման գումար, 300.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծառայությունների վճար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լեոնիդ Դավթյանը պահանջել է Արա Մանուկյանից բռնագանձել 3.542.800 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցման գումար, 150.000 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության համար վճարված գումար, ինչպես նաև 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Հունանյան) (այսուհետ՝ Դատարան) 30.06.2014 թվականին վճռել է. «Արա Մանուկյանի հայցն ընդդեմ Լեոնիդ Դավթյանի՝ վնասի հատուցման և փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման պահանջների մասին, մերժել:

Քաղաքացիական գործի վարույթն Ալլա Դուրյանից գումարի բռնագանձման պահանջի մասով, կարճել: Սկզբնական հայցով պետական տուրքի հարցը համարել լուծված: Հակընդդեմ հայցը բավարարել:Արա Մանուկյանից հօգուտ Լեոնիդ Դավթյանի բռնագանձել 3.542.800 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցման գումար: Արա Մանուկյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 70.856 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Արա Մանուկյանից հօգուտ Լեոնիդ Դավթյանի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման ծախսերի գումար: Արա Մանուկյանից հօգուտ Լեոնիդ Դավթյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.10.2014 թվականի որոշմամբ Արա Մանուկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.06.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արա Մանուկյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ, 64-րդ, 96-րդ և 208-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն չի հետազոտել և գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրակացության և հաստատված է համարել այն փաստը, որ Լեոնիդ Դավթյանը ո՛չ անձամբ, ո՛չ էլ որևէ մեկի միջոցով չի կտրել Արա Մանուկյանի տան ամրանները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Լեոնիդ Դավթյանի կողմից Դատարան ներկայացված հակընդդեմ հայցի հիմքում վերջինս նշել է 24.12.2009 թվականի թիվ ԵԱՔԴ/0785/02/08 քաղաքացիական գործով և 04.06.2009 թվականի թիվ ՎԴ/3838/05/08 վարչական գործով կայացված վճիռները, մինչդեռ նշված գործերով կողմ է հանդիսացել ոչ թե Արա Մանուկյանը, այլ նրա կինը՝ Տատյանա Սաֆոնովան, ուստի ակնհայտ է, որ սկզբնական և հակընդդեմ հայցերի միջև առկա չէ որևէ կապ, որպիսի պայմաններում հակընդդեմ հայցի ընդունումը պետք է ի սկզբանե մերժվեր Դատարանի կողմից:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով հաստատվում է, որ Արա Մանուկյանի կողմից Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62/2 հասցեում շինարարական և հողային աշխատանքներ կատարելիս նյութական վնաս է պատճառվել Լեոնիդ Դավթյանին: Մասնավորապես՝ Արա Մանուկյանի կողմից Լեոնիդ Դավթյանին և Ալլա Դուրյանին վնաս պատճառելու փաստը հաստատվել է միայն հավանական (ոչ կատեգորիկ) եզրահանգումներ պարունակող փորձագիտական եզրակացությունների հիման վրա, որոնցով չի կարող ապացուցված համարվել հենց Արա Մանուկյանի կողմից Լեոնիդ Դավթյանին ենթադրյալ վնասի պատճառման փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է <<բեկանել Վերաքննիչ դատարանի 23.10.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «կայացնելով նոր դատական ակտ» կամ գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը>>:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ըստ հայցի Տատյանա Սաֆոնովայի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ան-

շարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձինք Լեոնիդ Դավթյանի և Ալլա Դուրյանի թիվ ՎԴ/1099/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 30.12.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է այն փաստը, որ 21.10.2005 թվականին տրված թիվ 2111835 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Լեոնիդ Դավթյանն ու Ալլա Դուրյանը հանդիսանում են Երևանի Փափազյան 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի սեփականատերեր **(հատոր 2-րդ, գ.թ. 135-152):**

2) 17.10.2006 թվականին տրված թիվ 2157414 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Տատյանա Սաֆոնովան հանդիսանում է Երևանի Փափազյան 2-րդ նրբանցքի թիվ 62 (62/2) հասցեի բնակելի տան սեփականատեր: Որպես հիմք նշված է բնակելի տան առուվաճառքի 13.10.2006 թվականի թիվ 5935 պայմանագիրը **(հատոր 2-րդ, գ.թ. 127-129):**

3) Երևանի Արաբկիրի ՔԿԱԳ բաժնի կողմից 29.01.2009 թվականին տրված թիվ ԱԱ 127339 ամուսնության վկայականի կրկնօրինակի համաձայն՝ 28.02.2006 թվականին թիվ 79 համարի ներքո գրանցվել է Արա Մանուկյանի և Տատյանա Սաֆոնովայի ամուսնությունը **(հատոր 3-րդ, գ.թ. 39):**

4) Երևանի քաղաքապետարանի կողմից 08.08.2007 թվականին տրված թիվ 18-07/1-U-1177-741 ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն՝ Տատյանա Սաֆոնովային տրամադրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62/2 բնակելի տունը քանդելու և նոր բնակելի տուն կառուցելու համար, որի «հատակագծային սահմանափակումներ» տողում նախատեսվել է. «հաշվի առնել կից տարածքներում առկա կառուցապատումը, ապահովել կից բնակելի տների սեյսմակայունության և շահագործման պայմանները» **(հատոր 3-րդ, գ.թ. 12-13):**

5) Երևանի քաղաքապետարանի կողմից 14.09.2007 թվականին Տատյանա Սաֆոնովային տրվել է Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեում բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն **(հատոր 2-րդ, գ.թ. 122):**

6) «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և Տատյանա Սաֆոնովայի միջև 11.09.2007 թվականին կնքվել է հանձնարարության պայմանագիր՝ «շինարարության (քանդման) թույլտվության նախապայման Արաբկիր համայնք, բնակելի տուն օբյեկտի վերաբերյալ», համաձայն որի՝ Տատյանա Սաֆոնովան պարտավորվում է իր կողմից իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում տրանսպորտային միջոցներով շինարարական աղբի, հիմնահողի, շինանյութի և կոնստրուկցիաների տեղափոխման ժամանակ Երևանի ինժեներական ենթակառուցվածքներին պատճառված վնասի ու դրանց վերականգման, ինչպես նաև արդիականացման համար «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին վճարել որոշակի գումար **(հատոր 2-րդ, գ.թ. 130-131):**

7) Արա Մանուկյանի կողմից Դատարանին ներկայացված՝ փորձագետի 15.01.2008 թվականի ապրանքագիտական եզրակացության համաձայն՝ Արա Մանուկյանի տան նորակառույց պատի սյուները վնասելու հետևանքով պատճառված նյութական վնասի չափի ընդհանուր շուկայական գինը գնահատվում է 440.800 ՀՀ դրամ, իսկ փորձագետի 23.01.2008 թվականի ապրանքագիտական եզրակացության համաձայն՝ նորակառույց պատը վնասելու հետևանքով Արա Մանուկյանին պատճառվել է 262.000 ՀՀ դրամի նյութական վնաս **(հատոր 1-ին, գ.թ. 6-7):**

8) «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 13.09.2012 թվականի թիվ 21201107 եզրակացության համաձայն՝ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի հենապատին հասցված վնասվածքներն են՝ պարիսպը որոշ չափով թեքված է Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի կողմից դեպի թիվ 62/2 հասցեն, պատի տուֆե շարվածքում առաջացել են ուղղահայաց և հորիզոնական ճաքեր, պատի վրա առկա են խոնավության և աղակալման հետքեր, սալվածքի մեջ գոյություն ունեն տարբեր ուղղությամբ նստվածքային բնույթի ճաքեր և

տեղաշարժեր, ծաղկանոցի բետոնե եզրաքարերի վրա կան ճաքեր, պատի և սալվածքի կցորդման հատվածում տեսանելի է որոշակի տեղաշարժեր, առկա են նաև պատի հիմքերի տակ գտնվող գրունտի քայքայման հետքեր, այդ վնասվածքների պատճառ կարող են հանդիսանալ ինչպես մթնոլորտային տեղումների (ձյուն, անձրևաջրեր) ու ջերմային ռեժիմների տարբերության արդյունքում մթնոլորտային ջրերի ներթափանցումը պարսպի հիմնատակ, այնպես էլ հարևան բնակելի տան կառուցման նպատակով իրականացված հողային աշխատանքների և դինամիկ ազդեցությունների արդյունքում պարսպի հիմնատակի բնահողի որոշակի թուլացումը **(հատոր 1-ին, գ.թ. 55-57):**

9) «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 27.05.2008 թվականին և 08.05.2012 թվականին՝ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 տան պարսպապատի տեխնիկական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունների համաձայն՝ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62/2 նորակառույց տան շինարարության համար պարսպապատին հարակից քանդվել է հիմնափոս 2,5-3մ խորությամբ, ինչի հետևանքով պարսպապատի հիմքերը հայտնվել են հիմնահատակի գրունտի խզված եզրամասի վրա և քանի որ հիմնափոսը քանդվել է վաղ և անցած ժամանակահատվածում (ձմեռ-գարուն) տեղումնային ջրերի և ջերմաստիճանի փոփոխությունների ազդեցության հետևանքով տեղի է ունեցել հիմնահատակի գրունտների թուլացում ու պարսպապատի վրա գրունտի կողային ճնշման մեծացում **(հատոր 1-ին, գ.թ. 98-109):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. անշարժ գույքի կառուցապատման հիմք հանդիսացող ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը որոշակի անձի անունով տրամադրված լինելու պայմաններում արդյո՞ք այդ գույքի կառուցապատման հետևանքով այլ անձանց կամ նրանց գույքին ենթադրաբար պատճառված վնասի հատուցման պարտականությունը կարող է դրվել մեկ այլ անձի վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում,** եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի *(մինչև 19.05.2014 թվականը գործող խմբագրությամբ)* համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով **ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:**

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:**

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով ծագող իրավահարաբերություն-

ներում վնասի հատուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման *(տե՛ս, օրինակ, Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել առավել հանգամանալից անդրադառնալ պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին և, մասնավորապես, արձանագրել է հետևյալը.

Վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում *(տե՛ս, Նելլի Մկրտչյանն ընդդեմ «Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերության թիվ ԵԿԴ/2600/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ ***կառուցապատման*** ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցմանպատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ **գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող:** Նույն հոդվածի իրավադրույթներով սահմանված են նաև կառուցապատողների պարտականությունները, որոնցից են, մասնավորապես՝

– կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատ-

ված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.

– մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում հա-մաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ.

– քաղաքաշինական գործունեություն իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան և այլն:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քա-ղաքաշինական փաստաթղթերը քաղաքաշինական գործունեության պետական կարգա-վորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նա-խագծային փաստաթղթեր: Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ ճարտարապետա-շինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար կառուցապատողին տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվու-թյուն), որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պայմաններ, պահանջներ և սահմանափակումներ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) փաստաթուղթ է, որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաս-տաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղա-քաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմանները, այդ թվում՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի «դ» կետով սահ-մանված՝ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատա-կարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ) և սահմանափակումները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին պարբերության հա-մաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցա-պատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Վկայակոչված հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների համադր-ված և համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համա-րում փաստել, որ անշարժ գույքի հետ կապված որոշակի իրավազորությունների իրա-կանացման, մասնավորապես՝ **կառուցապատման** ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պարտականությունը պետք է կրի **կառուցա-պատողը**, այսինքն՝ այն անձը, ով օրինական հիմքերով կարող է իրականացնել տվյալ անշարժ գույքի կառուցապատման աշխատանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս ապացուցում է, որ կոնկրետ իրավիճակում պատճառված վնասը ծագել է ոչ թե իր մեղքով, այլ անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Ընդ որում, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավադրույթնե-րը վկայում են, որ որպես կառուցապատող կարող է հանդես գալ միայն լիազոր մարմ-նի կողմից անհրաժեշտ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթե-րը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն ստացած սուբյեկտը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումը բացառապես վերաբերում է այն դեպքերին, երբ կառուցապատման աշ-խատանքներն իրականացվում են օրինական հիմքերով:

Սույն գործով Դատարանը, հակընդդեմ հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ հիմնավորված է այն հանգամանքը, որ հակընդդեմ հայցով պատասխանող Արա Սա-

նույյանի կողմից կատարված շինարարական և հողային աշխատանքների արդյունքում հակընդդեմ հայցվորին պատճառվել է նյութական վնաս, այսինքն՝ հակընդդեմ հայցով պատասխանող Արա Սանուկյանի գործողություններում առկա են վնասի հատուցման համար պարտադիր պայմաններ հանդիսացող տարրերը, այն է՝ իրավունքը խախտած անձի՝ տվյալ դեպքում պատասխանողի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների ու պատասխանողի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պատասխանողի մեղքի առկայությունը:

Վերաքննիչ դատարանը հակընդդեմ հայցի մասով վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում Արա Սանուկյանի հայցադիմումի տվյալները բավարար են արձանագրելու այն փաստը, որ Փափազյան թիվ 62/2 հասցեում ոչ օրինաչափ շինարարական աշխատանքները կատարվել են նրա կողմից, որպիսի պայմաններում հակընդդեմ հայցը ներկայացվել է պատշաճ պատասխանողի դեմ:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստերին և տվյալ գործով ստորադաս դատարանների կողմից կատարված վերլուծությունների և եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 17.10.2006 թվականին տրված թիվ 2157414 սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիմքով՝ Տատյանա Սաֆոնովան հանդիսանում է Երևանի Փափազյան 2-րդ նրբանցքի թիվ 62 (62/2) հասցեի բնակելի տան սեփականատեր: Երևանի քաղաքապետարանի կողմից Տատյանա Սաֆոնովային 08.08.2007 թվականին տրամադրվել է թիվ 18-07/1-Ս-1177-741 ճարտարապետահատակագծային առաջադրանքը Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62/2 բնակելի տունը քանդելու և նոր բնակելի տուն կառուցելու համար, որի «հատակագծային սահմանափակումներ» տողում նախատեսվել է «հաշվի առնել կից տարածքներում առկա կառուցապատումը, ապահովել կից բնակելի տների սեյսմակայունության և շահագործման պայմանները»: Երևանի քաղաքապետարանի կողմից 14.09.2007 թվականին Տատյանա Սաֆոնովային տրամադրվել է նաև վերոնշյալ հասցեում բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն: «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և Տատյանա Սաֆոնովայի միջև 11.09.2007 թվականին կնքվել է հանձնարարության պայմանագիր՝ «շինարարության (քանդման) թույլտվության նախապայման Արաբկիր համայնք, բնակելի տուն» օբյեկտի վերաբերյալ, համաձայն որի՝ Տատյանա Սաֆոնովան պարտավորվում է իր կողմից իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում տրանսպորտային միջոցներով շինարարական աղբի, հիմնահողի, շինանյութի և կոնստրուկցիաների տեղափոխման ժամանակ Երևանի ինժեներական ենթակառուցվածքներին պատճառված վնասի ու դրանց վերականգնման, նաև արդիականացման համար «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին վճարել որոշակի գումար:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Արա Սանուկյանը չի կարող դիտվել որպես Երևանի Փափազյան 2-րդ նրբանցքի թիվ 62/2 հասցեի բնակելի տան կառուցապատման արդյունքում Լեոնիդ Դավթյանին պատկանող Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի հենապատին վնաս պատճառած և վնասի հատուցման համար պատասխանատու սուբյեկտ: Այսպես, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի իմաստով Արա Սանուկյանը չի համարվում կառուցապատող, քանի որ վերջինիս չի տրամադրվել կոնկրետ աշխատանքները կատարելու թույլտվություն պարունակող որևէ փաստաթուղթ և անձամբ նրա հետ չի կնքվել այդ աշխատանքների իրականացմանն ուղղված որևէ պայմանագիր: Ընդհակառակը, գործում առկա ապացույցներով հիմնավորվում է, որ այդպիսի փաստաթղթեր տրամադրված են լիովին այլ անձի անվամբ: Հետևաբար, Արա Սանուկյանը չի կարող հանդիսանալ համապատասխան իրավասությամբ օժտված անձ, ում կողմից նախաձեռնված և իրականացված կառուցապատման աշխատանքները կարող էին

հնարավոր պատճառ հանդիսանալ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի տան հենապատին հասցված վնասվածքների համար: Մինչդեռ ստորադաս դատարանները, անտեսելով նշված հանգամանքը, սխալ հետևության են հանգել Արա Սանուկյանի՝ որպես վնաս պատճառած սուբյեկտի՝ պատասխանատվություն ենթակա լինելու հարցի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից սույն գործում առկա ապացույցների, մասնավորապես՝ փորձագիտական եզրակացությունների հետազոտման և գնահատման իրավաչափության վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա **դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:**

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1) գրավոր և իրեղեն ապացույցներով.

2) **փորձագետների եզրակացություններով.**

3) վկաների ցուցմունքներով.

4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է **գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը պետք է պարունակի՝

1. նշում՝ կիրառված մեթոդների մասին,

2. կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը,

3. **հետազոտությունների արդյունքում արված հետևությունները,**

4. առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում է մյուս ապացույցների հետ:**

Վերը նշված իրավանորմերի իրավական բովանդակության վերլուծության հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածը վերաբերում է փորձագետին առաջադրված հարցերի վերաբերյալ **հետևություններին** և դրանց հիման վրա **հիմնավորված պատասխաններին (եզրակացությանը):** Հետևաբար, փորձագիտական եզրակացության արդյունքում տրված **հավանական եզրահանգումները** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 62-րդ հոդվածների ուժով չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի առկայությունն ապացուցելու առումով: Փորձագետի հետևությունների ձևը չի որոշում եզրակացության դերը և տեղը ապացուցման պրոցեսում: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու բաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ո՛չ հավանական եզրակացությունն ինքնին և ո՛չ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն. այդպիսին չեն համարվում նաև հիպոթետիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ շատ դրանք լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն. հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը: Հետևաբար, փորձագիտական եզրակացությունն-

րի գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց *(տե՛ս, Ռաֆայել Ավետիսյանն ընդդեմ Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԴ1/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա՝ «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 13.09.2012 թվականի թիվ 21201107 եզրակացության համաձայն՝ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի հենապատին հասցված վնասվածքներն են՝ պարիսպը որոշ չափով թեքված է Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի կողմից դեպի թիվ 62/2 հասցեն, պատի տուֆե շարվածքում առաջացել են ուղղահայաց և հորիզոնական ճաքեր, պատի վրա առկա են խոնավության և աղակալման հետքեր, սալվածքի մեջ գոյություն ունեն տարբեր ուղղությամբ նստվածքային բնույթի ճաքեր և տեղաշարժեր, ծաղկանոցի բետոնե եզրաքարերի վրա կան ճաքեր, պատի և սալվածքի կցորդման հատվածում տեսանելի է որոշակի տեղաշարժեր, առկա են նաև պատի հիմքերի տակ գտնվող գրունտի քայքայման հետքեր, **այդ վնասվածքների պատճառ կարող են հանդիսանալ ինչպես մթնոլորտային տեղումների (ձյուն, անձրևաջրեր) ու ջերմային ռեժիմների տարբերության արդյունքում մթնոլորտային ջրերի ներթափանցումը պարսպի հիմնատակ, այնպես էլ հարևան բնակելի տան կառուցման նպատակով իրականացված հողային աշխատանքների և դինամիկ ազդեցությունների արդյունքում պարսպի հիմնատակի բնահողի որոշակի թուլացումը:** Միևնույն ժամանակ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 27.05.2008 թվականին և 08.05.2012 թվականին՝ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 տան պարսպապատի տեխնիկական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունների համաձայն՝ Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62/2 նորակառույց տան շինարարության համար պարսպապատին հարակից քանդվել է 2,5-3մ խորությամբ հիմնափոս, ինչի հետևանքով պարսպապատի հիմքերը հայտնվել են հիմնահատակի գրունտի խզված եզրամասի վրա և քանի որ հիմնափոսը քանդվել է վաղ և անցած ժամանակահատվածում (ձմեռ-գարուն) տեղումնային ջրերի և ջերմաստիճանի փոփոխությունների ազդեցության հետևանքով տեղի է ունեցել հիմնահատակի գրունտների թուլացում ու պարսպապատի վրա գրունտի կողային ճնշման մեծացում:

Սույն գործով Դատարանը հակընդդեմ հայցը բավարարելիս, հիմք ընդունելով «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 13.09.2012 թվականին, «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 27.05.2008 թվականին և 08.05.2012 թվականին տրված եզրակացությունները, գտել է, որ դրանցով հիմնավորված է այն հանգամանքը, որ Արա Սանուկյանի կողմից կատարված շինարարական և հողային աշխատանքների արդյունքում է Լեոնիդ Դավթյանին պատճառվել նյութական վնաս:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, մասնավորապես, պատճառաբանել է, որ սույն գործով Դատարանի ներքին համոզմունքը ձևավորվել է մի քանի փորձագետների եզրակացություններում, ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռում տեղ գտած տվյալների հետազոտման և գնահատման արդյունքում, որպիսի պայմաններում բողոքի հիմքերը բավարար չեն վճիռը բեկանելու համար: Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նշված եզրակացություններով չի բացառվել, որ Լեոնիդ Դավթյանին պատկանող պարսպի վնասվածքն առաջացել է հենց Արա Սանուկյանի կողմից կատարված շինարարական աշխատանքների արդյունքում:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն չեն հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 13.09.2012 թվականի թիվ 21201107, «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի կողմից 27.05.2008 թվականի և 08.05.2012 թվականի եզրակացությունները, դրանք չեն համադրել միմյանց հետ: Այսպես, ստորադաս դատարանները պատշաճ անդրադարձ չեն կատարել այն հանգամանքին, որ վերոնշյալ

եզրակացություններում հստակ և կատեգորիկ հետևություններ ու եզրահանգումներ չեն արվել փորձագետներին առաջադրված հարցերի վերաբերյալ, մասնավորապես՝ դրանցից որևէ մեկով չի տրվել կատեգորիկ եզրակացություն այն մասին, որ Լեոնիդ Դավթյանին պատկանող Երևանի Փափազյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 62 հասցեի տան հենապատին հասցված վնասվածքները առաջացել են կոնկրետ և բացառապես հարևան բնակելի տան կառուցման արդյունքում կատարված շինարարական և հողային աշխատանքների հետևանքով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Լեոնիդ Դավթյանի ներկայացրած հակընդդեմ հայցը՝ վնասի հատուցման պահանջի մասով, ենթակա էր մերժման, ինչը, սակայն, անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանական ծառայության և փորձաքննության ծախսերի գումարների բռնագանձման պահանջներն ածանցյալ պահանջներ են, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնական պահանջի մերժման պարագայում հակընդդեմ հայցը՝ ածանցյալ պահանջների մասով, ևս ենթակա էր մերժման:

Անդրադառնալով Արա Սանուկյանի վճռաբեկ բողոքի այն փաստարկին, ըստ որի՝ ստորադաս դատարանները, հայցը մերժելով, հանգել են սխալ եզրակացության՝ հաստատված համարելով այն փաստը, որ Լեոնիդ Դավթյանը ո՛չ անձամբ, ո՛չ էլ որևէ մեկի միջոցով չի կտրել Արա Սանուկյանի տան ամրանները, Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործում առկա՝ Արա Սանուկյանի կողմից Դատարանին ներկայացված՝ փորձագետի 15.01.2008 թվականի ապրանքագիտական եզրակացության համաձայն՝ Արա Սանուկյանի տան նորակառույց պատի սյուները վնասելու հետևանքով պատճառված նյութական վնասի չափի ընդհանուր շուկայական գինը գնահատվում է 440.800 ՀՀ դրամ, իսկ փորձագետի 23.01.2008 թվականի ապրանքագիտական եզրակացության համաձայն՝ նորակառույց պատը վնասելու հետևանքով Արա Սանուկյանին պատճառվել է 262.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ գործում առկա ապացույցների (15.01.2008 թվականի և 23.01.2008 թվականի ապրանքագիտական եզրակացությունների) վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ դրանցով հաստատվում է միայն պատճառված վնասի չափը՝ գումարային արտահայտությամբ, և ոչ թե վնաս պատճառած անձը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելիս, վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունները, գտել է, որ չի ապացուցվել Լեոնիդ Դավթյանի ոչ օրինաչափ վարքագծի հետևանքով Արա Սանուկյանին վնաս պատճառելու հանգամանքի, ինչպես նաև վերջինիս կրած վնասների և Լեոնիդ Դավթյանի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով սույն գործում առկա ապացույցները, հիմնավոր է համարում ստորադաս դատարանների եզրահանգումները: Մասնավորապես՝ փորձագետի 15.01.2008 թվականի և 23.01.2008 թվականի ապրանքագիտական եզրակացությունները հնարավորություն են տալիս հաստատված համարելու պատճառված վնասի համար պատասխանատվության միայն մեկ պայմանի առկայությունը, այն է՝ Արա Սանուկյանի կողմից որոշակի վնաս կրելու փաստը, ինչը, սակայն բավարար չէր սկզբնական հայցը հիմնավոր համարելու և այն բավարարելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի

4–րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70–րդ հոդվածի 1–ին կետի 1–ին և 7–րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3–րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արա Մանուկյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 150.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Նկատի ունենալով, որ Արա Մանուկյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, այն է՝ հակընդդեմ հայցի մասով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու մասով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լեոնիդ Դավթյանից հօգուտ Արա Մանուկյանի ենթակա է բռնագանձման 106.284 ՀՀ դրամ (3.542.800 ՀՀ դրամ * 3%)՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Միաժամանակ, վերը նշված պատճառաբանությամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լեոնիդ Դավթյանից հօգուտ Արա Մանուկյանի ենթակա է բռնագանձման նաև 106.284 ՀՀ դրամ (3.542.800 ՀՀ դրամ * 3%)՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքա–

ցիական դատարանի 23.10.2014 թվականի որոշման՝ Լեոնիդ Դավթյանի հակընդդեմ հայցը բավարարելու մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.06.2014 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասը և այդ մասով այն փոփոխել. Լեոնիդ Դավթյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Արա Մանուկյանի՝ վնասի հատուցման, փաստաբանական ծառայության և փորձաքննության ծախսերի գումարների բռնագանձման պահանջների մասին, մերժել:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Լեոնիդ Դավթյանից հօգուտ Արա Մանուկյանի բռնագանձել 106.284 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Լեոնիդ Դավթյանից հօգուտ Արա Մանուկյանի բռնագանձել 106.284 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում — Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3025/02/11**
2015թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3025/02/11
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գոզո և Վալի Ամոյանների ներկայացուցիչ Կրոմվել Գրիգորյանի և ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.09.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գոզո և Վալի Ամոյանների ընդդեմ Նախարարության՝ փաստաբանին վճարված գումարը բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գոզո և Վալի Ամոյանները պահանջել են Նախարարությունից բռնագանձել 5.500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Նախարարությունից հօգուտ Գոզո և Վալի Ամոյանների բռնագանձվել է 4.500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված գումար: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.02.2013 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ 4.500.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.05.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության: Գոզո և Վալի Ամոյանների վերաքննիչ բողոքը մերժվել է. վճիռը՝ 1.000.000 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.04.2013 թվա-

կանի որոշմամբ Գոզո և Վալի Ամոյանների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.04.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Գոզո և Վալի Ամոյանների բռնագանձվել է 1.500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված գումար: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.09.2014 թվականի որոշմամբ Նախարարության և Գոզո ու Վալի Ամոյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Դատարանի 22.04.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Որոշվել է նաև Գոզո և Վալի Ամոյաններից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 90.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Գոզո ու Վալի Ամոյանների ներկայացուցիչը և Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

2. Գոզո և Վալի Ամոյանների վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ և 53-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը, 67-րդ հոդվածի 3-րդ կետը, 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ եթե չկատարվեր «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի՝ ի դեմս փաստաբան Կրոմվել Գրիգորյանի և Վալի Ամոյանի միջև 10.12.2010 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան, այն է՝ Վալի Ամոյանի հանձնարարությամբ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում փաստաբան Կրոմվել Գրիգորյանը չծանոթանար թիվ ԱՐԴ/0169/01/10 քրեական գործի նյութերին, ապա փաստաբան Կրոմվել Գրիգորյանի և Վալի Ամոյանի միջև 24.12.2010 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան չէր կարող կատարվել: Առանց քրեական գործի նյութերին ծանոթանալու՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը, միայն դատավճռին ծանոթանալով, չէր կարող դատավճռի դեմ վերաքննիչ բողոք պատրաստել և, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ներկայացնելով ամբաստանյալ Գոզո Ամոյանի շահերը, արդարացման արդյունքի հասնել: Այսինքն՝ Գոզո և Վալի Ամոյաններն ապացուցել են, որ հատուցումն իրոք անհրաժեշտ է եղել Գոզո Ամոյանի խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, Գոզո և Վալի Ամոյանները ցույց են տվել կրած վնասների և իրենց իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը, ինչպես նաև կատարած ծախսի ողջամիտ լինելը, ինչը նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի չափը համարժեք է հենց կրած վնասներին, որպիսի հանգամանքն ապացուցվել է հստակ փաստաթղթերի միջոցով՝ բացառելով ենթադրությունները և շահարկումները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Դատարանը իրավունք չուներ փաստաբանի վարձատրության հարցը դիտարկելու «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից և համեմատություններ անցկացնելու պաշտպանի՝ պայմանագրով սահմանված գումարների

և Երևան քաղաքի դատախազի մեկ ժամվա աշխատավարձի ու հանրային պաշտպանի ամսական աշխատավարձերի միջև, քանի որ պայմանագրերով համապատասխան ծառայություններ մատուցած պաշտպանը՝ փաստաբանը, սույն գործով նշանակված պաշտպան չի եղել: Դատարանի նման հետևությունները չեն կարող դիտարկվել որպես պատճառաբանված և հիմնավորված հետևություններ, քանի որ դրանք հակասում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված պահանջներին:

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ և 73-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով Գոզո և Վալի Ամոյաններն ուղղակիորեն ազատված են պետական տուրքի վճարումից, ուստի հայցապահանջի չբավարարված մասով ևս նրանցից պետական տուրքի գումար բռնագանձվել չէր կարող:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ հայցի չբավարարված մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ բավարարել:

2.1 Նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ և 1064-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ որևէ կերպ չի անդրադարձել վնասի հատուցման համար պարտադիր պայման համարվող տարրերի վերլուծությանը, ոչ օրինաչափ վարքագծի պայմանի բացահայտմանը, Նախարարության այն դիրքորոշմանը, որ սույն դեպքում հատուցման ենթակա կարող է լինել միայն այն վնասը, որը պատճառվել է ապօրինի դատապարտվելու, քրեական պատասխանատվության ենթարկվելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկվելու հետևանքով: Վերաքննիչ դատարանը եզրահանգում չի կատարել նաև Նախարարության կողմից վկայակոչված այն դրույթի վերաբերյալ, որ արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Տվյալ դեպքում հարկ է փաստել, որ Գոզո և Վալի Ամոյանները ոչ հայցադիմումում, ոչ էլ սույն գործի քննության ընթացքում չեն պարզաբանել, թե քրեական գործով վարույթն իրականացնող որ մարմնի գործողության կամ անգործության հետևանքով է իրենց վնաս պատճառվել:

Միևնույն ժամանակ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ քրեական հետապնդման մարմնի կատարած գործողությունները կամ կայացրած որոշումները ճանաչվել են ապօրինի: Չկա նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որով հաստատվել է դատավորի մեղքը: Ավելին, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 11.08.2011 թվականի որոշմամբ որևէ հետևություն չի արվել քրեական հետապնդման մարմնի կամ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ապօրինի գործողությունների մասին, դատավճռի բեկանման հիմքում դրվել է ոչ թե քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի որևէ ապօրինի գործողությունը, այլ՝ գործի ոչ լիարժեք քննությունը:

Միաժամանակ դատական մի շարք այլ ակտերի ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ դրանց միջև առկա են հակասություններ, որոնք հստակեցման կարիք ունեն: Մասնավորապես՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.02.2014 թվականի թիվ ԵԿԴ/1061/02/13 վճռով փաստաբանին վճարված գումարի բռնագանձման պահանջը բավարարվել է մասնակիորեն, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.08.2013 թվականի թիվ ԼԴ/0428/02/13 վճռով քննարկվել է փաստաբանին վճարված գումարի ողջամտության հարցը՝ դրանով իսկ հնարավորություն տալով նվազեցնելու այն, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.12.2013 թվականի թիվ ԵԿԴ/0921/02/13 վճռով փաստաբանին վճարված գումարի պահանջը մեկնաբանվել է վնասի հատուցման ինստիտուտի տեսանկյունից, և այն բավարարվել է ամբողջությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի թիվ ԱՐԴ/0169/01/10 դատավճռով Գոզո Ամոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել է ազատազրկման չորս տարի վեց ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 11.08.2011 թվականի որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի թիվ ԱՐԴ/0169/01/10 դատավճիռը բեկանվել է՝ ճանաչվել և հռչակվել է Գոզո Ամոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ նրա արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով: Որոշումն օրինական ուժի մեջ է մտել 12.10.2011 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 7-12):**

2) Վալի Ամոյանի և «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի՝ ի դեմս փաստաբան Կրոմվել Գրիգորյանի միջև 10.12.2010 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով փաստաբան Կրոմվել Գրիգորյանը պարտավորվել է Վալի Ամոյանի հանձնարարությամբ ծանոթանալ թիվ ԱՐԴ/0169/02/10 քրեական գործի նյութերին, իսկ Վալի Ամոյանը պարտավորվել է այդ ծառայությունների դիմաց փաստաբան Կրոմվել Գրիգորյանին վճարել 1.000.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 13-14):**

3) Վալի Ամոյանի և «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի՝ ի դեմս փաստաբան Կրոմվել Գրիգորյանի միջև 24.12.2010 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով փաստաբան Կրոմվել Գրիգորյանը պարտավորվել է Վալի Ամոյանի հանձնարարությամբ ծանոթանալ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի թիվ ԱՐԴ/0169/01/10 դատավճռին, պատրաստել և ներկայացնել վերաքննիչ բողոք, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում պաշտպանել Գոզո Ամոյանի շահերը, իսկ Վալի Ամոյանը պարտավորվել է այդ ծառայությունների դիմաց փաստաբան Կրոմվել Գրիգորյանին վճարել 4.500.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 15-16):**

4) 10.01.2011 թվականի ստացականի համաձայն՝ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս փաստաբան Կրոմվել Գրիգորյանի Վալի Ամոյանից ստացել է 10.12.2010 թվականի ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված 1.000.000 ՀՀ դրամը, իսկ 21.01.2011 թվականի ստացականի համաձայն՝ ստացել է 24.12.2010 թվականի ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված 4.500.000 ՀՀ դրամը **(հատոր 1-ին, գ.թ. 5-6):**

5) Վերաքննիչ դատարանի 24.09.2014 թվականի որոշմամբ որոշվել է Գոզո և Վալի Ամոյաններից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 90.000 ՀՀ դրամ **(հատոր 6-րդ, գ.թ. 49-56):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ապօրինի դատապարտման արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

ա) ի՞նչ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում անձը կարող է պահանջել ապօրինի դատապարտման արդյունքում իր կրած նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը.

բ) արդյո՞ք ՀՀ իրավական համակարգում ապօրինի դատապարտման դեպքում փաստաբանին վճարված գումարների մասով հատուցման իրավունքը երաշխավորված է բացառապես արդարացվածի համար.

գ) արդյո՞ք փաստաբանին վճարված գումարները Հայաստանի Հանրապետության կողմից ենթակա են փոխհատուցման լրիվ ծավալով.

դ) արդյո՞ք արդարացվածից կարող է պետական տուրք գանձվել փաստաբանին վճարված գումարների բռնագանձման հայցապահանջներով.

ե) արդյո՞ք արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

4.1 Քննելով Գոզո և Վալի Ամոյանների վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ա) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի

կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն նույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար, և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմունքով, որ ինչ-որ նոր հանգամանք կամ նոր բացահայտված հանգամանք անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա այդպիսի դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում օրենքի համաձայն, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացվածն իրավունք ունի պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները: Նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալու աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է, ինչպես նաև վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացվածին պատճառված վնասը հատուցվում է քաղաքացիական դատավարության կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝ կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ

արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում նույնպես ճանաչել է ապօրինի դատապարտված անձի կրած վնասների փոխհատուցման իրավունքը *(տե՛ս, Շիլանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 06.10.2005 թվականի վճիռը, կետ 20):*

Միավորված Ազգերի Կազմակերպության 09.12.1988 թվականի «Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի» (հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 09.12.1988 թվականի 43/173 բանաձևով) 35-րդ սկզբունքով սահմանվել է, որ պետական պաշտոնատար անձի գործողությունների կամ զանցառությունների հետևանքով պատճառված վնասը՝ ի խախտումն նույն սկզբունքների բովանդակած իրավունքների, ենթակա է հատուցման՝ պատասխանատվության կիրառվող նորմերի համաձայն, որոնք նախատեսված են ներքին օրենսդրությամբ:

Վերոնշյալ իրավանորմերից և դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով անձին ազատությունից ապօրինի զրկելու, նրան ապօրինի դատապարտելու դեպքում վնասի հատուցման իրավունքն ունի սահմանադրական հիմնարար իրավունքի բնույթ, որը լայնորեն ճանաչված և ամրագրված է նաև միջազգային իրավական ակտերում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հիմնարար իրավունքի կենսագործումն առաջին հերթին պետք է դիտարկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի լույսի ներքո, հատկապես այն դեպքում, երբ անձը վնաս է կրել պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով *(տե՛ս, Հայկ Սահակյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ԵԿԴ/0780/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):*

Առաջնորդվելով արդարացվածի կարգավիճակի առանձնահատկություններով, մասնավորապես՝ վերջինիս իրավական և սոցիալական վիճակի արդյունավետ վերականգնման անհրաժեշտությամբ, ինչպես նաև վերը նշված սահմանադրաիրավական ու միջազգային իրավական պահանջներով՝ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սահմանել է արդարացվածին պատճառված վնասների հատուցման իրավունքը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը նախատեսել է արդարացվածի՝ իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը: Օրենսդիրը սահմանել է, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական վնասը, ինչպես նաև հնարավոր բաց թողնված օգուտները: Արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալու աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է, ինչպես նաև վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է նաև, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օրենսդիրը նախատեսել է անձի՝ ապօրինի դատապարտվելու, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափան-

ման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով օրենքով սահմանված կարգով պատճառված վնասի լրիվ ծավալով հատուցման իրավունքը:

Վճռաբեկ դատարանը սույն գործի շրջանակներում նախ անհրաժեշտ է համարում անդրադառնալ արդարացվածի՝ նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքի ծագման և իրացման հիմնախնդիրներին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 30.03.2010 թվականի թիվ ՍԴՈ-871 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մինչդատական վարույթում անձն արդարացվածի կարգավիճակ ձեռք է բերում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքում, իսկ դատական քննության փուլում՝ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճռի դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչ այդ գոյություն չունի կասկածյալին կամ մեղադրյալին պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք, որովհետև դեռևս նա արդարացված չէ: Անձը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա հատուցման պահանջով դատարան դիմել միայն դրանում նշված հիմքերով արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հատուցման ենթակա են միայն այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու հետևանք են:

Համանման իրավական դիրքորոշում արտահայտել է նաև Եվրոպական դատարանը: Եվրոպական դատարանը թեև ճանաչել է ապօրինի դատապարտված անձանց կրած վնասների փոխհատուցման իրավունքը, սակայն միաժամանակ նշել է, որ Կոնվենցիան չի խոչընդոտում պայմանավորվող պետություններին հատուցել վնասը, միայն այն դեպքում, երբ տուժած անձը կկարողանա ապացուցել, որ իրեն պատճառված վնասն ուղղակիորեն կապված է իր իրավունքների խախտման հետ *(տե՛ս, Շիլևան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի 06.10.2005 թվականի վճիռը, կետ 20)*:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել նաև իրավունքների չարաշահման արգելքի համաիրավական սկզբունքի լույսի ներքո և արձանագրում է, որ անձին ապօրինի դատապարտման արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացում իրավական պետությունում հնարավոր է միայն այն պայմաններում, եթե չի ապացուցվում, որ այն հանգամանքների ժամանակին բացահայտումը, որոնք հիմնավորել են անձի ապօրինի դատապարտումը, լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապօրինի դատապարտման արդյունքում նյութական վնասների հատուցում պահանջելու իրավունքը ծագում է միայն անձի արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո և համապատասխան սուբյեկտները կարող են իրացնել իրենց վնասի հատուցման իրավունքը, եթե ապացուցեն, որ իրենց վնասը պատճառվել է ապօրինի դատապարման արդյունքում և չապացուցվի, որ այդ հանգամանքների ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ իրավական համակարգում վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում արդարացվածի համար երաշխավորված է փաստաբանին վճարված գումարների հատուցման իրավունքը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն նախատեսված չէ այլ անձանց կողմից փաստաբանին վճարված գումարների հատուցման իրավունքը, սակայն վերը նշվածը չի նշանակում, որ ՀՀ-ում այլ անձինք պետք է զրկված լինեն պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի, մասնավորապես՝ արդարացվածի իրավունքների վերականգնման համար փաստաբանին վճարված գումարների հատուցման իրավական հնարավորությունից հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կե-

տում օրենսդիրը սահմանել է, որ փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով: Այսպիսով, օրենսդիրը սահմանել է, որ քրեական գործով վարույթին փաստաբանը՝ որպես պաշտպան, կարող է ներգրավել ոչ միայն կասկածյալի կամ մեղադրյալի հրավերով, այլ նաև կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով: Հետևաբար պետական իշխանության մարմինների գործողությունների արդյունքում, մասնավորապես՝ անձին ապօրինի դատապարտելու արդյունքում նյութական վնաս կարող է պատճառվել նաև այն անձանց, ովքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար փաստաբան հրավիրելու:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «տուժողի»՝ որպես հանցագործության զոհի, հասկացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ՝ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով:

Այդպիսով, անօրինական գործողությունների, հանցագործության և իշխանության չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են, և նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով միջազգային իրավունքում առկա վերը նշված մոտեցումները, 14.12.2010 թվականի իր թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն և ներառում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիահրավական ու այլ հարաբերություններից և իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց: Ուստի ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ անձին ապօրինի դատապարտելու, այսինքն՝ հանրային իշխանության ոչ իրավաչափ գործունեության արդյունքում վնաս կարող է պատճառվել նաև այլ անձանց, մասնավորապես՝ նրանց, ովքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարացվածի իրավունքների վերականգնման համար, փաստաբանին վճարված գումարների մասով ապօրինի դատապարտման հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված է նաև այն անձանց համար, ովքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան, ով քրեական գործով վարույթի ընթացքում կներկայացնի կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը՝ նրանց ցույց տալով իրավաբանական օգնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, ապօրինի դատապարտելու հետևանքով արդարացվա-

ծին, ինչպես նաև այն անձանց պատճառված վնասը, մասնավորապես՝ փաստաբանին վճարված գումարները, ովքեր, ՀՀ օրենսդրության համաձայն իրավական հնարավորություն ունեն կասկածյալի կամ մեղադրյալի համար հրավիրելու փաստաբան, ենթակա են հատուցման լրիվ ծավալով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է փաստաբանի վարձատրության չափի՝ որպես դատական ծախսի խելամտության որոշման հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը *(տե՛ս, Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում նույնպես բազմիցս անդրադարձել է ծախսերի և ծախքերի խելամտության հարցին և նշել, որ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի և ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, և դրանց չափը եղել է ողջամիտ *(տե՛ս, Շամոյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 07.01.2015 թվականի վճիռը, կետ 48*):

Ընդ որում, **իրական** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է փաստաթղթային ողջամիտ ապացույցներ ներկայացնի առ այն, որ վնասն իրականում գոյություն ունի, վնասի հատուցման պահանջը չի կարող հիմնված լինել ենթադրությունների, շահարկումների և ապագայում տեղի ունենալիք հնարավոր կամ անհնարին իրադարձությունների ու փաստերի վրա: **Անհրաժեշտ** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ այդ հատուցումն իրոք անհրաժեշտ է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ցույց տա իր կրած վնասների ու իր իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը: **Ողջամիտ** նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի չափը պետք է համարժեք լինի այդ վնասներին, ինչը հնարավոր է ապացուցել միայն հստակ փաստաթղթային եղանակով՝ բացառելով ենթադրությունները և շահարկումները:

Վերահաստատելով նախկինում իր կողմից կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստաբանի վարձատրության չափի՝ որպես դատական ծախսի խելամտության հարցի վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք նմանապես կիրառելի են նաև փաստաբանի վարձատրության չափի՝ որպես արդարացվածին պատճառված նյութական վնասի հատուցման խելամտության որոշման հարցի նկատմամբ, քանի որ փաստաբանին վճարված գումարները՝ անկախ այն հանգամանքից, թե դատական ծախսեր են, թե պատճառված նյութական վնասներ, ինչ դատավարության ընթացքում են վճարվել՝ քաղաքացիական, վարչական, թե քրեական, պետք է լինեն իրականում կատարված և անհրաժեշտ, ինչպես նաև դրանց չափը պետք է լինի ողջամիտ: Ընդ որում, քրեական դատավարության ընթացքում փաստաբանին՝ պաշտպանին, վճարված գումարների իրական լինելը, դրանց անհրաժեշտությունը և ողջամտությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել քրեական դատավարության առանձնահատկությունները, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում կատարած աշխատանքի համար փաստաբաններին վարձատրելու վերաբերյալ արդեն իսկ ձևավորված և արմատավորված դատական պրակտիկայի առանձնահատկությունները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշումների վեր-

լուծության արդյունքում արձանագրում է, որ ապօրինի դատապարտելու հետևանքով փաստաբանին վճարված իրական, անհրաժեշտ և ողջամիտ գումարները հատուցվում են լրիվ ծավալով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի թիվ ԱՐԴ/0169/01/10 դատավճռով Գոզո Ամոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման չորս տարի վեց ամիս ժամկետով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 11.08.2011 թվականի որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի թիվ ԱՐԴ/0169/01/10 դատավճիռը բեկանվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ ճանաչվել և հռչակվել է Գոզո Ամոյանի անմեղությունը՝ նրա արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով: Նշված որոշումն օրինական ուժի մեջ է մտել 12.10.2011 թվականին:

Վալի Ամոյանի և «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի՝ ի դեմս փաստաբան Կրոմվել Գրիգորյանի միջև 24.12.2010 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը պարտավորվել է Վալի Ամոյանի հանձնարարությամբ ծանոթանալ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի թիվ ԱՐԴ/0169/01/10 դատավճռին, պատրաստել և ներկայացնել վերաքննիչ բողոք, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում պաշտպանել Գոզո Ամոյանի շահերը, իսկ Վալի Ամոյանը պարտավորվել է այդ ծառայությունների դիմաց փաստաբան Կրոմվել Գրիգորյանին ընդհանուր առմամբ վճարել 5.500.000 ՀՀ դրամ: 10.01.2011 թվականի ստացականի համաձայն՝ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս փաստաբան Կրոմվել Գրիգորյանի, Վալի Ամոյանից ստացել է 10.12.2010 թվականի ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված 1.000.000 ՀՀ դրամը, իսկ 21.01.2011 թվականի ստացականի համաձայն՝ ստացել է 24.12.2010 թվականի ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված 4.500.000 ՀՀ դրամը:

Սույն գործով Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով, պատճառաբանել է, որ քրեական գործով փաստաբանին վճարված գումարների մասով ներկայացված պահանջը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հատուցման ենթակա այն վնասն է, որը կրել է հայցվոր կողմը, երբ ստիպված է եղել փաստաբանի միջոցով պաշտպանել իր իրավունքները՝ պայմանագրի հիմքով պարտավորվելով վճարել 4.500.000 ՀՀ դրամ: Հետևապես, օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճռի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ և 1064-րդ հոդվածների հիմքով հայցվոր կողմին պատճառված վնասը պետք է հատուցվի Հայաստանի Հանրապետության կողմից՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության պաշտոնատար անձանց մեղքից: Միաժամանակ անդրադառնալով փաստաբանի վարձատրության խելամտության որոշման իրավական խնդրին՝ Դատարանն այն դիտարկել է «Դատախազության մասին» և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ համապատասխանաբար դատախազի աշխատավարձի և փաստաբանի վարձատրության չափերի դիտանկյունից, ինչպես նաև առաջնորդվել է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն և միջին աշխատավարձերի չափերի, դատական պրակտիկայում ձևավորված՝ փաստաբանի խելամիտ վարձատրության չափերը սահմանելու վերաբերյալ չափորոշիչներով:

Վերը նշվածի հաշվառմամբ, գնահատելով նաև փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարած լինելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը, գործի բարդությունը, գործի քննության տևողությունը, ինչպես նաև կատարած ծախսերի իրական և ողջամիտ լինելու չափորոշիչները՝ Դատարանը գտել է, որ փաստաբանին վճարված 4.500.000 ՀՀ դրամի պահանջը պետք է բավարարել 1.500.000 ՀՀ դրամի չափով, որպիսի գումարը ենթակա է փոխհատուցման Հայաստանի Հանրապետության կողմից:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, մասնավորապես՝ պատճառաբանել է, որ սույն գործը քննության առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված փաստաբանի խելամիտ վարձատրության, պրակտիկայում գործող փաստաբանների վարձատրության լույսի ներքո, ինչպես նաև գնահատելով սույն գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու, փաստաբանի փաստացի կատարած այլ գործողությունների հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը, գործի բարդությունը, ծավալը, գործի քննության տևողությունը, ինչպես նաև ՀՀ դատական պրակտիկայում առկա՝ փաստաբանի կատարած ծախսերի իրական և ողջամիտ լինելու չափորոշիչները, Դատարանի կողմից 1.500.000 ՀՀ դրամի չափով հայցի բավարարումն իրավաչափ է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գոզո Ամոյանն արդարացված է, քանի որ Գոզո Ամոյանին առաջադրված մեղադրանքում վերջինիս անմեղության հռչակման և արդարացման վերաբերյալ կայացվել է համապատասխան դատական ակտ: Դա նշանակում է, որ նախաքննական մարմինը և առաջին ատյանի դատարանը ոչ օրինաչափ վարքագիծ են դրսևորել Գոզո Ամոյանի նկատմամբ՝ համապատասխանաբար նրան անհիմն մեղադրանք են առաջադրել և անհիմն դատապարտել, ինչի արդյունքում վերջինս ստիպված է եղել փաստաբանի կողմից տրամադրվող վճարովի ծառայությունների միջոցով պաշտպանել իր իրավունքներն ու ազատությունները և ապացուցել իր անմեղությունը: Վերոգրյալ դիրքորոշումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1064-րդ հոդվածների ուժով Գոզո Ամոյանին պատճառված վնասը պետք է հատուցվի Հայաստանի Հանրապետության կողմից՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և/կամ դատարանի պաշտոնատար անձանց մեղքի առկայության կամ բացակայության հանգամանքից:

Այսպիսով, համապատասխան քրեական գործի քննության ընթացքում և այդ գործի քննությամբ պայմանավորված՝ Գոզո և Վալի Ամոյանների կրած վնասները ենթակա են փոխհատուցման լրիվ ծավալով խելամտության սահմաններում՝ հաշվի առնելով կոնկրետ գործով տվյալ փաստաբանի կողմից կատարված աշխատանքի բնույթը և ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունների ամբողջությամբ և փաստացի կատարած լինելու հանգամանքը, գործի քննությանը վերջինիս ներգրավվածության ու մասնակցության աստիճանը), գործի բարդության մակարդակը (վիճելի իրավահարաբերության բնույթը, այդ գործի քննության տևողությունը:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով սույն գործով հայցը 1.500.000 ՀՀ դրամի չափով բավարարելու վերաբերյալ ստորադաս դատարանների կողմից ներկայացված պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. տվյալ դեպքում ստորադաս դատարաններն իրականացրել են գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, մասնավորապես՝ ճիշտ են գնահատել փաստաբան Կրոմվել Գրիգորյանի կողմից թիվ ԱՐԴ/0169/02/10 քրեական գործի քննությանը մասնակցության բնույթն ու աստիճանը, գործի բարդությունը և ծավալը, համապատասխան գործի քննության տևողությունն ու ժամանակատարությունը, ինչպես նաև ՀՀ դատական պրակտիկայում ձևավորված՝ փաստաբանին վճարվող գումարների ողջամտության կոնկրետ չափորոշիչները:

Այսպիսով, նշված պատճառաբանություններով հերքվում են փաստաբանի վարձատրության չափի չբավարարված մասի ողջամտությունը կասկածի տակ դնելու առնչությամբ վճռաբեկ բողոքի փաստարկները:

բ) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, իսկ

նույն հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «է.1» կետի համաձայն՝ **դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են արդարացվածները**՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման հայցերով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չէ այն իրողությունը, երբ հետևողականություն չի դրսևորվում տվյալ իրավակարգավորման հարցում, և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման պարագայում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը մինչև 25.10.2011 թվականի խմբագրությամբ գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ ճանաչել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշման հիման վրա 25.10.2011 թվականին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու արդյունքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը լրացվել է նոր կետերով, որոնցից է նաև՝ «է.1» կետը, որի համաձայն՝ արդարացվածները իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավվելու և դատապարտման հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման հայցերով ազատվում են դատարաններում պետական տուրքի վճարումից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի 24.09.2014 թվականի որոշմամբ Գոզո և Վալի Ամոյաններից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե որոշվել է բռնագանձել հայցի չբավարարված մասով՝ 3.000.000 ՀՀ դրամի 3 տոկոսի չափով գումար, որը կազմում է 90.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները և ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «է.1» կետի պահանջով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվորները «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, մասնավորապես՝ դրա հիշատակված իրավադրույթով նախատեսված կարգավորման ուժով պետական տուրքի գծով արտոնություններից օգտվող սուբյեկտներ են, որի արդյունքում վերջիններս ուղղակիորեն ազատված են պետական տուրքի վճարման պարտականությունից, ուստի Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ հայցվորներից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 90.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես

չվճարված պետական տուրքի գումար, անհիմն է:

4.2 Քննելով Նախարարության վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել նույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է նույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետում սահմանել է պետության մեղքից անկախ պատասխանատվության ինստիտուտը՝ պետության ոչ իրավաչափ գործունեության հետևանքով վնասի հատուցման համար որպես նախապայման չսահմանելով կոնկրետ պաշտոնատար անձի մեղքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ նախ՝ արդարացվածն իրավունք ունի պահանջելու ինչպես հետաքննության, նախաքննության, դատախազության, այնպես էլ դատարանի պաշտոնատար անձանց ապօրինի գործունեության հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցում՝ ամբողջ ծավալով, և երկրորդ՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

Պետության մեղքից անկախ պատասխանատվության վերաբերյալ առկա իրավակարգավորման հիմքում ընկած է այն իրավական տրամաբանությունը, որ պետության հետ հանրային իրավական հարաբերություններում մասնավոր անձանց ավելի մեծ պաշտպանության հիմնավորված անհրաժեշտություն գոյություն ունի, քանի որ պետություն-մասնավոր անձ մի շարք հարաբերություններում պետության փաստացի և ընդգծված գերակայությունն օբյեկտիվորեն պահանջում է ուժերի ակնհայտ անհավասարակշռությունը հաղթահարելու նպատակով պետության ավելի խիստ պատասխանատվություն մասնավոր անձի առջև իր ոչ իրավաչափ վարքագծի իրավական հետևանքները վերացնելու համար:

Վերը նշված խնդրի արդյունավետ լուծման անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրը մեղքի առկայությունը՝ որպես իրավահավասար կողմերի միջև իրավահարաբերություններում պատասխանատվության անհրաժեշտ տարր, չի նախատեսել իր իրավական

բնույթով լիովին այլ՝ պետության պատասխանատվության դաշտում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ պետության մեղքից անկախ պատասխանատվության սահմանումը չի նշանակում, որ պետությունն առանց մեղքի պատասխանատվություն է կրում բոլոր ոլորտներում վնաս պատճառելու համար: Առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը և կիրառումը հիմնավորված և արդարացված է միայն անձի համար կենսական նշանակություն ունեցող իրավական բարիքների հանդեպ պետության միջամտության դեպքում, մասնավորապես, երբ խոսքը գնում է անձին ապօրինի դատապարտելու, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու կամ տույժի ենթարկելու մասին:

Այսպիսով, ապօրինի դատապարտելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ համապատասխան պաշտոնատար անձի, այդ թվում նաև՝ դատավորի մեղքի առկայությունից: Ինչ վերաբերում է այլ դեպքերում պետության ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում անձին վնաս պատճառելուն, ապա օրենսդիրը սահմանել է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է նույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

Օրենսդիրը նախատեսել է նաև վնասի հատուցման հնարավորությունն այն դեպքերում, երբ հետաքննության, նախաքննության և/կամ դատախազության մարմինները թույլ են տվել ապօրինի գործողություններ, որոնք, սակայն, չեն հանգեցրել ապօրինի դատապարտելուն, քրեական պատասխանատվության ենթարկելուն, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելուն, վարչական տույժի ենթարկելուն, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 3-րդ կետով առանձնացված է դատավորի պատասխանատվությունը նույն հոդվածի 2-րդ կետում ամրագրված հանգամանքների առկայության դեպքում: Հետևաբար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատավորի մեղքի ապացուցումը վնասի հատուցման նախապայման կարող է հանդիսանալ միայն այն դեպքերում, երբ դատավորի գործողությունները չեն հանգեցրել անձին ապօրինի դատապարտելուն, քրեական պատասխանատվության ենթարկելուն, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելուն կամ վարչական տույժի ենթարկելուն:

Այսպիսով, վերը նշված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նախարարության այն փաստարկը, որ արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, անհիմն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 3-րդ կետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ տվյալ դեպքում դատարանի պաշտոնատար անձանց գործողությունները հանգեցրել են կոնկրետ անձի ապօրինի դատապարտմանը, ինչը նշանակում է, որ համապատասխան անձինք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունեն՝ անկախ համապատասխան պաշտոնատար անձանց մեղքից:

Ինչ վերաբերում է Նախարարության այն փաստարկին, որ ստորադաս դատարանների կողմից կայացված մի քանի դատական ակտերում առկա են ենթադրյալ հակասություններ, որոնք հստակեցման կարիք ունեն, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն ևս անհիմն է, քանի որ Նախարարության վկայակոչած վճիռներով դատարանները փաստաբանի վարձատրության չափի ողջամտության հարցը որոշելիս հաշվի են առել տվյալ գործերով փաստաբանների կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի

բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը: Այսինքն՝ վկայակոչված դատական ակտերով դատարանների կողմից հայցը մասնակիորեն կամ ամբողջությամբ բավարարելը դեռևս չի կարող որևէ կերպ վկայել այդ ակտերի միմյանց հակասելու մասին, քանի որ նշված դատական ակտերով փաստաբանների վարձատրության չափը որոշելիս դատարանների կողմից իրավաչափորեն հաշվի են առնվել համապատասխան գործերից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունները:

Այսպիսով, Գոզո և Վալի Ամոյանների ներկայացուցչի վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «է.1» կետի հիմքով՝ Գոզո և Վալի Ամոյաններն ազատված են պետական տուրքի վճարումից, այդ մասով պետական տուրքի հարցը համարում է լուծված:

Անդրադառնալով Նախարարության բերած վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցին և նկատի ունենալով, որ վերջինս վճռաբեկ բողոքի համար վճարել է 45.000 ՀՀ դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախարարության վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով պետական տուրքի հարցը ևս պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքը մերժել, իսկ Գոզո և Վալի Ամոյանների վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.09.2014 թվականի որոշման՝ Գոզո և Վալի Ամոյաններից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե 90.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես չվճարված պետական տուրքի գումար բռնագանձելու մասը, և այդ մասով փոփոխել այն. պետական տուրքի հարցն այդ մասով համարել լուծված:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0540/02/12
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Հ. Ենոքյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0540/02/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նորիկ Սողոմոնյանի ներկայացուցիչ Մարիամ Ղուլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Հովհաննիսյանի ընդդեմ Նորիկ Սողոմոնյանի՝ անհիմն հարստացման գումարը և նախապես վճարված պետական տուրքի գումարը վերադարձնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արթուր Հովհաննիսյանը պահանջել է Նորիկ Սողոմոնյանից բռնագանձել 7.000 ԱՄՆ դոլար՝ որպես անհիմն հարստացման գումար, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 19.09.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.03.2015 թվականի որոշմամբ Նորիկ Սողոմոնյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.09.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նորիկ Սողոմոնյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ և 1099-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 52-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Նորիկ Սողոմոնյանն Արթուր Հովհաննիսյանի օգտին կատարել է որոշակի գործողություն, որի դիմաց Արթուր Հովհաննիսյանից ստացել է գումար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ կողմերի միջև գոյություն են ունեցել պարտավորական հարաբերություններ: Մինչդեռ ակնհայտ է, որ Արթուր Հովհաննիսյանն իր կամքով է Նորիկ Սողոմոնյանին գումար տվել, հստակ իմացել է, որ գումարը տալու որևէ պարտականություն չունի, գիտակցել է, որ այդ գումարը տալիս է որպես առևտրային կաշառք, ինչը միանշանակորեն վկայում է Արթուր Հովհաննիսյանի և Նորիկ Սողոմոնյանի միջև միայն քրեաիրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների գոյությունը և բացառում է քաղաքացիաիրավական որևէ բնույթի հարաբերությունների առկայությունը:

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ կողմերի միջև առկա են քաղաքացիաիրավական հարաբերություններ, ապա այդ դեպքում ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով՝ նշված գումարը չի կարող ենթակա լինել վերադարձման:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ տվյալ դեպքում առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.03.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.06.2013 թվականի թիվ ԵԷԴ/0055/01/12 օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել են հետևյալ հանգամանքները.

– Նորիկ Սողոմոնյանն աշխատել է «Երևան ջուր» ՓԲԸ-ի Նուբարաշենի ենթատեղամասում՝ որպես շահագործման գծով տեղամասի պետ,

– Արթուր Հովհաննիսյանն ապօրինի ջրօգտագործում իրականացնելու նպատակով առևտրային կաշառք է տվել Նորիկ Սողոմոնյանին և վերջինիս գիտությամբ խմելու ջրով ոռոգել է ծիրանի այգիները,

– Արթուր Հովհաննիսյանը նշված դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով (առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար) **(հատոր 2-րդ, գ.թ. 35-43):**

2. Էրեբունու քննչական բաժնի «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 14.03.2012 թվականի որոշման համաձայն՝ Նորիկ Սողոմոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առևտրային կաշառք ստանալու համար: Նույն որոշմամբ Նորիկ Սողոմոնյանի կողմից առևտրային կաշառք ստանալու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ համաներման ակտ ընդունվելու հիմքով **(հատոր 2-րդ, գ.թ. 6-11):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք որպես առևտրային կաշառք տրամադրված գումարը կարող է հանդիսանալ անհիմն հարստացմամբ ձեռք բերված գույք, որն էլ առևտրային կաշառք ստացած անձից ենթակա լինի բռնագանձման այդպիսի կաշառք տված անձին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար պետք է, նախևառաջ, քննարկել այն հարցը, թե արդյո՞ք անհիմն հարստացման և առևտրային կաշառքի արդյունքում ձեռք բերված գույքերի (գումարների) իրավական կարգավիճակները, դրանց բնույթն ու էությունը որևէ պարագայում կարող են նույնացվել, թե՝ ոչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, **ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են անհիմն հարստացման հետևանքով:**

Վերը նշված հոդվածով նախատեսված իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են ծագել քաղաքացիական շրջանառության սուբյեկտների ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ գործողություններից: Այդպիսին է, մասնավորապես, անհիմն հարստացման արդյունքում ծագած պարտավորությունը, որը թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չէ, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անհիմն հարստացման ինստիտուտը քաղաքացիական իրավունքի ինստիտուտներից մեկն է, որի նպատակը քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանության իրականացումն ապահովելն ու դրան նպաստելն է:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցավոր արարքներից առևտրային կաշառքի առանձնահատկություններին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է նույն օրենսգրքով:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերը նշված հոդվածը, արձանագրում է, որ հանցագործության հատկանիշներն են՝ ա) հանրային վտանգավորությունը, բ) քրեական հա-

կաիրավականությունը, գ) մեղավորությունը: Այսպիսով, առևտրային կաշառքը, ինչպես ցանկացած այլ հանցագործություն, քրեական օրենսդրությամբ պաշտպանվող հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հանրության համար վտանգավոր ոտնձգություն է:

ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Ըստ այդմ, վերոնշյալ հոդվածի իրավական վերլուծությունից հետևում է, որ հիշյալ հանցագործության անմիջական օբյեկտը առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Նշված հանցակազմի իմաստով՝ վկայակոչված հոդվածում թվարկված անձանց ապօրինաբար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն է խոստացվում, առաջարկվում կամ տրամադրվում, որպեսզի նրանք կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին կատարեն կամ չկատարեն որոշակի գործողություններ: Ընդ որում, նշված հանցագործությունում ի թիվս այլնի՝ դրամը և այլ գույքը հանդիսանում են որպես հանցագործության առարկա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանի դատավճռում, ինչպես նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծումը կատարվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.06.2014 թվականի թիվ ՀՕ-114-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց 103.1-րդ հոդվածով, որի 1-ին մասը սահմանում է. «Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, նույն օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, **ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության»:**

Վկայակոչված քրեական և քրեադատավարական իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ մինչ օրենսդրական վերը նշված փոփոխությունը և դրանից հետո օրենսդրի կամքն ուղղված է առևտրային կաշառքի պարագայում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը (դրամ, այլ արժեքներ և առարկաներ) հօգուտ պետության բռնագանձելուն, բացառությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման

դեպքի: Մասնավորապես, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, **հօգուտ պետության ենթակա է բռնագանձման հանցավոր գործունեության արդյունքում** ուղղակի կամ անուղղակի **առաջացած կամ ստացված ցանկացած գույքը**, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները և այլն:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած անձն օրենքի ուժով զրկվում է իր գույքի (հանցագործության առարկա հանդիսացող) նկատմամբ սեփականության իրավունքից և հետագայում քաղաքացիաիրավական որևէ ինստիտուտի, այդ թվում նաև՝ անհիմն հարստացման ինստիտուտի միջոցով որևէ պահանջ ներկայացնել չի կարող:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրված քաղաքացիաիրավական և քրեաիրավական նորմերի բովանդակության շուրջ կատարված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն հարստացման (քաղաքացիաիրավական) և առևտրային կաշառքի (քրեաիրավական) ինստիտուտները տարբեր իրավական ինստիտուտներ են, որոնց առանձնահատկությունները դրսևորվում են նաև սուբյեկտների, օբյեկտների, նպատակների և ծագման հիմքերի հարցում: Մասնավորապես, եթե անհիմն հարստացման դեպքում տուժող է համարվում այն անձը, ում հաշվին ձեռք է բերվել կամ խնայվել գույք, ապա առևտրային կաշառքի պարագայում տուժողը պետությունն է, քանի որ առևտրային կաշառքն, առաջին հերթին, ուղղված է պետության և հասարակության շահերի դեմ: Եթե անհիմն հարստացման օբյեկտը տուժողի գույքային իրավունքներն են, ապա առևտրային կաշառքի օբյեկտ են հանդիսանում առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեությանն ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Ընդ որում, եթե անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույքի վերադարձման հիմնական և առաջնային նպատակը քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանությունն ապահովելն ու դրա իրականացմանը նպաստելն է, ապա որպես առևտրային կաշառք տրամադրված գույքի բռնագանձումը հօգուտ պետության, ինչպես ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հարկադրանք, նպատակ է հետապնդում վերականգնելու սոցիալական արդարությունը, կանխարգելելու հնարավոր հանցագործությունները:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ տարբեր են նաև այս երկու իրավական ինստիտուտների ծագման հիմքերը: Անհիմն հարստացման իրավահարաբերության ծագման հիմք կարող են լինել տարատեսակ իրավաբանական փաստեր, որոնց արդյունքում տեղի է ունենում մեկ անձի հարստացում մեկ այլ անձի հաշվին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով անհիմն հարստացման ինստիտուտին, փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ **հարստացումն անօրինական ձևով** *(տե՛ս, Անժելիկա Գասպարյանն ընդդեմ Զելիմ Սիմոնյանի թիվ ԵԱՔԴ/0455/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես առևտրային կաշառք տրամադրված գույքը հանդիսանում է հանցագործության առարկա, որը քա-

ղաքացիական իրավունքի տեսանկյունից չի կարող բնորոշվել որպես անհիմն հարստացում, առավել ևս այդ հիմքով այն չի կարող ենթակա լինել վերադարձման առևտրային կաշառքի գումարը տված անձին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.06.2013 թվականի թիվ ԵԷԴ/0055/01/12 օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել են մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ Արթուր Հովհաննիսյանն ապօրինի ջրօգտագործում իրականացնելու նպատակով առևտրային կաշառք է տվել Նորիկ Սողոմոնյանին և վերջինիս գիտությամբ խմելու ջրով ոռոգել է ծիրանի այգիները: Արթուր Հովհաննիսյանը նույն դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար: Էրեբունու քննչական բաժնի «Քրեական հետապնդում չհրականացնելու մասին» 14.03.2012 թվականի որոշման համաձայն՝ Նորիկ Սողոմոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առևտրային կաշառք ստանալու համար: Նույն որոշմամբ Նորիկ Սողոմոնյանի կողմից առևտրային կաշառք ստանալու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ համաներման ակտ ընդունվելու հիմքով:

Սույն գործով Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ պատասխանողը հայցվորից ստացել է գումար ոչ թե ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության, այլ հայցվորի օգտին առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի որոշակի գործողություններ կատարելու կամ չկատարելու դիմաց: Ըստ այդմ, Դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ սույն քաղաքացիական գործով պարզվել և հիմնավորվել է պատասխանողի կողմից անհիմն հարստացմամբ 7.000 ԱՄՆ դոլար գումարը ստանալու փաստը, ինչն էլ հիմք է հանդիսանում հայցը բավարարելու համար:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունը, գտել է, որ ստորադաս դատարանն արդարացիորեն չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածը, քանի որ կողմերի միջև գոյություն են ունեցել պարտավորական հարաբերություններ, մասնավորապես՝ Նորիկ Սողոմոնյանն Արթուր Հովհաննիսյանի օգտին կատարել է որոշակի գործողություն, որի դիմաց Արթուր Հովհաննիսյանից ստացել է որոշակի գումար: Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ Դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ սույն քաղաքացիական գործով առկա են անհիմն հարստացման վերաբերյալ իրավանորմի կիրառման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, մերժելով բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.06.2013 թվականի թիվ ԵԷԴ/0055/01/12 օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, որով Արթուր Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեորեն հետապնդելի արարքի կատարման համար: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը պատշաճորեն չի հետազոտել և գնահատել Էրեբունու քննչական բաժնի «Քրեական հետապնդում չհրականացնելու մասին» 14.03.2012 թվականի որոշումը, համաձայն որի՝ Նորիկ Սողոմոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առևտրային կաշառք ստանալու համար, որով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ համաներման ակտի ընդունման հիմքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Արթուր Հովհաննիսյանը գիտակցել է, որ իր կողմից դրամական միջոցների տրամադրումը Նորիկ Սողոմոնյանին կոնկրետ շահ է հետապնդում, իրենից առևտրային կաշառք է ներկայացնում, քանի որ դրանով համապատասխան անձը նպատակ է ունեցել վերջինիս գիտությամբ ապօրինաբար խմելու ջրով ոռոգելու ծիրանի այգիները, ուստի միանշանակ է, որ Արթուր Հովհան-

նիսյանի և Նորիկ Սողոմոնյանի միջև բացակայում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պարտավորական հարաբերությունները:

Միաժամանակ, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով սահմանված՝ անհիմն հարստացման չվերադարձման դեպքերին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ նորմով նախատեսված կարգավորման կիրառելիության հարցը ենթակա է քննության միայն անհիմն հարստացման փաստի առկայության հիմնավորվածության պայմաններում, մինչդեռ սույն գործով դրա բացակայության դեպքում արդեն իսկ միանշանակ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածը կիրառվել չի կարող:

Վերը նշված մեկնաբանությունների համատեքստում համադրելով և գնահատելով սույն քաղաքացիական գործի փաստերը, ինչպես նաև ամփոփելով վերոգրյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Նորիկ Սողոմոնյանին քրեաիրավական օրենսդրության պահանջների խախտման հետևանքով կատարված գործողության՝ առևտրային կաշառքի արդյունքում ապօրինաբար տրամադրված գույքը (տվյալ դեպքում՝ գումարը) չի կարող համարվել որպես անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերված գույք և, հետևաբար, այն չի կարող այդ հիմքով ենթակա լինել վերադարձման: Մինչդեռ ստորադաս դատարանները վերոնշյալի անտեսմամբ սխալ եզրահանգման են եկել հայցի՝ հիմնավոր լինելու վերաբերյալ, այն պարագայում, երբ վերը շարադրված պատճառաբանությունների և կատարված իրավական վերլուծությունների հիմքով ներկայացված հայցապահանջը ենթակա էր մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկայինկանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, **պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում,** պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արթուր Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.06.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար: Միաժամանակ, Արթուր Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Արթուր Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Նորիկ Սողոմոնյանի՝ անհիմն հարստացման գումարը և նախապես վճարված պետական տուրքի գումարը վերադարձնելու պահանջների մասին, մերժել:

2. Արթուր Հովհաննիսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.06.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0324/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0324/02/08**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդներ Անահիտ և Արմեն Բաղդասարյանների ներկայացուցիչ Արթուր Դավթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հայցի ընդդեմ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների՝ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգությունը տիրապետման փաստով ընդունած համարելու, սեփականության իրավունքով ժառանգական գույքի՝ տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջների մասին, և ըստ Ատոմ Բաղդասարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների և «Մալաթիա» նոտարական գրասենյակի՝ կտակը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Շենգավիթ» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կառլեն և Արմեն Բաղդասարյանները պահանջել են ճանաչել իրենց ժառանգությունն ընդունած ժառանգ, առանձնացնել տիրապետման փաստով ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգական գույք հանդիսացող՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տան և հողամասի 5/6 մասը, ինչպես նաև կողմերի մուտքային տարածքները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ատոմ Բաղդասարյանը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել Լուսիկ Բաղդասարյանի կողմից 22.10.1993 թվականին արված կտակը, իսկ Ատոմ և Սարուս Բաղդասարյանները պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց սեփականության իրավունքը Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող 300քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2008 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2008 թվականի որոշմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2009 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն, իսկ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների կողմից փաստացի զբաղեցրած հողամասի վրա գտնվող ինքնակամ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հայցապահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2009 թվականի որոշմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2009 թվականի վճիռը սկզբնական և հակընդդեմ հայցերի մասով բեկանվել է՝ բացառությամբ գործի վարույթը կարճելու մասից, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

12.11.2009 թվականին վարույթ է ընդունվել Ատոմ և Սարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցը՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեի անշարժ գույքի՝ հողի և շինությունների նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով իրենց սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տան օրինական մաս հանդիսացող ամբողջ երկրորդ հարկաբաժնի նկատմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանները փաստացի տիրապետման ուժով ճանաչվել են ժառանգությունն ընդունած ժառանգներ, և այդ մակերեսների նկատմամբ ճանաչվել է նրանց սեփականության իրավունքը: Միւտքային տարածությունն առանձնացնելու սկզբնական հայցապահանջը բավարարվել է: Հակընդդեմ հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ գործի վարույթը՝ կտակը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2010 թվականի որոշմամբ Կառլեն Բաղդասարյանի և Արմեն Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2009 թվականի վճիռը բեկանվել է մասնակիորեն՝ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների սկզբնական հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տան օրինական մաս հանդիսացող ամբողջ երկրորդ հարկաբաժնի նկատմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանները փաստացի տիրապետման ուժով ճանաչվել են ժառանգությունն ընդունած ժառանգներ, իսկ այդ մակերեսների նկատմամբ ճանաչվել է նրանց սեփականության իրավունքը, իսկ բնակելի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ճանաչվել է վերջիններիս համասեփականության իրավունքը: Հակընդդեմ հայցը բավարարվել է՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տան 1-ին հարկի օրինական շենք-շինությունների, ինչպես նաև բակային տարածք հանդիսացող հողատարածքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչվել է Ատոմ և Սարուս Բաղդասարյանների սեփականության իրավունքը, իսկ բնակելի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ճանաչվել է վերջիններիս համասեփականության իրավունքը: Վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2010 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 13.06.2012 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն, իսկ գործի վարույթը՝ կտակը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2012 թվականի որոշմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, որոշվել է՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 13.06.2012 թվականի վճիռը մասնակիորեն՝ բացառությամբ գործի վարույթը կարճելու մասի, բեկանել, և գործն այդ մասով ուղարկել նոր քննության: Վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.11.2012 թվականի որոշմամբ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ն. Կարապետյան) (այսուհետ՝ Դատարան) 07.03.2013 թվականին վճռել է. «Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հայցն ընդդեմ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների՝ ժառանգությունն ընդունած համարելու, տիրապետման փաստով ըստ օրենքի և ըստ կտակի սեփականության իրավունքով ժառանգական գույքի տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջի մասին, բավարարել մասնակի: Կառլեն Բաղդասարյանին համարել տիրապետման փաստով Լուսիկ Բաղդասարյանի ժառանգությունն ընդունած ժառանգ: Կառլեն Բաղդասարյանի հայցն ընդդեմ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների՝ սեփականության իրավունքով ժառանգական գույքի տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջի մասով, բավարարել: Կառլեն Բաղդասարյանին՝ որպես ըստ օրենքի ժառանգ, հատկացնել Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեի օրինական շինություն հանդիսացող բնակելի տան 2-րդ հարկաբաժինն ամբողջությամբ, ինչպես նաև ճանաչել նրա ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը բնակելի երկհարկանի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ: Ատոմ և Սարուս Բաղդասարյաններին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեի տան առաջին հարկի՝ տան ճակատային մասի ձախ կողմի առաջին պատուհանը դռան վերածելու արդյունքում երկու մետր հիսուն սանտիմետր չափով մուտքային տարածք առանձնացնել նույն ուղղությամբ՝ սկսած ըստ հատակագծի 1-1, 1-4, 1-5, 0-1, 0-2 սեյակներից և տարածքից մինչև հողամասի վերջը՝ դեպի երկրորդ հարկ մուտք գործելու համար: Դեպի երկրորդ հարկ տանող՝ գոյություն ունեցող աստիճանավանդակը քանդել, իսկ մուտքը փակել: Ատոմ և Սարուս Բաղդասարյաններին որպես մուտքային տարածք թողնել ներկայումս գործող մուտքը: Նշված աշխատանքների կատարման ծախսերը դնել կողմերի վրա հավասարապես: Արմեն Բաղդասարյանի հայցն ընդդեմ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների՝ փաստացի տիրապետման փաստով ըստ կտակի ժառանգ ճանաչելու պահանջի մասով և սեփականության իրավունքով ժառանգական գույքի տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջի մասով, մերժել: Սարուս և Ատոմ Բաղդասարյանների հակընդդեմ հայցն ընդդեմ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Շենգավիթ» տարածքային ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի: Հակընդդեմ հայցը՝ ինքնակամ շինությունների նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով՝ կարճել: Ճանաչել Սարուս և Ատոմ Բաղդասար-

յանների սեփականության իրավունքը Երևան Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տան առաջին հարկում գտնվող օրինական շինությունների նկատմամբ: Բնակելի երկհարկանի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ճանաչել Մարուս և Ատոմ Բաղդասարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը: Չեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Ատոմ Բաղդասարյանի սեփականության իրավունքը Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեի մնացած հողամասի նկատմամբ»:

Արմեն և Կառլեն Բաղդասարյանները 05.04.2013 թվականին նշված վճռի դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք, որը 17.04.2013 թվականին ընդունվել է վարույթ:

Բողոքի քննության ընթացքում՝ 03.09.2013 թվականին, հայցվոր և հակընդդեմ հայցով պատասխանող Կառլեն Բաղդասարյանը մահացել է: Բողոք բերողների ներկայացուցիչ Արթուր Դավթյանի 10.09.2013 թվականին ներկայացրած դիմումի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.09.2013 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է:

Արմեն Բաղդասարյանը 04.03.2014 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան և, պատճառաբանելով, որ կասեցման հիմքերը վերացել են ու դիմումին կցելով ժառանգությունն ընդունելու համար նոտարական մարմին՝ իր և Անահիտ Բաղդասարյանի կողմից ներկայացված հայտարարությունը, խնդրել է վերսկսել քաղաքացիական գործի վարույթը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2014 թվականի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2014 թվականի որոշմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է. «Կառլեն Բաղդասարյանի (իրավահաջորդների) հայցը՝ տիրապետման փաստով Թորոս Բաղդասարյանի ժառանգության նկատմամբ 1/6 մասով ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջը բավարարելու մասով թողնել օրինական ուժի մեջ: Ատոմ և Մարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցը՝ իրենց կողմից զբաղեցրած Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տան առաջին հարկի շինությունների և դրանցով ծանրաբեռնված և բակային տարածքների նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու մասերով, թողնել օրինական ուժի մեջ: Վերաքննիչ բողոքը մնացած մասերով բավարարել, հայցով և հակընդդեմ հայցով բավարարված մասերով հայցապահանջները բեկանել, փոփոխել և մերժել»:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Բաղդասարյանի և Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդներ Անահիտ և Արմեն Բաղդասարյանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ատոմ և Մարուս Բաղդասարյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ և 1226-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով 01.07.2011 թվականի որոշման մեջ արված եզրահանգումները և դրանում վկայակոչված իրավանորմերը, քանի որ ճիշտ հետևությունների հանգելու համար պետք է առանցքային ուշադրություն դարձներ այն վերապահմանը, որը պարունակվում է նշված որոշման «եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է» արտահայտության մեջ: Ընդ որում, Դատարանն իր վճռում եզրահանգել է, որ հոր՝ Կառլեն Բաղդասարյանի կենդանության պայմաննե-

րում Արմեն Բաղդասարյանը Լուսիկ Բաղդասարյանի ըստ օրենքի ժառանգ համարվել չի կարող: Հետևաբար, եթե իր հոր կենդանության պայմաններում Արմեն Բաղդասարյանը չի կարող համարվել Լուսիկ Բաղդասարյանի ըստ օրենքի ժառանգ, ապա հետևում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշման մեջ պարունակվող՝ «եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է» արտահայտությունը վերջինիս չի վերաբերում, ինչը նշանակում է, որ ժառանգությունն ընդունելու համար նա պարտավոր չէր դիմել նոտարական գրասենյակ ու կարող էր ընդունել ժառանգությունը՝ նաև փաստացի տիրապետելով այն, ինչը և տեղի է ունեցել:

Վերը նշված նախադեպային որոշմանը ստորադաս դատարանների կողմից տրված մեկնաբանությունից հետևում է, որ կտակով ժառանգված գույքը ժառանգը կարող է ընդունել միայն վեցամսյա ժամկետում նոտարական գրասենյակ դիմում հանձնելու եղանակով, ինչն օրենքի սխալ ընկալման և մեկնաբանման արդյունք է:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ատոմ և Սարուս Բաղդասարյանները, հանդիսանալով Շահեն Բաղդասարյանի իրավահաջորդներ, չէին կարող հավակնել սեփականության իրավունքի ճանաչմանը ձեռքբերման վաղեմության հիմքով, քանի որ այն գույքը, որի նկատմամբ նրանք պահանջ են ներկայացրել, հանդիսացել է ժառանգական զանգված, ինչի նկատմամբ նրանք կարող էին հավակնություններ ունենալ միայն որպես Շահեն Բաղդասարյանի ժառանգներ: Ակնհայտ է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով իրավունքի ճանաչումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ անձը հավակնում է այլ՝ ոչ իր ժառանգատու կան իրավանախորդ հանդիսացող անձին պատկանող սեփականությանը և անթույլատրելի է այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է ժառանգական զանգվածին: Ըստ այդմ, Ատոմ և Սարուս Բաղդասարյանները կարող էին հավակնել վիճելի հասցեի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերմանը միայն որպես Շահեն Բաղդասարյանի ժառանգությունը փաստացի տիրապետող ժառանգներ, սակայն նրանք նման պահանջ չեն ունեցել, իսկ նրանց սեփականության իրավունքի ճանաչումը ձեռքբերման վաղեմության հիմքով բացառվում է, առաջին հերթին՝ գույքն իրենց ժառանգական զանգված լինելու, այնուհետև՝ այն Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ օգտագործվելու պատճառով և հատկապես բակային տարածքը՝ համատեղ օգտագործվող հողամաս լինելու հաստատված հանգամանքի առկայության պայմաններում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Դատարանը, մի կողմից՝ փաստացի տիրապետման փաստի հիմքով Կառլեն Բաղդասարյանին ճանաչել է ժառանգությունն ընդունած ժառանգ և, մյուս կողմից՝ նույն հասցեի անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել է Սարուս և Ատոմ Բաղդասարյանների սեփականության իրավունքը: Նման մոտեցումը հակասության մեջ է մտնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի տրամաբանության հետ, քանի որ երկու դեպքում էլ որպես նախապայման է հանդիսանում տիրապետումը, ընդ որում, երկրորդ հիմքի դեպքում անհրաժեշտ է տասը տարվա և ավելի անընդմեջ տիրապետման, ինչպես նաև սեփականատիրոջ կողմից գույքը լքված լինելու փաստերի առկայությունը, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ վիճելի հասցեի անշարժ գույքն ի սկզբանե եղել է Թորոս և Լուսիկ Բաղդասարյանների համատեղ սեփականությունը, և վերջիններիս մահից հետո նրանց բաժնեմասերը հավասարապես պետք է բաժանվեին նրանց ժառանգների միջև:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ դեռևս որոշված չէ, թե կողմերից յուրաքանչյուրի բաժինը որքան է կազմում և անհասկանալի է, թե որ մասը և ինչ եղանակով պետք է առանձնացվի, հայցը՝ բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասով, անհիմն մերժել է, մինչդեռ պարտավոր էր վճիռն այդ մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2014 թվականի որոշումը և այն փոփոխել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքի այն պատճառաբանությունները, թե Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի որոշ հոդվածների իրավադրույթները, հիմնավոր չեն, քանի որ Վերաքննիչ դատարանն իր որոշումը կայացրել է սույն քաղաքացիական գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա, ինչի արդյունքում Կառլեն Բաղդասարյանի հայցը՝ ժառանգության 1/6 բաժնեմասի մասով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասով, հանգել է ճիշտ եզրակացության: Միևնույն ժամանակ անընդունելի են Վերաքննիչ դատարանի որոշման այն պատճառաբանությունները, որոնք վերաբերում են մուտքի առանձնացմանը և ձեռքբերման վաղեմության ուժով հակընդդեմ հայցով հայցվորների սեփականության իրավունքի ճանաչմանը, քանի որ մուտքի առանձնացման հարցը կողմերը չեն վիճարկել, համաձայն են եղել որոշված տարբերակին, առավել ևս, այն դեպքում, եթե մուտքը բացվում է այն տարածքից, որի հողատարածքը կողմերին պատկանում է համատեղ սեփականության իրավունքով: Հետևաբար Դատարանի վճիռն ամբողջությամբ բխում է սույն քաղաքացիական գործի փաստերից և օրենսդրական համապատասխան նորմերի պահանջներից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 28.11.1961 թվականի տեղեկանքի համաձայն՝ Թորոս Բաղդասարյանին կոլխոզի ժապավենային թիվ 38 մատյանով տրվել է 800քմ մակերեսով տնամերձ հողամաս Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում **(հատոր 1-ին, գ.թ. 45):**

2. Բնակելի տան կառուցման անկետայի համաձայն՝ Թորոս Բաղդասարյանի բնակելի տան կառուցումը սկսվել է 1950 թվականից և ենթակա է եղել շահագործման 1955 թվականից **(հատոր 1-ին, գ.թ. 13):**

3. Շահումյանի շրջանի 18-րդ կուսակցական համագումարի անվան կոլտնտեսության 21.04.1969 թվականի թիվ 3 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Թորոս Բաղդասարյանին հատկացված 800քմ մակերեսով հողամասից 300քմ մակերեսը հատկացվել է նրա որդուն՝ Շահեն Բաղդասարյանին՝ բնակելի տուն կառուցելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 17):**

4. 1970 թվականին տրված գույքային թերթի համաձայն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տունը՝ 800քմ մակերես հողային տարածությամբ, գույքագրվել է Թորոս Բաղդասարյանի անվամբ **(հատոր 1-ին, գ.թ. 46):**

5. ՀՀ ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի 04.06.2007 թվականի թիվ 01-20/951 արխիվային տեղեկանքի համաձայն՝ «պետական արխիվում պահպանվող ՀԽՍՀ Երևանի Շահումյանի շրջանի Շահումյանի ավանի 18-րդ պարտհամագումարի անվան կոլտնտեսության 1973 թվականի հողային ժապավենային մատյանից պարզվում է, որ Թորոս Երեմի Բաղդասարյանի անվամբ հաշվառված է 0,05հա մակերեսով հողամաս» **(հատոր 1-ին, գ.թ. 31):**

6. 23.09.1965 թվականին տրված թիվ 197307 ամուսնության վկայականի համա-

ձայն՝ Թորոս Բաղդասարյանի և Լուսիկ Բաղդասարյանի ամուսնությունը գրանցվել է 23.09.1965 թվականին Շահումյանի շրջանի ԶԱԳՍ-ի բյուրոյում **(հատոր 1-ին, գ.թ. 41):**

7. Սույն գործով չի վիճարկվել այն հանգամանքը, որ Թորոս Բաղդասարյանը Կառլեն և Շահեն Բաղդասարյանների հայրն է:

8. Թիվ 434953 մահվան վկայականի համաձայն՝ Թորոս Բաղդասարյանը մահացել է 07.11.1992 թվականին, իսկ թիվ 464583 մահվան վկայականի համաձայն՝ Լուսիկ Բաղդասարյանը՝ 29.01.1994 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 24):**

9. Լուսիկ Բաղդասարյանը 22.10.1993 թվականին արված կտակով Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տունն ամբողջությամբ կտակել է Արմեն Կառլենի Բաղդասարյանին **(հատոր 1-ին, գ.թ. 25):**

10. Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2007 թվականի թիվ 2-1033 օրինական ուժի մեջ մտած վճռով Մարուս Բաղդասարյանը Շահեն Բաղդասարյանի մահից հետո ճանաչվել է նրա ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունած ժառանգ **(հատոր 2-րդ, գ.թ. 7-8):**

11. 18.03.2008 թվականին ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից տրված թիվ 08-0008 եզրակացության համաձայն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող հողի ընդհանուր մակերեսը կազմում է 560քմ, որից օրինական հատկացված հողամասի սահմաններում գտնվող տարածքի մակերեսը 551քմ է, իսկ ինքնակամ զբաղեցված հողամասի մակերեսը՝ 9քմ: Կառլեն և Արմեն Բաղդասարյանների կողմից օգտագործվող շինությունների մակերեսը կազմում է 122,2քմ, այդ թվում՝ օրինական շինություններ՝ 77,1քմ, անօրինական շինություններ՝ 45,1քմ: Վերջիններիս կողմից օգտագործվող շինություններն ամբողջությամբ գտնվում են 2-րդ հարկում: Մարուս Բաղդասարյանի կողմից փաստացի օգտագործվում է 1-ին հարկաբաժնից 132,6քմ, այդ թվում՝ օրինական շինություններ՝ 74,8քմ, անօրինական շինություններ՝ 57,8քմ: Ատոմ Բաղդասարյանի կողմից փաստացի օգտագործվող շինություններն իրենցից ամբողջությամբ ներկայացնում են անօրինական շինություններ, որոնց ներքին օգտագործելի ընդհանուր մակերեսը կազմում է 488,7քմ, այդ թվում՝ 86,2քմ մակերեսը 1-ին հարկում, 81,2քմ մակերեսը՝ 2-րդ հարկում: Վերջինիս հետազոտվող տարածքում առկա 1-ին հարկում գտնվող 12,3քմ խորդանոցը և 52,4քմ մակերեսով ավտոտնակն օգտագործվում է Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ: Միայն Ատոմ Բաղդասարյանի կողմից օգտագործվող հողի մակերեսը կազմում է 154,7քմ, որից 54,8քմ գտնվում է հողամասի վերջնամասում, այդ թվում՝ 23,2քմ զբաղեցված է անօրինական շինություններով, 31,6քմ շինություններից ազատ հողամաս է, իսկ 99,9քմ իրենից ներկայացնում է հողամասի փողոցի նկատմամբ աջ գտնվող, շինություններով զբաղեցված հողամաս: Բացի վերոգրյալից, վերջինիս կողմից Մարուս, Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ օգտագործվում է նաև 203,6քմ հողամաս, որից 131,4քմ-ը շինություններից ազատ հողամաս է, 12,3քմ-ը՝ խորդանոցով զբաղեցված հողամաս, իսկ 59,9քմ-ը՝ ավտոտնակով զբաղեցված հողամաս **(հատոր 1-ին, գ.թ. 114-116):**

12. Թիվ 131699 մահվան վկայականի համաձայն՝ Կառլեն Թորոսի Բաղդասարյանը մահացել է 03.09.2013 թվականին **(հատոր 12-րդ, գ.թ. 85):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառման հնարավորության հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ, 197-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

- *արդյոք ըստ կտակի ժառանգությունը կարող է ընդունվել փաստացի տիրապետման եղանակով.*
- *արդյոք ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով կարող է ճանաչվել ժառանգի սեփականության իրավունքը:*

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև նույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

Հիմք ընդունելով վերը ներկայացված իրավադրույթները և ելնելով ժառանգական իրավահարաբերությունների բնույթից՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արձանագրել է, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն՝ թե՛ ըստ օրենքի, և թե՛ ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը:

Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որոնք պետք է ուղղված լինեն հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միտված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով:

Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի *(տե՛ս, Գևորգ Բերբերյանն ընդդեմ Մարինե Բերբերյանի թիվ*

ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լուսիկ Բաղդասարյանը 22.10.1993 թվականին արված կտակով Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տունն ամբողջությամբ կտակել է Արմեն Կառլենի Բաղդասարյանին:

Դատարանը, 07.03.2013 թվականի վճռով անդրադառնալով Արմեն Բաղդասարյանի հայցապահանջին, գտել է, որ վերջինիս կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ նա նոտարին դիմում է ներկայացրել Լուսիկ Բաղդասարյանի՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, հետևաբար, նա չի կարող համարվել ըստ կտակի ժառանգ, իսկ հոր՝ Կառլեն Բաղդասարյանի կենդանության պայմաններում չի կարող համարվել նաև Լուսիկ Բաղդասարյանի ըստ օրենքի ժառանգը:

Վերաքննիչ դատարանը ևս Արմեն Բաղդասարյանի հայցի մասով գտել է, որ վերջինս, բաց թողնելով ըստ կտակի ժառանգությունն ընդունելու օրենքով սահմանված ժամկետը, այլևս չի կարող համարվել Լուսիկ Բաղդասարյանի ըստ կտակի ժառանգը: Ինչ վերաբերում է Արմեն Բաղդասարյանին փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջին, ապա առաջին հերթի ժառանգ Կառլեն Բաղդասարյանի կենդանության պայմաններում այդ պահանջը ևս առարկայազուրկ է:

Վերը շարադրված իրավական դիրքորոշման համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ըստ կտակի ժառանգության ընդունմանն ուղղված ակտիվ և գիտակցված գործողություն պետք է դիտարկել միայն օրենքով սահմանված ժամկետում նոտարական գրասենյակ դիմելու փաստը, մինչդեռ սույն գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ կտակի գոյության մասին տեղեկացված Արմեն Բաղդասարյանն **ըստ կտակի** ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետում ձեռնարկել է գիտակցված և ակտիվ գործողություններ, այն է՝ դիմել է նոտարական գրասենյակ կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հիմքով և ընթացակարգով օգտվել է ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքից, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծագել են ըստ օրենքի ժառանգման իրավահարաբերությունները: Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստացի տիրապետման եղանակը հնարավոր չէ կիրառել ըստ կտակի ժառանգման իրավահարաբերությունների նկատմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի առաջին հիմքում բարձրացված հարցադրման կապակցությամբ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավոր են և իրավաչափ, հետևաբար բողոքը՝ նշված հիմքով, անհիմն է:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը» վերտառությամբ 172-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան, անցնում է այլ անձանց:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքը ծագում է ոչ

թե ինքնըստինքյան, այլ սեփականության իրավունքի առաջացման հիմքեր հանդիսացող իրավաբանական փաստերի ուժով: Վկայակոչված հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի շարքում որպես այդպիսի ինքնուրույն հիմքեր, ի թիվս այլնի, նախատեսել է նաև ժառանգման և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու դեպքերը:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում այդ երկու ինստիտուտների միջև անցկացնել իրավահամեմատական վերլուծություն և մասնավորապես նշել հետևյալը.

– ժառանգական իրավահարաբերությունների դեպքում անձը, լինելով կամ ըստ օրենքի, կամ ըստ կտակի ժառանգ, սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորություն է ունենում միայն համապատասխան անձի (ժառանգատուի) մահվանից հետո՝ օրենքով սահմանված կարգով, դեպքերում և ժամկետներում ժառանգությունն ընդունելու պարագայում,

– ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտն իրենից ներկայացնում է սեփականության իրավունքի ձեռքբերման այնպիսի եղանակ, երբ անձն օրենքով նախատեսված համապատասխան նախապայմանները և ընթացակարգերը պահպանած լինելու դեպքում հնարավորություն է ստանում սեփականատիրոջ հավակնություններ ունենալու համապատասխան գույքի նկատմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ ժառանգման և ձեռքբերման վաղեմության իրավական ինստիտուտներն էականորեն տարբերվում են միմյանցից՝ իրենցից յուրաքանչյուրին բնորոշ մի շարք այլ առանձնահատկություններով:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադառնալով ձեռքբերման վաղեմության ինստիտուտի հետ կապված իրավակարգավորումների կիրառման հարցերին՝ արձանագրել է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման,** իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների **միաժամանակյա** առկայությունը: Մասնավորապես, դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. տիրապետումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը

գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով *(տե՛ս, օրինակ, Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններն ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյանների և Քնարիկ Աղազարյանի թիվ 3-1435/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Թորոս Բաղդասարյանին Շահումյանի շրջանի 18-րդ կուսակցական համագումարի անվան կոլտնտեսությունից բնակելի տուն կառուցելու համար հատկացվել է 800քմ մակերեսով հողատարածք, տան կառուցումը սկսվել է 1950 թվականից և այն 1955 թվականից արդեն իսկ ենթակա է եղել շահագործման: Թորոս Բաղդասարյանը և Լուսիկ Բաղդասարյանը հանդիսացել են ամուսիններ: Թորոս Բաղդասարյանը մահացել է 07.11.1992 թվականին, իսկ Լուսիկ Բաղդասարյանը՝ 29.01.1994 թվականին (Կառլեն Բաղդասարյանը մահացել է 03.09.2013 թվականին): Շահեն Թորոսի Բաղդասարյանը և Կառլեն Թորոսի Բաղդասարյանը հանդիսացել են Թորոս և Լուսիկ Բաղդասարյանների առաջին հերթի ժառանգները: Թորոս Բաղդասարյանի մահից հետո վերջինիս պատկանող բաժնեմասը փաստացի տիրապետվել է նրա առաջին հերթի ժառանգների՝ Լուսիկ, Կառլեն և Շահեն Բաղդասարյանների կողմից: Լուսիկ Բաղդասարյանի մահից հետո նրան պատկանող բաժնեմասը՝ 4/6 մասը, փաստացի տիրապետվել է վերջինիս առաջին հերթի ժառանգներ Կառլեն և Շահեն Բաղդասարյանների կողմից: Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2007 թվականի թիվ 2-1033 օրինական ուժի մեջ մտած վճռով Մարուս Բաղդասարյանը Շահեն Բաղդասարյանի մահից հետո ճանաչվել է նրա ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունած ժառանգ:

Դատարանը, իր 07.03.2013 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը մասնակիորեն բավարարելով, պատճառաբանել է, որ «Թորոս Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և բնակելի տունը հանդիսացել է համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք, ուստի դրա 1/2 մասը պատկանել է Լուսիկ Բաղդասարյանին: Թորոս Բաղդասարյանի ըստ օրենքի ժառանգներ են հանդիսացել նրա առաջին հերթի ժառանգները՝ կինը՝ Լուսիկ Բաղդասարյանը, որդիները՝ Կառլեն և Շահեն Բաղդասարյանները՝ յուրաքանչյուրը հավասար բաժիններով: Այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրը ժառանգել, փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգական գույքի 1/3 մասը, որի արդյունքում ընդհանուր սեփականության իրավունքով Թորոս Բաղդասարյանին և Լուսիկ Բաղդասարյանին պատկանող գույքի 1/6-ի սեփականատեր է հանդիսացել Շահեն Բաղդասարյանը, 1/6-ի սեփականատեր՝ Կառլեն Բաղդասարյանը և 2/3-ի սեփականատեր՝ Լուսիկ Բաղդասարյանը: Լուսիկ Բաղդասարյանի մահից հետո, հիմք ընդունելով վերը նշված դատողությունները, կատարվել է բացառապես ըստ օրենքի ժառանգության բացում: Նման պայմաններում Դատարանը հաստատված է համարել, որ առնվազն բնակելի տունը փաստացի տիրապետելու արդյունքում ըստ օրենքի ժառանգներ՝ փաստացի տիրապետման ուժով ընդունած լինելու հիմքով, հանդիսացել են Շահեն և Կառլեն Բաղդասարյանները: Արդյունքում Դատարանը գտել է, որ Կառլեն Բաղդասարյանին հասանելիք գույքը կազմում է Թորոս Բաղդասարյանին և Լուսիկ Բաղդասարյանին պատկանած գույքի 1/2 մասը»: Դատարանը պատճառաբանել է նաև, որ «տարիներ շարունակ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տան առաջին հարկը որպես սեփականը օգտագործելով՝ Մարուս և Ատոմ Բաղդասարյանների տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողներին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նրանք այդ գույքը ձեռք են բերել և տիրապետելու են որպես սեփականություն, քանի որ ի սկզբանե տան առաջին հարկը հատկացվել է Ատոմ Բաղդասարյանի հորը, որն առաջին հարկը տիրապետել է որպես սեփական: Գույքն անձի փաստացի տիրապետմանն անցել է առանց որևէ բռնության գործադրման»: Միևնույն ժամանակ Դատարանը, հիմք ընդունելով սույն գործով վկաների ցուցմունքները, ապացուցված է համարել այն հանգամանքը, որ Ատոմ Բաղդասարյանի կողմից է օգտագործվել վիճելի հողամասը և նրա մոտ ծագել է սեփականության իրավունք վիճելի հողամասի նկատմամբ՝ ձեռքբերման վաղեմության ուժով, հետևաբար գտել է, որ հողա-

մասի նկատմամբ ենթակա է ճանաչման թե՛ Կառլեն Բաղդասարյանի, թե՛ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների համատեղ սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, հակընդդեմ հայցի՝ նշված մասով անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, պատճառաբանել է, որ Դատարանը ձեռքբերման վաղեմության հիմքով ճանաչել է Ատոմ Բաղդասարյանի սեփականության իրավունքը Երևանի Շահումյան փողոցի թիվ 63 հասցեի մնացած (վճռի թե՛ եզրափակիչ, թե՛ պատճառաբանական մասում նշված չէ, թե «մնացած» ասելով Դատարանը կոնկրետ ինչ նկատի ունի և որքան է կազմում այդ հողամասը) հողամասի նկատմամբ (հիմք 08-008 փորձագիտական եզրակացության 1-ին հավելված): Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ Դատարանը նման եզրահանգում անելիս չի համադրել սույն քաղաքացիական գործի փաստերը, դրանք չի ենթարկել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության, ինչի արդյունքում ձևավորված ներքին համոզմունքը չի բխել տվյալ գործի փաստերից:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ժառանգման իրավահարաբերություններին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված էլ ձեռքբերման վաղեմության ինստիտուտն այդ հարաբերությունների առկայության պայմաններում կարող է ստանալ որոշ չափով այլ կիրառություն և նոր մեկնաբանություն: Մասնավորապես՝ նման հարաբերությունների յուրօրինակությունը կայանում է նրանում, որ տվյալ պարագայում հնարավոր չէ որևէ անդրադարձ կատարել կոնկրետ անշարժ գույքի նախկին սեփականատիրոջ անձին, գնահատել նրա գործողությունները կամ անգործությունը, վերջինիս կողմից գույքից հրաժարման փաստի առկայությունը կամ բացակայությունը՝ հաշվի առնելով տվյալ անձի մահվան և նրա ունեցած անշարժ գույքի կապակցությամբ ժառանգական հարաբերությունների ծագման իրավաբանական փաստերը: Հետևաբար, նման պարագայում հետագայում համապատասխան անշարժ գույքը ձեռքբերող անձի բարեխղճության հարցը ևս չի կարող քննության առարկա դառնալ, հատկապես նկատի ունենալով այն իրողությունը, որ միևնույն սուբյեկտի կողմից նույն անշարժ գույքի նկատմամբ տիրապետման եղանակով ժառանգական զանգվածի ընդունման փաստ առկա լինելու պարագայում այդ զանգվածի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառումը փաստացիորեն անհնար է:

Այսպիսով, իր կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, կատարված վերլուծություններն ու տրված մեկնաբանությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, Ատոմ և Մարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցը՝ իրենց կողմից զբաղեցված Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տան առաջին հարկի շինությունների ու դրանցով ծանրաբեռնված և բակային տարածքների նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջը բավարարելիս, անտեսել են այն հանգամանքը, որ վերջիններս, հանդիսանալով Թորոս և Լուսիկ Բաղդասարյանների իրավահաջորդ Շահեն Բաղդասարյանի իրավահաջորդները, չէին կարող հավակնել վեճի առարկա գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչմանը, քանի որ այն գույքը, որի նկատմամբ վերջիններիս կողմից ներկայացվել է պահանջ, հանդիսանում է ժառանգական զանգված: Ընդ որում, Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2007 թվականի թիվ 2-1033 օրինական ուժի մեջ մտած վճռով Մարուս Բաղդասարյանը Շահեն Բաղդասարյանի մահից հետո ճանաչվել է նրա ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունած ժառանգ:

Նման պայմաններում, հաշվի առնելով նաև վերը շարադրված իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով ժառանգի սեփականության իրավունքի ճանաչման հնարավորությունը ժառանգատու անձին պատկանած և տվյալ պահին արդեն ժառանգական զանգված հանդիսացող գույքի նկատմամբ բացառվում է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ՀՀ վճռա-

բեկ դատարանն իր 04.03.2011 թվականին կայացրած որոշմամբ արդեն իսկ հստակորեն արտահայտել է իր դիրքորոշումն առ այն, որ վիճելի հասցեում առկա շինություններով չծանրաբեռնված հողամասը, ըստ գործում առկա ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի թիվ 08-0008 փորձագիտական եզրակացության, կազմում է ընդամենը 131,4քմ, որն ընդհանուր տարածք է, որպիսի պայմաններում Ատոմ և Սարուս Բաղդասարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի տիրապետման բարելաղձությունը Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեի շինությունների և դրանցով ծանրաբեռնված և բակային տարածքների նկատմամբ բացակայում է:

Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը սույն գործով իր նախկին որոշմամբ արդեն իսկ արձանագրել է այն փաստը, որ հիշյալ տարածքների նկատմամբ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների տիրապետման բարեխղճությունը բացակայում է, ինչը գործի նոր քննության շրջանակներում անտեսվել է, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի սույն հիմքը հիմնավոր է և Սարուս, Ատոմ Բաղդասարյանների հակընդդեմ հայցը ենթակա էր մերժման:

3) վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության կողմերից մեկի դուրս գալու դեպքում դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով՝ այդ մասին նշելով որոշման մեջ: Իրավահաջորդություն հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են դատավարության ընթացքում մինչև իրավահաջորդի՝ գործի մեջ մտնելը, նրա համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեն այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

Վերը նշված հոդվածի իրավական բովանդակության վերլուծությունից ակնհայտորեն հետևում է, որ դատավարության ցանկացած փուլում կողմի փոխարինումը նրա իրավահաջորդով վերջինիս համար առաջացնում է այն բոլոր իրավունքները, որոնցով օժտված կլիներ իր իրավանախորդը և այն բոլոր պարտականությունները, որոնք վերապահված կլինեին իր իրավանախորդին: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավանախորդի կողմից կատարված դատավարական բոլոր գործողությունները պարտադիր են դառնում նաև վերջինիս իրավահաջորդի համար:

Սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում Կառլեն Բաղդասարյանը մահացել է և դատավարական իրավահաջորդության արդյունքում վերջինիս փոխարինել են նրա իրավահաջորդները:

Սույն գործով Դատարանն իր՝ 07.03.2013 թվականի վճռով անդրադառնալով ժառանգական գույքի՝ տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն պահանջն ընդունվում է սկզբնական հայցով պատասխանողի կողմից, ինչպես նաև այն, որ տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջը միատեսակ է լուծվել առաջին ատյանի կողմից գործի նախորդ քննությունների ժամանակ, հիմք ընդունելով այն, որ վերադաս դատարանները երբևէ դատական ակտի բեկանման իրենց որոշումներում նման բաժանումը չեն գնահատել որպես սխալ, գտել է, որ գույքի բաժանումը պետք է կատարել՝ հիմք ընդունելով սույն գործում առկա փորձագետի եզրակացությունը:

Վերաքննիչ դատարանն իր 11.07.2014 թվականի որոշումը կայացնելիս մասնավորապես պատճառաբանել է, որ Դատարանը՝ Կառլեն Բաղդասարյանի հայցը բավարարելու և նրա կողմից Լուսիկ Բաղդասարյանի ժառանգությունն ընդունած ժառանգ (առանց նշելու բաժնեմասի չափը) ճանաչելու մասով հայցը բավարարելիս, ճիշտ գնահատելով գործի փաստերը և ճիշտ կիրառելով նյութաիրավական նորմերի պահանջները՝ հանգել է այնպիսի եզրակացության, ըստ որի՝ վիճելի հասցեի գույքը հավասար մասերով՝ 1/2-ական չափով, պատկանել է Լուսիկ և Թորոս Բաղդասարյաններին, իսկ վերջինիս մահից հետո նրան պատկանող բաժնի նկատմամբ հավասար չափերով (այսինքն՝ յուրաքանչյուրին 1/3 մասով) ժառանգներ են հանդիսացել փաստացի տիրապետող ժառանգներ

կինը՝ Լուսիկ Բաղդասարյանը, և որդիները՝ Կառլեն և Շահեն Բաղդասարյանները:Արդյունքում՝ ընդհանուր գույքում Լուսիկ Բաղդասարյանի բաժինը կազմել է (1/2+1/6) 4/6, իսկ Շահեն և Կառլեն Բաղդասարյաններինը՝ 1/6-ական: Հետևաբար Դատարանը թեև կատարել է ճիշտ հետևություններ, սակայն վճռի եզրափակիչ մասում այդ մասին հստակ եզրահանգում չի կատարել:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ բաժինները և մուտքային տարածություններն առանձնացնելու վերաբերյալ պահանջը բավարարելու կապակցությամբ Դատարանի կողմից արված հետևությունները չեն բխում սույն քաղաքացիական գործի փաստական հանգամանքներից և կողմերի ներկայացրած պահանջների էությունից, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավակարգավորումներից: Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ սույն գործով կողմերի միջև բաժիններն իրենց համաձայնությամբ որևէ կերպ որոշված չեն: Տվյալ պարագայում ժառանգներից ոչ ոք նոտարական կամ դատական կարգով ժառանգությունը չի ձևակերպել, նրանց բաժինները որոշված չեն: Բաժինների չափը վերջնականապես որոշված չէ, մասնավորապես, այն պատճառով, որ այդ մասին նշում չկա Սարուս Բաղդասարյանի վերաբերյալ կայացված դատական ակտում, ինչպես նաև այն պատճառով, որ Կառլեն Բաղդասարյանի մահից հետո (գործի քննության ընթացքում մահացած) այդ բաժինները կարող են տարբեր լինել նրա իրավահաջորդների կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու կամ չներկայացնելու, ժառանգական իրենց բաժնի ընդունումից հրաժարվելու և այլ դեպքերում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ վիճելի անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանել է Լուսիկ և Թորոս Բաղդասարյաններին և վերջինիս մահից հետո, նրա ժառանգական գույքի նկատմամբ հավասար բաժիններով փաստացի տիրապետմամբ ժառանգներ են հանդիսացել Լուսիկ, Կառլեն Բաղդասարյանները և Շահեն Բաղդասարյանը (վերջինիս մահից հետո՝ Սարուս և Ատոմ Բաղդասարյանները): Այսինքն՝ ձևավորվել են հետևյալ բաժնեմասերը՝ Լուսիկ Բաղդասարյան՝ 4/6, Կառլեն Բաղդասարյան՝ 1/6, Շահեն Բաղդասարյան՝ 1/6: Հետևաբար փաստացի տիրապետման հիմքով ըստ կտակի ժառանգության ընդունումը բացառելու արդյունքում Լուսիկ Բաղդասարյանի մահից հետո ծագած ըստ օրենքի ժառանգման իրավահարաբերությունների պայմաններում ձևավորվել է վիճելի հասցեի ողջ անշարժ գույքի նկատմամբ Կառլեն և Շահեն Բաղդասարյանների բաժնեմասը՝ յուրաքանչյուրին 1/2-ական:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից լրացուցիչ քննության և պարզման են ենթակա մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ Լուսիկ, Կառլեն և Շահեն Բաղդասարյանների, ինչպես նաև վերջիններիս մահից հետո՝ նրանց ժառանգների բաժնեմասերի կոնկրետ չափերը, ինչպես նաև Կառլեն Բաղդասարյանի հնարավոր ժառանգների հավակնությունները վերջինիս գույքի նկատմամբ և նրանց հնարավոր բաժնեմասերը:

Ինչ վերաբերում է տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում Արմեն Բաղդասարյանի (ինչպես նաև Անահիտ Բաղդասարյանի)՝ Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդներ դառնալու և ժառանգական համապատասխան զանգվածի նկատմամբ երրորդ անձանց հավակնությունների անհայտ լինելու պայմաններում հնարավոր չէ հետևություն անել բաժինների առանձնացման հնարավոր տարբերակների վերաբերյալ, որպիսի հանգամանքները պետք է դառնան սույն քաղաքացիական գործով նոր քննության շրջանակներում հետագոտության առարկա:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երկրորդ և երրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործը՝ ըստ Կառլեն Բաղդասարյանի (իրավահաջորդներ Անահիտ և Արմեն Բաղդասարյաններ) հայցի ընդդեմ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների՝ ըստ օրենքի ժառանգությունը տիրապետման փաստով ընդունած համարելու, սեփականության իրավունքով ժառանգական գույքի՝ տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու պահանջների մասով, նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ատոմ և Սարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցի մասով ընդդեմ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Շենգավիթ» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Սույն գործով նկատի ունենալով, որ Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդները վճռաբեկ բողոքի համար վճարել են 20.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդների կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով համապարտության կարգով ենթակա է հատուցման Մարուս և Ատոմ Բաղդասարյանների կողմից:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ սույն գործը՝ Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդների հայցապահանջի մասով, ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում այդ մասով դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2014 թվականի որոշումը և

– հակընդդեմ հայցի մասով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2013 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասով այն փոփոխել. Ատոմ և Մարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցն ընդդեմ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Շենգավիթ» տարածքային ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, մերժել,

– քաղաքացիական գործը՝ ըստ Կառլեն Բաղդասարյանի (իրավահաջորդներ Անահիտ և Արմեն Բաղդասարյաններ) հայցի ընդդեմ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների՝ փաստացի տիրապետման հիմքով ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բաժիններն ու մուտքերն առանձնացնելու պահանջների մասերով, ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Մարուս և Ատոմ Բաղդասարյաններից հօգուտ Կառլեն Բաղդասարյանի իրավահաջորդներ Անահիտ և Արմեն Բաղդասարյանների համապարտության կարգով բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Կառլեն Բաղդասարյանի (իրավահաջորդներ Անահիտ և Արմեն Բաղդասարյաններ) հայցապահանջի մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0416/02/13
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Ս. Միքայելյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՐԱԴ/0416/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գյուլփերի Ստեփանյանի ներկայացուցիչ Գագիկ Պապոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Գյուլփերի Ստեփանյանի հայցի ընդդեմ Անահիտ Սմբատյանի, Արգամ, Արտակ և Արման Անթանյանների (այսուհետ՝ Համապատասխանողներ)՝ գումար բռնագանձելու և բռնագանձումը բաժնեմասերի վրա տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գյուլփերի Ստեփանյանը պահանջել է Ազատ Անթանյանի իրավահաջորդներ Համապատասխանողներից բռնագանձել 10.000.000 ՀՀ դրամ՝ որպես 12.03.2010 թվականին իր և Ազատ Անթանյանի միջև կնքված փոխառության պայմանագրով տրամադրված գումար, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ բռնագանձումը տարածելով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի Հեքիմյան փողոցի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքում Ազատ Անթանյանի 1/5 և Անահիտ Սմբատյանի 1/5 բաժնեմասերի վրա:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 23.06.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.10.2014 թվականի որոշմամբ Գյուլփերի Ստեփանյանի ներկայացուցչի վերաքննիչ բո-

ղոքը մերժվել է, և Դատարանի 23.06.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գյուլփերի Ստեփանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անահիտ Սմբատյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ և 1243-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել գործում առկա ապացույցները, ինչի արդյունքում անտեսել է, որ պահանջը ներկայացվել է փոխառության պայմանագրում նշված ժամկետը լրանալուց հետո, քանի որ Գյուլփերի Ստեփանյանը համոզված է եղել, որ Ազատ Անթանյանը կենդանի է: Գյուլփերի Ստեփանյանն Ազատ Անթանյանի մահվան մասին տեղեկացել է, երբ վերջինիս կինը՝ սույն գործով պատասխանող Անահիտ Սմբատյանը, Դատարանին ներկայացրել է Ազատ Անթանյանի մահվան վկայականը: Ավելին, Գյուլփերի Ստեփանյանը մշտապես փնտրել է Ազատ Անթանյանին, իսկ երբ մինչև հայցադիմումը դատարան ներկայացնելը հանդիպել է վերջինս որդուն՝ ստացել է խուսափողական և անորոշ պատասխաններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.10.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

Գյուլփերի Ստեփանյանի հայտարարությունն այն մասին, որ Համապատասխանողները ընդունել են ժառանգությունը, իսկ Դատարանն այդ փաստը հաստատված է համարել, անհիմն է, քանի որ Գյուլփերի Ստեփանյանի կողմից Դատարան չեն ներկայացվել նշված փաստերը հաստատող ապացույցներ: Ընդ որում, Համապատասխանողները չեն ընդունել Ազատ Անթանյանի ժառանգությունը և ներկայումս ևս հրաժարվում են այն ընդունելուց: Ավելին, հայցվորը բաց է թողել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը, որի բացթողնման հետևանքների վերաբերյալ ստորադաս դատարանները հանգել են իրավաչափ հետևության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 12.03.2010 թվականին Գյուլփերի Ստեփանյանի և Ազատ Անթանյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին կետում նշվել է, որ «Գյուլփերի Ստեփանյանն Ազատ Անթանյանին է տալիս սեփականության իրավունքով իրեն պատկանող 10.000.000 ՀՀ դրամը»: Պայմանագիրը կնքվել է անտոկոս, իսկ փոխառության գումարը ենթակա էր վերադարձման մինչև **12.03.2013 թվականը (հատոր 2-րդ, գ.թ. 82)**.

2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 17.01.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Հեքիմյան փողոցի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքն ընդհանուր սե-

փականության իրավունքով պատկանել է Ազատ Անթանյանին, Անահիտ Սմբատյանին, Արման, Արտակ և Արգամ Անթանյաններին՝ յուրաքանչյուրին 1/5-ական բաժնի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 59)**.

3) Թիվ 056869 մահվան վկայականի համաձայն՝ 07.10.2011 թվականին Ազատ Անթանյանը մահացել է **(հատոր 1-ին, գ.թ. 45)**.

4) «Աշտարակ» նոտարական տարածքի նոտարի 14.05.2014 թվականի գրության համաձայն՝ Ազատ Անթանյանի մահվանից հետո 6 ամսվա ընթացքում որևէ ժառանգ չի դիմել Աշտարակի նոտարական գրասենյակ ժառանգության ընդունման համար, ինչպես նաև որևէ ժառանգի չի տրվել ժառանգության իրավունքի վկայագիր **(հատոր 2-րդ, գ.թ. 73)**.

5) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի գրության համաձայն՝ Անահիտ Սմբատյանի, Արման, Արտակ և Արգամ Անթանյանների անվամբ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Հեքիմյան փողոցի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է նրանց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը: Վերջիններիս անվամբ Հայաստանի Հանրապետությունում այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ **(հատոր 2-րդ, գ.թ. 71)**.

6) Գյուլփերի Ստեփանյանը **04.07.2013 թվականին** հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Ազատ Անթանյանի՝ փոխառությամբ տրված գումարը բռնագանձելու պահանջի մասին **(հատոր 1-ին, գ.թ. 3-8)**.

7) Գյուլփերի Ստեփանյանի ներկայացուցիչ Գագիկ Պապոյանը **29.05.2014 թվականին** <<հայցադիմումի հստակեցում>> վերնագիրը կրող փաստաթուղթ է ներկայացրել Դատարան, որով խնդրել է փոխառության գումարը և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները բռնագանձել Ազատ Անթանյանի իրավահաջորդներ Անահիտ Սմբատյանից, Արման, Արտակ և Արգամ Անթանյաններից՝ բռնագանձումը տարածելով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Հեքիմյան փողոցի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքում Ազատ Անթանյանին և Անահիտ Սմբատյանին պատկանող 1/5-ական բաժնեմասերի վրա **(հատոր 2-րդ, գ.թ. 74, 75)**.

8) Դատարանը, հիմք ընդունելով հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված <<հայցադիմումի հստակեցում>> վերնագիրը կրող փաստաթուղթը, մասնավորապես հաշվի առնելով, որ հայցադիմումի հստակեցմամբ պահանջը ներկայացվել է Անահիտ Սմբատյանի, Արգամ, Արտակ և Արման Անթանյանների դեմ, 29.05.2014 թվականի որոշմամբ վերջիններիս ներգրավել է որպես պատասխանողներ **(հատոր 2-րդ, գ.թ. 77, 78)**:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի միատեսակ կիրառության, ինչպես նաև հետագայում նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկայի ձևավորման համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք պարտապանի մահվան մասին անտեղյակ լինելը կարող է հիմք հանդիսանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածում նշված պահանջը պարտատիրոջ կողմից նույն հոդվածում նշված անձանց սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է,** իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը.

երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը.

երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները.

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները.

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ **պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:** Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր՝ նախկինում կայացրած որոշմամբ համակարգային վերլուծության ենթարկելով վերը նշված հոդվածներով նախատեսված կարգավորումները, արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել: Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը *(տե՛ս, Սեդա Սոնյանն ընդդեմ Իդա Էբզիմյանի, և Իդա Էբզիմյանն ընդդեմ Սեդա Սոնյանի թիվ 3-1778(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշման շրջանակներում կրկին անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածին, արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալն իրենց պահանջները ներկայացնել նախ հետևյալ անձանց՝ ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, ապա միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին *(տե՛ս, Սերգեյ Թահիրյանն ընդդեմ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտարի թիվ ԵՔԴ/0279/02/08*

քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, հարկ համարելով զարգացնել իր վերը շարադրված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետով օրենսդրի կողմից ժառանգատուի պարտատերերի համար պահանջներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ. այն կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը՝ պայմանավորված ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով:

Ընդունելով ժանագությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրել ժառանգատուի պարտավորությունների համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը պետք է հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմի, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ: Եթե ժառանգության զանգվածի կազմը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, այլ է իրավիճակը ժառանգատուի պարտավորությունների պարագայում: Վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, ժառանգատուի պարտատերերի համար սահմանելով պահանջների ներկայացման վերջնաժամկետ, ըստ էության, նախադրյալներ է ապահովել ժառանգի համար ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր՝ ժառանգման իրավունքի իրացման հարցը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին, ինչը նշանակում է, որ այդ ժամկետի բացթողումը հանգեցնում է պարտատիրոջ իրավունքի կորստի: Այսպես՝ գործնականում չի բացառվում, որ ժառանգությունը բացվելուց հետո ժառանգատուի պարտատերը կարող է որոշակի տևական ժամանակ օբյեկտիվորեն չիմանալ պարտապանի մահվան մասին: Մինչդեռ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը, այնպես էլ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելուն վերաբերող մյուս իրավանորմերն այդ կապակցությամբ որևէ բացառություն չեն նախատեսում: Ավելին, ՀՀ օրենսդրությունը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող որոշակի իրավահարաբերությունների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի *(Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը)* և 1228-րդ հոդվածի 2-րդ կետի *(Ժառանգությունն ընդունելը սահմանված ժամկետի ավարտից հետո)* կարգավորումների, չի նախատեսում նաև համապատասխան անձի մահվան մասին տեղյակ չլինելու հիմքով պահանջատիրոջ կողմից ժառանգներին պահանջ ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և (կամ) այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատերերի կողմից պահանջները չներկայացնելու դեպքում նրանք զրկվում են հետագայում պարտապանի ժառանգների դեմ իրենց պահանջները ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունից:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով օրենսդիրը սահմանափակել է նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց ժառանգատուի պարտատերերը կարող են ներկայացնել իրենց պահանջները, մասնավորապես՝ պարտատերն իրավունք ունի իր պահանջը բացառապես ներկայացնել ժառանգությունն ընդունած ժառանգներին, կտակակատարին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Օրենսդիրը, ամրագրելով նշված սուբյեկտների շրջանակը և նրանց պահանջ ներկայացնելու ժամանակահատվածը, այդուհանդերձ, չի կարգավորել այդ պահանջների ներկայացման կարգը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում պար-

տատերն իր իրավունքը պետք է իրացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել վերը թվարկված սուբյեկտներին ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությամբ անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պահանջ կարող է ներկայացվել ժառանգման իրավունք ունեցող այն անձանց, որոնց վարքագիծը վկայում է ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Ընդ որում, նման պահանջը կարող է ինչպես անմիջականորեն հասցեագրվել ժառանգին, այնպես էլ վերջինիս ներկայացվել դատարան հայց ներկայացնելու միջոցով: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութաիրավական և դատավարական հասկացություն է, որի նյութաիրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը: Հետևաբար ժառանգատուի պարտատերը, վերջինիս հետ ունեցած պարտավորությունից բխող պահանջ ներկայացնելով դատարան ընդդեմ ժառանգման իրավունք ունեցող անձի, հայցի նյութաիրավական կողմի տեսանկյունից իրացնում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով իրենց վերապահված իրավունքը:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.03.2010 թվականին Գյուլփերի Ստեփանյանի և Ազատ Անթանյանի միջև կնքվել է Պայմանագիր, որի համաձայն՝ Գյուլփերի Ստեփանյանից փոխառությամբ ստացած 10.000.000 ՀՀ դրամն Ազատ Անթանյանը պարտավորվել է վերադարձնել մինչև 12.03.2013 թվականը**:** Ազատ Անթանյանը մահացել է 07.10.2011 թվականին: Գյուլփերի Ստեփանյանը 04.07.2013 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Ազատ Անթանյանի՝ փոխառությամբ տրված վերը նշված գումարը բռնագանձելու պահանջի մասին: Գյուլփերի Ստեփանյանի ներկայացուցիչ Գագիկ Պապոյանը **29.05.2014 թվականին** <<հայցադիմումի հստակեցում>> վերնագիրը կրող փաստաթուղթ է ներկայացրել Դատարան, որով խնդրել է փոխառության գումարը և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները բռնագանձել Ազատ Անթանյանի իրավահաջորդներ Անահիտ Սմբատյանից, Արման, Արտակ և Արգամ Անթանյաններից՝ բռնագանձումը տարածելով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Հեքիմյան փողոցի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքում Ազատ Անթանյանին և Անահիտ Սմբատյանին պատկանող 1/5-ական բաժնեմասերի վրա: Դատարանը, հիմք ընդունելով հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված <<հայցադիմումի հստակեցում>> վերնագիրը կրող փաստաթուղթը, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ հայցադիմումի հստակեցմամբ պահանջը ներկայացվել է Անահիտ Սմբատյանի, Արգամ, Արտակ և Արման Անթանյանների դեմ, 29.05.2014 թվականի որոշմամբ վերջիններիս ներգրավել է որպես պատասխանողներ:

Դատարանը, պատճառաբանելով, որ հիմնավորված չէ Համապատասխանողների կողմից ժառանգությունը փաստացի տիրապետման եղանակով ընդունելու փաստը, իսկ Գյուլփերի Ստեփանյանն իր հերթին օրենքով սահմանված ժամկետում և կարգով որևէ պահանջ չի ներկայացրել, բաց է թողել օրենքով սահմանված պահանջ ներկայացնելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը, հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով նաև, որ Ազատ Անթանյանի մահվանից հետո վերջինիս գույքի նկատմամբ ժառանգական գործ չի բացվել, վերջինիս ժառանգությունը որևէ մեկի կողմից չի ընդունվել, իսկ Գյուլփերի Ստեփանյանը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում իր հերթին ժառանգության բացման վայրի նոտարին պահանջ չի ներկայացրել, Գյուլփերի Ստեփանյանի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների և կատարված վերլուծությունների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությունը, հիմք ընդունելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանությունը հիմնավոր է և իրավաչափ, քանի որ Ազատ Անթանյանը մահացել է **07.10.2011** թվականին, իսկ Գյուլփերի Ստեփանյանը ժառանգության բացումից վեց ամսվա ժամկետում ինչպես Համապատասխանողներին, այնպես էլ ժառանգության բացման վայրի նոտարին որևէ պահանջ չի ներկայացրել: Գյուլփերի Ստեփանյանը ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում համապատասխան պահանջով չի դիմել նաև դատարան *(այդպիսի պահանջով Գյուլփերի Ստեփանյանը հայցադիմումը դատարան ներկայացրել է միայն 04.07.2013 թվականին՝ ժառանգատու Ազատ Անթանյանի մահից մոտ երկու տարի անց):* Նման պայմաններում Գյուլփերի Ստեփանյանի պահանջը ենթակա չէր բավարարման:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի հիմքում նշված այն հանգամանքին, որ Ազատ Անթանյանի մահվանից հետո վեց ամսվա ժամկետում Գյուլփերի Ստեփանյանը Համապատասխանողների նկատմամբ պահանջ չի ներկայացրել Ազատ Անթանյանի մահվան մասին անտեղյակության պատճառով, ապա այն չի կարող հիմք հանդիսանալ պահանջը բավարարելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը, և թե՛ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելուն վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ իրավանորմերն այդ մասին բացառություն չեն նախատեսում:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետի բացթողնման և դրա հետևանքների վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկներին, գտնում է, որ դրանք հիմնավորվում են Վճռաբեկ դատարանի վերոնշյալ պատճառաբանություններով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում նշված՝ Ազատ Անթանյանի ժառանգությունը նրա ժառանգների կողմից ընդունված չլինելու փաստարկին, ապա Գյուլփերի Ստեփանյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը բաց թողնելու պայմանում Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գուքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, բավարարելով պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Գյուլփերի Ստեփանյանի միջնորդությունը, 24.12.2014 թվականին որոշում է կայացրել «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին»՝ միաժամանակ որոշելով հետաձգել վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը և այդ հարցին անդրադառնալ գործի ըստ էության քննության ժամանակ, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Գյուլփերի Ստեփանյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 300.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 24.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2014 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Գյուլփերի Ստեփանյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 24.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0740/02/14
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ/0740/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և արչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով <<Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Հարություն Չադրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.03.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գեղամ Գալստյանի ընդդեմ Ընկերության՝ 17.06.2014 թվականի թիվ Կ/13-ֆ603 հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գեղամ Գալստյանը պահանջել է անվավեր ճանաչել աշխատանքից ազատելու մասին 17.06.2014 թվականի թիվ կ/13-ֆ603 հրամանը, վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել միջին աշխատավարձի չափով հարկադիր պարապուրդի գումարն ամբողջ ժամանակահատվածի համար:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սիսակյան) (այսուհետ՝ Դատարան) 14.11.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.03.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.11.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գեղամ Գալստյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ, 11-րդ, 112-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ 20.06.2014 թվականի փոստի ստացման-հանձնման հետադարձ ծանուցումը, ծրարի պարունակությունը, աշխատանքից ազատման դիմումին ընթացք չտալու մասին 23.06.2014 թվականի դիմումը: Այսպես, 20.06.2014 թվականի փոստի ստացման-հանձնման հետադարձ ծանուցումն ինքնին չի կարող հանդիսանալ աշխատանքից ազատման դիմումին ընթացք չտալու մասին դիմումի առաքման ապացույց: Ավելին՝ նշված ծրարի հետադարձ ծանուցումը դեռևս չի կարող հիմք հանդիսանալ՝ ապացուցված համարելու այն փաստը, որ ծրարի պարունակությունը եղել է աշխատանքից ազատման դիմումին ընթացք չտալու մասին դիմումը: Գեղամ Գալստյանի կողմից աշխատանքից ազատման դիմումին ընթացք չտալու դիմումը ներկայացվել է աշխատանքից ազատման դիմումին հաջորդող 6-րդ օրը՝ 23.06.2014 թվականին, ինչը հաստատվում է 23.06.2014 թվականի թիվ 21871 մուտքի համարով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունն իրավունք ուներ Գեղամ Գալստյանին աշխատանքից ազատելու հենց 17.06.2014 թվականին, քանի որ վերջինս դիմումով խնդրել է ազատել իրեն աշխատանքից համաձայն իր դիմումի և վերջին աշխատանքային օր համարել 17.06.2014 թվականը, ինչի հիման վրա Ընկերության գլխավոր տնօրենի 17.06.2014 թվականի հրամանով Ընկերության «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Գեղամ Գալստյանը 18.06.2014 թվականից ազատվել է աշխատանքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.03.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Գեղամ Գալստյանը աշխատանքից ազատվելու դիմում է ներկայացրել 17.06.2014 թվականին և խնդրել է, որ այդ օրը համարվի իր աշխատանքային վերջին օրը: Ընկերության կողմից որևէ համաձայնություն կամ ներքին իրավական ակտ չի ստացել: Դիմումը գրելու օրվանից հետո եռօրյա ժամկետում՝ 20.06.2014 թվականին, փոստային հատուկ հետադարձ ծանուցմամբ՝ առաքումով, դիմում է ներկայացվել Ընկերություն՝ 17.06.2014 թվականի աշխատանքից ազատման մասին դիմումին ընթացք չտալու մասին: 20.06.2014 թվականի դրությամբ Գեղամ Գալստյանն աշխատանքից ազատված չի եղել, քանի որ Ընկերության կողմից որևէ ծանուցում չի ստացել աշխատանքից ազատված լինելու մասին: Ընկերությունը 20.06.2014 թվականի դիմումը՝ աշխատանքից ազատման մասին դիմումին ընթացք չտալու վերաբերյալ, ստացել է 23.06.2014 թվականին, իսկ 25.06.2014 թվականի գրությամբ մերժել է այն դիմումը հետ վերցնելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ:

Բացի այդ, նույնիսկ եթե աշխատողն աշխատանքից ազատվելու մասին դիմումում նշել է հստակ օր, ապա դա դեռ հիմք չէ, որ վերջինս աշխատանքից ազատվի հենց այդ օրվանից կամ սահմանափակվի դիմումը սահմանված եռօրյա ժամկետում հետ վերցնելու նրա իրավունքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության գլխավոր տնօրենի 07.02.2008 թվականի հրամանի համաձայն՝ Ընկերության «Հրազդան» մասնաճյուղի կառավարչի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գալստյանը նշանակվել է նույն մասնաճյուղի կառավարիչ անորոշ ժամկետով՝ համաձայն աշխատանքային պայմանագրի (գ.թ. 9-10, 13):

2) Ընկերության գլխավոր տնօրենին հասցեագրված Ընկերության «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Գեղամ Գալստյանի 17.06.2014 թվականի դիմումի համաձայն՝ վերջինս խնդրել է իրեն ազատել աշխատանքից իր դիմումի համաձայն և վերջին աշխատանքային օրը համարել 17.06.2014 թվականը **(գ.թ. 19):**

3) Ընկերության գլխավոր տնօրենի 17.06.2014 թվականի թիվ կ/13-ֆ603 հրամանի համաձայն՝ «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Գեղամ Գալստյանը 18.06.2014 թվականից սեփական ցանկությամբ ազատվել է աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով **(գ.թ. 20):**

4) Ընկերության գլխավոր տնօրենին հասցեագրված Գեղամ Գալստյանի 20.06.2014 թվականի դիմումի համաձայն՝ Գեղամ Գալստյանը խնդրել է աշխատանքից ազատելու մասին 17.06.2014 թվականի իր դիմումին ընթացք չտալ: Նշված դիմումը Ընկերությունում մուտք է եղել 23.06.2014 թվականին **(գ.թ. 24):**

5) Ի պատասխան Գեղամ Գալստյանի դիմումի՝ Ընկերության գլխավոր տնօրենի 25.06.2014 թվականի գրությամբ Գեղամ Գալստյանին հայտնվել է, որ աշխատանքից ազատման մասին դիմումում վերջինս խնդրել է վերջին աշխատանքային օր համարել 17.06.2014 թվականը, որն էլ հիմք է հանդիսացել աշխատանքից ազատման հրամանի համար: Նշվածով պայմանավորված՝ աշխատանքից ազատման մասին դիմումին ընթացք չտալու մասին դիմումը թողնվել է անհետևանք **(գ.թ. 25):**

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասի իրավադրույթի սխալ մեկնաբանման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողի կողմից ծանուցումը հետ վերցնելու իրավունքի իրականացման ժամկետներին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողն իրավունք **ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը**, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ **այդ մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին:** Կոլեկտիվ պայմանագրով կարող է նախատեսվել ծանուցման ավելի երկար ժամկետ: Ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով

կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն հինգ օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին, եթե աշխատանքային պայմանագրի լուծումը կապված է իր կատարած աշխատանքը խոչընդոտող հիվանդության կամ աշխատանքային խեղման հետ, կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ հարգելի պատճառներ կան, կամ եթե գործատուն չի կատարում աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունները, խախտում է օրենքը կամ կոլեկտիվ պայմանագիրը, ինչպես նաև նույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի «Աշխատանքային պայմանագրի լուծումը» վերտառությամբ գլխում (15-րդ գլուխ) ընդհանրապես և մասնավորապես աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը կանոնակարգող հոդվածում (112-րդ հոդված) նախատեսված են աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման ժամկետներ, որոնց նպատակն է հավասարապես պաշտպանել ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի շահերը: Որպես այդպիսի ընդհանրական շահեր աշխատողի համար դիտարկվում է նրա իրավունքը՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում իրացնելու իր հետագա կենսագործունեության ազատությունը (դադարեցնելու աշխատանքը, ընտրելու այլ աշխատանք, զբաղվելու այլ գործունեությամբ և այլն), իսկ գործատուի համար՝ իր հետագա բնականոն գործունեությունը կարգավորելու հնարավորությունը (նոր աշխատող ընտրելու իրավունք, մինչ նոր աշխատող ընտրելը տվյալ աշխատանքի կատարում պահանջելու իրավունք և այլն):

Այսպիսով, օրենսդրի կողմից ժամկետների սահմանումն ուղղված է աշխատանքային պայմանագրի կողմերի շահերի հավասարակշռմանը և դրանից բխող պարտականությունների կատարմանը: Մասնավորապես՝ աշխատանքային պայմանագրի լուծման մասին աշխատողի՝ գործատուին առնվազն երեսուն օր առաջ ծանուցելու պարտականությունն ինքնանպատակ չէ, այն միտված է ապահովելու գործատուի մոտ աշխատանքային իրավահարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը՝ կապված առաջացող թափուր հաստիքը հնարավորինս արագ համալրելու, աշխատանքային բնականոն ընթացքն արագ վերականգնելու հետ:

Ընդ որում, օրենսդիրը ՀՀ աշխատաքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասով իրավունք է վերապահել աշխատողին հետ վերցնելու աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը՝ այն ներկայացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ միևնույն ժամանակ գործատուի համար սահմանելով պարտականություն՝ դիմումին ընթացք չտալու և աշխատանքային հարաբերությունները շարունակելու:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքային իրավահարաբերություններում կողմերի շահերի հավասակշռման ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը անհրաժեշտ է մեկնաբանել համակցության մեջ և ոչ թե առանձին վերցված: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասով

ամրագրված աշխատողի իրավունքի իրացումը փոխկապակցված է նրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի պահպանմանը: Հետևաբար այն դեպքերում, երբ աշխատողը աշխատանքային պայմանագրի լուծման մասին իր դիմումով չի պահպանել առնվազն երեսուն օր առաջ ծանուցելու ժամկետը, նա չի կարող օգտվել նաև եռօրյա ժամկետում իր դիմումը հետ վերցնելու իրավունքից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը ներկայացնելու օրվանից հետո եռօրյա ժամկետում հետ վերցնելու աշխատողի իրավունքը վերաբերում է այն դեպքերին, երբ աշխատողը պահպանել է աշխատանքային պայմանագիրը լուծելու ծանուցման երեսուն օրվա ժամկետը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ ծանուցման մեջ աշխատողի կողմից նշվել է աշխատանքային պայմանագիրը լուծելու կոնկրետ ժամկետ, որը չի գերազանցում երեսնօրյա ժամկետը, գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու ծանուցման մեջ նշված ժամկետում: Միաժամանակ այն դեպքում, երբ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման մեջ նշվել է կոնկրետ ժամկետ՝ չպահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ծանուցման երեսնօրյա ժամկետը, գործատուն իրավունք ունի նաև աշխատողի կողմից նշված ժամկետում չլուծելու աշխատանքային պայմանագիրը: Այս դեպքում աշխատողն իրավունք չունի դադարեցնելու աշխատանքը՝ մինչև ծանուցման երեսնօրյա ժամկետի լրանալը: Սույն հետևությունը հիմնված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման վրա, ըստ որի՝ ծանուցման երեսուն օրվա ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Գործատուն, խախտելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասը, աշխատողին ազատել է՝ հնարավորություն չընձեռելով նրան իրականացնելու նշված հոդվածի շրջանակներում իրեն վերապահված իրավունքները:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի 14.11.2014 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում թեև Գեղամ Գալստյանի կողմից 20.06.2014 թվականին ներկայացված դիմումն իր բովանդակության մեջ չի պարունակել «հետ վերադարձնել» եզրույթը, այդուհանդերձ որոշակիորեն բովանդակել է դիմումատուի կամքը՝ դիմումին «ընթացք չտալու» խնդրանքի վերաբերյալ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Դատարանի պատճառաբանությունների հետ, արձանագրել է, որ Դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված վճիռ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության գլխավոր տնօրենին հասցեագրված 17.06.2014 թվականի դիմումով Ընկերության «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Գեղամ Գալստյանը խնդրել է իրեն ազատել աշխատանքից իր դիմումի համաձայն և վերջին աշխատանքային օրը համարել 17.06.2014 թվականը**:** Ընկերության գլխավոր տնօրենի 17.06.2014 թվականի հրամանով «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Գեղամ Գալստյանը 18.06.2014 թվականից, իր ցանկությամբ ազատվել է աշխատանքից՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի**:**

Հետագայում, Ընկերության գլխավոր տնօրենին հասցեագրված 20.06.2014 թվականի դիմումով Գեղամ Գալստյանը խնդրել է 17.06.2014 թվականի աշխատանքից ազատելու մասին իր դիմումին ընթացք չտալ: Նշված դիմումը Ընկերությունում մուտք է եղել 23.06.2014 թվականին: Ընկերության գլխավոր տնօրենի 25.06.2014 թվականի գրությամբ Գեղամ Գալստյանին հայտնվել է, որ աշխատանքից ազատման մասին դիմումում վերջինս խնդրել է վերջին աշխատանքային օր համարել 17.06.2014 թվականը, որն էլ հիմք է հանդիսացել աշխատանքից ազատման հրամանի համար: Դրանից ելնելով էլ՝ աշխատանքից ազատման մասին դիմումին ընթացք չտալու մասին դիմումը թողնվել է անհետևանք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվոր Գեղամ Գալստյանը, իրացնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերապահված իրավունքը, 17.06.2014 թվականի դիմումով խնդրել է իրեն ազատել աշխատանքից՝ վերջին աշխատանքային օրը համարելով 17.06.2014 թվականը**:** Այսինքն՝ Ընկերության «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Գեղամ Գալստյանն իր աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցման դիմումով նշել է աշխատանքային պայմանագրի լուծման հստակ օր՝ չպահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման երեսնօրյա ժամկետը: Գործատու Ընկերությունը, իրավունք ունենալով լուծելու աշխատանքային պայմանագիրը աշխատողի կողմից նշված ժամկետում, 17.06.2014 թվականի հրամանով Գեղամ Գալստյանին ազատել է աշխատանքից:

Վերոշարադրյալ վերլուծությունների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքային պայմանագիրը լուծելով աշխատողի ծանուցման մեջ նշված ժամկետում՝ գործատուն թույլ չի տվել աշխատանքային օրենսդրության պահանջների խախտում, իսկ դիմումը «հետ վերցնելու» կամ դրան «ընթացք չտալու» վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողությունները, ինչպես նաև եռօրյա ժամկետում աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում տալու փաստը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունեն, քանի որ սույն գործով Գեղամ Գալստյանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը չպահպանվելու պայմաններում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չէ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն փաստարկին, որ Գեղամ Գալստյանի կողմից աշխատանքից ազատման դիմումին ընթացք չտալու դիմումը ներկայացվել է աշխատանքից ազատման դիմումին հաջորդող 6-րդ օրը՝ 23.06.2014 թվականին՝չպահպանելով օրենքով սահմանված եռօրյա ժամկետը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չլինելու պայմաններում այդ հանգամանքը ևս գործի լուծման համար էական նշանակություն չունի:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցն ամբողջությամբ ենթակա էր մերժման, մինչդեռ ստորադաս դատարանները, սխալ մեկնաբանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածը, սխալ եզրահանգման են եկել գործի ելքի վերաբերյալ:

Վերը նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում

նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է փոփոխման, իսկ Գեղամ Գալստյանի հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը, գտնում է, որ Գեղամ Գալստյանից հօգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 34.960 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի և 160.433 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.03.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Գեղամ Գալստյանի հայցն ընդդեմ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի՝ 17.06.2014 թվականի թիվ Կ/13-ֆ603 հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին, մերժել:

2. Գեղամ Գալստյանից հօգուտ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի բռնագանձել 34.960 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք և 160.433 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1896/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1896/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մանե Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարինե Տիտանյանի ընդդեմ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ որոշումն անվավեր ճանաչելու, որոշակի գործողություններ կատարել պարտադրելու և գումար բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կարինե Տիտանյանը պահանջել է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու մասով անվավեր ճանաչել Խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումը, վերականգնել նախկին աշխատանքում, Ընկերությանը պարտադրել կատարել վերջնահաշվարկ, սահմանված կարգով լրացնել աշխատանքային գրքույկը և հանձնել իրեն, բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը՝ սկսած 16.07.2013 թվականից, ինչպես նաև վճարման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-

թյան դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 21.08.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ընկերությունից հօգուտ Կարինե Տիտանյանի բռնագանձել 1.218.316 ՀՀ դրամ՝ որպես վերջնահաշվարկի գումար՝ այդ գումարը Դատարանի դեպոզիտ հաշվից փոխանցելով Կարինե Տիտանյանին, անվավեր ճանաչել Խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումը և Կարինե Տիտանյանին վերականգնել իր նախկին աշխատանքում՝ Ընկերության տնօրենի պաշտոնում, Ընկերությունից հօգուտ Կարինե Տիտանյանի բռնագանձել հարկադիր պարապուրդի համար միջին աշխատավարձը՝ սկսած 16.07.2013 թվականից, ինչպես նաև 70.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար. հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.11.2014 թվականի որոշմամբ Կարինե Տիտանյանի ներկայացուցչի և Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 21.08.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարինե Տիտանյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետը, 115-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Խորհուրդը, որպես Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով, իրավունք ունի ցանկացած պահին լուծելու իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը: Ընդ որում, այդ դեպքում օրենսդիրը չի նախատեսում աշխատանքային պայմանագրի լուծումը հիմնավորելու որևէ պահանջ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավոր են համարում առանձին աշխատանքային հարաբերությունների կարգավորումն այլ իրավական ակտերով:

Սույն վճռաբեկ բողոքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվելիք որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 13.11.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Անկախ գործատու ընկերության կազմակերպաիրավական ձևից և գործունեության բնույթից՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նորմերը, այդ թվում նաև՝ աշխատանքային իրավահարաբերությունների դադարումը կարգավորող դրույթները ենթակա են պարտադիր կիրառման և կատարման Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն աշխատողին աշխատանքից ազատելու որոշակի, խստորեն կանոնակարգված ընթացակարգ է նախատեսում, մինչդեռ տվյալ դեպքում գործատուն չի կատարել իր առջև դրված պարտականությունը և աշխատանքային պայմանագիրը լուծել է առանց աշխատողին այդ կարգավիճակում պահելու այլ՝ հնարավորինս համարժեք հնարավորության ընձեռման, առանց ծանուցման, առանց ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված որևէ հիմքի վկայակոչման, որպիսի գործելակերպն ուղղակիորեն հակասում է ՀՀ օրենսդրությանը և միջազգային կոնվենցիաներին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչության պետի 08.06.1999 թվականի թիվ 28 հրամանով Կարինե Տիտանյանը 07.06.1999 թվականից նշանակվել է Ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար **(հատոր 1-ին, գ.թ. 9)**.

2) ՀՀ կառավարության 06.11.2003 թվականի ««Հասարարական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին վերապահելու մասին» թիվ 1401-Ն որոշմամբ Ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Խորհրդին **(հատոր 1-ին, գ.թ. 13)**.

3) Խորհրդի 15.01.2004 թվականի թիվ 1-Ա որոշմամբ հաստատվել է Ընկերության կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն)՝ նոր խմբագրությամբ **(հատոր 1-ին, գ.թ. 11, 12)**.

4) Կանոնադրության 8.1-րդ կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: ՀՀ կառավարության 06.11.2003 թվականի ««Հասարարական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին վերապահելու մասին» թիվ 1401-Ն որոշմամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է Խորհուրդը **(հատոր 1-ին, գ.թ. 27-48)**.

5) Կանոնադրության 8.2-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն է պատկանում Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը **(հատոր 1-ին, գ.թ. 27-48)**.

6) Խորհրդի 15.01.2004 թվականի թիվ 1-Ա որոշմամբ Կարինե Տիտանյանը վերանշանակվել է Ընկերության տնօրեն **(հատոր 1-ին, գ.թ. 11, 12)**.

7) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը 16.07.2013 թվականին որոշում է կայացրել 16.07.2013 թվականից Ընկերության գործադիր մարմնի ղեկավար (տնօրեն) Կարինե Տիտանյանի լիազորությունները դադարեցնելու և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 16-18, 23, 24)**.

8) Կարինե Տիտանյանին վճարման ենթակա վերջնահաշվարկի գումարը՝ 1.218.316 ՀՀ դրամի չափով, Ընկերության կողմից 25.11.2013 թվականի թիվ 900013298014 վճարման հանձնարարագրով փոխանցվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին **(հատոր 2-րդ, գ.թ. 22-23, 28):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետի միատեսակ կիրառության համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետը, 115-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

– ինչպիսի՞ իրավական կարգավիճակ ունի բաժնետիրական ընկերության տնօրենը,

– արդյո՞ք իրավաչափ է բաժնետիրական ընկերության միանձնյա գործադիր մարմնի (ընկերության տնօրենի, գլխավոր տնօրենի) լիազորությունները բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կողմից ցանկացած ժամանակ վաղաժամկետ դադարեցնելը:

1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողը նույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատողը գործունակ **ֆիզիկական անձ է**, որն **անձամբ, որոշակի վարձատրության դիմաց** կատարում է **աշխատանքային գործառույթներ՝** աշխատանք ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի՝ միանձնյա գործադիր մարմնի կամ ընկերության միանձնյա գործադիր մարմնի և ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի կողմից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ նույն օրենքով և կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը)՝

ա) տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում ընկերության անունից.

բ) ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իրականացնում է ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը կամ հետգնումը, եթե ժողովի որոշմամբ կամ կանոնադրությամբ այդ լիազորությունը տրված է գործադիր մարմնին.

թ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժա) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Կանոնադրությամբ կարող են սահմանվել ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի) նաև այլ իրավասություններ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժողովի որոշմամբ ընկերության **գործադիր մարմնի լիազորությունները պայմանագրով կարող են տրվել առևտրային կազմակերպության** (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ բաժնետիրական ընկերության տնօրենն ընկերության կառավարման գործադիր մարմինն է, որն, իրականացնելով կառավարման գործառույթներ, ընկերության անունից կատարում է իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններն իրացնում է ընկերության՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի իրավունքներն ու պարտականությունները, ընկերության գույքը տնօրինելու իրավասությունը, աշխատանքային հարաբերություններում իրականացնում է գործատուի իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բաժնետիրական ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի)՝ որպես ընկերության գործադիր մարմնի իրավական կարգավիճակն էապես տարբերվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողի՝ ընդհանուր իրավական կարգավիճակից, ինչը պայմանավորված է գործադիր մարմնի գործունեության առանձնահատկությամբ, բաժնետիրական ընկերության կառավարման համակարգում վերջինիս դերով և նշանակությամբ:

Բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատողի ընդհանուր իրավական կարգավիճակից տարբերվելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումների հիմքում ընկած է նաև այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերության տնօրենը հանդիսանում է ընկերության գործադիր մարմին, իսկ օրենսդրությամբ սահմանված է բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ նաև առևտրային կազմակերպություն (իրավաբանական անձ) լինելու հնարավորությունը, որի հետ ևս ընկերությունը կնքում է պայմանագիր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ բաժնետիրական ընկերության՝ իրավաբանական անձ գործադիր մարմինն իրականացնում է այն նույն գործառույթները, որոնցով օժտված է ֆիզիկական անձ գործադիր մարմինը (տնօրենը, գլխավոր տնօրենը), մինչդեռ իրավաբանական անձի պարագայում ակնհայտ է, որ կողմերի միջև չեն կարող ծավալվել աշխատանքային հարաբերություններ, քանի որ ընկերության գործադիր մարմին հանդիսացող իրավաբանական անձը, ՀՀ աշխատանքային օրենսդրության տրամաբանության համաձայն, չի կարող համարվել աշխատող:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը ֆիզիկական անձ է (տնօրեն, գլխավոր տնօրեն), ապա վերջինիս նկատմամբ կարող են գործել **ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ աշխատողների ընդհանուր իրավական կարգավիճակի վերաբերյալ այնպիսի դրույթներ, որոնք չեն հակասում ընկերության տնօրենի՝ որպես ընկերության գործադիր մարմնի՝ օրենքով սահմանված իրավական կարգավիճակի բովանդակությանը, և չեն կարգավորվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով**:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի պարունակում բաժնետիրական ընկերության ղեկավարի հետ աշխատանքային

հարաբերությունների ծագման կամ դադարման վերաբերյալ որևէ դրույթ, իսկ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ձևավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի համաձայն՝ ժողովի իրավասությանն են պատկանում ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության գործադիր մարմինների ձևավորումն ու դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է ժողովի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այդ հարցերը վերապահված չեն խորհրդի իրավասությանը: (...) Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ միանձնյա գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների, կառավարող կազմակերպության կամ կառավարչի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են նույն օրենքով, այլ իրավական ակտերով և **Ընկերության ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված պայմանագրով**: Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է **աշխատողի և գործատուի միջև**, ըստ որի՝ **աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը**, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բաժնետիրական ընկերության և վերջինիս միանձնյա գործադիր մարմնի՝ տնօրենի միջև կնքված պայմանագիրը իր բնույթով չի հանդիսանում զուտ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված՝ աշխատանքային պայմանագիր, քանի որ այն չի կնքվում ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված գործատուի և աշխատողի միջև, սակայն կարող է պարունակել նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող կարգավորումներ, հաշվի առնելով, որ բաժնետիրական ընկերության ֆիզիկական անձ գործադիր մարմնի և ընկերության միջև հարաբերություններում առկա են նաև աշխատանքային հարաբերությունների տարրեր:

2) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ժողովն իրավունք ունի **ցանկացած ժամանակ** լուծել միանձնյա գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների, կառավարիչ-կազմակերպության կամ կառավարչի հետ կնքված պայմանագրերը, եթե կանոնադրությամբ այդ հարցի լուծումը վերապահված չէ խորհրդի իրավասությանը:

Բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ միանձնյա գործադիր մարմնի հետ պայմանագիրը ցանկացած ժամանակ լուծելու հնարավորությունը ևս պայմանավորված է բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով:

Վճռաբեկ դատարանն այս առումով նախևառաջ անհրաժեշտ է համարում արձա-

նագրել, որ համապատասխան ընկերության սեփականատերը (այդ թվում՝ ի դեմս ընկերության խորհրդի և ընդհանուր ժողովի՝ օրենքով նախատեսված դեպքերում) բնականաբար պետք է օժտված լինի որոշակի իրավազորություններով, որոնք վերջինիս հնարավորություն կտան իր տնտեսական գործունեությունն առավել արդյունավետորեն իրականացնելու և կոնկրետ ընկերությունում իր ներդրած գույքը հնարավորինս ռացիոնալ օգտագործելու նպատակներով, իր պատասխանատվության ներքո ինչպես նշանակել (ընտրել) ընկերության ղեկավար, ում կվստահվի ստեղծված ընկերության կառավարումը, ընկերության գույքի ամբողջականության և պահպանության ապահովումը, այնպես էլ անհրաժեշտության դեպքում դադարեցնել համապատասխան անձի հետ ծավալված հարաբերությունները:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հնարավորությունը բխում է բաժնետիրական ընկերության բաժնետերերի շահերից, իսկ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել ձեռնարկատիրական գործունեության զարգացման ռազմավարության և մարտավարության փոփոխությամբ, կամ ընկերության ղեկավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, կամ գործունեության նոր ուղղությունների ընտրությամբ, կարող է պայմանավորված լինել ընկերության, որպես քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցի, իրավական կարգավիճակի և գույքային դրության փոփոխությամբ, ինչպես նաև այլ պատճառներով, որոնց սպառիչ և ամբողջական ցանկը հնարավոր չէ նախապես սահմանել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված ***«ցանկացած ժամանակ» ձևակերպումը***, որը ենթադրում է այդպիսի անհրաժեշտության առաջացման դեպքում յուրաքանչյուր պահի ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու հնարավորության առկայություն, ըստ էության, բխում է շուկայական տնտեսության պահանջներից՝ հաշվի առնելով բաժնետիրական ընկերությունների տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համապատասխան մարմնի որոշումը կարող է չպարունակել այդպիսի որոշման որևէ պատճառաբանություն, ինչը ևս բխում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության սկզբունքից, հաշվի առնելով, որ այդպիսի որոշում կայանցնելու դրդապատճառները կարող են կապված լինել օրինակ, առևտրային գաղտնիքի, կամ նոու-հաուի ***(know-how)*** հետ և այլն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ սահմանադրական դատարանը 13.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-753 որոշմամբ նշել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված դրույթին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն ձևակերպված է բավարար ճշգրտությամբ, և թույլ է տալիս կանխատեսել, որ բաժնետիրական ընկերության ֆիզիկական անձ գործադիր մարմնի հետ կնքված պայմանագիրը, բացի ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի, կարող է նաև լուծվել ցանկացած պահի՝ անկախ այդ դեպքերի առկայության:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչության պետի 08.06.1999 թվականի թիվ 28 հրամանով Կարինե Տիտանյանը 07.06.1999 թվականից նշանակվել է Ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար: Խորհրդի 15.01.2004 թվականի թիվ 1-Ա որոշմամբ Կարինե Տիտանյանը վերանշանակվել է Ընկերության տնօրեն: Կանոնադրության 8.1-րդ կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է, իսկ 8.2-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն է պատկանում Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, օգտվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետով իրեն վերապահված՝ **միանձնյա գործադիր մարմնի հետ կնքված պայմանագիրը ցանկացած ժամանակ լուծելու իրավունքից,** 16.07.2013 թվականին որոշում է կայացրել 16.07.2013 թվականից Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Կարինե Տիտանյանի լիազորությունները դադարեցնելու և նրա հետ կնքված «աշխատանքային պայմանագիրը» լուծելու մասին:

Դատարանը, պատճառաբանելով, որ կողմերի միջև ծագած իրավահարաբերություններն աշխատանքային բնույթի են, հետևաբար կողմերի միջև այդ իրավահարաբերությունները կարող են դադարել բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքերով՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի բացառությունները, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ Ընկերությունն իր գործունեությունը չի ծավալում այնպիսի բնագավառում, որի մասով օրենքով սահմանված է աշխատանքային հարաբերությունների կարգավորման առանձնահատկություն, գտել է, որ փակ բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձև ունենալը դեռևս բավարար չէ նման ընկերության հետ ծագած աշխատանքային հարաբերությունների նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասը կիրառելու համար: Միաժամանակ պատճառաբանելով, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն աշխատանքային բնույթի հարաբերություններ չի կարգավորում, և նույն օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում նշված իրավունքը չի կարող իրականացվել բացարձակ կերպով, քանի որ այդ իրավանորմով աշխատանքային իրավահարաբերությունների դադարման կարգ սահմանված չէ, և գտնելով, որ «ցանկացած ժամանակ» եզրույթը վերաբերում է իրավունքի իրականացման ժամանակին և ոչ թե իրավունքի իրականացման հիմքերին, հետևաբար, թույլատրելի չէ գործատուի այնպիսի վարքագիծը, որի իրականացման արդյունքում անհարկի սահմանափակվում են աշխատողի աշխատանքային իրավունքները և չկան երաշխիքներ այդ իրավունքների պաշտպանության համար, Դատարանը հայցը մասնակիորեն բավարարել է, անվավեր է ճանաչել Խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումը՝ Կարինե Տիտանյանին վերականգնելով Ընկերության տնօրենի պաշտոնում: Դատարանը միաժամանակ վճռել է Ընկերությունից հօգուտ Կարինե Տիտանյանի **բռնագանձել 1.218.316 ՀՀ դրամ՝ որպես վերջնահաշվարկի գումար**, ինչպես նաև 16.07.2013 թվականից հարկադիր պարապուդի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվարկվող միջին աշխատավարձի գումարը:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ գործատուն չպետք է անհարկի սահմանափակի աշխատողի աշխատանքային իրավունքները, անկախ նրանից, թե վերջինս ինչպիսի պաշտոն է զբաղեցնում, իսկ Ընկերությունը ցանկացած ժամանակ կարող է լուծել տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, սակայն միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և ՀՀ օրենսդրության մաս կազմող միջազգային իրավական ակտերով ու պայմանագրերով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում, գտել է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետը որպես ցանկացած ժամանակ առանց որևէ փաստական և իրավական հիմքի

աշխատանքային պայմանագիրը լուծելու գործատուի բացարձակ իրավունք դիտարկելու դեպքում կխախտվեն աշխատանքային հարաբերությունների կայունության, աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարության ու այլ սկզբունքները, ուստի և վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Մինչդեռ վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն որոշմամբ արդեն իսկ հիմնավորել է, որ օրենսդրությամբ նախատեսված՝ բաժնետիրական ընկերության տնօրենի հետ ցանկացած ժամանակ պայմանագիրը լուծելու հնարավորության առկայությունը բխում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության սկզբունքից, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի պահանջից:

Ինչ վերաբերում է աշխատանքային հարաբերությունների կայունության, աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարության ու այլ սկզբունքները խախտվելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բաժնետիրական ընկերության տնօրենի իրավական կարգավիճակի և աշխատողի իրավական կարգավիճակի էական տարբերությամբ պայմանավորված՝ տվյալ դեպքում բացակայում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դասական «գործատու»-«աշխատող» հարաբերությունները:

Ըստ այդմ, բաժնետիրական ընկերության տնօրենի և ընկերության միջև հարաբերությունները չեն կարող դիտարկվել որպես զուտ աշխատանքային հարաբերություններ, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ: Հետևաբար բաժնետիրական ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագրի լուծումը, պայմանավորված լինելով բաժնետերերի իրավունքներով և շահերով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ **գործատուի նախաձեռնությամբ** աշխատանքային պայմանագրի լուծման՝ օրենքով նախատեսված որևէ հիմք կարող է և չպարունակել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետով ամրագրված դրույթը ձևակերպված է այնպիսի բավարար ճշգրտությամբ, որը թույլ է տալիս անձանց դրան համապատասխանեցնելու իրենց վարքագիծը, այն է՝ յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Այլ կերպ ասած՝ բաժնետիրական ընկերության հետ կնքելով պայմանագիր, տնօրենը կարող է և պետք է կանխատեսի ընկերության կողմից ցանկացած ժամանակ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հնարավորության առկայությունը: Հետևաբար տվյալ դեպքում պետք է գործի այն կանխավարկածը, որ ստանձնելով ընկերության գործադիր մարմնի պաշտոնը, ֆիզիկական անձ տնօրենն արդեն իսկ տալիս է իր համաձայնությունն իր հետ կնքված պայմանագիրը ցանկացած պահի լուծելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, նույնացնելով ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունները և բաժնետիրական ընկերությունների գործունեության ոլորտում ծավալվող հարաբերությունները, ոչ ճիշտ եզրահանգման են եկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, ուստի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետի խախտման վերաբերյալ փաստարկների մասով վճռաբեկ բողոքը հիմնավոր է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու մասով Խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումը ենթակա չէր անվավեր ճանաչման, ուստի Կարինե Տիտանյանի հայցն՝ այդ պահանջի մասով, ենթակա էր մերժման: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինե Տիտանյանի հայցը ենթակա էր մերժման նաև նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասով, նկատի ունենալով, որ

նշված պահանջներն ածանցյալ պահանջներ են, անմիջականորեն պայմանավորված են Խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշման իրավաչափությամբ, ուստի և հիմնական պահանջի մերժման պարագայում, մերժման էին ենթակա նաև վերը նշված ածանցյալ պահանջները:

Ինչ վերաբերում է վերջնահաշվարկի գումարի բռնագանձման պահանջին, ապա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, սահմանված կարգով լրացնել աշխատողի աշխատանքային գրքույկն ու հանձնել նրան:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ աշխատողի հետ լրիվ վերջնահաշվարկը գործատուն կատարում է բացառապես վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվելու (աշխատանքային հարաբերությունները դադարելու) դեպքում և գործատուի պարտականությունն է այդ վերջնահաշվարկը կատարել աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Ընդ որում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն ընկերության տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում վերջնահաշվարկի հարաբերությունների վերաբերյալ որևէ նորմ չի պարունակում, ուստի նշված հարցի կապակցությամբ կիրառման ենթակա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերը նշված հոդվածները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը հաշվարկել և Դատարանի դեպոզիտ հաշվին է փոխանցել Կարինե Տիտանյանի վերջնահաշվարկի և վերջնահաշվարկը սահմանված ժամկետում չվճարելու համար օրենքով նախատեսված տուժանքի գումարները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն ընդունել է վերջնահաշվարկի գումարը և այն սահմանված ժամկետում չվճարելու համար օրենքով նախատեսված տուժանքը բռնագանձելու պահանջները, հետևաբար ստորադաս դատարանների եզրահանգումները վերջնահաշվարկի գումարի բռնագանձման պահանջը բավարարելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանը համարում է հիմնավոր:

Վերը նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկե-

տում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացուցիչը վերաքննիչ բողոք բերելու համար վճարել է 67.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքի համար վճարել է 97.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, իսկ տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում հայցը՝ որոշումն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասով, ենթակա է մերժման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը, 30.000 ՀՀ դրամի չափով՝ որպես վերաքննիչ բողոքի և 60.000 ՀՀ դրամի չափով՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար, ենթակա է բռնագանձման Կարինե Տիտանյանից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014 թվականի որոշման՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.08.2014 թվականի վճիռը՝ հայցը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասով բավարարելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասերը, և այդ մասերով այն փոփոխել՝ հայցն այդ մասերով մերժել:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Կարինե Տիտանյանից հօգուտ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0033/04/13
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ն. Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ/0033/04/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սարգիս Գասպարյանի ներկայացուցիչ Գոռ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.09.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի <<ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Սարգիս Գասպարյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Սարգիս Գասպարյանին ճանաչել սնանկ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.03.2014 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) 10.06.2014 թվականի որոշմամբ հաստատվել է Սարգիս Գասպարյանի պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.09.2014 թվականի որոշմամբ Սարգիս Գասպարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.06.2014 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սարգիս Գասպարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատել է առանց Սարգիս Գասպարյանի ներկայացրած առարկությունները քննարկելու: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի (այսուհետ՝ Կառավարիչ) կողմից ներկայացված նախնական ցուցակը Սարգիս Գասպարյանը ստացել է 04.06.2014 թվականին և 10.06.2014 թվականի փոստային առաքմամբ Դատարան է ուղարկել իր կողմից կազմված առարկությունը: Այսինքն՝ Կառավարչի կողմից պարտատերերի պահանջների նախնական ցուցակը ստանալուց հետո առաջնորդվելով օրենսդրության պահանջներով՝ Սարգիս Գասպարյանը 7-օրյա ժամկետում Դատարան է ներկայացրել իր առարկությունը: Մինչդեռ Դատարանը Սարգիս Գասպարյանի պահանջների վերջնական ցուցակը հաստատել է առանց վերջինիս կողմից ներկայացված առարկությունները քննարկելու և Բանկի կողմից ներկայացված պահանջի օրինականությունը պարզելու, ինչը, տվյալ դեպքում, Սարգիս Գասպարյանին զրկել է իր իրավունքների պատշաճ իրականացման հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.09.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոք բերած անձի այն փաստարկը, որ Դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատել է առանց իր կողմից ներկայացված առարկությունները քննարկելու, դատական նիստ հրավիրելու և Բանկի կողմից ներկայացված անօրինական պահանջի օրինականությունը պարզելու, իրականությանը չեն համապատասխանում, զուրկ են իրավական և փաստական հիմնավորումներից:

Մասնավորապես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ գործող օրենսդրությունը հստակ սահմանել է պահանջների նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ ներկայացնելու ժամկետը, այն է՝ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում:

Ակնհայտ է, որ պարտապան Սարգիս Գասպարյանը, չնայած իր առարկությունները դատարան ներկայացնելու հնարավորության հանգամանքին, պարտատերերի պահանջների նախնական ցուցակի վերաբերյալ հայտարարության հրապարակումից հետո յոթ օրվա ընթացքում դատարան չի ներկայացրել պարտատերերի պահանջների նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ, իր դիրքորոշումը չի հայտնել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ժամանակ:

Միաժամանակ վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ յոթօրյա ժամկետի ընթացքը պետք է հոսի իր կողմից ծրարը ստանալու պահից, նույնպես զուրկ է փաստական և իրավական հիմնավորումներից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.03.2014 թվականի վճռով Սարգիս Գասպարյանը ճանաչվել է սնանկ **(Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 166-175):**

2) Դատարանի 14.04.2014 թվականի որոշմամբ Սարգիս Գասպարյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Տիգրան Հարությունյանը (այսուհետ՝ Կառավարիչ) **(Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 4-5):**

3) Կառավարիչը պարտապան Սարգիս Գասպարյանի սնանկության գործով պար-

տատերերի պահանջների նախնական ցուցակը 30.05.2014 թվականին հրապարակել է <<www.azdarar.am>> ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և 31.05.2014 թվականին «Նովոյե Վրեմյա» թերթի 31.05.2014 թվականի համարում **(Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 165-166, 172)**:

4) Կառավարիչը պարտապան Սարգիս Գասպարյանին սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակը փոստային առաքման եղանակով ուղարկել է 30.05.2014 թվականին **(Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 162)**:

5) Կառավարիչը պարտապան Սարգիս Գասպարյանի պարտատերերի պահանջների նախնական ցուցակը 04.06.2014 թվականին ներկայացրել է Դատարան՝ միջնորդելով հաստատել այն **(Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 153)**:

6) Սույն գործով չի վիճարկվել փաստն այն մասին, որ Կառավարչի կողմից պարտապան Սարգիս Գասպարյանին ուղարկված պարտատերերի պահանջների նախնական ցուցակը Սարգիս Գասպարյանը փոստային առաքման եղանակով ստացել է 04.06.2014 թվականին:

7) Կառավարչի կողմից ներկայացված պարտատերերի պահանջների նախնական ցուցակի դեմ իր առարկությունը Սարգիս Գասպարյանը փոստային առաքմամբ Դատարան է ներկայացրել 10.06.2014 թվականին **(Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 195):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պարտապանի համար սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություններ ներկայացնելու յոթօրյա ժամկետի ընթացքը սահմանվում է սնանկության կառավարչի կողմից սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակը մամուլում հրապարակելուց, թե± պարտապանի կողմից այն ստանալուց հետո:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքովև նույն օրենքով սահմանված կարգով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքով, ապասնանկությանգործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում (**բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների**) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները, առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների դեմ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է դատավարությունում կողմերի մրցակցության սկզբունքի ապահովմանը՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի իրացման կարևոր նախապայման: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության իմաստով» սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է, որն ուղղված է կողմերի դատավարական իրավունքների լիարժեք իրականացման ապահովմանը: Այսինքն՝ այն պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին (գործին մասնակցող անձանց) տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*տե՛ս, օրինակ, «Դավիթ առևտրի տուն» ՓԲՀ-ն ընդդեմ «Դվին կոնցեռն» թիվ 3-59(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով *(տե՛ս, Լիլիթ Գևորքովան ընդդեմ Սվետլանա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի իրավական մեկնաբանմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում,

պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասինտվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին(վերջնական ցուցակ):

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածի 7–րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասինտվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը, առարկությունն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասինկառավարչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասինտվյալներ հրապարակող մամուլում՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով: Նույն հոդվածի 8–րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ կառավարիչը պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, **պահանջների նախնական ցուցակը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին** և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասինտվյալներ հրապարակող մամուլում: Առանձնացնելով պարտապանին և 5 խոշոր պարտատերերին՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել սնանկության վարույթի ընթացքում այս սուբյեկտների համար սահմանելու առանձին կարգավիճակ՝ հաշվի առնելով սնանկության վարույթի հետագա ընթացքի վրա վերոհիշյալ սուբյեկտների հնարավոր ազդեցությունը, մասնավորապես՝ պահանջների դեմ պարտապանի կողմից հնարավորինս հիմնավորված առարկություններ ներկայացնելու հնարավորության ապահովումը: Հետևաբար կառավարչի պարտականությունն է ոչ միայն իրավաբանական անձանց պետական գրանցման մասինտվյալներ հրապարակող մամուլում պահանջների նախնական ցուցակի հրապարակումը, այլև դրա պատշաճ ներկայացումը վերը նշված կողմերին, որպեսզի սնանկության վարույթի ընթացքում լիարժեք ապահովվեն կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության վարույթում կառավարչի կողմից պահանջների նախնական ցուցակը պարտապանին ուղարկելը չպետք է կրի ձևական բնույթ: Մասնավորապես՝ կառավարիչը պահանջների նախնական ցուցակը պարտապանին ուղարկելու և այն իրավաբանական անձանց պետական գրանցման մասինտվյալներ հրապարակող մամուլում հրապարակելու իր իրավունքը պետք է իրականացնի այնպես, որպեսզի ապահովվի «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածի հիմքով հրապարակումից հետո՝ 7 օրվա ընթացքում, նախնական ցուցակի դեմ առարկություններ ներկայացնելու պարտապանի իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանները յուրաքանչյուր դեպքում պարտատերի նախնական ցուցակը հաստատելու հարցը քննելիս և այդ ցուցակի դեմ պարտապանի կողմից առարկությունները սահմանված ժամկետում ներկայացված լինելու կամ չլինելու հարցը պարզելիս պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները՝

ա) ճիշտ է պարտապանը ստացել կառավարչի կողմից ուղարկված նախնական ցուցակը և ճիշտ է նախնական ցուցակը կառավարչի կողմից հրապարակվել մամուլում,

բ) արդյոք այդ պայմաններում հնարավոր է եղել պարտապանի՝ սահմանված ժամկետում առարկություններ ներկայացնելու իրավունքի իրացումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.03.2014 թվականի վճռով Սարգիս Գասպարյանը ճանաչվել է սնանկ: Դատարանի 14.04.2014 թվականի որոշմամբ Սարգիս Գասպարյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Տիգրան Հարությունյանը: Սարգիս Գասպարյանի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանը պարտապան Սարգիս Գասպարյանի սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակը 30.05.2014 թվականին հրապարակել է <<www.azdarar.am>> ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ 31.05.2014 թվականին՝ «Նովոյե Վրեմյա» թերթի 31.05.2014 թվականի համարում: Սարգիս Գասպարյանի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանը պարտապան Սարգիս Գասպարյանին սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակը փոստային առաքման եղանակով ուղարկել է 30.05.2014 թվականին: Սարգիս Գասպարյանի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանը պարտապան Սարգիս Գասպարյանի պարտատերերի պահանջների նախնական ցուցակը 04.06.2014 թվականին ներկայացրել է Դատարան՝ միջնորդելով հաստատել այն: Մնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի կողմից պարտապան Սարգիս Գասպարյանին ուղարկված պարտատերերի պահանջների նախնական ցուցակը վերջինս ստացել է 04.06.2014 թվականին: Սարգիս Գասպարյանը սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի կողմից ներկայացված պարտատերերի պահանջների նախնական ցուցակի դեմ Դատարանին փոստային առաքմամբ առարկություն է ներկայացրել 10.06.2014 թվականին:

Դատարանը սույն գործով որոշում կայացնելիս պատճառաբանել է, որ ««Մնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում կառավարիչը, պարտապանը և պարտատերը առարկություններ չեն ներկայացրել, ուստի պահանջների նախնական ցուցակը ենթակա է հաստատման»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «անհիմն է համարում բողոք բերած անձի փաստարկները՝ առարկություններն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու և համապատասխանաբար Դատարանի կողմից այն քննարկման առարկա դարձված չլինելու վերաբերյալ, քանի որ գործով հաստատվում է, որ բողոք բերած անձը առարկությունները Դատարանին ուղարկել է փոստային առաքմամբ 10.06.2014 թվականին, այսինքն՝ հաշվված Կառավարչի նախնական ցուցակը ստանալու օրվանից՝ 04.06.2014 թվականից հետո՝ յոթօրյա ժամկետում, մինչդեռ օրենսդիրն առարկություն ներկայացնելու ժամկետ տվյալ դեպքում սահմանում է հաշվված հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պահանջների նախնական ցուցակը Կառավարչի կողմից Սարգիս Գասպարյանին փոստային առաքման եղանակով ուղարկվել է 30.05.2014 թվականին, որը վերջինս ստացել է 04.06.2014 թվականին: Կառավարիչը նախնական ցուցակը մամուլում հրապարակել է 31.05.2014 թվականին, իսկ արդեն 04.06.2014 թվականին դիմել է Դատարան՝ միջնորդելով հաստատել նշված ցուցակը: Սարգիս Գասպարյանը նշված ցուցակի դեմ առարկություն ներկայացրել է այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում՝ 10.06.2014 թվականին: Վճռաբեկ դատարանը, համադրելով վերը նշված փաստական հանգամանքները, գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել պարտապանի՝ առարկություն ներկայացնելու իր իրավունքն իրացնելու իրական հնարավորությունը՝ վերջինիս զրկելով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.09.2014 թվականի որոշումը և գործը՝ Սարգիս Գասպարյանի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասով, ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0031/04/13
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ի. Վարդանյան
Լ. Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ **ՇԴ/0031/04/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Վարդան Բեժանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի ընդդեմ Ջորակ Հովհաննիսյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ջորակ Հովհաննիսյանին սնանկ ճանաչել:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.08.2013 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2013 թվականի որոշմամբ հաստատվել է Ջորակ Հովհաննիսյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

Ջորակ Հովհաննիսյանը 11.03.2014 թվականին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր, ըստ որի՝ իր ունեցած պարտավորությունները նախատեսում է մարել մեկ տարի ժամկետում:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 01.04.2014 թվականի որոշմամբ հաստատվել է Ջորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.06.2014 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.04.2014 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Մանկության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 74-րդ և 75-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, ծանուցելով Բանկին Ջորակ Հովհաննիսյանի ֆինանսական առողջացման ծրագրի մասին, սահմանել է, որ դրա դեմ առարկություն ներկայացնելու վերջնաժամկետը 31.03.2014 թվականն է, և Բանկը, օգտվելով օրենսդրությամբ ընձեռված հնարավորությունից, 31.03.2014 թվականին ներկայացրել է իր առարկությունը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերաքննիչ բողոքին կից ներկայացված առարկությունը Դատարան ուղարկելու փաստը հավաստող 31.03.2014 թվականի փոստային անդորրագիրը, հանգել է անհիմն հետևության առ այն, որ Բանկի կողմից առարկությունը ներկայացվել է 07.04.2014 թվականին:

2) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մանկության մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ջորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ապացույցները բավարար հիմք չեն տալիս հաստատելու վերջինիս ֆինանսական առողջացման ծրագիրը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.06.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ մերժել Ջորակ Հովհաննիսյանի ֆինանսական առողջացման ծրագիրը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ջորակ Հովհաննիսյանը 11.03.2014 թվականին ներկայացրել է ֆինանսական առողջացման ծրագիր՝ 12 ամսվա վճարման ժամանակացույցով **(Հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 32-70)**:

2) Դատարանը 11.03.2014 թվականի թիվ ՇԴ/0031/04/13 գրությամբ Բանկին տեղեկացրել է, որ ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Բանկը դրանք կարող է Դատարան ներկայացնել մինչև 31.03.2014 թվականը **(Հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 71)**:

3) Բանկը՝ որպես թիվ ՇԴ/0031/04/13 սնանկության գործով պարտատեր, 28.03.2014 թվականին կազմել է Ջորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն, որը փոստային բաժանմունք է հանձնել 31.03.2014 թվականին **(Հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 88-93)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ կետը սխալ մեկնաբանելու և կիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սնանկության վարույթի շրջանակներում ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու ժամկետների խնդրին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ֆինանսական առողջացման ծրագիրն ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, դատարանը որոշում չի ընդունել ֆինանսական առողջացման ծրագիրն առանց քննարկման թողնելու մասին, ապա կառավարչին, պարտապանին և իրեն հայտնի բոլոր պարտատերերին ծանուցում է դատարանում ֆինանսական առողջացման ծրագրի առկայության և ծրագրին նրանց ծանոթանալու իրավունքի մասին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարիչը ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու՝ նույն օրենքով կամ երկարաձգման մասին դատարանի որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում հրավիրում է ժողով ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով, որին հրավիրվում է պարտապանը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը համարվում է ընդունված, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է պարտատերերի ձայների պարզ մեծամասնությունը, ինչիմասինժողովը կայացնում է որոշում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը՝ ժողովի որոշմամբ ընդունվելու և նույն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, հաստատվում է դատարանի որոշմամբ: Հակառակ դեպքում դատարանը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրը մերժելու և պարտապանին լուծարելումասին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի «Ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները» վերտառությամբ 11-րդ գլխում տեղ գտած 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիր կարող է ներկայացնել միայն պարտապանը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից չի քվեարկվում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատիրոջ (պարտատերերի) կողմից կարող է վիճարկվել, եթե՝

ա) այն չի համապատասխանում նույն օրենքով սահմանված պահանջներին.

բ) ծրագրի ժամկետը պակաս է 3 տարուց, և (որի արդյունքում) պարտատերերն իրենց պահանջների ամբողջական բավարարում չեն ստանում:

Վերը նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը նպատակ է հետապնդում հնարավորություն ընձեռելու բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել կենսունակությունը:

Միևնույն ժամանակ վկայակոչված իրավակարգավորումը կոչված է ապահովելու պարտատերերի շահերի պաշտպանությունը՝ այդ իսկ նկատառումով սահմանելով ֆինանսական առողջացման ծրագրին պարտատերերի ծանոթանալու իրավունքը, իրավաբանական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից քննարկելու և քվեարկությամբ ընդունելու կամ չընդունելու հնարավորությունը: Ընդ որում, օրենսդիրը «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանել է նաև իրավաբանական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողից քննարկելու և դրա վերաբերյալ քվեարկության միջոցով դիրքորոշումը հայտնելու ժամկետը:

Վերոգրյալով հանդերձ, ֆիզիկական անձի սնանկության առանձնահատկություններից ելնելով, օրենսդիրը վերջինիս ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկության հնարավորություն չի նախատեսել, այդուհանդերձ, հնարավորություն է տվել պարտատերերին՝ ծանոթանալու ֆինանսական առողջացման ծրագրին, և իրենց իսկ շահերի պաշտպանությունից ելնելով՝ նաև վիճարկել այն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մսանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները, նախկինում կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մսանկության մասին» ՀՀ օրենքով *(տե՛ս, «Դվին Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանն ընդդեմ «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ի թիվ ԵՇԴ/0023/04/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրին ծանոթանալու և այն վիճարկելու համար «Մսանկության մասին» ՀՀ օրենքով որևէ ժամկետ սահմանված չէ, հետևաբար դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումները, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին կետը, համաձայն որի՝ դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում: Դրանց բացակայության դեպքում դատավարական գործողությունների կատարման ժամկետները սահմանում է դատարանը:

Հաշվի առնելով, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկություն օրենքը չի նախատեսում, և ֆիզիկական անձ պարտապանի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու դեպքում պարտատերերի շահերի պաշտպանության իրականացումը նշված փուլում դրսևորվում է միայն վերջիններիս կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը վիճարկելու հնարավորությամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանները ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վիճարկելու ժամկետները սահմանելիս պետք է հաշվի առնեն պարտատերերի շահերի պաշտպանությունը՝ այդ իրավունքի իրականացման համար ապահովելով իրական երաշխիքներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 13.08.2013 թվականի վճռով Ջորակ Հովհաննիսյանը ճանաչվել է սնանկ: Ջորակ Հովհաննիսյանը 11.03.2014 թվականին ներկայացրել է ֆինանսական առողջացման ծրագիր՝ 12 ամսվա վճարման ժամանակացույցով: Դատարանը 11.03.2014 թվականի թիվ ՇԴ/0031/04/13 գրությամբ Բանկին տեղեկացրել է, որ ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Բանկը դրանք կարող է Դատարան ներկայացնել մինչև 31.03.2014 թվականը: Բանկը 31.03.2014 թվականին փոստային կապի միջոցով Դատարան է ուղարկել առարկություն՝ Ջորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի դեմ:

Դատարանը Ջորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին 01.04.2014 թվականի որոշմամբ պատճառաբանել է, որ պարտապան Ջորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը համապատասխանում է «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին և չի խախտում այլ անձանց շահերը, և բացի այդ, ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի մասին Դատարանի կողմից ծանուցվել են պարտատերերը և Կառավարիչը, սակայն վերջիններիս կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կապակցությամբ առարկություններ չեն ներկայացվել:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները, մերժել է Բանկի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ Բանկը զրկված չի եղել «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու հնարավորությունից, «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ի թիվս այլ պարտատերերի, ներգրավվել է սնանկության գործընթացին, այդուհանդերձ, պատշաճ ծանուցված լինելով մինչև 31.03.2014 թվականն օրենքով սահմանված կարգով ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություններ ներկայացնելու հնարավորության մասին, նշված ժամկետում որևէ առարկություն չի հայտնել ֆինանսական առողջաց-

ման ծրագրի վերաբերյալ, ավելին, ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ իր առարկությունները ներկայացրել է պարտապան Ձորակ Հովհաննիսյանի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելուց հետո, այն է՝ 07.04.2014 թվականին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը սույն գործի փաստերի հաշվառմամբ արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավարական գործողություններ կատարելու համար ժամկետները որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել: Նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավարական գործողությունը կարող է կատարվել **մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը**:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործողությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված **փաստաթղթերը կապի կազմակերպությանը հանձնելու իրավական հետևանքները հավասարեցվում են դրանք համապատասխան հասցեատիրոջը տալուն** *(տե՛ս, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն ընդդեմ Տիգրան Հարությունյանի թիվ 3-1614(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):*

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բանկը Դատարանի նախանշած ժամկետում՝ 31.03.2014 թվականին, Ձորակ Հովհաննիսյանի կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկությունը փոստային ծառայություն ներկայացնելով, պատշաճ կերպով իրացրել է օրենսդրությամբ իրեն տրված՝ ֆինանսական առողջացման ծրագիրը սահմանված ժամկետում վիճարկելու իր իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերաքննիչ ատյանում գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու պահին գործող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ

նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս, Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն Խաչատրյանի և այլոց թիվ ԿԴ3/0026/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):*

Մինդեռ Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը, նշել է, որ վերջինս սահմանված ժամկետում առարկություն չի հայտնել ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ՝ առանց պատճառաբանելու, թե ինչու փոստային ծառայության կողմից Բանկի ծրարի վրա դրված կնիքի վրա առկա 31.03.2014 թվագրումը հիմք չի ընդունել սահմանված ժամկետում Բանկի կողմից առարկություն ներկայացրած լինելու փաստը հաստատելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փոստային ծառայության կողմից Բանկի ծրարի վրա դրված կնիքի վրա առկա 31.03.2014 թվագրումը հաստատում է Բանկի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ առարկությունը Դատարան սահմանած ժամկետում ուղարկելու հանգամանքը, որպիսի պայմաններում անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ Բանկը, ծանուցված լինելով մինչև 31.03.2014 թվականը ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություններ ներկայացնելու հնարավորության մասին, սահմանված ժամկետում որևէ առարկություն չի հայտնել ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ, և նման պայմաններում Դատարանը, իրավացիորեն փաստելով, որ ֆինանսական առողջացման ծրագիրը համապատասխանում է «Մնանկության մասին» ՀՀ օրենքով ֆինանսական առողջացման ծրագրերին ներկայացվող պահանջներին, եկել է հետևության առ այն, որ Ջորակ Հովհաննիսյանի ֆինանսական առողջացման ծրագիրը հարկ է հաստատել:

Սփորադա դատարանների կողմից ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ Բանկի կողմից ներկայացված առարկությունը չգնահատելու տեսքով դատավարական իրավունքի խախտում թույլ տալու պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս հիմքին Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար և գործը՝ պարտապան Ջորակ Հովհաննիսյանի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասով, նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240- 241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2014 թվականի որոշումը և գործը՝ պարտապան Ջորակ Հովհաննիսյանի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասով, ուղարկել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1873/02/14
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1873/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Դավիթ Դանելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ «ԱԼՏԵ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Սարգիս Աղաբեկյանի, Սիմա Ղուկասյանի, Լևիկ Աղաբեկյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությունից, Սարգիս Աղաբեկյանից, Սիմա Ղուկասյանից և Լևիկ Աղաբեկյանից բռնագանձել գումար, տոկոսներ, տուգանքներ և բռնագանձումը տարածել գրավադրված գույքի վրա, ինչպես նաև լուծել դատական ծախսերի հարցը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 03.09.2014 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է՝ Ընկերությանը սնանկ ճանաչված լինելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.12.2014 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.09.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ընկերությունը և Սարգիս Աղաբեկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ, 43-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 122-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել ու գնահատել գործում առկա ապացույցները և, անտեսելով դրանք, սխալ եզրահանգման է եկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ վերահաստատել է այն նույն եզրահանգումները, որոնք կատարել է ստորադաս դատարանը: Մասնավորապես, թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը, անտեսելով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջները, մորատորիումի գործողությունը տարածել են Բանկի գումարի բռնագանձման պահանջի նկատմամբ՝ գտնելով, որ գործի վարույթը, որպես մորատորիումի տարածման հետևանք, ենթակա է կարճման:

Դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ չնայած «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը սահմանում է մորատորիումի գործողության շրջանակներում պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող (գումարի բռնագանձման) քաղաքացիական գործի վարույթի կարճման անհրաժեշտությունը, սակայն, միաժամանակ, նույն 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետում սահմանվել է այդ ընդհանուր կանոնից բացառություն, ըստ որի՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում գրավով ապահովված պարտատիրոջ պահանջների բավարարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Մինչդեռ Բանկի կողմից հարուցված հայցը և դրա արդյունքում սկսված դատական վարույթն ամբողջությամբ ընդգրկվում են վկայակոչված բացառությունների ներքո, քանի որ առկա է դատական գործընթաց, որն ուղղված է Բանկի՝ գրավով ապահովված պահանջների բավարարմանը:

Այսպիսով՝ առկա են եղել մորատորիումի գործողությունը չտարածելու (հետևաբար նաև՝ քաղաքացիական գործի վարույթը չկարճելու) համար օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ հիմքերը (նախադրյալները), այն է՝ (ա) բանկի գրավով ապահովված պարտատեր հանդիսանալը, (բ) երկու գործերը (սնանկության և գումարի բռնագանձման) քննող դատարաններին մորատորիումի գործողությունը Բանկի պահանջի նկատմամբ չտարածելու մասին ծանուցման ներկայացումը:

Մինչդեռ Դատարանը գործի վարույթը կարճել է՝ փորձելով շրջանցել վերը նշված իրավանորմի պահանջները, նշելով, որ դա «վերաբերում է բացառապես պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու գործարքներին կամ գործընթացին», ինչն էլ կրկնել է Վերաքննիչ դատարանը:

Այնինչ, «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի կիրառումը չի սահմանափակվում բացառապես գործարքների արտադատական կատարմամբ, այլև իրավանորմի բառացի տեքստը վկայում է, որ մորատորիումի գործողությունը չի տարածվում ապահովված պարտատիրոջ պահանջների բավարարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա:

Բացի այդ, Դատարանը գործի վարույթը կարճել է ոչ իրավաչափ հիմքով, քանի որ պետք է քններ կոնկրետ հայցը և կայացներ վեճը բովանդակային տեսանկյունից լուծող դատական ակտ, ինչի արդյունքում էլ խախտվել է Բանկի արդար դատաքննության իրավունքը: Այսինքն՝ տվյալ դեպքում Բանկի համար զուտ ձևական առումով արդարադատությունը հասանելի է եղել, սակայն դատարանների սխալ գործողությունների հետևանքով ըստ էության արդարադատություն (հայցի ըստ էության քննություն) չի իրականացվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1. Ընկերության վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Սույն գործով առկա է Ընկերության սնանկ ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի պայմաններում Դատարանն իրավացիորեն կարճել է գործի վարույթը: Դատարանը չէր կարող շարունակել գործի ըստ էության քննությունը և կայացնել գումարի բռնագանձման մասին վճիռ, քանի որ այդ դեպքում կխախտեր պատասխանողների՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները**:**

Այսինքն՝ նման վեճերը պետք է քննվեն սնանկության գործի շրջանակներում: Վերոնշյալ հիմքով կարճման ենթակա է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին դատարանի վարույթում քննվող (ընթացիկ) քաղաքացիական գործի վարույթը:

2.2. Սարգիս Աղաբեկյանի վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Սարգիս Աղաբեկյանը՝ որպես պատասխանող, միանում և պնդում է Ընկերության կողմից 13.05.2015 թվականին արդեն իսկ ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանում նշված դիրքորոշումը: Միաժամանակ նշել է, որ քանի դեռ Բանկի կողմից մորատորիում չտարածելու ծանուցման վերաբերյալ վերջնական դատական ակտ առկա չէր, վերջինս զրկված է եղել պատասխանողի դեմ բռնագանձման պահանջով դատարան դիմելու իրավունքից և պահանջել է Բանկի կողմից թիվ ԵԿԴ/1873/02/14 գործով ներկայացված վճռաբեկ բողոքը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և «Էսկո-Կոնցեռն» ՓԲԸ-ի միջև կնքվել են՝ ա) 03.06.2010 թվականին թիվ LGL 20100822 բանկային ծառայությունների պայմաններ, բ) 29.07.2013 թվականին թիվ LGL 20131066 վարկային ծառայության (վարկային) պայմանագիր գ) 29.07.2013 թվականին թիվ LGL 20131067 վարկային ծառայության (վարկային) պայմանագիր **(հատոր 1-ին, գ.թ. 16-24).**

2) Բանկի, Սարգիս Աղաբեկյանի և Ընկերության միջև 29.07.2013 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ LGL 20131069, թիվ LGL 20131073 և թիվ LGL 20131070 պայմանագրերով Սարգիս Աղաբեկյանը Բանկի օգտին ի ապահովումն վերը նշված վարկային պայմանագրերով Ընկերության ստանձնած պարտավորությունների գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը: Նշված պայմանագրերից ծագող Բանկի գրավի իրավունքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ենթարկվել է պետական գրանցման **(հատոր 1-ին, գ.թ. 26-29, 37-39, 43-44, 50).**

3) Բանկի, Լևիկ Աղաբեկյանի, Սիմա Ղուկասյանի (գրավատու) և Ընկերության միջև 29.07.2013 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ LGL 20131071 պայմանագրով Լևիկ Աղաբեկյանը, Սիմա Ղուկասյանը Բանկի օգտին ի ապահովումն վերը նշված վարկային պայմանագրերով Ընկերության ստանձնած պարտավորությունների գրավադրել են իրենց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը: Նշված պայմանագրից ծագող Բանկի գրավի իրավունքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ենթարկվել է պետական գրանցման **(հատոր 1-ին, գ.թ. 51-53).**

4) ՀՀ իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականի (ներդիր թիվ 010) և կանոնադրության փոփոխության համաձայն՝ «Էսկո-Կոնցեռն» ՓԲԸ-ն վերանվանվել է «ԱԼՏԷ» փակ բաժնետիրական ընկերություն **(հատոր 1-ին, գ.թ. 68-69).**

5) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.03.2014 թվականի թիվ ԵԿԴ/0009/04/14 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ **(հատոր 1-ին, գ.թ. 104-105).**

6) Հայցվորի ներկայացուցիչը 09.06.2014 թվականի մորատորիումի գործողությունը չտարածելու մասին դիմումով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0009/04/14 գործը քննող դատավոր Կ. Պետրոսյանին ծանուցել է Բանկի կողմից ընդդեմ Ընկերության՝ վերջինիս նկատմամբ ունեցած պահանջի նկատմամբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 75-80):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում արդյո՞ք վերջինս կարող է իր պահանջների բավարարման համար դատական կամ արտադատական կարգով բռնագանձում տարածել գրավադրված գույքի վրա:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապահովված պահանջների բավարարման առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները կարգավորվում են նույն օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածներով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման կամ այլ կերպ ասած՝ մորատորիումի ինստիտուտը: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է: Այն առաջնահերթ ուղղված է **պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն**:

Վկայակոչված հոդվածը, ի թիվս այլ իրավակարգավորումների (օրինակ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, արգելվում է պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթի սկսումը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով և այլն), 2-րդ մասի «գ» կետով նախատեսել է, որ պարտա-

պանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ պարտապանի մասով:

Նշված քաղաքացիական գործը կարող է վերսկսվել սնանկության գործի ավարտից հետո պարտապանի ֆինանսապես առողջացման դեպքում: Հակառակ դեպքում դատարանի սնանկության գործն ավարտելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը հիմք է քաղաքացիական գործի վարույթի կարճման համար՝ լուծարված պարտապանի մասով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետին և արձանագրել է, որ դրանում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը, այն է՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը *(տե՛ս, օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Սպիտակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ-ի թիվ 3-1717(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության *(տե՛ս, Սարինե Ավետիսյանն ընդդեմ Արտեմ Ավետիսյանի թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը)*:

Վերոգրյալի հաշվառմամբ, միաժամանակ նկատի ունենալով բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական խնդիրը. ի՞նչ հետևանքներ կարող է առաջացնել պարտապանի սնանկությունը՝ գրավով ապահովված պարտատիրոջ համար և ի՞նչ կարգով պարտատերը կարող է ստանալ իր ապահովված պահանջների բավարարում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝մորատորիումի գործողությունը չի տարածվում գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասինծանուցել է դատարանին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են **բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման** (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու) հաշվին:

Այդ դեպքում պարտատերերն անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չեն կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մորատո-

րիում չտարածելու մասին դատարանին չծանուցած գրավով ապահովված պարտատերն ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր ապահովված պահանջների բավարարումն ստանում է նույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը կարող է պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունը առաջնահերթ կերպով բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը չի կարող մասնակցել պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չգրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մինչև գրավադրված գույքի իրացումը, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին, բացառությամբ դատարանի որոշմամբ համարժեք պաշտպանության տրամադրման դեպքերի: Եթե գրավադրված գույքի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակման) կամ վնասման արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից, ապա ապահովված պարտատերը ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք՝ այդ նվազման չափով:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե համապատասխան գրավի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե գրավի առարկայի շուկայական արժեքը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի առարկան՝ փոխհատուցելով այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի 5 տոկոսի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

ՀՀ վճռաբեկ դատարանը *«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կալաչ» ՍՊԸ-ի և Սիլվա Համբարձումյանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականին կայացրած որոշմամբ* վկայակոչված հոդվածների դրույթների վերլուծության արդյունքում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն **միայն այն դեպքում**, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով ապահով-

ված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ **շրջանցելով սնանկության գործով վարույթը**, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում՝ գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում:

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ թե՛ սնանկության վարույթից դուրս, թե՛ սնանկության վարույթի շրջանակներում բավարարում ստանալու եղանակներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Այսպես, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ **բացառապես գրավադրված գույքի հաշվին**, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Մինչդեռ այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության վարույթի շրջանակներում իր պահանջների բավարարում ստանալու եղանակը, ապա գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և այս դեպքում գրավով ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Այդ իսկ նկատառումով օրենսդիրը, գրավով ապահովված պարտատիրոջը հնարավորություն ընձեռելով կամովին ընտրելու իր պահանջների բավարարման եղանակը՝ շրջանցելով սնանկության վարույթը, կամ այդպիսի բավարարում ստանալ սնանկության վարույթի շրջանակներում, այդուհանդերձ, նախատեսել է որոշակի սահմանափակումներ: Այսպես՝ սնանկության վարույթի շրջանակներից դուրս իր պահանջների բավարարում ստանալու՝ գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքն օրենսդիրը սահմանափակել է գրավի արժեքի սահմաններով, ի տարբերություն քաղաքացիական շրջանառության բնականոն պայմանների, երբ գրավով ապահովված պարտատերն իրավունք ունի գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն իր պահանջները բավարարելու համար բավարար չլինելու պայմաններում պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ կետ): Միաժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջն իրավունք վերապահելով պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունն առաջնահերթ բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, պահանջի բավարարումը գրավից ազատ գույքից օրենսդիրը սահմանափակել է այնքան, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին: Ընդ

որում, գրավից ազատ գույքի հաշվին գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել միայն որպես չապահովված պահանջ՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից չբավարարված պահանջի մասով՝ «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և պայմաններով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով գրավով ապահովված պահանջի պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարում՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, և այդ բավարարման չափը սահմանափակելով բացառապես գրավադրված գույքի արժեքով, որևէ կերպ չի սահմանափակել գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված իր պահանջների բավարարման իրավունքի իրացման՝ օրենսդրությամբ սահմանված եղանակների ընտրության հնարավորությունը: Մասնավորապես՝ սահմանափակված չէ գրավադրված գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ դատական կամ արտադատական կարգով իրացնելու հնարավորությունը: Ավելին, «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը, սահմանելով, որ գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթից դուրս բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման հաշվին, մասնավորեցնելով նշել է՝ «այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու» հաշվին, ինչը նշանակում է, որ դատական կարգով գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորությունն ինքնին ենթադրվում է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ գրավով ապահովված պահանջի պարտատերն օգտվում է իր պահանջի բավարարումը սնանկության վարույթի շրջանակներից դուրս ստանալու՝ օրենքով իրեն վերապահված իրավունքից, վերջինս հնարավորություն ունի գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավադրված գույքի իրացման կանոններին համապատասխան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով սահմանված՝ մորատորիումի գործողության տարածման բացառությունը հնարավորություն է տալիս գրավով ապահովված պարտատիրոջը մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում սնանկության վարույթը շրջանցելով գրավով ապահովված պահանջների համար **դրամական** կամ այլ բավարարում ստանալ, կամ գրավով ապահովված պահանջների բավարարման համար կնքել ցանկացած գործարք կամ իրականացնել այդպիսի գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն կամ գործընթաց:

Հետևաբար, եթե տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու մասին՝ գրավով ապահովված պահանջի պարտատերն ապահովել է սնանկության վարույթը շրջանցելով իր պահանջների բավարարում ստանալու համար օրենքով նախատեսված պարտադիր պայմանի կատարումը, այն է՝ ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին, ապա վերջինիս՝ գրավադրված գույքի արժեքի սահմաններում պահանջների դրամական կամ այլ բավարարում ստանալու իրավունքի իրացման՝ պարտատիրոջ կողմից ընտրված եղանակի վրա այլևս մորատորիումի գործողությունը չի կարող տարածվել, այդ թվում՝ չեն կարող գործել «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները, այն է՝ չի կարող գործել **պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով** որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթ սկսելու արգելքը, ինչպես նաև չի կարող կարճվել **գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով** քաղաքացիական գործի վարույթը, որը վերաբերում է գրավադրված գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջի բավարարմանը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վերը նշված կարգավորումները հավասարապես կիրառելի են նաև այն դեպքերում, երբ սնանկ ճանաչված պարտապա-

նի պարտավորությունների ապահովման համար գրավադրվել է երրորդ անձին պատկանող գույք: Նման եզրահանգումը բխում է «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված **մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատիրոջ առջև** ստանձնած պարտավորության համար **գրավադրված գույքը (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում**, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում նույնօրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ընկերության միջև կնքվել են վարկային ծառայության պայմանագրեր, իսկ ի ապահովումն վարկային պարտավորությունների կատարման՝ Բանկի, Ընկերության և սույն գործով մյուս պատասխանողների միջև կնքվել են անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագրեր:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.03.2014 թվականի թիվ ԵԿԴ/0009/04/14 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ներկայացված՝ Բանկի 09.06.2014 թվականի գրությամբ վերջինս ներկայացրել է մորատորիումի գործողություն չտարածելու մասին ծանուցում:

Դատարանը, պատճառաբանելով, որ սույն վեճը վերաբերում է սնանկ ճանաչված Ընկերության գույքային պարտավորություններին, «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով կարճել է գործի վարույթը:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով գործի վարույթը կարճելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումները, նշել է, որ գրավով ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին կարող է ծանուցել միայն սնանկության գործի վարույթի շրջանակներում: Վերաքննիչ դատարանը գտել է, որ եթե գրավով ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու վերաբերյալ, ապա մորատորիումը չի տարածվում բացառապես պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու գործարքների կամ գործարքներին ուղղված գործողությունների կամ գործընթացների վրա:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանելով պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը, միաժամանակ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանել է մորատորիումի գործողությունը չտարածելու դեպքերը, որոնցից է գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելումասինծանուցել է դատարանին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Բանկը դատարան է ներկայացրել մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցում, այսինքն՝ ապահովել է «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված այն պարտադիր պայմանի կատարումը, որը հնարավորություն է ընձեռնում վերջինիս՝ որպես գրավով ապահովված պարտատիրոջ պահանջների վրա չտարածել մորատորիումի գործողությունը, հետևաբար նաև՝ սնանկության վարույթը շրջանցելով իր պահանջների բավարարում ստանալ ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածների սխալ մեկնաբանության արդյունքում սխալ են գնահատել նաև Բանկի կողմից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ներկայացված մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումը, ինչն ազդել է գործի

ելքի վրա, հետևաբար անհրաժեշտ է գործն ուղարկել նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխաններում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1446/02/13**
2015թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1446/02/13
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.03.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Էմմել Սքայ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանի ընդդեմ Բանկի, երրորդ անձինք «Էդ Սքայ» ՍՊԸ-ի, «Շարլոտա» ՍՊԸ-ի՝ 655.416.000 ՀՀ դրամ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանը պահանջել է Բանկից բռնագանձել 655.416.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 19.11.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.03.2015 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.11.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, նույն հոդվածի 3-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, 51-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ և 54-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ու գնահատման չի ենթարկել գործում առկա բոլոր ապացույցները և, անտեսելով դրանք, սխալ եզրահանգման է եկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ:

Հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասը սույն գործով կիրառման ենթակա չէ, այլ փոխարենը կիրառման է ենթակա նույն հոդվածի 1-ին մասի «դ» կետը, քանի որ ներկայացված հայցապահանջը վերաբերում է ոչ թե փոխանցված գույքի կամ դրա արժեքի հետ պահանջին, այլ կատարված գործարքի, փոխանցման և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասին:

Տվյալ դեպքում «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում նշված «վնաս» հասկացության բովանդակությունը կազմում է հենց գույքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերությունը: Այսինքն՝ հիշյալ դրույթով ներկայացվող պահանջը վերաբերում է օտարված (փոխանցված) գույքի շուկայական «արժեքի» հնարավոր պակասող մասին: Կառավարիչը, պարտատեր Բանկից վնասի հատուցում պահանջելով, փաստորեն պահանջում է գույքի «արժեքի» հատուցում: Նշված «արժեքն» էլ հենց «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գույքի «արժեքն» է, որը չի կարող հետ պահանջվել, քանի որ գույքը փոխանցվել է բանկի ապահովված պահանջի բավարարման համար այդ (գրավադրված) գույքի հետ կապված գործարքի (տվյալ դեպքում՝ «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրի) կատարման արդյունքում:

Ընդ որում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ հրաժարագնի կնքումը չի կարող որակվել որպես ոչ իրավաչափ, բացի այդ, բացակայում է Բանկի մեղքը: Հետևաբար վնասի առկայությունն ապացուցված չլինելու պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի դրույթները թե՛ առանձին, և թե՛ միասին չէին կարող կիրառվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.03.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վճռաբեկ բողոքի այն պատճառաբանությունները, թե Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների իրավադրույթները, հիմնավոր չեն, քանի որ Վերաքննիչ դատարանն իր որոշումը կայացրել է սույն քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ու դրանց վերաբերելի օրենքների նորմերի կիրառմամբ, ինչի արդյունքում կայացրել է պատճառաբանված և հիմնավորված որոշում: Տվյալ դեպքում համապատասխան հանգամանքների առկայության կամ բացակայության մասին թե՛ Դատարանի, և թե՛ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հիմնված են գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման արդյունքների վրա, ինչի վերաբերյալ վերջիններս կատարել են անհրաժեշտ ու տրամաբանական հետևություններ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.01.2013 թվականի թիվ ԵԷԴ/0068/04/12 օրինական ուժի մեջ մտած վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ, իսկ 25.01.2013 թվականի որոշման համաձայն՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Խաչատուր Ղահրամանյանը **(հատոր 1-ին, գ.թ. 11-15).**

2) Բանկի և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի միջև 11.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189 գլխավոր վարկային պայմանագրի 1.1-րդ կետով նախատեսված է, որ Բանկը «Էդ Սքայ» ՍՊԸ-ին կարող է տրամադրել 2.482.460 ԱՄՆ դոլարի կամ համարժեք դրամի զուգահեռ և հաջորդական վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, երաշխիքներ, ինչպես նաև թողարկել ակրեդիտիվներ, վարկեր **(հատոր 1-ին, գ.թ. 21).**

3) Բանկի և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի միջև 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189/1 ենթավարկային պայմանագրի 1.1-րդ կետով նախատեսված է, որ Բանկը «Էդ Սքայ» ՍՊԸ-ին տրամադրում է 700.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ մինչև 16.03.2015 թվականը մարման վերջնաժամկետով **(հատոր 1-ին, գ.թ. 22-25).**

4) Բանկի և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի միջև 03.06.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի209 ենթավարկային պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Բանկը «Էդ Սքայ» ՍՊԸ-ին տրամադրել է 500.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ մինչև 03.02.2012 թվականը մարման վերջնաժամկետով **(հատոր 1-ին, գ.թ. 29-33).**

5) Բանկի և «Շարլոտա» ՍՊԸ-ի միջև 22.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի192 գլխավոր վարկային պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Բանկը «Շարլոտա» ՍՊԸ-ին կարող է տրամադրել 2.482.460 ԱՄՆ դոլարի կամ համարժեք ՀՀ դրամի զուգահեռ և հաջորդական վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, երաշխիքներ, ինչպես նաև թողարկել ակրեդիտիվներ, վարկեր **(հատոր 1-ին, գ.թ. 34).**

6) Բանկի և «Շարլոտա» ՍՊԸ-ի միջև 28.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի192 վարկային գծի պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Բանկը «Շարլոտա» ՍՊԸ-ի համար բացել է վերականգնվող վարկային գիծ 600.000 ԱՄՆ դոլարի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 35-37).**

7) Բանկի, Ընկերության և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի միջև 11.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ ի ապահովումն թիվ Ե44Ի189 գլխավոր վարկային պայմանագրով Բանկի հանդեպ «Էդ Սքայ» ՍՊԸ-ի ունեցած պարտավորությունների կատարման՝ Ընկերությունը գրավադրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ հասցեներում, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ հասցեում, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ հասցեում և Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեում գտնվող անշարժ գույքերը: Նշված պայմանագրի 7.1-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը (գրավատուն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնություն է տվել և իրավունք է վերապահել Բանկին (գրավառուին) սահմանված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում, առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել պայմանագրով գրավադրված գրավի առարկայի վրա և իրացնել այն կամ վարկային պարտավորության (մայր գումար, տոկոս, տույժ, տուգանք) համապատասխան չափի դիմաց գրավի առարկան ի սեփականություն հանձնել գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին կամ ուղղակի վաճառքի ձևով այն վաճառել երրորդ անձին կամ իրացնել գրավի առարկան լիցենզավորված այլ ընկերությունների կողմից կազմակերպած հրապարակային սակարկություններում **(հատոր 1-ին, գ.թ. 26-28).**

8) Բանկի, Ընկերության և «Շարլոտա» ՍՊԸ-ի միջև 22.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի192Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ ի ապահովումն Բանկի և «Շարլոտա» ՍՊԸ-ի միջև 22.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի192 գլխավոր վարկային պայմանագրով Բանկի հանդեպ «Շարլոտա» ՍՊԸ-ի ունեցած պար-

տավորությունների կատարման՝ Ընկերությունը գրավադրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ հասցենեորում, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ հասցեում, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ հասցեում և Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեում գտնվող անշարժ գույքերը: Նշված պայմանագրի 7.1-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը (գրավատուն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնություն է տվել և իրավունք է վերապահել Բանկին (գրավառուին) սահմանված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում, առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել պայմանագրով գրավադրված գրավի առարկայի վրա և իրացնել այն կամ վարկային պարտավորության (մայր գումար, տոկոս, տույժ, տուգանք) համապատասխան չափի դիմաց գրավի առարկան ի սեփականություն հանձնել գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին կամ ուղղակի վաճառքի ձևով այն վաճառել երրորդ անձին կամ իրացնել գրավի առարկան լիցենզավորված այլ ընկերությունների կողմից կազմակերպած հրապարակային սակարկություններում **(հատոր 1-ին, գ.թ. 16-20).**

9) 21.07.2012 թվականին Բանկի, «Էդ-Սքայ» ՍՊԸ-ի, «Շարլոտա» ՍՊԸ-ի և Ընկերության միջև կնքված «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը՝ որպես գրավատու, 14.07.2012 թվականի դրությամբ «Շառլոտա» ՍՊԸ-ի կողմից Բանկի հանդեպ ունեցած 675.159,41 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ պարտավորության դիմաց և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի կողմից Բանկի հանդեպ ունեցած 1.966.224,33 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ պարտավորության դիմաց որպես սեփականություն, 750.000.000 ՀՀ դրամի դիմաց հանձնել է սեփականության իրավունքով իրեն պատկանող, 22.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի192Ա և 11.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրերով գրավադրված՝ Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը, իսկ Բանկը «Շարլոտա» ՍՊԸ-ի 675.159,41 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ պարտավորությունը, «Էդ Սքայ» ՍՊԸ-ի 03.06.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի209 ենթավարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունները, 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189 վարկային գծի պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորություններից տոկոսները և տույժերը, 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189/1 ենթավարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորություններից տոկոսները և տույժերը, և վարկի մնացորդից 229.918,62 ԱՄՆ դոլարը համարել է մարված: Նշված պայմանագրի 1.3.1-րդ կետի համաձայն՝ 750.000.000 ՀՀ դրամի և պայմանագրի 1.3-րդ կետում նշված պարտավորությունների մարմանն ուղղված գումարների հանրագումարի տարբերության չափով գումարը ենթակա է ուղղման 1.3-րդ կետում նշված գործարքից հետո 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189 վարկային գծի պայմանագրով և 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189/1 ենթավարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունների նկատմամբ հաշվեգրվելիք տոկոսագումարի մարմանը: Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ Գրավատուն պարտավորվում է Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը հանձնել որպես սեփականություն պայմանագրի 1.4-րդ կետում նշված «Էդ-Սքայ» ՍՊԸ-ի (Վարկառու 1) և «Շարլոտա» ՍՊԸ-ի (Վարկառու 2) պարտքի դիմաց: Պայմանագրի 2.3.3-րդ կետի համաձայն՝ Բանկը պարտավոր է անշարժ գույքերը սեփականության իրավունքով իր անվամբ գրանցելուց հետո մինչև 31.10.2012 թվականն օտարել անշարժ գույքերը գրավատուի համաձայնությամբ, իսկ 31.10.2012 թվականից հետո մինչև 01.01.2013 թվականն օտարելու դեպքում գրավատուն օգտվում է նախապատվության իրավունքից, որից հետո Բանկը իրավունք է ստանում ազատ տնօրինել անշարժ գույքերը **(հատոր 1-ին, գ.թ. 7-10):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի «դ» կետի և նույն հոդվածի 3–րդ մասի դրույթների սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի սահմանափակումները վերաբերում են բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ապահովված պահանջների բավարարման համար փոխանցված անշարժ գույքի հետ կապված բոլոր գործարքներին:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու՝

ա) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում.

բ) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են սնանկությանվերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում.

գ)սնանկությանդիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում (մեկ տարվա ընթացքում, եթե փոխանցումը կատարվել է փոխկապակցված անձին) պարտապանի՝ պարտատիրոջը կամ վերջինիս օգտին նախկինում ստանձնած պարտավորության դիմաց կատարած ցանկացած փոխանցում (այդ թվում՝ ոչ դրամային), որը կատարելու պահին պարտապանը անվճարունակ էր, և պարտատերը ստացել է էապես ավելին, քան կստանար սնանկությանվարույթում՝ պարտապանի լուծարման դեպքում.

դ) պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը, որը հետևանք է գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերության, բացառությամբ եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա:

Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ **նույն հոդվածի առաջին մասի «գ» կետով նախատեսված դեպքերում** փոխանցված գույքը կամ դրա արժեքը չի կարող հետ պահանջվել, եթե՝

ա) փոխանցման հետ միաժամանակ պարտատերը պարտապանին է փոխանցում համարժեք այլ գույք.

բ) պարտապանի կողմից պարտատիրոջ նկատմամբ նախկինում ստանձնած պարտավորության կատարումից հետո պարտատերը գրավի առարկա չհանդիսացող նոր գույք է փոխանցել պարտապանին.

գ) պարտապանն իր բնականոն գործունեության իրականացման ընթացքում կատարել է պարտատիրոջ նկատմամբ այդ ընթացքում ստանձնած պարտավորությունը, եթե այն կատարվել է գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան.

դ) փոխանցմամբ կատարվել է պարտատիրոջ նկատմամբ ստանձնած 200.000 ՀՀ դրամը չգերազանցող պարտավորություն.

ե) պարտապանի գույքի գրավի այն պայմանագրերը, որի արդյունքում չեն խախտվում չապահովված պարտատերերի իրավունքները (որի արդյունքում պարտապանի չապահովված պարտավորությունների արժեքը չի գերազանցի նրա գրավով չծանրաբեռնված գույքի արժեքից).

զ) փոխանցմամբ կատարվել են հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները, վարչական տուգանքի վճարումները:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ սնանկ ճանաչված պարտապանի և մյուս պահանջատերերի շահերը պաշտպանելու նպատակով օրենսդիրը հնարավորություն է ընձեռել պարտապանի սնանկության գործով կառավարչին՝ դատական կարգով հետ ստանալու պարտապանի կողմից նույն հոդվածով սահմանված դեպքերում և ժամկետներում կատարված դրամային և ոչ դրամային օտարումները:

Ընդ որում, նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում դրանով սահմանված ժամկետներում դատական կարգով հետ վերադարձման ենթակա են՝

– պարտապանի՝ երրորդ անձանց կատարած անհատույց փոխանցումները, այդ թվում՝ ոչ դրամային,

– պարտապանի՝ պարտատիրոջը կամ վերջինիս օգտին նախկինում ստանձնած պարտավորության դիմաց կատարած ցանկացած փոխանցումները, այդ թվում՝ ոչ դրամային,

– գույքի (ծառայության, աշխատանքի) իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերությունը, որը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտվում է որպես կատարած գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնաս:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է նաև որոշակի արգելող նորմեր, որոնցով սահմանափակել է սնանկության գործով կառավարչի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված՝ պարտատիրոջից ակտիվների հավաքագրման իրավունքը, մասնավորապես՝ հետ չեն կարող պահանջվել այն փոխանցումները, որոնք կատարվել են պարտատիրոջը՝ նախկինում ստանձնած պարտավորությունների դիմաց:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **նույն հոդվածով նախատեսված դեպքերում** փոխանցված գույքը կամ դրա արժեքը չի կարող հետ պահանջվել, եթե դրանք փոխանցվել են բանկի կամ վարկային կազմակերպության ապահովված պահանջների բավարարման համար այդ գույքի հետ կապված գործարքների կատարման արդյունքում:

Վերը նշված իրավադրույթի տառացի մեկնաբանության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դրանով օրենսդիրը սահմանափակել է սնանկության գործով կառավարչի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ակտիվների հավաքագրման իրավունքը:

Ընդ որում, եթե «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումները վերաբերում են միայն նույն հոդվածի 1-ին մասի «գ» կետում սահմանված դեպքերին, ապա նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները տարածվում են փոխանցված գույքը կամ դրա արժեքը վերադարձնելու կառավարչի իրավունքի՝ նույն հոդվածով սահմանված բոլոր դեպքերի վրա այնքանով, որքանով այդ սահմանափակումները կիրառելի են փոխանցված գույքը կամ դրա արժեքը վերադարձնելու կառավարչի համապատասխան իրավունքի նկատմամբ:

Միաժամանակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով նույն հոդվածով նախատեսված դեպ-

քերում (այն է՝ 54–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված) օտարված գույքը կամ գույքի արժեքը չի կարող հետ պահանջվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

– գույքը փոխանցվել է բանկի կամ վարկային կազմակերպության՝ապահովված պահանջների բավարարման համար,

– գույքը փոխանցվել է դրա (գույքի) հետ կապված գործարքների կատարման արդյունքում:

Ընդ որում, օրենսդիրը չի առանձնացրել որևէ կոնկրետ գործարք, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գույքի հետ կապված ցանկացած քաղաքացիաիրավական գործարքի հիման վրա, որի արդյունքում գույքը կարող է փոխանցվել բանկին կամ վարկային կազմակերպությանը՝ ապահովված պահանջների բավարարման համար, տարածվում են «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի դրույթները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի, Ընկերության և «Էդ Սքայ» ՍՊԸ–ի միջև 11.03.2011 թվականին կնքվել է թիվ Ե44Ի189Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը, իսկ 22.03.2011 թվականին Բանկի, Ընկերության և «Շարլոտա» ՍՊԸ–ի միջև կնքվել է թիվ Ե44Ի192Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը, որոնցով Ընկերությունը, համապատասխանաբար ի ապահովումն թիվ Ե44Ի189 գլխավոր վարկային պայմանագրով Բանկի հանդեպ «Էդ Սքայ» ՍՊԸ–ի ունեցած պարտավորությունների կատարման, և ի ապահովումն Բանկի և «Շարլոտա» ՍՊԸ–ի միջև 22.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի192 գլխավոր վարկային պայմանագրով Բանկի հանդեպ «Շարլոտա» ՍՊԸ–ի ունեցած պարտավորությունների կատարման՝ գրավադրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1–ին և 4–րդ հասցեներում, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2–րդ հասցեում, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3–րդ հասցեում և Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5–րդ հասցեում գտնվող անշարժ գույքերը: Նշված պայմանագրերով Ընկերությունը (գրավատուն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնություն է տվել և իրավունք է վերապահել Բանկին (գրավառուին) սահմանված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում, առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել պայմանագրով գրավադրված գրավի առարկայի վրա և իրացնել այն կամ վարկային պարտավորության (մայր գումար, տոկոս, տույժ, տուգանք) համապատասխան չափի դիմաց գրավի առարկան ի սեփականություն հանձնել գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին կամ ուղղակի վաճառքի ձևով այն վաճառել երրորդ անձին կամ իրացնել գրավի առարկան լիցենզավորված այլ ընկերությունների կողմից կազմակերպած հրապարակային սակարկություններում:

Բանկի, «Էդ–Սքայ» ՍՊԸ–ի, «Շարլոտա» ՍՊԸ–ի և Ընկերության միջև 21.07.2012 թվականին կնքվել է «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագիրը, որով փաստվել է, որ 14.07.2012 թվականի դրությամբ «Շարլոտա» ՍՊԸ–ի պարտքը Բանկի հանդեպ կազմում է 675.159,41 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ, «Էդ–Սքայ» ՍՊԸ–ի պարտքը Բանկի հանդեպ կազմում է 1.966.224,33 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ:

Նույն պայմանագրի 1.3–րդ կետով Ընկերությունը 14.07.2012 թվականի դրությամբ «Շարլոտա» ՍՊԸ–ի կողմից Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց և «Էդ–Սքայ» ՍՊԸ–ի կողմից Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց Բանկին, որպես սեփականություն 750.000.000 ՀՀ դրամի դիմաց հանձնել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1–ին և 4–րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2–րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3–րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5–րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը, իսկ Բանկը «Շարլոտա» ՍՊԸ–ի 675.159,41 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ պարտավորությունը, «Էդ–Սքայ» ՍՊԸ–ի՝ 03.06.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի209 ենթավարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունները, 15.03.2011

թվականին կնքված թիվ Ե44Ի189 վարկային գծի պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորություններից տոկոսները և տույժերը, 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189/1 ենթավարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորություններից տոկոսները և տույժերը, և վարկի մնացորդից 229.918,62 ԱՄՆ դոլարը համարել է մարված:

«Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրի 1.3.1-րդ կետով կողմերը սահմանել են, որ 750.000.000 ՀՀ դրամի և պայմանագրի 1.3-րդ կետում նշված պարտավորությունների մարմանն ուղղված գումարների հանրագումարի տարբերության չափով գումարը կուղղվի 1.3-րդ կետում նշված գործարքից հետո 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189 վարկային գծի պայմանագրով և 15.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189/1 ենթավարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունների նկատմամբ հաշվեգրվելիք տոկոսագումարի մարմանը: Նշված պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ գրավատուն պարտավորվում է Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը հանձնել որպես սեփականություն պայմանագրի 1.4-րդ կետում նշված «Էդ-Սքայ» ՍՊԸ-ի (Վարկառու 1) և «Շարլոտա» ՍՊԸ-ի (Վարկառու 2) պարտքի դիմաց: Պայմանագրի 2.3.3-րդ կետի համաձայն՝ Բանկը պարտավոր է անշարժ գույքերը սեփականության իրավունքով իր անվամբ գրանցելուց հետո մինչև 31.10.2012 թվականն օտարել անշարժ գույքերը գրավատուի համաձայնությամբ, իսկ 31.10.2012 թվականից հետո մինչև 01.01.2013 թվականը օտարելու դեպքում գրավատուն օգտվում է նախապատվության իրավունքից, որից հետո Բանկն իրավունք է ստանում ազատ տնօրինել անշարժ գույքերը:

Սույն գործով Դատարանը, հիմք ընդունելով Բանկի, Ընկերության և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի միջև 11.03.2011 թվականին կնքված թիվ Ե44Ի189Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով և 22.03.2011 թվականին Բանկի, Ընկերության և «Շարլոտա» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ Ե44Ի192Ա հաջորդող անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով գրավադրվող գույքերի իրացման սկզբնական արժեքի վերաբերյալ կողմերի համաձայնությունը, հիմնավորված է համարել հայցվորի հնարավոր վնասների առկայությունը, և հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակներից ելնելով: Վնասի գումարը հետ ստանալու հիմքում դրված է այն հանգամանքը, որ համապատասխան գործարքները, փոխանցումները և գույքի օտարումները պետք է կատարված լինեն պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում:

Միաժամանակ անդրադառնալով պատասխանողի այն պնդմանը, որ հաշվի առնելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասը, սույն դեպքում կիրառելի չէ նույն հոդվածի 1-ին մասի «դ» կետը, Դատարանը գտել է, որ ««Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները վերաբերելի են սնանկության վարույթի ընթացքում ապահովված պահանջատիրոջս իր ապահովված պահանջների բավարարման համար փոխանցված գույքին կամ դրա արժեքին»՝ փաստելով, որ ««Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ապահովված «պահանջների բավարարում» եզրույթը դիտարկվում է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտում և կարող է մեկնաբանվել նշված օրենքի պահանջներին համապատասխան»:

Վերաքննիչ դատարանն իր հերթին, մերժելով վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները, ինչպես նաև գտել է, որ «սույն դեպքում

սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված հայցապահանջը վերաբերում է ոչ թե փոխանցված գույքի կամ դրա արժեքի հետ պահանջին (կապված բանկի հանդեպ ունեցած գումարային պարտավորությունների հետ), այլ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի «դ» կետով նախատեսված՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքի, փոխանցման և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասին, որը հետևանք է գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերությանը»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի վերաբերյալ վերը կատարված վերլուծությունները, ստորադաս դատարանների եզրահանգումները համարում է անհիմն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի «դ» կետում նշված «վնաս» հասկացության բովանդակությունը կազմում է գույքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերությունը: Այսինքն՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի «դ» կետով ներկայացվող պահանջը վերաբերում է օտարված (փոխանցված) գույքի շուկայական «արժեքի» հնարավոր պակասող մասին:

Միաժամանակ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի տառացի մեկնաբանման արդյունքում Վճռաբեկ դատարանն արդեն իսկ վերոշարադրյալով փաստել է, որ դրանով նախատեսված սահմանափակումները տարածվում են փոխանցված գույքը կամ դրա արժեքը վերադարձնելու կառավարչի իրավունքի՝ նույն հոդվածով սահմանված բոլոր դեպքերի, այդ թվում՝ նույն հոդվածի 1–ին մասի «դ» կետով նախատեսված՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը պահանջելու իրավունքի վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված «գույք կամ դրա արժեք» եզրույթը պետք է մեկնաբանել լայն, մասնավորապես, կախված յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքներից և դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերի կարգավորումից, նշված մասի իմաստով գույքի արժեքը կարող է դիտարկվել որպես գույքի փաստացի իրացման արժեքը, և/կամ գույքի շուկայական արժեքը, իսկ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից ելնելով գույքի փաստացի իրացման և/կամ շուկայական արժեքի մի մասը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի իմաստով հանդիսանում է գույք:

Տվյալ դեպքում կառավարիչը, Բանկից վնասի հատուցում պահանջելով, ըստ էության, պահանջում է գույքի շուկայական արժեքի և «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրով նույն գույքի համար սահմանված արժեքի միջև եղած տարբերության հատուցում, որպիսի տարբերությունը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված գույք է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե տվյալ դեպքում գույքի շուկայական արժեքի և «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրով նույն գույքի համար սահմանված արժեքի միջև եղած տարբերությունը սնանկության գործով կառավարչի կողմից կարող է արդյո՞ք հետ պահանջվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի «դ» կետի հիմքով, թե՞ տվյալ դեպքում կիրառելի է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասը:

Ընդ որում, վերը նշված իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված սահմանափակումները տարածվում են նաև կառավարչի՝ նույն հոդվածի 1–ին մասի «դ» կետով նախատեսված իրավունքի վրա, հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի՝ սույն գործով

կիրառելի լինելու դեպքում բացառվում է նույն հոդվածի 1–ին մասի «դ» կետի կիրառելի լինելը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից նախևառաջ պարզման ենթակա էր սույն գործով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի կիրառելիության հարցը:

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի կիրառելիության հարցը պարզելու համար էական նշանակություն ունի հետևյալ հարցերի պարզաբանումը.

– արդյո՞ք Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1–ին և 4–րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5–րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը փոխանցվել են Բանկին կամ վարկային կազմակերպությանը,

– արդյո՞ք նշված անշարժ գույքերը փոխանցվել են Բանկին ապահովված պահանջների բավարարման համար,

– արդյո՞ք նշված անշարժ գույքերը փոխանցվել են դրանց (գույքերի) հետ կապված գործարքների կատարման արդյունքում:

Այլ կերպ ասած՝ ստորադաս դատարանները նախևառաջ պետք է պարզեին՝ առկա է արդյո՞ք «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54–րդ հոդվածի 3–րդ մասի կիրառման համար անհրաժեշտ պայմանների միաժամանակյա առկայությունը, թե՝ ոչ:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 21.07.2012 թվականին Բանկի, «Էդ–Սքայ» ՍՊԸ–ի, «Շարլոտա» ՍՊԸ–ի և Ընկերության միջև կնքվել է «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» վերտառությամբ պայմանագիրը:

Հրաժարագնի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 425–րդ հոդվածով, համաձայն որի՝ կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել կատարման փոխարեն հրաժարագին տրամադրելով (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն): Հրաժարագնի չափը, ինչպես նաև այն տրամադրելու ժամկետները և կարգը սահմանում են կողմերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 425–րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հրաժարագինը սկզբնական պարտավորությունը դադարեցնելու հիմք հանդիսացող գործարք է, որով կողմերը համաձայնության են գալիս հիմնական պարտավորության փոխարեն հրաժարագինը տրամադրելու հիմքով պարտավորությունը դադարած համարելու հարցում:

Այլ կերպ ասած՝ հրաժարագնի իմաստը կայանում է նրանում, որ պարտապանը պարտատիրոջ համաձայնությամբ հնարավորություն է ստանում պարտավորությունը դադարեցնել ոչ թե պարտավորությունը կատարելով, այլ պարտավորության առարկան և/կամ կատարման եղանակը փոխելու միջոցով:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, որպես հրաժարագնի առարկա նշելով դրամ վճարելը, գույք հանձնելը և այլն (ծառայություն մատուցելը, աշխատանք կատարելը), **որևէ պահանջ՝ սկզբնական պարտավորության և հրաժարագնի համարժեքության վերաբերյալ չի առաջադրել:** Այսինքն՝ հրաժարագինը սկզբնական պարտավորության համեմատ կարող է լինել և համարժեք, և դրանից ավելի կամ պակաս՝ կախված կողմերի միջև ձեռքբերված համաձայնությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248–րդ հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա **բռնագանձում տարածելու և իրացնելու այն**, **այդ թվում՝**

գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն **հանձնելու**, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորումներին, նշել է, որ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելը և իրացնելն իր մեջ ներառում է նաև **գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին ի սեփականություն հանձնելը:** Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածում նշված՝ «պարտավորության համապատասխան չափի դիմաց» եզրույթին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ գրավի առարկան ի սեփականություն ընդունելու դեպքում պարտավորության չափը և գրավի առարկայի շուկայական ողջամիտ արժեքը համեմատելի են զուտ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված փոխհաշվարկների համար: Հակառակ պարագայում կստացվի այնպիսի իրավիճակ, որ գրավառուն, պարտքի դիմաց ստանալով պարտավորության չափից նվազ արժեքով գրավի առարկա, զրկված կլինի պարտապանից տարբերություն պահանջելու իրավունքից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ կետ): Մյուս կողմից՝ գրավատուն ևս չպետք է զրկվի պարտավորությունից անհամեմատ ավելի մեծ արժեքով գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելու դեպքում գրավի առարկայի արժեքի և պարտավորության տարբերությունը հետ պահանջելու իրավունքից *(տե՛ս, Ամալյա Վարդանյանն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ի տարբերություն հրաժարագնի, որի դեպքում տեղի է ունենում պարտավորության առարկայի փոփոխություն, և կարող է տեղի ունենալ նաև պարտավորության կատարման եղանակի փոփոխություն, գրավի ինստիտուտի կիրառման պայմաններում ըստ էության պարտավորության առարկայի կամ կատարման եղանակի որևէ փոփոխություն տեղի չի ունենում, քանի որ պարտավորության չկատարման դեպքում գրավի առարկայի իրացմամբ պարտավորության՝ գրավի առարկային համարժեք մասի դադարման հնարավորությունն ի սկզբանե սահմանված է կողմերի միջև՝ որպես պարտավորության կատարման (կատարման ապահովման) եղանակ:

Համադրելով վերը նշված իրավական վերլուծությունները և սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

– Բանկի, «Էդ-Սքայ» ՍՊԸ-ի, «Շարլոտա» ՍՊԸ-ի և Ընկերության միջև 21.07.2012 թվականին կնքված **«Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման»** պայմանագրով Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը Բանկին ի սեփականություն հանձնելու դիմաց մարվել է 14.07.2012 թվականի դրությամբ Բանկի նկատմամբ «Շարլոտա» ՍՊԸ-ի ունեցած ամբողջ պարտավորությունը՝ 675.159,41 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ,

– «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրով Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1-ին և 4-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3-րդ, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը Բանկին ի սեփականություն հանձնելու

դիմաց վերջինիս նկատմամբ «Էդ-Սքայ» ՍՊԸ-ի պարտավորությունը 14.07.2012 թվականի դրությամբ մարվել է մասնակի:

– Բանկի, «Էդ Սքայ» ՍՊԸ-ի, «Շարլոտա» ՍՊԸ-ի և Ընկերության միջև 21.07.2012 թվականին կնքված «Հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման» պայմանագրով կողմերը փաստել են Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 1 և 4, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 2, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 3, Երևանի Հալաբյան փողոցի թիվ 34/3 5 հասցեներում գտնվող անշարժ գույքերը «Շարլոտա» ՍՊԸ-ի և «Էդ Սքայ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովման համար գրավադրված լինելու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսվածպայմանագրի մեկնաբանության կանոններին՝ նշելով, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում էպայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար *(տե՛ս, «Կարապ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի թիվ ՇԴ1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):*

Մինչդեռ տվյալ դեպքում ստորադաս դատարանները չեն բացահայտել կողմերի իրական կամքը, այն է՝ թե արդյոք վերջիններս նկատի են ունեցել հենց գրավադրված գույքը պարտավորության մի մասի դիմաց Բանկին ի սեփականություն հանձնելը, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով նախատեսված՝ գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու իրավահարաբերություն է, թե տվյալ դեպքում առկա է հրաժարագնի դիմաց պարտավորությունը դադարելու հարաբերություններ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն նշված հարցերի պարզաբանումը հնարավորություն կարող է տալ բացահայտելու սույն գործով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ պայմանների միաժամանակյա առկայության կամ բացակայության հանգամանքը, որպիսի պարագայում անհրաժեշտ է իրականացնել գործի նոր քննություն:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.03.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0124/02/12
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ա. Հունանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0124/02/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աննա Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աննա Ասատրյանի ընդդեմ Դավիթ Խաչատրյանի, երրորդ անձ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի բնակության վայրը որոշելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջների մասին, և ըստ Դավիթ Խաչատրյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Աննա Ասատրյանի՝ երեխայի բնակության վայրն անփոփոխ թողնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Աննա Ասատրյանը պահանջել է իր երեխայի՝ 11.11.2011 թվականին ծնված Արևիկ Դավիթի Խաչատրյանի բնակության վայրը որոշել իր բնակության վայրը, ինչպես նաև երեխայի խնամքը և դաստիարակությունը հանձնել իրեն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Դավիթ Խաչատրյանը պահանջել է 11.11.2011 թվականին ծնված Արևիկ Դավիթի Խաչատրյանի բնակության վայրը թողնել անփոփոխ՝ իր մոտ՝ Երևանի Անդրանիկի փողոցի 125-րդ շենքի թիվ 12 բնակարանում:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 16.08.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Կ. Չիլինգարյան, Ա. Պետրոսյան, Տ. Նազարյան) 13.12.2012 թվականի որոշմամբ Դավիթ Խաչատրյանի վե-

րաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 16.08.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.02.2013 թվականի որոշմամբ Աննա Ասատրյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվալյան) (այսուհետ՝ Դատարան) 20.11.2014 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է. Արևիկ Խաչատրյանի բնակության վայր է սահմանվել հոր՝ Դավիթ Խաչատրյանի բնակության վայրը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.06.2015 թվականի որոշմամբ Աննա Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.11.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աննա Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածը, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ընդունվել է 20.11.1989 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 22.07.1993 թվականից) 3-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը, 67-րդ հոդվածի 2-րդ մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը չի իրականացրել սույն գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ անտեսելով մի շարք ապացույցներ, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում նախապատրաստված նյութերը, որոնք վկայում են այն մասին, որ կողմերի միջև առկա վեճի արդյունքում խաթարվել է երեխայի հետ Աննա Ասատրյանի ընտանիքի մյուս անդամների շփումը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, իր որոշման հիմքում դնելով սույն գործով ձեռք բերված ապացույցներով չհիմնավորվող և գոյություն չունեցող փաստական հանգամանքներ, հաշվի չի առել սույն գործի նյութերում առկա՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունները, որոնք ձեռք են բերվել Դավիթ Խաչատրյանի միջնորդությամբ՝ որպես գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.06.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 16.08.2012 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Մալաթիա-Սեբաստիայի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կողմից 01.02.2012 թվականին տրված թիվ ԱԲ 178768 ծննդյան վկայականի համաձայն՝ Արևիկ Խաչատրյանը ծնվել է 11.11.2011 թվականին. նրա հայրը Դավիթ Խաչատրյանն է, իսկ մայրը՝ Աննա Ասատրյանը **(հատոր 1-ին, գ.թ. 6):**

2. Հանձնաժողովի 12.03.2012 թվականի եզրակացության համաձայն՝ Արևիկ Խաչատրյանի խնամքն ու դաստիարակությունը, ինչպես նաև նրա բնակության վայրը, հաշ-

վի առնելով անչափահասի շահերը, անհրաժեշտ է հանձնել մորը՝ Աննա Ասատրյանին **(հատոր 1-ին, գ.թ. 35):**

3. Դավիթ Խաչատրյանը դիմել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին՝ խնդրելով վերացնել Հանձնաժողովի 12.03.2012 թվականի եզրակացությունը և Աննա Ասատրյանի բնակարանային կենսապայմանների ուսումնասիրության ակտն ու տալ նոր եզրակացություն **(հատոր 1-ին, գ.թ. 86-88):**

4. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 16.05.2012 թվականի թիվ 26/10-2842 գրությամբ Դավիթ Խաչատրյանին հայտնվել է այն մասին, որ չեն ներկայացվել նոր հիմնավոր հանգամանքներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ Հանձնաժողովի 12.03.2012 թվականի եզրակացությունը վերանայելու համար, և Հանձնաժողովն իր նախկին եզրակացությունը թողել է անփոփոխ **(հատոր 1-ին, գ.թ. 96):**

5. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 05.06.2012 թվականի թիվ 35/Ի-1043 գրությամբ Դավիթ Խաչատրյանին հայտնվել է այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից խնդիրը մանրամասն ուսումնասիրվել է, որից հետո գրություն է ուղարկվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան Հանձնաժողովի նիստ հրավիրելու առաջարկով՝ մասնակից դարձնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետներին և սույն գործով կողմերին **(հատոր 1-ին, գ.թ. 97):**

6. Հանձնաժողովի 29.06.2012 թվականի եզրակացության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների և կողմերի ներկայությամբ կրկին քննարկելով Արևիկ Դավիթի Խաչատրյանի բնակության վայրը որոշելու հարցը՝ Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ պետք է 12.03.2012 թվականի եզրակացությունը թողնել անփոփոխ, այսինքն՝ անչափահաս Արևիկ Խաչատրյանի խնամքն ու դաստիարակությունը, ինչպես նաև նրա բնակության վայրը հանձնել մորը՝ Աննա Ասատրյանին: Միաժամանակ Հանձնաժողովը գտել է, որ Դավիթ Խաչատրյանի կողմից ներկայացրած երեխայի բնակության վայրը անփոփոխ՝ հոր մոտ թողնելու պահանջի մասին հակընդդեմ հայցը հիմնավորված չէ, չի բխում երեխայի շահերից **(հատոր 1-ին, գ.թ. 82-83):**

7. ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 26.09.2013 թվականի դատահոգեբանական եզրակացության համաձայն՝ Աննա Ասատրյանի շփումը, տեսակցությունը երեխայի՝ Արևիկ Խաչատրյանի հետ չի կարող վնասակար ազդեցություն ունենալ երեխայի վրա ինչպես ֆիզիկական, հոգեբանական, այնպես էլ բարոյական առումով **(հատոր 4-րդ, գ.թ. 24-42):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործի քննության ընթացքում երեխայի լավագույն շահերի բացահայտման չափանիշների և պայմանների գնահատման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ

ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. իրավաչա՞փ է արդյոք ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ քաղաքացիական գործի քննության ընթացքում դատարանի կողմից երեխայի՝ ծնողներից մեկի հետ ունեցած կապվածությունը որպես երեխայի լավագույն շահերի բացահայտման միակ չափանիշ դիտարկելը:

27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝յուրաքանչյուր ոք ունի իր (...) ընտանեկան կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների (...) իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները հարգում են ծնողների (...) պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները՝ երեխայի զարգացող ունակություններին համապատասխան ուղղություն տալու երեխային՝ նրա կողմից նույն կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան (...) ծնվդյան պահից ձեռք է բերում, (...) որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները (...) երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն:Երեխայիլավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխա է համարվում տասնութ տարին չլրացած անձը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ծնողականիրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան (...): Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատարանը երեխաների դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց: Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածի տեսանկյունից անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից *(տե՛ս, «Ս.»–ն ընդդեմ Ֆինլանդիայի գործով ՄԻԵԴ–ի 09.05.2006 թվականի վճիռը, 52–րդ և 53–րդ կետեր):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը:

Նշվածի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ *(տե՛ս, նաև Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու և երեխաների բնակության վայրի շուրջ ծնողների համաձայնության բացակայության դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի, թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը *(տե՛ս, Արա Միրզախանյանն ընդդեմ Դիանա Խաչատրյանի թիվ 3-432(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը)*:

05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշմամբ անդրադառնալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավադրույթում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունն)» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում և բացահայտում են վիճարկվող դրույթներում «երեխաների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդ որում, վերը նշված պայմանները սպառիչ չեն, և երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաև այլ պայմաններ հաշվի առնելը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Հետևաբար ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող յուրաքանչյուր փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ**:** Ըստ այդմ, դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել ներկայացված հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը կամ եզրակացությունը պետք է լինի կոնկրետ գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման անմիջական և տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը *(տե՛ս, Լևոն Սոխոռյանն ընդդեմ Սոսաննա Գրիգորյանի և Արա Ներսիսյանի թիվ ԿԴ1/0733/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել նաև, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ երեխաների դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է գործի քննությանը մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, որին տվյալ գործով հանձնարարվում է իրականացնելու երեխայի դաստիարակությանը հավակնող անձանց կենսապայմանների ուսումնասիրություն և այդ կապակցությամբ դատարանին ներկայացնելու իր եզրակացությունը: Ընդ որում, այդ եզրակացությունը դատարանի համար թեև կրում է մասնագիտական-խորհրդատվական բնույթ, և դատարանն այն պարտավոր է գնահատել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ, այնուամենայնիվ, նմանատիպ գործերով վերոնշյալ եզրակացության առկայությունը պարտադիր է, քանի որ դրանում արտահայտված փաստարկները գործում առկա մյուս ապացույցների հետ համադրության արդյունքում դատարանին հնարավորություն են ընձեռնում կոնկրետ գործով պարզելու երեխայի լավագույն շահը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

1) երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ,

2) երեխայի տարիքը,

3) ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,

4) ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,

5) երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երեխայի բնակության վայրը որոշելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործեր քննելիս դատարանը

կարող է բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված վերոգրյալ չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի այլ պայմաններ: Ընդ որում, երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի բացահայտման հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում առկա յուրաքանչյուր ապացույցի անմիջական գնահատման արդյունքում: Այլ կերպ ասած՝ երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հանձնաժողովը 12.03.2012 թվականի եզրակացությամբ գտել է, որ Արևիկ Դավիթի Խաչատրյանի բնակության վայրը, հաշվի առնելով անչափահասի շահերը, պետք է սահմանվի մոր՝ Աննա Ասատրյանի բնակության վայրը: Հանձնաժողովի 29.06.2012 թվականի եզրակացության համաձայն՝ որոշվել է Հանձնաժողովի 12.03.2012 թվականի եզրակացությունը թողել անփոփոխ, այսինքն՝ Հանձնաժողովը կրկին հանգել է այն եզրակացության, որ անչափահաս Արևիկ Խաչատրյանի բնակության վայրը պետք է սահմանվի Աննա Ասատրյանի բնակության վայրը:

Սույն գործի նյութերում առկա է նաև ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 26.09.2013 թվականի եզրակացությունն այն մասին, որ Աննա Ասատրյանի շփումը, տեսակցությունը երեխայի՝ Արևիկ Խաչատրյանի հետ չի կարող վնասակար ազդեցություն ունենալ երեխայի վրա ինչպես ֆիզիկական, հոգեբանական, այնպես էլ բարոյական առումով:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով և հակընդդեմ հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ սույն գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող առավել կարևոր հանգամանքը երեխայի և ծնողներից յուրաքանչյուրի միջև առկա հարաբերությունն է՝ երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի հետ: Ըստ Դատարանի վճռի՝ անչափահաս Արևիկ Խաչատրյանի խնամքով բացառապես զբաղվել է նրա հայրը, իսկ երեխան, ծնունդյան պահից մշտապես ապրելով իր հոր հետ, ավելի կապված է հենց նրա հետ: Բացի այդ, Աննա Ասատրյանը սովորում է, իսկ վերջինիս ծնողները չեն կարող Աննա Ասատրյանի բացակայության ընթացքում պատշաճ կերպով զբաղվել երեխայի խնամքով և դաստիարակությամբ, քանի որ երբևէ չեն տեսակցել երեխային: Մյուս կողմից՝ Դավիթ Խաչատրյանի աշխատանքի բնույթը նրան հնարավորություն է տալիս մշտապես գտնվելու տանը և զբաղվելու երեխայի խնամքով: Անդրադառնալով Հանձնաժողովի եզրակացություններին՝ Դատարանը գտել է, որ այդ եզրակացությունների համաձայն՝ երեխայի բնակության վայրը անփոփոխ՝ հոր մոտ թողնելու պահանջը երեխայի շահերից չբխելու վերաբերյալ Դատարանին որևէ հիմնավորում չի ներկայացվել: Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրահանգել է, որ անչափահաս Արևիկ Խաչատրյանի՝ իր հոր՝ Դավիթ Խաչատրյանի հետ բնակվելը բխում է երեխայի լավագույն շահերից:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Աննա Ասատրյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, հիմնավոր է համարել Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունները և իր հերթին հանգել է այն եզրակացության, որ տվյալ դեպքում Արևիկ Խաչատրյանի՝ իր հոր հետ բնակվելը բխում է երեխայի լավագույն շահերից:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու

դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի մյուս բոլոր պայմանները: Երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը: Հետևաբար երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի հիման վրա հարուցված սույն քաղաքացիական գործի շրջանակներում ստորադաս դատարանները պարտավոր էին գործում առկա բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատել գործում առկա յուրաքանչյուր ապացույց՝ պարզելու համար երեխայի լավագույն շահերը որոշելու բոլոր չափանիշներն ու պայմանները: Մինչդեռ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերը կայացնելիս որպես երեխայի՝ Արևիկ Խաչատրյանի լավագույն շահերի ապահովման և պաշտպանության հիմնական ու միակ չափանիշ (պայման) են դիտարկել երեխայի՝ հոր հետ կապված լինելու հանգամանքը և, ըստ էության, չեն անդրադարձել ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու՝ ինչպես օրենքով սահմանված, այնպես էլ սույն գործով դատարան ներկայացված այլ պայմանների բացահայտմանը: Մասնավորապես՝ ստորադաս դատարաններն Արևիկ Խաչատրյանի լավագույն շահերը վերհանել են առանց հաշվի առնելու սույն գործով ներկայացված հետևյալ ապացույցները.

1) Հանձնաժողովի 12.03.2012 և 29.06.2012 թվականների եզրակացությունները, որոնց համաձայն՝ Հանձնաժողովը միանշանակ կերպով հանգել է այն եզրակացության, որ անչափահաս Արևիկ Խաչատրյանի բնակության վայրը պետք է սահմանվի Աննա Ասատրյանի բնակության վայրը,

2) ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի 26.09.2013 թվականի եզրակացությունը, որի համաձայն՝ Աննա Ասատրյանի շփումը, տեսակցությունը երեխայի՝ Արևիկ Խաչատրյանի հետ չի կարող վնասակար ազդեցություն ունենալ երեխայի վրա ինչպես ֆիզիկական, հոգեբանական, այնպես էլ բարոյական առումով:

Բացի այդ, թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանն իրենց դատական ակտերում նշել են, որ Դավիթ Խաչատրյանի աշխատանքի բնույթը նրան հնարավորություն է տալիս մշտապես գտնվելու տանը և զբաղվելու երեխայի խնամքով, սակայն սույն գործի նյութերում առկա չէ վերոգրյալ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց: Ավելին՝ սույն գործում առկա չէ նաև որևէ ապացույց, որով առհասարակ կարելի է հիմնավորել Դավիթ Խաչատրյանի՝ աշխատանք ունենալու հանգամանքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված «երեխայի շահ» հասկացությունը գնահատելիս չեն իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյետիվ հետազոտում և գնահատում, հաշվի չեն առել գործում առկա ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը: Հետևաբար անհրաժեշտ է սույն գործն ուղարկել նոր քննության՝ գործում առկա ապացույցները սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում հետազոտելու և գնահատելու նպատակով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.06.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/2401/02/14
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Գ. Կարախանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/2401/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱՌՆԱԴՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Աշոտ Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Երևան ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ Ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ Կազմակերպության՝ ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից հօգուտ իրեն բռնագանձել 7.121.536 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի փոխհատուցում, ինչպես նաև 142.431 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կազմակերպության կողմից 19.05.2015 թվականին կազմված թիվ Բ0017381 ակտը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ջ. Նախշքարյան) (այսուհետ՝ Դատարան) 10.03.2015 թվականի վճռով Կազմակերպության հայցը մերժվել է, իսկ Ընկերության հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

25.06.2015 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 10.03.2015 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Կազմակերպության հայցը բավարարվել է, Ընկերության հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 22.01.2004 թվականի թիվ 130-Ն որոշմամբ հաստատված՝ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների» (այսուհետ՝ Կանոններ) 18-րդ, 25-րդ, 45-րդ կետերը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի կատարել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրակացության:

Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ թվարկելով գործում առկա ապացույցները, պատճառաբանել է, որ Ընկերությունն ապացույցներ չի ներկայացրել իր վկայակոչած փաստերի վերաբերյալ, մինչդեռ ակնհայտ է, որ Ընկերությունն ապացուցել է իր կողմից վկայակոչած փաստը, այն է՝ 19.05.2014 թվականին ջրաչափի տեղահանման և փորձաքննության ընթացքում իր ծանուցված չլինելու և մասնակից չլինելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս հիմք է ընդունել ջրամատակարարի ներկայացուցիչ Աշոտ Թումանյանի անունից ներկայացված գրավոր բացատրությունը, որով վերջինս հայտնել է, որ ջրաչափի ոչ բնականոն աշխատանքը հայտնաբերել է 18.05.2015 թվականին, իսկ ջրաչափը փոխարինվել է 19.05.2015 թվականին: Մինչդեռ գործում առկա փաստաթղթերով ապացուցվում է, որ ջրաչափի անսարքությունն արձանագրվել է ոչ թե 18.05.2015 թվականին, այլ 19.05.2015 թվականին՝ թիվ Բ017381 ակտով, իսկ ջրաչափի փոխարինումը նորով կատարվել է 20.05.2015 թվականին:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Ընկերությունը չի վիճարկել Չափագիտության ազգային ինստիտուտի 19.05.2014 թվականի ջրաչափի նախնական զննման և նախնական փորձաքննության արձանագրությունը, գումարի հաշվարկը, կողմերի միջև առկա ջրամատակարարման պայմանագրի հիման վրա նախկինում եղած ջրի ծախսը և վճարումները, հաշվի չի առել, որ դրանք սույն գործով վեճի առարկայի և հակընդդեմ հայցապահանջի հիմքում ընկած չեն, քանի որ տվյալ դեպքում Ընկերության կողմից վիճարկվում է 19.05.2015 թվականի թիվ Բ017381 ակտը՝ պայմանավորված ջրաչափի ստուգաչափման մասին Ընկերությանն օրենսդրությամբ սահմանված կարգով չծանուցելու և այդ գործընթացներին Ընկերության ներկա գտնվելու հիմքով, ինչով պայմանավորված էլ Ընկերությունն առարկել է խախտումը կատարած սուբյեկտի և խախտումը կատարելու վայրի վերաբերյալ Կազմակերպության ներկայացրած փաստարկների դեմ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.06.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 10.03.2015 թվականին վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի որոշումն հիմնավոր է և իրավաչափ: Վերաքննիչ դատարանը Դատարանի եզրահանգման իրավաչափության գնահատման արդյունքում, այդ եզրահանգումները համադրելով սույն գործով հաստատված փաստական հանգամանքների հետ, իրավացիորեն արձանագրել է, որ Ընկերությունը չի վիճարկել Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից կազմված, արձանագրությամբ հաստատված ջրա-

չափի օղակի կոտրված լինելու և կնիքը կեղծված լինելու հանգամանքը, այլ վիճարկում է ջրաչափի խախտումները Կազմակերպության կողմից ջրաչափի գտնվելու վայրում կամ այն Չափագիտության ազգային ինստիտուտ տեղափոխելու ճանապարհին կատարված լինելու հնարավորությունը, որն հիմնազուրկ է, քանի որ Ընկերությունը մասնակցել է ջրաչափի հանձնման-ընդունմանը, իսկ տվյալ ակտի կազմման հիմք է հանդիսացել Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից 19.05.2015 թվականին կազմված արձանագրությունը, ինչը չի վիճարկվել Ընկերության կողմից:

Տվյալ դեպքում Կազմակերպությունը, որպես իր հայցապահանջը հիմնավորող ապացույցներ, Դատարանին է ներկայացրել 19.05.2014 թվականին կազմված՝ հայտնաբերված խախտումների մասին թիվ Բ017381 ակտը, 20.05.2014 թվականին կազմված ջրաչափի ընդունման և փոխարինման հանձնարարականը, Չափագիտության ազգային ինստիտուտի 19.05.2014 թվականի փորձաքննության արձանագրությունը, մինչդեռ Ընկերության կողմից իր փաստարկների վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կազմակերպության և Ընկերության միջև 01.12.2008 թվականին կնքվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագիր **(հատոր 1-ին, գ.թ. 72-75)**.

2) 19.05.2014 թվականին կազմված թիվ Բ017381 ակտի համաձայն՝ Երևանի Կոմիտաս փողոցի թիվ 54/2 հասցեում հայտնաբերվել է ջրամիացման, ջրօգտագործման խախտում՝ ջրաչափի կապարակնիքների խախտում, կեղծում: Ակտի՝ «ջրաչափի տվյալները ստուգման պահին» մասում ամսաթիվը նշվել է 04.06.2014 թվականը: Ակտը ստորագրվել է ջրամատակարարի ներկայացուցիչներ Ա. Մարտիրոսյանի և Ա. Մանուկյանի կողմից, Ընկերության կողմից ակտը ստորագրված չէ, առկա չէ բաժանորդի կողմից ակտը չստորագրելու մասին նշում, իսկ «խախտում կատարած անձ» տողում նշվել է՝ «ծանուցվեց փոստով»: Ակտի՝ «ջրաչափի տվյալները ստուգման պահին» բաժնում բացակայում է ջրաչափի համարը, ցուցմունքը ստուգման պահին, խախտում կատարած անձի ներկայացուցչի ստորագրությունը, Ընկերության կնիքը **(հատոր 1-ին, գ.թ. 9)**.

3) 04.06.2014 թվականին կազմված՝ թիվ 017381 ակտի ջրօգտագործման կանոնների խախտման հաշվարկի համաձայն՝ Կազմակերպության Առևտրային տնօրինության կողմից Կանոնների 25-րդ, 27-րդ կետերով սահմանված կարգով հաշվարկվել է 7.121.536 ՀՀ դրամ վճարման ենթակա գումար: Հաշվարկն Ընկերության կողմից ստորագրված չէ **(հատոր 1-ին, գ.թ. 10)**.

4) Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Գրիգորյանի և Չափագիտության ազգային ինստիտուտի գլխավոր տնօրեն Վ. Սահակյանի կողմից հաստատված՝ ջրաչափի զննման և նախնական փորձաքննության 19.05.2014 թվականի արձանագրության համաձայն՝ ներկայացված WPH-50 տեսակի 7129 գործարանային համարի ջրաչափի զննմամբ հայտնաբերվել է, որ կապարակնքման օղակը կոտրված է, կնիքը կեղծված է, իսկ ջրաչափի համրման սարքի զննումից հայտնաբերվել է, որ համրման սարքի ապակու վրա առկա են միջամտության հետքեր:

Արձանագրությունը ստորագրված է Կազմակերպության և Չափագիտության ազգային ինստիտուտի ներկայացուցիչների կողմից: Արձանագրությունը բաժանորդ Ընկերության կողմից ստորագրված չէ **(հատոր 1-ին, գ.թ. 13)**.

5) Համաձայն 19.05.2014 թվականին Կազմակերպության աշխատակից Աշոտ Թումանյանի կողմից տրված բացատրության՝ վերջինս հայտնել է, որ աշխատում է Կազմակերպությունում որպես տեսուչ: 18.05.2014 թվականին իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ այցելել է Երևանի Կոմիտասի թիվ 54/2 հասցե՝ Ընկերության գործունեության իրականացման վայր՝ ջրաչափի աշխատանքն ուսումնասիրելու և ջրաչափի ցուցմունքն արձանագրելու: Արդյունքում պարզվել է, որ ջրաչափը բնականոն չի աշխա-

տում: Այդ մասին տեղեկացրել է իր անմիջական ղեկավարին, որն էլ հանձնարարել է ջրաչափը փոխել: Ինքն այդ մասին տեղեկացրել է Ընկերության ներկայացուցչին, որը բացում էր դիտահորը: 19.05.2014 թվականին Աշոտ Թումանյանը փականագործի հետ այցելել է Ընկերություն և Կազմակերպության հաշվին հին ջրաչափը փոխել նորով: Աշոտ Թումանյանն իր բացատրության մեջ նշել է, որ գործողությունների ամբողջ ընթացքում ներկա է եղել Ընկերության աշխատակիցը, որը նախօրոք տեղյակ է եղել ջրաչափի փոփոխության մասին: Ընկերության աշխատակցի անունն ու պաշտոնը բացատրության մեջ նշված չեն **(հատոր 1-ին, գ.թ. 52)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Կանոնների 25-րդ կետով նախատեսված՝ բաժանորդի կողմից թույլ տրված միտումնավոր խախտումների հայտնաբերման դեպքում ջրամատակարարի կողմից կանոնների խախտման ակտի կազմմանը բաժանորդի ներկայության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք Կանոնների 25-րդ կետով նախատեսված խախտումների հայտնաբերման վերաբերյալ առանց բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի ներկայության կազմված ակտը կարող է համարվել իրավաչափ և հիմք ծառայել բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի՝ նույն կետով սահմանված կարգով վերահաշվարկման (ճշգրտման) համար:

Կանոնների 18-րդ կետի համաձայն՝ ջրաչափի աշխատանքի ճշտության վերաբերյալ բաժանորդի կամ ջրամատակարարի մոտ կասկած առաջանալու դեպքում, ջրամատակարարի կամ բաժանորդի նախաձեռնությամբ, սահմանված կարգով անցկացվում է ջրաչափի ստուգաչափում (N 1 ձև) բաժանորդի դիմումի ստացման կամ ջրամատակարարի կողմից բաժանորդին ստուգաչափման մասին պաշտոնապես ծանուցման օրվանից 10-օրյա ժամկետում:

Կանոնների 42-րդ կետի «ը» ենթակետի համաձայն՝ բաժանորդը պարտավոր է չխոչընդոտել ջրամատակարարի ներկայացուցչի մուտքն իր տարածք՝ **ծառայողական վկայականը ներկայացնելու դեպքում**, տեղադրված ջրաչափի ցուցմունքների գրառման և ներքին ցանցերի, կառուցվածքների ու սարքերի տեխնիկական շահագործման վիճակը **համատեղ** ուսումնասիրելու համար, իսկ ջրամատակարարի մոտ բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկած առաջանալու դեպքում՝ դա ճշգրտելու համար:

Կանոնների 45-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ջրամատակարարն իրավունք ունի կասկած առաջանալու դեպքում պահանջելու բաժանորդին պատկանող ջրաչափի ստուգում՝ **Կանոնների 18-րդ կետի համաձայն**:

Կանոնների 25-րդ կետի համաձայն՝ բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի նվազեցման նպատակով ջրաչափի բնականոն աշխատանքի խախտման, ջրաչափի

կողանցմամբ ջրընդունման, ջրաչափի կապարակնիքների վնասման (պոկման, կեղծման) և այլ միտումնավոր խախտումների հայտնաբերման դեպքերում ջրամատակարարը խախտման հայտնաբերման պահին **բաժանորդի կամ նրա ներկայացուցչի հետ համատեղ** արձանագրում է խախտումը և կազմում կանոնների խախտման ակտ (N 3 ձև), և բաժանորդը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով: Կանոնների խախտման ակտը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և հիմք է բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի վերահաշվարկման (ճշգրտման) համար:

Բաժանորդների կողմից օգտագործված ջրի ծավալը վերահաշվարկվում է՝ բազմաբնակարան շենքի բնակիչ–բաժանորդների համար՝ մեկամսյա ժամկետով, անհատական բնակելի տների բնակիչ–բաժանորդների համար՝ երկամսյա ժամկետով, իսկ կազմակերպությունների համար՝ 6–ամսյա ժամկետով՝ հաշվի առնելով ներանցման խողովակի թողունակության ջրի քանակը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ձևավորված են լինում նշված ժամկետի ընթացքում, որի դեպքում վերահաշվարկը կատարվում է տվյալ ժամկետի համար:

Կանոնների և մասնավորապես վերը նշված դրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դրանք, ըստ էության միտված են սպառողների և հանրային ծառայություններ մատուցող անձի՝ ջրամատակարարի շահերի հավասարակշռմանը: Մասնավորապես՝ կողմերի շահերի հավասարակշռմամբ է պայմանավորված Կանոններով սահմանված բաժանորդի պարտականությունը՝ չխոչընդոտել ջրամատակարարի ներկայացուցչի մուտքն իր տարածք՝ տեղադրված ջրաչափի ցուցմունքների գրառման և ներքին ցանցերի, կառուցվածքների ու սարքերի տեխնիկական շահագործման վիճակն ուսումնասիրելու, ինչպես նաև ջրամատակարարի մոտ բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկած առաջանալու դեպքում՝ դա ճշգրտելու համար: Միաժամանակ բաժանորդի նշված պարտականությունը ծագում է բացառապես ջրամատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայականը ցույց տալու դեպքում: Մյուս կողմից, ջրամատակարարի ներկայացուցիչը, իրավունք ունենալով ծառայողական վկայականը ցույց տալու դեպքում անարգել մուտք գործել բաժանորդի տարածք՝ տեղադրված ջրաչափի ցուցմունքների գրառման և ներքին ցանցերի, կառուցվածքների ու սարքերի տեխնիկական շահագործման վիճակն ուսումնասիրելու, ինչպես նաև ջրամատակարարի մոտ բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկած առաջանալու դեպքում՝ դա ճշգրտելու համար, պարտավոր է նշված գործողություններն իրականացնել բաժանորդի հետ համատեղ, ինչը ենթադրում է, որ ջրամատակարարը (ներկայացուցիչը) պարտավոր է առնվազն ապահովել բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի պատշաճ տեղեկացումը ջրամատակարարի ներկայացուցչի գործողությունների վերաբերյալ:

Ջրամատակարարի և բաժանորդի շահերի հավասարակշռման վերաբերյալ Վճռաբեկ դատարանը, վերն արտահայտված եզրահանգումների լույսի ներքո անդրադառնալով Կանոնների 18–րդ և 45–րդ կետերի կարգավորումներին, արձանագրում է հետևյալը.

Կանոնների 45–րդ կետով սահմանված է ջրամատակարարի իրավունքը՝ կասկած առաջանալու դեպքում պահանջելու բաժանորդին պատկանող ջրաչափի ստուգում, սակայն այդպիսի ստուգումը վերջինս կարող է իրականացնել բացառապես Կանոնների 18–րդ կետի համաձայն, այն է՝ բաժանորդին ստուգաչափման մասին պաշտոնապես ծանուցելու պայմաններում և ծանուցման օրվանից տասնօրյա ժամկետում: Ստուգաչափման մասին բաժանորդին ծանուցելու ջրամատակարարի պարտականությունը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միտված է մի կողմից բաժանորդի իրավունքի իրականացման, այն է՝ ստուգաչափմանը ներկա գտնվելու ապահովմանը, մյուս կողմից ապահովում է բաժանորդի պարտականության իրականացումը, այն է՝ ջրամատակարարի ներկայացուցչին իր տարածք անարգել մուտքի ապահովման կազմակերպումը:

Վերը նշված եզրահանգումների լույսի ներքո անդրադառնալով Կանոնների 25–րդ կետին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանով գործադիրը սահմանել է ջրամատակարարի պարտականությունը՝ խախտում հայտնաբերելու դեպքում բաժանորդին

կամ նրա ներկայացուցչին մասնակից դարձնել խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն: Ընդ որում, խախտումը պետք է արձանագրվի, և խախտման մասին ակտը պետք է կազմվի խախտման հայտնաբերման պահին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործադիրի կողմից խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու ջրամատակարարի պարտականության սահմանումն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է հանրային ծառայություններ մատուցողի հետ հարաբերություններում սպառողի իրավունքների պաշտպանությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խախտումների հայտնաբերման դեպքում բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալը ենթակա է վերահաշվարկման Կանոնների 25-րդ կետով սահմանված կարգով, մասնավորապես՝ նույն կետով տարբեր բաժանորդների համար նախատեսված ժամկետով՝ հաշվի առնելով ներանցման խողովակի թողունակության ջրի քանակը, ինչը լրացուցիչ վճարային պարտավորություն է առաջացնում բաժանորդի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կանոնների 25-րդ կետով նախատեսված խախտումների հայտնաբերման վերաբերյալ կազմված ակտը չի կարող համարվել իրավաչափ և հիմք ծառայել բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի՝ նույն կետով սահմանված կարգով վերահաշվարկման (ճշգրտման) համար, եթե այն կազմվել է առանց բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի մասնակցության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 19.05.2014 թվականին Կազմակերպության կողմից Ընկերության գործունեության վայրում՝ Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 54/2 հասցեում, հայտնաբերվել է ջրամիացման, ջրօգտագործման կանոնների խախտում՝ ջրաչափի կապարակնիքների խախտում, կեղծում, որի վերաբերյալ կազմվել է սույն գործով վիճարկվող ակտը: Ակտը ստորագրվել է ջրամատակարար Կազմակերպության ներկայացուցիչների կողմից, մինչդեռ բաժանորդ Ընկերության կողմից ակտը ստորագրված չէ, առկա չէ բաժանորդի կողմից ակտը չստորագրելու մասին նշում: Ակտի «Ջրաչափի տվյալները ստուգման պահին» բաժնում ևս բացակայում է խախտում կատարած անձի ներկայացուցչի ստորագրությունը: Ավելին՝ բացակայում են նաև ջրաչափի համարի նշումը և ստուգման պահին ջրաչափի ցուցմունքը:

Դատարանը Կազմակերպության հայցը մերժելիս և Ընկերության հակընդդեմ հայցը բավարարելիս, արձանագրելով, որ վիճարկվող ակտը և հաշվարկը, ինչպես նաև նոր ջրաչափի տեղադրման հանձնման-ընդունման ակտը և հանձնարարականն Ընկերության կողմից ստորագրված չեն, իսկ Կազմակերպությունը չի ապացուցել Ընկերության մասնակցությունն ակտի կազմմանը, գտել է, որ Կազմակերպության կողմից թույլ է տրվել Կանոնների 18-րդ կետի խախտում՝ եզրակացնելով, որ նշված իրավական նորմի պահանջների խախտմամբ կազմված ակտը ենթակա է անվավեր ճանաչման և չի կարող իրավական հետևանքներ առաջացնել Ընկերության համար:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ թեև հայտնաբերված խախտումների մասին 19.05.2014 թվականի թիվ 017381 ակտը ստորագրված չէ Ընկերության կողմից, այդուհանդերձ վերջինս մասնակցել է ջրաչափի հանձնման-ընդունմանը, իսկ տվյալ ակտը կազմելու համար հիմք է ընդունվել Չափագրության ազգային ինստիտուտի կողմից 19.05.2014 թվականին կազմված արձանագրությունը, որն Ընկերությունը չի վիճարկել: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ակտն ընդամենը տեղեկություններ է պարունակում արձանագրված խախտման հիման վրա կատարված հաշվարկի վերաբերյալ: Ինչ վերաբերում է ջրաչափի խախտումները Կազմակերպության կողմից կատարված լինելու հնարավորության վերաբերյալ Ընկերության փաստարկին, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ գործի քննությամբ նշված փաստը չի ապացուցվել, և հիմնավոր համարելով Կազմակերպության փաստարկներն առ այն, որ Ընկերությունը չի վիճարկել ոչ գումարի հաշվարկը, ոչ Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից 19.05.2014 թվականին կազմված արձանագրությունը, եզրակացրել է, որ Դատարանի կողմից ճիշտ չեն գնահատվել գործում առկա ապացույցները:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը դրանք համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Հաշվի առնելով Կանոնների 25-րդ կետով խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու ջրամատակարարի պարտականության սահմանումը և այդ պարտականությունը չկատարելու, այն է՝ ակտն առանց բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի ներկայության կազմելու դեպքում դրա ոչ իրավաչափ լինելու և բաժանորդի համար իրավական հետևանքներ չառաջացնելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կանոնների 25-րդ կետի հիմքով խախտման մասին ակտը կազմելիս բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի ներկա լինելու փաստի ապացուցման բեռը կրում է ջրամատակարար Կազմակերպությունը: Ընդ որում, հաշվի առնելով, որ նույնիսկ բաժանորդի ներկայության պայմաններում վերջինս կարող է հրաժարվել ակտը ստորագրելուց, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ խախտման վերաբերյալ ակտը բաժանորդի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից ստորագրված չլինելն ինքնին հիմք չէ հաստատված համարելու ջրամատակարարի կողմից բաժանորդի ներկայությունը չապահովելու փաստը, եթե ջրամատակարարը ներկայացնում է վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ այնպիսի ապացույցներ, որոնք հաստատում են վերջինիս կողմից խախտման վերաբերյալ ակտը բաժանորդի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ կազմելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից 19.05.2014 թվականին կազմված թիվ Բ017381 ակտը, Կազմակերպության գլխավոր տնօրեն Գ. Գրիգորյանի և Չափագիտության ազգային ինստիտուտի գլխավոր տնօրեն Վ. Սահակյանի կողմից հաստատված ջրաչափի զննման և նախնական փորձաքննության 19.05.2014 թվականի արձանագրությունը ստորագրված չլինելու, ինչպես նաև գործում՝ ակտը կազմելուն Ընկերության ներկայացուցչի ներկա լինելու վերաբերյալ այլ ապացույցների բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող հաստատված համարել այն հանգամանքը, որ Ընկերությունը մասնակցել է ջրաչափի հանձնման-ընդունմանը, հետևաբար նաև՝ խախտման արձանագրմանը և խախտման մասին ակտը կազմելուն:

Ինչ վերաբերում է գործում առկա՝ ջրաչափի բնականոն չաշխատելու, այդ մասին Ընկերության ներկայացուցչին տեղեկացնելու, հին ջրաչափը նորով փոխելու գործողությունների ընթացքում Ընկերության աշխատակցի ներկայության վերաբերյալ 19.05.2014 թվականին Կազմակերպության աշխատակից Աշոտ Թումանյանի կողմից տրված բացատրությանը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն չի կարող հաստատել Կազմակերպության կողմից Կանոնների 25-րդ կետի պահանջների պահպանման, այն է՝ կանոնների խախտման ակտը կազմելուն Ընկերության ներկայությունն ապահովելու փաստը, քանի որ դրանում նշված չէ ակտը կազմելուն ենթադրաբար ներկա գտնված Ընկերության աշխատակցի անուն-ազգանունը, ինչը կարող էր հնարավորություն տալ պարզելու վերջինիս՝ կատարված գործողություններին ներկա գտնվելու և առավել ևս Ընկերության անունից կամ որպես վերջինիս ներկայացուցիչ հանդես գալու լիազորությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող ակտը կազմելուն Ընկերության ներկայությունն ապացուցված չլինելու պայմաններում դրա բացասական հետևանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով պետք է կրի Կազմակերպությունը, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հիմնավոր են Դատարանի եզրահանգումները:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Նկատի ունենալով, որ սույն գործով Ընկերությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.09.2015 թվականի որոշմամբ հետաձգվել է վճռաբեկ բողոքի համար պակաս վճարված պետական տուրքի վճարումը, և վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Կազմակերպությունից հօգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես Ընկերության կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև Կազմակերպությունից հօգուտ

ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 213.646,08 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.06.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.03.2015 թվականի վճռին:

2. «Երևան ջուր» ՓԲԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 213.646,08 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.09.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«Երևան ջուր» ՓԲԸ-ից հօգուտ «ԱՌՆԱՌՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/1302/02/13
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Հ. Ենոքյան

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ1/1302/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Դ.Ֆ. ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի ներկայացուցիչ Վարազդատ Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի ընդդեմ «ԿՈՏԱՅՔ» գարեջրի գործարան ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 69.475.220 ՀՀ դրամ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Գալստյան) (այսուհետ՝ Դատարան) 15.07.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2014 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.07.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, 46-րդ հոդվածի 9-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը և Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի հիմքով սնանկության գործով հաստատված պահանջների վերջնական ցուցակը, թիվ ԿԴ2/0017/04/13 սնանկության գործով կայացված համապատասխան որոշումներով հաստատված հանգամանքները դիտել են որպես հանրահայտ և քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքներ, որոնք ապացուցման կարիք չունեն, ինչի արդյունքում ուղղակիորեն խախտել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի պահանջները:

Ավելին, «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ պահանջների վերջնական ցուցակը՝ որպես սնանկության վարույթի առանձնահատուկ ինստիտուտ, կարող է ենթարկվել փոփոխությունների, ուստի այդ որոշմամբ հաստատված որոշակի հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ դրանք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի համատեքստում գնահատելու համար:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը ևս ներկայացված ապացույցները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի հիմքով չի ուսումնասիրել, այլապես կնկատեր, որ «Երկկողմ հաշվանցման ակտը» որևէ դրույթ չի պարունակում այն մասին, որ հաշվանցը վերաբերում է կողմերի միջև կնքված պայմանագրերին և հաշիվ- ապրանքագրերին, այսինքն՝ անգամ, եթե մի պահ անտեսենք «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի իրավակարգավորումը, միևնույն է ներկայացված հաշվանցը թե՛ պահանջի, և թե՛ բողոքի մերժման հիմք չէր կարող հանդիսանալ, քանի որ **տեղեկանքը կազմված է 19.10.2013 թվականին, իսկ հաշվանցը կատարվել է շատ ավելի վաղ:** Հետևաբար ստացվում է, որ Կազմակերպության ստանձնած պարտավորությունների առկայության չափը հավաստում է տեղեկանքով, ինչի հիմքում դրված են պայմանագրերը և հաշիվ-ապրանքագրերը, ընդ որում, դրա առկայությունը հիմնավորվում է նաև պահանջների վերջնական ցուցակով, մինչդեռ Դատարանը և Վերաքննիչ դատարանն անտեսել են այդ հանգամանքը՝ խախտելով թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի, թե՛ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի պահանջները:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ օրենսդիրը սնանկության վարույթի ընթացքում բացառել է հաշվանցի հնարավորությունը, իսկ ինչ վերաբերում է մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը հաշվանցի հնարավորությանը, ապա դա ևս հիշյալ իրավակարգավորման առկայության պայմաններում արգելվում է: Այսինքն՝ թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանն ընդունել են հաշվանցի փաստը, սակայն անտեսել են «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի վերը հիշատակված կարգավորումը, ինչն ուղղակիորեն վատթարացնելու է մյուս պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը:

Փաստորեն, կայացված դատական ակտերն ուղղակի հակասության մեջ են գտնվում նշված իրավադրույթի պահանջների հետ, առարկայազուրկ են դարձնում սնանկության վարույթը, դրա բուն էությունն ու նշանակությունը: Մինչդեռ օրենսդիրը, սահմանելով վերը նշված պահանջը, փորձել է կանխել հաշվանցման ցանկացած դեպք, ինչը, սակայն, առկա է սույն պարագայում:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Ընկերության սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված հայցի առարկան գումարի բռնագանձման պահանջն է, այլ ոչ թե՝ 01.02.2013 թվականին կնքված թիվ 01/13-Ն երկկողմ հաշվանցման ակտն անվավեր ճանաչելը: Ընկերության և Կազմակերպության միջև 01.02.2013 թվականին կնքված երկկողմ հաշվանցման ակտը չվիճարկված, օրենքով սահմանված կարգով կնքված գործարք է, որն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին, և ստորադաս դատարաններում այն սնանկության կառավարչի կողմից երբևէ չի վիճարկվել: Ավելին, Դատարանը «Յունիոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ է ընդունել 15.02.2013 թվականին, այնինչ հաշվանցման ակտը կազմվել է 01.02.2013 թվականին՝ մինչև սնանկության վերաբերյալ դիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ընկերության և Կազմակերպության միջև 24.07.2012 թվականին կնքված թիվ 24/07-Մ մատակարարման պայմանագրի համաձայն՝ Ընկերությանը մատակարարվել է պայմանագրով նախատեսված ապրանք՝ սեփական արտադրության գարեջրատեսակներ **(հատոր 1-ին, գ.թ. 21-24):**

2. Ընկերության և Կազմակերպության միջև 09.08.2012 թվականին կնքված «24.07.2012 թվականի մատակարարման պայմանագիր թիվ 24/07-Մ-ում լրացումներ կատարելու մասին» թիվ 09/08-Մ պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև 24.07.2012 թվականին կնքված թիվ 24/07-Մ մատակարարման պայմանագրի 6-րդ հոդվածը լրացվել է 6.4 կետով, որի համաձայն՝ մատակարարի մոտ առաջացած պարտքը կողմերը կարող են հաշվանցել գնորդի՝ մատակարարի հանդեպ ունեցած պարտքից: Կողմերը հաշվանցումը կատարում են՝ կազմելով հաշվանցման ակտ **(հատոր 1-ին, գ.թ. 25):**

3. 01.02.2013 թվականի թիվ 01/13-Ն երկկողմ հաշվանցման ակտի համաձայն՝ Ընկերությունը և Կազմակերպությունը միմյանց հանդեպ ունեցած պարտքից կատարում են 69.489.520 ՀՀ դրամի հաշվանցում, ինչի արդյունքում Կազմակերպությունը 69.489.520 ՀՀ դրամի չափով մարված է համարում Ընկերության՝ իր հանդեպ ունեցած պարտքը, իսկ Ընկերությունը 69.489.520 ՀՀ դրամի չափով մարված է համարում Կազմակերպության՝ իր հանդեպ ունեցած պարտքը: Սույն հաշվանցումը կատարելուց հետո՝ 01.02.2013 թվականի դրությամբ Կազմակերպությունն Ընկերության հանդեպ պարտք չունի, իսկ Ընկերության ընդհանուր պարտքը Կազմակերպության հանդեպ կազմում է 509.501.220 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 26)**:

4. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 29.04.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 վճռի համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է սնանկ **(հատոր 1-ին, գ.թ. 5-6):**

5. 02.08.2013 թվականին Կազմակերպությունը սնանկ ճանաչված Ընկերության նկատմամբ ներկայացրել է իր պահանջը՝ 505.104.963 ՀՀ դրամի չափով, որը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 որոշմամբ հաստատվել է **(հատոր 1-ին, գ.թ. 27-43):**

6. Կազմակերպության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության հանդեպ Կազմակերպության ունեցած կրեդիտորական պարտքը (բազմակի օգտագործման տարաների հետ գնման գծով) 19.10.2013 թվականի դրությամբ կազմում է 69.475.220 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 81):**

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի և 46-րդ հոդվածի 9-րդ մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի և 46-րդ հոդվածի 9-րդ մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պարտավորությունը կամ դրա մի մասը պարտապանի կողմից դատական կարգով վիճարկելու պարագայում սնանկության գործով կայացված «Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված հանգամանքները կարող են դիտարկվել որպես քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքներ, որոնք այլ քաղաքացիական գործ քննելիս ապացուցման կարիք չունեն:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում (**բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների**) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները** նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր որոշմամբ անդրադառնալով վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որով այն վերաբերում է նախկինում քննված այլ քաղաքացիական գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին: Ըստ այդմ, նոր

քաղաքացիական գործով այդ հանգամանքներն այլևս ապացուցման կարիք չունեն: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով նախադատելիության կամ պրեյուդիցիայի (լատիներեն՝ praejudicialis–ից) դատավարական ինստիտուտը, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը և նման կապի օբյեկտիվ սահմանները, արձանագրել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52–րդ հոդվածի 2–րդ կետ): Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս *(տե՛ս, «Սաթնէ» ՍՊԸ–ն ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների թիվ 3–93(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):*

Հետագայում մեկ այլ որոշման շրջանակներում վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով: Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից, կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման *(տե՛ս, Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշտարակի քաղաքապետարանի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի իրավադրույթներով մնանկության գործի քննության արդյունքում կայացված ակտերի նախադատելիության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն, այդ հարաբերությունների նկատմամբ ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հիշատակված որոշումներում արտահայտված դիրքորոշումները: Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածի 9–րդ մասի իրավակարգավորումներին՝ հաշվի առնելով սույն գործի վարույթի առանձնահատկությունները:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածի 9–րդ մասի համաձայն՝ պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո դատարան ներկայացրած նոր պահանջները և պահանջների փոփոխությունները դատարանը հանձնում է կառավարչին: Կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դրա պատճենն ուղարկում է պարտապանին, պարտատերերին կամ այդ մասինամփոփ տեղեկատվություն է հրապարակում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե պահանջի փոփոխության պատճենն ստանալուց կամ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում տեղեկատվություն հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը, պարտատե-

րերը պահանջի, պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն չեն ներկայացնում դատարան, ապա կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունը գրանցում է պահանջների գրանցամատյանում՝ նույն օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ «պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումը, հետևաբար նաև պահանջների վերջնական ցուցակն ինքնին, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունները, պարտադիր է սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ծավալը որոշելու համար: Հետևաբար <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված իրավունքների և պարտականությունների առումով այն պարտադիր է նաև սնանկության վարույթում պարտատեր գրանցված անձանց համար: Ավելին, պարտատիրոջ կողմից սնանկության վարույթում պահանջ չներկայացնելը կամ դրա մերժումը բացասական հետևանքներ է առաջացնում այդ պարտատիրոջ համար: Միաժամանակ վերլուծելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պահանջների վերջնական ցուցակը սնանկության վարույթի շրջանակներում կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների, ինչը վկայում է այն մասին, որ համապատասխան դատական ակտով հաստատված պարտատերերի ցուցակը և նրանց պահանջների չափն իրենց բնույթով չեն կարող միանշանակորեն համարվել վերջնական և անփոփոխելի հանգամանքներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Կազմակերպության միջև 24.07.2012 թվականին կնքված թիվ 24/07-Մ մատակարարման պայմանագրով Ընկերությանը մատակարարվել է պայմանագրով նախատեսված ապրանք՝ սեփական արտադրության գարեջրատեսակներ: Այնուհետև Ընկերության և Կազմակերպության միջև 09.08.2012 թվականին կնքված՝ «24.07.2012 թվականի մատակարարման պայմանագիր թիվ 24/07-Մ-ում լրացումներ կատարելու մասին» թիվ 09/08-Մ պայմանագրով կողմերի միջև 24.07.2012 թվականին կնքված թիվ 24/07-Մ մատակարարման պայմանագրի 6-րդ հոդվածը լրացվել է 6.4 կետով, որի համաձայն՝ մատակարարի մոտ առաջացած պարտքը կողմերը կարող են հաշվանցել գնորդի՝ մատակարարի հանդեպ ունեցած պարտքից: Կողմերը հաշվանցումը կատարում են՝ կազմելով հաշվանցման ակտ: Միաժամանակ 01.02.2013 թվականի թիվ 01/13-Ն՝ երկկողմ հաշվանցման ակտով Ընկերությունը և Կազմակերպությունը միմյանց հանդեպ ունեցած պարտքից կատարել են 69.489.520 ՀՀ դրամի հաշվանցում, ինչի արդյունքում Կազմակերպությունը 69.489.520 ՀՀ դրամի չափով մարված է համարել Ընկերության՝ իր հանդեպ ունեցած պարտքը, իսկ Ընկերությունը 69.489.520 ՀՀ դրամի չափով մարված է համարել Կազմակերպության՝ իր հանդեպ ունեցած պարտքը: Սույն հաշվանցումը կատարելուց հետո 01.02.2013 թվականի դրությամբ Կազմակերպությունն Ընկերության հանդեպ պարտք չի ունեցել, իսկ Ընկերության ընդհանուր պարտքը Կազմակերպության հանդեպ կազմել է 509.501.220 ՀՀ դրամ: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 29.04.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ, իսկ 02.08.2013 թվականին Կազմակերպությունը սնանկ ճանաչված Ընկերության նկատմամբ ներկայացրել է իր պահանջը՝ 505.104.963 ՀՀ դրամի չափով, որը ՀՀ Կոտայքի մարզի

ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 որոշմամբ հաստատվել է: Կազմակերպության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության հանդեպ Կազմակերպության ունեցած կրեդիտորական պարտքը (բազմակի օգտագործման տարաների հետ գնման գծով) 19.10.2013 թվականի դրությամբ կազմում է 69.475.220 ՀՀ դրամ:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, վկայակոչել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները և պատճառաբանել է, որ «Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 որոշմամբ հաստատվել է «Դ.Ֆ. Դիստրիբյուտոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որի պարտատերերի ցանկում ընդգրկվել է նաև «ԿՈՏԱՅՔ» գարեջրի գործարան ՍՊԸ-ն՝ 505.104.963 ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով Կազմակերպության՝ պարտապանի նկատմամբ պարտքի չափը նվազեցնելու հանգամանքը: Նշված որոշումը՝ պատասխանող Կազմակերպության պահանջի մասով, հայցվոր Ընկերության սնանկության գործով կառավարչի կողմից բողոքարկվել է վերաքննության կարգով, սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել պահանջի չափը հաստատելու վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, իսկ վերաքննիչ բողոքի մյուս հիմնավորումները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը համարել է պահանջի չափը հաստատելու վրա ազդեցություն չունեցող և այդ պատճառաբանությամբ լրացուցիչ չի անդրադարձել դրանցից յուրաքանչյուրի գնահատման հարցին, ուստի և մերժել է վերաքննիչ բողոքը՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 որոշումը թողնելով օրինական ուժի մեջ»:

Վերաքննիչ դատարանը ևս, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը և վերահաստատելով Դատարանի պատճառաբանություններն ու հիմնավորումները, անհիմն է համարել բողոք բերած անձի այն պնդումը, թե՝ «... գործում առկա նյութերը թույլ են տալիս եզրահանգել, որ առկա է պատասխանողի պարտավորության առկայությունը հիմնավորող տեղեկանք, որտեղ արձանագրված է 69.475.220 ՀՀ դրամի չափով պարտքի առկայություն 2013 թվականի հոկտեմբերի 19-ի դրությամբ...», քանի որ վերը նշվածի հիման վրա արդեն իսկ հաստատվում է Ընկերության նկատմամբ՝ Կազմակերպության պարտավորության բացակայության հանգամանքը»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Դատարանի կողմից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համապատասխան, կատարվել է գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով ստորադաս դատարանները ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2013 թվականի թիվ ԿԴ2/0017/04/13 օրինական ուժի մեջ մտած որոշմամբ հաստատված հանգամանքները, մասնավորապես՝ Կազմակերպության պահանջի չափը և պարտքի հաշվանցման փաստը, գնահատելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իրավակարգավորումների համատեքստում, դիտել են որպես նախադատելի նշանակություն ունեցող հանգամանքներ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վկայակոչված հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ <<պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին>> որոշումը չի կարող ունենալ օրինական ուժ ստացած վճռի կարգավիճակ և նախադատելի լինել այլ քաղաքացիական գործ քննելիս: Այդուհանդերձ <<պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին>> որոշումը կարող է դիտվել որպես ինքնուրույն գրավոր ապացույց, որը կարող է պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում

հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0898/02/13
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ի. Վարդանյան
Ս. Միքայելյան

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0898/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարգարիտ Դալլաքյանի և Աշոտ Ղազարյանի ներկայացուցիչ Մկրտիչ Դավթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.09.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Ղազարյանի, Մարգարիտ Դալլաքյանի ընդդեմ <<Վանաձոր>> նոտարական տարածքի նոտար Արուսյակ Ազարյանի, Մարինե Պարանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր)՝ առուվաճառքի պայմանագրի գրանցումն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք՝ բնակարանի նկատմամբ Կադաստրի կողմից կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, գույքը վերադարձնելու և վնասի հատուցման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Ղազարյանը և Մարգարիտ Դալլաքյանը պահանջել են անվավեր ճանաչել Աշոտ Ղազարյանի և Մարինե Պարանյանի միջև Վանաձորի Աղյուսագործների փողոցի թիվ 29/1 տան նկատմամբ <<Վանաձոր>> նոտարական տարածքի նոտար Արուսյակ Ազարյանի կողմից թիվ 2077 սեղանամատյանի համարի տակ արված 22.06.2010 թվականին առուվաճառքի պայմանագրի գրանցումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Կադաստրի կողմից Մարինե Պարանյանի անվամբ 02.07.2010 թվականին միասնական թիվ 06-001-004-093 մատյանի 90 համարի տակ կատարած վերոնշյալ հասցեի տան նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը ու նշված գույքը վերադարձնել Աշոտ Ղազարյանին, ինչպես նաև Մարինե Պարանյանից հօգուտ Մարգարիտ Դալլաքյանի բռնագանձել 1.600.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Բ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 30.04.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.09.2014 թվականի որոշմամբ Աշոտ Ղազարյանի և Մարգարիտ Դալլաքյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.04.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Ղազարյանի և Մարգարիտ Դալլաքյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարինե Պարանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը, 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ գնահատում՝ անտեսելով, որ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի թիվ ԼԴ/0181/01/11 դատավճռով հաստատվել է Աշոտ Ղազարյանի և Մարինե Պարանյանի միջև Աշոտ Ղազարյանին պատկանող՝ Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոցի թիվ 29/1 հասցեի տնատիրության շուրջ կնքված առուվաճառքի պայմանագրի շինծու գործարք լինելու փաստը:

Վերոնշյալ դատավճռով և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի որոշմամբ հաստատվել է, որ Մարինե Պարանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի հատկանիշներով առկա հանցանշանի հիմքով տոկոսով գումար է տվել Մարգարիտ Դալլաքյանին և, որպես տրված գումարի դիմաց տոկոսների ստացման ու մայր գումարի վերադարձման երաշխիք, 22.06.2010 թվականին նոտարական գրասենյակում սեղանամատյանի 2077 համարի տակ գրանցվել է Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոցի թիվ 29/1 հասցեի տան առուվաճառքի պայմանագիրը, այսինքն՝ կողմերի միջև իրականում ծագել են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են եղել, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկացել են ներկայացնել երրորդ անձանց, որով և հաստատվում է գործարքի շինծու լինելը:

Բացի այդ, անկախ քրեական գործի կարճման հանգամանքից, վերը նշված դատական ակտերը սույն քաղաքացիական գործի համար ունեն նախադատելի նշանակություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.09.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործի պարագայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետում խոսք է գնում քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի մասին, մինչդեռ հայցվորները վկայակոչում են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի որոշումը, որով բեկանվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի դատավճիռը: Հետևաբար, քանի որ սույն գործով առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, հակառակը՝ առկա է բեկանված դատավճիռ, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը կիրառելի չէ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտմանը, ապա հարկ է նշել, որ թիվ ԼԴ/0181/01/11 քրեական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2014 թվականի դատավճիռը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի որոշ-

մամբ բեկանվել է և օրինական ուժ չի ստացել, հետևաբար բեկանված և քրեական գործով օրինական ուժի մեջ չմտած դատավճռի և դրանով հաստատված հանգամանքների մասին հետևություններ կատարելն առարկայազուրկ է: Ավելին, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի որոշմամբ սույն գործով ապացուցման առարկայի մեջ մտնող ոչ մի փաստական հանգամանք ապացուցված չէ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Աշոտ Ղազարյանի (Վաճառող) և Սարինե Պարանյանի (Գնորդ) միջև 22.06.2010 թվականին կնքված նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Վաճառողը վաճառել է, իսկ Գնորդը որպես սեփականություն ձեռք է բերել քաղաք Վանաձոր, Աղյուսագործների փողոց, թիվ 29/1 հասցեում գտնվող բնակելի տունը՝ 107,36քմ ընդհանուր մակերեսով, և 0,077հա մակերեսով հողամասը **(հատոր 1-ին, գ.թ. 79):**

2) ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի թիվ ԼԴ/0181/01/11 դատավճռով Սարինե Պարանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով (վաշխառություն): Համաձայն նշված դատավճռի՝ <<Սարինե Պարանյանը Վանաձոր քաղաքում 2008 թվականի դեկտեմբերից մինչև 2010 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում, մաս-մաս, ընդհանուր 1.365.000 ՀՀ դրամին համարժեք 4.550 ԱՄՆ դոլար է տվել Մարգարիտ Դալլաքյանին և դրա համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող ամսական 10 տոկոս դրույքի չափով տոկոսագումարներ է ստացել նրանից: 2009 թվականի մարտ և ապրիլ ամիսներին Մարգարիտ Դալլաքյանը վերցրած պարտքի ամսական տոկոսները և պարտքն այլևս չի կարողացել վճարել: Եկել են համաձայնության և, որպես պարտքի վերադարձման երաշխիք, Մարգարիտ Դալլաքյանի ամուսնու՝ Աշոտ Ղազարյանի և Սարինե Պարանյանի միջև կնքվել է Աշոտ Ղազարյանին պատկանող 8.270.000 ՀՀ դրամ արժեք ունեցող Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոցի թիվ 29/1 հասցեի տնատիրության առուվաճառքի շինծու պայմանագիր: Պայմանավորվել են, որ հետագայում վարկ կձևակերպեն, տունը հետ կգնեն՝ վարկի գումարից վճարելով Սարինե Պարանյանի պարտքը: Սակայն հետագայում վարկի տրամադրումը չի ստացվել: Մինչ օրս բնակարանը մնում է գրանցված Սարինե Պարանյանի անվամբ՝ որպես վերջինիս սեփականություն: Մարգարիտ Դալլաքյանը Սարինե Պարանյանի պարտքի մայր գումարը մինչ օրս չի վերադարձրել ու իր ընտանիքով մինչ օրս ապրում է նշված բնակարանում>> **(հատոր 1-ին, գ.թ. 11-42):**

3) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի թիվ ԼԴ 0181/01/11 որոշմամբ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի դատավճիռը բեկանվել է, գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործի քննության և լուծման ընթացքում ամբաստանյալ Սարինե Յուրայի Պարանյանի փաստացի կատարած գործողություններին առաջին ատյանի դատարանի կողմից տրվել է քրեաիրավական ճիշտ որակում, և այդ առումով դատավճռում շարադրված հետևություններն օրինական են և հիմնավորված **(հատոր 1-ին, գ.թ. 43-72):**

4.Վճռաբեկդատարանիպատճառաբանություններըևեզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

- բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է,

որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատարանի կողմից քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման նախադատելիության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

– Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի մասնակի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Վերաքննիչ քրեական դատարանի կողմից քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթի կարճման որոշմամբ հաստատված հանգամանքները կարող են դիտվել որպես քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներ և նախադատելի լինել քաղաքացիական գործ քննելիս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած **դատավճիռը** պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց՝ **հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք**:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ անդրադարձել է դատավճռի նախադատելիության հարցին, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիահիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար հետևյալ շրջանակներում.

1. արդյո՞ք կատարվել են որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյո՞ք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից (հանցագործության սուբյեկտ) *(տե՛ս, Կարապետ Գրաչյանն ընդդեմ Ափում Ղազազյանի թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ նախադատելի նշանակություն ունեցող դատական ակտը դատավճիռն է, քանի որ քաղաքացիական դատավարության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները՝ անձը (հանցագործության սուբյեկտ) և գործողությունները (հանցագործության օբյեկտիվ կողմ), կարող են հաստատված համարվել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից քրեական գործի վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումներում

հաստատված՝ հանցավոր արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների վերաբերյալ եզրահանգումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով չունեն նախադատելի նշանակություն:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից քրեական գործի վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումները դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի թիվ ԼԴ/0181/01/11 որոշմամբ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի դատավճիռը բեկանվել է, գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, հանգել է այն հետևության, որ պատասխանողի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ առկա չէ, ուստի թիվ ԼԴ/0181/01/11 քրեական գործով որևէ հաստատված հանգամանք՝ որպես նախադատելի սույն գործով ընդունվել չի կարող, ուստի և հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, ըստ էության, համաձայնել է Դատարանի եզրահանգումներին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի դատավճռով հաստատվել է Սարինե Պարանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի (վաշխառություն) կատարումը: Մասնավորապես՝ դատավճռում արձանագրվել է, որ Սարինե Պարանյանը Վանաձոր քաղաքում 2008 թվականի դեկտեմբերից մինչև 2010 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում, մաս-մաս, ընդհանուր 1.365.000 ՀՀ դրամին համարժեք 4.550 ԱՄՆ դոլար է տվել Սարգարիտ Դալլաքյանին և դրա համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող ամսական 10 տոկոս դրույքաչափով տոկոսագումարներ է ստացել նրանից: Հետագայում եկել են համաձայնության, և որպես պարտքի վերադարձման երաշխիք, Սարգարիտ Դալլաքյանի ամուսնու՝ Աշոտ Ղազարյանի և Սարինե Պարանյանի միջև կնքվել է Աշոտ Ղազարյանին պատկանող, 8.270.000 ՀՀ դրամ արժեք ունեցող Վանաձոր քաղաքի Աղյուսագործների թիվ 29/1 հասցեի տնատիրության առուվաճառքի շինծու պայմանագիր:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 04.06.2013 թվականի որոշմամբ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի դատավճիռը բեկանվել, գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ գործի քննության և լուծման ընթացքում ամբաստանյալ Սարինե Յուրայի Պարանյանի փաստացի կատարած գործողություններին առաջին ատյանի դատարանի կողմից տրվել է քրեաիրավական ճիշտ որակում, և այդ առումով դատավճռում շարադրված հետևություններն օրինական են և հիմնավորված:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի որոշմամբ՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2013 թվականի դատավճիռն ամբողջությամբ բեկանվել է, և քրեական գործի վարույթն ամբողջովին կարճվել է, որպիսի պայմաններում սույն գործով առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից

քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթի կարճման որոշումը և դրանով հաստատված հանգամանքները վերը շարադրված մեկնաբանությունների հիմքով չեն կարող ունենալ օրինական ուժ ստացած դատավճռի կարգավիճակ և նախադատելի լինել այլ քաղաքացիական գործ քննելիս:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի փաստարկը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2013 թվականի թիվ ԼԴ/0181/01/11 որոշման նախադատելիության վերաբերյալ, անհիմն է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթի կարճման որոշումը կարող է դիտվել որպես ինքնուրույն գրավոր ապացույց, որը կարող է պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև ստորադաս դատարանները ճիշտ եզրահանգման են եկել վերոնշյալ որոշման՝ նախադատելի չլինելու վերաբերյալ, այդուհանդերձ, այն որպես ինքնուրույն գրավոր ապացույց չհետազոտելով և չգնահատելով, թույլ են տվել դատավարական նորմի խախտում: Հետևաբար բողոք բերած անձի փաստարկը՝ ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման վերաբերյալ, հիմնավոր է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 24.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.09.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում նաև՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշմամբ հետաձգված, ինչպես նաև վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 24.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/3780/02/14

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/3780/02/14**
2015թ.

Նախագահող դատավոր՝ Գ. Կարախանյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ Ա/Ձ Գուրգեն Այվազյանի, Իրինա Ալոյանի, Տիգրան Այվազյանի, Արմեն Այվազյանի՝ պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Երևանի Գ. Նժդեհի փողոցի թիվ 30/3 շենքի 6-րդ բնակարանի՝ Ա/Ձ Գուրգեն Այվազյանին պատկանող բաժինն առանձնացնել և 364.875 ՀՀ դրամի չափով դրա վրա բռնագանձում տարածել:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուբանյան) (այսուհետ՝ Դատարան) 09.12.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.03.2015 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.12.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով վիճելի բնակարանից բաժնեմասն առանձնացնելու հնարավորության հարցը պարզելու համար օրենսդրորեն Դատարանին հնարավորություն է տրվել իր նախաձեռնությամբ նշանակելու փորձաքննություն: Մինչդեռ Դատարանը, փորձաքննություն չնշանակելով, չի իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, քանի որ վիճելի բնակարանից Ա/Չ Գուրգեն Այվազյանին պատկանող բաժնեմասն առանձնացելու հնարավորության վերաբերյալ տեղեկությունները հանդիսացել են որոշիչ գործի ելքի համար:

Վերաքննիչ դատարանը, համարելով, որ դատարանի հայեցողությամբ փորձաքննության նշանակումը վերջինիս իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, Տեսչությանը զրկել է պարտավորության գումարը ստանալու միակ հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.03.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչական դատարանի 18.09.2013 թվականի թիվ ՎԴ/5466/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ Տեսչության հայցն ընդդեմ Ա/Չ Գուրգեն Այվազյանի՝ 364.875 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է **(գ.թ. 5-7):**

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձման բաժնի (այսուհետ՝ Ծառայություն) հարկադիր կատարող Ա. Վահրադյանի 16.09.2014 թվականի «25.04.2014 թվականի հարուցված կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ կատարողական գործողություններ ընթացքում արգելանք է դրվել թիվ ՎԴ/5466/05/13 վարչական գործով պարտապան Գուրգեն Այվազյանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 30/3 շենքի 6-րդ հասցեի բնակարանի վրա, իսկ այլ գույք և եկամուտներ չեն հայտնաբերվել: Միաժամանակ 16.09.2014 թվականի որոշմամբ կատարողական վարույթն ավարտվել է **(գ.թ. 10):**

3. Ծառայության 16.09.2014 թվականի գրության համաձայն՝ Տեսչությանն առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն դիմել դատարան՝ պարտապան Գուրգեն Այվազյանին պատկանող բաժնեմասն առանձնացնելու և վերջինիս վրա բռնագանձում տարածելու պահանջով **(գ.թ. 9):**

4. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման 02.10.2014 թվականի թիվ ԿԽ-1/4222 գրության համաձայն՝ Ա/Չ Գուրգեն Այվազյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 30/3 շենքի 6-րդ հասցեի բնակարանի սեփականատերերն են նաև քաղաքացիներ Իրինա Ալոյանը, Տիգրան Այվազյանը և Արմեն Այվազյանը՝ յուրաքանչյուրը 1/4 բաժնեմասի իրավունքով **(գ.թ. 12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առեր-

նույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատարանների կողմից սեփական նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորության իրականացման խնդրին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1) գրավոր և իրեղեն ապացույցներով.

2) փորձագետների եզրակացություններով.

3) վկաների ցուցմունքներով.

4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ **կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում, ինչպես նաև նշել այն մասնագիտացված փորձագիտական հաստատությունը կամ այն փորձագետին, որոնց դատարանը կարող է հանձնարարել փորձաքննության կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված դատավարական նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ *(տե՛ս, «Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ն ընդդեմ «Վագ քար» ՍՊԸ-ի և մյուսների թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատա-

րանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից *(տե՛ս, Ռազմիկ Սարգսյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի թիվ 3-259(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է նաև այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից *(տե՛ս, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ «Շապ» ՍՊԸ-ի թիվ 0351/02/08-(ԾԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ գործող քաղաքացիադատավարական իրավակարգավորման պայմաններում դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն ինչպես կողմի միջնորդությամբ, **այնպես էլ իր նախաձեռնությամբ**: Այսինքն՝ օրենսդրորեն սահմանվել է դատարանի հայեցողական լիազորությունը՝ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը կարևորում է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: «Հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանի բնորոշմամբ «դատական հայեցողությունը» կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է: «Դատական հայեցողությանը», սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն: Իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ երաշխավորվի կամայականության արգելքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները: Ըստ այդմ, «դատական հայեցողության» սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզե-

լու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, միաժամանակ պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննության նշանակումը թեև դատարանի հայեցողական լիազորությունն է, այնուամենայնիվ, դատարանն իր այդ լիազորությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել ՀՀ քաղաքացիական դավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված և երաշխավորված գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ներքին համոզման հանգելու պարտականության լիարժեք իրականացումը՝ միաժամանակ երաշխավորելով կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքները, անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև վիճելի իրավահարաբերության բնույթը և կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի 18.09.2013 թվականի թիվ ՎԴ/5466/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռով Տեսչության հայցն ընդդեմ Ա/Հ Գուրգեն Այվազյանի՝ 364.875 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է: Ծառայության 16.09.2014 թվականի «25.04.2014 թվականի հարուցված կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշմամբ կատարողական վարույթն ավարտվել է պարտապանի մոտ այլ գույք և եկամուտներ չլինելու հիմքով: Միաժամանակ նույն որոշմամբ արգելանք է դրվել Ա/Հ Գուրգեն Այվազյանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող Երևանի Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 30/3 շենքի 6-րդ հասցեի բնակարանի վրա, և Ծառայության 16.09.2014 թվականի գրությամբ Տեսչությանն առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն դիմել դատարան՝ պարտապան Գուրգեն Այվազյանին պատկանող բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով: Կադաստրի 02.10.2014 թվականի թիվ ԿԽ-1/4222 գրության համաձայն՝ Ա/Հ Գուրգեն Այվազյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Երևանի Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 30/3 շենքի 6-րդ հասցեի բնակարանի բաժնետերերն են քաղաքացիներ Իրինա Ալոյանը, Տիգրան Այվազյանը և Արմեն Այվազյանը՝ յուրաքանչյուրը 1/4 բաժնեմասի իրավունքով:

Դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 200-րդ հոդվածները, հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ ապացույց՝ վիճելի բնակարանից Գուրգեն Այվազյանին պատկանող բաժնեմասն առանձնացնելու հնարավորության վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ «...իրավաչափ է համարում Դատարանի այն եզրահանգումը, որ հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ թույլատրելի ապացույց՝ վիճելի բնակարանից Գուրգեն Այվազյանին պատկանող բաժնեմասն առանձնացնելու հնարավորության վերաբերյալ»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «եթե անգամ Դատարանն իր նախաձեռնությամբ նշանակեր փորձաքննություն, ապա որևէ թույլատրելի ապացույց չուներ (բնակարանի սեփականության վկայական, հատակագիծ) փորձագետին ներկայացնելու: Ստացվում է, որ հայցվորի փոխարեն դատարանն ապացույց ձեռք բերելու գործողություն պետք է կատարեր, որով էլ կխախտեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջը»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների իրավաչափությանը, գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով, որ սույն գործով հայցի առարկան ընդհանուր գույքից բաժնեմասն առանձնացնելը և դրա վրա բռնագանձում տարածելն է, իսկ հայցի իրավական հիմքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածը, գտնում է, որ սույն գործով փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորության իրակա-

նացման անհրաժեշտությունը պետք է գնահատել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների լույսի ներքո: Այսպես,

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պարտատիրոջ պահանջի իրավունքը ծագում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված այն դեպքի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակից պարտապանի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանությունն իրենց հետ ընդհանուր գույքում բաժին ունեցող պարտապանի ունեցած պարտավորությունների կատարման գործընթացում: Ընդ որում, այն դեպքում երբ ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվում են պարտապանի բաժինը ձեռք բերել, պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

Վկայակոչված իրավանորմերից և դրանց մեկնաբանմանն ուղղված վերլուծություններից հետևում է, որ նմանատիպ փաստական և իրավական հիմքերով վեճերով գործի լուծման համար նախևառաջ էական նշանակություն ունի պարտապանի բաժնեմասը բնեղենով առանձնացնելու հնարավորության հարցը, որպիսի փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան մասնագիտական եզրակացությամբ, որի ստացմանն ուղղված դատավարական միջոցներից է գործով փորձաքննության նշանակումը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը չի իրացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետով իրեն վերապահված՝ փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորությունը, ինչի արդյունքում էլ ոչ իրավաչափորեն արձանագրել է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի՝ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու հնարավորության բացակայությունը՝ միաժամանակ չապահովելով գործի փաստական հանգամանքների լրիվ և բազմակողմանի քննությունը: Մինչդեռ տվյալ պարագայում, Վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ, նման հայեցողական լիազորության իրականացման անհրաժեշտությունն ուղղակիորեն բխում է վիճելի իրավահարաբերության բնույթից և գործի փաստական հանգամանքներից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1284/02/12
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Տ. Նազարյան
Կ. Հակոբյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/1284/02/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարեն Ախիկյանի ներկայացուցիչ Վարազդատ Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի (այսուհետ՝ Կառավարիչ) ընդդեմ Կարեն Ախիկյանի, Արշակ Միլիտոնյանի, Գարուշ և Արայիկ Հակոբյանների՝ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող անշարժ գույքից բաժինն առանձնացնելու, և ըստ Կարեն Ախիկյանի, Արշակ Միլիտոնյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կառավարչի, Գարուշ և Արայիկ Հակոբյանների՝ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող անշարժ գույքից բաժինն առանձնացնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է առանձնացնել Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/9 և թիվ 86/8 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից Ընկերության հասանելիք բաժինը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարեն Ախիկյանը և Արշակ Միլիտոնյանը պահանջել են առանձնացնել Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 և թիվ 86/6 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից Կարեն Ախիկյանի և Արշակ Միլիտոնյանի 1/5-ական բաժինները:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 01.04.2014 թվա-

կանի վճռով Ընկերության հայցը և Արշակ Միլիտոնյանի հակընդդեմ հայցը մերժվել են, իսկ Կարեն Ախիկյանի հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.09.2014 թվականի որոշմամբ Գարուշ և Արայիկ Հակոբյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է մասնակիորեն՝ Կարեն Ախիկյանի հակընդդեմ հայցը բավարարելու մասով բեկանել Դատարանի 01.04.2014 թվականի վճիռը, և գործն այդ մասով ուղարկել նոր քննության: Վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարեն Ախիկյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գարուշ և Արայիկ Հակոբյանների ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 6-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ հոդվածները, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 60-րդ հոդվածի 1-ին կետը, 62-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի կողմից չի իրականացվել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն, որի արդյունքում սխալ են գնահատվել գործի համար էական նշանակություն ունեցող փորձագիտական եզրակացությունները և կայացվել է ոչ ճիշտ դատական ակտ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով երկու փորձագիտական եզրակացությունները, հիմք ընդունելով, որ ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից 1.627,08քմ մակերեսով հողամասից Կարեն Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող հատվածի առանձնացման որևէ տարբերակ չի առաջարկվել, գտել է, որ, ըստ էության, նշված եզրակացությամբ արձանագրվել է բաժնեմասի առանձնացման անհնարինությունը: Մինչդեռ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագետն արձանագրել է, որ Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում բաժնային սեփականության ներքո գտնվող հողատարածքից Կարեն Ախիկյանի 1/5 փաստացի օգտագործվող բաժնեմասի առանձնացում կատարելը փորձագիտական և տեխնիկական տեսանկյունից դիտվել է հնարավոր (կից ներկայացված գծագրին համապատասխան) և հայտնել է, որ այդ տարբերակով բաժնային սեփականության առանձնացումը չի ոտնահարում մյուս սեփականատերերի իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված երկու եզրակացությունները հակասում են իրար:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը, փորձագետի կողմից առանձնացման որևէ տարբերակ չառաջարկելը նույնացնելով բաժնեմասի առանձնացման անհնարինության հետ, հաշվի չի առել, որ տարբերակ չառաջարկելը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով, այդ թվում՝ ոլորտի անտեղյակությամբ կամ ուղղակի անգործությամբ, իսկ անհնարինությունը՝ առաջադրվածը կատարելու հնարավորության բացակայությունն է:

Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանը կատարել է խնդրահարույց եզրակացությունների պարզ համադրում՝ ըստ էության ամբողջությամբ և խորությամբ չուսումնասիրելով գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և հանգամանքները, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը ներկայացված ապացույցների գնահատումը չի իրականացրել դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիմքով:

Վերաքննիչ դատարանն էական նշանակություն չի տվել նաև այն հանգամանքին, որ հողամասն արդեն իսկ փաստացի ընդեղենով առանձնացված է, ինչն արձանագրվել է երկու եզրակացություններով և չի առաջացնում սահմանափակ օգտագործման անհրա-

ժեշտություն, դրա մասով սահմանակից հարևանները չեն առարկում, այսինքն՝ իրական վեճը պարզապես բացակայում է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ առաջին եզրակացության պարագայում փորձագետին առաջադրված հարցադրումները տարբերվում են երկրորդ եզրակացության դեպքում փորձագետին առաջադրված հարցադրումներից: Մասնավորապես, եթե առաջինի դեպքում փորձագետին առաջադրված է եղել ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը բնեղենով առանձնացնելու հնարավորության հարցը, երկրորդի պարագայում՝ հարցադրումն արվել է միայն մեկ սեփականատիրոջ՝ Կարեն Ախիկյանի մասով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ կրկնակի փորձաքննություն կարող է նշանակվել դատարանի հայեցողական լիազորությամբ այն պարագայում, երբ դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կամ հակասություններ են առաջանում մի քանի փորձագետների եզրակացություններում: Մինչդեռ սույն գործով կրկնակի փորձաքննության անհրաժեշտություն չէր կարող առաջանալ, քանի որ նախ՝ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացության հիմնավորվածության և արժանահավատության վերաբերյալ առկա չեն հիմնավոր կասկածներ այն պատճառաբանությամբ, որ փորձաքննությունն իրականացվել է փաստացի չափագրման հիմքով՝ ի տարբերություն ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված եզրակացության, որը տրվել է ակնադիտական տեղազննության հիման վրա, բացի այդ, մյուս կողմը որևէ առարկայական և վերաբերելի միջնորդություններ կամ առարկություններ չի ներկայացրել կրկնակի փորձաքննության անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև չի հիմնավորել լրացուցիչ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Գարուշ Հակոբյանը, առարկելով «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացության դեմ, միջնորդել է նշանակել լրացուցիչ փորձաքննություն, և ոչ թե կրկնակի փորձաքննություն, իսկ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հիմքերի բացակայության դեպքում նման միջնորդությունը ենթակա էր մերժման, հետևաբար Դատարանի կողմից Գարուշ Հակոբյանի միջնորդության մերժումն իրավաչափ է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակի, այն է՝ Կարեն Ախիկյանի հակընդդեմ հայցը բավարարելու մասով Դատարանի վճիռը բեկանելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 25.09.2014 թվականի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի 01.04.2014 թվականին վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի հիմքով բազմակողմանի և օբյեկտիվ գնահատել է սույն գործով ձեռք բերված բոլոր ապացույցները և արդյունքում եկել է ճիշտ եզրահանգման: Մինչդեռ Դատարանը հաշվի չի առել և պատշաճ գնահատականի չի արժանացրել այն փաստը, որ ներկայացված հակընդդեմ հայցով պահանջվել է միայն «1627,08քմ մակերեսով հողամասից 1/5-րդ բաժինն առանձնացնել» և դուրս գալով ներկայացված հայցի սահմաններից եկել է այն եզրահանգման, որ Կարեն Ախիկյանի հակընդդեմ հայցը ենթակա է բավարարման, և հողամասն առանձնացրել է «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 297-01/Վ-013 եզրակացության համաձայն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 02.11.2011 թվականի թիվ 2840905 վկայականի համաձայն՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/8 հասցեում գտնվող 0,03018հա մակերեսով հողամասը: Նույն հասցեի՝ 0,162708հա մակերեսով հողամասի 1/5 մասն Ընկերությանը պատկանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով **(հատոր 1-ին, գ.թ. 10-12)**.

2) Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 02.11.2011 թվականի թիվ 2840906 վկայականի համաձայն՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/9 հասցեում գտնվող 0,090592հա մակերեսով հողամասը: Նույն հասցեի՝ 0,162708հա մակերեսով հողամասի 1/5 մասն Ընկերությանը պատկանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով **(հատոր 1-ին, գ.թ. 14-16)**.

3) Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 02.11.2011 թվականի թիվ 2840904 վկայականի համաձայն՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/7 հասցեում գտնվող 0,198768հա մակերեսով հողամասը: Նույն հասցեի՝ 0,162708հա մակերեսով հողամասի 1/5 մասն Ընկերությանը պատկանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով **(հատոր 1-ին, գ.թ. 57-59)**.

4) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.03.2012 թվականի թիվ 19032012-01-0353 վկայականի համաձայն՝ Կարեն Ախիկյանին սեփականության իրավունքով պատկանում է Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում գտնվող 0,02719հա մակերեսով հողամասը: Նույն հասցեի՝ 0,162708հա մակերեսով հողամասի 1/5 մասը Կարեն Ախիկյանին պատկանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով **(հատոր 1-ին, գ.թ. 35)**.

5) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.07.2012 թվականի թիվ 09072012-01-0479 վկայականի համաձայն՝ Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/6 հասցեում գտնվող 0,032921հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Արշակ Միլիտոնյանին: Նույն հասցեի՝ 0,162708հա մակերեսով հողամասի 1/5 մասն Արշակ Միլիտոնյանին պատկանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով **(հատոր 1-ին, գ.թ. 37)**.

6) Դատարանի 07.12.2012 թվականի որոշմամբ նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին, իսկ փորձագետին առաջադրվել են հետևյալ հարցերը.

– հնարավո՞ր է արդյոք Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 և թիվ 86/6 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի և Արշակ Գագիկի Միլիտոնյանի 1/5 բաժինը, եթե այո, ապա ինչ տարբերակներով,

– հնարավո՞ր է արդյոք ք. Երևան, Էրեբունի, Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 և թիվ 86/6 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող բաժինը,

– հնարավո՞ր է արդյոք ք. Երևան, Էրեբունի, Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/8 և թիվ 86/9 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Ընկերության բաժինը, եթե այո, ապա ինչ տարբերակներով **(հատոր 1-ին, գ.թ. 76-77)**.

7) ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 13-0011Դ եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «... Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5, 86/6, 86/7, 86/8 և 86/9 հասցեների անշարժ գույքերի սեփականատերերի ընդհանուր սեփականություն հանդիսացող 1627,08քմ մակերեսով հողամասից, համասեփականատերերից յուրաքանչյուրին պատկանող 1/5-րդ բաժնեմասին համապատասխան

հատվածի, ինչպես նաև 1627,08քմ մակերեսով հողամասից Կարեն Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող հատվածի առանձնացման որևէ տարբերակ փորձաքննության կողմից չի առաջարկվում...»: Նույն եզրակացության «Հետազոտություն» բաժնում փորձագետները բաժինները բնեղենով առանձնացնելու անհնարինությունը հիմնավորել են սահմանափակ օգտագործման (սերվիտուտի) կիրառման անհրաժեշտությամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 15-27)**.

8) Դատարանի 10.10.2013 թվականի որոշմամբ նշանակվել է կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ին, իսկ փորձագետին առաջադրվել են հետևյալ հարցերը.

- հնարավո՞ր է արդյոք Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի 1/5 բաժինը, եթե այո, ապա ի՞նչ տարբերակներով,
- հնարավոր է արդյոք ք. Երևան, Էրեբունի, Ասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի փաստացի օգտագործված բաժինը,
- հողամասն առանձնացնելու դեպքում ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս կպատճառվի՞, թե՝ ոչ **(հատոր 2-րդ, գ.թ. 71-73).**

9) 31.01.2014 թվականին «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 297-01/Վ-013 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ենթակա՝ Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում բաժնային սեփականության ներքո գտնվող հողատարածքից Կարեն Ախիկյանի 1/5 փաստացի օգտագործվող բաժնեմասի առանձնացում կատարելը փորձագիտական և տեխնիկական տեսանկյունից դիտվել է հնարավոր, որի առանձնացման առաջարկվող նպատակահարմար տարբերակի ուրվագծային պատկերը տրամադրվել է եզրակացությանը կից հավելվածում՝ գծանշմամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 95-109).**

10) 17.03.2014 թվականի դատական նիստի ընթացքում պատասխանող Գարուշ Հակոբյանի միջնորդությամբ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագետ Միհեր Գևորգյանը բացատրություն է տվել 31.01.2014 թվականի թիվ 297-01/Վ-013 եզրակացության վերաբերյալ: Նույն դատական նիստի ընթացքում Գարուշ Հակոբյանը միջնորդել է նշանակել լրացուցիչ փորձաքննություն: Դատարանի կողմից Գարուշ Հակոբյանի միջնորդությունը մերժվել է **(հատոր 2-րդ, գ.թ. 123-124):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ փորձագետի եզրակացության գնահատման առանձնահատկությունների, լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն նշանակելու նպատակի և հիմքերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 62-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ է այն իրավական խնդրին, թե արդյոք գործում առկա երկու փորձագի-

տական եզրակացությունները կարող են գնահատվել որպես իրար հակասող, եթե փորձաքննությունները նշանակվել են ըստ էության տարբեր հարցադրումների պարզաբանման նպատակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1) գրավոր և իրեղեն ապացույցներով.

2) **փորձագետների եզրակացություններով**.

3) վկաների ցուցմունքներով.

4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փորձագետ նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում նշում է դատարանի անվանումը, փորձաքննություն նշանակելու ամսաթիվը, գործի անվանումը, փորձաքննության անվանումը, փորձագետին առաջադրվող հարցերը, փորձագետի անունը, ազգանունը կամ մասնագիտացված փորձագիտական հաստատության անվանումը, որոնց հանձնարարվում է փորձաքննության կատարումը, փորձագետին տրամադրված նյութերը (փաստաթղթերը), անհրաժեշտության դեպքում՝ դրանց հետ վարվելու պայմանները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը պետք է պարունակի՝

1. նշում՝ կիրառված մեթոդների մասին,

2. կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը,

3. հետազոտությունների արդյունքում արված հետևությունները,

4. առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում է մյուս ապացույցների հետ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ապացույցների զանգվածում ներառված փորձագիտական եզրակացությունների գնահատման խնդրին, նշել է, որ **փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց** *(տե՛ս, Ռաֆայել Ավետիսյանն ընդդեմ Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԴ3/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վկայակոչված իրավադրույթից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածում սահմանված ապացույցներից որևէ մեկը, այդ թվում

նաև՝ փորձագետի եզրակացությունը որևէ առավելություն չունի գործում առկա մյուս ապացույցների նկատմամբ և ենթակա է գնահատման ընդհանուր կարգով՝ վերաբերելիության, թույլատրելության, արժանահավատության տեսանկյունից:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման ընույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով: Հետևաբար անգամ ընդհանուր կարգով գնահատումն անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առանձնացնել այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս:

Վերաբերելիության առումով փորձագետի եզրակացությունը գնահատելիս նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին: Ընդ որում, հարցադրումների բովանդակությունը ոչ միայն էական նշանակություն ունի փորձագետի եզրակացության վերաբերելիության գնահատման տեսանկյունից, այլև կարևորվում է երկու և ավելի եզրակացությունների պարագայում դրանց միջև առկա հակասությունները վեր հանելու առումով:

Փորձագետի եզրակացությունը ***թույլատրելիության տեսանկյունից*** գնահատման ենթարկելիս առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, նշված անձի օբյեկտիվությունը, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելը, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպումը:

Արժանահավատության տեսանկյունից փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5, թիվ 86/6, թիվ 86/7, թիվ 86/8 և թիվ 86/9 հասցեների՝ 1.627,08քմ ընդհանուր մակերեսով հողամասը հանդիսանում է նույն հասցեների սեփականատերերի՝ ընդհանուր բաժնային սեփականությունը:

Սույն գործով Դատարանի 07.12.2012 թվականի որոշմամբ նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին, իսկ փորձագետին առաջադրվել են հետևյալ հարցերը.

– հնարավո՞ր է արդյոք Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 և թիվ 86/6 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի և Արշակ Գագիկի Միլիտոնյանի 1/5 բաժինը, եթե այո, ապա ի՞նչ տարբերակներով,

– հնարավո՞ր է արդյոք Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 և թիվ 86/6 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող բաժինը,

– հնարավո՞ր է արդյոք Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/8 և թիվ 86/9

հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել «Կանաչապատում» ՊՓԲ ընկերության բաժինը, եթե այո, ապա ինչ տարբերակներով:

ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 13-0011Դ եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «... Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5, 86/6, 86/7, 86/8 և 86/9 հասցեների անշարժ գույքերի սեփականատերերի ընդհանուր սեփականություն հանդիսացող 1627,08քմ մակերեսով հողամասից, համասեփականատերերից յուրաքանչյուրին պատկանող 1/5 բաժնեմասին համապատասխան հատվածի, ինչպես նաև 1627,08քմ մակերեսով հողամասից Կարեն Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող հատվածի առանձնացման որևէ տարբերակ փորձաքննության կողմից չի առաջարկվում...»: Նույն եզրակացության «Հետազոտություն» բաժնում փորձագետները բաժինները բնեղենով առանձնացնելու անհնարինությունը հիմնավորել են սահմանափակ օգտագործման (սերվիտուտի) կիրառման անհրաժեշտությամբ:

Դատարանի 10.10.2013 թվականի որոշմամբ նշանակվել է կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ին, իսկ փորձագետին առաջադրվել են հետևյալ հարցերը.

– հնարավո՞ր է արդյոք Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեներում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի 1/5 բաժինը, եթե այո, ապա ինչ տարբերակներով,

– հնարավո՞ր է արդյոք Երևանի Ասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում բաժնային սեփականության ներքո գտնվող 0,162708հա մակերեսով հողամասից առանձնացնել Կարեն Ալֆրեդի Ախիկյանի փաստացի օգտագործված բաժինը,

– հողամասն առանձնացնելու դեպքում ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս կպատճառվի՞, թե՝ ոչ**:**

31.01.2014 թվականին «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 297-01/Վ-013 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ենթակա Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում բաժնային սեփականության ներքո գտնվող հողատարածքից Կարեն Ախիկյանի 1/5 փաստացի օգտագործվող բաժնեմասի առանձնացում կատարելը փորձագիտական և տեխնիկական տեսանկյունից դիտվել է հնարավոր, որի առանձնացման առաջարկվող նպատակահարմար տարբերակի ուրվագծային պատկերը տրամադրվել է եզրակացությանը կից հավելվածում՝ գծանշմամբ:

Սույն գործով Դատարանը, հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից 31.01.2014 թվականին տրամադրված թիվ 297-01/Վ-013 փորձագիտական եզրակացությունը, արձանագրել է, որ «...տվյալ դեպքում Երևանի Սասունցի Դավթի փողոցի թիվ 86/5 հասցեում բաժնային սեփականության ներքո գտնվող հողատարածքից Կարեն Ախիկյանի 1/5 փաստացի օգտագործվող բաժնեմասի առանձնացում կատարելը փորձագիտական և տեխնիկական տեսանկյունից դիտվում է հնարավոր, ուստի հակընդդեմ հայցն այդ մասով հիմնավոր է, և պետք է այն բավարարել...»:

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բեկանելով Դատարանի վճիռը, արձանագրել է, որ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից 1627,08քմ մակերեսով հողամասից Կարեն Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող հատվածի առանձնացման որևէ տարբերակ չի առաջարկվել, այսինքն՝ ըստ էության արձանագրվել է բաժնեմասի առանձնացման անհնարինությունը, իսկ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագետի եզրակացության համաձայն՝ Կարեն Ախիկյանի 1/5 փաստացի օգտագործվող բաժնեմասի առանձնացում կատարելը փորձագիտական և տեխնիկական տեսանկյունից դիտվել է հնարավոր և եզրակացությանը կից ներկայացված գծագրին համապատասխան տարբերակով բաժնային սեփականության առանձնացումը չի ոտնահարում մյուս սեփականատերերի իրավունքները: Վերը նշված փորձագիտական եզրակացությունների պարզ համադրման արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ դրանցում առկա հետևություններն ուղղակիորեն հակասում են միմյանց, և գտել է, որ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո»

ՊՈԱԿ-ի և «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագետների կողմից տրված փորձագիտական եզրակացությունների միջև հակասությունների առկայության պարագայում չի պարզվել Կարեն Ախիկյանի կողմից փաստացի օգտագործվող հատվածի առանձնացման հնարավորությունը կամ անհնարինությունը:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի և «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագետի կողմից տրված փորձագիտական եզրակացություններում առկա հակասությունները բավարար հիմք են դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգքրի 62-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով հայեցողական լիազորությունն իրականացնելու և կրկնակի փորձաքննություն նշանակելու՝ Կարեն Ախիկյանի բաժնեմասն առանձնացնելու հնարավորության կամ անհնարինության հարցը պարզելու համար: Ընդ որում, 17.03.2014 թվականին հրավիրված դատական նիստում բողոք բերած Գարուշ Հակոբյանը, առարկելով «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացության դեմ, միջնորդել է նշանակել լրացուցիչ փորձաքննություն, ինչը Դատարանի կողմից մերժվել է»:

Վերոնշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ կրկնակի փորձաքննություն նշանակվում է միևնույն հարցերի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանը կրկնակի փորձաքննություն նշանակելիս նախորդ փորձաքննությանն առաջադրված հարցադրումները կրկին առաջադրել է միայն Կարեն Ախիկյանի բաժնեմասի մասով: Ընդ որում, թեև Կարեն Ախիկյանի բաժնեմասի մասով երկու փորձաքննություններին առաջադրված հարցադրումները լեզվաբանական ձևակերպման տեսանկյունից առերևույթ միևնույնն են, սակայն բովանդակային առումով դրանք, ըստ էության, տարբեր են: Մասնավորապես, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին առաջադրված հարցադրումները վերաբերել են Ընկերության, Արշակ Միլիտոնյանի և Կարեն Ախիկյանի բաժիններն առանձնացնելու հնարավորությանը, հետևաբար Կարեն Ախիկյանի փաստացի տիրապետվող հողամասի առանձնացման հնարավորության վերաբերյալ հարցադրումը տվյալ պարագայում չի կարող առանձնացվել մյուս հարցերի համատեքստից այն դեպքում, երբ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ին առաջադրվել են բաժինն առանձնացնելու վերաբերյալ հարցադրումները միայն Կարեն Ախիկյանի մասով՝ առանց մյուս սեփականատերերի բաժիններն առանձնացնելու պայմանի:

Բացի այդ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությամբ չի բացառվել սեփականատերերի բաժիններն առանձնացնելու հնարավորությունն ընդհանրապես, այլ փաստելով, որ բոլոր սեփականատերերի բաժիններն առանձնացնելու դեպքում կառաջանա սահմանափակ իրավունքի կիրառման անհրաժեշտություն, փորձագետները սեփականատերերի միջև գույքի բաժանման որևէ տարբերակ չեն առաջարկել, մինչդեռ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ին առաջադրված հարցերի շրջանակներում վերջինիս կողմից տրամադրված փորձագիտական եզրակացությունը վերաբերում է միայն Կարեն Ախիկյանի բաժինն առանձնացնելուն, ընդ որում, փորձագետները նպատակահարմար են համարել Կարեն Ախիկյանի բաժնեմասն առանձնացնելու հնարավորությունը՝ պայմանով, որ 248,16քմ մակերեսով հողամասը կթողնվի բոլոր հինգ սեփականատերերին՝ որպես ընդհանուր օգտագործման ճանապարհ՝ համաձայն փորձագիտական եզրակացությանը կից հավելվածում առկա գծանշման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա չէ որևէ հակասություն ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի թիվ 13-0011Դ փորձագիտական եզրակացության և «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 297-01/Վ-013 փորձագիտական եզրակացությունների միջև, քանի որ նախ՝ դրանք տրվել են

ըստ էության տարբեր հարցադրումների պարզաբանման նպատակով, բացի այդ, դրանց միջև առկա չեն տրամագծորեն տարբեր և իրար հակասող հետևություններ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրակացությանը, որ սույն գործով առկա է կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված այն հանգամանքին, որ 17.03.2014 թվականին հրավիրված դատական նիստում բողոք բերած անձ Գարուշ Հակոբյանն առարկել է «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացության դեմ և միջնորդել է նշանակել լրացուցիչ փորձաքննություն, որը Դատարանի կողմից մերժվել է, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը կարող է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե գործի հանգամանքներից բխում է դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Դատարանը հրավիրում է գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե այդ մասին միջնորդել են կողմերը, կամ միջնորդել է կողմերից մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միևնույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը միևնույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առկա են էական և առանցքային տարբերություններ լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նպատակների և նշանակման հիմքերի միջև:

Այսպես, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հիմքը փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու հանգամանքն է:

Լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել միայն փորձագիտական եզրակացությանը ծանոթանալուց հետո, եթե պարզվի, որ փորձաքննությանն առաջադրված հարցադրումների կամ դրանց մի մասի վերաբերյալ պատասխանը հստակ կամ ամբողջական չէ, ինչպես նաև այն դեպքում, երբ փորձագիտական եզրակացությանը ծանոթանալուց հետո դրանում լուսաբանված հարցերի վերաբերյալ նոր հարցադրումներ են առաջանում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով: Ըստ այդմ, լրացուցիչ փորձաքննություն կարող է չնշանակվել, եթե գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետի կողմից դատական նիստում տրված բացատրությունների արդյունքում լրացվում, ամբողջականացվում և հստակեցվում են փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի պատասխանները, ինչը բխում է նաև արդարադատության արդյունավետության և ողջամիտ ժամկետում գործերի քննության պահանջից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ լրացուցիչ փորձաքննությունն իր բնույթով ուղղված չէ սկզբնական փորձաքննության հետ մրցակցելուն, այլ ուղղված է սկզբնական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացության մեջ առկա անհստակությունները լրացնելուն, այդ պատճառով էլ, ի տարբերություն կրկնա-

կի փորձաքննության, օրենսդիրը հնարավոր է համարել լրացուցիչ փորձաքննությունը հանձնարարել ինչպես մեկ այլ, այնպես էլ սկզբնական փորձաքննությունն իրականացրած փորձագետին:

Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննությանը, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետով օրենսդիրը սպառիչ կերպով սահմանել է վերջինիս հիմքերը, այն է՝ փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ առաջանալը, կամ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությունը:

Անդրադառնալով փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ առաջացած կասկածներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող կրել բացառապես սուբյեկտիվ բնույթ, այլ պետք է հիմնավորվեն օբյեկտիվ հանգամանքներով: Մասնավորապես, փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին, փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու, փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացություն տալու իրավասություն չունի, եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս ապացույցների ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլն:

Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննություն նշանակելու մյուս հիմքին, այն է՝ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությանը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ երկու և ավելի եզրակացություններում հակասությունների մասին կարելի է դատողություններ անել միայն այն դեպքում, երբ եզրակացությունները տրվել են ըստ էության միևնույն հարցերի պարզաբանման նպատակով, և առաջադրված միևնույն հարցադրումների վերաբերյալ տարբեր փորձագետներ փորձաքննությունների արդյունքում հանգել են տրամագծորեն տարբեր և իրար հակասող հետևությունների:

Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների անցկացման նպատակների և հիմքերի վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք անհիմն են, քանի որ սույն գործում առկա փորձագիտական երկու եզրակացությունների՝ իրար չհակասելու (որպիսի հանգամանքը հիմնավորվեց վերը) և «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ օբյեկտիվ կասկածների բացակայության պայմաններում կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը տվյալ դեպքում բացակայում է:

Միևնույն ժամանակ «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացության ուսումնասիրությունից Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դրանով փորձաքննությանն առաջադրված հարցադրումների վերաբերյալ տրվել են պարզ և ամբողջական պատասխաններ, ավելին, եզրակացության դեմ առարկած կողմի՝ Գարուշ Հակոբյանի միջնորդությամբ դատական նիստում գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետ Միհեր Գևորգյանը դրա վերաբերյալ տվել է բանավոր բացատրություններ, որպիսի պայմաններում բացակայել են նաև լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հիմքերը, հետևաբար Դատարանի կողմից Գարուշ Հակոբյանի՝ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու միջնորդությունը մերժելը Վճռաբեկ դատարանը գնահատում է իրավաչափ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա փոր-

ձագիտական եզրակացությունների միջև որևէ հակասություն առկա չէ, առկա չէ նաև լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, հետևաբար իրավաչափ են Դատարանի եզրահանգումները Կարեն Ախիկյանի բաժնեմասն առանձնացնելու և այդ մասով հակընդդեմ հայցը բավարարելու վերաբերյալ:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ Կարեն Ախիկյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝

այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարեն Ախիկյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով համապարտության կարգով ենթակա է հատուցման Գարուշ և Արայիկ Հակոբյանների կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2014 թվականի որոշման՝ Կարեն Ախիկյանի հակընդդեմ հայցը բավարարելու մասով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2014 թվականի վճիռը բեկանելու և գործն այդ մասով նոր քննության ուղարկելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2014 թվականի վճռին:

2. Գարուշ և Արայիկ Հակոբյաններից համապարտության կարգով հօգուտ Կարեն Ախիկյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2953/02/13
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ս. Միքայելյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2953/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նունե Աբրահամյանի ներկայացուցիչ Կարեն Մելիքսեթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նունե Աբրահամյանի ընդդեմ Արամ Գրձելյանի, երրորդ անձ Ալբերտ Կարապետյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նունե Աբրահամյանը պահանջել է Արամ Գրձելյանից հօգուտ իրեն բռնագանձել 18.500.000 ՀՀ դրամ՝ որպես իր և Արամ Գրձելյանի միջև 23.06.2009 թվականին կնքված Երևանի Բաղրամյան փողոցի 85-րդ շենքի թիվ 75 բնակարանի առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 06.02.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.04.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումից ազատելու կամ չափը նվազեցնելու մասին Նունե Աբրահամյանի միջնորդությունը բավարարվել է մասնակիորեն՝ պետական տուրքի վճարումը հետաձգվել է, իսկ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժ-

վել է, և Դատարանի 06.02.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, ինչպես նաև որոշվել է Նունե Աբրահամյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 555.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված և նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունե Աբրահամյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ալբերտ Կարապետյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 68-րդ, 210-րդ և 213-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով Դատարանի վճռի դեմ Նունե Աբրահամյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք և ներկայացվել է միջնորդություն՝ խնդրելով ազատել պետական տուրքի վճարումից կամ նվազեցնել դրա չափը և սահմանել 10.000 ՀՀ դրամ, սակայն Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով միջնորդությունը, հետաձգել է պետական տուրքի վճարումն այն պարագայում, երբ նման միջնորդություն ներկայացված չի եղել:

Վերաքննիչ դատարանի կողմից պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու և 10.000 ՀՀ դրամ սահմանելու մասին միջնորդությունը մասնակիորեն բավարարելու արդյունքում Նունե Աբրահամյանի մոտ տրամաբանորեն ձևավորվել է այն համոզմունքը, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում պետական տուրքի գծով 10.000 ՀՀ դրամից ավել պարտավորություն իր վրա չի դրվելու:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշումը՝ Նունե Աբրահամյանից ՀՀ պետական բյուջե պետական տուրքի գումարը բռնագանձելու մասով, և այդ մասով այն փոփոխել՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքաբերի կողմից բողոքարկվում է ինչպես Վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշման՝ 555.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը բռնագանձելու մասը, այնպես էլ Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» 02.04.2015 թվականի որոշման՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասը, ակնհայտ է դառնում, որ տվյալ պարագայում վերջինս բողոքարկում է վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ (բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը), որպիսի պայմաններում վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 13.03.2015 թվականին Նունե Աբրահամյանի վերաքննիչ բողոքին կից վերջինիս կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու մասին միջնորդություն **(հատոր 2-րդ, գ.թ. 5-11):**

2) Վերաքննիչ դատարանի 02.04.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշմամբ Նունե Աբրահամյանի միջնորդությունը՝ օրենքով նախատեսված պետական տուրքի վճարումից ազատելու կամ չափը նվազեցնելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ հետաձգվել է վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի վճարումը **(հատոր 2-րդ, գ.թ. 39-40):**

3) Վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշմամբ Նունե Աբրահամյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 555.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված և բողոքաբերի կողմից նախապես չվճարված պետական տուրքի գումար **(հատոր 2-րդ, գ.թ. 48-50):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

- բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա վճարումը հետաձգելու մասին միջնորդությունների քննարկման արդյունքում կայացվող որոշումների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

- Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ և 213-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք դատարաններն իրավասու են շահագրգիռ անձի միջնորդությունը մասնակիորեն բավարարել և պետական տուրքի վճարումը հետաձգել այն պարագայում, երբ համապատասխան անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ վարույթը կարճելու և կասեցնելու, ինչպես նաև դատական տուգանք կիրառելուվերաբերյալ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատա-

կան ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, իսկ դրանց բողոքարկման անհնարինությունը դատական ակտի կայացման չարդարացված ձգձգումների և քաղաքացու իրավունքների խախտման է հանգեցնում, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտերի համար սահմանել է **անմիջական բողոքարկման կարգ:** Իսկ նշված դրույթներով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել է **«հետաձգված բողոքարկման» կարգ**, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում *(տե՛ս, Անժելա Գևորգյանն ընդդեմ Նիկալ Շահվերդյանի թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Վերը ներկայացված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բողոք բերած անձը «հետաձգված բողոքարկման» կարգով վիճարկում է նաև Վերաքննիչ դատարանի՝ պետական տուրքի վճարումը հետաձգելուն, որպիսի հիմքով և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուն ուղղված գործողությունների իրավաչափությունը, ինչը գործող իրավակարգավորման շրջանակներում է:

բ) ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան**՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ **դատական ծախսերը կազմված են պետական տուրքից** և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մաս-

նակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **դիմումների և միջնորդությունների քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն **իրավունք ունեն** դիմել համապատասխան պետական մարմիններ՝ **պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝

ա) պետական տուրքի վճարումից ազատում,

բ) պետական տուրքի նվազեցում,

գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում,

դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում,

ե) պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար **պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:**

ՀՀ սահմանադրական դատարանը, իր 2010 թվականի մայիսի 25-ի թիվ ՍԴՈ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: ... «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետը դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորություն է երաշխավորում ոչ բավարար ֆինանսական միջոցներ ունեցող անձանց համար: Ընդ որում, համապատասխան արտոնությունները, ի թիվս այլնի, ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը ևս, իր նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով պետական տուրքի հետ կապված խնդիրներին, մասնավորապես՝ փաստել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ելնելով կողմերի գույքային դրությունից, և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառ-

վող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև *(տե՛ս, Արմենակ և Գոլյա Սահակյաններն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի թիվ 3–734(ՎԴ) որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ–ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) 20.12.2007 թվականի վճիռը, գանգատ թիվ 21638/03, կետ 44):*

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է նաև, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31–րդ հոդվածը նման արտոնություն կիրառելու հնարավորություն ընձեռել է դատարաններին կամ դատավորներին այն դեպքերում, երբ թեև բացակայում են նույն օրենքի 22–րդ հոդվածով սահմանված հիմքերը, սակայն ելնելով կողմերի գույքային դրությունից՝ անհրաժեշտ է սահմանել նման արտոնություն՝ երաշխավորելու անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը *(տե՛ս, Շամամ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանները պետական տուրքի գծով արտոնություններ կիրառելու հարցը կարող են քննարկել և համապատասխան արտոնություններ սահմանել դատավարության մասնակցի կողմից կոնկրետ միջնորդության ներկայացման դեպքում: Ընդ որում, դատարաններն իրավասու են սահմանելու «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21–րդ հոդվածով պետական տուրքի գծով նախատեսված ոչ թե ցանկացած արտոնություն, այլ միայն այն արտոնությունը, որը հստակորեն նշվել է շահագրգիռ անձի ներկայացրած միջնորդության մեջ:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը նախ և առաջ պայմանավորված այն հանգամանքով, որ մրցակցային դատավարության պայմաններում դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, որոշակի դատավարական գործողությունների կատարմանը ձեռնամուխ է լինում միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը հայցում է համապատասխան գործողության կատարումը: Այսինքն՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված դատարանը հանդես է գալիս որպես միայն վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով: Մասնավորապես՝ դատարանի կողմից դատավարական որոշակի գործողությունների կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի շահագրգիռ անձը գրավոր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև բանավոր, հայցի համապատասխան գործողության կատարումը: Հետևաբար, համապատասխան միջնորդության առկայությունն այն նախապայմանն է, որը վկայում է շահագրգիռ անձի կողմից համապատասխան գործողության հայցման մասին, ինչն էլ դատարանի կողմից պետք է ենթակա լինի քննության: Միևս կողմից, քաղաքացիադատավարական հարաբերությունները ծավալվում և գործառնում են տնօրինչականության սկզբունքի շրջանակներում: Քաղաքացիադատավարական այս սկզբունքի բովանդակությունը ներառում է այն դատավարական իրավունքները, որոնք թույլ են տալիս կանխորոշել դատական պաշտպանության առարկան և ազդել դատա-

վարության ուղղվածության և ընթացքի վրա: Տնօրինչականության սկզբունքի դրսևորումներից է դատական ակտի բողոքարկումը: Օրենսդիրն այդ իրավունքի իրացումը, ի թիվս այլ պայմանների, պայմանավորել է օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու հանգամանքով կամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետական տուրքի գծով որևէ կոնկրետ արտոնության հայցմամբ: Հետևաբար այն դեպքում, երբ անձը, իրացնելով իր բողոքարկման իրավունքը, դրա շրջանակներում հայցում է պետական տուրքի գծով որևէ արտոնություն, շահագրգիռ անձի նման իրավունքին համապատասխանում է դատարանի՝ այդ իսկ միջնորդությունը քննելու և լուծելու պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարանը որոշում է կայացնում միայն համապատասխան միջնորդության կամ դիմումի առկայության պարագայում և դրա քննարկման արդյունքում կարող է լուծում տալ բացառապես միջնորդության կամ դիմումի մեջ բարձրացված հարցին (հարցերին), հետևաբար, ներկայացված **միջնորդության քննարկման արդյունքներով** դատարանի կողմից չի կարող լուծում տրվել մի հարցի, որը չի բարձրացվել շահագրգիռ անձի կողմից, չի բխում դրա բովանդակությունից:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շահագրգիռ անձն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենսդրությամբ նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված կոնկրետ հարցի որոշակի և վերջնական լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի՝ միջնորդություն հարուցելու իրավունքին միանշանակորեն համապատասխանում է տվյալ միջնորդության մեջ շարադրված հարցի քննարկման արդյունքներով հստակ եզրահանգումներ պարունակող որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: Հետևաբար այն դեպքում, երբ շահագրգիռ անձը, միջնորդություն ներկայացնելով, հայցում է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ արտոնություն, դատարանը պետք է քննության առարկա դարձնի և որոշում կայացնի բացառապես այդ հարցերից որևէ մեկ վերաբերյալ:

Սույն գործով Նունե Աբրահամյանի կողմից 13.03.2015 թվականին բերված վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու մասին միջնորդություն: Վերաքննիչ դատարանի 02.04.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու մասին Նունե Աբրահամյանի միջնորդությունը բավարարվել է մասնակիորեն՝ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի վճարումը հետաձգվել է: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից ընդունվել է որոշում պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին՝ նման միջնորդության բացակայության պայմաններում, իսկ 03.06.2015 թվականին կայացված որոշմամբ Վերաքննիչ դատարանը մերժել է Նունե Աբրահամյանի վերաքննիչ բողոքը, միաժամանակ որոշվել է նրանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 555.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված և նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Վերը նշված մեկնաբանությունների և իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Նունե Աբրահամյանը, Վերաքննիչ դատարան ներկայացնելով պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու մասին միջնորդություն, ակնկալել է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում, որը պետք է դրսևորվեր Վերաքննիչ դատարանի կողմից պետական տուրքի վճարումից ազատելու կամ պետական տուրքի չափը նվազեցնելու միջնորդության կամ բավարարման, կամ մերժման եղանակով, սակայն ոչ՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին որոշման ընդունմամբ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, միջնորդությունը մասնակիորեն բավարարելով, այն է՝ հետաձգելով վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի վճարումը, դրանով իսկ անտեսել է այն հանգամանքը, որ Նունե Աբրահամյանի կողմից ներկայացվել է պետական տուրքի

վճարումից ազատելու կամ դրա չափը նվազեցնելու, այլ ոչ թե՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, ինչի արդյունքում Նունե Աբրահամյանի միջնորդությունն այդպես էլ քննության չի առնվել և լուծում չի ստացել:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանի կողմից 02.04.2015 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից 03.06.2015 թվականին կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, որով նաև որոշվել է Նունե Աբրահամյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 555.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված և նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ նման պայմաններում Նունե Աբրահամյանի՝ պետական տուրքի վճարումից ազատելու կամ չափը նվազեցնելու մասին միջնորդության քննության արդյունքներով Վերաքննիչ դատարանի կողմից դրա վճարումը հետաձգելու արդյունքում գործն ըստ էության լուծող դատական ակտով համապատասխան անձից 555.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար բռնագանձելը ոչ իրավաչափ է և անհիմն, քանի որ կոնկրետ միջնորդության մեջ բարձրացված հարցի քննարկման արդյունքներով կայացված որոշմամբ ի սկզբանե ոչ ճիշտ եզրահանգում կատարելն արդեն իսկ հանգեցնում է Վերաքննիչ դատարանի՝ տվյալ հարցի կապակցությամբ հետագա հետևությունների ոչ իրավաչափ լինելուն: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտում արված սխալ եզրահանգումների հիման վրա կայացված նույն դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտով Նունե Աբրահամյանի վրա պետական տուրքի վճարման պարտականություն դնելն ինքնին չի կարող համարվել օրինական կամ իրավաչափ:

Վերը նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայվում է միայն Նունե Աբրահամյանից ՀՀ պետական բյուջե 555.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը բռնագանձելու մասով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված որոշումը բողոքարկվել է միայն պետական տուրքի գանձման մասով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում *(տե՛ս, «Ռեքվիեմ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը):*

Սույն գործով հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նունե Աբրահամյանի կողմից Վերաքննիչ դատարանի 03.06.2015 թվականի որոշումը բողոքարկվել է մասնակիորեն՝ միայն պետական տուրքի գումարը բռնագանձելու մասով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը շարադրված պատճառաբանության հիմքով Նունե Աբրահամյանը չի կրում վճռաբեկ բողոքի համար պետական տուրք վճարելու պարտականություն: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոք բերելու համար պետական տուրքի վճարման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2015 թվականի որոշման՝ Նունե Աբրահամյանից ՀՀ պետական բյուջե 555.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը բռնագանձելու մասը և այդ մասով այն փոփոխել. պետական տուրքի վճարման հարցը համարել լուծված:

2. Վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՍԴ2/0196/02/13
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ՍԴ2/0196/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Ստյոպա Հովհաննիսյանի՝ ինքնակամ շինությունը քանդելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է պարտավորեցնել Ստյոպա Հովհաննիսյանին քանդելու ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի 28-րդ շենքի թիվ 17 բնակարանին կից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կատարված ինքնակամ շինությունը (քարե պարիսպը և լողավազանը):

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Է. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.03.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2014 թվականի որոշմամբ Ստյոպա Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.03.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետը, 80-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գնահատման չի արժանացրել այն փաստը, որ Դատարանը պատշաճ ձևով տեղեկացրել է Ստյոպա Հովհաննիսյանին դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, մի քանի անգամ հետաձգել է գործի քննությունը՝ հնարավորություն ընձեռելով Ստյոպա Հովհաննիսյանին ներկա գտնվելու դատական նիստերին, ներկայացնելու հայցադիմումի պատասխան, մինչդեռ վերջինս իր դատավարական իրավունքներից օգտվել է և իր դատավարական պարտականությունները կատարել է անբարեխղճորեն:

Ավելին, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումը Ստյոպա Հովհաննիսյանի փաստացի բնակության վայրի վերաբերյալ, ինչպես նաև Ստյոպա Հովհաննիսյանի հայտարարությունն իր բնակության վայրի հասցեի մասին:

Ստյոպա Հովհաննիսյանը, ցուցաբերելով դիտավորություն, դատական ծանուցագրերը չի ստացել, դրանք հանձնվել են հարկադիր կարգով, որից հետո վերջինս, փոխելով իր բնակության վայրը, Դատարանին տեղյակ չի պահել իր գտնվելու վայրի մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.03.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի՝ «Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասին» 16.08.2013 թվականի որոշմամբ 12.09.2013 թվականին ժամը 11:00-ին նշանակվել է նախնական դատական նիստ **(հատոր 1-ին, գ.թ. 1):**

2) Դատարանի՝ «Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասին» 16.08.2013 թվականի որոշումը, ինչպես նաև հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները փոստային առաքման միջոցով ուղարկվել են Ստյոպա Հովհաննիսյանին՝ Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի 28-րդ շենքի թիվ 17 հասցեով, սակայն 19.08.2013 թվականին հետ են վերադարձվել՝ ծրարի վրա «տեղափոխված» նշումով **(հատոր 1-ին, գ.թ. 29-30):**

3) Ի պատասխան Դատարանի 27.08.2013 թվականի գրության՝ Ագարակի քաղաքապետը 05.09.2013 թվականի գրությամբ հայտնել է, որ «Ստյոպա Վանիկի Հովհաննիսյանը փաստացի բնակվում է ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի Չարենցի 28/17 հասցեում: Նշված հասցեում բնակվում են նաև Ս. Հովհաննիսյանի կինը և երեխաները» **(հատոր 1-ին, գ.թ. 33-35):**

4) 02.10.2013 թվականին ժամը 15:00-ին, 23.10.2013 թվականին ժամը 12:30-ին, 21.11.2013 թվականին ժամը 10:30-ին նշանակված դատական նիստերի մասին ծանուցագրերը փոստային առաքման միջոցով ուղարկվել են Ստյոպա Հովհաննիսյանին՝ Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի 28-րդ շենքի թիվ 17 հասցեով, սակայն հետ են վերադարձվել՝ ծրարի վրա «տեղափոխված» նշումով **(հատոր 1-ին, գ.թ. 42-44, 51-53, 63-65):**

5) Ի պատասխան Դատարանի 21.11.2013 թվականին ժամը 10:30-ին նշանակված դատական նիստին պատասխանողի ներկայությունն ապահովելու մասին 24.10.2013 թվականի գրության՝ Ագարակի քաղաքապետը 15.11.2013 թվականի գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Սյունիքի մարզի Չարենցի 28/17 հասցեի բնակիչ Ստյոպա Վանիկի Հովհաննիսյանին հնարավոր չի եղել ծանուցել 21.11.2013 թվականի ժամը 10:30-ին նշանակված դատական նիստի մասին, քանի որ վերջինս բացակայում է Ագարակ քաղաքից և նշված հասցեում փաստացի չի բնակվում: Վերոնշյալ հասցեում բնակվող կինը Ս. Հովհաննիսյանի նոր բնակության վայրի հասցեի վերաբերյալ Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմին ստույգ տեղեկություններ չի տրամադրում» **(հատոր 1-ին, գ.թ. 57, 66):**

6) Դատարանի 21.11.2013 թվականի որոշմամբ Ստյոպա Հովհաննիսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում և գործի վարույթը կասեցվել է մինչև պատասխանողի նկատմամբ հետախուզման ավարտը **(հատոր 1-ին, գ.թ. 71):**

7) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի հարկադիր կատարողի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 05.12.2013 թվականի որոշմամբ ավարտվել է Ստյոպա Հովհաննիսյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ 02.12.2013 թվականին հարուցված թիվ 09/02-2167/13 կատարողական վարույթը, որի ընթացքում Ստյոպա Հովհաննիսյանը հայտնաբերվել է և ներկայացրել գրավոր հայտարարություն առ այն, որ «2013 թվականի սեպտեմբեր ամսից բնակվում է Ագարակ քաղաքի Չարենցի 28/17 հասցեում» **(հատոր 1-ին, գ.թ. 79-80):**

8) 07.02.2014 թվականին ժամը 16:00-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրը, հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու, քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին որոշումները, ինչպես նաև հայցադիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները Ստյոպա Հովհաննիսյանը ստացել է 24.01.2014 թվականին, սակայն դատական նիստին չի ներկայացել **(հատոր 1-ին, գ.թ. 96-97, 99):**

9) 28.02.2014 թվականին ժամը 15:30-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագրերը Ստյոպա Հովհաննիսյանին ուղարկվել են 07.02.2014 թվականին, 18.02.2014 թվականին և 24.02.2014 թվականին, սակայն դրանք հետ են վերադարձվել՝ ծրարների վրա՝ համապատասխանաբար «բնակիչը տեղում չէ», «չի պահանջվել» և «բնակիչը տեղում չէ» նշումներով **(հատոր 1-ին, գ.թ. 102-114):**

10) Դատարանի «Գործը դատաքննության նշանակելու մասին» 28.02.2014 թվականի որոշումը և 13.03.2014 թվականին ժամը 12:30-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրն ուղարկվել են Ստյոպա Հովհաննիսյանին, սակայն հետ են վերադարձվել՝ ծրարի վրա «չի պահանջվել» նշումով **(հատոր 1-ին, գ.թ. 121-126):**

11) 13.03.2014 թվականին ժամը 12:30-ին նշանակված դատաքննությունն ավարտվել է, և 24.03.2014 թվականին ժամը 17:05-ին նշանակվել է վճռի հրապարակում **(հատոր 1-ին, գ.թ. 128-132):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ և

80-րդ հոդվածները չկիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը նմանատիպ գործերով նախկինում արտահայտած դիրքորոշումների համատեքստում անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել պատշաճ ծանուցված չլինելու փաստը այն դեպքում, երբ վերջինս բարեխղճորեն չի օգտվել իր դատավարական իրավունքներից և պարտականություններից՝ անտեսելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված՝ ծանուցման հասցեի փոխոխության վերաբերյալ դատարանին տեղեկացնելու պարտադիր պայմանը:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված են գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները, որի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով կամ ուղարկվում է էլեկտրոնային փոստով՝ նույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պարտավոր են դատարանին և գործին մասնակցող այլ անձանց հայտնել գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում իրավահավասարության և մրցակցության սկզբունքների, անձի լսված լինելու իրավունքի համատեքստում բազմիցս անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի բովանդակությանը, նշել է, որ դրանով նախատեսված նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատա-

կան նիստի մասին տեղեկացնելու փաստը *(տե՛ս, Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը)*:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն *Արամ Մակարյանն ընդդեմ Խաչիկ Մանուկյանի գործով* կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 28-րդ և 80-րդ հոդվածների վերաբերյալ: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Նման կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերն ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից: Դրանով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրն իր դատավարական իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվող կողմի վրա է թողնում հետևանքները կրելու ռիսկը, այն է՝ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հացեում բնակվելու հանգամանքից *(տե՛ս, Արամ Մակարյանն ընդդեմ Խաչիկ Մանուկյանի թիվ ԵԱՆԴ/0326/02/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը)*:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, պատճառաբանել է, որ Դատարանը ձեռնարկել է ակտիվ միջոցներ Ստյոպա Հովհաննիսյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցելու վերաբերյալ, այդուհանդերձ նման միջոցների ձեռնարկումն ինքնին չի կարող բացառել դատավարական իրավունքի խախտումը, եթե այդպիսին, այնուամենայնիվ, տեղ է գտնում: Մասնավորապես՝ դատարանի ակտիվ գործողությունները՝ կողմին ծանուցելու վերաբերյալ, չպետք է և չեն կարող սահմանափակել կամ ի չիք դարձնել անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքը: Ելնելով նշված պատճառաբանություններից՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Ստյոպա Հովհաննիսյանը պատշաճ ձևով չի ծանուցվել ինչպես դատական նիստերի ժամանակի և վայրի, այնպես էլ դատաքննության մասին, որպիսի պայմաններում վերջինիս հնարավորություն չի ընձեռվել ներկայացնելու ապացույցներ, հայտնելու իր իրավական դիրքորոշումը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Վերաքննիչ դատարանը պատասխանողի պատշաճ ծանուցման հարցը պարզելիս նախ և առաջ պետք է գնահատման առարկա դարձներ վերջինիս կողմից իր դատավարական իրավունքներից օգտվելու և դատավարական պարտականությունները բարեխղճորեն կատարելու փաստը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի ուսումնասիրել սույն գործում առկա ապացույցները, ինչի արդյունքում սխալ հետևության է հանգել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի վերաբերյալ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը բազմիցս հետաձգել է գործի քննությունը և ձեռնարկել է օրենքով սահմանված միջոցներ՝ դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատասխանողին պատշաճ ձևով տեղեկացնելու ուղղությամբ՝ ծանուցումներն ուղարկելով Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի 28-րդ շենքի թիվ 17 հասցեով, սակայն նշված ծանուցագրերը հետ են վերադարձվել՝ «տեղափոխված», «բնակիչը տեղում չէ» և «չի պահանջվել» նշումներով: Ավելին՝ Դատարանը, հաշվի

առնելով նշված հանգամանքը, փորձել է Ստյոպա Հովհաննիսյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին տեղեկացնել համապատասխան համայնքի ղեկավարի միջոցով, սակայն այդ եղանակով նույնպես հնարավոր չի եղել ծանուցել պատասխանողին, քանի որ վերջինս բացակայել է Ագարակ քաղաքից և նշված հասցեում փաստացի չի բնակվել, իսկ պատասխանողի կինը Ս. Հովհաննիսյանի նոր բնակության վայրի հասցեի վերաբերյալ Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմին տեղեկություններ չի տրամադրել: Դատարանի կողմից Ստյոպա Հովհաննիսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, ինչի արդյունքում Ստյոպա Հովհաննիսյանը հայտնաբերվել է **և ներկայացրել գրավոր հայտարարություն առ այն, որ «2013 թվականի սեպտեմբեր ամսից բնակվում է Ագարակ քաղաքի Չարենցի 28/17 հասցեում»**, որից հետո ծանուցումները կրկին ուղարկվել են վերջինիս կողմից նշված հասցեով: Ընդ որում, 07.02.2014 թվականի դատական նիստի ծանուցագիրը, հայցադիմումը վարույթ ընդունելու, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու մասին և քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին որոշումները և հայցադիմումի ու դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ ուղարկված Ագարակ քաղաքի Չարենցի 28/17 հասցեով, Ստյոպա Հովհաննիսյանը պատշաճ ձևով ստացել է: Այսինքն՝ վերջինս պատշաճ կերպով ծանուցվել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն այդ դատական նիստին ևս չի ներկայացել: Ավելին, Ստյոպա Հովհաննիսյանը ոչ միայն անձամբ չի ներկայացել դատական նիստին, այլև, ստանալով գործը դատաքննության նախապատրաստելու մասին և քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին որոշումները, հայցադիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, չի ներկայացրել հայցադիմումի պատասխան և որևէ կերպ չի օգտվել ներկայացված հայցի դեմ պաշտպանվելու իր դատավարական իրավունքներից:

Այսպիսով, Դատարանը ձեռնարկել է պատասխանողի պատշաճ ծանուցումն ապահովելուն ուղղված բոլոր հնարավոր միջոցները՝ նույնիսկ միևնույն դատական նիստի մասին պատասխանողին դատական ծանուցումներ է ուղարկել մի քանի անգամ, սակայն նման եղանակը ևս հնարավոր չի դարձրել վերջինիս հայտնաբերումն Ագարակ քաղաքի Չարենցի 28/17 հասցեում, ինչը ողջամտորեն թույլ է տալիս ենթադրել, որ Ստյոպա Հովհաննիսյանն այդ հասցեում փաստացի չի բնակվում: Ըստ այդմ՝ հիշյալ հասցեում չբնակվելու կամ չգտնվելու պարագայում դատարանին և/կամ գործին մասնակցող այլ անձանց իր նոր բնակության (գտնվելու) վայրի մասին չիրազեկելու պայմաններում իր դատավարական իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվող կողմի վրա է մնում համապատասխան հետևանքները կրելու ռիսկը, այսինքն՝ տվյալ դեպքում ծանուցումները համարվում են հանձնված՝ անկախ անձի՝ այդ հասցեում բնակվելու (գտնվելու) հանգամանքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատաքննության մասնակիցներից յուրաքանչյուրն ինքը պետք է շահագրգռված լինի իր իրավունքների պաշտպանությամբ և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ավարտվելու հարցում և չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կխոչընդոտեն գործի քննության բնականոն ընթացքին և կձգձգեն դատավարությունը: Հակառակ պարագայում կստացվի այնպես, որ կողմերից մեկը, ունենալով անսահմանափակ իրավունքներ, պաշտպանության գործող մեխանիզմը կօգտագործի մյուս կողմին ի վնաս՝ խախտելով վերջինիս իրավունքները և օրինական շահերը, ինչը կհակասի արդարադատության բուն էությանն ու դատավարության նպատակին, քանի որ դատավարությունը կոչված է վերականգնելու և պաշտպանելու մարդու իրավունքները և օրինական շահերը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ստյոպա Հովհաննիսյանի կողմից իր փաստացի բնակության վայրի մասին տեղեկություններ ներկայացնելուց հետո այդ հասցեում փաստացի չգտնվելու և դատական ծանուցագրերը չստանալու պարագայում վերջինս կրել է իր իսկ մատնանշած հասցեով ուղարկված դատական ծանուցագրերը չստանալու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված բացասական հետևանքները, այն է՝ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության պայմաններում ծանուցումները համարվում են

հանձնված՝ անկախ Ստյոպա Հովհաննիսյանի՝ այդ հասցեում բնակվելու կամ գտնվելու հանգամանքից: Այսինքն՝ սույն գործով պատասխանող Ստյոպա Հովհաննիսյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի ուժով համարվել է պատշաճ ծանուցված: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով սույն գործի փաստերը և չկիրառելով համապատասխան դատավարական նորմը, սխալ եզրահանգման է եկել պատասխանողի՝ դատական նիստերի մասին ծանուցված չլինելու փաստի վերաբերյալ, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 03.06.2014 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվել է միայն դատական նիստի վերաբերյալ պատշաճ ծանուցված չլինելու հիմքով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով նկատի ունենալով, որ Ագարակի քաղաքապետարանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ագարակի քաղաքապետարանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ստյոպա Հովհաննիսյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241[2]–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.03.2014 թվականի վճռին:

2. Ստյոպա Հովհաննիսյանից հօգուտ ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2767/02/09
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2767/02/09**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ժենյա և Հարություն Պողոսյանների ներկայացուցիչ Ինեսսա Պետրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Խաչիկ Պողոսյանի ընդդեմ ժենյա և Հարություն Պողոսյանների՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Խաչիկ Պողոսյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևան քաղաքի Նալբանդյան թիվ 37/49 հասցեում գտնվող 11,7քմ մակերեսով օրինական կառույցի և դրանով, ինչպես նաև ինքնակամ կառույցներով ծանրաբեռնված ընդհանուր 88քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2010 թվականի որոշմամբ Խաչիկ Պողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.01.2011 թվականի որոշմամբ Ժենյա Պողոսյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 01.08.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.11.2014 թվականի որոշմամբ Խաչիկ Պողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 01.08.2014 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է. հայցը մասնակիորեն բավարարվել է՝ Երևանի Նալբանդյան թիվ 37/49 հասցեում գտնվող 11,7քմ մակերեսով օրինական կառույցի նկատմամբ ճանաչվել է Խաչիկ Պողոսյանի սեփականության իրավունքը, իսկ նույն հասցեում գտնվող 88քմ մակերեսով հողամասի նկատմամբ Խաչիկ Պողոսյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ժենյա և Հարություն Պողոսյանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Խաչիկ Պողոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի խախտմանը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, տեղեկացված լինելով պատասխանողներից Հարություն Պողոսյանի բնակության վայրի մասին, փաստացի բնակության վայրի հասցեով վերջինիս ծանուցելու փոխարեն (այն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Ներքին Պտղնի 1-ին փողոց, թիվ 24 տուն)՝ ծանուցել է նրա հաշվառման վայրի հասցեով, այն է՝ ք. Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 37/49 տուն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 2-2128(Ա) քաղաքացիական գործով 26.10.2006 թվականին և թիվ 3-1689(Ա) քաղաքացիական գործով 12.12.2007 թվականին կայացրած որոշումներին:

2. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 52-րդ, 53-րդ, 130-րդ, 130.1-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, խախտելով նշված հոդվածների պահանջները, ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել է Խաչիկ Պողոսյանի սեփականության իրավունքն այն գույքի նկատմամբ, որը վերջինս չի տիրապետում առնվազն 2002 թվականից (այդ հանգամանքն ընդունել է նաև Խաչիկ Պողոսյանը), որպիսի պայմաններում բացակայում է անձի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման համար անհրաժեշտ վավերապայմանների միաժամանակյա առկայության հանգամանքը: Ավելին, Ժենյա Պողոսյանն իր սեփականության իրավունքից չի հրաժարվել և չի կատարել այնպիսի գործողություններ, որոնք կվկայեին այն մասին, որ վիճելի գույքը սեփականատեր չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.11.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.08.2014 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Ժենյա և Հարություն Պողոսյանները Վերաքննիչ դատարանի 13.11.2014 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.12.2014 թվականին, և պատճառաբանել, որ Հարություն Պողոսյանը գործի քննության վերաբերյալ պատշաճ չի ծանուցվել իր բնակության վայրի հասցեով: Մինչդեռ, տվյալ դեպքում, բողոքը ներկայացվել է նաև Ժենյա Պողոսյանի անունից, ով գործի քննությանը պատշաճ ծանուցվելու և մասնակից չդարձվելու վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացրել, իսկ Հարություն Պողոսյանն ինքը չի ցանկացել մասնակցել ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարաններում ընթացող գործի քննություններին: Ընդ որում, վիճելի հասցեն ոչ միայն Հարություն Պողոսյանի հաշվառման, այլև վերջինիս մշտական բնակության հասցեն է, և նա հանդիսանում է վիճելի անշարժ գույքի համասեփականատեր: Հետևաբար, Հարություն Պողոսյանը պատշաճ կերպով ծանուցված է եղել բոլոր դատական նիստերի մասին:

Վերաքննիչ դատարանը, նշվածը հաշվի առնելով և գործում առկա ապացույցները գնահատելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, հիմնավոր կերպով գտել է, որ սույն գործով վիճելի հասցեի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով պետք է ճանաչվի Խաչիկ Պողոսյանի սեփականության իրավունքը՝ նկատի ունենալով այն, որ վերջինս իր իրավանախորդների հետ միասին տասնյակ տարիներ շարունակ անընդմեջ, բացահայտ և բարեխիղճ տիրապետում է նշված գույքը որպես սեփականը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սույն գործով պատասխանող Ժենյա Պողոսյանի ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանի կողմից 13.09.2013 թվականին Դատարան մուտքագրված դիմումով վերջինս հայտնել է, որ սույն գործով պատասխանող Հարություն Պողոսյանի փաստացի բնակության հասցեն է՝ Ներքին Պտղնի 1-ին փողոց, թիվ 24 տուն, ուստի խնդրել է դատական նիստերի վերաբերյալ նրան ծանուցել այդ հասցեով: Նշված դիմումը ստանալուց հետո Դատարանը դատական նիստերի վերաբերյալ Հարություն Պողոսյանին ծանուցել է դիմումում նշված հասցեով **(հատոր 4-րդ, գ.թ. 29, 43, 52):**

2) Վերաքննիչ դատարանն իր 08.09.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» և 29.09.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումները Հարություն Պողոսյանին ուղարկել է քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 37/49 տուն հասցեով **(հատոր 5-րդ, գ.թ. 15, 28):**

3) Վերաքննիչ դատարանի 13.10.2014 թվականի դատական նիստի արձանագրման համառոտագրման համաձայն՝ 13.10.2014 թվականին, ժամը 11:15-ին սկսված դատական նիստին ներկայացել է Խաչիկ Պողոսյանը, սակայն Ժենյա Պողոսյանի՝ նշված դատական նիստին պատշաճ ծանուցված չլինելու պատճառով դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 30.10.2014 թվականին, ժամը 12:00-ին, իսկ Հարություն Պողոսյանի՝ դատական նիստին պատշաճ ծանուցված լինելու կամ չլինելու վերաբերյալ արձանագրության մեջ որևէ նշում առկա չէ **(հատոր 5-րդ, գ.թ. 35):**

4) Վերաքննիչ դատարանի՝ 30.10.2014 թվականին, ժամը 12:00-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ ծանուցումը Հարություն Պողոսյանին կրկին ուղարկվել է քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 37/49 տուն հասցեով **(հատոր 5-րդ, գ.թ. 37):**

5) Վերաքննիչ դատարանի 30.10.2014 թվականի դատական նիստի արձանագրման համառոտագրման համաձայն՝ 30.10.2014 թվականին, ժամը 12:08-ին սկսված դատական նիստին ներկայացել է Խաչիկ Պողոսյանը, իսկ Ժենյա Պողոսյանը, չնայած պատշաճ ծանուցված լինելուն, դատական նիստին չի ներկայացել, Հարություն Պողոսյանի՝ դատական նիստին պատշաճ ծանուցված լինելու կամ չլինելու վերաբերյալ արձանագրության մեջ որևէ նշում առկա չէ **(հատոր 5-րդ, գ.թ. 52):**

6) Վերաքննիչ դատարանի 13.11.2014 թվականի դատական նիստի արձանագրման

համառոտագրման համաձայն՝ 13.11.2014 թվականին, ժամը 10:58-ին սկսված դատական նիստին՝ սույն գործով դատական ակտի հրապարակմանը, կողմերը ներկա չեն գտնվել, իսկ Վերաքննիչ դատարանի 13.11.2014 թվականի որոշումն ուղարկվել է կողմերին, մասնավորապես՝ Հարություն Պողոսյանին՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 37/49 տուն հասցեով **(հատոր 5-րդ, գ.թ. 54, 66):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի մեկնաբանությունը (արտահայտված Վերաքննիչ դատարանի գործողություններում) հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 2-2128(Ա) քաղաքացիական գործով 26.10.2006 թվականին և թիվ 3-1689(Ա) քաղաքացիական գործով 12.12.2007 թվականին կայացրած որոշումներում տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 19-րդ, Կոնվենցիայի 6-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը նմանատիպ գործերով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաքննիչ դատարանում դատական նիստերի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցման հարցին, ինչպես նաև վերջիններիս պատշաճ չծանուցելու դեպքում՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտման իրավական հնդրին:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետմիջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 78-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործին

մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով կամ ուղարկվում է էլեկտրոնային փոստով՝ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականին ընդունված և 03.07.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ օրենքով (ՀՕ-49-Ն) կատարված փոփոխությունները և լրացումները ներառող խմբագրությամբ գործող 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատական ծանուցագրերի միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցներին դատական ծանուցագիրը ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, հանձնվում է առձեռն կամ ուղարկվում է էլեկտրոնային եղանակով՝ նույն հոդվածի 4-րդ, 9-րդ և 10-րդ մասերով սահմանված դեպքերում և կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական ծանուցագիրն ուղարկվում է դատավարության մասնակցի նշած հասցեով, իսկ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված է, որ դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Ծանուցագիրը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է անձամբ հասցեատիրոջ կողմից, կամ հասցեատերը ծանուցումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել է ծանուցագիրը ստանալուց հրաժարվելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագիրը պետք է պարունակի դատարանի անվանումը և ստույգ հասցեն, նշում՝ ներկայանալու ժամանակի և վայրի մասին, գործը, որի վերաբերյալ անձը ծանուցվում է, նշում՝ դատարան կանչվող կամ ծանուցվող անձի մասին, նշում, թե անձը որպես ինչ է ծանուցվում կամ կանչվում, նշում՝ չներկայանալու հետևանքների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պարտավոր են դատարանին և գործին մասնակցող այլ անձանց հայտնել գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցման վերաբերյալ օրենսդրական համապատասխան իրավակարգավորումներին և դրանց կիրառման հետ կապված հիմնախնդիրներին: Այսպես, դիտարկելով դեռևս մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման հարցը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները պատշաճ ծանուցված են համարվում այն դեպքում, երբ դատարանում հավաստի տեղեկություն է ստացվում դատական ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնվելու մասին: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն՝ ներ-

կայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Միցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկացնելը դատարանի պարտականությունն է, որի չպահպանելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է դատավարական իրավունքի էական խախտում *(տե՛ս, օրինակ՝ «Հայկապ» բանկ ՓԲԸ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարն ընդդեմ Շահեն Բաբայանի թիվ 2-2128(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի, Շենգավիթի թաղապետարանն ընդդեմ Ալվինա և Լիանա Կազկոների, Արամ, Ֆրունզ և Նարեկ Մարկոսյանների թիվ 3-2236(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի, Սվետլանա Ժոլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ 3-1689(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումները):*

Հետագայում վերահաստատելով և զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև դիրքորոշում այն մասին, որ մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածում ամրագրված իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը: Միաժամանակ նույն որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում *(տե՛ս, օրինակ՝ Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի, Արամայիս Օհանջանյանի և Միշա Գրիգորյանի թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Ռամզես» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/0883/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումները):*

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մեկ այլ որոշմամբ արձանագրել է նաև, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունն այն է, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Նման կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն

փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերն ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության, ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից *(տե՛ս, Լիլիթ Գևորգովան ընդդեմ Սվետլանա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը 03.07.2014 թվականից արդեն իսկ գործում է այլ խմբագրությամբ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նոր կարգավորումներով նախատեսված փոփոխությունների և լրացումների բովանդակությանն ու առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց նկատմամբ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների կիրառելիության հարցին: Այսպես, 03.07.2014 թվականից հետո գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետում կատարված փոփոխությունները կրում են զուտ խմբագրական բնույթ և, ըստ երևույթին, որևէ նոր կանոնակարգում չեն նախատեսում: Ինչ վերաբերում է նույն հոդվածի 2-րդ կետին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ իրավանորմում կատարված փոփոխությունների արդյունքում ընդլայնվել է դատական ծանուցման եղանակների շրջանակը, առավել մանրակրկիտ և հստակ ամրագրում են ստացել դատական ծանուցագրերը դատավարության մասնակիցներին հանձնելու միջոցները: Ներկայումս գործող կանոնակարգումների համաձայն՝ այդ եղանակներն են.

1) ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելը, ընդ որում՝ հանձնման մասին ծանուցմամբ,

2) ծանուցագիրը դատավարության մասնակցին առձեռն հանձնելը,

3) էլեկտրոնային եղանակով ուղարկելը, որը, ընդ որում, իրագործելի է միայն նույն հոդվածի համապատասխան կետերով նախատեսված դեպքերում և կարգով:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է կատարի դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և պետք է ձեռնարկի օրենսդրությամբ նախատեսված՝ կոնկրետ իրավիճակում հնարավոր բոլոր ծանուցման միջոցները և եղանակները: Նոր իրավակարգավորումների պարագայում ևս, անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության համապատասխան մասնակիցների՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը:

Հետևաբար վերահաստատելով դատական ծանուցումների դատավարական ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք կիրառելի են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի՝ 03.07.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող խմբագրությամբ նախատեսված իրավակարգավորումների նկատմամբ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բողոք բերած անձն իրավունք ունի ներկա գտնվելու վերաքննիչդատարանի նիստին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վերաքննիչդատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին:

Վկայակոչված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանում դատական նիստին ներկա գտնվելու իրավունքն անվերապահորեն ճանաչել է միայն բողոք բերող անձի առնչությամբ, չնայած, միաժամանակ, թե՛ բողոք բերող անձին, թե՛ գործին մասնակցող անձանց դատական նիստին կանչելը (հրավիրելը, ծա-

նուցելը) սահմանվել է որպես վերաքննիչ դատարանի «հայեցողական լիազորություն», քանի որ վերջինս այդ գործողությունները կատարում է միայն համապատասխան «անհրաժեշտության դեպքում»:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ դատական նիստերին ներկա գտնվելու, իր իրավունքների պաշտպանության դատավարական միջոցներն օգտագործելու իրավունքը (օրինակ՝ դատական կազմի մեջ ընդգրկված դատավորին ինքնաբացարկի միջնորդության ներկայացում և այլն) չի կարող համարվել միայն վերաքննիչ բողոք բերած անձին պատկանող իրավունք, այն իրավաչափորեն և արդարացիորեն պետք է վերապահվի նաև գործին մասնակից հանդիսացող մյուս բոլոր անձանց: Հետևաբար, բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կրում է գործին մասնակցող անձանց դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցելու պարտականություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.09.2013 թվականին Դատարան է մուտքագրվել դիմում, որով հայտնվել է, որ սույն գործով պատասխանող Հարություն Պողոսյանի փաստացի բնակության հասցեն է՝ Ներքին Պտղնի 1-ին փողոց, թիվ 24 տուն, և ներկայացվել է վերջինիս՝ դիմումում նշված հասցեով դատական նիստերի վերաբերյալ ծանուցելու խնդրանք, ուստի նշված դիմումն ստանալուց հետո Դատարանը դատական նիստերի ժամանակի և վայրի մասին Հարություն Պողոսյանին ծանուցել է այդ հասցեով:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով 13.09.2013 թվականի դիմումով՝ պատասխանողներից մեկի փաստացի բնակության վայրը դատարանին հայտնելու մասին հաղորդումը, դատական նիստերի և դատավարական այլ գործողությունների վերաբերյալ Հարություն Պողոսյանին ծանուցել է ոչ թե վերը նշված՝ փաստացի բնակության վայրի (Կոտայքի մարզ, Ներքին Պտղնի 1-ին փողոց, թիվ 24 տուն), այլ նրա հաշվառման վայրի հասցեով, այն է՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 37/49 տուն: Վերաքննիչ դատարանն իր 08.09.2014 թվականի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին», 29.09.2014 թվականի՝ «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումները, ինչպես նաև վեճն ըստ էության լուծող 13.11.2014 թվականի որոշումը Հարություն Պողոսյանին դարձյալ ուղարկել է քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 37/49 տուն հասցեով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, չապահովելով պատասխանող Հարություն Պողոսյանի՝ վերաքննիչ բողոքի քննության վերաբերյալ իրապես տեղեկացված լինելու իրավունքը, խախտվել է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հիմնարար իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված մրցակցության և կողմերի իրավահավասարության կարևորագույն սկզբունքները:

Վերաքննիչ դատարանի կողմից Հարություն Պողոսյանին պատշաճ չծանուցելու տեսքով դատավարական իրավունքի խախտում թույլ տալու պայմաններում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ Ժենյա Պողոսյանի վճռաբեկ բողոքի հիմքերին, ինչպես նաև Հարություն Պողոսյանի վճռաբեկ բողոքի մյուս հիմքին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, Հարություն Պողոսյանի վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1807/02/13
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Գ. Կարախանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1807/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Միեր Ավետիսյանի, Մինիկա Քլոյանի, Արմեն Ստամբոլցյանի, Նունե Նասոյանի ներկայացուցիչ Հովհաննես Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Միեր Ավետիսյանի, Մինիկա Քլոյանի, Արմեն Ստամբոլցյանի, Նունե Նասոյանի ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ ավտոմեքենաները, բնակելի տունն ու հողամասը, դրամական միջոցներն արգելանքից հանելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Միեր Ավետիսյանը, Մինիկա Քլոյանը, Արմեն Ստամբոլցյանը և Նունե Նասոյանը պահանջել են «Մերսեդես Բենց CL500» մակնիշի 10 ՕՈ 001 պետական համարանիշի, «Գազ 2705-222» մակնիշի 10 ՐՐ 001 պետական համարանիշի, «Զիլ-ՄՄԶ 554Մ» մակնիշի 68 00 454 պետական համարանիշի ավտոմեքենաները, Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տունը՝ տնամերձ հողամասով, Միեր Ավետիսյանի, Արմեն Ստամբոլցյանի, Մինիկա Քլոյանի և Նունե Նասոյանի դրամական միջոցները հանել արգելանքից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 16.09.2014 թվականի վճռով ավտոմեքենաները, բնակելի տունն ու հողամասը արգելանքից հանելու պա-

հանջների մասով հայցը մերժվել է, իսկ դրամական միջոցներն արգելանքից հանելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.02.2015 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Մինիկա Քլոյանին և Նունե Նասոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը և դրամական միջոցներն արգելանքից հանելու պահանջների մասով Դատարանի 16.09.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործը նշված ծավալով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միեր Ավետիսյանի, Մինիկա Քլոյանի, Արմեն Ստամբոլցյանի և Նունե Նասոյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, սխալ է կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ, 251-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Միեր Ավետիսյանը և Արմեն Ստամբոլցյանը Բանկի նկատմամբ «Նոր Տուն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով գրավադրել են իրենց սեփականության իրավունքով պատկանող որոշակի գույք: Միեր Ավետիսյանը և Արմեն Ստամբոլցյանը չեն հանդիսանում գրավով ապահովված հիմնական պարտավորության պարտապաններ, հետևաբար վերջիններիս պատասխանատվությունը սահմանափակված է միայն իրենց կողմից գրավադրված գույքի արժեքով: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ չնայած Բանկն իր հայցային պահանջներն ուղղել է ոչ միայն Ընկերության, այլև Միեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի դեմ, այդուհանդերձ, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 06.04.2011 թվականի վճռով գումարը բռնագանձել է միայն Ընկերությունից և բռնագանձումը տարածել է գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա՝ դրանով իսկ բացառելով Միեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի՝ իրենց պատկանող այլ գույքով Ընկերության կողմից իր պարտավորությունների չկատարման համար պատասխանատվություն կրելու հանգամանքը:

Նման պայմաններում Միեր Ավետիսյանը և Արմեն Ստամբոլցյանն իրավունք ունեին դատական կարգով պահանջելու իրենց՝ գրավի առարկա չհանդիսացող գույքի վրա դրված արգելանքի վերացում, քանի որ չգրավադրված գույքով պատասխանատվություն կրելու հանգամանքի բացառման պայմաններում վերջիններիս՝ գրավի առարկա չհանդիսացող գույքի վրա դրված արգելանքը չվերացնելը հանգեցնում է նրանց սեփականության իրավունքի խախտման:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ հարկադիր կատարողի կողմից արգելանք է դրվել նաև քաղաքացիական գործի մասնակից, ինչպես նաև կատարողական վարույթի կողմ չհանդիսացող Մինիկա Քլոյանի և Նունե Նասոյանի գույքի վրա, գործն այդ մասով ուղարկել է նոր քննության, մինչդեռ ակնհայտ է, որ գույքը վերջիններիս պատկանելու փաստը հաստատված համարվելու պայմաններում գործն այդ մասով նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն առկա չէ: Դա բացատրվում է նրանով, որ սույն գործով չի վիճարկվել գույքը Մինիկա Քլոյանին և Նունե Նասոյանին սեփականության իրավունքով պատկանելու փաստը, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ևս արձանագրել է գույքի պատկանելիությունը վերջիններիս, իսկ վերոհիշյալ փաստերի հաստատումն արդեն իսկ բավարար էր վճիռն այդ մասով փոփոխելու, այլ ոչ թե գործը նոր քննության ուղարկելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.02.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ըստ հայցի Բանկի ընդդեմ Ընկերության, Միեր Ավետիսյանի, Արմեն Ստամբոլցյանի՝ վարկի գումարի և տոկոսների բռնագանձման, ժամկետանց վարկի գումարի ու ժամկետանց տոկոսների նկատմամբ տույժերի հաշվեգրման և բռնագանձման, բռնագանձումը գրավի առարկայի և այլ գույքի վրա տարածելու պահանջների մասին թիվ ԵԿԴ/2769/02/10քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 06.04.2011 թվականի վճռով հաստատվել են հետևյալ հանգամանքները՝

- Ընկերության և Բանկի միջև 05.09.2006 թվականին կնքվել է թիվ 053 ԱԳ/Վ վարկային պայմանագիրը:
- Ի ապահովումն Բանկի նկատմամբ Ընկերության ունեցած պարտավորությունների կատարման՝ Միեր Ավետիսյանի, Ընկերության և Բանկի միջև 13.03.2007 թվականին կնքվել են անշարժ գույքի հաջորդող գրավի մասին (հիփոթեք) թիվ 2000/07/166-1 ԱԳ/ՀԳ, թիվ 2000/07/166-3 ԱԳ/ՀԳ, թիվ 2000/07/166-5 ԱԳ/ՀԳ և թիվ 2000/07/166-6 ԱԳ/ՀԳ պայմանագրերը, որոնցով համապատասխանաբար գրավադրվել են Միեր Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Ծերեթելի (Արտաշիսյան) փողոցի 73-րդ շենքի թիվ 19 բնակարանը, Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Այգեձորի թիվ 56 հասցեում գտնվող բնակելի տունը և ավտոտնակը, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Չեխովի թիվ 48-50 հասցեում գտնվող 109,67քմ մակերեսով տարածքը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Եսայան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող շենք-շինությունը:
- Ի ապահովումն Բանկի նկատմամբ Ընկերության ունեցած պարտավորությունների կատարման՝ Արմեն Ստամբոլցյանի, Ընկերության և Բանկի միջև 13.03.2007 թվականին կնքվել է անշարժ գույքի հաջորդող գրավի մասին (հիփոթեք) թիվ 2000/07/166-4 ԱԳ/ՀԳ պայմանագիրը, որով գրավադրվել է Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող՝Երևան քաղաքի Էրեբունի համայնքի Այվազովսկու թիվ 14 հասցեում գտնվող ձավարեղենի արտադրամասն իր օժանդակ շինություններով:

Ընկերությունը վարկային պայմանագրի, այդ պայմանագրի թիվ 1 և թիվ 2 լրացուցիչ համաձայնագրերի, 14.02.2007 թվականին կնքված թիվ 2000/07/166 գլխավոր վարկային պայմանագրի, դրա հիման վրա կնքված բանկային փոխառության թիվ 2000/07/166/100 պայմանագրի հիման վրա ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ **(հատոր 1-ին, գ.թ. 69-83):**

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռով Բանկի հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Ընկերությունից հօգուտ Բանկի բռնագանձել 4.744.033 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ գանձման պահի փոխարժեքով, որից 3.189.858 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց հիմնական պարտքի գումար, 198.011 ԱՄՆ դոլարը՝ որպես տոկոսների գումար, 1.306.973 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց հիմնական պարտքի նկատմամբ հաշվարկված տույժի գումար, 49.192 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց տոկոսների նկատմամբ հաշվարկված տույժի գումար՝ **բռնագանձումը տարածելով գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա:** Գործի վարույթը՝ բռնագանձումը պատասխանողներին պատկանող այլ գույքի վրա տարածելու պահանջի մասով, կարճվել է՝ դատարանի քննությանը ենթակա չլինելու պատճառաբանությամբ **(հատոր 1-ին, գ.թ. 69-83):**

3. Թիվ ԵԿԴ/2769/02/10 քաղաքացիական գործի քննության շրջանակներում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի

29.12.2010 թվականի՝ «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշմամբ Բանկի միջնորդությունը բավարարվել է. հայցագնի՝ 4.744.033 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Ընկերությանը, Միեր Ավետիսյանին, Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռով 29.12.2010 թվականի՝ «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշմամբ Ընկերությանը, Միեր Ավետիսյանին, Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա դրված արգելանքը պահպանվել է մինչև վճռի կատարումը **(հատոր 1-ին, գ.թ. 13, 69-83):**

4. Ծառայության Երևան քաղաքի Պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Վարդանյանի 24.01.2012 թվականի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ արգելանք է դրվել Միեր Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Ծերեթելի (Արտաշիսյան) փողոցի 73-րդ շենքի թիվ 19 բնակարանի, Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Այգեձորի թիվ 56 հասցեում գտնվող բնակելի տան, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Չեխովի թիվ 48/50 հասցեում գտնվող տարածքի, «Մերսեդես Բենց CL500» մակնիշի 10 ՕՈ 001 պետական համարանիշի, «Գազ 2705-222» մակնիշի 10 ՐՐ 001 պետական համարանիշի, «Զիլ-ՄՄԶ 554Մ» մակնիշի 68 00 454 պետական համարանիշի ավտոմեքենաների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 15):**

5. Ծառայության Երևան քաղաքի Պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Վարդանյանի 24.01.2012 թվականի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ արգելանք է դրվել Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Էրեբունի համայնքի Այվազովսկու թիվ 14 հասցեում գտնվող ձավարեղենի արտադրամասի և դրա օժանդակ շինությունների, Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տան, «Դայլմեր-Բենց» մակնիշի 61 ԼՏ 849 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա, ինչպես նաև արգելանք է դրվել Արմեն Ստամբոլցյանի կնոջը՝ Նունե Նասոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Բաղյան թիվ 10 հասցեի առևտրի սրահի և «BMW 3181» մակնիշի 10 ԼՕ 550 պետական համարանիշի ավտոմեքենայի վրա **(հատոր 1-ին, գ.թ. 14):**

6. Ծառայության Երևան քաղաքի Պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Վարդանյանի 20.01.2011 թվականի՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2010 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 կատարողական թերթի հիման վրա արգելանք է դրվել Արմեն Ստամբոլցյանի դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 16):**

7. Ծառայության Երևան քաղաքի Պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Վարդանյանի 20.01.2011 թվականի՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2010 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 կատարողական թերթի հիման վրա արգելանք է դրվել Միեր Ավետիսյանի դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 17):**

8. Ծառայության Երևան քաղաքի Պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Վարդանյանի 20.01.2011 թվականի՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2010 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 կատարողական թերթի հիման վրա արգելանք է դրվել Մոնիկա Քլոյանի դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 18):**

9. Ծառայության Երևան քաղաքի Պետական եկամուտների կոմիտեի հայցերով բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Վարդանյանի 16.03.2011 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2010 թվականի թիվ ԵԿԴ2769/02/10 կատարողական թերթի հիման վրա արգելանք է դրվել Նունե Նասոյանի դրամական միջոցների վրա **(հատոր 1-ին, գ.թ. 19):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կիրառված արգելանքի վերացման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք հայցի ապահովման միջոցներից արգելանքը պետք է պահպանվի ամբողջ ծավալով, այն պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն և վճռվել է բռնագանձումը տարածել միայն կոնկրետ գույքի վրա:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), քննելով Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռում նշել է. «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավոր-

վող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6–րդ հոդվածի 1–ին կետը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6–րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6–րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (*տե՛ս, նաև Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի վճիռը, կետ 34*)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիությունը, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի վերը նշված հիմնական իրավունքների լույսի ներքո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14–րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98–րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է հայցի ապահովման միջոցները: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98–րդ հոդվածում ամրագրված հայցի ապահովման միջոցներից է պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101–րդ հոդվածի 4–րդ կետի համաձայն՝ հայցը մերժելումասինվճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցի ապահովումն օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Այն ուղղված է անձանց խախտված գույքային իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը կայանում է նրա-

նում, որ դրանով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ավնեա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը):*

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել ու հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են **մինչև վճռի կատարումը,** ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է, իսկ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում՝ **մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:** Օրենսդիրը միաժամանակ, հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի առանձնահատկությունները, հստակ սահմանել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու, հայցի ապահովումը վերացնելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու լիազորությամբ օժտված է բացառապես դատարանը, որն իր այդ լիազորությունն իրականացնում է համապատասխան որոշում ընդունելով:

Իրավական պետության սահմանդրական սկզբունքի և իրավունքի գերակայության երաշխավորման նպատակով օրենսդիրն ամրագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ միաժամանակ սահմանելով դատական ակտերի կատարումն ապահովելու պայմանները և կարգը, նշելով, որ դատական ակտերի հարկադիր կատարումը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության խնդիրն է, որը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն իրականացնում է հարուցված կատարողական վարույթի շրջանակներում՝ դատականակտերիհարկադիր կատարումն ապահովող պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կատարողական գործողություններ իրականացնելու միջոցով *(տե՛ս, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձ Իզաբելլա Վանյանի թիվ ՎԴ/2127/05/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Վերահաստատելով հայցի ապահովման ինստիտուտի և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարման վերաբերյալ վերը արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև հետևյալը.

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի

օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, իր բազմաթիվ որոշումներում նշել է, որ այն բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն, ընդհանուր շահից ելնելով, վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (*տե՛ս, օրինակ, Սպորրոնգը և Լոնրոդն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 61*):

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով
2. բխում է հանրային շահից
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի թիվ 1 արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*տե՛ս, Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*տե՛ս, Հունապտանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունապտանի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*տե՛ս, Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, կետ 32, Բելվեներն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 05.01.2000 թվականի վճիռը, կետ 98, Համայլովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 06.11.2008 թվականի վճիռը, կետ 28*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը պետության կողմից միջամտություն է մասնավոր անձի սեփականությանը, այլ կերպ ասած՝ սեփականության օգտագործման նկատմամբ պետության վերահսկողության դրսևորում է: Ընդ որում, Եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչների լույսի ներքո անդրադառնալով որպես հայցի ապահովման միջոց՝ պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելու իրավահարաբերություններին՝ Վճռաբեկ դատարանն փաստում է հետևյալը.

ա) միջամտության օրինականության վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներից է պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է որպես հայցի ապահովման միջոց պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելը, որը պահպանվում է մինչև վճռի կատարումը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետության կողմից անձի սեփականությանը միջամտությունը տվյալ դեպքում նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, որի կիրառումը բավականաչափ կանխատեսելի է:

բ) ընդհանուր շահերի առկայության վերաբերյալ

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ որպես իրավական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունն ունի պարտավորություն երաշխավորել իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մաս է հանդիսանում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումը:

Նշվածով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման միջոցների կիրառումը, այդ թվում՝ պատասխանողի գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելն այն դատավարական միջոցներն են, որոնք երաշխավորում են դատական ակտերի կատարումը, հետևաբար պատասխանողների գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելը համապատասխանում է իրավական պետությունում իրավունքի գերակայությունն ապահովելու ընդհանուր շահին: Այլ կերպ ասած՝ որպես իրավական պետություն, նպատակ ունենալով ապահովելու իրավունքի գերակայությունը, հայցի ապահովման միջոցը միտված է պաշտպանել հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը, արդյունքում՝ այն միտված է ապահովելու անձի «դատարան դիմելու իրավունքը»:

գ) ընդհանուր շահերի և անձի հիմնարար իրավունքների միջև համաչափության վերաբերյալ.

Ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռությունն ապահովվում է միջամտության համաչափությամբ: Համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի: Ըստ այդմ, համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ *պիտանիության, անհրաժեշտության և չափավորության*: Այսինքն՝ գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի՝ հետապնդվող նպա-

տակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից պետությունը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որը, առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: Չափավորությունը ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը միևնույն ժամանակ պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հայցի ապահովման ինստիտուտի պարագայում ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության պահպանման հարցի պարզումը յուրաքանչյուր դեպքում հարկ է իրականացնել՝ հաշվի առնելով ապահովման ենթակա հայցի տեսակը և առարկան, հայցագինը, ձեռնարկված հայցի ապահովման եղանակը: Մասնավորապես՝ որքանո±վ է պիտանի և անհրաժեշտ տվյալ հայցի ապահովման միջոցի կիրառումը նմանատիպ հայցապահանջներով, առկա է արդյոք ողջամիտ հարաբերակցություն հայցագնի և ձեռնարկված հայցի ապահովման ծավալի միջև և այլն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ընկերության միջև կնքվել է վարկային պայմանագիր և ի ապահովումն Բանկի նկատմամբ Ընկերության ունեցած պարտավորությունների կատարման՝ գրավադրվել է **Միեր Ավետիսյանին** սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Ծերեթելի (Արտաշիսյան) փողոցի 73-րդ շենքի թիվ 19 բնակարանը, Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Այգեձորի թիվ 56 հասցեում գտնվող բնակելի տունը և ավտոտնակը, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Չեխովի թիվ 48-50 հասցեում գտնվող 109,67քմ մակերեսով տարածքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Եսայան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող շենք-շինությունը և **Արմեն Ստամբոլցյանին** սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Էրեբունի համայնքի Այվազովսկու թիվ 14 հասցեում գտնվող ձավարեղենի արտադրամասը՝ իր օժանդակ շինություններով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2010 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշմամբ Բանկի միջնորդությունը բավարարվել է. հայցագնի՝ 4.744.033 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Ընկերությանը, Միեր Ավետիսյանին, Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա:

Ծառայության կողմից, ի կատարումն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2010 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշման, արգելանք է դրվել՝

- Միեր Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Ծերեթելի (Արտաշիսյան) փողոցի 73-րդ շենքի թիվ 19 բնակարանի (գրավի առարկա), Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Այգեձորի թիվ 56 հասցեում գտնվող բնակելի տան (գրավի առարկա), Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Չեխովի թիվ 48/50 հասցեում գտնվող տարածքի (գրավի առարկա), «Մերսեդես Բենց CL500» մակնիշի 10 ՕՈ 001 պետական համարանիշի, «Գազ 2705-222» մակնիշի 10 ՐՐ 001 պետական համարանիշի, «Ջիլ-ՄՄԶ 554Մ» մակնիշի 68 00 454 պետական համարանիշի ավտոմեքենաների վրա,
- Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Էրեբունի համայնքի Այվազովսկու թիվ 14 հասցեում գտնվող ձավարեղենի արտադրամասի և դրա օժանդակ շինությունների (գրավի առարկա), Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տան, «Դայլմեր-Բենց» մակնիշի 61 ԼՏ 849 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա,
- Արմեն Ստամբոլցյանի կնոջը՝ Նունե Նասոյանին սեփականության իրավունքով

պատկանող՝ Երևան քաղաքի Բաղյան թիվ 10 հասցեի առևտրի սրահի և «BMW 3181» մակնիշի 10 Լ.Օ 550 պետական համարանիշի ավտոմեքենայի վրա,

– Միեր Ավետիսյանի, Արմեն Ստամբոլցյանի, Նունե Նասոյանի և Մոնիկա Քլոյանի դրամական միջոցների վրա:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռով Բանկի հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Ընկերությունից հօգուտ Բանկի բռնագանձել 4.744.033 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ գանձման պահի փոխարժեքով, որից 3.189.858 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց հիմնական պարտքի գումար, 198.011 ԱՄՆ դոլարը՝ որպես տոկոսների գումար, 1.306.973 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց հիմնական պարտքի նկատմամբ հաշվարկված տույժի գումար, 49.192 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց տոկոսների նկատմամբ հաշվարկված տույժի գումար՝ **բռնագանձումը տարածելով գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա**: Միաժամանակ վճռում նշվել է, որ հայցագնի՝ 4.744.033 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով Ընկերությանը, Միեր Ավետիսյանին, Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա դրված արգելանքը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Սույն գործով Դատարանը Միեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի հայցը՝ ավտոմեքենաները, բնակելի տունն ու հողամասն արգելանքից հանելու պահանջների մասով, մերժել է՝ պատճառաբանելով, որ առկա չէ գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ, բացակայում են այլ անձանց իրավունքների խախտումները և կա օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի իրավական հետևանքն է դրա կատարելիությունը, իսկ Մոնիկա Քլոյանի և Նունե Նասոյանի գույքն արգելանքից հանելու պահանջի մասով գործի վարույթը կարճել է այն պատճառաբանությամբ, որ վիճարկվում են հարկադիր կատարողի գործողությունները, ինչը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության:

Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռով Միեր Ավետիսյանը և Արմեն Ստամբոլցյանը Բանկի և Ընկերության միջև կնքված վարկային պայմանագրի կողմ չեն հանդիսանում, և Ընկերության կողմից նշված պայմանագրի խախտման համար պատասխանատվություն են կրում միայն իրենց կողմից գրավադրված գույքի սահմաններում, այդուհանդերձ, Դատարանի վճիռը՝ ավտոմեքենաները, բնակելի տունն ու հողամասն արգելանքից հանելու պահանջների մասով հայցը մերժելու մասով, օրինական ուժի մեջ է թողել՝ պատճառաբանելով, որ թիվ ԵԿԴ/2769/02/10 գործի շրջանակներում դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցի մասին որոշմամբ չի առանձնացվել գրավադրված գույքը բողոք բերած անձանց սեփականության իրավունքով պատկանող այլ գույքից: Վերաքննիչ դատարանը միաժամանակ Մոնիկա Քլոյանին և Նունե Նասոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների մասով Դատարանի վճիռը բեկանել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Մոնիկա Քլոյանի և Նունե Նասոյանի սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների առումով կա պատկանելիության վեճ, և գործը վերջիններիս մասով ենթակա է նոր քննության:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումներին, գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռի եզրափակիչ մասի բոլոր պարբերություններն իրենցից ներկայացնում են մեկ փոխկապակցված համակցություն, որպիսի

պայմաններում որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքն էլ Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի մասով մինչև վճռի կատարումը պետք է պահպանվեր միայն **գրավադրված գույքի** մասով՝ նկատի ունենալով, որ նշված վճռով բռնագանձումը տարածվել է միայն գրավադրված գույքի վրա: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցի ապահովման ինստիտուտի նպատակը վերջնական դատական ակտի կատարման երաշխավորումն է, այլ ոչ թե լրացուցիչ՝ վերջնական դատական ակտի կատարումը չերաշխավորող գույքային իրավունքների սահմանափակումը:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ օրինական ուժի մեջ մտած վճռով բռնագանձումը տարածվել է **միայն գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա**, արգելանքը շարունակվել է պահպանվել ոչ միայն Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի **գրավի առարկա չհանդիսացող գույքի վրա**, այլև այլ անձանց՝ Մհնիկա Քլոյանի և Նունե Նասոյանի գույքի վրա, որոնք չեն հանդիսանում պատասխանող թիվ ԵԿԴ/2769/02/10 քաղաքացիական գործով, ավելին՝ պարտապաններ չեն Բանկի, Ընկերության, Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի միջև կնքված պայմանագրերից ծագած հարաբերություններում:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա է պարտադիր կատարման **այն ծավալով**, որը որոշված է **տվյալ** դատական ակտով: Մասնավորապես, եթե սույն գործով վճռում հստակ նշվել է, որ բռնագանձումը պետք է տարածել Մհեր Ավետիսյանին և Արմեն Ստամբոլցյանին սեփականության իրավունքով պատկանող **գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա**, ապա, բնականաբար, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը Մհեր Ավետիսյանի և Արմեն Ստամբոլցյանի մասով ենթակա է կատարման **միայն գրավադրված գույքի սահմաններում,** ուստի հայցի ապահովման միջոց հանդիսացող արգելանքը՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման երաշխիք, ենթակա է պահպանման վճռում նշված **գրավի առարկաներ հանդիսացող գույքի վրա**:

Այսինքն՝ անձի սեփականությանը միջամտությունը (արգելանքի պահպանումը) տվյալ դեպքում հետապնդվող նպատակին (դատական ակտի կատարմանը) կարող է համաչափ գնահատվել միայն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած դատական ակտում նշված ՝ **գրավի առարկաներ հանդիսացող գույքի մասով,** իսկ **գրավադրված գույքից** բացի այլ գույքի և/կամ դրամական միջոցների վրա արգելանքի պահպանումը չի կարող դիտարկվել որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս կազմող՝ դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարման երաշխիք, քանի որ չի բխում դատական ակտի բովանդակությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2011 թվականի թիվ ԵԿԴ/2769/02/10 օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը սույն գործով հայցվորների՝ գրավադրված գույքից բացի այլ գույքի և/կամ դրամական միջոցների վրա արգելանքի պահպանումը չի բխում ընդհանուր շահերի և անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության պահպանման սկզբունքից՝ անհարկի սահմանափակելով նշված գույքային միավորների սեփականատերերի իրավունքները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի

կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Նկատի ունենալով, որ հայցվորները հայցադիմումի համար վճարել են 4.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 12),** վերաքննիչ բողոքի համար 10.000 ՀՀ դրամ **(հատոր 2-րդ, գ.թ. 5)** և վճռաբեկ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ, այսինքն՝ 34.000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել բողոք բերած անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորների կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 34.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով, ենթակա է հատուցման Բանկի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել. արգելանքից հանել «Մերսեդես Բենց CL500» մակնիշի 10 ՕՈ 001 պետական համարանիշի, «Գազ 2705-222» մակնիշի 10 ՐՐ 001 պետական համարանիշի, «Զիլ-ՄՄԶ 554Մ» մակնիշի 68

00 454 պետական համարանիշի ավտոմեքենաները, Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տունը՝ տնամերձ հողամասով, Միեր Ավետիսյանի, Արմեն Ստամբոլցյանի, Մոնիկա Քլոյանի և Նունե Նասոյանի դրամական միջոցները:

2. «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ից հօգուտ Միեր Ավետիսյանի, Մոնիկա Քլոյանի, Արմեն Ստամբոլցյանի, Նունե Նասոյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0170/02/14
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Ա. Պետրոսյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՐԱԴ/0170/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուսաննա Արարատի Միրզոյանի ներկայացուցիչ Աստղիկ Պապիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Արարատի Միրզոյանի ընդդեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, և ըստ Սուսաննա Միհրանի Միրզոյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Սուսաննա Արարատի Միրզոյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սուսաննա Արարատի Միրզոյանը պահանջել է փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել Մելիք Միրզոյանի 05.04.1996 թվականի կտակով Արարատ Միրզոյանին կտակված ժառանգական գույքի՝ Ապարան քաղաքի Մաշտոցի թիվ 45 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սուսաննա Միհրանի Միրզոյանը պահանջել է Ապարան քաղաքի Մաշտոցի թիվ 45 հասցեում գտնվող գույքի 1/2 մասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 12.05.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.11.2014 թվականի որոշմամբ Սուսաննա Միհրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքը բա-

վարարվել է՝ Դատարանի 12.05.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուսաննա Արարատի Միրզոյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ, 210-րդ, 213-րդ և 214-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, 25.08.2014 թվականին Սուսաննա Միհրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելով, անտեսել է այն հանգամանքը, որ բողոքի ներկայացման ժամկետը բաց է թողնվել և չի ներկայացվել միջնորդություն՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ, ինչի արդյունքում թույլ է տվել դատավարական նորմի խախտում: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անհասկանալի կերպով գտել է, որ Սուսաննա Միհրանի Միրզոյանի կողմից վերացվել են Վերաքննիչ դատարանի 18.07.2014 թվականի որոշմամբ նշված թերությունները, մինչդեռ Վերաքննիչ դատարանի 18.07.2014 թվականի որոշմամբ թերություններ նշված չեն եղել, դրանք շտկելու ու բողոքը կրկին ներկայացնելու համար որևէ ժամկետ սահմանված չի եղել:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս հանգել է սխալ եզրակացության՝ պատճառաբանելով, որ Դատարանը չի պարզել, թե Մելիք Միրզոյանի մահվանից հետո 6 ամսվա ընթացքում արդյոք որևէ մեկը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է համապատասխան անշարժ գույքի՝ Արարատ Միրզոյանին կտակված մասի ժառանգությունը, որպիսի եզրահանգումն անհիմն է այն պարզ պատճառով, որ սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվել է, որ Սուսաննա Արարատի Միրզոյանը փաստացի տիրապետման եղանակով ընդունել է իր հորը՝ Արարատ Միրզոյանին, կտակված ժառանգությունը:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել գործում առկա ապացույցները, ինչի արդյունքում Դատարանի վճիռն ամբողջ ծավալով բեկանել է այն հիմնավորմամբ, որ հայցի լուծումից է հետևում հակընդդեմ հայցի լուծումը, ինչը, սակայն, անընդունելի է, քանի որ գործում առկա ծանրակշիռ ապացույցների հիմքով ակնհայտ է, որ հակընդդեմ հայցը, անկախ սկզբնական հայցով գործի ելքից, ենթակա է մերժման՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.11.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.05.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սույն գործով Դատարանը վճիռ է կայացրել 12.05.2014 թվականին, որի դեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 10.06.2014 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 101-107, 123).**

2) Վերաքննիչ բողոքին կցվել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր **(հատոր 1-ին, գ.թ. 121).**

3) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Ա. Պետրոսյան) «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 19.06.2014 թվականի որոշմամբ Դատարանի 12.05.2014 թվականի վճռի դեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է երկշաբաթյա ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 125).**

4) Ըստ փոստային առաքման ծրարի վրա առկա նշման՝ Սուսաննա Միհրանի Միրզոյանը 10.07.2014 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացրել միջնորդություն, որով խնդրել է պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգել **(հատոր 1-ին, գ.թ. 148-149).**

5) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Ա. Պետրոսյան) «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 18.07.2014 թվականի որոշմամբ Դատարանի 12.05.2014 թվականի վճռի դեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքը կրկին վերադարձվել է **(հատոր 1-ին, գ.թ. 150).**

6) Սուսաննա Միհրանի Միրզոյանը 12.08.2014 թվականին փոստային առաքմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին ներկայացված դիմումին կցել է 16.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր **(հատոր 2-րդ, գ.թ. 2-3/1).**

7) Վերաքննիչ դատարանի 25.08.2014 թվականի որոշմամբ Դատարանի 12.05.2014 թվականի վճռի դեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի «վերաքննիչ բողոքն» ընդունվել է վարույթ **(հատոր 2-րդ, գ.թ. 4).**

8) Սույն գործում առկա չէ 12.08.2014 թվականի դիմումին և դրան կից պետական տուրքի վճարման անդորրագրին Սուսաննա Միհրանի Միրզոյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք, ինչպես նաև վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ, 210-րդ և 213-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. վերաքննիչ դատարանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում կարող է արդյոք իրավաչափ համարվել բողոք բերած անձի կողմից վերստին ներկայացված «վերաքննիչ բողոքի» վարույթ ընդունումն այն պարագայում, երբ բողոք բերած անձի կողմից չի ներկայացվել ոչ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բաղթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, ոչ էլ առավել ևս՝ վերաքննիչ բողոք:

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ բողոքը վերադարձ-

նելու, վերաքննիչ վարույթը կարճելու և կասեցնելու, ինչպես նաև դատական տուգանք կիրառելուվերաբերյալ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատական ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, իսկ դրանց բողոքարկման անհնարինությունը դատական ակտի կայացման չարդարացված ձգձգումների և քաղաքացու իրավունքների խախտման է հանգեցնում, որոնց հետագա դատական պաշտպանությունն ապագայում չի կարող ապահովվել կամ չի կարող հանգեցնել արդյունավետ վերականգնման: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված միջանկյալ դատական ակտերի համար սահմանել է **անմիջական բողոքարկման կարգ**: Իսկ նշված դրույթներով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել է «**հետաձգված բողոքարկման**» **կարգ**, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում *(տե՛ս, Անժելա Գևորգյանն ընդդեմ Նիկալ Շահվերդյանի թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Վերը ներկայացված իրավական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բողոք բերող անձը «հետաձգված բողոքարկման» կարգով վիճարկում է Վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու որոշման օրինականությունն ու իրավաչափությունը, ինչը գործող իրավակարգավորման շրջանակներում է:

բ) ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշ-

վում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում սահմանված է դատական եռաստիճան համակարգ, որը գործում է դատական ներհամակարգային աստիճանակարգության հիման վրա, ինչը ենթադրում է վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայման հնարավորություն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն իրենց բողոքարկման իրավունքն իրացնում են վերադաս ատյաններ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան և ՀՀ վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու միջոցով: Վերադաս (տվյալ դեպքում՝ վերաքննիչ) բողոքարկումը ոչ միայն խախտված և վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման միջոց է, այլև դատական սխալների բացահայտմանն ու վերացմանն ուղղված որոշակի կառուցակարգ է, որն ապահովում է արդարադատության իրականացման ոլորտում օրինականությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը չի կարող համարվել բացարձակ իրավունք, այն կարող է անհիրաժեշտաբար ենթարկվել ողջամիտ և իրավաչափ սահմանափակումների, այդ իրավունքի իրացումն օբյեկտիվորեն ունի որոշակի սահմաններ և շրջանակներ: Այսպես,

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո,** բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ **վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ **վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո** և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է վերը նշված հոդվածների իրավական վերլուծությանը և, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքով սահմանված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկե-

տի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից: Միաժամանակ անդրադառնալով վերաքննիչ բողոք բերելու ժամկետները բաց թողնելու կամ բաց թողած ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու դեպքում օրենսդրի նախատեսած որոշակի իրավական հետևանքների վրա հասնելուն՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը *(տե՛ս, օրինակ, Վարդան Պողոսյանն ընդդեմ Տիգրան Արշակյանի թիվ ԵՇԴ/0021/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բողոք բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որն ազդել է գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը, բողոք բերող անձի պահանջը, բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ **վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Նման որոշման դեպքում բողոք բերող անձին պատշաճ ձևով ուղարկվում է միայն վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով **վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վկայակոչված հոդվածների իրավական վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով վերաքննիչ բողոք ներկայաց-

նելու դեպքում և այն պարագայում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին օրենքով ներկայացվող պահանջները, վերաքննիչ դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա վերաքննիչ դատարանը երկշաբաթյա ժամկետ է տրամադրում դրանք վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ մնացած բոլոր դեպքերում արձանագրված խախտումը շտկելու համար ժամկետ չի տրամադրվում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի վերը նշված լիազորությունների իրականացումը (վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, վերադարձնելու մասին որոշումներ կայացնելը) անմիջականորեն կապված է վերաքննիչ բողոքի առկայության հետ: Ընդ որում, օրենսդիրը վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու հանգամանքը պայմանավորել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության հետ: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանում դատական ակտի վերանայում կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով ներկայացված վերաքննիչ բողոքի առկայության դեպքում *(տե՛ս, Անժելա Գևորգյանն ընդդեմ Նիկալ Շահվերդյանի թիվ ԱՐԱԴ2/0169/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը, համակարգային վերլուծության ենթարկելով վերը շարադրված իրավական կարգավորումները, փաստելով, որ ցանկացած դատավարական գործողություն կարող է կատարվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում վերաքննիչ դատարանը կարող է կայացնել բացառապես այն դեպքում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը, գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի կողմից կայացվում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում, որում վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու համար ժամկետ չի սահմանվում և նման պայմաններում կրկին ներկայացվում է վերաքննիչ բողոք, ապա **վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցը պետք է որոշվի կոնկրետ դատական ակտի բողոքարկման համար օրենքով նախատեսված ժամկետների հաշվառմամբ:**

Այսպիսով, անձը հնարավորություն ունի վերաքննիչ բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետում, որին կարող է հավելվել նաև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ տրամադրվող երկշաբաթյա ժամկետը (բողոքի ձևի և բովանդակության կապակցությամբ արձանագրված թերությունները շտկելու համար): Հետևաբար այդ ժամկետների ավարտից հետո վերստին ներկայացված բողոքը վերաքննիչ դատարանի կողմից կարող է վարույթ ընդունվել միայն այն դեպքում, երբ բողոքին կից ներկայացվել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և այն բավարարվել է վերաքննիչ դատարանի կողմից:

Սույն գործով Դատարանի վճիռը հրապարակվել է 12.05.2014 թվականին, որի դեմ Սուսաննա Միհիրանի Միրզոյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 10.06.2014 թվականին՝ բողոքին կցելով 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 19.06.2014 թվականի որոշմամբ Դատարանի 12.05.2014 թվականի վճռի դեմ Սուսաննա Միհիրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է երկշաբաթյա ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Սուսաննա Միհիրանի Միրզոյանը 10.07.2014 թվականին ներկայացրել է միջնորդություն, որով խնդրել է պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 18.07.2014 թվականի որոշմամբ Դատարանի 12.05.2014 թվականի վճռի դեմ Սուսաննա Միհիրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքը կրկին վերադարձրել է:

Սուսաննա Միհրանի Միրզոյանը 12.08.2014 թվականին փոստային առաքմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին ներկայացված դիմումին կցել է 16.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր: Վերաքննիչ դատարանի 25.08.2014 թվականի որոշմամբ Դատարանի 12.05.2014 թվականի վճռի դեմ Սուսաննա Միհրանի Միրզոյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Սույն գործում առկա չէ 12.08.2014 թվականի դիմումին և դրան կից պետական տուրքի վճարման անդորրագրին Սուսաննա Միհրանի Միրզոյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք, ինչպես նաև վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն:

Վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով սույն գործի դատավարական փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սուսաննա Միհրանի Միրզոյանն իր 12.06.2014 թվականի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերադարձնելուց հետո չի օգտվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի **19.06.2014 թվականի** որոշմամբ սահմանված **երկշաբաթյա ժամկետում** բողոքում առկա թերությունները վերացնելու հնարավորությունից և կրկին ներկայացրել է թերություններով բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերադարձվել է՝ առանց նոր ժամկետի տրամադրման: Հետևաբար Սուսաննա Միհրանի Միրզոյանը, Դատարանի **12.05.2014 թվականի** վճռի դեմ վերստին «վերաքննիչ բողոքը» ներկայացնելով **12.08.2014 թվականին,** բաց է թողել վճռի բողոքարկման համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը՝ չներկայացնելով դրա բացթողնման պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սուսաննա Միհրանի Միրզոյանի կողմից 12.08.2014 թվականին ներկայացված դիմումին և դրան կից պետական տուրքի վճարման անդորրագրի հետ միասին վերաքննիչ բողոք բերված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ վարույթի հարուցումը և վերաքննիչ բողոքը քննության ընդունելն իրականացվել է առանց դրա համար օրենքով նախատեսված հիմքի, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքի առկայության, քանի որ դիմումը և պետական տուրքի վճարման անդորրագիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի հիմքով որպես վերաքննիչ բողոք դիտարկվել չեն կարող:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր հարուցելու գործի վերաքննիչ վարույթ և վերանայելու Դատարանի 12.05.2014 թվականի վճիռն ինչպես վերաքննիչ բողոքի, այնպես էլ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության բացակայության պայմաններում:

2) Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս հիմքին, ապա Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված և սույն որոշմամբ արձանագրված դատավարական իրավունքի նորմերի նման եղանակով խախտման պայմաններում այն չի կարող լինել քննության առարկա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, այդ թվում նաև՝ սույն գործով Դատարանի վճռի դեմ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում վերաքննիչ բողոք ներկայացված չլինելու հանգամանքը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Սուսաննա Արարատի Միրզոյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարը՝ 40.000 ՀՀ դրամը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման Սուսաննա Միհրանի Միրզոյանից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 12.05.2014 թվականի վճռին:

2. Սուսաննա Միհրանի Միրզոյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0199/02/11

Քաղաքացիական գործ թիվ **<u>ԵԱԴԴ/0199/02/11</u>**
2015թ.

Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գայանե Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ «Հինգերորդ Աստղ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), երրորդ անձինք «Ամելիք բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և «Երդիկ» ՍՊԸ-ի՝ պայմանագրից բխող պարտավորությունները պատշաճ կատարած ճանաչելու, գումարի բռնագանձման կամ պարտքը չմարելու դեպքում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջների մասին, և ըստ Կազմակերպության հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

<u>1. Գործի դատավարական նախապատմությունը</u>

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պատշաճ կատարված ճանաչել 15.06.2006 թվականին կնքված պայմանագրից բխող իր պարտավորությունները, Կազմակերպությունից հօգուտ իրեն բռնագանձել 407.509.216 ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող շարժական և անշարժ գույքի՝ Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքի վրա, ինչպես նաև 407.509.216 ՀՀ դրամի նկատմամբ 17.02.2011 թվականից մինչև գումարի փաստացի վճարման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, իսկ գումարի բռնագանձման անհնարինության կամ պարտքը չմարելու դեպքում՝ 15.06.2006 թվականին կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետևանքով 407.509.216 ՀՀ դրամի դիմաց

Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքից 2,716քմ մակերեսի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից հօգուտ իրեն բռնագանձել 475.880.093 ՀՀ դրամ՝ որպես թերի, չկատարված, ինչպես նաև հավելագրումներով կատարված աշխատանքների գումար:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սմբատյան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2013 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն՝ վճռվել է Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձել 223.533.793 ՀՀ դրամ չվճարած պարտքը և բռնագանձումը տարածել Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 հասցեի բազմաբնակարան շենքի Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի 1-ին հարկի թիվ 62տ/ծ-ի 207,5քմ, ոչ բնակելի 2-րդ հարկի թիվ 64տ/ծ-ի 340,2քմ, 169քմ թիվ 3 բնակարանի, 134,2քմ թիվ 5 բնակարանի, 169,3քմ թիվ 8 բնակարանի, **83,77քմ թիվ 11 բնակարանի**, 168,8քմ թիվ 38 բնակարանի, 168,8քմ թիվ 43 բնակարանի, 133,0քմ թիվ 50 բնակարանի, 132,5քմ թիվ 55 բնակարանի վրա, Ընկերությունից հօգուտ Կազմակերպության բռնագանձել 12.804.833 ՀՀ դրամ՝ որպես թերի կատարված աշխատանքների վերականգնման գումար, Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 3.679.508,46 ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունից՝ 4.470.675,86 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Հայցը և հակընդդեմ հայցը՝ մնացած մասերով, մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան, դատավորներ՝ Լ. Գրիգորյան, Գ. Մատինյան) 03.07.2013 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. որոշվել է՝ Դատարանի 25.04.2013 թվականի վճիռը՝ հակընդդեմ հայցը մասնակի բավարարելու և բռնագանձված պետական տուրքի մասերով, բեկանել և փոփոխել, այն է՝ ««Հինգերորդ աստղ» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ի՝ գումարի բռագանձման պահանջի մասին, ամբողջությամբ մերժել: «Հինգերորդ աստղ» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 9.266.322 ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի դատարանի պետական տուրքի գումար: Դատարանի 25.04.2013 թվականի վճիռը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.08.2013 թվականի որոշումներով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2013 թվականի որոշման դեմ Ընկերության և Կազմակերպության վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.07.2014 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձանց՝ Տիգրան, Դավիթ Դավոյանների և Կարինե Տոնոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 25.04.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչ Տիգրան Սուրադյանը և գործին մասնակից չդարձված անձինք Կարինե Տոնոյանը և Տիգրան, Դավիթ Դավոյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 27-րդ հոդվածը, «Մանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 39-րդ, 46-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 219-րդ հոդվածի 1-ին կետը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները և անհիմն կերպով ամբողջությամբ բեկանել է Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Վերաքննիչ դատարանը գործին մասնակից չդարձված անձանց իրավունքները խախտված համարելու դեպքում վճիռը կարող էր բեկանել միայն Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքի 83,77քմ մակերեսով թիվ 11 բնակարանի մասով, քանի որ վճիռը մնացած մասով չի շոշափում նշված անձանց իրավունքները: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով, որ սույն գործով հայցի առարկան պայմանագրից բխող պարտավորությունների պատշաճ չկատարման հետևանքով գումարի բռնագանձման պահանջն է, և մնացած գույքերի մասով բողոք բերած անձանց գույքային իրավունքները չեն շոշափվում, դատական ակտը բեկանել է ամբողջությամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը Դատարան է ներկայացվել Կազմակերպությանը սնանկ ճանաչելու վերաբերյալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2013 թվականի թիվ ԱՐԱԴ/0043/04/13 վճիռն ուժի մեջ մտնելուց հետո: Նման պայմաններում հարց է առաջանում. արդյոք Վերաքննիչ դատարանը կարող էր վարույթ ընդունել վերաքննիչ բողոքն այն դեպքում, երբ վիճելի գույքը չէր կարող սույն քաղաքացիական գործով դառնալ բռնագանձման առարկա: Առավել ևս վճիռն ամբողջությամբ բեկանելիս Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե գումարի բռնագանձման և բռնագանձումը մյուս գույքերի վրա տարածելու մասով գործին մասնակից չդարձված անձանց որ իրավունքներն են խախտվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սնանկ ճանաչված պատասխանողն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով: Մսանկության վարույթի ընթացքում առաջացող հարաբերությունների իրավակարգավորումը ենթադրում է այնպիսի կառուցակարգ, որն ապահովում է բոլոր պարտատերերի պահանջների համաչափ բավարարումը, և պարտապանի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված՝ անգամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմինների կողմից ենթակա չեն կատարման: Այսինքն՝ Կազմակերպության սնանկ ճանաչված լինելու պայմաններում Դատարանի վճռի հիման վրա վիճելի գույքի վրա չէր կարող բռնագանձում տարածվել, այդ հարցերը ենթակա են կարգավորման «Մսանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, որի համաձայն էլ սույն գործով գործին մասնակից չդարձված անձինք կարող էին օգտվել իրենց պահանջները սնանկության վարույթի շրջանակներում ներկայացնելու՝ իրենց վերապահված իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.07.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ օրինական ուժ տալ Դատարանի 25.04.2013 թվականի վճռին:

2.1 Կազմակերպության՝ վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի 17.07.2014 թվականի որոշումն օրինական է, լիարժեք հիմնավորված և պատճառաբանված, նշված որոշմամբ որևէ իրավանորմի պահանջ չի խախտվել, սխալ չի մեկնաբանվել կամ կիրառվել, որի արդյունքում էլ այն հեղինակավոր և օրինական դատական ակտ է: Վերաքննիչ դատարանը բողոքը քննել է հավասարության պայմաններում, հրապարակային, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ, իսկ բողոք բերած անձի վճռաբեկ բողոքն անհիմն է, զուրկ իրավական հիմնավորումներից և ենթակա է մերժման:

2.2 Գործին մասնակից չդարձված անձինք Կարինե Տոնոյանի ու Տիգրան, Դավիթ Դավոյանների՝ վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն արդարացիորեն է բեկանել Դատարանի 25.04.2013 թվա-

կանի օրինական ուժի մեջ մտած վճիռը: Իրենք համարվում են բնակարանի բարեխիղճ ձեռքբերողներ, քանի որ տեղյակ չեն եղել Ընկերության և Կազմակերպության միջև առկա հարաբերությունների մասին և պարտավոր էլ չէին տեղյակ լինելու: Գույքի նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքի գրանցման պահին որևէ սահմանափակում կամ արգելանք առկա չի եղել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանի 25.04.2013 թվականի վճռով Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձվել է 223.533.793 ՀՀ դրամ չվճարած պարտքը, և բռնագանձումը տարածվել է Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 հասցեի բազմաբնակարան շենքում Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի 1-ին հարկի թիվ 62տ/ծ-ի 207,5քմ-ի, ոչ բնակելի 2-րդ հարկի թիվ 64տ/ծ-ի 340,2քմ-ի, 169քմ թիվ 3 բնակարանի, 134,2քմ թիվ 5 բնակարանի, 169,3քմ թիվ 8 բնակարանի, **83,77քմ թիվ 11 բնակարանի**, 168,8քմ թիվ 38 բնակարանի, 168,8քմ թիվ 43 բնակարանի, 133,0քմ թիվ 50 բնակարանի, 132,5քմ թիվ 55 բնակարանի վրա**.**

2) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23.11.2012 թվականի թիվ 23112012-01-1879 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 շենքի 83,7 քմ մակերեսով թիվ 11 բնակարանի նկատմամբ գրանցված է Կարինե Տոնոյանի, Տիգրան և Դավիթ Դավոյանների սեփականության իրավունքը**.**

3) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2013 թվականի թիվ ԱՐԱԴ/0043/04/13 վճռով Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի քննության և լուծման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի հիման վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարող է բեկանվել ամբողջ ծավալով, եթե գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և օրինական շահերին դատական ակտն առնչվում է մասնակի:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված

ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով և գնահատման առարկա դարձնելով այն դեպքերը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների խախտում և բեկանել է դատական ակտը *(տե՛ս, օրինակ, Գյումրու քաղաքապետարանն ընդդեմ Ֆելիքս Թորոսյանի թիվ 3-2343(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ **միայն** այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց **իրավունքների և պարտականությունների վերաբերյալ** *(տե՛ս, ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մալխասյանի թիվ ԱՐԱԴ/0242/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա:

Մյուս կողմից՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքին, նշել է, որ այն անհիրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որը, ի թիվս այլոց, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության բաղադրատարրերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է *res judicata* սկզբունքի հարգում: Վերջինս էլ նշանակում է, որ որևէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական և կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու և վեճը նորից լուծելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դատարանի իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները և արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական և կատարման ենթակա դատական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական և անհետաձգելի հանգամանքների դեպքում *(տե՛ս, Ռյաբիխն*

ընդդեմ Ռուսաստանի ՄԻԵԴ-ի 24.07.2003 թվականի վճիռը, գանգատ թիվ 52854/99, կետ 51-52):

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ ՄԻԵԴ-ի վերը նշված դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ իրավունքների իրացումը չի կարող կրել բացարձակ բնույթ: Մասնավորապես, գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում հարկ է պահպանել անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից գործին մասնակցող անձանց սահմանադրական իրավունքների ու պարտականությունների, մյուս կողմից՝ գործին մասնակից չդարձված այն անձանց իրավունքների և պարտականությունների միջև, որոնց իրավունքներին և պարտականություններին առնչվում է դատական ակտը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում այն կարող է բեկանվել միայն այն մասով, որով այդ դատական ակտը առնչվում է նշված անձանց իրավունքներին և պարտականություններին, ինչը կարող է ապահովել գործին մասնակցող և գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների միջև հավասարակշռությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 25.04.2013 թվականի վճռով Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձվել է 223.533.793 ՀՀ դրամ չվճարած պարտքը, և բռնագանձումը տարածվել է Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 հասցեի բազմաբնակարան շենքի Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի 1-ին հարկի թիվ 62տ/ծ-ի 207,5քմ, ոչ բնակելի 2-րդ հարկի թիվ 64տ/ծ-ի 340,2քմ, 169քմ թիվ 3 բնակարանի, 134,2քմ թիվ 5 բնակարանի, 169,3քմ թիվ 8 բնակարանի, **83,77քմ թիվ 11 բնակարանի**, 168,8քմ թիվ 38 բնակարանի, 168,8քմ թիվ 43 բնակարանի, 133,0քմ թիվ 50 բնակարանի, 132,5քմ թիվ 55 բնակարանի վրա:

Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքի թիվ 11 բնակարանի նկատմամբ 23.11.2012 թվականին գրանցվել է Տիգրան, Դավիթ Դավոյանների և Կարինե Տոնոյանի սեփականության իրավունքը:

Տիգրան, Դավիթ Դավոյանները և Կարինե Տոնոյանը Դատարանի 25.04.2013 թվականի վճռի դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք՝ հայտնելով, որ նշված վճռով բռնագանձում է տարածվել նաև Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքի թիվ 11 բնակարանի նկատմամբ, մինչդեռ այն հանդիսանում է բողոք բերած անձանց սեփականությունը, և հաշվի առնելով, որ առանց իրենց մասնակցության քննված գործով իրենց իրավունքների վերաբերյալ կայացվել է դատական ակտ, խնդրել են ամբողջությամբ բեկանել Դատարանի 25.04.2013 թվականի վճռիը և գործն ուղարկել նոր քննության:

Վերաքննիչ դատարանը, քննելով Դատարանի 25.04.2013 թվականի վճռի դեմ Տիգրան, Դավիթ Դավոյանների և Կարինե Տոնոյանի՝ որպես գործին մասնակից չդարձված անձանց վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ Դատարանը վճռով բռնագանձում է տարածել վերաքննիչ բողոք բերած անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա այն դեպքում, երբ վերջիններս սույն քաղաքացիական գործով մասնակից չեն դարձվել, այսինքն՝ Դատարանը քաղաքացիական գործը քննել և դատական ակտ է կայացրել Տիգրան, Դավիթ Դավոյանների և Կարինե Տոնոյանի բացակայության պայմաններում՝ առանց պարզելու նրանց իրավունքների ծավալի վրա դատական ակտի ազդեցության իրավական հետևանքները: Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ Դատարանի վճռով ոչ միայն շոշափվել են գործին մասնակից չդարձված անձանց գույքային իրավունքները, այլև վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող գույքը բռնագանձման առարկա է դարձվել այլ անձի՝ սույն գործով պատասխանողի պարտավորություններով, **ամբողջությամբ** բեկանել է այն և գործն ուղարկել նոր քննության:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով հայցի առարկան Ընկերության և Կազմակերպության միջև 15.06.2006 թվականին կնքված պայմանագրից բխող պարտավորությունների պատշաճ չկատարման հետևանքով գումարի բռնագանձման պահանջն է, որը չի առնչվում գործին մասնակից չդարձած անձանց իրավունքներին և պարտականություններին: Սույն գործով գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և պարտականություններին դատական ակտն առնչվում է միայն բռնագանձումը Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 հասցեի բազմաբնակարան շենքում վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող 83,77քմ մակերեսով թիվ 11 բնակարանի վրա տարածելու մասով, ուստի Դատարանի 25.04.2013 թվականի վճիռը ենթակա էր բեկանման միայն բռնագանձումը Երևանի Կոմիտաս պողոտայի թիվ 38/3 շենքի 11-րդ բնակարանի վրա տարածելու մասով, այլ ոչ թե ամբողջ ծավալով, քանի որ դատական ակտն ամբողջ ծավալով չի առնչվել բողոք բերողների իրավունքներին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Կազմակերպությունը ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2013 թվականի վճռով ճանաչվել է սնանկ, և առկա է սնանկության վարույթ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից արգելվում է պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթի սկսումը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

Նշված քաղաքացիական գործը կարող է վերսկսվել սնանկության գործի ավարտից հետո պարտապանի ֆինանսապես առողջացման դեպքում: Հակառակ դեպքում՝ դատարանի սնանկության գործն ավարտելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը հիմք է քաղաքացիական գործի վարույթի կարճման համար՝ լուծարված պարտապանի մասով:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանցով սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը, այն է՝ պարտապանի և պարտատերերի շահերով պայմանավորված՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից չի կարող սկսվել պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ դատական գործի վարույթ, իսկ այդպիսի պահանջների առկայության դեպքում դրանք պետք է կենտրոնանան սնանկության վարույթում: Միաժամանակ կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ այն դատական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ, անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի իրավակարգավորմանը, գտել է, որ վերոնշյալ հիմքով կարճման ենթակա է միայն պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին դատարանի վա-

րույթում քննվող (ընթացիկ) քաղաքացիական գործի վարույթը *(տե՛ս, Մարիեփա Գրիգորյանն ընդդեմ Համլետ Գևորգյանի թիվ ԵԿԴ/0282/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն դեպքերին, երբ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին թեև դատարանի վարույթում քննվող (ընթացիկ) գործ առկա չէ, այդուհանդերձ, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի հիմքով հարուցվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վարույթ:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով գործին մասնակից չդարձված անձանց կողմից դատական ակտը բողոքարկելու՝ սույն որոշման մեջ արտահայտած դիրքորոշումները, գտնում է, որ գործին մասնակից չդարձված անձանց կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վարույթն իրենից ներկայացնում է արդեն իսկ քննված գործի վերաբացում՝ դրա շրջանակներում քննության առարկա հանդիսացող իրավահարաբերության մասնակիցներին գործին մասնակից չդարձնելու հետևանքով առկա սխալները շտկելու նպատակով, ինչն իր հերթին կարող է հանգեցնել գործի նոր քննության այն մասով, որ մասով գործն առնչվում է դրան մասնակից չդարձված անձանց իրավունքներին և օրինական շահերին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի հիմքով վերանայվում և գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և պարտականություններին առնչվելու մասով բեկանվում է մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելը պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջների վերաբերյալ քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, այդ դատական ակտի բեկանված մասի նկատմամբ կիրառելի է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, քանի որ դատական ակտը գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և պարտականություններին առնչվելու մասով բեկանելու դեպքում, ըստ էության, այդ մասով շարունակվում է գործի քննությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում առկա է սնանկության վարույթ, իսկ սույն քաղաքացիական գործը վերաբերում է պարտապանից գումարի բռնագանձման պահանջին, հետևաբար Վերաքննիչ դատարանը, արձանագրելով դատական ակտի մի մասով գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների խախտում, և այդ մասով դատական ակտը բեկանելով, պետք է առաջնորդվեր «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով և բեկանված մասով կարճեր գործի վարույթը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի խախտման վերաբերյալ Ընկերության փաստարկները Վճռաբեկ դատարանը նույնպես գնահատում է հիմնավոր:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխաններում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում բռնագանձումը՝ Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքում Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող 83,77քմ մակերեսով թիվ 11 բնակարանի

վրա տարածելու հայցապահանջի մասով, անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ գործի վարույթի մի մասը կարճելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հիմք ընդունելով սույն գործով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի կիրառելիության վերաբերյալ վերը շարադրված պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Կազմակերպությունից հօգուտ Ընկերության 223.533.793 ՀՀ դրամ չվճարած պարտքը բռնագանձելու և բռնագանձումը Կոմիտասի թիվ 38/3 հասցեի բազմաբնակարան շենքում Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի 1-ին հարկի 207,5քմ մակերեսով թիվ 62տ/ծ-ի, ոչ բնակելի 2-դ հարկի 340,2քմ մակերեսով թիվ 64տ/ծ-ի, 169քմ մակերեսով թիվ 3 բնակարանի, 134,2 քմ մակերեսով թիվ 5 բնակարանի, 169,3 քմ մակերեսով թիվ 8 բնակարանի, 168,8 քմ մակերեսով թիվ 38 բնակարանի, 168,8քմ մակերեսով թիվ 43 բնակարանի, 133,0 քմ մակերեսով թիվ 50 բնակարանի, 132,5 քմ մակերեսով թիվ 55 բնակարանի վրա տարածելու հայցապահանջների մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.04.2013 թվականի վճռին ուժ տալով հիմք է ընդունում այն հանգամանքը, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2013 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ նշված վճիռը հակընդդեմ հայցի և պետական տուրքի մասերով բեկանվել և փոփոխվել է:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկայինկանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գուքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դա-

տական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, **վերաքննիչ դատարանում** օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք է հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ ատյանում դատական ակտի վերանայման վարույթում գործին մասնակից չդարձված անձանց այնպիսի իրավունքների ու պարտականությունների ընձեռումը, որոնք սահմանված են գործին մասնակցող անձանց համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, որպես գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք, վերջիններս գործին մասնակցող անձանց իրավունքներից օգտվում և վերջիններիս համար սահմանված պարտականությունները կրում են ոչ միայն վերաքննիչ, այլ նաև վճռաբեկ ատյանում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործին մասնակից չդարձված անձինք, օգտվելով գործին մասնակցող անձանց բոլոր իրավունքներից և կրելով գործին մասնակցող անձանց համար սահմանված նույն պարտականությունները, մի կողմից՝ իրավունք ունեն պահանջելու դատական ծախսերի հատուցում, մյուս կողմից՝ կարող են նաև կրել գործին մասնակցող անձանց դատական ծախսերի հատուցման պարտականություն՝ դատական ծախսերի բաշխման ընդհանուր կանոնի համապատասխան:

Սույն գործով Ընկերությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ՝ միաժամանակ միջնորդելով պակաս վճարված պետական տուրքի հարցը լուծել գործի ըստ էության քննության ժամանակ: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, բավարարելով պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգելու մասին Ընկերության միջնորդությունը, 10.12.2014 թվականին որոշում է կայացրել «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին»՝ միաժամանակ որոշելով հետաձգել վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի չվճարված մասի վճարումը և այդ հարցին անդրադառնալ գործի ըստ էության քննության ժամանակ:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով Տիգրան, Դավիթ Դավոյաններից և Կարինե Տոնոյանից հօգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար ոչ գույքային պահանջով նախապես վճարված պետական տուրքի գումար: Միաժամանակ հաշվի առնելով գույքային պահանջի գործերով վճռաբեկ բողոքների համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետով նախատեսված՝ բազային տուրքի հազարապատիկը չգերազանցելու սահմանափակումը, ինչպես նաև նկատի ունենալով, որ սույն գործով հայցագնի 3 տոկոսը գերազանցում է բազային տուրքի հազարապատիկը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տիգրան, Դավիթ Դավոյաններից և Կարինե Տոնոյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար գույքային պահանջով սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–241.2–րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2014 թվականի որոշումը և

– գործի վարույթն ըստ հայցի «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ–ի ընդդեմ «Հինգերորդ աստղ» ՍՊԸ–ի՝ բռնագանձումը Երևանի Կոմիտասի պողոտայի թիվ 38/3 բազմաբնակարան շենքում «Հինգերորդ աստղ» ՍՊԸ–ին սեփականության իրավունքով պատկանող 83,77քմ մակերեսով 11–րդ բնակարանի վրա տարածելու պահանջի մասով, կարճել.

– մնացած մասով օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.04.2013 թվականի վճռին (ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2013 թվականի որոշմամբ՝ հակընդդեմ հայցի և պետական տուրքի մասերով կատարված փոփոխություններով):

2. Տիգրան, Դավիթ Դավոյաններից և Կարինե Տոնոյանից համապարտության կարգով հօգուտ «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ–ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Տիգրան, Դավիթ Դավոյաններից և Կարինե Տոնոյանից համապարտության կարգով հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0024/16/12
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0024/16/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Նոյեմ Հովսեփյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության միջնորդության՝ Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը ճանաչելու և Հայաստանի Հանրապետության տարածքում կատարումը թույլատրելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ճանաչել Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը և թույլատրել դրա կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 07.03.2014 թվականի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է՝ որոշվել է Հայաստանի Հանրապետությունում ճանաչել Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը, նշված վճռի հիման վրա տրամադրել կատարողական թերթ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և ժամկետների պահպանմամբ թույլատրել դրա կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

26.06.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.03.2014 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածը, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 19-րդ, 23-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն ընդհանրապես քննության չի արժանացրել վերաքննիչ բողոքում բարձրացված այն հարցը, որ Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 1-ին կետի ուժով իրավասու լինելով միայն պարզել միջազգային արբիտրաժային դատարանի վճռի իրավաչափությունը և դրա համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված ընթացակարգերին, քննության առնելով կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետներին առնչվող հարցերը, դուրս է եկել է միջնորդության քննության առարկայի շրջանակներից:

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 2-րդ կետը, այդուհանդերձ, փոխելով նշված դրույթի տառացի նշանակությունը, արձանագրել է, որ կատարողական թերթը տրվում է միջազգային արբիտրաժի վճռի հիման վրա, որը պետք է կատարվի ՀՀ ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ եզրակացնելով, որ Ընկերությունը խախտել է ՀՀ իրավասու դատարանին միջազգային արբիտրաժային դատարանի վճիռը ճանաչելու և կատարումը թույլատրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու ժամկետը: Վերաքննիչ դատարանը, սակայն, չի նշել, թե որ իրավական ակտով է սահմանվել ճանաչման միջնորդություն ներկայացնելու ժամկետ, որով ղեկավարվելով էլ միջնորդություն ներկայացնելու ժամկետի խախտում է արձանագրել:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 19-րդ և 23-րդ հոդվածները, գտել է, որ կատարողական թերթն առաջին անգամկարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ, այլ ոչ թե Դատարանի կողմից 2014 թվականին օտարերկրյա պետության արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման և կատարման վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին որոշում կայացնելուց հետո:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջը, սխալ մեկնաբանելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթները, չի բացահայտել «արբիտրաժային տրիբունալ» և «միջազգային արբիտրաժային դատարան» հասկացությունների և դրանց կողմից կայացված ակտերի կատարմանը վերաբերող իրավակարգավորումների տարբերությունները:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և փոփոխել այն հետևյալ կերպ՝

«1. Որոշման պատճառաբանական մասում, որպես հաստատված հանգամանքներ, թողնել միայն վերլուծությունները և հետևություններն այն մասին, որ կատարման են-

թակա վճիռը չի կայացվել «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիայով սահմանված դրույթների խախտմամբ, վճիռը ստացել է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ, հանդիսացել է վերջնական ակտ, կողմերը կայացված վճռի գործով եղել են պատշաճ ծանուցված, կողմերը նրանց նկատմամբ կիրառվող օրենքի առնչությամբ որևէ չափով անգործունակ չեն եղել, համաձայնագիրը, որը կնքել են կողմերը, դատական կարգով կամ այլ կերպ անվավեր չի ճանաչվել, դրա կատարումը չի կասեցվել, ըստ ՀՀ օրենքների, վեճի առարկան կարող է լինել արբիտրաժային դատարանի քննարկման առարկա, իսկ վճռի ճանաչումը և կատարումը չի հակասում ՀՀ հասարակական կարգին:

2. Որոշման եզրափակիչ մասի 2-րդ պարբերությունը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ. «Ճանաչել և թույլատրել Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի կողմից 11.02.2011 թվականին «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի դեմ կայացված վճռի կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքում, այն է՝

1. Ճանաչել պատճառաբանված և օրինաչափ «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ի պահանջները՝ «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ից բռնագանձել 1.739.685,65 ԱՄՆ դոլար հիմնական պարտքը, 231.599,41 ԱՄՆ դոլար տույժ, արբիտրաժային գանձում վճարելու ծախսերը փոխհատուցելու 20.045,14 ԱՄՆ դոլար, ընդամենը՝ 1.991.330 ԱՄՆ դոլար և 20 ցենտ:

2. «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ին պարտավորեցնել վճարել «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ին հիմնական պարտքը՝ 100.000 ԱՄՆ դոլարը մինչև 2011 թվականի փետրվարի 25-ը, 150.000 ԱՄՆ դոլարը մինչև 2011 թվականի մարտի 25-ը, 285.437 ԱՄՆ դոլարը՝ մինչև 2011 թվականի ապրիլի 25-ը, 285.437 ԱՄՆ դոլարը՝ 2011 թվականի մայիսի 25-ը, 285.437 ԱՄՆ դոլարը մինչև 2011 թվականի հունիսի 27-ը, 285.437 ԱՄՆ դոլարը մինչև 2011 թվականի հուլիսի 25-ը, ընդամենը՝ 1.391.784 ԱՄՆ դոլար: Պատասխանողի կողմից ժամանակին և լրիվ պայմանները կատարելու դեպքում, հայցվորը հրաժարվում է պատասխանողից 347.937,65 ԱՄՆ դոլար հիմնական պարտքի մասի, 231.599,41 ԱՄՆ դոլար տույժի բռնագանձումից և 20.045,14 ԱՄՆ դոլար արբիտրաժային գանձումը վճարելու ծախսերի հատուցումից:

3. Այն դեպքում, եթե պատասխանողը մինչև 2011 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամկետը կկատարի պարտքի վճարում 1.304.764 ԱՄՆ դոլարի չափով, ապա հայցվորը հրաժարվում է պատասխանողից 434.921,65 ԱՄՆ դոլարի չափով հիմնական պարտքի մասի, 231.599,41 ԱՄՆ դոլարի չափով տույժի բռնագանձումից և 20.045,14 ԱՄՆ դոլար՝ արբիտրաժային գանձումը վճարելու ծախսերի հատուցումից:

4. «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի կողմից սույն վճռով սահմանված ժամկետներում և չափով գումարային միջոցների միանգամյա չփոխանցման դեպքում «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ն դիմում է իրավասու պետական դատարան՝ Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի վճիռը ճանաչելու և հարկադիր կատարելու և «Գոլդեն Ֆիլդ» ՍՊ ընկերությունից 1.739.685, 65 ԱՄՆ դոլար հիմնական պարտքը, 231.599,41 ԱՄՆ դոլար տույժը, արբիտրաժային գանձում վճարելու ծախսերը փոխհատուցելու 20.045,14 ԱՄՆ դոլարը, ընդամենը՝ 1.991.330 ԱՄՆ դոլար և 20 ցենտ բռնագանձելու համար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում ընդունման պահից»:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռի կամավոր կատարման համար նախատեսված ժամկետը սահմանափակված է օրենքով հարկադիր կատարման համար նախատեսված ժամկետով, ուստի պահանջատերը պետք է իր օգտին կայացրած դատական ակտի կամավոր կատարում ակնկալեր այն ժամկետում, որի ընթացքում վերջինս դեռ զրկված չէր Հայաստանի Հանրապետության տարածքում իր դատական ակտը հարկադիր կերպով ի կատար ածելու հնարավորությունից: Այս պարագայում օտարերկրյա անձը պետք է օտարերկրյա դատական ակտը կատարման ներկայացնելիս առաջնորդվեր ոչ թե իր երկրում գործող ժամկետներով և

կանոններով, այլ՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության պահանջներով: Այն դեպքում, երբ ուկրաինական ընկերությունը քաջատեղյակ էր, որ դատական ակտը կատարման նեկայացնելու համար իր օրենսդրությամբ սահմանված է կոնկրետ ժամկետ, ուստի ողջամտորեն կարող էր ենթադրել, որ ՀՀ օրենսդրությամբ ևս պետք է նման ժամկետ սահմանված լինի, հակառակ դեպքում իրավիճակը կհանգեցնի փակուղու: Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ ուկրաինական ընկերությունն ակնկալել է դատական ակտի կամավոր կատարում դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարի յոթ ամսվա ընթացքում, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ, որից հետո օրենքով սահմանված թույլատրելի միջոցներ չի ձեռնարկել, մասնավորապես՝ կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու խնդրանքով չի դիմել դատարան:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճռի համաձայն՝ Ընկերության պահանջները «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի նկատմամբ ճանաչվել են պատճառաբանված և օրինաչափ, և վճռվել է վերջինիցս բռնագանձել 1.739.685,65 ԱՄՆ դոլար հիմնական պարտքը, 231.599,41 ԱՄՆ դոլար տույժը, արբիտրաժային գանձում վճարելու ծախսերը փոխհատուցելու 20.045,14 ԱՄՆ դոլարը, ընդամենը՝ 1.991.330 ԱՄՆ դոլար և 20 ցենտ: Վճռով նշվել է նաև, որ «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի կողմից պարտքը ժամանակացույցին համապատասխան մարվելու դեպքում Ընկերության կողմից կկատարվեն զիջումներ՝ նախատեսված գումարների չափով **(հատոր 1-ին, գ.թ. 24-33, հատոր 4-րդ, գ.թ. 19-35):**

2) Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի կողմից 12.08.2011 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ 11.02.2011 թվականի վճիռը ստացել է օրինական ուժ՝ դրա կայացման պահից **(հատոր 2-րդ, գ.թ. 51, հատոր 3-րդ, գ.թ.16):**

3) Ընկերությունը 07.09.2012 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը ճանաչելու և այն Հայաստանի Հանրապետությունում կատարելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 3, հատոր 4-րդ, գ.թ. 93):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^{7}-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք ներպետական օրենսդրությամբ սահմանված է օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ճանաչման ներկայացնելու ժամկետ.

2. արդյո՞ք այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ՀՀ իրավասու դատարանի կողմից ճանաչելու մասին որոշման հիման վրա տրված կատարողական թերթ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ կատարողական թերթն առաջին անգամ հարկադիր

կատարման ներակայացնելու մեկամյա ժամկետը պետք է հաշվարկել օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու, թե՞ այդ դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից:

1) ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[6]-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, ինչպես նաև օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները (այսուհետ՝ դատական ակտեր), որոնք կատարում են պահանջում, ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետության տարածքում: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված են օտարերկրյա պետությունների դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու՝ ՀՀ դատարանների իրավասությունները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նախ և առաջ նշել, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը ենթադրում է պետական իշխանության գերակայություն, ինքնուրույնություն և անկախություն, ինչն իր մեջ ներառում է նաև պետության ամբողջ տարածքում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությունը: Հետևաբար օտարերկրյա դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ինքնըստինքյան չեն կարող ունենալ իրավական գործողության այն հատկանիշները (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն, նախադատելիություն), ինչ ունեն ներպետական դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Միևնույն ժամանակ պետության ինքնիշխանությունը չի բացառում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչը նախ և առաջ միջազգային համագործակցության դրսևորում է:

Վերը նշվածով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման կարգ՝ այդ ակտերի ճանաչման իրավասությունը վերապահելով ՀՀ դատարաններին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի ճանաչումն իրենից ներկայացնում է ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրում, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և թույլատրում այդ ակտի իրավական գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ կերպ ասած՝ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտը միայն ճանաչման արդյունքում է Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[6]-րդ հոդվածի 1-ին կետի և 247[7]-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ-ում ճանաչման ենթակա են օտարերկրյա պետությունների դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները, ինչպես նաև միջազգային արբիտրաժի որոշումները, որոնք կատարում են ենթադրում:

«Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա, Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիային միացել է ՀՀ Ազգային ժողովի 18.11.1997 թվականի թիվ Ն-210-Ն որոշմամբ) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն կոնվենցիան կիրառվում է այնարբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման նկատմամբ, որոնք կայացվել են այն պետության տարածքում, քան այն պետությունը, որում հայցվում է այդպիսի որոշումների ճանաչումը և կատարումը՝ այն վեճերով, որոնց կողմ կարող են լինել ինչպես

ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Այն կիրառվում է նաև այն արբիտրաժային որոշումների նկատմամբ, որոնք ներքին որոշումներ չեն համարվում այն պետությունում, որտեղ հայցվում է դրանց ճանաչումը և կատարումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արբիտրաժային որոշումներ» տերմինը ներառում է ոչ միայն յուրաքանչյուր առանձին գործով նշանակված արբիտրների կայացրած արբիտրաժային որոշումները, այլև արբիտրաժային այն որոշումները, որոնք կայացվել են մշտապես գործող այն արբիտրաժային մարմինների կողմից, որոնց դիմել են կողմերը:

Վկայակոչված կոնվենցիոն դրույթներից հետևում է, որ Կոնվենցիան հավասարապես կիրառելի է ինչպես օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռների և որոշումների, այնպես էլ միջազգային արբիտրաժի որոշումների նկատմամբ:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն արբիտրաժային որոշումները ճանաչում է որպես պարտադիր և դրանք կատարում է **այն տարածքի դատավարական նորմերին համապատասխան**, որում հայցվում է ճանաչումը և կատարումը՝ կոնվենցիայի հաջորդիվ շարադրված հոդվածներով նախատեսված պայմաններով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալի վճիռը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի նույն հոդվածին և 36-րդ հոդվածին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կայացված արբիտրաժային վճիռները փոխադարձության սկզբունքով ճանաչվում և ի կատար են ածվում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ նույն օրենքին, այլ իրավական ակտերին և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Ընդ որում, փոխադարձությունը համարվում է առկա, եթե այլ բան ապացուցված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^{7}-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը պարզում է **միայն**, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով:

Համապատասխան միջազգային պայմանագրի պահանջները պահպանած լինելու և ճանաչումը մերժելու՝ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը որոշում է կայացնում օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու մասին:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է արբիտրաժային որոշման ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերը:

Վերը նշված՝ կոնվենցիոն և ներպետական իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) որոշումը ճանաչելու և կատարելու հարցը լուծելիս ՀՀ դատարանները չունեն նշված որոշումն ըստ էության վերանայելու իրավասություն և պետք է սահմանափակվեն միայն այն պայմանների առկայության ստուգումով, որոնց դեպքում թույլատրվում է համապատասխան որոշման ճանաչումն ու կատարումը, և պարզեն այն պայմանների բացակայությունը, որոնք հիմք են ճանաչումը մերժելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ թե՛ Կոնվենցիան և թե՛ ներպետական օրենսդրությունն օտարերկրյա պետության ար-

բիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) որոշումը **ճանաչման ներկայացնելու ժամկետ չեն նախատեսել:**

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կայացրած ***որոշումը*** կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև քրեական գործերով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիրկատարմանմիջոցների կիրառման հիմքը, մասնավորապես, նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետության դատարանի վճիռների և որոշումների կատարման վերաբերյալ կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության այն դատարանը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որոշում է կայացրել տվյալ օտարերկրյա պետության դատարանի վճիռը և որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք ներմուծվեց «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 18.02.2004 թվականի թիվ ՀՕ-39-Ն օրենքով: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվեց 247[6]-րդ և 247[7]-րդ հոդվածներով, որոնցով հանգամանալից կերպով կարգավորում ստացան օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հետ կապված հարցերը: Մինչ այդ այս ինստիտուտին առնչվող առանձին հարցեր (օտարերկրյա դատական ակտի կատարման հետ կապված) կարգավորված էին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածն օրենքի ընդունման պահին (05.05.1998թ.) գործող խմբագրությամբ նախատեսում էր, որ հարկադիր կատարման ենթակա են՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և միջնորդ դատարանների վճիռներն ու որոշումները, իսկ արդեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 04.02.2004 թվականի թիվ ՀՕ-32-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ հարկադիր կատարման ենթակա են՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև քրեական գործերով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 2-րդ կետի հետ համակցության մեջ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազ-

գային արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հնարավորություն նախատեսելով, միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանել է ոչ թե անմիջականորեն օտարերկրյա դատական ակտի կատարման, այլ **օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշման կատարման հնարավորություն**, որն իր հերթին ենթակա է կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթն առաջին անգամ կարող էկատարմաններկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

1) օրինական ուժի մեջ է մտելդատականակտը.

2) արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ.

3) լրացել էդատականակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը.

4) դատարանը որոշում է կայացրել կատարողական թերթըկատարմաններկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելումասին.

5) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[7]-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կատարման ենթակա է **օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը,** որի հիման վրա էլ տրամադրվում է կատարողական թերթ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը պետք է հաշվարկել օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից: Այսպիսով, քանի դեռ օտարերկրյա դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել, այսինքն՝ ձեռք չի բերել պարտադիրության ու կատարելիության հատկանիշներ, այն Հայաստանի Հանրապետությունում ենթակա չէ կատարման՝ անկախ այն հանգամանքից, թե օտարերկրյա պետությունում երբ է կայացվել նշված դատական ակտը կամ երբ է այն մտել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի վերը նշված եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև հետևյալը.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են արբիտրաժային տրիբունալի վճիռները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է արբիտրաժային տրիբունալների վճիռների հիման վրա:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների վճիռների և որոշումների հիման վրա:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալիս է ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետության արբիտրաժային տիրբունալի վճիռների և որոշումների կատարման վերաբերյալ կատարո-

ղական թերթը տալիս է ՀՀ այն դատարանը, որը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որոշում է կայացրել տվյալ օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռը և որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Վկայակոչված իրավանորմերի համակողմանի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից հստակ տարանջատվել են «արբիտրաժային տրիբունալ» և «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալ» հասկացությունները: Մասնավորապես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված «արբիտրաժային տրիբունալ» հասկացությունը կիրառվում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ տարածքում ձևավորված և գործող արբիտրաժային դատարանների առնչությամբ և չի կարող նույնացվել «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալ» և «օտարերկրյա դատարան» հասկացությունների հետ: Օրենսդիրը տարանջատել է նաև «արբիտրաժային տրիբունալի վճիռներ» և «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռներ և որոշումներ» հասկացությունները: Մասնավորապես՝ «արբիտրաժային տրիբունալի վճիռներ» եզրույթի պարագայում հարկադիր կատարման ենթակա են ներպետական արբիտրաժային տրիբունալի վճիռները և կատարողական թերթ անմիջականորեն տրվում է նշված վճիռների հիման վրա, իսկ «օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռներ և որոշումներ» եզրույթի դեպքում հարկադիր կատարման ենթակա են ՀՀ դատարանների կողմից օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտերը, և կատարողական թերթ տրվում է ՀՀ իրավասու դատարանի կողմից կայացված՝ ճանաչման համապատասխան դատական ակտի հիման վրա:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել սկսած այն օրվանից, երբ կայացվել է արբիտրաժային տրիբունալի վճիռը: Մինչդեռ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտը, ապա այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճռի համաձայն՝ Ընկերության պահանջները «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի նկատմամբ ճանաչվել են պատճառաբանված և օրինաչափ, և վճռվել է վերջինիցս բռնագանձել 1.739.685,65 ԱՄՆ դոլար հիմնական պարտքը, 231.599,41 ԱՄՆ դոլար տույժը, արբիտրաժային գանձում վճարելու ծախսերը փոխհատուցելու 20.045,14 ԱՄՆ դոլարը, ընդամենը՝ 1.991.330 ԱՄՆ դոլար և 20 ցենտ: Վճռով նշվել է նաև, որ «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի կողմից պարտքը ժամանակացույցին համապատասխան մարվելու դեպքում Ընկերության կողմից կկատարվեն զիջումներ՝ նախատեսված գումարների չափով: Նշված վճիռը կայացման օրը՝ 11.02.2011 թվականին, մտել է օրինական ուժի մեջ:

Ընկերությունը 07.09.2012 թվականին Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը ճանաչելու և Հայաստանի Հանրապետությունում կատարելու մասին միջնորդությամբ դիմել է Դատարան:

Սույն գործով Դատարանը, քննության առնելով Ընկերության միջնորդությունը, գտել է, որ այն ենթակա է բավարարման, հետևաբար ճանաչել է Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը, միևնույն ժամանակ որոշման պատճառաբանական մասում նշելով, որ Ընկերությունը ճանաչման և կատարումը թույլատրելու միջնորդությամբ դիմել է վճռի օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարի և յոթ ամիս հետո, հղում կատարելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին, որոշել է Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճռի հիման վրա տրամադրել կատարողական թերթ և թույլատրել դրա կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և ժամկետների պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^{7}-րդ հոդվածը և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները, անհիմն է համարել Ընկերության վերաքննիչ բողոքի պնդումն առ այն, որ կատարողական թերթն առաջին անգամ կատարման կարող է ներկայացվել ճանաչման մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Եզրահանգելով, որ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը կամ արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ, այլ ոչ թե Դատարանի կողմից օտարերկրյա պետության արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման և կատարման վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին կայացրած որոշումից մեկ տարվա ընթացքում, Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանը, բավարարելով Ընկերության միջնորդությունը, ճանաչել է Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը և թույլատրել դրա կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ որոշման եզրափակիչ մասում նշելով, որ այն ենթակա է կատարման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և ժամկետների պահպանմամբ, իսկ Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի որոշումը: Միևնույն ժամանակ, սակայն, թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը դատական ակտերի պատճառաբանական մասերում անդրադարձել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին, որի վերլուծության արդյունքում կատարել են օտարերկյա արբիտրաժային դատարանի կողմից կայացված դատական ակտը ճանաչման և կատարման ներկայացնելու ժամկետների վերաբերյալ՝ սույն որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներից տարբերվող եզրահանգումներ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման միջնորդության քննարկման շրջանակներում իրավասու դատարանները սահմանափակված են միայն ՀՀ միջազգային պայմանագրերով և ներպետական օրենսդրությամբ սահմանված այն պայմանների առկայության ստուգումով, որոնց դեպքում թույլատրվում է օտարերկրյա որոշման ճանաչումն ու կատարումը, և այն պայմանների բացակայության պարզմամբ, որոնք հիմք են ճանաչումը մերժելու համար, իսկ կատարողական թերթի կատարման ժամկետները, կարգն ու պայմանները չեն կարող լինել քննարկման և լուծման առարկա, քանի որ այդ հարցերը կարգավորվում են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, և կարող են քննարկման առարկա դառնալ միայն օտարերկրյա դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու, դրա կատարումը թույլատրելու վերաբերյալ որոշում կայացնելուց և այդ որոշման կատարման համար օրենքով սահմանված կարգով համապատասխան կատարո-

ղական թերթ տրամադրելուց հետո:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի փաստարկն առ այն, որ ստորադաս դատարանները, քննության առնելով կատարողական թերթը կատարման ներկայացնելու կարգն ու ժամկետները, ոչ միայն դուրս են եկել միջնորդության քննության առարկայի շրջանակներից, այլև սխալ եզրահանգման են եկել տվյալ հարցերի վերաբերյալ:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակի՝ սույն որոշման պատճառաբանություններով, անփոփոխ թողնելու, ինչպես նաև այն մասնակիորեն բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.06.2014 թվականի որոշման՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2014 թվականի որոշումը եզրափակիչ մասում «...ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և ժամկետների պահպանմամբ...» արտահայտությամբ անփոփոխ թողնելու մասը և այդ մասով այն փոփոխել՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2014 թվականի որոշման եզրափակիչ մասից հանել «...ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի և ժամկետների պահպանմամբ...» արտահայտությունը:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6199/05/13
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/6199/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աիդա Նազարյանի ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.03.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աիդա Նազարյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 29.04.2013 թվականի թիվ 1300555193 վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Աիդա Նազարյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 29.04.2013 թվականի թիվ 1300555193 վարչական տույժ նշանակելու մասին որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.10.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.03.2014 թվականի որոշմամբ Աիդա Նազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.10.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աիդա Նազարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 08-ի կոնվենցիայի 18-րդ հոդվածը, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955 որոշմամբ հաստատված ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների X բաժինը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 146-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանի կողմից բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ չի հետազոտվել որպես ապացույց ներկայացված տեսանյութը, հակառակ պարագայում Դատարանը կպարզեր, որ Աիդա Նազարյանը մուտք չի գործել խաչմերուկ, հետևաբար և չէր կարող խախտել խաչմերուկի անցման կանոնները: Ավելին, Աիդա Նազարյանը որևէ իրավախախտում թույլ չի տվել, այլ ելնելով իր և երթևեկության այլ մասնակիցների անվտանգության նկատառումներից՝ անցել է 1.12 գծանշումը (կանգ-գիծը), սակայն չի հատել 1.14.1 գծանշումը/հետիոտնային անցումը: Ավելին, եթե տեսականորեն համարվի, որ Աիդա Նազարյանի մեքենան մուտք է գործել խաչմերուկ, ապա ստորադաս դատարանների կողմից Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 08-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածի կիրառման պայմաններում վերջինիս գործողությունները կդիտվեին իրավաչափ, քանի որ Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 08-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածի համաձայն՝ խաչմերուկ դուրս եկած վարորդը, որտեղ երթևեկությունը կարգավորվում է լուսային ճանապարհային ազդանշաններով, կարող է խաչմերուկից դուրս գալ՝ չսպասելով, որ իրեն անհրաժեշտ ուղղությամբ երթևեկությունը բացվի, սակայն պայմանով, որ դա չի խանգարի ճանապարհից մյուս օգտվողների շարժմանն այն ուղղությամբ, որով երթևեկությունը բաց է: Այսինքն՝ գնահատելով իրադրությունը՝ Աիդա Նազարյանն իրավունք ուներ չշարունակելու երթևեկությունը, եթե դա կխանգարեր ճանապարհից մյուս օգտվողների շարժմանը:

Վերաքննիչ դատարանը որևէ անդրադարձ չի կատարել Աիդա Նազարյանի կողմից բարձրացված թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումներին, ինչը վերջինս պարտավոր էր անել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.03.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 29.04.2013 թվականի թիվ 1300555193 որոշման համաձայն՝ Աիդա Նազարյանը ՎԱԶ 21104-125-51 մակնիշի 060ՏՏ940 պետական համարանիշի ավտոմեքենայով 22.04.2013 թվականին ժամը 09:59-ին Երևանի Վաղարշյան/Խաչատրյան խաչմերուկի հատվածում խախտել է խաչմերուկի անցման կանոնները, որի արդյունքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տուգանվել է 5.000 ՀՀ դրամի չափով **(գ.թ. 5):**

2) Վարչական իրավախախտման մասին տեսագրության համաձայն՝ ՎԱԶ 21104-125-51 մակնիշի 060ՏՏ940 պետական համարանիշի ավտոմեքենայի վարորդ Աիդա Նազարյանը հատել է կանգ-գիծը, սակայն չի հատել հետիոտնային անցումը **(գ.թ. 20):**

3) Դատարանի 29.04.2013 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ Ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ Աիդա Նազարյանի կողմից թույլ է տրվել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 93-րդ կետի խախտում **(գ.թ. 25):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը, բացահայտելով «խաչմերուկ» հասկացությունը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք խաչմերուկից առաջ գտնվող «Կանգ-գիծ» գծանշումը հատելու, սակայն (հետիոտնային անցումը չհատելու) խաչմերուկ մուտք չգործելու, այսինքն՝ փվյալ ողղությամբ խաչմերուկի սահմանը չհատելու դեպքում կարող է առաջանալ վարչական պատասխանատվություն՝ խաչմերուկների անցման կանոնների խախտման համար.

- արդյո՞ք երթևեկության մասնակիցը կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել խաչմերուկի անցման կանոնների խախտման համար, եթե խախտումը հայտնաբերվել է տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով, և դրանցով արձանագրված իրավիճակների համար ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված է իրավաչափ վարքագիծ ընտրելու հնարավորություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից խաչմերուկների անցման կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված իրավախախտման (զանցանքի) օբյեկտիվ կողմը դրսևորվում է խաչմերուկների անցման կանոնները խախտելով:

ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններ) «Խաչմերուկների անցումը» վերտառությամբ X բաժինը սահմանում է խաչմերուկ մուտք գործելուց մինչև խաչմերուկից դուրս գալը երթևեկության ընթացքում տրանսպորտային միջոցի վարորդի վարքագծի կանոնները:

Վերոգրյալից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման համար անձին պատասխանատվության ենթարկելու համար էական նշանակություն ունի խաչմերուկի սահմանների որոշումը և խաչմերուկի տարածքի բնութագրումը:

«Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 08-ի կոնվենցիայի (վավերացրել է ՀՀ Ազգային ժողովի 25.10.2004 թվականի թիվ Ն-129-3 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 08.02.2006 թվականին) 1-ին հոդվածի «ը» կետի համաձայն՝ խաչմերուկը նույն մակարդակի վրա ճանապարհների ցանկացած հատումն է, նրանց միացումը կամ ճյուղավորումը (ներառյալ՝ այդպիսի հատումների, միացումների կամ ճյուղավորումների տարածքը):

Խաչմերուկ հասկացության ավելի լայն սահմանումը տրված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որի համաձայն՝ խաչմերուկը միևնույն մակարդակի վրա ճանապարհների հատման, միաց-

ման կամ անջատման տարածքն է, ներառյալ՝ այդպիսի հատումով, միացումով, անջատումով առաջացած տարածքը, որը պայմանականորեն սահմանազատված է այդ ճանապարհների երթևեկելի մասերի հատման, միացման կամ անջատման տիրույթում առկա կորացումների համապատասխանաբար հակադիր սկզբնակետերը միացնող երևակայական գծերով: Մերձակա տարածքից ելքը ճանապարհի խաչմերուկ չի համարվում:

«Խաչմերուկ» հասկացության վերը նշված սահմանումներից հետևում է, որ խաչմերուկը միևնույն մակարդակի վրա ճանապարհների հատման, միացման կամ անջատման տարածքն է, իսկ դրա սահմանները որոշվում են այն երևակայական գծերով, որոնցով միանում են երթևեկելի մասերի կորացումների հակադիր սկզբնակետերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ կանոնավոր խաչմերուկում սովորաբար մայթերն ընդհատվում են, և մայթերի ընդհատման հատվածում, որպես կանոն, ճանապարհը կորացվում է երթևեկելի մասն ընդարձակելու և ավտոմեքենաների մանևրը հեշտացնելու համար: Խաչմերուկի բնութագրում օգտագործվող հակադիր մայթերի այդ կորացումով էլ, հաշվի առնելով խաչմերուկի կենտրոնից ընկած ամենամեծ հեռավորությունը, որոշվում է խաչմերուկի սահմանը (տես նկ.1): Սակայն որոշ անկանոն խաչմերուկներում (օրինակ T-աձև, Y-աձև) հնարավոր է մայթեզրի ընդհատման և հետևաբար նաև՝ կորացման բացակայություն: Այս դեպքում խաչմերուկի սահմանը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է որոշել՝ հաշվի առնելով ճանապարհի երթևեկելի մասի հատման սահմանները (տես նկ. 2):



Նկ.1: Խաչմերուկի սահմանների որոշումը



Նկ. 2:Անկանոն խաչմերուկի սահմանների որոշումը

ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների՝ <<Խաչմերուկների անցումը>> վերտառությամբ X բաժնում տեղ գտած 93-րդ կետի համաձայն՝ լուսացույցի թույլատրող ազդանշանի դեպքում խաչմերուկ մուտք գործած վարորդը պետք է այն ազատի նախընտրած ուղղությամբ՝ անկախ ելքի լուսացույցի ազդանշանից, սակայն եթե խաչմերուկում տրանսպորտային միջոցի ընթացքի ուղղությամբ տեղադրված լուսացույցներից առաջ առկա է 1.12՝ «Կանգ-գիծ» գծանշումը (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշաններ), նա պետք է ղեկավարվի յուրաքանչյուր լուսացույցի ազդանշաններով:

ՀՀ ճանապարհային երևևեկության կանոնների Ձև 2 «Ճանապարհային գծանշումներ» բաժնի համաձայն՝ 1.12 «կանգ-գիծ» հորիզոնական գծանշումըցույց է տալիս այն տեղը, որտեղ վարորդը պետք է կանգ առնի լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի կամ 2.5՝ «Երթևեկությունն առանց կանգառի արգելված է» նշանի առկայության դեպքում, ինչպես նաև երկաթուղային գծանցի առջև, երբ գծանցով երթևեկությունն արգելված է:

ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝

1) հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար.

2) երկաթուղային գծանցից առաջ՝ կանոնների 111-րդ կետի պահանջներին համապատասխան.

3) այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

«Խաչմերուկ» հասկացության և խաչմերուկի սահմանների վերաբերյալ վերը նշված եզրահանգումների լույսի ներքո անդրադառնալով «Կանգ-գիծ» գծանշման հատման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Կանգ-գիծ» գծանշման հատումն ինքնին չի նշանակում, որ տրանսպորտային միջոցը մուտք է գործել խաչմերուկ, քանի դեռ վերջինս չի հատել խաչմերուկի սահմանը: Այսինքն՝ միայն «Կանգ-գիծ» գծանշման հատումը դեռևս չի կարող համարվել խաչմերուկների անցման կանոնների խախտում, քանի որ խաչմերուկի անցման կանոնների խախտումը դրսևորվում է խաչմերուկ մուտք գործելուց՝ խաչմերուկի սահմանը հատելուց մինչև խաչմերուկի սահմաններից դուրս գալը՝ երթևեկության ընթացքում տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների X բաժնով սահմանված կանոնները խախտելով:

Ինչ վերաբերում է ինքնին «Կանգ-գիծ» գծանշման հատմանը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, եթե տրանսպորտային միջոցը, հատելով «Կանգ-գիծ» գծանշումը, դեռևս մուտք չի գործել խաչմերուկ, ապա ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 18-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ պայմանավորված կարող է վրա հասնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվությունը, որով սահմանված իրավախախտման օբյեկտիվ կողմն էականորեն տարբերվում է նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ խաչմերուկների անցման կանոնների խախտման զանցանքի օբյեկտիվ կողմից:

«Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 08-ի կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **խաչմերուկին մոտենալիս վարորդը պետք է առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերի՝ ելնելով տեղի պայմաններից:** Մասնավորապես՝ վարորդը փոխադրամիջոցը պետք է վարի այնպիսի արագությամբ, որ հնարավորություն ունենա կանգնելու և բաց թողնելու անցման առաջնահերթության իրավունք ունեցող փոխադրամիջոցները: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **նույնիսկ եթե լուսային ազդանշաններն անցնելը թույլատրում են, վարորդը չպետք է դուրս գա խաչմերուկ, եթե այնպիսի խցանում է առաջացել**, որ նա հավանաբար ստիպված կլինի կանգ առնել՝ դրանով իսկ խոչընդոտներ ստեղծելով լայնակի ուղղությամբ շարժվողների համար: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ խաչմերուկ դուրս եկած վարորդը, որտեղ երթևեկությունը կարգավորվում է լուսայինճանապարհային ազդանշաններով, կարող է խաչմերուկից դուրս գալ՝ չսպասելով, որ իրեն անհրաժեշտ ուղղությամբ երթևեկությունը բացվի, **սակայն պայմանով, որ դա չի խանգարի ճանապարհից մյուս օգտվողների շարժմանն այն ուղղությամբ, որով երթևեկությունը բաց է:**

Վճռաբեկ դատարանը, վերը նշված կոնվենցիոն դրույթները համադրելով ներպետական օրենսդրության վկայակոչված իրավանորմերի հետ, գտնում է, որ 1.12 «Կանգ-գիծ» ճանապարհային հորիզոնական գծանշման պահանջի խախտումը, **եթե տրանսպորտային միջոցը մուտք է գործել խաչմերուկ**, ինքնըստինքյան չի կարող հիմք հանդիսանալ տրանսպորտային միջոցի վարորդին խաչմերուկի անցման կանոնների **(ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 93-րդ կետի)** խախտում վերագրելու համար: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ խաչմերուկ մուտք գործած տրանսպորտային միջոցի վարորդի համար սահմանելով խաչմերուկը ազատելու պարտականություն՝ օրենսդիրը նպատակ է ունեցել ապահովելու տրանսպորտային բարձր

թողունակություն և բացառելու տրանսպորտային խցանումները: Միևնույն ժամանակ, սակայն, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության ընթացքում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ տրանսպորտային միջոցի վարորդը, ելնելով այդ պահին երթևեկության ձևավորված դինամիկ իրավիճակից, հարկադրված լինի ընտրել ճանապարհային երթևեկությունը կանոնակարգող իրավական ակտերով նախատեսված այլ վարքագիծ, որն ուղղված կլինի երթեկության այլ մասնակիցների (այդ թվում նաև՝ հետիոտների) անվտանգության ապահովմանը և վթարային իրավիճակներից խուսափելուն, որոնք կարող են առաջանալ ինչպես խաչմերուկում, այնպես էլ խաչմերուկ չհանդիսացող ընդհանուր օգտագործման ճանապարհների հատման կամ ձյուղավորման դեպքերում: Ի վերջո, ճանապարհային երթևեկությունը կանոնակարգող իրավական ակտերի նպատակը հենց ճանապարհային երթևեկության մասնակիցների անվտանգության ապահովումն է, ճանապարհատրանսպորտային պատահարների նախականխումը, դրանց ծանրության և հետևանքների նվազեցումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքով և (կամ) այլ իրավական ակտերով նախատեսված է երթևեկության մասնակցի հնարավոր այլ իրավաչափ վարքագիծ (օրինակ՝ լուսացույցի թույլատրված լույսի առկայությամբ տրանսպորտային միջոցի վարորդը մուտք է գործել խաչմերուկ, սակայն հարկադրված կանգ է առել երթևեկությունը հանկարծակի խոչընդոտող հանգամանքի պատճառով), ապա վարչական պատասխանատվության հարցը լուծելիս հարկ է պարզել՝ արդյո՞ք ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված այլ կանոնով ղեկավարվելիս տրանսպորտային միջոցի վարորդը նպատակ չի հետապնդել խուսափելու իրական վթարային իրավիճակ ստեղծելուց կամ երթևեկության այլ մասնակիցներին սպառնացող վտանգից զերծ մնալուն:

«Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ***ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում:*** Իրավախախտման հատկանիշները պարզվում են 7-օրյա ժամկետում:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը **որևէ կասկած չի հարուցում**: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը:

«Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհա-

յին երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը:**

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրավախախտման հատկանիշների պարզմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված իրավաչափ վարքագիծ ընտրելու վարորդի հնարավորությունը, տրանսպորտային միջոցի վարորդին վարչական պատասխանատվության ենթարկելու համար **անհրաժեշտ պայմանի՝ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելու մասին խոսք լինել չի կարող, եթե** իրավախախտումը հիմնավորող ապացույցը (տեսանյութը կամ լուսանկարը) **հնարավորություն չի տալիս հաշվի առնել** դրանում արձանագրված իրավիճակում գտնվող երթևեկության մյուս մասնակիցների՝ տրանսպորտային միջոցների վարորդների և հետիոտների դրսևորած վարքագիծը, քանի որ առանց ստեղծված իրավիճակում երթևեկության մյուս մասնակիցների վարքագիծը հաշվի առնելու՝ հնարավոր չէ պարզել, արդյոք վարորդի դրսևորած արարքը պայմանավորված չի եղել երթևեկության անվտանգությունն ապահովելու, վթարային իրավիճակը նախականխելու անհրաժեշտությամբ, այսինքն՝ արդյոք վարորդը տվյալ դեպքում չի ընտրել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններում սահմանվածից տարբերվող՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման մասին իրավական ակտերով նախատեսված այլ իրավաչափ վարքագիծ:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 29.04.2013 թվականի թիվ 300555193 որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով Արիդա Նազարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Վարչական իրավախախտման մասին տեսագրության համաձայն՝ ՎԱԶ 21104-125-51 մակնիշի 060S940 պետական համարանիշի ավտոմեքենայի վարորդ Արիդա Նազարյանը հատել է կանգ-գիծը գծանշումը, սակայն չի հատել հետիոտնային անցումը: Դատաքննության ընթացքում Ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ Արիդա Նազարյանի կողմից թույլ է տրվել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 93-րդ կետի խախտում:

Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ վարչական իրավախախտման մասին տեսագրության համաձայն՝ Արիդա Նազարյանը **խաչմերուկ մուտք գործելուց հետո** խաչմերուկում տրանսպորտային միջոցի ընթացքի ուղղությամբ տեղադրված լուսացույցից առաջ առկա 1.12՝ «Կանգ-գիծ» գծանշման և լուսացույցի թույլատրող ազդանշանի առկայության պայմաններում չի փորձել ազատել խաչմերուկը: Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ հայցվորը խախտել է ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 93-րդ կետի պահանջները, հետևաբար Ծառայությունը, համադրելով տեսանյութում ամրագրված արարքի հատկանիշները Վարչական իրավախատումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշների հետ, իրավացիորեն կայացրել է վիճարկվող որոշումը՝ հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի եզրահանգումները, մերժել է Արիդա Նազարյանի վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ բացակայում են վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը:

Մինչդեռ վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը չի պարզել խաչմերուկի սահմանները, ինչը հնարավորություն կտար հաստատելու կամ հերքելու Աիդա Նազարյանի կողմից խաչմերուկ մուտք գործած լինելու և դրանով պայմանավորված՝ խաչմերուկի անցման կանոնները խախտելու հանգամանքը, ինչպես նաև չի պարզել՝ արդյո՞ք տեսանյութը հնարավորություն է տալիս հաշվի առնելու ստեղծված իրավիճակում երթևեկության բոլոր մասնակիցների դրսևորած վարքագիծը կամ այլ կերպ ասած՝ արդյո՞ք տվյալ դեպքում առկա է Աիդա Նազարյանի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելու հանգամանքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի փաստերը վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո պարզելու և գնահատելու համար գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.03.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ :

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2602/05/14
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2602/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.03.2015 թվականի որոշման դեմ, ըստ Սամվել Ղուկեյանի հայցի ընդդեմ Ծառայության, երրորդ անձ <<Երևանի էլեկտրատրանսպորտ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ծառայության 06.05.2014 թվականի թիվ ԱԷ 637662 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Ղուկեյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 06.05.2014 թվականի թիվ ԱԷ 637662 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 31.10.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝Վերաքննիչ դատարան) 24.03.2015 թվականի որոշմամբ Սամվել Ղուկեյանի և Ընկերության վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 31.10.2014 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ օրենսդիրը հստակ տարանջատել է տրանսպորտային միջոցի համար գործող ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար պատասխանատվությունն առանց գործող ԱՊՊԱ պայմանագրի տրանսպորտային միջոցը վարելու համար նախատեսված պատասխանատվությունից: ՀՀ օրենսդրությունը հստակ սահմանում է, որ անկախ այն հանգամանքից՝ վարորդը տրանսպորտային միջոցի սեփականատեր է, կատարում է իր աշխատանքային պարտականությունները, թե՝ ոչ, տրանսպորտային միջոցը վարելու համար գործող ԱՊՊԱ պայմանագիր չունենալը հանգեցնում է վարչական պատասխանատվության, հետևաբար Սամվել Ղուկեյանը բոլոր դեպքերում պետք է գիտակցեր, որ իր գործողությունների արդյունքում ենթարկվելու է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.03.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 31.10.2014 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, քանի որ Ծառայությունն իրավասու չէր կազմել թիվ ԱԷ 637662 որոշումը, քանի որ Ընկերությունը վարչական ակտը կայացնելու պահին կատարել է ակտիվ գործողություններ իրավախախտում թույլ չտալու համար, սակայն ապահովագրական ընկերության անգործության պատճառով պայմանագիր չի կնքվել: Ինչ վերաբերում է Սամվել Ղուկեյանի գործողություններին, ապա վերջինս պարտավոր չէր ինքնուրույն ԱՊՊԱ պայմանագիր կնքելու, հետևաբար և բացակայում է նրա մեղքը կատարված իրավախախտման մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության՝ 30.01.2014 թվականին <<Ռոսգոսստրախ Արմենիա>> ԱՓԲԸ-ին ուղղված թիվ 041 գրության համաձայն՝ վերջինս խնդրել է ապահովագրել Ընկերությունում առկա 68 տրոլեյբուսների օգտագործումից բխող պատասխանատվությունը՝ բոլոր 62 վարորդներին բոլոր տրոլեյբուսների վրա կցելով որպես լիազորված տիրապետողներ **(գ.թ. 14):**

2. Ընկերության՝ 10.02.2014 թվականին ՀՀ <<ԻԱՄ>> ՀՀ ավտոապահովագրողների բյուրո գործադիր տնօրենին ուղղված թիվ 057 գրության համաձայն՝ <<Ռոսգոսստրախ Արմենիա>> ԱՓԲԸ-ն Ընկերությանն անհայտ պատճառներով չի կատարել տրոլեյբուսների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն **(գ.թ. 13):**

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ Ծառայության՝ 06.05.2014 թվականի թիվ ԱԷ 637662 որոշման համաձայն՝ Ընկերության տրոլեյբուսի վարորդ Սամվել Ղուկեյանը տրանսպորտային միջոցը վարելու համար գործող ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ենթարկվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժի **(գ.թ. 7-8):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդու-

նելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ առանց տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոց վարելու համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իր աշխատանքային պարտականությունները կատարող սուբյեկտը ենթակա է վարչական պատասխանատվության, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարում է առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (վարձակալի) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի քան տասն օր, առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տասն օրվա համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

յուրաքանչյուր անձ պետք է մշտապես ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի (բացառությամբ նույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված ավտոտրանսպորտային միջոցների) համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր: Բացառությամբ նույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքի՝ արգելվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե դրա համար առկա չէ այն վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր:

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> ՀՀ օրենքում օրենսդիրը հստակ և ոչ երկիմաստ ձևով սահմանել է, որ բացի օրենքով սահմանված բացառություններից՝ յուրաքանչյուր ոք սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ ֆինանսական վարձա-

կալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար պարտավոր է մշտապես ունենալ ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր: Այսպիսով, օրենսդիրը Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարձակալների համար սահմանել է պարտականություն՝ մշտապես ունենալ ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր, միաժամանակ օրենսդիրը վերը նշված պարտականությունը չկատարելու համար ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարձակալների համար նախատեսել է անբարենպաստ իրավական հետևանքներ, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանելով, որ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի քան տասն օր՝ առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տասն օրվա համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> ՀՀ օրենքում օրենսդիրը նախատեսել է նաև արգելող նորմ՝ սահմանելով, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով արգելվում է ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե առկա չէ այն վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր: Այսպիսով, օրենսդիրն արգելել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարել ավտոտրանսպորտային միջոցներ, եթե առկա չէ դրանք վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր, միաժամանակ օրենսդիրը վերը նշված արգելքը չպահպանելու համար նախատեսել է անբարենպաստ իրավական հետևանքներ, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանելով, որ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նախատեսել է տարբեր զանցակազմեր: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասում նախատեսված զանցակազմերի օբյեկտը և սուբյեկտիվ կողմը նույնական են: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասում նախատեսված զանցակազմերի օբյեկտը՝ հասարակական հարաբերությունները, որոնք ոտնահարվում են իրավախախտի կողմից՝ ճանապարհային երթևեկության ոլորտում առաջացող հասարակական հարաբերություններն են, իսկ զանցակազմերի սուբյեկտիվ կողմը՝ իրավախախտի հոգեբանական վերաբերմունքը հակաիրավական արարքի նկատմամբ, կարող է արտահայտվել մեղքի երկու ձևով էլ, ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության ձևերով: Սակայն միաժամանակ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասում ամրագրված զանցակազմերի օբյեկտիվ կողմը և սուբյեկտները տարբեր են: Եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը՝ ոչ իրավաչափ արարքի արտաքին կողմը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարձակալի ավելի քան տասն օր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չու-

նենալն է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն է՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու: Ինչ վերաբերում է վերը նշված զանցակազմերի սուբյեկտներին, ապա եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի սուբյեկտը՝ հակաիրավական, մեղավոր արարքը կատարած անձը տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ վարձակալն է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի սուբյեկտը՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոցը վարող անձն է:

Վերոնշյալ վերլուծությունից հետևում է, որ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն արգելվում է և տվյալ արգելքը խախտած սուբյեկտի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն: Ընդ որում, պատասխանատվությունը վրա է հասնում տրանսպորտային միջոցը վարելու համար, հետևաբար, ԱՊՊԱ պայմանագիրը կնքված չլինելու պատճառները, վարորդի՝ տվյալ տրանսպորտային միջոցի սեփականատերը չլինելու հանգամանքը, ինչպես նաև վարորդի կողմից աշխատանքային պարտականությունների կատարումը չեն կարող դիտվել պատասխանատվությունը բացառող հանգամանքներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 30.01.2014 թվականին <<Ռոսգոսստրախ Արմենիա>> ԱՓԲԸ-ին ուղղված թիվ 041 գրությունով խնդրել է ապահովագրել Ընկերությունում առկա 68 տրոլեյբուսների օգտագործումից բխող պատասխանատվությունը՝ բոլոր 62 վարորդներին բոլոր տրոլեյբուսների վրա կցելով որպես լիազորված տիրապետողներ: Այնուհետև Ընկերությունը 10.02.2014 թվականին ՀՀ <<ԻԱՄ>> ՀՀ ավտոապահովագրողների բյուրոյի գործադիր տնօրենին ուղղված թիվ 057 գրությունով հայտնել է, որ <<Ռոսգոսստրախ Արմենիա>> ԱՓԲԸ-ն իրեն անհայտ պատճառներով չի կատարել տրոլեյբուսների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն**:** Վարչական իրավախախտման վերաբերյալ Ծառայության 06.05.2014 թվականի թիվ ԱԷ 637662 որոշման համաձայն՝ Ընկերության տրոլեյբուսի վարորդ Սամվել Ղուկեյանը տրանսպորտային միջոցը վարելու համար առանց գործող ԱՊՊԱ պայմանագրի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ենթարկվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժի:

Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ Սամվել Ղուկեյանի կողմից առանց տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոցը վարելու փաստը չվիճարկելու պայմաններում ապացուցված է համարվում վերջինիս կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման կատարումը: Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ Սամվել Ղուկեյանը պատասխանատվության է ենթարկվել առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոցը վարելու համար, որի վարումն արգելված է <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով, որպիսի հանգամանքը հաստատվել է հայցվորի կողմից հայցադիմումին կից ներկայացված, Ընկերության կողմից << Ռոսգոսստրախ Արմենիա>> ԱՓԲԸ-ին ուղղված թիվ 041 և ՀՀ <<ԻԱՄ>> ՀՀ ավտոապահովագրողների բյուրոյի գործադիր տնօրենին ուղղված թիվ 057 գրություններով:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Դատարանի վճիռը, հայցը բա-

վարարել է՝ պատճառաբանելով, որ <<հայցվորի կողմից տրանսպորտային միջոց վարելը համդիսանում է վերջինիս աշխատանքային պարտականությունը, ով, պարզապես համդիսանալով Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի վարորդ, չէր կարող հրաժարվել իր աշխատանքային պարտականությունները կատարելուց>>:

Մինչդեռ սույն գործի փաստերը հաշվի առնելով ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սամվել Ղուկեյանը, կանխատեսելով իր գործողությունների վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, ցուցաբերելով անգործություն և առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու, վարել է տրանսպորտային միջոցը, այդ կերպ ոտնձգություն է կատարել ճանապարհային երթևեկության ոլորտում առաջացող հարաբերությունների նկատմամբ, այսինքն՝ կատարել է արարք, որի համար սուբյեկտը ենթակա է վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության արդյունքում արդեն իսկ արձանագրել է, որ նշված հոդվածի զանցակազմի օբյեկտիվ կողմը Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն է՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու, այսինքն՝ պատասխանատվությունը վրա է հասնում տրանսպորտային միջոցը վարելու համար, հետևաբար ԱՊՊԱ պայմանագիրը կնքված չլինելու պատճառները, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարումը չեն կարող դիտվել պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Սամվել Ղուկեյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.03.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 31.10.2014 թվականի վճռին:

2. Սամվել Ղուկեյանից հօգուտ ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1091/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/1091/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արման Մարտիրոսյանի ընդդեմ Ծառայության՝ 24.01.2014 թվականի թիվ 1401324293 և 21.02.2014 թվականի թիվ 17-4-2339 որոշումները վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արման Մարտիրոսյանը պահանջել է վերացնել Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 և 21.02.2014 թվականի թիվ 17-4-2339 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 24.11.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.04.2015 թվականի որոշմամբ Արման Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.11.2014 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Տեսանկարահանող կամ լուսան-

կարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածները, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վարչական վարույթը սույն գործերով իրականացվում է 2 փուլով՝ իրավախախտման հատկանիշներ պարզելու և որոշում կայացնելու՝ բացառելով վարչարարության ընթացիկ փուլը, ուստի վարչական մարմնին մնում էր միայն տեսանյութի ուսումնասիրման արդյունքում հաստատված համարել տեսանյութի առկա իրավիճակը ՃԵԿ-ի որևէ կանոնի խախտման հետ համապատասխանության հարցը, իսկ հարկադրված կանգառի բացակայության հանգամանքի մասին ներքին համոզմունքը և դրա բացակայությունը հաստատված է համարվել հարկադրված կանգառ կատարելու համար ՃԵԿ-ի կանոններով սահմանված պահանջները չկատարելու հիմքով, ուստի հայցվորի կողմից կանգառ կատարելու կանոնը խախտելու փաստը կասկած չի հարուցել:

Այս համատեքստում անհիմն են Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունները, քանի որ հայցվորի կողմից հարկադրված կանգառի համար սահմանված պահանջների չպահպանելը և այն փաստը, որ սույն գործերով բացակայում է վարույթի ընթացիկ փուլը, հայցվորի պնդումներն՝ իր կանգառը հարկադրված լինելու հանգամանքի մասին, այն դարձնում են իր համար բարենպաստ փաստական հանգամանք, որի ապացուցման բեռը կրում է ֆիզիկական անձը, ուստի հայցվորը զրկված չէր սահմանված կարգով և ժամկետներում վարչական մարմնին ապացուցելու կանգառ-կայանման հարկադրված լինելու հանգամանքը:

Միաժամանակ հայցվորը չի պահպանել հարկադրված կանգառ կատարելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ուստի վարչական մարմնի կողմից որոշումները կայացնելիս կասկած չի հարուցվել, որ կանգառը կատարված է կանգառն արգելված վայրում և ոչ հարկադրված, ավելին, վարչական մարմինը դատարանին է ներկայացրել և ապացուցել իր կայացրած որոշման համար հիմք հանդիսացած բոլոր փաստական և իրավական հիմքերը, որի շրջանակներում հայցվորի վատառողջ լինելու հանգամանքն ընկած չի եղել վարչական ակտի կայացման հիմքում, իսկ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են, քանի որ որևէ անդրադարձ չի կատարվել հարկադրված կանգառ հասկացությանը և դրա արդյունքում առկա օրենսդրության հիմքով թե՛ վարչական վարույթի, և թե՛ դատաքննության ժամանակ ապացուցման բեռի կրման իրավական վերլուծությանը: Հարկ է նշել նաև, որ հայցվորը և՛ դատաքննությամբ, և՛ վերաքննիչ բողոքի շրջանակներում ևս որևէ ծանրակշիռ ապացույցով չի ապացուցել իր կողմից հարկադրված կանգառ-կայանում կատարած լինելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.04.2015 թվականի որոշումը և «կայացնել նոր որոշում»:

<u>3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը</u>

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 որոշման համաձայն՝ Արման Սարտիրոսյանը «VOLKSWAGEN» մակնիշի 17 US 338 պետական համարանիշի ավտոմեքենայով 17.01.2014 թվականին՝ ժամը 11:41-ին, Երևանի Գրիգոր Լուսավորիչ- Բեյրութ խաչմերուկի հատվածում խախտել է կանգառ կատարելու կանոնները, որի արդյունքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն, տուգանվել է 5.000 ՀՀ դրամի չափով **(գ.թ. 8-10):**

2) Ծառայության պետի 21.02.2014 թվականի թիվ 17-4-2339 որոշման համաձայն՝ Արման Մարտիրոսյանի կողմից Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 որոշման դեմ վերադասության կարգով ներկայացված բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 որոշումը՝ անփոփոխ **(գ.թ. 11):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի, «Տեսանկարահանող կամ լուսանկարող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում ***տեսանյութը կամ լուսանկարը*** *բավարար են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստը հաստատված համարելու և նույն հոդվածի սանկցիայի կիրառմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու համար:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, **եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ,** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վերոգրյալ իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու համար վարչական պատասխանատվություն նախատեսել է միայն այն դեպքերում, երբ կանգառի և (կամ) կայանման կանոնների խախտումով կանգառ կամ կայանում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված չէ՝

1. տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հետ, կամ
2. վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ:

Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման դեպքի (զանցանքի) առկայության համար անհրաժեշտ է տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու, ինչպես նաև կանգառի և (կամ) կայանման կանոնի խախտելը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված չլինելու փաստերի միաժամանակյա առկայությունը: Այսինքն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելու փաստի առկայության պարզումն ինքնին բավարար չէ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված սանկցիան կիրառելու համար, այլ նշված հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը

քննող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) հիշյալ փաստը պարզելու հետ միաժամանակ պետք է պարզի նաև՝ արդյո՞ք տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ և դրանից հետո միայն գործով կայացնի համապատասխան որոշում:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, կամ լուսանկարահանող սարքերով (այսուհետ՝ տեխնիկական միջոցներ) հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերություններն ուղղակիորեն չեն կարգավորվում նույն օրենքի դրույթներով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցն իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, **երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում**: Իրավախախտման հատկանիշները պարզվում են 7-օրյա ժամկետում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմերի վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, **որը որևէ կասկած չի հարուցում**: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը *(տե՛ս, Միդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանու-*

թյուն» ծառայության թիվ ՎԴ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստի ապացուցման հիմնախնդրին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչական վարույթի իրականացման գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման փաստը համարվում է հաստատված, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկածչհիարուցում: Նշված հանգամանքով պայմանավորված՝ օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման հատկանիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլերը: Նշված վարչական վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկնման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավախախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգամանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը:

Մինչդեռ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում, ինչն անհրաժեշտություն է առաջացնում պարզելու կանգառ կատարելու անհրաժեշտությունը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված լինելու հանգամանքը: Օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը զրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124–րդ հոդվածի 21–րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքը կարող է խախտում որակվել միայն այն դեպքում, երբ վարչարարության արդյունքում կբացառվեն նույն իրավանորմում թվարկված՝ կանգառի անհրաժեշտությունը տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակով կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակով պայմանավորված լինելու հանգամանքները: Ընդ որում, նշված հանգամանքները ենթակա են պարզման մինչև վարչական մարմնի կողմից վարչական պատասխանատվության մասին որոշում կայացնելը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքերի վերաբերյալ «Տեսանկարահանողկամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող

վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում այդ դեպքերով վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով, իսկ այդ օրենքով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Վարչական վարույթի ընթացիկ փուլը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխով:

Հիշատակված գլխում ներառված 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, այն է՝ գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու վարչական մարմնի պարտականությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը երաշխավորում է վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը: Նշված իրավանորմի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ հոդվածով նախատեսված պարտականությունները վարույթի մասնակցի և վարչական մարմնի կողմից կարող են կատարվել միայն այն դեպ-

քում, երբ վարչարարությունն իրականացվի ընթացիկ փուլով, մինչդեռ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթում ընթացիկ փուլը բացակայում է, ինչն օբյեկտիվորեն բացառում է կանգառի և (կամ) կայանման կանոնի խախտելը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված չլինելու փաստերի միաժամանակյա առկայությունը վարչական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից պարզելու հնարավորությունը:

Վերոգրյալ վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման փաստը կարող է հաստատվել կամ հերքվել բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացիկ փուլում համապատասխան միջոցներ ձեռնարկելով, քանի որ միայն այդ փուլում է հնարավոր ձեռք բերել տեղեկություններ և ապացույցներ կանգառ կատարելու անհրաժեշտության հանգամանքների, մասնավորապես՝ կանգառի կանոնները խախտելը տրանսպորտային միջոցի տեխնիկական անսարքության կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ կապված չլինելու վերաբերյալ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 որոշման համաձայն՝ Արման Սարտիրոսյանը «VOLKSWAGEN» մակնիշի 17 US 338 պետական համարանիշի ավտոմեքենայով 17.01.2014 թվականին՝ ժամը 11:41-ին, Երևանի Գրիգոր Լուսավորիչ-Բեյրութ խաչմերուկի հատվածում խախտել է կանգառ կատարելու կանոնները, որի արդյունքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տուգանվել է 5.000 ՀՀ դրամի չափով: Ծառայության պետի 21.02.2014 թվականի որոշմամբ Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 որոշման դեմ Արման Սարտիրոսյանի կողմից վերադասության կարգով ներկայացված բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ Ծառայության 24.01.2014 թվականի թիվ 1401324293 որոշումը՝ անփոփոխ:

Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ լազերային կրիչի վրա ներկայացված տեսագրությամբ հիմնավորվել է Արման Սարտիրոսյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված իրավախախտում թույլ տալու փաստը: Դատարանն արձանագրել է, որ հայցվորի կողմից չի ներկայացվել կանգառ կատարելու պահին առողջության անկում ունենալու փաստը հիմնավորող որևէ ապացույց: Միաժամանակ հաշվի առնելով, որ հայցվորը հայցադիմումում նշել է, որ կանգառ է կատարել 15-20 րոպե ժամանակահատվածով, իսկ այնուհետև նշել է, որ առողջության անկումը տևել է 1-2 ժամ, Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից հայտնած տեղեկությունները հակասական են:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և բավարարելով հայցը, պատճառաբանել է, որ միայն տեսանյութում ամրագրված արարքի հատկանիշների ուսումնասիրությունը տվյալ դեպքով բավարար չէր հայցվորի առողջական վիճակի և/կամ տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի վերաբերյալ ողջամիտ կասկածները փարատելու համար: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստն այն մասին՝ արդյոք տրանսպորտային միջոցի վարորդի կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը կապված է տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ, թե՝ ոչ, որպիսի փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալները կարող էին բացահայտվել և հիմնավորվել բացառապես տվյալ անձի միջոցով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ

ՀՀ օրենսգրքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարույթ իրականացնելով, և վերջինիս վարչական պատասխանատվության է ենթարկել առանց նշված՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքը պարզելու:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը, արձանագրելով, որ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնների խախտման փաստի ապացուցման պարտականությունը կրում է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը, իսկ կանգառ կատարելու անհրաժեշտությունը տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ պայմանավորված լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է այդ հիմքով առարկություն ներկայացնող կողմը, քանի որ այդ փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալները կարող են բացահայտվել և հիմնավորվել բացառապես տվյալ անձի միջոցով, հաշվի չի առել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը մինչև գործով որոշում կայացնելը ենթադրյալ իրավախախտում կատարած անձին՝ Արման Սարտիրոսյանին, հնարավորություն չի ընձեռել իր դիրքորոշումն արտահայտելու, առողջական վիճակի հետ կապված ապացույցներ ներկայացնելու:

Վերը նշված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է, քանի որ Ծառայությունն Արման Սարտիրոսյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու համար չի պարզել՝ արդյոք վերջինիս կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը կապված է եղել տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի, կամ ուղևորի առողջական վիճակի հետ, թե՝ ոչ: Ավելին, Ծառայությունն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում տեսանյութը հնարավորություն չի տալիս հաշվի առնելու ստեղծված իրավիճակում գտնվող սուբյեկտի վարքագիծը կամ այլ կերպ ասած՝ արդյոք տվյալ դեպքում առկա է Արման Սարտիրոսյանի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի փաստարկին՝ հայցվորի կողմից հարկադրված կանգառ կատարելու համար սահմանված պահանջները չպահպանելու վերաբերյալ, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն անհիմն է և չի բխում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի կարգավորումից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկադրված կանգառ» հասկացության սահմանումը տրված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որի համաձայն՝ հարկադրված կանգառը տրանսպորտային միջոցի անսարքության, վարորդի (ուղևորի) ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակով և (կամ) բեռի փոխադրմամբ պայմանավորված՝ վտանգի կամ ճանապարհին ի հայտ եկած այլ խոչընդոտի պատճառով տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելն է: Կանգառի համար օրենսդրությամբ սահմանված կանոնները չեն տարածվում հարկադրված կանգառի դեպքերի վրա:

ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնների 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում:

«Հարկադրված կանգառ» հասկացության վերը նշված սահմանումներից հետևում է, որ հարկադրված կանգառը տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելն է՝ պայմանավորված տրանսպորտային միջոցի անսարքության, վարորդի (ուղևորի) ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակով և (կամ) բեռի փոխադրման ժամանակ առաջացած վտանգի կամ խոչընդոտի պատճառով: Ընդ որում, կանգառի համար օրենսդրությամբ սահմանված կանոնները չեն տարածվում հարկադրված կանգառի դեպքերի վրա, իսկ

ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված է արգելված վայրերում հարկադրված կանգառի դեպքում տրանսպորտային միջոցի վթարային լուսային ազդանշանը միացրած լինելու պահանջ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադրված կանգառի դեպքում տրանսպորտային միջոցի վթարային լուսային ազդանշանը միացրած լինելու պահանջը տրանսպորտային միջոցի վարորդի կողմից չկատարելը միանշանակ չի կարող հիմնավորել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված իրավախախտման առկայությունը, քանի որ տրանսպորտային միջոցի վթարային լուսային ազդանշանը չմիացնելը դեռևս չի բացառում տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնների խախտման՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակով, կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակով պայմանավորված լինելու հանգամանքը:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության 24.01.2014 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1401324293 և 21.02.2014 թվականի թիվ 17-4-2339 որոշումներն անվավեր ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության կողմից վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.04.2015 թվականի որոշումը թողնել անփոփոխ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/5166/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/5166/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հովհաննես Հովհաննիսյանի ներկայացուցիչ Արմեն Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Հովհաննես Հովհաննիսյանի հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) (իրավանախորդ՝ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե))՝ Կոմիտեի 16.05.2013 թվականի <<Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ>> թիվ 225001 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հովհաննես Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 16.05.2013 թվականի <<Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ>> թիվ 225001 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 20.06.2014 թվականի որոշմամբ պատասխանող ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն փոխարինվել է իրավահաջորդով՝ Նախարարությամբ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 18.07.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.12.2014 թվականի որոշմամբ Հովհաննես Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.07.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հովհաննես Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ, 267-րդ, 275-րդ, 276-րդ, 277-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածները, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 27-րդ, 124-րդ հոդվածները և ՀՀ կառավարության 29.07.2010 թվականի թիվ 972-Ն որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, առանց սույն գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն իրականացնելու, եկել է այն եզրահանգման, որ հայցը ենթակա էր մերժման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վարչական իրավախախտում կատարելու փաստի վերաբերյալ կազմվել է երկու արձանագրություն՝ 05.04.2013 թվականին և 19.04.2013 թվականին: Բացի այդ, նշված արձանագրությունները կազմելիս Հովհաննես Հովհաննիսյանին հնարավորություն չի տրվել օգտվելու իր իրավունքներից, տալու բացատրություններ, ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու ապացույցներ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցելիս և վարչական տույժը նշանակելիս խախտվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածը, և պատճառաբանել, որ նշված հոդվածով սահմանված տասնհինգօրյա ժամկետը սկսում է հոսել արձանագրությունը և մյուս նյութերը լիազոր մարմնի կողմից ստանալուց հետո, իսկ գործում առկա չէ որևէ ապացույց, որ 19.04.2013 թվականի արձանագրությունը և մյուս նյութերը լիազոր մարմնի տիրապետմանն են հանձնվել ավելի վաղ, քան սկսել է հոսել 16.05.2013 թվականին ավարտված տասնհինգօրյա ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.12.2014 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի 05.04.2013 թվականի <<Հարկ վճարողի խոչընդոտող գործողությունների մասին>> թիվ 1 արձանագրության համաձայն՝ Կոմիտեի 02.04.2013 թվականի թիվ 2212653 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանի մոտ ստուգում իրականացնելու և հարկային պարտավորությունների հաշվարկումը հնարավոր չի եղել (...) **(հատոր 1-ին, գ.թ. 25-26):**

2) Կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության 19.04.2013 թվականի <<Վարչական իրավախախտման վերաբերյալ>> թիվ 341 արձանագրության համաձայն՝ Կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության պետի 02.04.2013 թվականի թիվ 2212653 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանին պատկանող (քաղաք Հրազդան, Միկրո թիվ 104) խանութում իրականացվել է ուսումնասիրություն, կատարվել է հսկիչ գնում քաղաքացի Սրբուհի Արզումանյանի կող-

մից 1.330 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, սակայն վաճառողուհու կողմից գումարը չի մուտքագրվել հսկիչ-դրամարկղային մեքենա (այսուհետ՝ ՀԴՄ) և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, այնուհետև հարկային տեսուչները վաճառողուհուն ներկայացրել են հանձնարարագիրը ճշտելու համար վաճառքն իրականացնող անձի տվյալները, սակայն վերջինս հրաժարվել է ներկայանալ և տեսուչներին տրամադրել <<Z>> հաշվետվությունը՝ պատճառաբանելով, որ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանն արգելել է նրանց որևէ գործողություն կատարել, որով խոչընդոտվել է ստուգման բնականոն ընթացքը, որից հետո ստուգումը լիարժեք իրականացնելու համար տեղյակ է պահել անհատ ձեռնարկատիրոջը ներկայանալու գործողության վայր՝ փաստի առթիվ արձանագրություն կազմելու համար: Վերջինս հրաժարվել է ներկայանալ գործունեության վայր, որից հետո փաստի առթիվ կազմվել է արձանագրություն: Անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանի գործողություններն առաջացնում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածի 1-ի մասով սահմանված պատասխանատվություն **(հատոր 1-ին, գ.թ. 27-29):**

3) Կոմիտեի 16.05.2013 թվականի <<Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ>> թիվ 225001 որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածի հիմքով տուգանվել է 250.000 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 14-15):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտումն առկա է այն պայմաններում, երբ իրավասու պետական մարմնի հանձնարարագրի հիման վրա ստուգաված սուբյեկտի մոտ իրականացվել է նրա գործունեության ուսումնասիրություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածի համաձայն՝ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում նրա մուտք գործելն արգելելը կամ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխա-

տավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում (...):

<<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում (...), իրավաբանական անձի մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի (...) գործունեության ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է դրանց իրականացման միասնական կարգը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (...) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում՝ պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է, բացառությամբ նույն կետի ութերորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ կետի 8-րդ պարբերության համաձայն՝ (...) հսկիչ գնումների իրականացման (...) նպատակով հարկային մարմինները կարող են իրականացնել ուսումնասիրություններ (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատ-

շաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով *(տե՛ս, Սուրեն Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու համար, որը կարող է դրսևորվել հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

- իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը,
- տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի մուտք գործելն արգելելը,
- ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձին չտրամադրելը,
- կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը,
- օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությունից բխում է, որ նշված հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ անձը, կատարելով վերոգրյալ արարքներից որևէ մեկը, խոչընդոտում է ստուգումներ իրականացնող իրավասու պետական մարմինների աշխատանքին: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման առկայության փաստը բացահայտելու համար վարչական մարմինը նախևառաջ պետք է պարզի, թե արդյոք տնտեսավարող սուբյեկտի մոտ օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացվել է, թե՝ ոչ: Այնուհետև համապատասխան վարչական մարմինը պետք է պարզի ստուգում իրականացնող պաշտոնատար անձին խոչընդոտելու փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման փաստը կարող է առկա լինել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրա-

կանացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվում է ստուգում,

բ) տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտում է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին:

Օրենսդիրը <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքում սահմանել է ստուգման և ուսումնասիրության՝ որպես առանձին և իրարից տարբերվող ընթացակարգերի բովանդակությունը և առանձնահատկությունները: Այսպես, ըստ <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի՝ ստուգումն իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (...) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին պարզելուն ուղղված և օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ: Իսկ ուսումնասիրությունը ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է: Որպես բացառություն՝ <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի 8-րդ պարբերությամբ սահմանվում է, որ հսկիչ գնումների իրականացման նպատակով ևս հարկային մարմինները կարող են իրականացնել ուսումնասիրություններ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստուգումն իրենից ներկայացնում է օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ, որն ուղղված է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվության արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին պարզելուն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ուսումնասիրությունը, որպես առանձին ընթացակարգ, հետապնդում է այլ նպատակ, մասնավորապես՝ ուսումնասիրությունը ներքին ընթացակարգ է, որն իրականացվում է ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը պարզաբանելու նպատակով, իսկ որպես բացառություն՝ օրենսդիրը սահմանել է, որ ստուգող մարմինն ուսումնասիրություն կարող է իրականացնել նաև հսկիչ գնումների իրականացման նպատակով:

Վկայակոչված իրավանորմերի և նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ իրավական համակարգում ստուգումը և ուսումնասիրությունը տարբեր իրավական ընթացակարգեր են, հանգում է այն եզրակացության, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել բացառապես այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվել է ստուգում, և տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտել է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին: Հետևաբար վերը նշված հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված զանցակազմն առկա չէ, և, համապատասխանաբար, դրանով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը չի կարող կիրառվել այն դեպքում, երբ տնտեսավարող

սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում իրականացվել է ուսումնասիրություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի 16.05.2013 թվականի <<Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ>> թիվ 225001 որոշմամբ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար և տուգանվել է 250.000 ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով 19.04.2013 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 341 արձանագրությունը և կից նյութերը:

Դատարանը, իր 18.07.2014 թվականի վճռով մերժելով Հովհաննես Հովհաննիսյանի հայցը՝ Կոմիտեի նշված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, պատճառաբանել է, որ վարչական վարույթի ընթացքում հաստատվել է վարչական իրավախախտման փաստը, վարչական վարույթն իրականացվել և վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի պահանջների պահպանմամբ: Հետևաբար ըստ Դատարանի վճռի՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով սահմանված՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են:

Վերաքննիչ դատարանը, 25.12.2014 թվականի որոշմամբ անփոփոխ թողնելով Դատարանի 18.07.2014 թվականի վճիռը, իր հերթին, գտել է, որ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանի գործողություններով խոչընդոտվել է օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման (ուսումնասիրության) ընթացքը, մասնավորապես՝ ստուգման նպատակին անմիջականորեն առնչվող փաստաթուղթը չտրամադրելու միջոցով:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ Վարչական իրախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) նախևառաջ պետք է պարզի այն հարցը, թե արդյոք տնտեսավարող սուբյեկտի մոտ օրենքով սահմանված կարգով ստուգում տեղի ունեցել է, թե՝ ոչ, որից հետո միայն պետք է պարզի ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին խոչընդոտելու փաստի առկայությունը կամ բացակայությունը: Նշված հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել բացառապես այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվել է ստուգում, և տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտել է ստուգում իրականացնող պետական մարմնի աշխատանքն: Այսինքն՝ նշված հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտումն առկա է միայն այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացվել է ստուգում:

Մինչդեռ Կոմիտեի 19.04.2013 թվականի <<Վարչական իրավախախտման վերաբերյալ>> թիվ 341 արձանագրությունից հետևում է, որ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հովհաննիսյանին պատկանող խանութում Կոմիտեի Հրազդանի տարածքային հարկային տեսչության պետի 02.04.2013 թվականի թիվ 2212653 հանձնարարագրով իրականացվել է ուսումնասիրություն: Հետևաբար սույն գործով չի հաստատվել Հովհաննես Հովհաննիսյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումը կատարելու փաստը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բացակայել են Հովհաննես Հովհաննիսյանին Վարչական իրավախախտումների վերա-

բերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասի <<ա>> կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: Տվյալ դեպքում վիճարկվող վարչական ակտն ընդունվել էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182[1]–րդ հոդվածի սխալ կիրառման հետևանքով և ենթակա էր անվավեր ճանաչման, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–րդ, 151–րդ և 163–րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56–րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Տվյալ դեպքում, նկատի ունենալով, որ Հովհաննես Հովհաննիսյանը <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի <<թ>> կետի ուժով ազատված է սույն գործով պետական տուրքի վճարման պարտականությունից, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Հովհաննես Հովհաննիսյանի կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար օրենքով սահ-

մանված և չվճարված պետական տուրքի գումարները՝ համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ՀՀ պետական բյուջե ենթակա են բռնագանձման Նախարարությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.12.2014 թվականի որոշումը և փոփոխել այն. հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 16.05.2013 թվականի <<Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ>> թիվ 225001 որոշումը:

2. ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6781/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԴ/6781/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.05.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գիթա Հեյդարիմարանջեհի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (այսուհետ՝ Ոստիկանություն)՝ 03.10.2012 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գիթա Հեյդարիմարանջեհը պահանջել է անվավեր ճանաչել Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 03.10.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.05.2014 թվականի որոշմամբ Ոստիկանության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.10.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի <<գ>> կետը, չի կիրառել <<Ազգային անվտանգության մարմինների մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, 16-րդ հոդվածի <<ժե>> կետը, <<Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը, ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված կարգի 1-ին կետի 1-ին ենթակետը և թիվ 2-րդ հավելվածով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ տրամադրելը մերժելու հիմք սահմանել է միմյանցից անկախ երեք պայմաններ, և նշված վավերապայմաններից մեկի առկայությունը հիմք է օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը մերժելու համար, սակայն անհասկանալի կերպով բողոքը մերժել է: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի <<գ>> կետի 3 վավերապայմաններից յուրաքանչյուրն էլ առնչվում է ՀՀ ազգային անվտանգության ոլորտի հետ, հետևաբար, Ոստիկանությունը, ստանալով օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ պատասխանը, գործել է տվյալ իրավահարաբերությունների ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բացի այդ, վերոնշյալ վավերապայմաններից որևէ մեկի առկայության պարագայում օտարերկրացիներին Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի տրամադրումը բացառապես մերժվում է՝ ազգային անվտանգության ապահովման առաջնահերթության տրամաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.05.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Գիթա Հեյդարիմարանջեհը հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի: Վերջինս 07.09.2012 թվականի դիմումով խնդրել է իրեն տալ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ: **(հատոր 1-ին, գ.թ. 80-82).**

2) Ոստիկանության կողմից կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ նյութերն ուղարկվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ համաձայնեցման: **(հատոր 1-ին, գ.թ. 84).**

3) ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից 26.09.2012 թվականին տրվել է տեղեկատվություն այն մասին, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Գիթա Հեյդարիմարանջեհին, ծնված 1971 թվականին, համաձայն <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի <<գ>> կետի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը նպատակահարմար են գտնում մերժել **(հատոր 1-ին, գ.թ. 87).**

4) Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշմամբ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Գիթա Հեյդարիմարանջեհին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու միջնորդագիրը մերժվել է **(հատոր 1-ին, գ.թ. 85-86):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական ակտի հիմնավորվածության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքը կիրառելի է օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու վերաբերյալ վարչական վարույթի նկատմամբ.

2. արդյո՞ք վարչական ակտը, որը չի պարունակում բոլոր էական փաստական հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել նման բովանդակությամբ վարչական ակտ կայացնելու համար, սակայն չի խախտում շահագրգիռ անձանց սուբյեկտիվ իրավունքները և ազատությունները, միանշանակ ենթակա է անվավեր ճանաչման:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

<<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի <<զ>> կետի համաձայն՝ օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե կացության կարգավիճակ հայցելիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

<<Ազգային անվտանգության մարմինների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի <<ժե>> կետի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինները պարտավոր են <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին>> Հայաս-

տանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելուն և քաղաքացիությունը դադարեցնելուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն ու նրա սահմաններից դուրս գալուն, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը:

ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին>> 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) թիվ 1 հավելվածով հաստատված կարգի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) համար օտարերկացիները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (այսուհետ՝ անձնագրային և վիզաների վարչություն) ներկայացնում են դիմում:

Որոշման 2-րդ հավելվածով հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու հարցն անձնագրային և վիզաների վարչությունը համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ազգային անվտանգության ծառայություն) հետ՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ ազգային անվտանգության ծառայություն ուղարկելով օտարերկրացու անձնագրի և դիմում-հարցաթերթիկի պատճենները, իսկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող օտարերկրացիների դեպքում՝ միայն ցուցակները:

Որոշման 2-րդ հավելվածով հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ ազգային անվտանգության ծառայությունն օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու կամ կացության կարգավիճակը երկարաձգելու հարցի վերաբերյալ 7-օրյա ժամկետում անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացնում իր համաձայնության կամ առարկության վերաբերյալ տեղեկատվություն:

Որոշման 2-րդ հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ <<Օտարերկրացիների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածում նշված կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում անձնագրային և վիզաների վարչության կողմից ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումները կարող են մերժվել: Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու դիմումը մերժելու մասին անձնագրային և վիզաների վարչության որոշումն օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու և այն մերժելու իրավասությունը վերապահված է Ոստիկանությանը: Օրենսդիրը <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում նախատեսել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում իրավասու վարչական մարմինը կարող է կացության կարգավիճակ տալը մերժել: Օտարերկրացու կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերից են նաև <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի <<զ>> կետում օրենսդրի կողմից սահմանված հետևյալ հիմքերը՝ եթե կացության կարգավիճակ հայցողն իր մասին ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը:

Օրենսդիրն ազգային անվտանգության մարմինների համար սահմանել է օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն ու նրա սահմաններից դուրս գալուն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը մասնակցելու պարտականություն: Հայաստանի Հանրապետությունում անձին կացության կարգավիճակ տալու իրավական գործընթացին մասնակցում է նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն): Անձին կացության կարգավիճակ տալու կամ այն մերժելու ընթացքում Ծառայությունը պարտավոր է կացության կարգավիճակ հայցողի վերաբերյալ հայտնել դիրքորոշում:

Վերոնշված իրավական կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու գործընթացին մասնակցում է նաև Ծառայությունը, սակայն նման կարգավիճակ տալու կամ նման կարգավիճակի տալը մերժելու իրավասությունը վերապահված է Ոստիկանությանը, որն էլ օրենքով սահմանված կարգով ընդունում է համապատասխան որոշում:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Նշված իրավանորմում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի կիրառումը հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում: <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ իրավական համակարգում օտարերկրացուն կացության կարգավիճակ տալուն ուղղված վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները կարգավորվում են <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքով, միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքով սահմանված չէ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտի հիմնավորմանը վերաբերող որևէ առանձնահատկություն, ինչը նշանակում է, որ գրավոր վարչական ակտի հիմնավորման պահանջի վերաբերյալ կիրառելի է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Օրենսդիրը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն: Օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավա-

կան հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտը հիմնավորելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների՝ սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը: Նման եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում *(տե՛ս, «Ինեկոբանկ» ՓԲՀ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձ Իգաբելլա Վանյանի թիվ ՎԴ/03/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Ինչպես արդեն նշվել է, օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական հիմքերը: Օրենսդրի կողմից սահմանված՝ վարչական ակտում բոլոր էական փաստական հանգամանքները նշելու վարչական մարմնի պարտականությունն ինքնանպատակ չէ, քանի որ իրավական նորմում ամրագրված իրավական հետևանքներն անձի նկատմամբ կիրառելու նախապայման է հանդիսանում իրավական նորմում առկա փաստակազմի առկայության բացահայտումը: Իրավական նորմերում օրենսդիրն ամրագրում է որոշակի փաստակազմեր, որոնց գործնականում առկայությունն է միայն անձանց համար կոնկրետ գործով առաջացնում օրենքով սահմանված իրավական հետևանքները, այսինքն՝ վարչական մարմինն իրավասու է ընդունելու վարչական ակտ, որով իրավական նորմում ամրագրված իրավական հետևանքները կիրառվում են կոնկրետ անձի նկատմամբ, եթե առկա է օրենքում նկարագրված փաստակազմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի իրավաչափության իրավական հիմքերը սահմանվում են նյութական և ընթացակարգային իրավական նորմերում: Իրավաչափ վարչական ակտը պետք է համապատասխանի իր նկատմամբ կիրառելի բոլոր նյութական և ընթացակարգային իրավական նորմերին: Վարչական դատարանը վարչական ակտի իրավաչափությունն ստուգելիս պետք է պարզի՝ արդյո±ք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի նյութական իրավաչափությանը ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է նյութական իրավական նորմերին, թե՝ ոչ և պետք է պարզի նաև՝ արդյոք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի ձևական իրավաչափությանը ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է ընթացակարգային նորմերին, թե՝ ոչ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ի տարբերություն նյութական իրավունքի պահանջների խախտման, ընթացակարգային պահանջների խախտումը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի վարչական ակտի վերացմանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Թեև իրավական պետության պայմաններում մասնավոր անձանց առնչվող վարչա-

կան մարմինների կողմից իրականացվող գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և վարչական մարմնի գործունեությունը նաև պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, սակայն միաժամանակ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ: Ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը կայանում է նրանում, որ ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է, և այն իրավահարաբերություններում որտեղ ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանելու միջև անմիջական կապը բացակայում է, ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները:

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ վարչական ակտում համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական հանգամանքները նշելու հիմնական նպատակը վարչական վարույթի մասնակիցների՝ սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունն է, ինչպես նաև վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին իրական հնարավորություն ընձեռելը՝ պարզելու այն փաստական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վարչական վարույթի ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձնանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելու միջև ուղղակի կապի բացակայության դեպքում ընթացակարգային պահանջների և դրանց խախտման իրավական հետևանքները կրում են հարաբերական բնույթ: Այսպիսով, հաշվի առնելով վերոնշված իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն պայմաններում, երբ վարչական մարմինն ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա փաստական հանգամանքները, այսինքն՝ բացահայտելով կիրառելի իրավական նորմում առկա փաստակազմը՝ իրավաչափորեն վարչական ակտի հասցեատիրոջ նկատմամբ կիրառում է իրավական նորմում նախատեսված իրավական հետևանքները, այսինքն, երբ անձին իրավաչափորեն տրամադրում է իրավունք կամ անձի վրա իրավաչափորեն դնում է որևէ պարտականություն, սակայն վարչական ակտի տեքստում չի նշում իր կողմից, արդեն իսկ բացահայտված փաստական հանգամանքները, այդպիսի վարչական ակտը ենթակա չէ անվավեր ճանաչման: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ վարչական ակտում այն ընդունելու բոլոր էական փաստական հանգամանքները նշված չեն, այդ վարչական ակտը չի կարող համարվել անվավեր, քանի որ գործնականում չի խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները և ազատությունները, անձանց հնարավորություն է ընձեռում գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում վարչական բողոքը քննող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում, քանի որ այդ փաստական հանգամանքները առկա են վարչական գործում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հաշվի առնելով սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության իրավունքը, ինչպես նաև արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, վարչական ակտի ձևական իրավաչափության

վերաբերյալ ընդհանուր հայեցակարգային մոտեցումները և օրենսդրի կողմից ՀՀ իրավական համակարգում ներդրված վարչական ակտի ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը, գտնում է, որ այն պայմաններում, երբ վարչական ակտում նշված չեն այդ ակտն ընդունելու համար բոլոր էական փաստական հանգամանքները, սակայն դրա արդյունքում որևէ կերպ չի խախտվում շահագրգիռ անձանց սուբյեկտիվ իրավունքները և ազատությունները և տվյալ ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանած վարչական ակտի նյութական իրավաչափությանը ներկայացվող բոլոր պահանջներին, ապա այդ վարչական ակտը ենթակա չէ անվավեր ճանաչման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գիթա Հեյդարիմարանջեհը հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի: Վերջինս 07.09.2012 թվականի դիմումով խնդրել է իրեն տալ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ: Ոստիկանության կողմից կացության կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ նյութերն ուղարկվել են Ծառայություն: Ծառայությունը նպատակահարմար է գտել Գիթա Հեյդարիմարանջեհին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը մերժել: Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշմամբ <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի <<զ>> կետի հիման վրա Գիթա Հեյդարիմարանջեհին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը մերժվել է:

Դատարանը, հայցը բավարարելով և Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշումն անվավեր ճանաչելով, պատճառաբանել է, որ վարչական ակտ կայացնելիս և անձանց իրավունքներ տրամադրելիս կամ դրանք մերժելիս, վարչական մարմինն օրենքով կրում է իր կողմից կայացված վարչական ակտը հիմնավորելու պարտականություն, որը սահմանված է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածներով: Դատարանը վերը նշված հոդվածների վերլուծության արդյունքում եզրակացրել է, որ վարչական ակտում բավարար չէ նշել միայն դրա կայացման իրավական հիմքը, այլ նույն կերպ անհրաժեշտ է նշել բոլոր փաստական հանգամանքները, որոնք հիմք են տվել կայացնելու նման բովանդակությամբ որոշում:

Վերաքննիչ դատարանը, Ոստիկանության վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, նշել է, որ վիճարկվող ակտում կիրառված նորմը պարունակում է երեք վավերապայման, հետևաբար վիճարկվող ակտը պետք է պարունակի ոչ միայն համապատասխան կետի խախտման հիմնավորումը, այլ նաև այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք հիմք են տվել վարչական մարմնին նման բովանդակությամբ որոշում կայացնելու համար, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Գիթա Հեյդարիմարանջեհին ՀՀ կացության կարգավիճակ տրամադրելու հարցը վարչական վարույթի շրջանակներում քննարկելու և դրա վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավասություն ունի Ոստիկանությունը: Գիթա Հեյդարիմարանջեհին ՀՀ կացության կարգավիճակ տրամադրելու իրավական գործընթացին մասնակցելու պարտականություն է սահմանված նաև Ծառայության համար, որը, կատարելով իր վրա օրենսդրի կողմից դրված պարտականությունը, <<Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված կարգի համաձայն իրավասու մարմնին ներկայացրել է Ծառայության առարկության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Տվյալ դեպքում, թեև Ոստիկանությունը վիճարկվող վարչական ակտում չի նշել այդ ակտն ընդունելու համար

հիմք հանդիսացած բոլոր էական փաստական հանգամանքները, սակայն վերը շարադրված պատճառաբանություններից հետևում է, որ միայն տվյալ հանգամանքը բավարար չէ Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշումն անվավեր ճանաչելու համար: Նշված որոշումը ենթակա է անվավեր ճանաչման միայն այն դեպքում, եթե իրավասու վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում չի բացահայտել տվյալ գործի համար բոլոր էական փաստական հանգամանքները՝ չապահովելով վարչական վարույթի շրջանակներում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

Վերը նշվածից հետևում է, որ մինչև Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշումն անվավեր ճանաչելը Դատարանը պարտավոր էր պարզել՝ արդյոք վարչական վարույթի ընթացքում Ոստիկանությունն ինքնուրույն, ինչպես նաև Ծառայության միջոցով բացահայտել է տվյալ գործի համար բոլոր էական փաստական հանգամանքները, ապահովել է վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Մինչդեռ Դատարանը, առանց վերը նշված հանգամանքները պարզելու, անհիմն և ոչ իրավաչափորեն հայցը բավարարել է և անվավեր է ճանաչել Ոստիկանության 03.10.2012 թվականի որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանն էլ, անտեսելով ստորադաս դատարանի կողմից թույլ տրված խախտումը, մերժել է Ոստիկանության վերաքննիչ բողոքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից սույն գործի լրիվ և բազմակողմանի քննություն չի իրականացվել, հետևաբար գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ գործի փաստական հանգամանքները սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պարզելու և գնահատելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.05.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1567/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Հ. Բեդևյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/1567/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ««Արարատ»» սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Քրիստինե Սողոմոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.12.2013 թվականի որոշման դեմ ըստ «Եվրոթերմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն), երրորդ անձ Ընկերության՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է անվավեր ճանաչել Գործակալության կողմից 05.12.2011 թվականին 17844 համարի տակ գրանցված ապրանքային նշանի գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 19.04.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.12.2013 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 19.04.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթն իրենից ներկայացնում է առանձնահատուկ ոլորտ և ամբողջությամբ կարգավորվում է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 18.11.2010 թվականի թիվ 1538-Ն որոշմամբ, որոնք մանրակրկիտ կերպով նկարագրում են ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության կարգը և պայմանները: Մասնավորապես՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է ընձեռում ցանկացած շահագրգիռ անձի ներկայացնելու իր առարկությունները հայտարկված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ, ինչպես նաև սահմանում է օրենքով սահմանված կարգով ներկայացված առարկությունների քննարկման կարգը և արդյունքները:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի նկատմամբ, ինչը հանգեցրել է սույն գործի սխալ լուծման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.12.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.04.2013 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման թիվ 5958 վկայականի համաձայն՝ Կազմակերպության անվամբ ապրանքների (ծառայությունների) 32-րդ դասով 16.12.1999 թվականի առաջնությամբ 22.03.2001 թվականին գրանցվել է «Նոյան» ապրանքային նշանը **(հատոր 1-ին, գ.թ. 34):**

2) Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման թիվ 5959 վկայականի համաձայն՝ Կազմակերպության անվամբ ապրանքների (ծառայությունների) 32-րդ դասով 16.12.1999 թվականի առաջնությամբ 22.03.2001 թվականին գրանցվել է «Noyan» ապրանքային նշանը **(հատոր 1-ին, գ.թ. 35):**

3) Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման թիվ 14151 վկայագրի համաձայն՝ Կազմակերպության անվամբ ապրանքների (ծառայությունների) 29-րդ, 30-րդ, 31-րդ դասերով 10.04.2009 թվականի առաջնությամբ 18.05.2009 թվականին գրանցվել է «Noyan» ապրանքային նշանը **(հատոր 1-ին, գ.թ. 33):**

4) Գործակալությունում 06.05.2011 թվականին մուտքագրված թիվ 20110583 հայտով Ընկերությունը խնդրարկել է ապրանքների միջազգային դասակարգման 30-րդ դասի համար իր անվամբ գրանցել «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանը **(հատոր 2-րդ, գ.թ. 24):**

5) Գործակալությունը 23.05.2011 թվականին որոշել է Ընկերության կողմից 06.05.2011 թվականին ներկայացված թիվ 20110583 հայտը հրապարակել և անցկացնել ըստ էության փորձաքննություն **(հատոր 2-րդ, գ.թ. 20):**

6) 02.09.2011 թվականի ծանուցման համաձայն՝ Գործակալությունը հայտնել է Ընկերությանը, որ Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման հիման վրա պահպանվող «ՆՈՑԱՆ» («Եվրոթերմ» ՓԲԸ, Ամիրյան 15ա, AM, N 8413, 14151) ապրանքային

նշանը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության կողմից հայտարկվող «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար: Միաժամանակ Ընկերությանն առաջարկվել է ծանուցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում այդ կապակցությամբ ներկայացնել իր նկատառումները կամ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Նոյան» ապրանքային նշանի սեփականատիրոջ համաձայնությունը **(հատոր 2-րդ, գ.թ. 15):**

7) Գործակալությունում 14.09.2011 թվականին մուտքագրված գրության համաձայն՝ Ընկերության արտոնագրային հավատարմատար ««Ջ. Մանուկյան և գործընկերներ» արտոնագրային բյուրո» ՍՊԸ-ն խնդրել է Գործակալությանը շարունակել փորձաքննությունը և Ընկերության անվամբ գրանցել թիվ 20110583 հայտով ներկայացված «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանը **(հատոր 2-րդ, գ.թ. 13-14):**

8) Գործակալությունը 07.10.2011 թվականի որոշմամբ մերժել է Ընկերության կողմից 06.05.2011 թվականին ներկայացված թիվ 20110583 հայտով խնդրարկվող «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցումը հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) հայտարկված ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «ՆՈՅԱՆ» («Եվրոթերմ» ՓԲԸ, Ամիրյան 15ա, ԱՄ, N 8413, 14151) ապրանքային նշանին: Համեմատվող նշաններն ունեն ձայնային և իմաստային նմանություն (...)»* **(հատոր 2-րդ, գ.թ. 12):**

9) Գործակալությունում 27.10.2011 թվականին մուտքագրված գրության համաձայն՝ Կազմակերպության գլխավոր տնօրենը հայտնել է Գործակալության պետին ի գիտություն, որ Կազմակերպությունը մերժել է Ընկերության խնդրանքը՝ «Նոյան Տապան» ապրանքային նշանն ապրանքների միջազգային դասակարգման 30-րդ դասում գրանցելու թույլտվություն ստանալու մասին **(հատոր 2-րդ, գ.թ. 8):**

10) Գործակալությունում 21.10.2011 թվականին և 08.11.2011 թվականին մուտքագրված գրությունների համաձայն՝ Ընկերության արտոնագրային հավատարմատար ««Ջ. Մանուկյան և գործընկերներ» արտոնագրային բյուրո» ՍՊԸ-ն խնդրել է Գործակալությանը շարունակել փորձաքննությունը և Ընկերության անվամբ գրանցել թիվ 20110583 հայտով ներկայացված «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանը **(հատոր 2-րդ, գ.թ. 6-7, 9-11):**

11) Գործակալությունը 22.11.2011 թվականի որոշմամբ Ընկերության անվամբ ապրանքների միջազգային դասակարգման 30-րդ դասի համար գրանցել է Ընկերության կողմից 06.05.2011 թվականին ներկայացված թիվ 20110583 հայտով խնդրարկվող «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանը **(հատոր 2-րդ, գ.թ. 5):**

12) Ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման թիվ 17844 վկայագրի համաձայն՝ Ընկերության անվամբ ապրանքների (ծառայությունների) 30-րդ դասով 06.05.2011 թվականի առաջնությամբ 05.12.2011 թվականին պետական գրանցամատյանում գրանցվել է «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանը **(հատոր 2-րդ, գ.թ. 2):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում նախատեսված կարգավորումների կիրառելիության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ

պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր իրավակարգավորումները կիրառելի են ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող),կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝

1. Նույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ ընդունված հայ-

տի հրապարակման և ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին որոշման հիման վրա դրա կայացման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական լիազոր մարմինը հայտը հրապարակում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում, որտեղ զետեղում է հայտի համարը և ներկայացման թվականը, հայտատուի անունը, ազգանունը կամ անվանումը և գտնվելու վայրը, հայտարկված ապրանքային նշանի պատկերը և այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար հայտարկված է ապրանքային նշանի գրանցումը:

2. Հայտի հրապարակման թվականից հետո՝ երկամսյա ժամկետում, ցանկացած անձ կարող է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ գրավոր դիտողություն ներկայացնել պետական լիազոր մարմին այն մասին, որ դրա գրանցումը ենթակա է մերժման նույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերով:

3. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստացված դիտողության մասին պետական լիազոր մարմինը այն ստանալու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում, գրավոր ծանուցում է հայտատուին՝ նշված ծանուցագիրն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ: Նշված ժամկետում հայտատուի կողմից նկատառումներ չներկայացնելու դեպքում դիտողությունը քննարկվում է առկա նյութերի հիման վրա:

4. Հայտի հրապարակման թվականից հետո՝ երկամսյա ժամկետում, ավելի վաղ ապրանքային նշանի կամ հանրահայտ ապրանքային նշանի իրավատերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պահպանվող, աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան, պահպանվող արդյունաբերական նմուշի կամ օգտակար մոդելի, անվան կամ ազգանվան, կեղծանվան, պատկերի նկատմամբ ավելի վաղ ծագած իրավունքների տիրապետողները, գրականության, գիտության կամ արվեստի պահպանվող ստեղծագործությունների նկատմամբ ավելի վաղ ծագած հեղինակային իրավունքի իրավատերերը և ցանկացած այլ շահագրգիռ անձ կարող են հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ գրավոր առարկություն ներկայացնել պետական լիազոր մարմին այն մասին, որ դրա գրանցումը ենթակա է մերժման նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հիմքերով:

5. Առարկությունը համարվում է ներկայացված, եթե դրան կցված է օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

6. Առարկությունն ստանալու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում, պետական լիազոր մարմինն ստուգում է այն և նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ներկայացման պայմաններին դրա համապատասխանության դեպքում առարկության մասին գրավոր ծանուցում է հայտատուին՝ նշված ծանուցագիրն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ: Նշված ժամկետում հայտատուի կողմից նկատառումներ չներկայացվելու դեպքում առարկության հետագա քննարկումն իրականացվում է առկա նյութերի հիման վրա:

7. Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմաններին չհամապատասխանող առարկությունը համարվում է չներկայացված, ինչի մասին դրա ստացման օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում, պետական լիազոր մարմինը գրավոր ծանուցում է այն ներկայացնողին:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝

1. Նույն օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ սահմանված ժամկետում դիտողության և առարկության վերաբերյալ հայտատուի ներկայացրած նկատառումները պետական լիազոր մարմինն ըստ էության քննարկում է նույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ապրանքային նշանի փորձաքննության անցկացման կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

2. Հայտատուի կողմից հիմնավոր դիմում ներկայացնելու դեպքում դիտողության քննարկումը կասեցվում է մինչև դիմումում նշված ժամկետի ավարտը:

3. Առարկության քննարկումը կասեցվում է հետևյալ դեպքերում և ժամկետներով՝

1) հակադրվել է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի կամ արդյունաբե-

րական նմուշի գրանցման հայտ մինչև դրա վերաբերյալ վերջնական որոշման կայացումը.

2) առարկության հիմքում դրված ավելի վաղ ապրանքային նշանը կամ արդյունաբերական նմուշը գրանցումն անվավեր կամ չեղյալ ճանաչելու գործընթացում է՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշման ընդունումը.

3) կողմերից մեկը հիմնավորված դիմում է ներկայացրել մինչև դրա մեջ նշված ժամկետի ավարտը:

Առարկության քննարկումը վերսկսվում է դրա կասեցման հիմքերի վերանալուց հետո:

4. Դիտողության և առարկության քննարկման արդյունքում պետական լիազոր մարմինը համապատասխանաբար կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) դիտողությունը կամ առարկությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու և ապրանքային նշանի գրանցումը հայտի մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու մասին.

2) դիտողությունը կամ առարկությունը մերժելումասին:

5. Նույն հոդվածի 4–րդ մասում նշված որոշումները հաշվի են առնվում նույն օրենքի 45–րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանի փորձաքննության որոշման կայացման համար, որի մասին հնգօրյա ժամկետում ծանուցվում է նաև դիտողություն կամ առարկություն ներկայացրած անձը: Նշված որոշմանը չհամաձայնելու դեպքում դիտողություն կամ առարկություն ներկայացրած անձը կարող է վիճարկել տվյալ ապրանքային նշանի գրանցումը նույն օրենքի 22–րդ կամ 23–րդ հոդվածներով սահմանված կարգով:

Վկայակոչված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչարարության հիմունքների, վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և անձանց միջև ծագած հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է նաև, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով: Այլ խոսքով, օրենսդիրը չի բացառում վարչական վարույթների առանձին տեսակների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ այդ հարաբերությունները կարգավորված չլինեն հատուկ օրենքներով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրը վարչական վարույթին վերաբերող հատուկ օրենքներում նախատեսել է հատուկ կարգավորումներ, ապա իրավասու վարչական մարմինները պարտավոր են կիրառել հատուկ օրենքը:

Օրենսդիրն ապրանքային նշանի գրանցման գործընթացը (հայտի նախնական փորձաքննություն, հայտի հրապարակում, հայտի ըստ էության փորձաքննություն, դիտողությունների և առարկությունների քննարկում և այլն) կարգավորել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածի 3–րդ մասի և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանի գրանցման գործընթացն իրենից ներկայացնում է առանձին տեսակի վարչական վարույթ, որի առանձնահատկությունները սահմանված են «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում առկա վարչական վարույթին վերաբերող կարգավորումները կիրառելի են ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունների նկատմամբ այնքանով, որքանով դրանք կարգավորված չեն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ իրավական համակարգում

ապրանքային նշանների բնագավառում վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները կարգավորվում են «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով:

Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սահմանել է, որ վարչական վարույթում երրորդ անձինք այն անձինք են, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, այլ խոսքով՝ այն անձինք, որոնց համար վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը կարող է առաջացնել իրավական հետևանքներ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ *(տե՛ս, Իվանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, կետ 70):* Հետևաբար վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին *(տե՛ս, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվայաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):*

Այսպիսով, ՀՀ իրավական համակարգում օրենսդրի կողմից երրորդ անձանց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորություն նախատեսելու հիմնական նպատակը երրորդ անձանց սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելն է: Սակայն օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը *(տե՛ս, Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի, երրորդ անձ Անուշ Տարախչյանի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը, կարգավորելով ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի առանձնահատկությունները, սահմանում է այդ վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության առանձնահատուկ կարգ, որը տարբերվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգից: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը սահմանում է հարուցված վարույթի ելքով շահագրգռված անձանց ծանուցելու առանձնահատուկ եղանակ, այն է՝ հայտի հրապարակումը «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում: Օրենսդիրն այնուհետև սահմանել է, որ հայտի հրապարակումից հետո երկամսյա ժամկետում ցանկացած անձ կարող է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ ներկայացնել իր գրավոր առարկություններն ու դիտողությունները, որոնք ենթակա են պարտադիր քննարկման «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով:

Տվյալ կարգավորումների հիմքում ընկած է այն իրավական տրամաբանությունը, որ ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի ելքով կարող է շահագրգռված լինել անձանց ավելի լայն շրջանակ, քանի որ տվյալ վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով կարող են շոշափվել լայն շրջանակի անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այդ իսկ պատճառով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44–րդ և 46–րդ հոդվածները սահմանում են խնդրո առարկա վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության առանձնահատուկ կարգ, որը տարբերվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35–րդ և 38–րդ հոդվածներով նախատեսված ընդհանուր կարգից: Այլ կերպ ասած, օրենսդիրն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակում ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթին մասնակցելու լայն հնարավորություն է ընձեռում ցանկացած շահագրգիռ անձի, ում իրավունքները կամ օրինական շահերն անմիջականորեն կարող են շոշափվել այդ վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում եզրակացնում է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը համապատասխան վարչական մարմնի համար ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին երրորդ անձանց անմիջականորեն ծանուցելու լիազորություն չի սահմանում: Սակայն այդ հանգամանքը որևէ կերպ չի խաթարում տվյալ անձանց՝ ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածով և Կոնվենցիայի 13–րդ հոդվածով երաշխավորված պետական մարմինների առջև իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, վարչական վարույթում երրորդ անձանց ներգրավելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում վարույթին մասնակցող անձանց համար ապահովել սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության իրական հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44–րդ և 46–րդ հոդվածներով սահմանված իրավադրույթների գործնականում պատշաճ իրացումն ապահովում է ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի ելքով շահագրգռված երրորդ անձանց լսված լինելու իրավունքը, և հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը գործնականում լիարժեքորեն կենսագործել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի նկատմամբ վարչական վարույթին երրորդ անձանց մասնակցության վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր իրավակարգավորումները կիրառելի չեն, և խնդրո առարկա վարչական վարույթի վրա տարածվում են միայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44–րդ և 46–րդ հոդվածներով նախատեսված առանձնահատուկ իրավադրույթները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը բավարարել է Կազմակերպության վերաքննիչ բողոքը և անվավեր է ճանաչել Ընկերության անվամբ կատարված «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցումը՝ իր որոշման հիմքում դնելով այն պատճառաբանությունը, որ նշված ապրանքային նշանի գրանցման վարչական ակտն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35–րդ և 38–րդ հոդվածների խախտումներով, ինչը հիմք է այն վերացնելու (անվավեր ճանաչելու) համար: Այսպես, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ պատճառաբանել է, որ *«(...) սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում առավել, քան ակնհայտ է եղել, որ վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով միանշանակորեն շոշափվելու են Կազմակերպության իրավունքները և օրինական շահերը, հետևաբար վարչական մար–*

մինը պետք է ողջամիտ միջոցներ ձեռնարկեր նրան որպես երրորդ անձ ներգրավելու համար, մինչդեռ վարչական մարմինը վարչական վարույթին Կազմակերպությանը մասնակից չդարձնելով՝ խախտել է վերջինիս լսված լինելու իրավունքը (...)»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ ապրանքային նշանի գրանցման գործընթացը սահմանված է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, որն այլ կարգավորումներ է սահմանում, քան նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Նկատի ունենալով, որ ապրանքային նշանի գրանցման գործընթացն առանձին տեսակի վարչական վարույթ է, որը կարգավորվում է հատուկ օրենքով՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով, ուստի ընդհանուր օրենքի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները տվյալ հարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն և բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում նախատեսել է հատուկ կարգավորումներ, ապա իրավասու վարչական մարմինը պարտավոր է կիրառել հատուկ կարգավորումները, իսկ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ օրենսդիրը հատուկ օրենքում մանրամասն կարգավորել է երրորդ անձանց կողմից դիտողություններ և առարկություններ ներկայացնելու հիմքերը, կարգը և ժամկետները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն փաստը, որ սույն գործով Գործակալության համար ակնհայտ է եղել, որ Ընկերության կողմից խնդրարկվող «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցմանն ուղղված վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով միանշանակորեն շոշափվելու են կամ կարող են շոշափվել Կազմակերպության իրավունքները և օրինական շահերը, Գործակալության համար այդ վարչական վարույթին սեփական նախաձեռնությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումների հիման վրա Կազմակերպությանը մասնակից դարձնելու պարտականություն չի առաջացնում, քանի որ, ինչպես արդեն նշվեց, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումները կիրառելի չեն տվյալ վարչական վարույթի նկատմամբ:

Հետևաբար Վերաքննիչ դատարանն անհիմն է հանգել այն եզրակացության, որ Ընկերության անվամբ «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի 05.12.2011 թվականի գրանցումը կատարվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների խախտումներով, քանի որ այդ իրավանորմերն առհասարակ կիրառելի չեն խնդրո առարկա վարչական վարույթի նկատմամբ: Տվյալ դեպքում վարչական մարմինը՝ Գործակալությունը, վարչական վարույթին Կազմակերպությանը մասնակից չդարձնելով, չի խախտել վերջինիս լսված լինելու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գործակալության կողմից Ընկերության անվամբ 05.12.2011 թվականին թիվ 17844 համարով կատարված «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցումը չի կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ դրա ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պետական լիազոր մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների պահանջներն այն պատճառաբանությամբ, որ դրանք կիրառելի չեն խնդրո առարկա վարչական վարույթի նկատմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել դատավարության մասնակիցների կողմից բարձրացված և սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերին՝ իր որոշման մեջ նշելով, որ *«(...) Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մյուս հիմնավորումներին՝ այդ թվում նաև ապրանքային նշանների՝ միմյանց շփոթության*

աստիճանի նման լինելու վերաբերյալ, ինչպես նաև պատասխաններում ներկայացված՝ ապրանքային նշանների՝ միմյանց շփոթության աստիճանի նման չլինելու և հայտարկված ապրանքային նշանի գրանցելու հիմքերի վերաբերյալ դիրքորոշումներին չի անդրադառնում՝ դրանք հաստատելու կամ հերքելու հանգամանքը (...) գործի ելքի վրա որևէ ազդեցություն չունենալու պատճառաբանությամբ (...)»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության արդյունքում Դատարանը, համադրելով «Noyan» և «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանները, հանգել է այն եզրակացության, որ դրանց մեկ տարրի նմանությունն ապրանքային նշանները շփոթության աստիճանի նման չի դարձնում, ուստի և հիմք չէ «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունի հատկապես այն հարցի պարզումը, թե «Նոյան» կամ «Noyan» ապրանքային նշանների՝ Կազմակերպության անվամբ գրանցված լինելը կարող է արդյոք «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի համաձայն հիմք հանդիսանալ Ընկերության անվամբ «Noyan Tapan, Ноев Ковчег» ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար կամ հետագայում այդ գրանցումն անվավեր ճանաչելու համար այդ ապրանքային նշանների՝ միմյանց շփոթության աստիճանի նման լինելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ «*շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների*» օգտագործման եղանակով ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների խախտման դրսևորումներին իրավական գնահատական տալը դատական պրակտիկայում առավել խնդրահարույց հարց է, իր նախկինում կայացրած որոշմամբ հնարավորինս մանրամասն անդրադարձել է ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը որոշելու կանոններին:

Այսպես, *«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի կիրառումը մեկ այլ ապրանքային նշանի տարրերի նմանակումն է, որը թեև չի կարող գնահատվել որպես նույնական նշանի կիրառում, սակայն բավարար է սպառողի մոտ շփոթություն առաջացնելու համար:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ ապրանքային նշանների շփոթելու աստիճան նմանությունը յուրաքանչյուր կոնկրետ գործով գնահատման ենթակա փաստ է, որն իրականացնելու պարտականությունը կրում է դատարանը, և որը պետք է իրականացվի մի շարք պարտադիր չափորոշիչների (ապրանքային նշանների նմանությունը, ապրանքային նշանի պաշտպանվածության աստիճանը, ապրանքատեսակների նմանությունը, փաստացի շփոթության հնարավորությունը, օգտագործված մարքեթինգային ուղիները, ապրանքի տեսակը, գնորդի հավանական ուշադրությունը, արտադրանքի տեսականին ընդլայնելու հավանականությունը, ապրանքների մրցունակությունը և այլն) գնահատման արդյունքում *(տե՛ս, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/4241/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերաքննիչ բողոքի մյուս հիմքերը քննության առնելու և դրանց հիմնավորվածությունը ստուգելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4651/05/12
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4651/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոբերտ Հովհաննիսյանի ներկայացուցիչ Էմմա Դավթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Ռոբերտ Հովհաննիսյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձ Խաչատուր Խաչատրյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր)՝ Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումը մասնակիորեն՝ 150,8քմ մակերեսով հողամասի մասով և 35,1քմ մակերեսով շինության մասով, և Երևան քաղաքի Նորքի փողոցի թիվ 35/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի անվամբ Կադաստրի Մարաշ տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորաբաժանում) կողմից 02.09.2009 թվականին Մ4-3-9-000010 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Հովհաննիսյանը պահանջել է մասնակիորեն՝ 150,8քմ մակերեսով հողամասի մասով և 35,1քմ մակերեսով շինության մասով, անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումը, ինչպես նաև մասնակիորեն անվավեր ճանաչել Խաչատուր Խաչատրյանի անվամբ Ստորաբաժանման կողմից Երևան քաղաքի Նորքի փողոցի թիվ 35/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 02.09.2009 թվականին Մ4-3-9-000010 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 31.10.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.06.2014 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 31.10.2013 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Քաղաքապետարանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ, 38-րդ, և 63-րդ հոդվածները, սխալ է կիրառել նույն օրենքի 10-րդ և 43-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքը, խախտել է գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 26-րդ և 65-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ինչի արդյունքում թույլ տրված դատական սխալի հետևանքով Ռոբերտ Հովհաննիսյանը զրկվել է Երևան քաղաքի Նորքի փողոցի թիվ 35 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված հասցեում գտնվող անշարժ գույքը կառուցվել է դեռևս 1953 թվականին, պատկանել է Ռոբերտ Հովհաննիսյանի և Խաչատուր Խաչատրյանի իրավանախորդին՝ Ավագ Խաչատրյանին, որի մահից հետո դրա նկատմամբ բոլոր իրավունքները փոխանցվել են նրա բոլոր ժառանգներին: Այսինքն՝ սույն գործով վիճելի անշարժ գույքի նկատմամբ կարող էին վերականգնվել Ավագ Խաչատրյանի ոչ թե միայն մեկ ժառանգի, այլ բոլոր ժառանգների իրավունքները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշմամբ խախտվել են Ռոբերտ Հովհաննիսյանի իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ գործում առկա գրավոր ապացույցների և վկաների ցուցմունքների համադրման արդյունքում, ինչպես նաև Խաչատուր Խաչատրյանի տված բացատրությամբ հաստատվում է այն փաստը, որ վիճելի հասցեում առկա են եղել մի քանի տնատիրություններ՝ իրենց առանձնացված մուտքերով և փաստացի զբաղեցված բնակելի և օժանդակ մակերեսներով: Այդ տնատիրություններից մեկը (սույն գործով վիճելի երկու սենյակները) վերանորոգել և առանձին մուտք բացելով՝ տիրապետել է Ռոբերտ Հովհաննիսյանը, իսկ նրա բացակայության ժամանակ այդ սենյակներն այլ անձի կողմից չեն օգտագործվել:

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման համար միայն վիճելի հասցեում բնակվելն ու հաշվառված լինելը բավարար չեն, քանի որ նշված օրենքը կարգավորում է ոչ թե սեփականության իրավունքի ծագման, այլ արդեն իսկ ծագած սեփականության իրավունքի վերականգնման հարցերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Քաղաքապետարանի կողմից չի պահպանվել հարուցված վարչական վարույթի մասին դրա մասնակիցներին ծանուցելու օրենսդ-

րական պահանջը, ինչի հետևանքով Ռոբերտ Հովհաննիսյանը զրկված է եղել սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լսված լինելու, ապացույցներ ներկայացնելու և իր իրավունքները պաշտպանելու արդյունավետ միջոցի իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 31.10.2013 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վերաքննիչ դատարանը բազմակողմանիորեն գնահատել է սույն գործով ներկայացված բոլոր ապացույցները և կայացրել է հիմնավորված դատական ակտ: Այսպես, սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների հիման վրա, որոնք հաստատում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային իրավունքները վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական և փաստական հիմքերի առկայությունը: Խաչատուր Խաչատրյանի ներկայացուցչի կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրված դիմումում և ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները կասկածի տակ դնելու որևէ հիմք Քաղաքապետարանը չի ունեցել: Այդ փաստաթղթերը Ռոբերտ Հովհաննիսյանի վերաբերյալ որևէ տեղեկություն չեն պարունակել, իսկ Դատարանը չի անդրադարձել սույն գործում առկա Ստորաբաժանման ղեկավարի գրություններին: Բացի այդ, Ռոբերտ Հովհաննիսյանի ներկայացուցիչը չի հիմնավորել վիճելի հասցեում գտնվող 150,8քմ մակերեսով հողամասը և 35,1քմ մակերեսով շինությունը Ռոբերտ Հովհաննիսյանին պատկանելու հանգամանքը: Հետևաբար վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետին հասցեագրված 05.12.2008 թվականի դիմումով Խաչատուր Խաչատրյանը խնդրել է <<28.06.2008 թվականի թիվ ՀՕ-117-Ն օրենքի համաձայն օրինականացնել Նորքի թիվ 35 բնակելի տունը և հողամասը>> **(հատոր 1-ին, գ.թ. 99):**

2) 15.12.2008 թվականի թիվ 55Խ-2076 գրությամբ Քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետը խնդրել է Ստորաբաժանման ղեկավարին Քաղաքապետարան հասցեագրված Խաչատուր Խաչատրյանի դիմումի՝ Նորքի թիվ 35 հասցեում գտնվող բնակելի տան գույքային իրավունքների վերականգնման հարցի քննարկման համար տալ տեղեկատվություն քաղաքացու կողմից տնօրինվող տան վերաբերյալ՝ զավթած հողամասի և նրա վրա առկա շինությունների, օրինական տնօրինվող հողամասի (նշելով հիմք հանդիսացող փաստաթղթերի գրանցման տարեթիվը) և այլ անձանց գույքային իրավունքների մասով, եթե այդպիսիք կան **(հավելված, գ.թ. 66):**

3) Ի պատասխան վերոնշյալ գրության՝ Ստորաբաժանման ղեկավարը 17.12.2008 թվականին գրությամբ հայտնել է Քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին, որ համաձայն կադաստրային գործի տվյալների՝ Նորքի թիվ 35 հասցեով Խաչատուր Խաչատրյանի անվամբ սեփականության իրավունքով անշարժ գույք գրանցված չէ **(հավելված, գ.թ. 65):**

4) 04.03.2009 թվականի թիվ 20-Ել-1488 գրությամբ Նորք թիվ 35 հասցեում իրեն պատկանող բնակելի տան կարգավիճակի մասին Քաղաքապետարան հասցեագրված Խաչատուր Խաչատրյանի դիմումի կապակցությամբ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը Քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին հայտնել է հետևյալը. <<(...) Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել

է, որ նշված հասցեում հողամասի մակերեսը փաստացի կազմում է 319,41քմ, որն ամբողջությամբ տնօրինվում է առանց փաստաթղթերի (...)>> **(հատոր 1-ին, գ.թ. 96):**

5) Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն, 13.11.2008 թվականի թիվ 1328-Ն որոշումներով, 18.03.2009 թվականին ընդունել է <<Նորքի փողոցի Հ.35/1 բնակելի տան նկատմամբ Խաչատուր Ժորայի Խաչատրյանի գույքային իրավունքները վերականգնելու, 19,41քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> թիվ 1430-Ա որոշումը, որի 1-ին կետով վերականգնվել է Նորքի փողոցի թիվ 35/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 319,41քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, իսկ նույն որոշման 6-րդ կետով Նորքի փողոցի թիվ 35 հասցեի բնակելի տանը տրամադրվել է հասցե՝ <<Նորքի փողոցի թիվ 35/1 տուն>> **(հատոր 1-ին, գ.թ. 12-13):**

6) <<Չափագրող Մեկ>> ՍՊԸ-ի կողմից տրամադրված 20.07.2012 թվականի թիվ Ել-38ա տեղեկանքի և կից հատակագծերի համաձայն՝ Նորքի փողոցի թիվ 35/1 հասցեում հայցվորի կողմից փաստացի օգտագործվում է 150,8քմ մակերեսով հողատարածք, որից 68,4քմ մակերեսը՝ շինությունների տակ, իսկ 82,4քմ մակերեսն օգտագործվում է որպես ընդհանուր անցում (ճանապարհ), ինչպես նաև 58քմ ներքին մակերեսով բնակելի տուն, որից 35,1քմ մակերեսն օրինական է, իսկ 22,9քմ մակերեսն ինքնակամ է կառուցված **(հատոր 1-ին, գ.թ. 28-30):**

7) Երևան քաղաքի Նորքի փողոցի բնակիչներ Անուշավան Վիրաբյանի, Սահիս Եղիազարյանի և Նորա Համբարձումյանի կողմից 20.06.2012 թվականին տրված հայտարարության համաձայն՝ իրենք երկար տարիներ բնակվել են Երևան քաղաքի Նորքի փողոցում և ճանաչում են նույն փողոցի թիվ 35 տան բնակիչներ Ավագ Խաչատրյանին, նրա որդիներ Ալբերտ Խաչատրյանին, Ժորա Խաչատրյանին և Ռոբերտ Հովհաննիսյանին: Վերջիններս բնակվել են Ավագ Խաչատրյանին պատկանող թիվ 35 տանը: Ավագ Խաչատրյանը մահացել է 1992 թվականին, վերջինիս մահից հետո նրա որդիներն առանձնացված տնատիրություններով տիրապետել են Ավագ Խաչատրյանին պատկանող վերը նշված հասցեն: Ռոբերտ Ավագի Հովհաննիսյանը թեև ժամանակավորապես բացակայել է Հայաստանից, սակայն պարբերաբար վերադարձել է, բնակվել է այդ հասցեում, հոգացել է գույքի պահպանման համար, վերակառուցել է, տիրապետել և օգտագործել է իր առանձնացված տունը, որն ունի առանձին մուտք և ներկայումս էլ այն տիրապետում է իր ընտանիքով **(հատոր 1-ին, գ.թ. 15):**

8) Սույն գործի քննության ընթացքում վկաներ Վրեժ Գրիգորյանը, Գրիշա Պետրոսյանը, Գագիկ Գրիգորյանը, Լյուդվիգ Հովհաննիսյանը, Գուրգեն Հովհաննիսյանը և Սահիս Եղիազարյանը ցուցմունք են տվել այն մասին, որ Ռոբերտ Հովհաննիսյանը փաստացի որպես սեփական գույք տիրապետել է Երևան քաղաքի Նորքի թիվ 35 հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասը **(հիմք՝ դատական նիստերի արձանագրություններ, հատոր 2-րդ, գ.թ. 62-66, 92-95, 133)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ օրենսդրական

համակարգում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման իրավական կառուցակարգի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքը կիրառելի է իրավունք հաստատող փաստաթղթերը (քաղաքաշինական փաստաթղթեր, հողհատկացման հիմքեր և այլն) չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ վարչական վարույթի նկատմամբ.

2. արդյո՞ք վարչական մարմնի կողմից ընդունված անհատական իրավական ակտը, որը ճանաչում է արդեն իսկ ծագած իրավունքի առկայությունը դրա վերականգնման միջոցով, հանդիսանում է վարչական ակտ.

3. արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթին պետք է մասնակից դարձվեն այդ անշարժ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող բոլոր անձինք.

4. արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով կարող է վերականգնվել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն այն պայմաններում, երբ այդ անշարժ գույքը փաստացի որպես սեփական գույք տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձի կողմից, որը ևս համապատասխան իրավունք ունի:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմիննե-

րի գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի <<բ>> կետում նշված վարույթիմասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն հոդվածի 2-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համա-

ձայն՝ Երևան քաղաքի վարչական տարածքում մինչև 15.05.2001 թվականը կառուցված և նույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (...) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա նույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված Երևանի քաղաքապետի որոշումը, որում պարտադիր նշվում են իրավունք ձեռք բերող ֆիզիկական անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին), բնակելի տան հասցեն, տեղեկատվություն բնակելի տան կառուցման տարեթվի մասին, տեղեկատվություն այն մասին, որ անշարժ գույքը բավարարում է նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները: Երևանի քաղաքապետի որոշման հետ գրանցող մարմին է ներկայացվում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համապատասխան հողամասի հատակագիծը: Նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված 300 քառակուսի մետր հողամասից ավել զբաղեցված հողամասի առկայության դեպքում ավել օգտագործվող հողամասը սահմանված կարգով օտարվում է դրա կադաստրային արժեքով: Նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում Երևանի քաղաքապետի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում, բացառությամբ, եթե նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով օրենսդիրը կարգավորել է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված որոշակի կատեգորիայի անշարժ գույքի նկատմամբ այդ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման և պատշաճ ձևակերպման հետ կապված հարաբերությունները: Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը (քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կամ հողհատկացման հիմքերը) չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքը համարվում է այն որպես սեփական գույք տիրապետող ֆիզիկական անձանց սեփականությունը: Իր նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով նշված օրենքի կարգավորման առարկային՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով կարգավորվում են օրենքով սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահ-

մանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի սեփականատիրոջ իրավունքների վերականգնման հարցերը: (...) Վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման համար միայն այդ հասցեում հաշվառվելը և բնակվելը բավարար չեն <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար, քանի որ օրենքը կարգավորում է ոչ թե սեփականության իրավունքի ծագման, այլ արդեն իսկ ծագած սեփականության իրավունքի վերականգնման խնդիրը *(տե՛ս, Նարինե, Լիանա և Օֆելյա Թովմասյաններն ընդդեմ երևանի քաղաքապետարանի, Գագիկ Թովմասյանի և այլոց թիվ ՎԴ/1864/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010 թվականի որոշումը):*

Այսպիսով, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքի նկատմամբ վերականգնվում է այն ֆիզիկական անձի սեփականության իրավունքը, ով փաստացի տիրապետում է այդ անշարժ գույքը՝ որպես սեփական գույք: Ընդ որում, խոսքը վերաբերում է այն ֆիզիկական անձանց, ովքեր ոչ միայն փաստացի տիրապետում են համապատասխան անշարժ գույքը, այլ նաև հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, որոնց սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման գործընթացն իրենից ներկայացնում է համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթ, քանի որ եզրափակվում է համապատասխան վարչական ակտով, այն է՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում վարչական վարույթը վարչական մարմնի, մասնավորապես՝ ՀՀ նախարարությունների և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինների տեղական ինքնակառավարման մարմինների՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է, իսկ վարչական ակտն իրենից ներկայացնում է արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նշված դրույթի շրջանակներում, որպես վարչական ակտի տարատեսակ, ներառված է բարենպաստ վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումը վարչական ակտ է, քանի որ համապատասխանում է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված՝ վարչական ակտի հասկացության սահմանմանը: Ըստ այդ սահմանման՝ վարչական ակտին բնորոշ հատկանիշներն են՝ վարչական մարմնի անհատական ակտ լինելը, արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի ոլորտում ընդունված լինելը, կոնկրետ գործի կարգավորումը, իրավունքների և պարտականությունների սահմանումը, փոփոխումը, վերացումը կամ ճանաչումը:

Այսպես՝

- Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումն անհատական ակտ է, քանի որ վերաբերում է որոշակի ֆիզիկական անձի, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր. այն ուղղված է Խաչատուր Խաչատրյանին,
- Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումն ունի արտաքին ներգործություն, քանի որ առնչվում է ֆիզիկական անձի, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում է վարչական մարմնի և ֆիզիկական անձի միջև ծագած իրավահարաբերությունները,
- Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի, այն է՝ Երևանի քաղաքապետի իրավական նորմի հիման վրա (որն ի սկզբանե ընդունվել է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով) կատարված միակողմանի կարգադրություն է՝ ուղղված ֆիզիկական անձին՝ Խաչատուր Խաչատրյանին,
- Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումն ընդունվել է կոնկրետ գործի կարգավորման նպատակով, այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձի՝ Խաչատուր Խաչատրյանին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ ֆիզիկական անձի իրավունքի ճանաչմանը,
- Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական անձի համար, քանի որ դրանով վարչական մարմինը՝ Երևանի քաղաքապետը, ճանաչելով անձի մոտ արդեն իսկ ծագած իրավունքի առկայությունը, դրանով իսկ բարելավել է Խաչատուր Խաչատրյանի իրավական և փաստացի դրությունը:

Օրենսդիրը հստակ սահմանել է, որ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեության՝ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման համար անհրաժեշտ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը: Երևանի քաղաքապետը կարող է որոշում կայացնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքները վերականգնելու մասին միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում եկել է այն եզրահանգման, որ դիմում ներկայացրած ֆիզիկական անձի, ինչպես նաև այդ դիմումում նշված անշարժ գույքի կարգավիճակը լիովին համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող Երևանի քաղաքապետի որոշման հիման

վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին իրավունք է վերապահում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը:

Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է, որ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում Երևանի քաղաքապետի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում: Եթե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը, որը համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին, փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է մի քանի ֆիզիկական անձանց կողմից, որոնք այդ անշարժ գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներ ունեն, ապա վարչական մարմինն իրավասու չէ վերականգնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն ամբողջ անշարժ գույքի նկատմամբ: Տվյալ պարագայում իրավասու վարչական մարմինը կամ կարող է իր որոշմամբ վերականգնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփականը) տիրապետող միայն մեկ ֆիզիկական անձի սեփականության իրավունքն անշարժ գույքի այն մասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի որպես սեփական գույք տիրապետվում է կամ կարող է վերականգնել այդ անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետող բոլոր ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը՝ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի տեսքով, եթե առկա է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը: Սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնությունը չի պահանջվում միայն այն դեպքում, եթե ձեռք բերվող ընդհանուր սեփականությանիրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը:

Հետևաբար վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, inter alia, այն հանգամանքը, թե արդյոք ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումում նշված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, թե՝ ոչ: Այն դեպքում, երբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը դիմում ներկայացրած անձից բացի փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, վարչական մարմինը պարտավոր է այդ ֆիզիկական անձանց ևս մասնակից դարձնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վարչական վարույթին՝ նրանց որպես երրորդ անձ ներգրավելու միջոցով, ինչը թույլ կտա ապահովել վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Նշված իրավանորմում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայ-

մանագրերում: Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ իրավական համակարգում սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի սեփականատիրոջ իրավունքների վերականգնման վերաբերյալ վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները կարգավորվում են իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով սահմանված չէ վերը նշված վարչական վարույթում երրորդ անձանց վերաբերյալ որևէ առանձնահատկություն, ինչը նշանակում է, որ այդ վարչական վարույթում երրորդ անձանց կարգավիճակին առնչվող հարցերի վերաբերյալ կիրառելի է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքում օրենսդիրը սահմանել է, որ երրորդ անձինք վարչական վարույթի այն մասնակիցներն են, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, այսինքն՝ այն անձինք, որոնց համար վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը կարող է առաջացնել իրավական հետևանքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովելու վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցնե-

րից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություննե-րով կամ անգործությամբ *(տե՛ս, Իվանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, պարբ. 70):* Հետևաբար վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին *(տե՛ս, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):*

Այսպիսով, ՀՀ իրավական համակարգում օրենսդրի կողմից երրորդ անձանց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորություն նախատեսելու հիմնական նպատակը երրորդ անձանց սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելն է: Սակայն օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքների պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը *(տե՛ս, Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում հավելել, որ <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 27.04.2010 թվականի թիվ ՀՕ-50-Ն ՀՀ օրենքով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, ինչի արդյունքում օրենսդիրն իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակին վերաբերող իրավակարգավորումները հավասարապես տարածել է ոչ միայն Երևան քաղաքի վարչական տարածքում, այլև Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների վարչական տարածքներում գտնվող համապատասխան կատեգորիայի անշարժ գույքի վրա՝ սահմանելով, որ յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքում գտնվող օրենքով նախատեսված պայմաններին ու պահանջներին բավարարող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված տվյալ համայնքի ղեկավարի որոշումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի իրավադրույթների մեկնաբանության դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է Խաչատուր Խաչատրյանի դիմումի հիման վրա, որով վերջինս խնդրել է Երևանի քաղաքապետին <<28.06.2008 թվականի թիվ ՀՕ-117-Ն օրենքի համաձայն օրինականացնել Նորքի թիվ 35 բնակելի տունը և հողամասը>>: Երևանի քաղաքապետը 18.03.2009 թվականին ընդունել է <<Նորքի փողոցի Հ.35/1 բնակելի տան նկատմամբ Խաչատուր Ժորայի Խաչատրյանի գույքային իրավունքները վերականգնելու, 19,41քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> թիվ 1430-Ա որոշումը, որի 1-ին կետով վերականգն-

վել է Նորքի փողոցի թիվ 35/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 319,41քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

Դատարանը 31.10.2013 թվականի վճռով բավարարել է Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին Ռոբերտ Հովհաննիսյանի պահանջը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտն ընդունելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում ակնհայտ է եղել, որ ընդունվող վարչական ակտով շոշափվելու են նաև Ռոբերտ Հովհաննիսյանի իրավունքները և օրինական շահերը, քանի որ Երևան քաղաքի Նորքի թիվ 35 հասցեում գտնվող անշարժ գույքը սկսած 1953 թվականից պատկանել է Խաչատուր Խաչատրյանի և Ռոբերտ Հովհաննիսյանի իրավանախորդին: Մինչդեռ վերջինս չի ծանուցվել հարուցված վարչական վարույթի մասին և զրկված է եղել այդ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքի իրացման հնարավորությունից, ինչն էլ հանգեցրել է վարչական վարույթում փաստական հանգամանքների քննարկման բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության հիմնարար սկզբունքի խախտման: Այսինքն՝ վիճարկվող վարչական ակտն ընդունվել է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ վարչական մարմինը չի խախտել <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների պահանջները, քանի որ Ռոբերտ Հովհաննիսյանի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել, թե Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշմամբ իր որ իրավունքն է խախտվել: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի եզրահանգմամբ Դատարանը սխալ է գնահատել սույն գործում առկա ապացույցները, չի անդրադարձել այն հանգամանքին, որ վիճարկվող վարչական ակտն ընդունվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ, որի հիման վրա տվյալ ֆիզիկական անձն իրավական հնարավորություն է ստանում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը: Այդպիսի որոշման ընդունման նախադրյալը վարչական մարմնի կողմից վարչական վարույթի ընթացքում նշված օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը պարզելն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Խաչատուր Խաչատրյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացված, սույն գործով վիճարկվող Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշմամբ լուծվել է Երևան քաղաքի Նորքի թիվ 35 (35/1) հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան և հողամասի նկատմամբ սեփականության

իրավունքի վերականգնման հարցը: Սույն գործի քննության ընթացքում հիմնավորվել է, որ Երևան քաղաքի Նորքի թիվ 35 (35/1) հասցեի բնակելի տունը դեռևս 1953 թվականից պատկանել է Ռոբերտ Հովհաննիսյանի և Խաչատուր Խաչատրյանի իրավանախորդներին՝ Ռոբերտ Հովհաննիսյանի հանգուցյալ ծնողներին, իսկ Խաչատուր Խաչատրյանը Ռոբերտ Հովհաննիսյանի հանգուցյալ եղբոր որդին է: Ռոբերտ Հովհաննիսյանը պարբերաբար բնակվել է այդ հասցեի բնակելի տանը, իսկ նրա բացակայության ժամանակ վերջինիս կողմից օգտագործվող սենյակների դուռը փակ է եղել, այսինքն՝ որևէ այլ անձի կողմից չի տիրապետվել ու չի օգտագործվել:

Փաստորեն, Երևան քաղաքի Նորքի թիվ 35 (35/1) հասցեի բնակելի տան մի հատվածը՝ որպես առանձին գույքային միավոր, փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվել է Ռոբերտ Հովհաննիսյանի կողմից, որը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով իրավունք ունի վերականգնելու իր սեփականության իրավունքն իր իրավանախորդներին պատկանած իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի՝ Երևան քաղաքի Նորքի թիվ 35 (35/1) հասցեի բնակելի տան՝ իր կողմից փաստացի տիրապետվող մասի նկատմամբ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Երևանի քաղաքապետը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների ուժով պարտավոր էր ծանուցել Ռոբերտ Հովհաննիսյանին 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին և ապահովել այդ վարչական վարույթի ընթացքում վերջինիս լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը, քանի որ նշված վարչական վարույթի ընթացքում քննարկվել է Նորքի թիվ 35 (35/1) հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու հարցը, և ընդունվող վարչական ակտով կարող էին շոշափվել Ռոբերտ Հովհաննիսյանի իրավունքները և օրինական շահերը: Մինչդեռ սույն գործում առկա չէ որևէ ապացույց Ռոբերտ Հովհաննիսյանին նշված վարչական վարույթին մասնակից դարձնելու և նրան վարույթի մասին ծանուցելու վերաբերյալ: Այսինքն՝ Երևանի քաղաքապետը չի կատարել Ռոբերտ Հովհաննիսյանին վարչական վարույթին մասնակից դարձնելու և նրան ծանուցելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը, ինչի արդյունքում չի ապահովվել Ռոբերտ Հովհաննիսյանի լսված լինելու իրավունքը՝ վերջինիս զրկելով իր իրավունքները գործնականում լիարժեք պաշտպանելու հնարավորությունից:

Բացի այդ, ինչպես նշվեց, Երևան քաղաքի Նորքի թիվ 35 (35/1) հասցեի բնակելի տունը փաստացի որպես սեփական գույք՝ տիրապետվել է ոչ միայն Խաչատուր Խաչատրյանի, այլ նաև Ռոբերտ Հովհաննիսյանի կողմից: Սույն գործում առկա՝ <<Չափագրող Մեկ>> ՍՊԸ-ի կողմից տրամադրված 20.07.2012 թվականի թիվ Ել-38ա տեղեկանքի և կից հատակագծերի համաձայն՝ Երևան քաղաքի Նորքի փողոցի թիվ 35/1 հասցեում հայցվորի կողմից փաստացի օգտագործվում է 150,8քմ մակերեսով հողատարածք, որից 68,4քմ մակերեսը զբաղեցված է շինություններով, իսկ 82,4քմ մակերեսն օգտագործվում է որպես ընդհանուր անցում (ճանապարհ), ինչպես նաև 58քմ ներքին մակերեսով բնակելի տուն, որից 35,1քմ մակերեսն օրինական է, իսկ 22,9քմ մակերեսն ինքնակամ է կառուցված: Հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժով Երևան քաղաքի Նորքի փողոցի թիվ 35 (35/1) հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի սեփականության իրավունքը չէր կարող վերականգնվել այդ հասցեում գտնվող այն անշարժ գույքի նկատմամբ, որը փաստացի որպես սեփական գույք տիրապետվում էր այլ անձի՝ Ռոբերտ Հովհաննիսյանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշումը մասամբ ընդունվել է օրենքի՝

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածների, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի խախտմամբ: Հետևաբար Դատարանն իր վճռում իրավացիորեն է եզրահանգել, որ Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի <<Նորքի փողոցի Հ.35/1 բնակելի տան նկատմամբ Խաչատուր Ժորայի Խաչատրյանի գույքային իրավունքները վերականգնելու, 19,41քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> թիվ 1430-Ա որոշումը մասնակիորեն՝ Երևան քաղաքի Նորքի թիվ 35 հասցեում գտնվող 150,8քմ մակերեսով հողամասի և 35,1քմ մակերեսով շինության նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի սեփականության իրավունքը վերականգնելու մասով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է և պետք է այդ մասով ճանաչվի անվավեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Նորքի թիվ 35/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է Երևանի քաղաքապետի 18.03.2009 թվականի թիվ 1430-Ա որոշման հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի Նորքի փողոց թիվ 35 (35/1) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Խաչատուր Խաչատրյանի անվամբ Ստորաբաժանման կողմից 02.09.2009 թվականին Մ4-3-9-000010 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն՝ 150,8քմ մակերեսով հողամասի և 35,1քմ մակերեսով շինության մասով, ևս պետք է ճանաչվի անվավեր:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Ռոբերտ Հովհաննիսյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռոբերտ Հովհաննիսյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Քաղաքապետարանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 31.10.2013 թվականի վճռին:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Ռոբերտ Հովհաննիսյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/12145/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ա. Բաբայան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/12145/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Նոյան Տապան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Օլգա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.05.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Նոյան Տապան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության (իրավանախորդ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն) (այսուհետ՝ Տեսչություն), երրորդ անձ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ Տեսչության գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու և Ընկերությանը հասցված վնասը՝ 20.651.875 ՀՀ դրամի չափով, հատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Տեսչության գործողությունները (անգործությունը) և պարտավորեցնել վերջինիս հատուցել Ընկերությանը հասցված վնասը՝ 20.651.875 ՀՀ դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 18.12.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.05.2015 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Դատարանի 18.12.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 10-րդ հոդվածը, 80-րդ հոդվածի 1-ին մասը, 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 152-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերը, այսինքն՝ այն վեճերը, որոնք պայմանավորված են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց հանրային ոլորտում իրականացված վարչարարությամբ՝ գործողություններով կամ անգործությամբ կամ վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտերով, որոնք խախտել են կամ անմիջականորեն կարող են խախտել իրավաբանական (ֆիզիկական) անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Սույն գործով հայցի առարկան է՝ Տեսչության գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելն ու Ընկերությանը հասցված վնասը՝ 20.651.875 ՀՀ դրամի չափով, Տեսչությանը հատուցելուն պարտավորեցնելը: Ուստի սույն գործի շրջանակներում որպես հիմնական պահանջ վիճարկվում են հարկային մարմնի գործողությունները (անգործությունը), հետևաբար առկա է հանրային իրավահարաբերություններից ծագած վեճ: Մասնավորապես, ցեսիայի պայմանագրերը կնքելու պայմաններում Ընկերությունը զրկվել է զիջված պահանջի իրավունքը տնօրինելու հնարավորությունից: Մինչդեռ այդ հնարավորությունն ունեցել է հարկային մարմինը, որը, ցեսիայի պայմանագրերը կատարելուն ձեռնամուխ լինելով, պետք է ստացված գումարներն ուղղեր Ընկերության հարկային պարտավորությունների մարմանը: Սակայն վերջինս, դրսևորելով անգործություն, չի իրացրել իրեն փոխանցված պահանջի իրավունքը, ինչի հետևանքով, մի կողմից Ընկերությունը չի կարողացել կատարել իր հարկային պարտավորությունները, մյուս կողմից, զրկվել է նշված գումարները դատական կարգով պարտապանից բռնագանձելու հնարավորությունից: Հետևաբար միանշանակ է, որ հայցվորի առաջին պահանջն առնչվում է պետական մարմնի կողմից իրականացված վարչարարությանը, այն բխում է հանրային իրավահարաբերություններից, ուստի ենթակա է վարչական դատավարության կարգով քննության:

Բացի այդ, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.05.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «կայացնելով նոր դատական ակտ» կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 10.11.2011 թվականին Ընկերությունը (Ցեդենտ)՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Դանիելյանի մի կողմից, և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (Ցեսիոներ)՝ ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչության պետ Ա. Հարությունյանի մյուս կողմից, կնքել են «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագիր, որի 1.1-րդ կետի համաձայն՝ Ցեդենտը Ցեսիոներին է զիջել, իսկ Ցեսիոներն ընդունել է «Գործարար Տիեզերք» ՍՊԸ-ի (պարտապան) նկատմամբ որպես պարտատիրոջ ունեցած 16.000.000 ՀՀ դրամ պահանջի իրավունքը, որն առաջացել է Ցեդենտի և «Գործարար Տիեզերք» ՍՊԸ-ի միջև 20.03.2009 թվականին կնքված տպագրական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա **(հատոր 1-ին, գ.թ 38-40).**

2) 23.01.2012 թվականին Ընկերությունը (Ցեդենտ)՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ս.Դանիելյանի մի կողմից, և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (Ցեսիոներ)՝ ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության պետ Ա. Հարությունյանի մյուս կողմից, կնքել են «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագիր, որի 1.1-րդ կետի համաձայն՝ Ցեդենտը Ցեսիոներին է զիջել, իսկ Ցեսիոներն ընդունել է «Հեյդելբերգ Երևան» ՍՊԸ-ի (պարտապան) նկատմամբ որպես պարտատիրոջ ունեցած 4.651.875 ՀՀ դրամ պահանջի իրավունքը, որն առաջացել է Ցեդենտի և «Հեյդելբերգ Երևան» ՍՊԸ-ի միջև 14.03.2011 թվականին կնքված պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագրի հիման վրա **(հատոր 1-ին, գ.թ 36-37).**

3) 10.11.2011 թվականին կնքված «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագրի գործողությունը հարկային մարմնի կողմից դադարեցնելու վերաբերյալ Ընկերությունն իրազեկվել է 07.02.2013 թվականի թիվ 938/4 գրությամբ, իսկ 23.01.2012 թվականին կնքված «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ՝ 01.03.2013 թվականի թիվ 1783/4 գրությամբ **(հատոր 1-ին, գ.թ. 48-49**).

4) ՀՀ վարչական դատարանի 03.05.2012 թվականի թիվ ՎԴ/8045/05/11 գործով օրինական ուժի մեջ մտած վճռով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության հայցը բավարարվել է մասնակի՝ Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 23.288.500 ՀՀ դրամ՝ որպես չկատարված հարկային պարտավորություն **(հատոր 1-ին, գ.թ 50-52):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի հիմքով կնքված պահանջի զիջման (ցեսիայի) պայմանագրին առնչվող վարչական մարմնի գործողության իրավական բնույթի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի հիմքով կնքված պահանջի զիջման (ցեսիայի) պայմանագրին առնչվող վարչական մարմնի գործողությունը (անգործությունը) հանդիսանում է վարչարարություն և արդյո՞ք դրա իրավաչափությունը ենթակա է քննարկման ու գնահատման վարչադատավարական կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

Վերը նշված իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչադատավարական կարգով քննության ենթակա են բացառապես այն հարաբերություններից ծագած վեճերը, որոնց բնույթը հանրային է:

Անդրադառնալով հանրային իրավահարաբերությունների հատկանիշների մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում *(տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ հանրային իրավահարաբերությունների մեկ այլ բնորոշ առանձնահատկությունն այն է, որ պետական կառավարման մարմինների համար սահմանված լիազորությունների նպատակն այդ մարմինների կողմից իրենց վրա դրված հանրային պարտականությունների կատարումն է: Այդ պատճառով էլ հանրային իրավահարաբերությունների նորմերը, որպես կանոն, սահմանում են, թե ինչպես պետք է իշխանական լիազորություններով օժտված մարմիններն օգտվեն իրենց լիազորություններից: Այլ կերպ ասած՝ հանրային իրավահարաբերությունում իշխանական լիազորություններով օժտված մարմինները գործում են օրենքով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում և պարտավոր են կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային իրավահարաբերությունների բովանդակությունը պետք է կազմի հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը:

Պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում վարչական մարմինների գործողությունը կամ անգործությունը չի կարող որակվել որպես քաղաքացիաիրավական, քանի որ քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներն իրենց իրավազորությունների ինքնուրույն տիրապետողներն են: Մինչդեռ պետական մարմինները՝ որպես հանրային իրավահարաբերություններում իշխանության կրողներ, իրենց իրավազորությունների լիիրավ տիրապետողներ չեն, քանի որ վերջիններս, ըստ էության, իրականացնում են պետության իրավունքներն ու պարտականությունները:

Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հանրային իրավունքի նորմերը, պետական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում ընձեռելով որոշակի իրավունքներ, միաժամանակ սահմանում են, թե ինչպես այդ մարմինները պետք է օգտվեն նշված իրավունքից: Ընդ որում, իրավական պետությունում օրինականության սկզբունքին համահունչ գործադիր-կարգադրիչ գործունեություն իրականացնելիս վարչական մարմինների համար, որպես կանոն, այդպիսի իրավունքներից օգտվելը վերջիններիս համար կրում է պարտադիր բնույթ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին համահունչ, վարչական մարմիններն իրավունք ունեն գործելու

միայն Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան և դրանց շրջանակներում, վարչական մարմիններն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Այլ կերպ ասած՝ վարչական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության համար ընձեռնված իրավունքներն ինքնանպատակ չեն, այլ գործիք են և միջոց՝ իրականացնելու իրավական պետության բովանդակային սկզբունքները:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ հարկ վճարողի չկատարած՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի պարտավորությունների մարմանը:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դրանով հարկային մարմնին վերապահվել է հարկ վճարողի հետ պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելու իրավունք, որով հարկային մարմինը ձեռք է բերում պարտապանի նկատմամբ հարկ վճարողի պահանջի իրավունքը, և որի նպատակն է հարկ վճարողի չկատարած հարկային պարտավորությունների գանձումը՝ պարտապանից ստացված գումարները հարկ վճարողի պարտավորությունների մարմանն ուղղելու միջոցով:

ՀՀ սահմանադրական դատարանը, 10.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1106 որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը, նշել է, որ վիճարկվող նորմում հիշատակված ցեսիայի պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, իսկ տվյալ օրենսդրական դրույթների հիման վրա առաջացած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, անկախ այն հանգամանքից, որ դրանք առնչվում են նաև հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերին:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող օրենսդրության շրջանակներում ցեսիայի ինստիտուտի նախատեսումը կարևոր նշանակություն ունի ինչպես հարկատուների և պետության միջև բնականոն հարկային իրավահարաբերությունները պահպանելու, հարկատուների հարկային պարտավորությունների կատարմանն օժանդակելու, այնպես էլ գործարար շրջանակներում պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարումը երաշխավորելու և տնտեսվարողների բնականոն գործունեության շարունակականությունն ապահովելու տեսանկյունից: Նշված ինստիտուտի նախատեսումը կարևոր կանխարգելիչ նշանակություն ունի և կոչված է ապահովելու տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունն այն իրավիճակներում, երբ վերջիններս չեն կարողանում ժամանակին կատարել պետության առջև իրենց հարկային պարտավորությունները:

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ցեսիայի պայմանագրի կնքումը չի կարող ինքնանպատակ լինել: Թեև ցեսիայի պայմանագրի կնքման վերաբերյալ վիճարկվող օրենսդրական դրույթները կրում են դիսպոզիտիվ բնույթ, այդուհանդերձ, նման ընթացակարգով հարկատուի հարկային պարտավորությունների կատարման ինստիտուտը կիրառելիս հարկային մարմինները պետք է ձեռնամուխ լինեն ցեսիայի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը և ստացված գումարը հարկատուի հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելուն:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտն ավելի մեծ երաշխիքներ է ստեղծում իրավահարաբերություն-

ների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու տնտեսավարման բնականոն պայմաններ երաշխավորելու առումով: Խնդիրն այն է, որ այդ ինստիտուտի կիրառումը բխի իրավակարգավորման բովանդակությունից և ոչ իրավաչափ վարչարարությամբ չոտնահարվեն տնտեսվարող սուբյեկտների իրավունքները:

Վարչական մարմիններին գործադիր-կարգադրիչ գործունեության համար ընձեռված իրավունքների վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունների և ՀՀ սահմանադրական դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավական հիմքով ցեսիայի պայմանագիրը քաղաքացիահիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պայմանագրի կնքմամբ ծագած հարաբերությունները կրում են երկակի բնույթ՝ բովանդակելով ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական իրավահարաբերություններին բնորոշ տարրեր: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ նշված հարաբերությունների քաղաքացիահիրավական տարրն արտահայտվում է ցեսիոների (հարկային մարմնի)՝ երրորդ անձի (ցեդենտի պարտապանի) հետ փոխհարաբերություններում: Վերջինիս պարտավորությունները պետության հանդեպ պայմանավորված են ոչ թե հարկային կամ այլ բնույթի՝պարտադիր պարտավորությունների առկայությամբ, այլ ի սկզբանե ցեդենտի (հարկատուի) նկատմամբ քաղաքացիահիրավական որոշակի պարտավորություն ունենալու հանգամանքով: Վերոգրյալով պայմանավորված՝ երրորդ անձի հետ փոխհարաբերություններում իրավասու պետական մարմինը հանդես է գալիս որպես մասնավոր հարաբերությունների հավասար մասնակից՝ այդ իրավահարաբերությունների մասնակիցներին բնորոշ առանձնահատկություններով: Այլ են քննարկվող պայմանագրի հիման վրա ցեդենտի և ցեսիոների միջև ծագած հարաբերությունները: Ցեդենտի պարտավորությունները պետության հանդեպ շարունակվում են պահպանվել, քանի դեռ ցեսիայի պայմանագիրը կատարված չէ, հետևաբար այդ հարաբերություններն իրենց բնույթով շարունակում են մնալ հանրային, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում: Հետևաբար նշված իրավահարաբերություններից ցեդենտի և ցեսիոների միջև ծագած վեճերը ևս իրենց բնույթով հանրային են և ընդդատյա են ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Փաստորեն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասով (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) հարկային մարմնին վերապահված իրավունքները սերտորեն շաղկապված են, և մեկի կատարումը ենթադրում է նաև մյուսի կատարում: Ընդ որում, եթե պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքը հարկային մարմինը ձեռք է բերում որպես քաղաքացիահիրավական հարաբերության սուբյեկտ, և այդ հարաբերության նկատմամբ կիրառելի են քաղաքացիական իրավունքի նորմերը, ապա նշված պայմանագրով ձեռք բերած իրավունքներն իրացնելը և պայմանագրի հիման վրա ստացված գումարները հարկ վճարողի պարտավորությունների մարմանն ուղղելն արդեն իսկ հետապնդում են հանրային շահ, ուղղված են հարկային մարմնի՝ որպես հարկային օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմնի՝ օրենքով սահմանված խնդիրների իրագործմանը և դասվում են հանրային իրավահարաբերությունների շարքին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտի կիրառումը դիտարկվում է իբրև վարչարարություն, ինչը համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտի կիրառման առնչությամբ հարկային մարմնի կողմից տվյալ պայմանագրի կատարման վերաբերյալ դրսևորված և անձանց համար փաստական հանգամանքներ առաջացրած անգործության իրավաչափությունը ենթակա է գնահատման բացառապես վարչադատավարական կարգով՝ հանրային հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի կիրառմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Տեսչության միջև 10.11.2011 և 23.01.2012 թվականներին կնքվել են «Պահանջի իրավունքը զիջելու մասին» երկու պայմանագրեր, որոնցով Ընկերությունը զիջել է իր՝ որպես պարտատիրոջ պահանջի իրավունքը, իսկ Տեսչությունը պարտավորվել է պարտապանից գանձված գումարն ուղղել Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների մարմանը:

Տեսչությունը վերոհիշյալ պայմանագրերով նշված գումարները չի գանձել և չի ուղղել Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների մարմանը, այլ 07.02.2013 թվականի թիվ 938/4 և 01.03.2013 թվականի թիվ 1783/4 գրություններով Ընկերությանը ծանուցել է «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագրերի կատարումից միակողմանի հրաժարվելու մասին:

Դատարանը, գտնելով, որ «Պահանջի իրավունքը զիջելու մասին» վերոնշյալ պայմանագրերը չեն կարող համարվել կնքված, հետևաբար նաև չեն կարող իրավական հետևանքներ առաջացնել, քանի որ այդ պայմանագրերում որպես կողմեր չեն ներգրավվել «Գործարար Տիեզերք» ՍՊԸ-ն և «Հեյդելբերգ Երևան» ՍՊԸ-ն, որոնց ունեցած պարտավորությունների գումարներն Ընկերության նկատմամբ, պետք է գանձվեին հարկային մարմնի կողմից, եզրակացրել է, որ «Պահանջի իրավունքը զիջելու մասին» վերոնշյալ պայմանագրերի հիմքով «Գործարար Տիեզերք» ՍՊԸ-ից և «Հեյդելբերգ Երևան» ՍՊԸ-ից գումարները չգանձելով և դրանք Ընկերության պարտքերի դիմաց չուղղելով դրսևորված անգործությունը չի կարող ոչ իրավաչափ ճանաչվել, ուստի և հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, վերլուծելով վեճի իրավական բնույթը, գտել է, որ վերոնշյալ պայմանագրերը կնքելիս Տեսչությունը վարչարարություն չի իրականացրել, հետևաբար ներկայացված հայցով Ընկերության կողմից դատական պաշտպանության իրացումն ուղղված չէ վարչահիրավական հարաբերություններում հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով առկա են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված գործի վարույթը կարճելու, հետևաբար նաև Դատարանի դատական ակտը բոլոր դեպքերում բեկանման ենթակա լինելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված հիմքերը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ եզրահանգումը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անհիմն է, քանի որ տվյալ դեպքում վեճը վերաբերում է ոչ թե զուտ քաղաքացիահիրավական պայմանագրին, դրա իրավաչափությանը, այն կնքելու Տեսչության և Ընկերության իրավասությանը և այլն, որպիսի պարագայում կիրառելի կլինեին քաղաքացիահիրավական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, այլ առնչվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասում (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) ամրագրված՝ հարկային մարմնի լիազորությամբ պայմանավորված՝ Տեսչության կողմից դրսևորված անգործությանը, որը կարգավորվում է բացառապես վարչահիրավական հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերով:

Սույն գործով Ընկերությունը ներկայացրել է երկու պահանջ, որոնցից հիմնական պահանջն է ոչ իրավաչափ ճանաչել Տեսչության անգործությունը, որը դրսևորվել է վերջինիս կողմից, որպես հանրային իշխանություն իրականացնող մարմնի, «Հարկերի մա-

սին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ մասում (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) ամրագրված լիազորության չկատարմամբ և ածանցյալ պահանջը՝ այդ անգործության հետևանքով Ընկերությանը պատճառված վնասը հատուցելուն պարտավորեցնելը:

Հետևաբար «Պահանջի իրավունքը զիջելու մասին» վերը հիշատակված պայմանագրերը կնքելիս Տեսչության կողմից վարչարարություն չիրականացնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ համարելով հանդերձ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ հետևության է հանգել սույն գործով ներկայացված պահանջի բնույթի կապակցությամբ՝ գտնելով, որ տվյալ դեպքում վիճելի իրավահարաբերությունները հանրային չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցի առարկան կազմում է ոչ թե պայմանագրի դրույթների խախտումը, այլ Տեսչության կողմից ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտի կիրառման առնչությամբ դրսևորած անգործության իրավաչափության գնահատումը և դրա հետևանքով Ընկերությանը պատճառված վնասի հատուցումը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հայցվորի կողմից վիճարկվող՝ վարչական մարմնի անգործությունը դիտարկել է մասնավոր իրավահարաբերության ոլորտում և այդ հիմքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 152-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի սխալ կիրառմամբ կարճելով սույն գործի վարույթը՝ Ընկերությանը զրկել է վերաքննության կարգով Դատարանի վճիռն ըստ էության վերանայելու օրենսդրական հնարավորությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերաքննիչ բողոքի մյուս հիմքերը քննության առնելու և դրանց հիմնավորվածությունը ստուգելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.05.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0052/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0052/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռուբեն Հակոբյանի ներկայացուցիչ Վահե Սիվսիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռուբեն Հակոբյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), Երևանի Սիսկովյան 24-րդ շենքի թիվ 7 բնակարանի ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու (գրանցումը կատարված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01-006-4-30 մատյանի 000170 համարի տակ) պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռուբեն Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Սիսկովյան 24-րդ շենքի թիվ 7 բնակարանի ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (գրանցումը կատարված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01-006-4-30 մատյանի 000170 համարի տակ):

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) 09.11.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.03.2013 թվականի որոշմամբ Ռուբեն Հա-

կոբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 09.11.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.04.2013 թվականի որոշմամբ Արման Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.08.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.04.2014 թվականի որոշմամբ Արման Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 05.08.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուբեն Հակոբյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել երրորդ անձ Արման Բաղդասարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը, 31-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունները, իրավունքի գրանցման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, 24-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, 43-րդ հոդվածի «ա» կետը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն ընդունել է, որ Արման Բաղդասարյանի՝ ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցմամբ փոփոխվել են հողամասի բաժնային սեփականության մեջ մյուս սեփականատերերի, այդ թվում նաև՝ Ռուբեն Հակոբյանի բաժնեմասի չափերը (դրանք նվազել են, քանի որ կոտորակի հայտարարն ավելացել է): Վերաքննիչ դատարանն ընդունել է նաև այն փաստը, որ սեփականատերերի՝ հողամասում ունեցած բաժնեմասի փոփոխության համար բոլոր սեփականատերերի համաձայնությունը չի ստացվել (առկա չի եղել): Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հաստատել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի խախտման փաստը, սակայն առանց որևէ պատճառաբանության՝ հանգել է բոլորովին այլ եզրակացության:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը խախտել է ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնները: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը ենթակա է կիրառման այն խմբագրությամբ, որն առկա է եղել 08.06.2005 թվականի և 15.08.2005 թվականի դրությամբ, մինչդեռ, իրավահարաբերությունը, որի նկատմամբ ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը, ծագել է 14.06.2011 թվականին, քանի որ միայն այդ ժամանակ է պետական գրանցման հետևանքով տեղի ունեցել բաժնեմասերի փոփոխությունը, իսկ շինարարության թույլտվությունը կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքը նման հետևանքներ չեն առաջացրել: Հետևաբար, սույն գործով կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի այն խմբագրությունը, որը գործել է 14.06.2011 թվականի դրությամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ շինարարության թույլտվությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը կամ մեկ այլ քաղաքաշինական փաստաթուղթ չէին կարող փոխարինել շենքի սեփականատերերի համաձայնությանը, քանի որ միայն սեփականատերերը կարող էին որոշել իրենց գույքի՝ ընդհանուր սեփականության ճակատագիրը: Հետևաբար, վիճելի իրավունքի գրանցման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի՝ մնացած սե-

փականատերերի համաձայնության բացակայության պայմաններում Կոմիտեն պետք է նույն օրենքի 43-րդ հոդվածի «ա» կետի ուժով մերժեր ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 05.08.2013 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքում նշված նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ պատճառաբանություններն անհիմն են և առարկայազուրկ:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շինարարության թույլտվությունը և շինարարության շահագործման փաստագրման ակտը հանդիսանում են բարենպաստ վարչական ակտեր, որոնցով Արման Բաղդասարյանին մի դեպքում տրամադրվել է քաղաքաշինական գործունեություն իրականացնելու թույլտվություն, իսկ մյուս դեպքում դրանք հանդիսացել են հիմք նոր ստեղծվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար: Նշված վարչական ակտերը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին, դրանք ոչ վարչական, ոչ էլ դատական կարգով չեն վիճարկվել և ունեն իրավաբանական ուժ, որոնց հիմքով էլ կատարվել է Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ մյուս սեփականատերերի համաձայնություն ներկայացնելու պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի հիմքով արդեն իսկ իրականացված շինարարության շահագործման փաստագրման ակտի հիման վրա ավարտված շինության նկատմամբ պետք է կատարվի իրավունքի պետական գրանցում: Նշված պահանջը վերաբերում է սեփականատիրոջ կողմից շինարարություն իրականացնելու համար համապատասխան քաղաքաշինական փաստաթղթեր ձեռք բերելուն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի Կենտրոն ստորաբաժանման կողմից 29.09.2010 թվականին տրված թիվ 2706970 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ Կենտրոն համայնքի Սիսկովյան փողոցի 24-րդ շենքի թիվ 3 բնակարանի նկատմամբ գրանցվել է Ռուբեն Հակոբյանի սեփականության իրավունքը: Բնակարանի մակերեսը կազմել է 263,0քմ մակերես, շենքի սպասարկման համար հատկացված հողամասի ընդհանուր չափը՝ 0,100655հա մակերես, հողամասի բաժնային սեփականության մեջ Ռուբեն Հակոբյանի բաժնի չափը՝ 263/1574 **(հատոր 1-ին, գ.թ. 14-16):**

2) Կոմիտեի Կենտրոն ստորաբաժանման կողմից 14.06.2011 թվականին տրված թիվ 2691312 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ 29.03.2005 թվականի թիվ 6524 բնակարանի առուվաճառքի պայմանագրի, 08.06.2005 թվականի ճարտարապետահատակագծային առաջադրանքի, 15.08.2005 թվականին տրված թիվ 23/35-155 շինարարության թույլտվության, 22.12.2006 թվականի նախագծի, 01.06.2011 թվականի թիվ 01/19-Բ-959 շինարարության շահագործման փաստագրման ակտի հիման վրա Երևանի Սիսկովյան փողոցի 24-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ գրանցվել է Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքը: Բնակարանի մակերեսը կազմել է 450,1քմ, շենքի սպասարկման համար հատկացված հողամասի չափը կազմել է 0,1007հա մակերես, հողամասի բաժնային սեփականության մեջ Արման Բաղդասարյանի բաժնի չափը՝ 450/1574 **(հատոր 1-ին, գ.թ. 17-19):**

3) Կոմիտեի Կենտրոն ստորաբաժանման կողմից 31.03.2005 թվականին տրված թիվ 1491979 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝

Կենտրոն համայնքի Մոսկովյան փողոցի 24–րդ շենքի 223,5քմ մակերեսով թիվ 7 բնակարանի նկատմամբ գրանցվել է Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքը **(հատոր 1–ին, գ.թ. 55–56):**

4) Կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 06.06.2013 թվականի թիվ ԿԽ–2/3708 գրության համաձայն՝ Երևանի Մոսկովյան փողոցի 24–րդ շենքի բնակարանների մակերեսը 29.09.2010 թվականի դրությամբ կազմել է 1689,63քմ, որից թիվ 7 բնակարանի մակերեսը 223,5 քմ, իսկ 14.06.2011 թվականի դրությամբ՝ 1914,23քմ, որից թիվ 7 բնակարանի մակերեսը՝ 450 քմ **(հատոր 3–րդ, գ.թ. 18):**

5) Արման Բաղդասարյանին 15.08.2005 թվականին տրամադրվել է շինարարական թույլտվություն՝ Երևանի Մոսկովյան փողոցի 24–րդ շենքի թիվ 7 բնակարան հասցեում մանսարդային հարկի կառուցման շինարարական աշխատանքներ կատարելու համար **(հատոր 1–ին, գ.թ. 12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից վիճելի իրավունքի գրանցման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224–րդ հոդվածի 1–ին կետը սխալ մեկնաբանելու և կիրառելու, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21–րդ, 43–րդ հոդվածները խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին. արդյո՞ք բազմաբնակարան շենքում մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ–238–Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224–րդ հոդվածում կատարված փոփոխությունը քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրված լինելու, սակայն շինարարությունը նշված օրենքով կատարված փոփոխությունից հետո ավարտվելու պարագայում դրա արդյունքում ավելացված տարածքի նկատմամբ իրավունքի գրանցման համար անհրաժեշտ է մյուս սեփականատերերի համաձայնությունը և արդյո՞ք այդ դեպքում տեղի է ունենում հողամասի ընդհանուր սեփականության մեջ բաժինների փոփոխություն:

Նշված հարցադրումներին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ բազմաբնակարան շենքում հողամասի ընդհանուր բաժնային սեփականությունում բաժինների փոփոխության իրավակագավորումներին՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ–238–Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո և դրանցից առաջ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի ՀՕ–238–Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո, վիճելի իրավունքի պետական գրանցման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ընդհանուր բաժնային սեփականության հողամասի նկատմամբ յուրաքանչյուր բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի սեփականատիրոջ բաժինը որոշվում է տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի հարաբերությամբ այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին և արտահայտվում է կոտորակով:

Բնակարանի կամ ոչ բնակելի տարածքների սեփականատիրոջ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի բաժինները սահմանվում և գրանցվում

են շենքի կառուցման ու սպասարկման համար նախատեսված հողամասի գրանցման հետ միասին և կարող են փոփոխվել միայն շենքի բոլոր սեփականատերերի համաձայնությամբ շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու դեպքում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք կամ առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերն ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու՝ սեփականատիրոջ համաձայնությունը համարվում է նաև տվյալ սեփականատիրոջը պատկանող հողամասի և ընդհանուր գույքի չափի ավելացման կամ պակասեցման համաձայնություն:

Վերը նշված հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ՝

1. բնակարանի կամ ոչ բնակելի տարածքների սեփականատիրոջ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի բաժինները սահմանվում և գրանցվում են շենքի կառուցման ու սպասարկման համար նախատեսված հողամասի գրանցման հետ միասին, այսինքն՝ հողամասի բաժնային սեփականության մեջ բաժիններն ի սկզբանե սահմանվում են շենքի կառուցման ու սպասարկման համար նախատեսված հողամասի գրանցման ժամանակ՝ ըստ գրանցման պահին առկա յուրաքանչյուր սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի և այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսների հարաբերությամբ արտահայտված կոտորակների.

2. հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինները գրանցելուց հետո դրանք կարող են փոփոխվել միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու դեպքում,

բ) շենքի բոլոր սեփականատերերի համաձայնությամբ:

Որևէ այլ կերպ կամ պայմաններով հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինները ենթակա չեն փոփոխության:

3. բնակարան կամ ոչ բնակելի տարածք կամ առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերն ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու համար մյուս սեփականատերերի համաձայնությունն ինքնըստինքյան նշանակում է նաև հողամասի բաժնի փոփոխության համաձայնություն:

Այսպիսով, վիճելի իրավունքի գրանցման պահին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինների փոփոխությունների համար ուղղակիորեն սահմանել է բոլոր սեփականատերերի համաձայնության առկայության անհրաժեշտությունը:

Մյուս կողմից, մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը, կարգավորելով բազմաբնակարան (ստորաբաժանված) շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր գույքի վերաբերյալ հարցերը, որևէ դրույթ չի պարունակել բնակարան կամ ոչ բնակելի տարածք կամ առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերն ավելացնելու կամ պակասեցնելու կամ շենքի առկա բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների չափերը փոփոխելու համար մյուս սեփականատերերի համաձայնության անհրաժեշտության վերաբերյալ:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով շինարարության թույլտվության տրամադրման պահին՝ 15.08.2005 թվականին, բազմաբնակարան շենքում տարածք ավելացնելու դեպքում ընդ-

հանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժինների փոփոխության հնարավորություն ընդհանրապես նախատեսված չի եղել:

Այսպիսով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից առաջ և հետո բազմաբնակարան շենքում տարածք ավելացնելու դեպքում ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժինների փոփոխության վերաբերյալ կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է՝

- մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխությունները բազմաբնակարան շենքում տարածք (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացնելու համար մյուս սեփականատերերի համաձայնությունը չի պահանջվել.

- մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխությունները բազմաբնակարան շենքում տարածքի (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացումը հողամասի բաժնային սեփականությունում բաժինների փոփոխության չի հանգեցրել.

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո բազմաբնակարան շենքում տարածք (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացնելու, և (կամ) դրա հետևանքով բաժնային սեփականությունում բաժինների փոփոխությունների համար անհրաժեշտ է մյուս սեփականատերերի համաձայնությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կենտրոն համայնքի Մոսկովյան փողոցի 24-րդ շենքի 223,5քմ մակերեսով թիվ 7 բնակարանի նկատմամբ 31.03.2005 թվականին գրանցվել է Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքը, իսկ 29.09.2010 թվականին նույն շենքի 263քմ մակերեսով թիվ 3 բնակարանի նկատմամբ գրանցվել է Ռուբեն Հակոբյանի սեփականության իրավունքը: Ռուբեն Հակոբյանի բաժինը հողամասի ընդհանուր սեփականության մեջ կազմել է 263/1574 մաս: Թիվ 7 բնակարանին կից ձեղնահարկի կառուցման արդյունքում Կոմիտեի Կենտրոն ստորաբաժանման կողմից 14.06.2011 թվականին Երևանի Մոսկովյան փողոցի 24-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ վերագրանցվել է Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքը, ընդ որում՝ բնակարանի մակերեսը կազմել է 450,1քմ, իսկ շենքի սպասարկման համար հատկացված հողամասի ընդհանուր բաժնային սեփականության մեջ Արման Բաղդասարյանի բաժինը գրանցվել է 450/1574 մաս:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ երրորդ անձ Արման Բաղդասարյանն իր բնակարանի վրա կառուցել է ձեղնահարկ, որով փոփոխվել է Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 24 շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների ընդհանուր մակերեսը, քանի որ դրանց ավելացել է նաև ձեղնահարկի մակերեսը, հետևաբար ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու արդյունքում փոփոխվել է մյուս սեփականատերերի՝ շենքի տակ գտնվող հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինների չափը, որպիսի փոփոխությունը կարող էր իրականացվել միայն բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ հայցվորի համաձայնության դեպքում: Դատարանը նաև արձանագրել է, որ Կոմիտեն Երևանի Մոսկովյան փողոցի 24-րդ շենքի թիվ 7 հասցեում կառուցված ձեղնահարկի նկատմամբ Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքը գրանցելիս չի պարզել գրանցման համար ներկայացված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան կազմված լինելու հանգամանքը, քանի որ Կոմիտեն, որպես սեփականություն գրանցելով ձեղնահարկը, փոփոխություն է կատարել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի բաժիններում, որպիսի փոփոխության համար պետք է ստուգեր շենքի բոլոր սեփականատերերի համաձայնության առկայությունը, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում պետք է մերժեր Երևանի Մոսկով-

յան փողոցի 24–րդ շենքի թիվ 7 հասցեում կառուցված ձեղնահարկի նկատմամբ Արման Բաղդասարյանի սեփականության իրավունքի գրանցումը:

Վերոգրյալի արդյունքում Դատարանը եզրահանգել է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01–006–4–30 մատյանի 000170 համարի տակ Երևանի Մոսկովյան փողոցի 24–րդ շենքի բնակարան 7 հասցեում գտնվող ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին Արման Բաղդասարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է գրանցման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224–րդ հոդվածի 1–ին կետի խախտմամբ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21–րդ և 43–րդ հոդվածների պահանջների սխալ կիրառման արդյունքում, հետևաբար նշված իրավադրույթների խախտմամբ ընդունված վարչական ակտն ընդունելու պահից անվավեր՝ ոչ իրավաչափ վարչական ակտ է:

Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Դատարանի եզրահանգումներն առ այն, որ ձեղնահարկի մակերեսի հաշվին ավելացել է շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների մակերեսը, ինչը հանգեցրել է ընդհանուր սեփականության մեջ մյուս սեփականատերերի, այդ թվում՝ հայցվորի բաժինների նվազեցման, եզրակացրել է, որ Արման Բաղդասարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման արդյունքում տեղի է ունեցել սեփականատերերի հողամասերի բաժնեմասերի փոփոխություն, հետևաբար վիճարկվող վարչական ակտը շոշափել է նաև հայցվորի իրավունքները և Ռուբեն Հակոբյանը հանդիսանում է դատարան դիմելու իրավասությամբ օժտված պատշաճ սուբյեկտ:

Այդուհանդերձ, անդրադառնալով Դատարանի կողմից կիրառված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224–րդ հոդվածին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված հոդվածը կիրառված խմբագրությամբ սկսել է գործել 15.12.2005 թվականից, մինչդեռ Արման Բաղդասարյանին ձեղնահարկի կառուցման համար հիմք հանդիսացող ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվել է 08.06.2005 թվականին, իսկ շինարարության թույլտվությունը՝ 15.08.2005 թվականին, հետևաբար նշված վարչական ակտերը կայացվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224–րդ հոդվածի՝ մինչև 15.12.2005 թվականը գործող խմբագրության համաձայն, որը մյուս սեփականատերերի համաձայնության մասին որևէ պահանջ չի պարունակում:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է նաև այն պատճառաբանությունը, որ թեև Արման Բաղդասարյանի անվամբ ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը հանգեցրել է մյուս սեփականատերերի, այդ թվում՝ Ռուբեն Հակոբյանի բաժնային սեփականության պակասեցմանը, սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ Արման Բաղդասարյանի անվամբ ձեղնահարկի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմինը քաղաքաշինական փաստաթղթերի հիմքով սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելիս շենքի բոլոր սեփականատերերի համաձայնության առկայությունը ստուգելու կամ նման փաստաթուղթ պահանջելու իրավասությամբ կամ լիազորությամբ օժտված չէ, իսկ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շինարարության թույլտվությունն ու շահագործման փաստագրման ակտն իրավաչափ վարչական ակտեր են, հետևաբար ենթակա են պարտադիր կատարման:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարան ներկայացված հայցով Ռուբեն Հակոբյանը խնդրել է անվավեր ճանաչել միայն ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին Արման Բաղդասարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, մինչդեռ հայցադիմումում նշված չէ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ նկատի ունենալով այն

հանգամանքը, որ հայցի առարկան հանդիսացել է հենց այդ մասով կատարված պետական գրանցումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար *(տե՛ս, Պրեսոն Կոմպանիա Նավիեռան ՍԱ ընդդեմ Բելգիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի 17845/91 վճիռը):* «Օրինական սպասելիքը» առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերվում են սեփականության իրավունքի *(տե՛ս, Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի թիվ 44912/98 վճիռը):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «սեփականություն» հասկացությանը տրված մեկնաբանության լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արման Բաղդասարյանին 15.08.2005 թվականին տրվել է վիճելի հասցեում մանսարդային հարկ կառուցելու շինարարության թույլտվություն, և վերջինս ձեռնամուխ է եղել շինարարության իրականացմանը, իսկ շինարարության թույլտվություն տալու պահին՝ մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածում կատարված փոփոխությունները, շենքի մյուս սեփականատերերի համաձայնության անհրաժեշտություն, սույն գործով քննարկվող իրավիճակի պարագայում, առկա չի եղել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արման Բաղդասարյանն ունեցել է շինարարությունն ավարտելու և շահագործումը փաստագրելուց հետո ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու օրինական սպասելիք, ավելին՝ վերջինս ունեցել է շինարարության թույլտվության ակտին վստահելու իրավունք, հետևաբար մյուս սեփականատերերի համաձայնության առկայությունը կամ բացակայությունը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ իրականացված շինարարության արդյունքում ստեղծված (ավելացված) տարածքի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը գրանցելու համար, նույնիսկ եթե գրանցումը տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումն ինքնին չէր կարող հանգեցնել առանց մյուս սեփականատերերի համաձայնության ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժինների փոփոխության՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Բազմաբնակարան շենքում հողամասի բաժնային սեփականության մեջ բաժինների փոփոխություն՝ կապված շենքում բնակելի և/կամ ոչ բնակելի տարածքների ավելացման հետ, մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխությունները չի նախատեսվել: Բաժինների փոփոխության հնարավորությունն առաջացել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո միայն, ընդ որում, ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի բաժինների փոփոխության համար նախատեսվել է մյուս բոլոր սեփականատերերի համաձայնության առկայությունը:

Վիճելի իրավունքի պետական գրանցման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործն իր մեջ ընդգրկում է անշարժ գույքի առանձին միավորներին նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող հետևյալ փաստաթղթերը՝

ա) անշարժ գույքի սուբյեկտներին հատկացված և **որպես սեփականություն** կամ օգտագործման անցած **հողերի** (տնամերձ, այգեգործական (ամառանոցային), բնակելի տան շինարարության և դրա սպասարկման, գյուղացիական կամ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն ծավալելու համար) և **շենքերի, շինությունների մասին**,

բ) անշարժ գույքից կամ դրա մի մասից սեփականատիրոջ հրաժարվելու մասին որոշումները,

թ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքները և այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումը, փոփոխումը կամ դադարումը հաստատող փաստաթղթեր:

Վիճելի իրավունքի պետական գրանցման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ **առանց սեփականատիրոջ կամ օգտագործողի համաձայնության, չեն ընդունվում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոփոխություններ:**

Վիճելի իրավունքի պետական գրանցման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

Վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործն իր մեջ ընդգրկում է անշարժ գույքի մի մասից սեփականատիրոջ հրաժարվելու մասին որոշումը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխումը հաստատող փաստաթղթեր, ընդ որում, վիճելի իրավունքի գրանցման պահին գործող օրենսդրությունն ուղղակիորեն սահմանում է, որ առանց սեփականատիրոջ համաձայնության չեն ընդունվում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոփոխություններ:

Վերը նշված վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, Արման Բաղդասարյանը, ձեղնահարկի շինարարության թույլտվության տրամադրման պահից ունենալով շինարարությունն ավարտելուց հետո ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու օրինական սպասելիք, չէր կարող միաժամանակ ակնկալել, որ ձեղնահարկի գրանցման հետևանքով դրա մակերեսին համամասնորեն կարող է ավելանալ ընդհանուր բաժնային

սեփականություն հանդիսացող հողամասում իր բաժինը, քանի որ, մի կողմից, բազմաբնակարան շենքում տարածք (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացնելու հետևանքով բաժնային սեփականությունում բաժինների փոփոխությունների հնարավորությունն ի հայտ է եկել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո, այսինքն՝ շինարարության թույլտվության տրամադրումից հետո, և մյուս կողմից, բազմաբնակարան շենքում տարածք (բնակելի կամ ոչ բնակելի) ավելացնելու, և (կամ) դրա հետևանքով հողամասի նկատմամբ բաժնային սեփականությունում բաժինների փոփոխության համար նշված փոփոխություններով նախատեսվել է մյուս սեփականատերերի համաձայնության անհրաժեշտությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 15.12.2005 թվականի թիվ ՀՕ-238-Ն օրենքով կատարված փոփոխությունները սկսված, սակայն դրանցից հետո ավարտված **շինության նկատմամբ** իրավունքները կարող են գրանցվել քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության, մինչդեռ **ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասում** բաժինների փոփոխության համար Կոմիտեն իրավասու էր Արման Բաղդասարյանից պահանջել բազմաբնակարան շենքի մյուս սեփականատերերի, այդ թվում՝ Ռուբեն Հակոբյանի համաձայնությունը, իսկ այդ համաձայնությունը չներկայացնելու պարագայում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ իրավունքի գրանցման պահին գործող խմբագրության 43-րդ հոդվածին համապատասխան պարտավոր էր մերժել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասում Արման Բաղդասարյանի բաժնի փոփոխության պետական գրանցումը, քանի որ մյուս սեփականատերերի համաձայնության բացակայության պայմաններում հողամասի բաժնի փոփոխությունը գրանցելու համար վերջինիս ներկայացրած փաստաթղթերը չէին կարող համարվել ՀՀ օրենսդրության բոլոր, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ իրավունքի գրանցման պահին գործող խմբագրության 21-րդ, 22-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող: Մինչդեռ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասում Արման Բաղդասարյանի բաժնի փոփոխությունը Կոմիտեն գրանցել է մյուս սեփականատերերի համաձայնության բացակայության պայմաններում՝ խախտելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ իրավունքի գրանցման պահին գործող խմբագրության 43-րդ հոդվածի պահանջները, ինչը հանգեցրել է մյուս սեփականատերերի, այդ թվում՝ Ռուբեն Հակոբյանի իրավունքների խախտման:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն առ այն, որ Ռուբեն Հակոբյանն իր հայցով պահանջել է անվավեր ճանաչել միայն ձեղնահարկի նկատմամբ 14.06.2011 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և չի պահանջել անվավեր ճանաչել հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման պատճառաբանությունն անհիմն է, քանի որ հայցվորն ըստ էության պահանջել է անվավեր ճանաչել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման՝ թիվ 01-006-4-30 մատյանի 000170 համարի տակ կատարված պետական գրանցումը, ինչն արձանագրել է նաև հայցապահանջում, իսկ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01-006-4-30 մատյանի 000170 համարի տակ կատարված պետական գրանցումն իր մեջ ներառում է ոչ միայն ձեղնահարկի, այլ նաև հողամասի նկատմամբ Արման Բաղդասարյանի իրավունքի պետական գրանցումը:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Սույն գործով նկատի ունենալով, որ Ռուբեն Հակոբյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռուբեն Հակոբյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Հայաստանի Հանրապետության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի որոշման՝ Երևանի Մոսկովյան 24-րդ շենքի թիվ 7 բնակարանի ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետևանքով Երևանի Մոսկովյան թիվ 24 շենքի հողամասի ընդհանուր բաժնային սեփականության մեջ Արման Բաղդասարյանի անվամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01-006-4-30 մատյանի 000170 համարի տակ հողամասի 227/1574 մասով 14.06.2011 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասով հայցը մերժելու մասը, և այդ մասով այն փոփոխել՝ անվավեր ճանաչել Երևանի Մոսկովյան 24-րդ շենքի թիվ 7 բնակարանի ձեղնահարկի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետևանքով Երևանի Մոսկովյան թիվ 24 շենքի հողամասի ընդհանուր բաժնային սեփականության մեջ Արման Բաղդասարյանի անվամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01-006-4-30 մատյանի 000170 համարի տակ հողամասի 227/1574 մասով 14.06.2011 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել անփոփոխ:

2. Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Ռուբեն Հակոբյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9439/05/13
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/9439/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տեսչության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Սանուկ Նազարյանի (այսուհետ՝ Ձեռնարկատեր)՝ 369.364 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ձեռնարկատիրոջից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 369.364 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 28.10.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.04.2015 թվականի որոշմամբ Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.10.2014 թվականի վճիռը բեկանվել է, և հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 5-րդ հոդվածի 5-րդ կետը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 29-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ վարչական մարմինը մինչև Ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորություն հաշվարկելը պետք է պարզեր՝ արդյոք վերջինս գործունեություն ծավալում է, թե ոչ, անհիմն է:

Ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը հարկային տեսչություն չի հանձնվել, հետևաբար նրա նկատմամբ կիրառելի են մինչև 01.01.2013 թվականը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթները, և նա պարտավոր էր կատարել նույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ պարբերության պահանջը, այն է՝սահմանված ժամկետում վճարել ամսական նվազագույն սոցիալական վճարի 5.000-ական ՀՀ դրամները:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը Ձեռնարկատիրոջ կողմից 2007 թվականի վերջերին Տեսչությանը հանձնած լինելու փաստի ապացուցման բեռը կրել է Ձեռնարկատերը, սակայն վերջինս որևէ ապացույց Դատարանին չի ներկայացրել, հետևաբար այդ փաստը հաստատված չի կարող համարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.10.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մանուկ Նազարյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, պետական գրանցում է ստացել 16.10.2006 թվականին և ստացել անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման թիվ 01 Ա 103234 վկայականը **(հատոր 1-ին, գ.թ. 79).**

2. Ձեռնարկատերը 27.10.2006 թվականին հաշվառվել է որպես ապահովադիր **(հատոր 1-ին, գ.թ. 6).**

3. Տեսչության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով Մանուկ Նազարյանի պարտավորությունն առ 24.09.2013 թվականը կազմում է 369.364 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 5).**

4. ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մանուկ Նազարյանը հաշվառումից հանվել է 31.10.2013 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 80):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ապացույց ներկայացնելու պարտականության և ապացուցման բեռի հարաբերակցության վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական ու կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վերաքննիչ

դատարանի կողմից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

1. արդյո՞ք ապահովադիր հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունը հաշվարկելու համար հարկային մարմինը պարտավոր է պարզել ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը,

2. անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն վճարների գծով պարտավորության դիմաց գումար բռնագանձելու պահանջներով վարչական դատավարությունում ո՞վ պետք է կրի անհատ ձեռնարկատիրոջ պետականագրանցման վկայականը հարկային մարմնին հանձնելու փաստի ապացուցման բեռը:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է՝ 26.12.1997 թվականին, ուժի մեջ է մտել՝ 31.12.1997 թվականին, ուժը կորցրել է՝ 01.01.2013 թվականին) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սոցիալական վճարներն ապահովադիրների կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներ են:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5.000 դրամ, մինչև հաջորդ ամսվա 15-ը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովադրից գանձվում է տույժ՝ ապառքի 0,15 տոկոսի չափով:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովադիրները ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում գրանցվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում պարտավոր են գրանցվել և հաշվառվել լիազորված մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը՝ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակության և գործունակության ճանաչումն է պետության կողմից, ինչպես նաև գրանցամատյանում անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունների ճանաչումը պետության կողմից:

Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու դեպքում այդ մասին, համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, նշում է արվում պետականհաշվառման գրանցամատյանում:

Վերը շարադրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պետությունը ճանաչում է անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը վեր-

ջինիս ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում հաշվառման պահից մինչև նրա հաշվառումից հանելու մասին պետական հաշվառման գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահը, ուստի լիազորված մարմնում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գրանցվելու և հաշվառվելու փաստով անհատ ձեռնարկատերը՝ որպես ապահովադիր, կրում է օրենքով սահմանված պարտադիր վճարներ կատարելու պարտականություն: Այսինքն՝ ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում հաշվառման և լիազորված մարմնում գրանցվելու պահից սկսած մինչև հաշվառումից հանելու պահն անհատ ձեռնարկատերը հանդիսանում է ապահովադիր և պարտավոր է կատարել ապահովադրի համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում նաև պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարելու պարտականությունը:

Ապահովադիր հանդիսանալու ժամանակահատվածում պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարելու պարտականություն չկրելու միակ պայման օրենսդրի կողմից սահմանվել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի մինչև 25.07.2012 թվականը գործող խմբագրությամբ 5-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ պարբերությամբ (ուժը կորցրել է 19.03.2012 թվականին ընդունված և 25.07.2012 թվականից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-152-Ն օրենքով), որի համաձայն՝ պետականգրանցման վկայականը ժամանակավոր լիազորված մարմնին հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը (ձեռներեցը) նույն պարբերությամբ սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար Ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը կարող է նշանակություն ունենալ միայն 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող մասով, այն էլ այն դեպքում, երբ վերջինս պետականգրանցման վկայականը ժամանակավոր հանձնել է լիազորված մարմնին, իսկ 25.07.2012 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքի պարզման անհրաժեշտությունն ընդհանրապես բացակայում է, քանի որ պետական ռեգիստրի մարմիններում Ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում գործում է ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու կանխավարկածը, որի պարագայում վերջինս պարտավոր է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կատարել իր պարտականությունները:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 01.01.2013 թվականից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» թիվ ՀՕ-179 ՀՀ օրենքը ճանաչվել է ուժը կորցրած: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 2013 թվականի ընթացքում կամ մինչ այդ առաջացած եկամտահարկիկամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները 01.01.2013 թվականից հետո դադարած չեն համարվում, և դրանք ենթակա են կատարման «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մանուկ Նազարյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, պետական գրանցում է ստացել 16.10.2006 թվականին և որպես ապահովադիր 27.10.2006 թվականին հաշվառվել է Տեսչությունում: ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մանուկ Նազարյանը հաշվառումից հանվել է 31.10.2013 թվականին, ինչը նշանակում է, որ Մանուկ Նազարյանի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունը և գործունակությունը ծագել է 16.10.2006 թվականին և դադարել 31.10.2013 թվականին: Գործում առկա՝ Տեսչու-

թյան կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով Մանուկ Նազարյանի պարտավորությունն առ 24.09.2013 թվականը կազմում է 369.364 ՀՀ դրամ:

Դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, հաստատված չի համարել անհատ ձեռնարկատիրոջ վկայականը հարկային տեսչությանը հանձնած լինելու փաստը, միաժամանակ հիմնավոր համարելով սոցիալական ապահովության վճարների գծով 369.364 ՀՀ դրամի չափով Ձեռնարկատիրոջ պարտավորությունների առկայությունը, 28.10.2014 թվականի վճռով Տեսչության հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը, որպես Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարելու և Դատարանի 28.10.2014 թվականի վճիռը բեկանելու հիմնավորում, նշել է, որ «վարչական մարմինը մինչև Ա/Զ Մանուկ Նազարյանի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելը, պետք է պարզեր՝ արդյոք վերջինս գործունեություն ծավալում է, թե ոչ»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով Ձեռնարկատիրոջ պարտավորությունն ամբողջությամբ կազմված է ամսական նվազագույն գումարներից, որոնք Տեսչության կողմից հաշվարկվել են, քանի որ նշված վճարների գծով Ձեռնարկատիրոջ պարտավորություն չունենալը հաստատող որևէ իրավական հիմք առկա չի եղել այն պատճառով, որ Ձեռնարկատերը, հաշվառված լինելով պետական ռեգիստրի մարմիններում, հանդիսացել է ապահովադիր և պարտավոր է եղել վճարել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Ընդ որում, եթե 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող մասով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը կարող էր որոշիչ նշանակություն ունենալ, այն էլ այն պարագայում, եթե վերջինս պետական գրանցման վկայականը ժամանակավոր հանձնած լիներ լիազորված մարմնին, ապա 25.07.2012 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը, այդ պահին գործող իրավակարգավորման համաձայն, ընդհանրապես նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ պարբերությունն այլևս իրավական ուժ չուներ, իսկ պետական ռեգիստրի մարմիններում Ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում գործում է ապահովադրի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կանխավարկածը, որի պարագայում վերջինս պարտավոր էր վճարել պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ վարչական մարմինը մինչև Ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելը պետք է պարզեր՝ արդյոք վերջինս գործունեություն ծավալում է, թե ոչ, անհիմն է:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույց-

ները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Նույն հոդվածի 2–րդ մասով սահմանված է, թե կոնկրետ հայցատեսակով (վիճարկում, պարտավորեցման, գործողության կատարման, ճանաչման) պայմանավորված՝ ով է կրում ապացուցման բեռը:

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28–րդ հոդվածի 1–ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն: Միաժամանակ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29–րդ հոդվածի 1–ին մասում, որպես ընդհանուր կանոն, նախատեսել է վարչական դատավարությունում գործի ելքը պայմանավորող որևէ փաստի չապացուցված մնալու իրավական հետևանքները՝ սահմանելով, որ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2–րդ մասում օրենսդիրը սահմանել է նաև վարչական դատավարությունում գործող տարբեր հայցատեսակների հիման վրա հարուցված գործերի շրջանակներում ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վերը նշված հատուկ կանոնները կիրառելի չեն, քանի որ Տեսչության ներկայացրած հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29–րդ հոդվածի 2–րդ մասում թվարկված հայցատեսակներից չէ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բոլոր այն դեպքերում, երբ վարչական դատարանի վարույթում քննվող գործերով կիրառելի չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները, ապա դատարանը պետք է ղեկավարվի ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնով, համաձայն որի՝ կողմերը պարտավոր են դատարանին ներկայացնել իրենց տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով հիմնավորում են իրենց պահանջները կամ առարկությունները, իսկ դրանք չապացուցելու դեպքում կրելու են բացասական հետևանքները:

Վերը նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապացույց ներկայացնելու պարտականության և ապացուցման բեռի հարաբերակցությանը:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28–րդ հոդվածի 1–ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն, համաձայն որի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28–րդ հոդվածի 2–րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ վարչական մարմինը բոլոր դեպքերում, անկախ ապացուցման բեռը կրելու կամ չկրելու հանգամանքից, ունի իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած ապացույց ներկայացնելու պարտականություն, ինչը, սակայն, չի նշանակում, որ այդպիսիք ներկայացնելու անհնարինության դեպքում վարչական մարմինը պետք է կրի չապացուցված փաստով պայմանավորված բացասական իրավական հետևանքներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29–րդ հոդվածի 1–ին մասի իրավակարգավորումից ակնհայտ է, որ գործի ելքը պայմանավորող փաստի չապացուցված մնալու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է ոչ թե ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող, այլ ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող և այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը, հետևաբար նշված փաստը չապացուցելու բացասական հետևանքները պետք է դրվեն այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի ելքը պայմանավորող փաստի ապա-

ցուցման բեռը ողջամտորեն կարող է կրել միայն այն կողմը, ում պնդմամբ վիճելի փաստը տեղի է ունեցել, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը կիրառելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել, թե դատավարության մասնակիցներից որ կողմն է կրում գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, եզրահանգել է, որ սույն գործի ելքը պայմանավորող փաստի, այն է՝ անհատ ձեռնարկատիրոջ վկայականը 2007 թվականի վերջին Տեսչությանը հանձնած լինելու ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը, և գտնելով, որ տվյալ փաստական հանգամանքը վերջինիս կողմից չի ապացուցվում, ինչի հետևանքով վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, դրա բացասական հետևանքները դրել է Տեսչության վրա:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու վարչական մարմնի պարտականությունը, իսկ 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված է վարչական մարմնի ապացուցման պարտականությունը, որը վերջինս կրում է անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Միաժամանակ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտը սահմանելիս նույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով, այդ թվում նաև՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի գործողությունը չի տարածվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա, հետևաբար դրանցով սահմանված պարտականությունները վարչական մարմնի կողմից պահպանված չլինելու փաստը հաստատված համարելու պարագայում անգամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը չի կարող վրա հասնել:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, երբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը կրող կողմը չի կարողանում ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում դրված որևէ փաստ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ուղղակի արդյունք է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու, ինչպես նաև անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված իրավակարգավորումները վարչական դատավարությունում կիրառելի չեն, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածներում սահմանված պարտականությունը վարչա-

կան մարմնի կողմից չկատարելը չի կարող առաջացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի ելքը պայմանավորող փաստ, առնվազն 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանի համար հաշվարկված պարտավորության մասով, հանդիսացել է անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը Ձեռնարկատիրոջ կողմից հանձնած լինելու փաստը, ուստի դրա ապացուցման բեռը պետք է կրի այն կողմը, ում պնդմամբ տվյալ փաստը տեղի է ունեցել, այսինքն՝ Ձեռնարկատերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"): Դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Սույն գործով ապահովելով վերը նշված հոդվածի պահանջների կատարումը՝ Դատարանը ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները (կատարել է հարցումներ, Ձեռնարկատիրոջից պահանջել է ներկայացնել «Հայփոստ» ՓԲԸ-ից տեղեկանք՝ հարկային տեսչություն առաքանի ուղարկելու վերաբերյալ) անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը Ձեռնարկատիրոջ կողմից 2007 թվականի վերջերին հարկային տեսչությանը հանձնած լինելու փաստը հաստատող ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ, սակայն այդպիսիք հնարավոր չի եղել ձեռք բերել, հետևաբար տվյալ փաստի չապացուցված մնալու բացասական հետևանքները պետք է դրվեին Ձեռնարկատիրոջ՝ որպես այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Դատարանը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, կիրառելով վարչական դատավարությունում ապացուցման բեռի բաշխման հետ որևէ առնչություն չունեցող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, վերը նշված փաստի ապացուցված չլինելու բացասական հետևանքը դրել է Տեսչության վրա և, առանց պատճառաբանելու, թե հատկապես ինչու պետք է կիրառվեն հենց այդ նորմերը, անհիմն կերպով բեկանել է Դատարանի հիմնավոր դատական ակտն ու մերժել Տեսչության հայցը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի պահանջը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման

տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որպիսիք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ սույն գործով Տեսչությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 11.081 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Մանուկ Նազարյանի կողմից: Միաժամանակ Մանուկ Նազարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 11.081 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 28.10.2014 թվականի վճռին:

2. Մանուկ Նազարյանից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության բռնագանձել 11.081 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Մանուկ Նազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 11.081 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/7703/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/7703/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևան համայնքի, ի դեմս՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի (այսուհետ՝ Վարչական շրջան) ղեկավարի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Երևան համայնքի, ի դեմս՝ Վարչական շրջանի հայցի ընդդեմ Ավետիս Ափիյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը, ի դեմս՝ Վարչական շրջանի պահանջել է Ավետիս Ափիյանից բռնագանձել 544.904 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 19.02.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.06.2014 թվականի որոշմամբ Ավետիս Ափիյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 19.02.2014 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան համայնքը, ի դեմս՝ Վարչական շրջանի ղեկավարի:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ավետիս Ափիյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ մեքենան Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում նախկին սեփականատեր Էդիկ Չիչոյանի կողմից գրանցվել է 25.04.2012 թվականին, դրանից հետո մեքենան գնած սեփականատերերը հարկային պարտավորությունները կատարել են իրենց անունով հաշվառման օրվանից, իսկ մինչև 25.04.2012 թվականը մեքենան հաշվառված է եղել Վարչական շրջանում և դրանից առաջ ընկած ժամանակաշրջանի համար հաշվարկ կատարվել է Վարչական շրջանի կողմից: Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից հաշվարկված 58.125 ՀՀ դրամի հաշվարկը կատարվել է 25.04.2012 թվականից հետո: Իսկ ինչ վերաբերում է Ավետիս Ափիյանին Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից ներկայացված 139.500 ՀՀ դրամ գույքահարկի հիշեցմանը, ապա այն վերաբերել է 2013 թվականի հարկային պարտավորություններին և վճարվել է 04.12.2013 թվականին, այսինքն՝ հայցագրում ներառված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Անհասկանալի է, թե ինչ փաստաթղթերի հիման վրա է Երևանի Ավան վարչական շրջանում հաշվառվել <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 ՏԼ 777>> հաշվառման պետհամարանիշերով ավտոմեքենան, ինչպես է այն Վարչական շրջանում առանց նախկին սեփականատեր Էդիկ Չիչոյանի կողմից 2009-2011 թվականների համար գույքային պարտավորությունը կատարելու 2012 թվականի ապրիլ ամսին անվանափոխվել և գրանցվել Լյուդմիլա Համբարձումյանի անվամբ, երբ Վարչական շրջանում <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 ՏԼ 777>> պետհամարանիշներով ավտոմեքենայի համար գույքահարկի գծով առաջացած 554.904 ՀՀ դրամ պարտավորությունը մարված չի եղել Էդիկ Չիչոյանի կողմից շուրջ երեք տարի: Պարզ չէ, թե ինչ հանգամանքներում է Երևանի Ավան վարչական շրջանի կողմից 2012 թվականին Լյուդմիլա Համբարձումյանին տրվել գրոյական տեղեկանք, որն Ավետիս Ափիյանը ներկայացրել է Երևանի Էրեբունի վարչական շրջան՝ ավտոմեքենան իր անվամբ գրանցելու համար: Ավետիս Ափիյանը չի կրում Վարչական շրջանում Էդիկ Չիչոյանի ունեցած և չկատարված գույքային պարտավորությունները կատարելու պարտավորություն: Հետևաբար Վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշումը հիմնավոր է, կայացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 05.10.2009 թվականին Կատյա Մկրտչյանի՝ որպես <<Վաճառող>>-ի, և Էդիկ Չիչոյանի՝ որպես <<Գնորդ>>-ի, միջև կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ 2002 թվականի արտադրության <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 ՏԼ 777>> գրանցման պետհամարանիշով <<SALLMAMA42A104409>> նույնականացման համարով ավտոմեքենան վաճառվել է Էդիկ Չիչոյանին **(գ.թ. 8):**

2) 25.04.2012 թվականին Էդիկ Չիչոյանի՝ որպես <<Վաճառող>>-ի, և Լյուդմիլա Համբարձումյանի՝ որպես <<Գնորդ>>-ի, միջև կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ 2002 թվականի թողարկման <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ 4.4 L V8>> մակնիշի <<SALLMAMA42A104409>> նույնականացման համարով ավտոմեքենան վաճառվել է Լյուդմիլա Համբարձումյանին **(գ.թ. 22-24):**

3) 21.07.2012 թվականին Լյուդմիլա Համբարձումյանի՝ որպես <<Վաճառող>>-ի, և Ավետիս Ափիյանի՝ որպես <<Գնորդ>>-ի, միջև կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ 2002 թվականի թողարկման <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ 4.4 L V8>> մակնիշի <<SALLMAMA42A104409>> նույնականացման համարով ավտոմեքենան վաճառվել է Ավետիս Ափիյանին **(գ.թ. 19-21):**

4) Վարչական շրջանի 18.05.2013 թվականի թիվ 184422259757111123 տեղեկանքի համաձայն՝ Կատյա Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 SL 777>> պետհամարանիշով փոխադրամիջոցի՝ գույքահարկի գծով 2009-2012 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորությունները կազմում են 544.904 ՀՀ դրամ, որից ապառքը՝ 325.500 ՀՀ դրամ, տույժը՝ 219.404 ՀՀ դրամ **(գ.թ. 6):**

5) ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության Երևանի հաշվառման-քննական բաժնի 09.10.2013 թվականի թիվ 17/3-22266 գրությամբ Վարչական շրջանի ղեկավարին հայտնվել է, որ <<(...) համաձայն ՃՈ էլեկտրոնային ռեգիստրի տվյալների՝ <<RANGE ROVER>> մակնիշի <<99 SL 777>> համարանիշի ավտոմոբիլը 19.06.2007 թվականին հաշվառվել է քաղաքացի Կատյա Մկրտչյանի անվամբ, իսկ 25.04.2012 թվականին հաշվառումից հանվել է՝ օտարման նպատակով: Վերոնշյալ ավտոմոբիլը 21.07.2012 թվականից մինչև օրս հաշվառված է քաղաքացի Ավետիս Ափիյանի անվամբ, և հատկացվել են <<01 VV 033>> հաշվառման համարանիշները (...)>> **(գ.թ. 29):**

6) Գույքային հարկի հաշվարկի ելակետային տվյալների համաձայն՝ որպես Ավետիս Ափիյանի՝ թիվ 187000082558 կոդով <<RANGE ROVER 4.4L V8>> մակնիշի ավտոմեքենայի գույքահարկ վճարվել է 23.07.2012 թվականին՝ 49.181 ՀՀ դրամ, 04.12.2013 թվականին՝ 139.500 ՀՀ դրամ և 628 ՀՀ դրամ **(գ.թ. 40):**

7) Վարչական շրջանի ղեկավարի 02.10.2013 թվականի թիվ 25/01-7/4889 գրությամբ հայտնվել է Դատարանին, որ Էդիկ Չիչոյանը տեղեկացվել է քննվող վարչական գործի մասին, ներկայացել Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ և հայտնել, որ փոխադրամիջոցը 25.04.2012 թվականին օտարել է Լյուդմիլա Համբարձումյանին, իսկ վերջինս էլ 21.07.2012 թվականին այն օտարել է Ավետիս Ափիյանին: Նշվածը հաշվի առնելով՝ Վարչական շրջանի ղեկավարը խնդրել է Դատարանին ոչ պատշաճ պատասխանողին փոխարինել պատշաճ պատասխանողով՝ Ավետիս Ափիյանով **(գ.թ. 18):**

8) Դատարանի 20.11.2013 թվականի արձանագրային որոշմամբ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու մասին Վարչական շրջանի ղեկավարի միջնորդությունը բավարարվել է, և Էդիկ Չիչոյանը փոխարինվել է պատշաճ պատասխանողով՝ Ավետիս Ափիյանով **(հիմք՝ 20.11.2013 թվականի դատական նիստի արձանագրություն, գ.թ. 31):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը, մասնավորապես՝ փոխադրամիջոցը, օտարելու դեպքում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունների մարման պարտականությունը կրող պատշաճ սուբյեկտի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վիճելի իրավահարաբերության առաջացման պահին գործող իրավակարգավորման համատեքստում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ֆիզիկական

անձանց պատկանող փոխադրամիջոցն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարկատեսակ է տեղական հարկ հանդիսացող գույքահարկը:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունն օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմնին:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար նույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում (...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, (...) որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը (...):

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ է համարվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա նույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը, ընդ որում՝ փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները *(<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի՝ ներկայումս գործող խմբագրությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում փոխադրամիջոցների մասով բացառություն սահմանող դրույթն ընդունվել է 06.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 23.12.2013 թվականին):*

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացու-

ցային տարին: Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների և փոխադրամիջոցների ընթացիկ տարվա գույքահարկի գումարները:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը նույն հոդվածի 3–րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1–ը ներառյալ, բացառությամբ նույն հոդվածի 4–րդ մասով սահմանված դեպքի:

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 108–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ ավագանու ընտրություններից հետո Երևանի թաղային համայնքները համարվում են վերակազմակերպված՝ որպես Երևան համայնք: Նույն օրենքի 110–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ավագանու ընտրություններից հետո այդ պահին Երևանի թաղային համայնքների սեփականություն համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Երևանին: Երևանը համարվում է Երևան քաղաքի թաղային համայնքների իրավահաջորդ: Նույն օրենքի 54–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ և 5–րդ կետերի համաձայն՝ քաղաքապետը ֆինանսների բնագավառում օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի ու հողի հարկի գանձումը և վերահսկումը, ինչպես նաև հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ, օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ, որպես պարտադիր լիազորություն:

Ղեկավարվելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 52–րդ հոդվածի 4–րդ մասով և 54–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետով՝ 06.07.2009 թվականին Երևան քաղաքի ավագանին կայացրել է թիվ 10–Ա որոշումը, ըստ որի՝ 2009 թվականի մնացած ժամանակահատվածի համար Երևան քաղաքում գույքահարկի, հողի հարկի և հողի վարձավճարների օրենքով սահմանված կարգով գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները պատվիրակվել է Երևանի վարչական շրջանների ղեկավարներին, իսկ վերջիններիս պատվիրակված լիազորությունների կատարման վերահսկումն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը կրում է համընդհանուր բնույթ, այն տարածվում է բոլոր անձանց վրա: Սահմանադրի կողմից նախատեսված այս պարտականության մեջ արտահայտված են հասարակության հանրային շահերը: ՀՀ Սահմանադրության 45–րդ հոդվածում ամրագրված <<յուրաքանչյուր ոք պարտավոր է>> ձևակերպումից ակնհայտ է, որ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները կրում են համապարտադիր բնույթ: Համապարտադիրությունը, որպես անվերապահորեն կատարման ենթակա պահանջ, տարածվում է բոլոր վճարողների վրա: Գործնականում համապարտադիրության պահանջը կյանքի է կոչվում սեփականատիրոջ գույքի մի մասի՝ հարկի կամ այլ պարտադիր վճարումների ձևաչափով, պետության օգտին փոխանցելու միջոցով: Համապարտադիրության պահանջն արտահայտվում է նաև նրանում, որ կամավոր մուծումներ չկատարելու դեպքում դրանք պետության կողմից հարկադրաբար են գանձվում *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Լիլիթ Բաբասիևայի թիվ ՎԴ/7537/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, իսկ կոնկրետ հարկատեսակները սահմանում է օրենսդիրը: Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված հարկատեսակ է գույքահարկը, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական

գործունեության արդյունքներից, այլ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց սեփականության իրավունքով պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է: Օրենսդիրը գույքահարկով հարկվող օբյեկտները սահմանելիս նշել է, որ գույքահարկով հարկվող օբյեկտ է հանդիսանում նաև ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, իսկ փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ), միաժամանակ փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսդիրը ֆիզիկական անձանց համար որպես գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան սահմանել է օրացուցային տարին՝ միաժամանակ ամրագրելով, որ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարն օրենքով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքում օրենսդիրը նախատեսել է, որ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից, գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Միաժամանակ օրենսդիրը իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորմամբ սահմանել էր, որ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները:

Այսպիսով, գործող իրավակարգավորման պայմաններում օրենսդիրը, գույքահարկի վճարման պարտավորության առաջացման և դադարեցման կարգը նախատեսելիս սահմանելով, որ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները, վերը նշված ընդհանուր կանոնից փոխադրամիջոցների մասով նախատեսել է բացառություն: Մինչդեռ իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորմամբ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ փոխադրամիջոցների մասով, առանց որևէ բացառության ենթակա էին փոխանցման նոր սեփականատիրոջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնա-

հատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեին տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պարզում է այս կամ այն ապացույցի վերաբերելիության, թույլատրելիության հարցը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում է որոշում հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործն ի սկզբանե հարուցվել է Երևան համայնքի կողմից (ի դեմս՝ Վարչական շրջանի) ներկայացված հայցադիմումի հիման վրա ընդդեմ Էդիկ Չիչոյանի, իսկ հետագայում պարզելով, որ վերջինս փոխադրամիջոցն օտարել է, և այժմ նոր սեփականատեր է հանդիսանում Ավետիս Ափիյանը, ոչ պատշաճ պատասխանող Էդիկ Չիչոյանը փոխարինվել է պատշաճ պատասխանող Ավետիս Ափիյանով՝ հաշվի առնելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորումը:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ Վարչական շրջանը հայցադիմումը դատարան է ներկայացրել 29.08.2013 թվականին, որով պահանջվել է բռնագանձել Վարչական շրջանում հաշվետու տարիների համար հաշվարկված և չվճարված պարտավորությունը: Դրա արդյունքում Դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ <<Ռենջ Ռովեր>> մակնիշի <<99 SL 777>> պետհամարանիշի ավտոմեքենայի համար Երևան համայնքի բյուջե վճարման ենթակա գույքահարկի գծով գումարը կազմում է 544.904 ՀՀ դրամ, որից ապառք՝ 325.500 ՀՀ դրամ, տույժ՝ 219.404 ՀՀ դրամ, որը պատասխանողը չի վճարել:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ավետիս Ափիյանի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի 19.02.2014 թվականի վճիռը և մերժել Վարչական շրջանի հայցը՝ պատճառաբանելով, որ <<Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ նշված ավտոմեքենայի համար 2012 թվականի դրությամբ հաշվարկված է եղել ընդամենը 58.125 ՀՀ դրամ, որի դիմաց 23.07.2012 թվականին կատարվել է 49.181 ՀՀ դրամ վճարում: Ընդ որում, նախկին սեփականատիրոջ հարկային պարտավորությունը, ինչպես նաև <<գնորդին անցած գումար>> բաժիններում որևէ նշում չկա նախկին սեփականատիրոջ ունեցած, այսինքն՝ չմարված հարկային պարտավորությունների վերաբերյալ>>:

Ավելին, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վարչական մարմնի կողմից չեն ներկայացվել համապատասխան ապացույցներ <<Ռենջ Ռովեր>> մակնիշի <<99 SL 777>> պետհամարանիշի ավտոմեքենայի՝ Ավետիս Ափիյանին օտարելու օրվա դրությամբ (21.07.2012 թվական) չմարված հարկային պարտավորությունների առկա լինելու վերաբերյալ, որպիսի պարագայում հայցադիմումը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու օրվա դրությամբ գործող <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով Ավետիս Ափիյանին <<Ռենջ Ռովեր>> մակնիշի ավտոմեքենայի համար գույքահարկի գծով պարտավորություններ ուղղվել չեն կարող:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 SL 777>> գրանցման պետհամարանիշով ավտոմեքենան Կատյա Մկրտչյանը 05.10.2009 թվականին օտարել է Էդիկ Չիչոյանին, վերջինս էլ 25.04.2012 թվականին նշված ավտոմեքենան օտարել է Լյուդմիլա Համբարձումյանին, որն էլ, իր հերթին, 21.07.2012 թվականին այն օտարել է Ավետիս Ափիյանին:

Վարչական շրջանի 18.05.2013 թվականի թիվ 184422259757111123 տեղեկանքով հաստատվում է, որ Կատյա Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 SL 777>> պետական համարանիշով փոխադրամիջոցի (գրանցման ամսաթիվ՝ 13.07.2007 թվական, օտարման ամսաթիվ՝ 25.04.2012 թվական) գույքահարկի գծով հարկային պարտավորությունները՝ հաշվարկված 2009–2012 թվականների համար, կազմում են 544.904 ՀՀ դրամ, որից ապառքը՝ 325.500 ՀՀ դրամ, տույժը՝ 219.404 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 SL 777>> պետական համարանիշով փոխադրամիջոցի ներկայիս սեփականատերը հանդիսանում է Ավետիս Ափիյանը, որին նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է 21.07.2012 թվականից՝ տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի հիման վրա: Հաստատվում է նաև, որ Վարչական շրջանում նշված ավտոմեքենայի համար հաշվետու տարիների համար (նախքան այն Ավետիս Ափիյանի սեփականությունը դառնալը) առաջացել են գույքահարկի գծով հարկային պարտավորություններ, որոնք չեն մարվել նախկին սեփականատիրոջ կողմից, իսկ ապառքը ժամանակին չմարելու հետևանքով դրա նկատմամբ հաշվարկվել են նաև տույժեր, ինչի հետևանքով <<ՌԵՆՋ ՌՈՎԵՐ>> մակնիշի <<99 SL 777>> պետական համարանիշով փոխադրամիջոցի համար գույքահարկի գծով չմարված հարկային ամբողջ պարտավորությունը կազմում է 544.904 ՀՀ դրամ, որից ապառքը՝ 325.500 ՀՀ դրամ, դրա նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերը՝ 219.404 ՀՀ դրամ, իսկ <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նախատեսված իրավական կարգավորման համաձայն՝ ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները:

Սույն որոշմամբ վկայակոչված իրավական նորմերի վերլուծության և սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հայցը բավարարելով և հայցի առարկա հանդիսացող 544.904 ՀՀ դրամն Ավետիս Ափիյանից բռնագանձելով, իրավացիորեն է եզրահանգել, որ <<RANGE ROVER 4.4L V8>> մակնիշի ավտոմեքենան արդեն իսկ հաշվառված է եղել Ավետիս Ափիյանի անվամբ, և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ուժով նշված ավտոմեքենայի համար գույքահարկի գծով առաջացած պարտքը մարելու պարտավորությունը կրում է ավտոմեքենայի նոր սեփականատերը, տվյալ դեպքում՝ Ավետիս Ափիյանը, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված այն պատճառաբանությանը, որ Ավետիս Ափիյանի կողմից ավտոմեքենան ձեռք բերելու դրությամբ հաշվարկված է եղել 58.125 ՀՀ դրամ, որի դիմաց 23.07.2012 թվականին կատարվել է 49.181 ՀՀ դրամ վճարում, ինչպես նաև այն, որ Ավետիս Ափիյանի կողմից 04.12.2013 թվականին վճարվել է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից տրված անթվակիր հիշեցման մեջ նշված գումարը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ Դատարանի վճիռը բեկանելու և այն փոփոխելու՝ հայցը մերժելու համար՝ նկատի ունենալով այն, որ Վարչական շրջանն իր

ներկայացրած հայցապահանջով պահանջել է Ավետիս Ափիյանից բռնագանձել նախքան ավտոմեքենան վերջինիս սեփականությանն անցնելն առաջացած պարտավորությունները, որոնք մարված չեն եղել նախկին սեփականատիրոջ կողմից: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված վճարումները կատարվել են <<RANGE ROVER 4.4L V8>> մակնիշի ավտոմեքենայի՝ Ավետիս Ափիյանի սեփականությունը դառնալուց հետո՝ արդեն իսկ ի կատարումն ձեռք բերված տրանսպորտային միջոցի համար հաշվարկված գույքահարկի գծով պարտավորությունների:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական շրջանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 16.400 ՀՀ դրամ և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք

բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական շրջանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ավետիս Ափիյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 19.02.2014 թվականի վճռին:

2. Ավետիս Ափիյանից հօգուտ Երևան համայնքի, ի դեմս՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, բռնագանձել 16.400 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2224/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2224/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինա Աբրամյանի ներկայացուցիչ Գոհար Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.10.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) (իրավանախորդ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Կարինա Աբրամյանի՝ ՀՀ պետական բյուջե 1.436.982 ՀՀ դրամ բռնագանձելու և պատասխանողին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և ըստ Կարինա Աբրամյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Նախարարության, Նախարարության «Զվարթնոց» մաքսատան պետ Ս. Սաֆարյանի (այսուհետ՝ Մաքսատան պետ)՝ Մաքսատան պետի 01.03.2013 թվականի թիվ 63 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Կարինա Աբրամյանից բռնագանձել 1.436.982 ՀՀ դրամ և պարտավորեցնել վերջինիս կատարելու ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարինա Աբրամյանը պահանջել է անվավեր ճանաչել Մաքսատան պետի 01.03.2013 թվականի թիվ 63 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 09.12.2013 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վերակազմակերպման հիմքով Կոմիտեն փոխարինվել է Նախարարությամբ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.10.2014

թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 09.12.2013 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինա Աբրամյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նախարարությունը:

2.1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ, 105-րդ և 199-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կարինա Աբրամյանի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալը որևէ նշանակություն չունի սույն գործի լուծման համար, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված արտոնությունը կապված է ոչ թե անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ունենալու, այլ՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու հետ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պարտադիր նախապայման պետք է հանդիսանա այդ խախտման արդյունքում պետական բյուջե որոշակի չափով մաքսատուրքերի մուտք չլինելու հանգամանքը: Մինչդեռ սույն գործով Կարինա Աբրամյանը, ժամանելով Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության համար, Հայաստանի Հանրապետություն է ներմուծել իր անձնական օգտագործման իրերը, որոնց համար վերջինս մաքսատուրք վճարելու պարտականություն չի կրում: Հետևաբար Կարինա Աբրամյանի կողմից ներմուծված ապրանքները «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպելը կրում է ձևական բնույթ, և վերջինիս նկատմամբ 1.436.982 ՀՀ դրամի չափով տուգանք չէր կարող կիրառվել: Բացի այդ, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված կանոնները չեն կարող կիրառելի լինել Կարինա Աբրամյանի նկատմամբ, հակառակ պարագայում վերջինս, մշտապես բնակվելով Հայաստանի Հանրապետությունում, պետք է արտահանի իր անձնական օգտագործման կենցաղային իրերը, ինչը կզրկի նրան Հայաստանի Հանրապետությունում բնակվելու հնարավորությունից և կխախտի Կարինա Աբրամյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության շրջանակներում տուգանքի չափը կախված է ներմուծվող ապրանքների՝ «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպման արդյունքում գանձվող համապատասխան մաքսային վճարների մեծությունից: Մինչդեռ տվյալ դեպքում Կարինա Աբրամյանը, Հայաստանի Հանրապետություն ներմուծելով իր անձնական օգտագործման գույքը, ազատված է այն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպելու արդյունքում գանձվող մաքսատուրքից և մաքսային վճարներից: Հետևաբար հնարավոր չէ կատարել Կարինա Աբրամյանի նկատմամբ նշանակված տուգանքի չափի հաշվարկ, ինչը մատնանշվել է Վերաքննիչ դատարանի որոշմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.10.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.12.2013 թվականի վճռին:

2.2. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Կարինա Աբրամյանի կողմից ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չեն հանձնվել պատասխանատու պահպանության, չեն վերաարտահանվել, որի հետևանքով խախտվել է ապրանքի հետագա արտահանման պարտավորությունը՝ առաջացնելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պատասխանատվություն: Նման պարագայում վճարման ենթակա մաքսային վճարների տարբերություն առաջանալու մասին խոսք լինել չի կարող: Վճռաբեկ բողոքում բարձրացված այն փաստարկը, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով ամրագրված նորմը չի կարող կիրառելի համարվել մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն ժամանած անձանց նկատմամբ, անհիմն է, քանի որ ոչ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքով, ոչ մաքսային հարաբերությունները կարգավորորող որևէ այլ իրավական ակտով նման դրույթ ամրագրված չէ:

Վիճարկվող որոշումը չի ընդունվել որևէ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման արդյունքում: Նույնիսկ Դատարանի վճռում առկա չէ հղում որևէ իրավական նորմի, որի խախտմամբ կամ սխալ կիրառմամբ ընդունվել է նշված որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կարինա Աբրամյանի կողմից Կոմիտեի «Զվարթնոց» մաքսատանը 09.07.2012 թվականին թիվ F 426 ԲՄՀ-ով «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով հայտարարագրվել է 362կգ ընդհանուր քաշով օգտագործված հագուստ և այլ անձնական իրեր (ըստ մասնացուցակի՝ 25 կանոն ապրանք, այդ թվում՝ 3 հեռուստացույց, 2 փոշեկուլ, տեսախցիկ, համակարգիչ, թվային ֆոտոխցիկ և այլն)՝ 30 օր ժամկետով **(հատոր 1-ին, գ.թ. 11-20):**

2) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 08.08.2012 թվականի թիվ 25/01-50615 և 21.03.2013 թվականի թիվ 22-19560 տեղեկանքների համաձայն՝ Կարինա Գուրգենի Աբրամյանը 06.08.2012 թվականին դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, և գործը գտնվում է քննարկման փուլում **(հատոր 1-ին, գ.թ. 36, 39):**

3) Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 10.08.2012 թվականի թիվ Մ-488/8-2 գրության համաձայն՝ 09.07.2012 թվականին թիվ F 426 ԲՄՀ-ով «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքների ժամկետը սահմանված կարգով երկարաձգվել է 180 օրով **(հատոր 1-ին, գ.թ. 37):**

4) Կոմիտեի «Զվարթնոց» մաքսատան 15.02.2013 թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» թիվ 3 արձանագրության համաձայն՝ ՌԴ քաղաքացի Կարինա Աբրամյանը «Զվարթնոց» մաքսատանը 09.07.2012 թվականի թիվ F 426 ԲՄՀ-ով ձևակերպել է 362կգ քաշով օգտագործված հագուստ և այլ անձնական իրեր «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով 30 օր ժամկետով, որը երկարաձգվել է ևս 180 օր ժամկետով, սակայն մինչև վերաարտահանման պարտավորության ժամկետի ավարտը՝ 04.02.2013 թվականը, բեռը վերջնական մաքսային ձևակերպում չի ստացել **(հատոր 1-ին, գ.թ. 8):**

5) Մաքսատան պետի 01.03.2013 թվականի՝ «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 63 որոշման համաձայն՝ Կարինա Գուրգենի Աբրամյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և տուգանվել 1.436.982 ՀՀ դրամով՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավախախտման կատարման համար **(հատոր 1-ին, գ.թ. 7):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու համար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվության կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Մինչդեռ ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետի և 199-րդ հոդվածի 1-ին կետի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. սույն գործով վիճարկվող վարչական ակտով նշանակված տուգանքի չափը համապատասխանում է արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին այն պայմաններում, երբ այդ վարչական ակտով պատասխանատվության ենթարկված ֆիզիկական անձը, ՀՀ մաքսային տարածք ներմուծելով և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպելով անձնական օգտագործման իրեր, խախտել է այդ իրերի հետագա արտահանման պարտավորությունը:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժը» կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով մաքսային վճարներ են համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված մաքսատուրքը, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անկախ ապրանքների և տրանսպորտային միջոցների բնույթից և քանակից՝ անձն իրավունք ունի ընտրել կամ փոխել մաքսային ռեժիմը, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար սահմանված մաքսային ռեժիմը կարող է փոփոխվել դրանց՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով բացթողումից հետո այն ժամանակահատվածում, որի ընթացքում նույն օրենսգրքի համաձայն դրանք գտնվում են մաքսային հսկողության ներքո (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը կարգավորում է ապրանքների հետագա արտահանման պայմանով ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք: Նույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի հա-

մաձայն՝ մաքսային այս ռեժիմի շրջանակներում ապրանքների բացթողումը «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած ժամկետով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով, ընդ որում, եթե սկզբնապես խնդրարկված ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա վերադաս մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա կարող է երկարաձգել այդ ժամկետը ներմուծման օրվանից մեկ տարին չգերազանցող ժամկետով (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է՝

ա) այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում դրանք վերահայտարարագրել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաներմուծում» մաքսային ռեժիմով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքներն արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից, կամ՝

բ) նույն հոդվածի «ա» ենթակետում նշված ժամկետում ապրանքներն արտահանելու դեպքում վճարել նույն ենթակետում նշված տույժերը՝ հաշվարկված դրանք արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս մաքսային մարմինների կողմից գանձվում են մաքսային վճարներ, այդ թվում՝ ա) մաքսատուրքեր, բ) մաքսավճարներ, գ) մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերը նշված իրավական նորմերի կարգավորումներին, նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ ՀՀ մաքսային օրենսդրությամբ անձին իրավունք է վերապահված ընտրելու համապատասխան մաքսային ռեժիմ կամ փոփոխելու իր կողմից ընտրված մաքսային ռեժիմը: ՀՀ մաքսային օրենսդրությամբ նախատեսված այս իրավունքն անձանց համար երաշխավորում է հետևյալ իրավական հնարավորությունները. առաջին՝ ընտրել օրենքով սահմանված մաքսային ռեժիմներից որևէ մեկը՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները, երկրորդ՝ փոփոխել իր կողմից ընտրված մաքսային ռեժիմն օրենքով սահմանված մաքսային ռեժիմով՝ կրելով դրա համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում՝ մաքսային վճարների վճարման հետ կապված պարտականությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ ապրանքների բացթողումը «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած ժամկետով, որը չի կարող մեկ տարուց ավելի լինել: Այդ ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է դրանք վերահայտարարագրել «վերաարտահանում» մաքսային ռեժիմով կամ հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը, որի դեպքում միայն անձի կողմից հետագա արտահանման պարտավորությունը համարվում է չխախտված: Միաժամանակ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքներն օրենքով սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում այդ ապրանքները վերահայտարարագրել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաներմուծում» մաքսային ռեժիմներից որևէ մեկով՝

վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար սահմանված տույժերը *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Լիլիթ Բաբասիևայի թիվ ՎԴ/7537/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)*:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է սահմանել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են ապրանքների հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորության պատշաճ կատարման հետ և չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կատարմանը, ինչպես նաև այդպիսի պարտականության կատարման ապահովմանը: Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման՝ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով սահմանված կարգի դեմ: Խնդրո առարկա իրավախախտումը դրսևորվում է հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելու եղանակով: Նշված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 50.000 ՀՀ դրամի չափով:

Վերը նշված իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ մաքսային տարածք ներմուծված և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքների հետագա արտահանման պարտավորության խախտումը, որը դրսևորվում է այդ ապրանքներն օրենքով նախատեսված ժամկետում չարտահանելու ձևով, առաջացնում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվություն: Մաքսային կանոնների նշված խախտման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է ընտրել տուգանքը, որի չափը կախված է ներմուծված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունից և կազմում է դրա 50 տոկոսը, բայց ոչ պակաս քան 50.000 ՀՀ դրամ: Հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը հաշվարկելու համար անհրաժեշտ է նախևառաջ հաշվարկել «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը, որի 50 տոկոսն էլ կկազմի նշանակ-

վող տուգանքի չափը: Իսկ այն դեպքում, երբ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսը պակաս է 50.000 ՀՀ դրամից, ապա ՀՀ մաքսային օրենսգրքի 199–րդ հոդվածի 1–ին կետով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցի՝ տուգանքի չափը կկազմի 50.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի իմաստով մաքսային վճարներ են համարվում ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված (ա) մաքսատուրքը, (բ) մաքսավճարը, ինչպես նաև (գ) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Հետևաբար «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարները կազմում են ՀՀ մաքսային սահմանով այդ ապրանքների տեղափոխման համար օրենքով սահմանված մաքսատուրքի, մաքսավճարի, ինչպես նաև հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հանրագումարը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 98–րդ հոդվածի համաձայն՝ մաքսատուրքերը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար նույն օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարներ են:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 99–րդ հոդվածի համաձայն՝ մաքսատուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվում են նույն օրենսգրքով:

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից բխում է, որ մաքսատուրքը իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է, որը վճարվում է ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105–րդ հոդվածի 5–րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը: Որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում.

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ նույն հոդվածի 3–րդ կետի համաձայն սահմանված ապրանքատեսակների:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105–րդ հոդվածի 4–րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ ուղեկցող բեռ է համարվում ֆիզիկական անձանց հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռը:

Անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105–րդ հոդվածի 5–րդ կետի իրավակարգավորմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ նշված իրավադրույթով օրենսդիրը ֆիզիկական անձանց համար սահմանել է արտոնություն, այն է՝ առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը, և որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում,

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանված ապրանքատեսակների *(տես, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Վահե Հարությունյանի թիվ ՎԴ/5170/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

Այսպիսով, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համադրված վերլուծությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք ազատված են մաքսատուրքի վճարման պարտականությունից ՀՀ մաքսային սահմանով այնպիսի ապրանքներ տեղափոխելու դեպքում, որոնք գտնվում են ֆիզիկական անձանց հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռում և չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսավճարը նույն օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 111-րդ հոդվածի «բ» ենթակետի համաձայն՝ մաքսավճարից ազատվում են ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող այն ապրանքները, որոնց համար նույն օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված է մաքսատուրքի արտոնություն:

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը ֆիզիկական անձանց համար սահմանել է մաքսավճարի՝ մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով օգտագործվող պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճարի, վճարման արտոնություն: Այսպես՝ ֆիզիկական անձինք ազատված են մաքսավճարի վճարման պարտականությունից ՀՀ մաքսային սահմանով այնպիսի ապրանքներ տեղափոխելու դեպքում, որոնց համար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 111-րդ հոդվածի «բ» ենթակետի և 105-րդ հոդվածի 5-րդ կետի համադրված վերլուծությունից բխում է, որ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ մաքսային սահմանով անձնական օգտագործման իրերի տեղափոխման համար մաքսավճարի դեպքում ևս գործում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսատուրքի գծով սահմանված արտոնյալ ռեժիմը, որի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսավճարի վճարման տեղափոխել իրենց հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռում գտնվող գործարանային փաթեթավորում ու պիտակավորում չունեցող ապրանքները:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ օրենսդրությամբ մաքսային մարմինների կողմից գանձվող ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգ-

տագործման իրերի ներմուծման համար այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ սահմանված չեն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ֆիզիկական անձինք ազատված են ՀՀ մաքսային տարածք ներմուծված և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին բավարարող անձնական օգտագործման իրերի համար մաքսատուրքի և մաքսավճարի վճարման պարտականությունից: Ֆիզիկական անձինք միաժամանակ անձնական օգտագործման իրերի ներմուծման համար որևէ հարկային պարտավորություն չունեն: Հետևաբար ֆիզիկական անձանց անձնական օգտագործման իրերի, այսինքն՝ ֆիզիկական անձանց հետ միաժամանակ ՀՀ մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռում գտնվող գործարանային փաթեթավորում ու պիտակավորում չունեցող ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը հավասար է զրոյի:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մաքսատան պետի 01.03.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 63 որոշմամբ Կարինա Աբրամյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և տուգանվել 1.436.982 ՀՀ դրամով՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավախախտման կատարման համար: Ըստ նշված վարչական ակտի՝ Կարինա Աբրամյանին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացող մաքսային կանոնների խախտումը հանգում է հետևյալին. վերջինս 09.07.2012 թվականին «Զվարթնոց» մաքսատան բեռնային բաժնով թիվ F-426 (M-389) ԲՄՀ-ով «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք է ներմուծել բեռ՝ 362կգ ընդհանուր քաշով օգտագործված հագուստ և այլ անձնական իրեր, 30 օր ժամկետով, որը երկարաձգվել է ևս 180 օր ժամկետով, սակայն մինչև վերաարտահանման պարտավորության ժամկետի ավարտը՝ 04.02.2013 թվականը, վերը նշված բեռը վերջնական մաքսային ձևակերպում չի ստացել:

Դատարանը Կարինա Աբրամյանի հակընդդեմ հայցը բավարարելիս, սույն գործի լուծման համար էական համարելով Կարինա Աբրամյանի կողմից Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանելու և իր անձնական ու օգտագործված իրերը ներմուծելու հանգամանքը, պատճառաբանել է, որ Կարինա Աբրամյանը չի կարող ծանրաբեռնվել ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածներով նախատեսված պարտավորություններով, քանի որ անձնական օգտագործման գույքի առումով ՀՀ օրենսդրությունն անձանց ազատել է մաքսատուրք վճարելու պարտականությունից, և ըստ այդմ՝ օգտագործված իրերի նկատմամբ որևէ մաքսային ռեժիմի կիրառումն այլ կերպ, քան ձևական պահանջների կատարում, չի կարող չմեկնաբանվել: Բացի այդ, Դատարանը գտել է, որ սույն վարչական գործի շրջանակներում տուգանքի չափը որոշելիս անհրաժեշտ էր պարզել Կարինա Աբրամյանի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման իրերի համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը: Մինչդեռ, ըստ Դատարանի, *«(...) եթե (...) Կարինա Աբրամյանն իր անձնական օգտագործման (...) իրերն ի սկզբանե ձևակերպեր «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, ապա վերջինս անպայմանորեն կազատվեր մաքսատուրքից, հետևաբար (...) Կարինա Աբրամյանի նկատմամբ չէր կարող կիրառվել 1.436.982 ՀՀ դրամի չափով տուգանք (...)»:*

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով Նախարարության վերաքննիչ բողոքը և բեկանելով Դատարանի վճիռը, անհիմն է համարել Կարինա Աբրամյանի

հակընդդեմ հայցը բավարարելու հիմքում դրված Դատարանի այն պատճառաբանությունները, որոնք վերաբերում են իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված արտոնության կիրառման անհրաժեշտությանը, քանի որ ըստ Վերաքննիչ դատարանի՝ Կարինա Աբրամյանի կողմից «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի՝ օրենսդրորեն սահմանված պայմանների ու կարգի պահպանումը չի կարող կախվածության մեջ դրվել նշված արտոնության կիրառման կամ չկիրառման հանգամանքից: Այսպես՝ Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման համաձայն՝ *«(...) Կարինա Աբրամյանի կողմից խախտվել են [իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի] 37-րդ և 40-րդ հոդվածների պահանջները, քանի որ մինչև հայտարարագրման սահմանված ժամկետի ավարտը (...) նա չի դիմել մաքսային մարմիններին հայտարարագրման ժամկետի երկարաձգման կամ ներմուծված ապրանքն այլ մաքսային ռեժիմով հայտարարագրելու համար, ինչն իր հերթին առաջացրել է [իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի] 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվություն (...)»:* Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության, քանի որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը ստուգելու նպատակով Դատարանը պետք է քննարկման առարկա դարձներ այդ ակտով Կարինա Աբրամյանի նկատմամբ նշանակված տուգանքի գումարի չափի հաշվարկման իրավաչափության հարցը՝ պարզելու համար Կարինա Աբրամյանի կողմից մաքսային կանոնների խախտման օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ նշանակված տուգանքի գումարի չափի համապատասխանությունն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տուգանքի չափին:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ մաքսային տարածք ներմուծված և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքների հետագա արտահանման պարտավորության խախտումը, որը դրսևորվում է այդ ապրանքներն օրենքով նախատեսված ժամկետում չարտահանելու ձևով, առաջացնում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Մաքսատան պետի 01.03.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 63 որոշմամբ, Կարինա Աբրամյանը ենթարկվել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական պատասխանատվության և տուգանվել է 1.436.982 ՀՀ դրամով այն բանի համար, որ վերջինս 09.07.2012 թվականին «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք է ներմուծել բեռ՝ 362կգ ընդհանուր քաշով օգտագործված հագուստ և այլ անձնական իրեր, և մինչև վերաարտահանման պարտավորության ժամկետի ավարտը՝ 04.02.2013 թվականը, նշված բեռը վերջնական մաքսային ձևակերպում չի ստացել:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործի փաստերով հաստատվում է Կարինա Աբրամյանի կողմից վիճարկվող վարչական ակտով արձանագրված մաքսային կանոնների խախտում թույլ տալու հանգամանքը, քանի որ վերջինս պատշաճ կերպով չի կատարել իր կողմից «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք ներմուծած 362կգ ընդհանուր քաշով օգտագործված հագուստի և այլ անձնական իրերի հետագա արտահանման պարտավորությունը՝ դրանով իսկ խախտելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածների պահանջները: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է հան-

գել այն եզրակացության, որ Կարինա Աբրամյանի արարքում առկա էր իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը:

Միաժամանակ սույն գործի փաստերով հաստատվում է նաև Կարինա Աբրամյանի կողմից ներմուծված ապրանքներն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված անձնական օգտագործման իրերի հասկացությանը համապատասխանելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարինա Աբրամյանի կողմից թույլ տրված մաքսային կանոնների նշված խախտման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է ընտրել տուգանքը, որի չափը հաշվարկելու համար անհրաժեշտ է նախևառաջ հաշվարկել «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպված և հետագա արտահանման պարտավորությունը խախտված ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների, այսինքն՝ ՀՀ մաքսային սահմանով այդ ապրանքների տեղափոխման համար օրենքով սահմանված մաքսատուրքի, մաքսավճարի, ինչպես նաև հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հանրագումարի մեծությունը, որի 50 տոկոսն էլ (բայց ոչ պակաս, քան 50.000 ՀՀ դրամ) կկազմի նշանակվող տուգանքի չափը: Հետևաբար Մաքսատան պետի 01.03.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 63 որոշմամբ Կարինա Աբրամյանի նկատմամբ նշանակված տուգանքի չափի օրինականության հարցը պարզելու նպատակով նախ անհրաժեշտ է բացահայտել Կարինա Աբրամյանի կողմից ՀՀ ներմուծված 362կգ ընդհանուր քաշով ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների, այսինքն՝ ՀՀ մաքսային սահմանով այդ ապրանքների տեղափոխման համար օրենքով սահմանված մաքսատուրքի, մաքսավճարի, ինչպես նաև հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հանրագումարի մեծությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետով ֆիզիկական անձանց ազատել է մաքսատուրքի վճարման պարտականությունից, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 111-րդ հոդվածի «բ» կետի ուժով ֆիզիկական անձինք ազատված են նաև ՀՀ մաքսային սահմանով վերը նշված պահանջներին համապատասխանող անձնական օգտագործման իրերը տեղափոխելու համար մաքսավճարի վճարման պարտականությունից, իսկ ՀՀ օրենսդրությամբ անձնական օգտագործման իրերի ներմուծման համար հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ սահմանված չեն:

Վերոգյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Կարինա Աբրամյանի կողմից 09.07.2012 թվականին «Զվարթնոց» մաքսատան բեռնային բաժնով «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք ներմուծված 362կգ ընդհանուր քաշով ապրանքների համար մաքսատուրքի և մաքսավճարի հաշվարկման վրա տարածվում են իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետով և 111-րդ հոդվածի «բ» կետով սահմանված արտոնությունները, հետևաբար Կարինա Աբրամյանն ազատված է այդ ապրանքները ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսատուրքի և մաքսավճարի վճարման պարտականությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինա Աբրամյանի կողմից 09.07.2012 թվականին «Զվարթնոց» մաքսատան բեռնային բաժնով «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք ներմուծված անձնական օգտագործման իրերի հետագա արտահանման պարտավորության խախտման դեպքում Կարինա Աբրամյանի նկատմամբ չէր կարող նշանակվել տուգանք՝ 1.436.982 ՀՀ դրամի չափով, քանի որ այդ ապրանքների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը մաքսատուրքի և մաքսավ-

ձարի վճարման պարտականությունից ազատված լինելու, ինչպես նաև հարկային պարտավորությունների բացակայության պայմաններում հավասար է զրոյի: Այլ կերպ ասած՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Կարինա Աբրամյանի նկատմամբ նշանակված 1.436.982 ՀՀ դրամ տուգանքը չի համապատասխանում իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, քանի որ Կարինա Աբրամյանի կողմից 09.07.2012 թվականին «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք ներմուծված ապրանքները ՀՀ մաքսային սահմանով տեղափոխելու համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսատուրքի և մաքսավճարի մեծությունը հավասար է զրոյի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստերը հնարավորություն են տալիս արձանագրելու, որ վիճարկվող վարչական ակտը՝ Սաքսատան պետի 01.03.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 63 որոշումը, ընդունվել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 5-րդ կետի, 111-րդ հոդվածի «բ» ենթակետի, ինչպես նաև 199-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ: Հետևաբար Սաքսատան պետի 01.03.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 63 որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է և ենթակա էր անվավեր ճանաչման, ինչը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, և ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից՝ գործը նոր քննության ուղարկելով:

Ինչ վերաբերում է Կարինա Աբրամյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով նոր քննության ուղարկելու մասով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու վերաբերյալ բողոք բերած անձի պահանջին, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոք բերած անձը նշված պահանջը հիմնավորում է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանած անձանց խմբի համար իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածները չեն կարող կիրառելի լինել:

Դատարանը, փաստելով, որ սույն գործով Կարինա Աբրամյանը չի կարող ծանրաբեռնվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված պարտավորություններով, մերժել է Կոմիտեի կողմից ներկայացված և՛ գումարի բռնագանձման պահանջը, և՛ պատասխանողին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված պարտականությունը կատարել պարտավորեցնելու պահանջը:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Կարինա Աբրամյանի կողմից խախտվել են ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածների պահանջները, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ամբողջ ծավալով ուղարկել նոր քննության:

Մինչդեռ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը, փաստելով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ և 40-րդ հոդվածների դրույթները կիրառելի են Կարինա Աբրամյանի նկատմամբ, արդեն իսկ հաստատված է համարել վերջինիս կողմից նշված հոդվածների պահանջները չկատարելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածը «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձի համար սահմանել է երկու այլընտրանքային պարտավորություն, այն է՝ ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է դրանք վերահայտարարագրել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերներմուծում» մաքսային ռեժիմով կամ արտահանել ապրանքները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինա Աբրամյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները կատա-

րելուն պարտավորեցնելու մասին Նախարարության հայցապահանջի հիմնավորվածությունը ենթակա է պարզման սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հետևաբար գործն այդ մասով ենթակա է նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Կարինա Աբրամյանից 1.436.982 ՀՀ դրամ բռնագանձելու հայցապահանջի մասով, ինչպես նաև Մաքսատան պետի 01.03.2013 թվականի թիվ 63 որոշումն անվավեր ճանաչելու հակընդդեմ հայցապահանջի մասով, անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գումարի բռնագանձման պահանջի մասով Նախարարության հայցի և Կարինա Աբրամյանի հակընդդեմ հայցի մասով գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Կարինա Աբրամյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու հայցապահանջի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ դատական ակտը անփոփոխ թողնելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն որոշմամբ արտահայտված պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրակա-

նացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հակընդդեմ հայցվոր Կարինա Աբրամյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 83.110 ՀՀ դրամի չափով պետական տուրք: Տվյալ դեպքում սույն գործով քննության առարկա է հանդիսանում երկու ոչ գույքային և մեկ գույքային պահանջ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ մեկ ոչ գույքային և մեկ գույքային պահանջի մասով, այսինքն՝ Կարինա Աբրամյանի կողմից 63.110 ՀՀ դրամի ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վերջինիս դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինա Աբրամյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 63.110 ՀՀ դրամի չափով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Նախարարության կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարինա Աբրամյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով դատական ծախսերի, այդ թվում նաև՝ Կարինա Աբրամյանի կողմից այդ պահանջի մասով վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.10.2014 թվականի որոշման՝ գործը՝ Կարինա Աբրամյանից 1.436.982 ՀՀ դրամ բռնագանձելու ՀՀ ֆինանսների նախարարության հայցապահանջի մասով և ՀՀ ֆինանսների նախարարության «Զվարթնոց» մաքսատան պետ Ս. Սաֆարյանի 01.03.2013 թվականի թիվ 63 որոշումն անվավեր ճանաչելու Կարինա Աբրամյանի հակընդդեմ հայցի մասով, նոր քննության ուղարկելու մասերը, և այդ մասերով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 09.12.2013 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.10.2014 թվականի որոշումը՝ Կարինա Աբրամյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով գործը նոր քննության ուղարկելու մասով, թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. ՀՀ ֆինանսների նախարարությունից հօգուտ Կարինա Աբրամյանի բռնագանձել 63.110 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Կարինա Աբրամյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով դատական ծախսերի, այդ թվում նաև՝ Կարինա Աբրամյանի կողմից այդ պահանջի մասով վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6690/05/13
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/6690/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.07.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արարատ Ափոյանի ընդդեմ Ծառայության՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արարատ Ափոյանը պահանջել է պարտավորեցնել Ծառայությանն ընդունելու երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու մասին որոշում:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 26.03.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.07.2014 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.03.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր, կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշումը, որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով իրավահարաբերությունների ծագման պահ է հանդիսանում Արարատ Ափոյանի՝ Ծառայությունից արձակվելու օրը, քանի որ ծառայությունից արձակվելու դեպքում է զինծառայողը ձեռք բերում երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք 20 օրացուցային և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի առկայության պայմաններում: Մինչդեռ ստորադաս դատարանները «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջների սխալ կիրառման արդյունքում գտել են, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածն առավել բարենպաստ կարգավորումներ է սահմանել, քան «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ նախկին իրավակարգավորումների պայմաններում Արարատ Ափոյանը կենսաթոշակի իրավունք ձեռք չի բերել, հետևաբար վերջինիս նկատմամբ զինվորական ծառայության ստաժը նախկին իրավակարգավորումներով հաշվարկելու հիմք առկա չէ:

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի թիվ ՎԴ/4892/05/09 նախադեպային որոշումը, որը վերաբերում է մինչև 01.01.2011 թվականը գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական ակտերի կիրառմանը և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից ելնելով՝ կիրառելի չէ 01.01.2011 թվականից գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետից հետո սույն գործով առաջացած փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.07.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ 03-018110 զինվորական գրքույկի համաձայն՝ Արարատ Ափոյանը 24.10.1986 թվականից մինչև 29.03.1988 թվականը ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում **(գ.թ. 11):**

2) Ծառայության 17.07.2013 թվականի թիվ 6/ԿՎ տեղեկանքի և թիվ 03-018110 զինվորական գրքույկի համաձայն՝ Արարատ Ափոյանը 14.08.1995 թվականից մինչև 01.04.2012 թվականը ծառայել է Ծառայության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժանմունքում **(գ.թ. 7, 11):**

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 25.07.2013 թվականին տրված գրության համաձայն՝ Արթիկ քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1.720-1.860 մետր բարձրությունների վրա, քաղաքի միջին մակերևույթը գրանցված է որպես 1.800 մետր Բալթիկ ծովի մակերևույթից **(գ.թ. 8):**

4) Ծառայության տնօրենի 30.03.2012 թվականի թիվ 165-Ագ հրամանով Արարատ Ափոյանը 01.04.2012 թվականին ազատվել է ազգային անվտանգության մարմիններում զինվորական ծառայությունից **(գ.թ. 32):**

5) 10.06.2013 թվականին Արարատ Ափոյանը դիմում է ներկայացրել Ծառայության տնօրենին՝ խնդրելով իրեն նշանակել երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ **(գ.թ. 31):**

6) Ծառայության կադրերի վարչության պետի տեղակալ Ս. Մովսեսյանի 22.08.2013 թվականի թիվ 6/ԿՎ տեղեկանքի համաձայն՝ **Արարատ Ափոյանի զինվորական ծառայության ընդհանուր ստաժն օրացույցային հաշվարկով կազմել է 18 տարի 2 ամիս 2 օր**, որից 1 տարի 6 ամիս 15 օրը ԽՍՀՄ զինված ուժերում: Քաղաքացիական հաստատություններում Արարատ Ափոյանի աշխատանքային ստաժը կազմում է ՝ 6 տարի 2 ամիս 14 օր:

Արարատ Ափոյանի ընդհանուր աշխատանքային ստաժը կազմել է 24 տարի 4 ամիս 16 օր **(գ.թ. 33):**

7) Ծառայության 26.06.2013 թվականի թիվ 6/1732 գրությամբ Արարատ Ափոյանին հայտնվել է, որ նա չունի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ, հետևաբար երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակ չի կարող ստանալ **(գ.թ. 6):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն գործի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. զինվորական ծառայությունից արձակված զինծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար արդյո՞ք կիրառելի են մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորումները, եթե զինծառայողը ծառայությունից արձակվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո (ուժի մեջ է մտել 01.01.2011 թվականին):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **նույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն** Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե նույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով **կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի**, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը տարանջատել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր:

Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմին սահմանված կարգով դիմելու պարագայում:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է պետական կենսաթոշակների «աշխատանքային» և «զինվորական» տեսակները, որոնցից յուրաքանչյուրի համար նույն հոդվածով սահմանվել են ենթատեսակներ: Մասնավորապես՝ զինվորական կենսաթոշակը ստորաբաժանված է «երկարամյա ծառայության», «հաշմանդամության» և «կերակրողին կորցնելու դեպքում» ենթատեսակների:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետականգործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողներ, վարժական հավաքների կանչված զինապարտներ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողներ և դատական ակտերի հարկադիր կատարողներ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության լույսի ներքո անդրադառնալով նույն օրենքի 17-րդ հոդվածին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ զինվորական կենսաթոշակի իրավունքը ծագում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում նշված անձանց մոտ, եթե վերջիններս բավարարում են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պայմաններին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլուխը կարգավորում է զինվորական կենսաթոշակ **նշանակելու** հետ կապված հարաբերությունները: Ընդ որում, նշված գլխի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ զինվորական կենսաթոշակների հիմքում դրված են բացառապես ծառայողական (աշխատանքային) հարաբերությունները: Տվյալ դեպքում օրենսդիրը հաշվի է առել ծառայողական պարտականությունների՝ արտակարգ, կյանքի և/կամ առողջության համար առավել վտանգավոր պայմաններում կատարելու հանգամանքը՝ այս առումով միասնական և հավասար մոտեցում ցուցաբերելով նմանատիպ ծառայություն իրականացնող համակարգերին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին, որը զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողներին **երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում** օրացուցային հաշվարկով հաշվառվում են՝

1) համապատասխան մարմինների համակարգերի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

2) ԽՍՀՄ զինված ուժերում, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի և ԽՍՀՄ

ներքին գործերի նախարարության համակարգերում զինվորական ծառայության, ինչպես նաև դրանց ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

3) դատապարտված կամ քրեական հետապնդման ենթարկված այն զինծառայողների՝ կալանքի տակ, ազատազրկման վայրում և աքսորում գտնվելու ժամանակաշրջանները, որոնց նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ կամ ընդունվել քրեական գործը կարճելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով:

Վերը նշված վերլուծության ներքո անդրադառնալով «երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի» և «երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքի» համար հիմք հանդիսացող իրավաբանական փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված պայմանները հանդիսանում են այնպիսի իրավաբանական փաստերի ամբողջություն, որոնց հիման վրա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում նշված անձանց մոտ ծագում է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը:

Այդ փաստերն են՝ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելը և արձակվելու օրվա դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ ունենալը: Այսինքն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման համար հիմք է հանդիսանում ծառայությունից արձակվելը և ծառայությունից արձակելու հիմքով պայմանավորված՝ ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ 20 օրացուցային տարվա զինվորական ստաժ ունենալը:

Ըստ այդմ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել են, թե զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում ծառայության (աշխատանքի) իրականացման փաստացի ժամանակահատվածից բացի ինչ հավելյալ ժամկետներ են ներառվում: Դրանք այնպիսի ժամկետներն են, որոնց ընթացքում անձն իրականացրել է այնպիսի գործունեություն, կամ վերջինիս նկատմամբ առկա են եղել այնպիսի հանգամանքներ, որոնք հավասարեցված են զինվորական ծառայությանը: Այսպիսով, երկարամյա ծառայության կենսաթոշակի համար անհրաժեշտ **զինվորական ծառայության ստաժն իր մեջ ներառում է փաստացի զինվորական ծառայության և դրան հավասարեցված այլ գործունեության և/կամ օրենքով սահմանված՝ զինվորական ծառայությանը հավասարացված հանգամանքների ժամանակահատվածները, և դրանց հանրագումարը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված 20 օրացուցային տարվան հավասար և ավելի տարի լինելու դեպքում անձի մոտ կարող է ծագել երկարամյա կենսաթոշակի իրավունք:**

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ **նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում** զինվորական ծառայության ստաժում հաշվառվում են մեկուկեսի չափով 1973 թվականի ապրիլի 01-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1.500 մետր և ավելի, իսկ 1998 թվականի նոյեմբերի 30-ից՝ 1.700-2.000 մետր բարձրության լեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ նշանակվում է՝ զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, իսկ նույն օրենքի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը այդպիսի կենսաթոշակի իրավունք ունեցող անձի մոտ ծագում է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու հիմքով կենսաթոշակ նշանակելու պարագայում:

Ընդ որում, երկարամյա կենսաթոշակի իրավունքի առկայության դեպքում անձին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելիս պետք է հաշվի առնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնյալ ժամկետների հիմքերի առկայությունը: Այսինքն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնյալ ժամկետները կազմում են երկարամյա ծառայության կենսաթոշակ **ստանալու իրավունքի իրացման** բաղադրատարրեր՝ ի տարբերություն նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների, որոնք հիմք են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման համար:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արարատ Ափոյանը 24.10.1986 թվականից մինչև 29.03.1988 թվականը ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում, 14.08.1995 թվականից մինչև 01.04.2012 թվականը ծառայել է Ծառայության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժանմունքում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 25.07.2013 թվականին տրված գրության համաձայն՝ Արթիկ քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1.720-1.860 մետր բարձրությունների վրա, իսկ քաղաքի միջին մակերևույթը գրանցված է որպես 1.800 մետր Բալթիկ ծովի մակերևույթից**:**

Արարատ Ափոյանը 01.04.2012 թվականին ազատվել է ազգային անվտանգության մարմիններում զինվորական ծառայությունից**:**

Արարատ Ափոյանի զինվորական ծառայության ընդհանուր ստաժն օրացույցային հաշվարկով կազմել է 18 տարի 2 ամիս 2 օր, որից 1 տարի 6 ամիս 15 օրը ԽՍՀՄ զինված ուժերում, իսկ 16 տարի 7 ամիս 7 օրը՝ Ծառայությունում:

Դատարանը, հղում կատարելով Հմայակ Ղարիբյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշմանը, գտել է, որ սույն գործով և թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով փաստական հանգամանքները նույնական են, և հայցը բավարարելու հիմքում դնելով թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, գտել է, որ Արարատ Ափոյանի զինվորական ծառայության ստաժը հաշվարկելիս պետք է հիմք ընդունել մինչև 25.12.2000 թվականը գործող ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ հաստատված կարգով ամրագրված պայմանները, այն է՝ մինչև 25.12.2000 թվականն Արարատ Ափոյանի ստաժը պետք է հաշվել արտոնյալ կարգով՝ մեկ ամսվա ծառայությունը հաշվելով 1,5 ամիս, այնուհետև ստացված արդյունքին պետք է գումարել ոչ արտոնյալ կարգով ծառայության ստաժը՝ 25.12.2000 թվականից մինչև 01.04.2012 թվականն ընկած ժամանակահատվածի զինվորական ծառայության համար: Վերջնական հաշվարկ կատարելով՝ Դատարանը եզրահանգել է, որ ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ Արարատ Ափոյանի ընդհանուր աշխատանքային ստաժը կազմել է 20 տարի 10 ամիս 7,5 օր, որից 19 տարի 3 ամիս 22,5 օրը կազմել է աշխատանքային ստաժը, իսկ 1 տարի 6 ամիս 15 օրը՝ ԽՍՀՄ զինված ուժերում ծառայությունը, այսինքն՝ Արարատ Ափոյանն ունեցել է ավելի քան 20 տարվա զինվորական ծառայության ստաժ, ուստի ծագել է երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակ ստանալու նրա իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Դատարանի եզրահանգումն առ այն, որ Արարատ Ափոյանը Ծառայությունից ազատվելու պահին՝ 01.04.2012 թվականին, ունեցել է ավելի քան 20 տարվա զինվորական ծառայության ստաժ, հետևաբար երկա-

րամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքն Արարատ Ափոյանի մոտ ծագել է, մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից սույն գործով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ գործող իրավակարգավորումների և ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի թիվ ՎԴ/4892/05/09 որոշման կիրառումն իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ զինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-243-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 01.01.2011 թվականը, կարգավորվել են նախ՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-49 օրենքով և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների նշանակման կարգի և նրանց ապահովության և արտոնությունների մասին» ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ, այնուհետև՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-258 օրենքով, ««Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա**, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վերոնշյալից հետևում է, որ այն դեպքերում, երբ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում, այդ ակտի գործողությունը տարածվում է **միայն մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա**, չի տարածվում դրանից հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Այսինքն՝ ըստ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության համընդհանուր սկզբունքի՝ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ եղած ժամանակահատվածում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավական ակտի կիրառելիության հարցն ուղղակիորեն կապված է կարգավորման առարկան կազմող իրավահարաբերության ծագման պահի հետ:

Սույն գործի փաստական հանգամանքները համադրելով վերոնշյալ իրավական վերլուծությունների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում իրավահարաբերությունների ծագման պահ է հանդիսանում Արարատ Ափոյանի՝ ծառայությունից արձակվելու օրը, քանի որ բոլոր դեպքերում երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքն անձի մոտ ծագում է ծառայությունից արձակվելու օրվանից, հետևաբար սույն գործով կիրառման ենթակա են Արարատ Ափոյանի ծառայությունից ազատվելու օրվա՝ 01.04.2012 թվականի դրությամբ գործող իրավակարգավորումները, որոնք իրենց հերթին սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թե՛ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-49 օրենքով, թե՛ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-258 օրենքով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը պայմանավորվել է **ծառայությունից ազատվելու պահին** որոշակի զինվորական ստաժի առկայությամբ, այսինքն՝ նախկինում գործող կարգավորումներով ևս երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքն անձի մոտ կարող էր ծագել միայն ծառայությունից արձակվելու պահին, եթե առկա էր համապատասխան ծառայության ստաժ:

Այսպես, «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-49 օրենքի (ուժը կորցրել է 30.11.1998 թվականին) 10-րդ հոդ-

վածի «ա» կետի համաձայն՝ **երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքից օգտվում են այն զինծառայողները, որոնք ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին** ունեն 20 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժ:

«Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» թիվ ՀՕ-258 օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետի (հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին) համաձայն՝ **երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվում են** Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմիններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով զինվորական ծառայություն անցած **այն զինծառայողները, ովքեր ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին** ունեն առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստաժ):

Այսպիսով, թե՛ նախկին, թե՛ ներկա կարգավորումներով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի ծագումն օրենսդիրը պայմանավորել է զինվորական ծառայությունից անձին արձակելու հետ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը գործող իրավական ակտերը կիրառելի կլինեին միայն այն դեպքում, եթե Արարատ Ափոյանի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը ծագեր մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, այսինքն՝ եթե Արարատ Ափոյանը ծառայությունից արձակվեր մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը և արձակման օրվա դրությամբ ունենար «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընդհանուր զինվորական ծառայության ստաժ:

Մինչդեռ, վերջինս ծառայությունից արձակվել է 01.04.2012 թվականին, հետևաբար սույն գործով կիրառելի են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, որոնց համաձայն՝ զինծառայողը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք է բերում, մասնավորապես, եթե ծառայությունից արձակվելու պահին ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների կողմից վկայակոչած թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի նախադեպային որոշմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված որոշման փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են սույն գործի փաստական հանգամանքներից:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը 29.10.2010 թվականի թիվ ՎԴ/4892/05/09 որոշմամբ նշել է, որ մինչև 25.12.2000 թվականը գործող ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշման կարգը զինծառայողին տալիս էր ծովի մակերևույթից 1.500 մետր և ավելի բարձրության մեկ ամսվա ծառայությունն արտոնյալ պայմաններով մեկուկես ամիս հաշվելու հնարավորություն, իսկ 25.12.2000 թվականից գործող ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ սահմանված կարգն այդ հաշվարկի համար հիմք է ընդունել ծովի մակերևույթից 1.700-2.000 մետր բարձրությունը՝ սկսած 30.11.1998 թվականից: Այսինքն՝ ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ սահմանված կարգի նշված պահանջն անձի իրավական վիճակը վատթարացնող նորմ է, քանի որ դրանով կատարվել է ծառայության ժամկետն արտոնյալ պայմաններով հաշվարկելու համար հիմք հանդիսացող՝ ծառայության վայրի՝ ծովի մակերևույթից սահմանային բարձրության փոփոխություն՝ սահմանային բարձրությունը 1.500 մետրից դարձնելով 1.700 մետր:

Վերոգրյալից ելնելով՝ Համլետ Ղարիբյանի՝ մինչև 25.12.2000 թվականի մեկ ամսվա ծառայությունը հաշվարկվել է մեկուկես ամսով՝ ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան, քանի որ ՀՀ կառա-

վարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ սահմանված կարգն այդ առումով, որպես անձի վիճարկը վատթարացնող նորմ, հետադարձ ուժ չի կարող ունենալ:

Մինչդեռ, սույն գործով Արարատ Ափոյանի ծառայության վայրը՝ Արթիկ քաղաքը, գտնվում է ծովի մակերևույթից 1.800 մետր միջին բարձրության վրա, որը նրան տալիս է զինվորական ծառայության մեկ ամսվա ծառայությունը արտոնյալ՝ մեկուկես ամիս հաշվելու հնարավորություն ինչպես նախկին, այնպես էլ ներկայումս գործող իրավակարգավորումների դեպքում, այսինքն՝ ծառայության ժամկետն արտոնյալ պայմաններով հաշվարկելու համար հիմք հանդիսացող՝ ծառայության վայրի՝ ծովի մակերևույթից սահմանային բարձրության փոփոխություն տվյալ դեպքում առկա չէ: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստական հանգամանքներն տարբերվում են թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի նախադեպային որոշմամբ հաստատված փաստական հանգամանքներից: Բացի այդ, նշված նախադեպային որոշումը վերաբերում է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 26.05.1993 թվականի թիվ 277 որոշմամբ ու ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշմամբ սահմանված կարգերի պահանջների կիրառմանը, որոնք սույն գործով կիրառելի չեն՝ հաշվի առնելով, որ Արարատ Ափոյանը զինվորական ծառայությունից արձակվել է 01.04.2012 թվականին, ինչով պայմանավորված վերջինիս կենսաթոշակի իրավունքի նկատմամբ կիրառելի են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Այսինքն՝ թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի նախադեպային որոշումը վերաբերում է մինչև 01.01.2011 թվականը գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի կիրառմանը և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից ելնելով՝ այն կիրառելի չէ 01.01.2011 թվականից գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

Անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից վկայակոչած այն փաստին, որ Արարատ Ափոյանը, 1995 թվականից ծառայելով ծովի մակերևույթից 1.700 մետր և ավելի բարձրության վրա գտնվող վայրում, ունեցել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ձեռք բերելու ակնկալիք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սխալ են կիրառել լեգիտիմ ակնկալիքի ինստիտուտը, որին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը *(տե՛ս, «Պետական կենսաթոշակների մասին» 73-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի 15.01.2008 թվականի թիվ ՍԴՈ-723 որոշումը):*

ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ մինչև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում **աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձինք** ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով, սակայն նույն օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով այդ արտոնյալ կարգը վերացվել է՝ անտեսելով նաև նշված պայմաններում աշխատած անձանց ակնկալիքն առ այն, որ իրենց կենսաթոշակը հաշվարկվելու է արտոնյալ կարգով: Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքն իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը, արձանագրելով նշանակված կենսաթոշակի վերահաշվարկի արդյունքում դրա տեսակի փոփոխման (վատթարացման) արգելքը, միաժամանակ ճանաչել է նաև որոշակի պայմաններում աշխատած և կենսաթոշակի նշանակում ստացած անձանց՝ արտոնյալ կենսաթոշակ ստանալու հանդեպ լեգիտիմ ակնկալիքը: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը լեգիտիմ ակնկալիքի

առկայությունը ճանաչել է միայն այն անձանց մոտ, որոնք աշխատել և կենսաթոշակի նշանակում են ստացել:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ կենսաթոշակի հանդեպ լեգիտիմ ակնկալիքը ծագելու համար միայն աշխատելու փաստը բավարար չէ, անձի նկատմամբ պետք է արդեն իսկ նշանակված լինի կենսաթոշակ կամ վերջինս պետք է արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած լինի, որպեսզի դրա հանդեպ լեգիտիմ ակնկալիքը գործի: Ըստ այդմ՝ ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է ոչ թե որոշակի պայմաններում աշխատած անձանց լեգիտիմ ակնկալիքը այդ ընթացքում գործող կարգավորումներով կենսաթոշակ ստանալու նկատմամբ, այլ արդեն իսկ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց լեգիտիմ ակնկալիքն այդ իրավունքը ձեռք բերելու պահին գործող կարգավորումներով կենսաթոշակ ստանալու և դրա չափը այլևս չնվազեցնելու հանդեպ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ, որը, սակայն, չի կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք **ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա:**

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանն անձի կենսաթոշակ ստանալու լեգիտիմ իրավունքը կապել է կենսաթոշակ ստանալու իրավունքի հետ, մինչդեռ սույն գործով նախկինում գործող օրենսդրության հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման փաստ առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում կիրառելի են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի կարգավորումները, որոնք երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի, ինչպես նաև զինվորական ստաժի արտոնյալ հաշվարկի (մեկուկես անգամ ավել չափով) համար նախատեսում են **20 օրացուցային տարվա ստաժի առկայություն:**

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ Արարատ Ափոյանը ծառայությունից սահմանված կարգով ազատվելու պահին ունեցել է օրացուցային 18 տարի 2 ամիս 2 օր զինվորական ստաժ, հետևաբար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով ծառայությունից արձակվելու պահին Արարատ Ափոյանը չի ունեցել երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Արարատ Ափոյանի մոտ ծագել է երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունք:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյու-

նավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.11.2014 թվականի որոշմամբ հետաձգվել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.11.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով, ենթակա է բռնագանձման Արարատ Ափոյանից: Բացի այդ, նկատի ունենալով, որ Ծառայությունը վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել է 10.000 ՀՀ դրամ պետական տուրք, Արարատ Ափոյանից հօգուտ Ծառայության պետք է բռնագանձել նաև 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.07.2014 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Արարատ Ափոյանի հայցը՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Արարատ Ափոյանից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Արարատ Ափոյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.11.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ2/0584/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ2/0584/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սայիս Հակոբյանի ներկայացուցիչ Արթուր Մելիքյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.06.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Սայիս Հակոբյանի հայցի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) և Ծառայության աշխատակազմի Մարտունու սոցիալական ապահովության տարածքային բաժնի (այսուհետ՝ Սոցապ բաժին)՝ տարիքային արտոնյալ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին 29.07.2013 թվականի մերժման գրությունն անվավեր ճանաչելու և մասնակի կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սայիս Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել տարիքային արտոնյալ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին Ծառայության 29.07.2013 թվականի մերժման գրությունը և պարտավորեցնել Սոցապ բաժնին նշանակելու մասնակի կենսաթոշակ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Թորոսյան) (այսուհետ՝ Դատարան) 28.12.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.06.2014 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.12.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սայիս Հակոբյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, որը պետք կիրառեր, կիրառել է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի վճիռն ըստ էության հանդիսանում է հիմնավորված և օրինական դատական ակտ, որը վերացնում է Մայիս Հակոբյանի սեփականության, մասնավորապես՝ երկարամյա ծառայության համար մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունքի խախտումը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման ժամանակ անտեսվել է, որ Մայիս Հակոբյանը Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոցում 01.09.1984 թվականից աշխատել է որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, ուստի վերջինիս մասնագիտական աշխատանքային ստաժի տևողությունը մինչև 31.08.2003 թվականը կազմում է 18 տարի՝ պահանջվող 12 տարվա փոխարեն: Հետևաբար ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման համաձայն՝ Մայիս Հակոբյանն ունի մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք:

Վերաքննիչ դատարանը մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունքի առկայության հարցը գնահատելիս սխալմամբ հիմք է ընդունել միայն Մայիս Հակոբյանի կողմից 14.03.1988 թվականից մինչև 18.01.2010 թվականը միջնակարգ դպրոցի տնօրենի արտադասարանական և արտադպրոցական դաստիարակության աշխատանքների գծով տեղակալ աշխատելու հանգամանքը: Ավելին, Վերաքննիչ դատարանն առանց որևէ հիմնավորման գտել է, որ միջնակարգ դպրոցի տնօրենի արտադասարանական և արտադպրոցական դաստիարակության աշխատանքների գծով տեղակալի պաշտոնը չի համարվում մանկավարժական ստաժ, և դրա համար մասնակի կենսաթոշակ չի նշանակվում:

Վերաքննիչ դատարանը լիարժեք կերպով չի տվել իր որոշման իրավական և փաստական հիմնավորումները, գնահատման առարկա չի դարձրել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես՝ չի գնահատել Մայիս Հակոբյանի աշխատանքային գրքույկը, որով հիմնավորվում է վերջինիս կողմից մանկավարժական գործունեություն իրականացնելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.12.2013 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացու թիվ AH0486218 անձնագրի համաձայն՝ Մայիս Սերոբի Հակոբյանը ծնվել է 30.04.1958 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 3):**

2) Մայիս Հակոբյանի աշխատանքային գրքույկի գրառումների համաձայն՝ 01.09.1984 թվականին Մայիս Հակոբյանը նշանակվել է Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ, 14.03.1988 թվականին Մայիս Հակոբյանը նշանակվել է նույն դպրոցի <<տնօրենի տեղակալ՝ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակության աշխատանքների գծով>>, 18.01.2010 թվականին Մայիս Հակոբյանի վրա դրվել է նույն դպրոցի տնօրենի պարտականությունների կատարումը, 21.11.2011 թվակա-

նին Մայիս Հակոբյանը նշանակվել է <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն **(հատոր 1-ին, գ.թ. 4-6):**

3) Ծառայության 29.07.2013 թվականի գրության համաձայն՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու մասին Մայիս Հակոբյանի 16.07.2013 թվականի թիվ 14/14536 դիմումի կապակցությամբ Ծառայության պետի տեղակալը Մայիս Հակոբյանին հայտնել է, որ նրա կողմից 14.03.1988-18.01.2010 թվականներին զբաղեցված արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների գծով միջնակարգ դպրոցի տնօրենի տեղակալի պաշտոնը նախատեսված չէ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշմամբ, և այդ պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածը (14.03.1988-18.01.2010 թվականներ) մասնակի կենսաթոշակ նշանակելու համար մասնագիտական ստաժում չի հաշվարկվում, հետևաբար Մայիս Հակոբյանը չունի մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք **(հատոր 1-ին, գ.թ. 9):**

4) ՀՀ կրթության և գիտության նախարարության 27.06.2013 թվականի գրության համաձայն՝ ի պատասխան Մայիս Հակոբյանի դիմումի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարը պարզաբանել է, որ Մայիս Հակոբյանի աշխատանքային գրքույկում <<դպրոցի տնօրենի տեղակալ՝ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակության աշխատանքների գծով>> գրառումը չի համապատասխանում ՍՍՀՄ լուսավորության մինիստրության 10.05.1985 թվականի թիվ 94 հրամանով հաստատված պաշտոնային անվանմանը, այն է՝ <<դպրոցի տնօրենի տեղակալ արտադրական ուսուցման գծով՝ երեխաների հետ արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ>> **(հատոր 1-ին, գ.թ. 12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունքի իրացման վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինն իրավասու է արդյո՞ք մերժել ֆիզիկական անձին մասնակի կենսաթոշակ նշանակելն այն պայմաններում, երբ տվյալ ֆիզիկական անձի աշխատանքային գրքույկում նշված պաշտոնն իր էությամբ համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում նախատեսված պաշտոնի իրական անվանմանը:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի

իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության՝ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում (այսուհետ՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում), և նրան նշանակվել է կենսաթոշակ (...):

<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակի կենսաթոշակ նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները: Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:

<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ կենսաթոշակը կենսաթոշակի իրավունք ունեցող անձի (...) գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի մասին տվյալների:

<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) նշանակել կենսաթոշակ.

2) նշանակել կենսաթոշակ և տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին.

3) մերժել կենսաթոշակ նշանակելը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստա-

կան հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<<<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին>> ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված <<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի 28-րդ կետի համաձայն՝ մասնակի կենսաթոշակ նշանակելիս՝ մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվարկվում է միայն հիմնական աշխատավայրում աշխատած ժամանակահատվածը: Համատեղությամբ (կամ ժամավճարով) աշխատած ժամանակահատվածը մասնագիտական ստաժում չի հաշվարկվում:

Նույն կարգի 29-րդ կետի համաձայն՝ եթե անձը նույն կազմակերպությունում համատեղել է երկու պաշտոն կամ մասնագիտություն և աշխատանքի ընդունելը ձևակերպվել է մեկ հրամանով, որի մեջ առաջինը գրառված մասնագիտությունը կամ պաշտոնը նշված է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ցանկում, իսկ երկրորդը նշված չէ, ապա այս դեպքում տվյալ կազմակերպությունում աշխատած ժամանակահատվածը հաշվառվում է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում, իսկ 30-րդ կետի համաձայն՝ մասնակի կենսաթոշակի չափը հաշվարկելիս՝ հաշվի է առնվում միայն մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժը:

ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում, ի թիվս այլ պաշտոնների, ներառված են նաև պետական հանրակրթական դպրոցում ուսուցչի (դասատուի), դասվարի, տնօրենի (դիրեկտորի, վարիչի), ուսումնադաստիարակչական (ուսումնական, դաստիարակչական), ուսումնաարտադրական մասի կամ արտադրական ուսուցման գծով տեղակալների, ուսումնադաստիարակչական (ուսումնական, դաստիարակչական) մասի վարիչների պաշտոնները:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Սոցիալական պետության կարևորագույն բնութագրիչներից մեկը մարդկանց սոցիալական պաշտպանվածության արդյունավետ երաշխիքների ապահովումն է: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուր անձի սոցիալական ապահովության իրավունքը, որը ենթադրում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ օրենքով սահմանված ձևերով ու ծավալով:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.10.2006 թվականի թիվ ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է նաև ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված <<գույք>> հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել <<գույքային իրավունքներ>> և հետևաբար նաև <<գույք>> նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ *(տե՛ս, օրինակ, Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետ):* Միաժա-

մանակ ՄԻԵԴ–ը տվել է Կոնվեցիայի թիվ 1 Արձանագրության 1–ին հոդվածի իմաստով <<սեփականություն>> հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով <<օրինական սպասելիք>> հասկացությունը: Մասնավորապես, ՄԻԵԴ–ը արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է <<սեփականություն>> որակումն այն պահից, երբ անձն ունենում է <<օրինական սպասելիք>> իր իրավունքներն իրականացնելու համար *(տե՛ս, <<Պրեսոս Կոմպանիա Նավիերա ՍԱ>>–ն և այլոք ընդդեմ Բելգիայի գործով ՄԻԵԴ 20.11.1995 թվականի վճիռը):* Ըստ ՄԻԵԴ–ի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1–ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել *(տե՛ս, Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ 07.05.2002 թվականի վճիռը, 40–րդ կետ):*

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՄԻԵԴ–ի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, իր նախկին որոշումներում արձանագրել է, որ կենսաթոշակի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1–ին հոդվածով պաշտպանվող գույքային իրավունք է *(տե՛ս, օրինակ՝ Թերեզա Գևորգյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):*

Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտը <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքն է, որը սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու, նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը: Օրենսդիրը, <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով ամրագրելով պետական կենսաթոշակների տեսակները, դրանց շարքում սահմանել է նաև մասնակի կենսաթոշակը, որը դասվում է աշխատանքային կենսաթոշակների շարքին (<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 8–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետ) և նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի իմաստով ֆիզիկական անձանց կենսաթոշակ նշանակելը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին հնարավորություն է տալիս անարգել օգտվելու իր՝ կենսաթոշակ ստանալու իրավունքից: Օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնակի կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար տվյալ ֆիզիկական անձի մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 14–րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողները կարող են ձեռք բերել մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին լրացել է նրանց 55 տարին, ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և մինչև 01.08.2003 թվականն ընկած ժամանակահատվածում առնվազն 12 օրացուցային տարի աշխատել են մասնակի կենսաթոշակի իրավունք տվող համապատասխան մասնագիտություններով կամ պաշտոններում: Ընդ որում, կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը սահմանված է <<<<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին>> ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665–Ն որոշման թիվ 6 հավելվածով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կրթության, մշակույթի աշխատողը կարող է ձեռք բերել մասնակի աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմելու պահին լրացել է կրթության, մշակույթի բնագավառի տվյալ աշխատողի 55 տարին,

2) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմելու պահին կրթության, մշակույթի բնագավառի տվյալ աշխատողն ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

3) կրթության, մշակույթի բնագավառի տվյալ աշխատողի՝ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 01.08.2003 թվականն ընկած ժամանակահատվածում աշխատած մասնագիտական աշխատանքային ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի:

Սույն գործով Դատարանը, 28.12.2013 թվականի վճռով բավարարելով Մայիս Հակոբյանի հայցը, անվավեր է ճանաչել տարիքային արտոնյալ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին Ծառայության 29.07.2013 թվականի գրությունը և պարտավորեցրել է Սոցապ բաժնին մասնակի կենսաթոշակ նշանակել Մայիս Հակոբյանին: Դատարանն իր վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի իմաստով Ծառայության 29.07.2013 թվականի գրությունը հանդիսանում է անվավեր վարչական ակտ. այդ գրությամբ մերժելով մասնակի կենսաթոշակ նշանակելու Մայիս Հակոբյանի դիմումը՝ <<(...) Ծառայությունը սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված ցանկի դրույթները, քանի որ այն չի համադրել 1988 թվականին ՀԽՍՀ-ում դեռևս գործող ՍՍՀՄ լուսավորության մինիստրության 16.05.1985 թվականի թիվ 94 հրամանով հաստատված հրահանգի թիվ 5 հավելվածի, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 14.10.2010 թվականի թիվ 1391-Ն որոշման համապատասխան դրույթների հետ (...)>>:

Վերաքննիչ դատարանի 19.06.2014 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.12.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ Մայիս Հակոբյանի հայցը մերժվել է: Վերաքննիչ դատարանն իր այդ որոշումը պատճառաբանել է այն փաստարկով, որ Մայիս Հակոբյանին մասնակի կենսաթոշակ նշանակելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերն առկա չեն, քանի որ վերջինս չի զբաղեցրել ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված ցանկում նշված որևէ պաշտոն:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆիզիկական անձի՝ մասնակի աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքն իրացվում է տվյալ ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից կայացվող որոշման հիման վրա: Այդ վարչական վարույթի ընթացքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար դիմումում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով սահմանված վերը նշված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայությունը, 29.07.2013 թվականի գրությամբ մերժելով Մայիս Հակոբյանին մասնակի կենսաթոշակ նշանակելը, իր այդ որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Մայիս Հակոբյանը 14.03.1988–18.01.2010 թվականներին

զբաղեցրել է արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների գծով միջնակարգ դպրոցի տնօրենի տեղակալի պաշտոնը, որը նախատեսված չէ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշմամբ՝ որպես մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություն կամ պաշտոն: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայությունը Մայիս Հակոբյանի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում չի կատարել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, չի պարզել այդ վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր, այդ թվում՝ Մայիս Հակոբյանի օգտին առկա հանգամանքները:

Այսպես, սույն գործում առկա ՀՀ կրթության և գիտության նախարարության 27.06.2013 թվականի գրության համաձայն՝ Մայիս Հակոբյանի աշխատանքային գրքույկում <<դպրոցի տնօրենի տեղակալ՝ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակության աշխատանքների գծով>> գրառումը չի համապատասխանում ՍՍՀՄ լուսավորության մինիստրության 10.05.1985 թվականի թիվ 94 հրամանով հաստատված պաշտոնային անվանմանը, այն է՝ <<դպրոցի տնօրենի տեղակալ արտադրական ուսուցման գծով՝ երեխաների հետ արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ>>: Փաստորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մայիս Հակոբյանի աշխատանքային գրքույկում վերը նշված պաշտոնի անվանումն արձանագրվել է ոչ լիարժեք և այդ պաշտոնն իր գործառույթներով, ըստ էության, համապատասխանել է ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշմամբ սահմանված <<դպրոցի տնօրենի տեղակալ արտադրական ուսուցման գծով՝ երեխաների հետ արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ>> պաշտոնի անվանմանը և բովանդակությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում, ի թիվս այլ պաշտոնների, ներառված է նաև պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնը**:** Փաստորեն, ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման համաձայն՝ դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնը համարվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոն:

Այսպիսով, Մայիս Հակոբյանի կողմից Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոցում 14.03.1988-18.01.2010 թվականներին զբաղեցրած պաշտոնի իրական անվանումը համադրելով ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում նշված պաշտոնի անվանումների հետ՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Մայիս Հակոբյանի կողմից Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոցում 14.03.1988-18.01.2010 թվականներին զբաղեցրած պաշտոնը նախատեսված է այդ ցանկում, քանի որ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում, ի թիվս այլ պաշտոնների, ներառված է նաև պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով սահմանված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում ընդգրկված՝ պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնում Մայիս Հակոբյանի աշխատած ժամանակահատվածը մինչև 01.08.2003

թվականը կազմում է շուրջ 15 տարի: Հետևաբար ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված՝ պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնում Մայիս Հակոբյանի մասնագիտական աշխատանքային ստաժը մինչև 01.08.2003 թվականն ընկած ժամանակահատվածում կազմում է ավելի քան 12 օրացուցային տարի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերով հիմնավորվում է, որ Մայիս Հակոբյանը մասնակի կենսաթոշակ ստանալու համար կենսաթոշակ նշանակող համապատասխան ստորաբաժանում, այն է՝ Սոցապ բաժին, դիմելու պահին՝ 16.07.2013 թվականին, ունեցել է ավելի, քան 25 տարվա աշխատանքային ստաժ, ինչը հաստատվում է Մայիս Հակոբյանի աշխատանքային գրքույկի գրառումներով: Բացի այդ, սույն գործի փաստերով հիմնավորվում է նաև, որ Մայիս Հակոբյանի կողմից մասնակի կենսաթոշակ ստանալու համար Սոցապ բաժին դիմելու պահին՝ 16.07.2013 թվականին, վերջինիս 55 տարին լրացած է եղել, քանի որ Մայիս Հակոբյանի անձնագրի համաձայն՝ վերջինս ծնվել է 30.04.1958 թվականին:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների և սույն գործի փաստական հանգամանքների համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մայիս Հակոբյանը՝ որպես կրթության բնագավառի աշխատող, ունի մասնակի աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք, քանի որ՝

1) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ Սոցապ բաժին, դիմելու պահին՝ 16.07.2013 թվականին, Մայիս Հակոբյանի 55 տարին լրացած է եղել,

2) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ Սոցապ բաժին, դիմելու պահին՝ 16.07.2013 թվականին, Մայիս Հակոբյանն ունեցել է առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ,

3) ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված՝ պետական հանրակրթական դպրոցի տնօրենի (դիրեկտորի) արտադրական ուսուցման գծով տեղակալի պաշտոնում մինչև 01.08.2003 թվականն ընկած ժամանակահատվածում Մայիս Հակոբյանի աշխատած մասնագիտական աշխատանքային ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի:

Հետևաբար Մայիս Հակոբյանը բավարարում է մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմաններին ու պահանջներին, ինչը նշանակում է, որ կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող համապատասխան վարչական մարմինը պարտավոր էր որոշում կայացնել Մայիս Հակոբյանին մասնակի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ, որն էլ վերջինիս հնարավորություն կտար անարգել օգտվելու իր՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված կենսաթոշակ ստանալու գույքային իրավունքից:

Մինչդեռ Ծառայությունը չի կատարել Մայիս Հակոբյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու պարտականությունը և չի պարզել <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով սահմանված՝ Մայիս Հակոբյանին մասնակի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ բոլոր պայմանների ու պահանջների առկայության հանգամանքը: Փաստորեն, Ծառայությունն իր 29.07.2013 թվականի գրությամբ անհիմն կերպով մերժել է մասնակի կենսաթոշակ նշանակելու Մայիս Հակոբյանի դիմումը, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության 29.07.2013 թվականի գրությունն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ, 33-րդ հոդվածների և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի խախտմամբ: Հետևաբար Դատարանն իր վճռում իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ Ծառայության 29.07.2013 թվականի գրությունը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույ-

թի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է և իրավաչափորեն հայցը բավարարել է ամբողջությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Մայիս Հակոբյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մայիս Հակոբյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ծառայության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.06.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 28.12.2013 թվականի վճռին:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունից հօգուտ Մայիս Հակոբյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/11193/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/11193/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.03.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ «Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ պատասխանողից 11.050.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել պետական տուրքի գծով 11.050.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 09.10.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.03.2015 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.10.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 19.4-րդ, 32-րդ և 34-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անհիմն կերպով գտնելով, որ «31.01.2011 թվականի 10.000.000 ՀՀ դրամի վճարումը հարկային տեսչության կողմից պետք է ուղղվեր 25.05.2012 թվականից մինչև 25.05.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված պետական տուրքի պարտավորության մարմանը, իսկ 05.10.2012 թվականի 10.000.000 ՀՀ դրամ վճարումը՝ 25.05.2013 թվականից մինչև 25.05.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված պետական տուրքի պարտավորության մարմանը», անտեսել է այն հանգամանքը, որ պետական տուրքի գծով պարտավորությունը հաշվարկվել է ուժի մեջ մտած լիցենզիայի համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.03.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Տեսչության հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ընկերությունը 31.01.2011 թվականին լիցենզիայի համար վճարել է 10.000.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, սակայն Ընկերությունը պետական տուրքի այս գումարը վճարելու պարտականություն չուներ, քանի որ դեռևս չէր կնքել լիցենզիայի պայմանագիր և լիցենզիան ուժի մեջ չէր մտել: Նման պայմաններում նշված 10.000.000 ՀՀ դրամը համարվում է պետական տուրքի գծով գերավճար: Ընկերությունը 27.09.2013-26.09.2014 թվականների պետական տուրքի գումարը չի վճարել, քանի որ ուներ 10.000.000 ՀՀ դրամի չափով անհարկի վճարած գումարը, որը գերավճար է և պետք է այն հաշվանցվեր նշված ժամանակահատվածի համար: Ընկերությունը 19.02.2014 թվականին դիմել էր ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով իր կողմից 31.01.2011 թվականին վճարված 10.000.000 ՀՀ դրամը 27.09.2013 թվականի դրությամբ հաշվանցել օգտակար հանածոյի արդյունահանման 27.09.2012 թվականի թիվ ՇԱԹՎ-Վ-29/239 թույլտվության տրամադրման պետական տուրքի գծով 27.09.2013-26.09.2014 թվականների ժամանակահատվածի համար հաշվարկված Ընկերության պարտավորության հետ և Ընկերության պարտավորությունները 27.09.2013 թվականի դրությամբ համարել կատարված: Ի պատասխան Ընկերության գրության՝ ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի 10.04.2014 թվականի գրությունը, որից պարզ է դարձել, որ Ընկերության դիմումը մերժվել է, սակայն անհասկանալի է, թե ինչ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ բողոքում բերված հիմնավորումները որևէ կերպ չեն շոշափում գերավճարի հարցը և դրա վերադարձի մեխանիզմները: Հայցվորը որևէ օրինական հիմնավորում չի ներկայացնում, թե ինչու չպետք է վերադարձվի անհարկի վճարած գումարը, ինչու չպետք է այն հաշվանցվի եղած պետական տուրքի վճարման պարտավորության հետ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից 03.12.2010 թվականին Ընկերությանը տրամադրվել է հանքարդյունահանման թիվ ՀԱ-Լ-14/647 հատուկ լիցենզիան՝ մինչև 03.12.2026 թվականը գործողության ժամկետով և նշումով այն մասին, որ լիցենզիան ուժի մեջ է մտնում համապատասխան լիցենզային պայմանագրի կնքման պահից **(հատոր 1-ին, գ.թ. 13).**

2. 31.01.2011 թվականին Ընկերությունը վճարել է 10.000.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար **(հատոր 1-ին, գ.թ. 66).**

3. Ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կապանի տարածքային հարկային տեսչության (ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մեղրու տարածքային հարկային տեսչության իրավահաջորդ) ընդդեմ «Վարդանի Ձարթոնքը» ՍՊԸ-ի՝ պետական տուրքի գծով 12.350.000 ՀՀ դրամ պարտքը (նաև դատական ծախսը) բռնագանձելու պահանջի մասին, ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ1/0020/05/12 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած 30.04.2013 թվականի վճռով վարչական գործի վարույթը 10.000.000 ՀՀ դրամի մասով կարճվել է՝ այդ մասով հայցից հրաժարվելու հիմքով, իսկ մնացած մասով հայցը մերժվել է: ՀՀ վարչական դատարանը նշված վճռով հաստատված է համարել հետևյալ հանգամանքները՝ 1. Ընկերության և Նախարարության միջև 25.05.2012 թվականին կնքվել է թիվ 536 լիցենզային պայմանագիրը: 2. Նախարարության կողմից 27.09.2012 թվականին Ընկերությանը տրամադրվել է հանքարդյունահանման թիվ ՀԱ-Լ-14/647 լիցենզիան, որը հանդիսացել է նախկինում տրված լիցենզիայի վերաձևակերպում: 3. Վերաձևակերպված լիցենզիայի հիման վրա Նախարարության և Ընկերության միջև 27.09.2012 թվականին կնքվել է թիվ ՊՆ-239 ընդերքօգտագործման պայմանագիրը: 4. Ըստ վերաձևակերպված լիցենզիայի առարկայի՝ լիազոր մարմինը հանքավայրը հանձնել է Ընկերության ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը 25.05.2012 թվականից մինչև 03.12.2026 թվականը: 5. Ընկերությունը 05.10.2012 թվականին վճարել է 10.000.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար **(հատոր 1-ին, գ.թ. 41-51).**

4. Տեսչության կողմից Դատարան ներկայացված հաշվարկի համաձայն՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.4-րդ հոդվածի հիման վրա 18.10.2013 թվականի դրությամբ Ընկերության պարտավորությունը պետական տուրքի գծով 2013 թվականի համար կազմում է 10.000.000 ՀՀ դրամ, վճարման ժամկետը՝ 27.09.2013 թվականը, որը չվճարելու համար հաշվարկված տույժի գումարը կազմում է 1.050.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) 32-րդ և 34-րդ հոդվածները սխալ կիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պետական տուրքի գծով տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված վճարումները վարչական մարմինն իրավասու է ողղել նույն սուբյեկտի նկատմամբ հետագայում հաշվարկված պարտավորությունների մարմանը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ

գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ պետական տուրք վճարողները պարտավոր են ժամանակին և լրիվ վճարել նույն օրենքով սահմանված պետական տուրքերը, պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը, ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը, նույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի վճարման՝ իրավաբանական անձանց պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ անկախ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված դրույթներից՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է՝

1) այդ պարտավորության կատարմամբ՝ նույն օրենքով սահմանված դրույքաչափերով ու ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքի գումարների (պետական տուրքի գումարը համարվում է վճարված Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար սույն օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ, տարեկան պետական տուրքի վճարումից ազատումով, օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաև ֆիզիկական անձի մահվան դեպքում.

2) մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար նույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) դեպքում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե նույն օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ: Պետական տուրքի հաշվարկման և գանձման նպատակով գործողությունների կատարման և ծառայությունների մատուցման պահ է ճանաչվում դրանց ավարտման պահը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) տրման ամսաթվից ոչ ուշ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հա-

մաձայն՝ պետականտուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթեպետականտուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետականտուրքը վերադարձվում է վճարողի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է առանցքային նշանակություն ունեցող սահմանադրական պահանջ, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորություններըը պետք է սահմանված լինեն ՀՀ Սահմանդրությամբ կամ օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է օրինականության ենթասկզբունք հանդիսացող օրենքի վերապահումը: Օրենքի վերապահում նշանակում է, որ վարչական մարմինը որևէ գործողություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում նաև այլ իրավական ակտով:

Հարկերի և պարտադիր այլ վճարների առնչությամբ ծագած հարաբերությունները նույնպես կարգավորված են ՀՀ Սահմանադրությամբ, ինչն ինքնին վկայում է հասարակության և պետության համար դրանց կարևորության և էական նշանակության մասին: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում օրենսդիրը պետական տուրքը սահմանել է որպես պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված պարտադիր վճար, որն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից գանձվում է պետական և (կամ) համայնքների բյուջեներ:

Օրենսդիրը պետական տուրք վճարողների համար սահմանել է պարտականություն ժամանակին և լրիվ վճարել օրենքով սահմանված պետական տուրքերը, ինչպես նաև պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել է նաև պետական տուրքի գանձման պահը՝ նախատեսելով, որ եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ, ապա պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է, որ օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի տրման ամսաթվից ոչ ուշ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրն անձանց համար նախատեսել է օրենսդրությամբ սահմանված չափից ավել վճարված պետական տուրքի վերադարձի իրավական հնարավորություն: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ պետականտուրքի գումարը վճարվի սահմանված չափից ավել: Այդ դեպքում պետականտուրքը կարող է վերադարձվել միայն վճարողի դիմումի համաձայն, եթե դիմումը ներկայացվել է ֆինանսական մարմին՝պետականտուրքիկամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը, որի համաձայն՝ պետական տուրքերի պարտավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև պետականտուրքերի պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Վճարողի լուծարման դեպքում պետական տուրքերի մինչև հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները և գերավճարներն անտեսվում են:

Նախ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման առարկան վերաբերում է գումարի հաշվառման արժույթին, այլ ոչ թե ավել վճարված պետական տուրքն այլ պարտավարությունների մարմանն ուղղելուն:

Երկրորդ՝ թեև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «հաշվանցում» տերմինը, այդուհանդերձ դրանից ուղղակիորեն չի բխում ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավական հնարավորությունը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում ամրագրելով պետական տուրքերը ժամանակին և լրիվ վճարելու պարտականություն՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է պետական տուրքը վերադարձնելու կարգը՝ այդ գործողությունը պայմանավորելով վճարողի կողմից դիմումի ներկայացմամբ: Հարկ է նկատել, որ հարկային օրենսդրությունը նույնպես ավել վճարված գումարները վերադարձնելու հանգամանքը պայմանավորել է վճարողի կողմից դիմումի ներկայացմամբ: Ընդ որում, ի տարբերություն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի, որով ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու որևէ կարգ նախատեսված չէ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանել է հարկերի հաշվանցման և (կամ) վերադարձման կարգն ու ժամկետները: Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային մարմնի կողմից հաշվանցվում են հարկ վճարողի այլ պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Իսկ հարկերի հաշվանցման և (կամ) վերադարձման կարգն ու ժամկետները սահմանվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածով, որով ամբողջությամբ կանոնակարգված են հարկերի հաշվանցմանն և (կամ) վերադարձմանն առնչվող իրավահարաբերությունները:

Այսպիսով, ի տարբերություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու որևէ կարգ չի նախատեսել, հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասում «հաշվանցում» տերմինի օգտագործված լինելու հանգամանքը բավարար իրավական հիմք չէ ավել վճարված պետական տուրքն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու գործողությունը կատարելու համար:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումը համահունչ է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորմանը, որի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, **կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ**, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Տվյալ դեպքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման իմաստով պետական տուրքերի պարտավորությունների մարումներ են դիտարկվել ինչպես վճարումը, այնպես էլ հաշվանցումը: Սակայն հաշվանցման մասով նշված իրավանորմի պահանջի կատարումն ուղղակիորեն պայմանավորված է հաշվանց կատարելու կարգ ու ժամկետներ սահմանող իրավական այլ ակտի ընդունմամբ, հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36.1-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հաշվանցում կատարելու մասով կարող է գործել միայն հաշվանց կատարելու կարգ ու ժամկետներ սահմանող իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից: Հարկ է նաև նկատել, որ ավել վճարված պետական տուրքի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վերադարձման կանոններն օրենքի անալոգիայի ուժով հաշվանցի նկատմամբ կիրառելի համարելու պարագայում անգամ հաշվանցի կատարում իրականացնելու համար վճարողի կողմից պետք է ներկայացվի համապատասխան դիմում: Ընդ որում, հաշվանց կատարելու վերաբերյալ վճարողի դիմումը մերժելու վերաբերյալ վար-

չական մարմնի ընդունած որոշման իրավաչափության գնահատումը կարող է իրականացվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով այդ որոշումը բողոքարկելու կամ վիճարկելու դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 03.12.2010 թվականին ստացել է թիվ ՀԱ–4–14/647 լիցենզիան: Ընկերության և Նախարարության միջև 25.05.2012 թվականին կնքվել է թիվ 536 լիցենզային պայմանագիրը, իսկ 27.09.2012 թվականին Նախարարության կողմից Ընկերությանը տրամադրվել է հանքարդյունահանման թիվ ՀԱ–Լ–14/647 թույլտվությունը, որը հանդիսացել է նախկինում տրված լիցենզիայի վերաձևակերպումը: Վերաձևակերպված լիցենզիայի հիման վրա Նախարարության և Ընկերության միջև 27.09.2012 թվականին կնքվել է թիվ ՊՆ–239 ընդերքօգտագործման պայմանագիրը:

Տեսչության կողմից ներկայացված պահանջի հաշվարկման հիմքում ընկած է հանքարդյունահանման թիվ ՀԱ–4–14/647 լիցենզիան և Տեսչության կողմից Դատարան ներկայացված հայցապահանջը ներառում է պետական տուրքի գծով 2013 թվականի համար հաշվարկված 11.050.000 ՀՀ դրամի չափով Ընկերության ունեցած պարտավորությունը, որից 10.000.000 ՀՀ դրամը՝ տարեկան պետական տուրքի գումարը, 1.050.000 ՀՀ դրամը՝ հաշվարկված տույժը:

Դատարանը, Տեսչության հայցը մերժելով, պատճառաբանել է, որ «Ընկերության մոտ պետական տուրքի վճարման պարտականությունն առաջացել է 25.05.2012 թվականին: Դատարանը հաստատված է համարում նաև այն փաստերը, որ Ընկերությունը 31.01.2011 թվականին և 05.10.2012 թվականին վճարել է պետական տուրքի գումար՝ 10.000.000-ական ՀՀ դրամ, ընդամենը 20.000.000 ՀՀ դրամ: Այս պարագայում դատարանը գտնում է, որ Ընկերությունը, 25.05.2012 թվականից պարտականություն ունենալով վճարելու հանքարդյունահանման համար նախատեսված տարեկան 10.000.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, կատարել է այն և մինչև 25.05.2014 թվականն Ընկերության մոտ պետական տուրքի վճարման պարտականություն չի ծագել: Այսինքն՝ 31.01.2011 թվականի 10.000.000 ՀՀ դրամի վճարումը Տեսչության կողմից պետք է ուղղվեր 25.05.2012 թվականից մինչև 25.05.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված պետական տուրքի պարտավորության մարմանը, իսկ 05.10.2012 թվականի 10.000.000 ՀՀ դրամ վճարումը 25.05.2013 թվականից մինչև 25.05.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված պետական տուրքի պարտավորության մարմանը...»:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում սահմանել է, որ պետական տուրքի վճարման՝ իրավաբանական անձանց պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով: Նույն օրենքում օրենսդիրը նախատեսել է նաև, որ անկախ վերը նշված պետականտուրքիվճարման պարտավորության դադարման հիմքերից, կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է նաև այդ պարտավորության կատարմամբ՝ օրենքով սահմանված դրույքաչափերով ու ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքի գումարների (պետական տուրքի գումարը համարվում է վճարված Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ, տարեկան պետական տուրքի վճարումից ազատումով, օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաև ֆիզիկական անձի մահվան դեպքում և մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար

օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) դեպքում:

Այսպիսով, վերոգրյալ իրավական կարգավորումներով նախատեսված հիմքերից որևէ մեկով Ընկերության պարտավորությունը դադարած համարելու փաստը հաստատող որևէ ապացույց սույն գործում առկա չէ: Ավելին, 2013 թվականի համար պետական տուրքը վճարած չլինելու հանգամանքը չի վիճարկել նաև Ընկերությունը:

Անդրադառնալով 31.01.2011 թվականի և 05.10.2012 թվականի վճարումներն Ընկերության՝ 25.05.2012 թվականից մինչև 25.05.2013 թվականը և 25.05.2013 թվականից մինչև 25.05.2014 թվականն ընկած ժամանակահատվածների համար նախատեսված պետական տուրքի պարտավորությունների մարմանն ուղղելու Տեսչության պարտականության մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է հիմնազուրկ և այն պայմաններում, երբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ ավել վճարված պետական տուրքի հաշվանցման իրավական հնարավորություն, և հարկային մարմնի վրա չի կարող դրվել օրենքով չնախատեսված գործողություն (ավել վճարված պետական տուրքից հաշվանց) կատարելու պարտականություն, անհիմն է գնահատում նաև հանքարդյունահանման թիվ ՀԱ-4-14/647 լիցենզիայի 2013 թվականի համար սահմանված տարեկան պետական տուրքի գծով Ընկերության ունեցած պարտավորությունը դադարած համարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ 31.01.2011 թվականի 10.000.000 ՀՀ դրամի վճարումը Տեսչության կողմից պետք է ուղղվեր 25.05.2012 թվականից մինչև 25.05.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված պետական տուրքի պարտավորության մարմանը, իսկ 05.10.2012 թվականի 10.000.000 ՀՀ դրամ վճարումը՝ 25.05.2013 թվականից մինչև 25.05.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված պետական տուրքի պարտավորության մարմանը, անհիմն է, ուստի հայցվորից պետական տուրքի գծով 11.050.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջը ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է 31.01.2011 թվականին վճարված 10.000.000 ՀՀ դրամը պետական տուրքի գծով 27.09.2013-26.09.2014 թվականների ժամանակահատվածի համար հաշվարկված Ընկերության պարտավորության հետ հաշվանցելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին դիմելու և այդ դիմումն անհիմն կերպով մերժելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատասխանով Ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված փաստարկին, ապա այն սույն գործի լուծման համար էական որևէ նշանակություն չունի, քանի որ տվյալ դեպքում դատական վերահսկողությունն ուղղված է ոչ թե Ընկերության դիմումի առնչությամբ վարչական մարմնի դրսևորած ենթադրյալ անգործության իրավաչափության գնահատմանը, որպիսի պարագայում քննարկման ենթակա կլինեին գերավճարի առկայության և վերադարձի կամ հաշվանցի իրավական հնարավորության հարցերը, այլ ուղղված է ՀՀ պետական բյուջեի հանդեպ Ընկերության ունեցած պարտավորությունների օրենքով սահմանված կարգով կատարման ստուգմանը, որպիսի պարագայում քննարկման ենթակա հարցը հանգում է պետական տուրքի գծով Ընկերության պարտավորության առկայության և բացակայության պարզմանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատականծախսերի բաշխմանվերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Նկատի ունենալով, որ սույն գործով Տեսչությունը հայցադիմումի համար վճարել է 235.149 ՀՀ դրամ, մինչդեռ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ վճարման ենթակա պետական տուրքի չափը կազմում է 221.000 ՀՀ դրամ, իսկ վերաքննիչ բողոքի համար՝ 331.500 ՀՀ դրամ, վճռաբեկ բողոքի համար՝ 331.500 ՀՀ դրամ պետական տուրքի գումարներ, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա են հատուցման Ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.03.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել. «Վարդանի Զարթոնքը» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 11.050.000 ՀՀ դրամ, որից 10.000.000 ՀՀ դրամը՝ պետական տուրքի գծով ապառք, 1.050.000 ՀՀ դրամը՝ պետական տուրքի գծով հաշվարկված տույժ:

2. «Վարդանի Զարթոնքը» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել նաև 221.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, 331.500 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, 331.500 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9358/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Հ. Բեղլյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/9358/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.12.2013 թվականի որոշման դեմ ըստ <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Նախարարության, ՀՀ առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար)՝ Ընկերության կողմից ներկայացված այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու հայտը մերժելու մասին 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա, թիվ 2759-Ա հրամաններն անվավեր ճանաչելու կամ վերացնելու և Ընկերության ներկայացրած թիվ 6/24593-12, թիվ 6/24591-12, թիվ 6/25095-12 հայտերով այլ վայրերում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիաները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել կամ վերացնել իր կողմից ներկայացված այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու հայտը մերժելու մասին Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա, թիվ 2759-Ա հրամանները և պարտավորեցնել տրամադրելու Ընկերության ներկայացրած թիվ 6/24593-12, թիվ 6/24591-12, թիվ 6/25095-12 հայտերով այլ վայրերում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիաները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.04.2013 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ընկե-

րության կողմից ներկայացված այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու հայտը մերժելու մասին Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա, թիվ 2759-Ա հրամանները ճանաչվել են անվավեր, իսկ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Նախարարի՝ Ընկերության ներկայացրած թիվ 6/24593-12, թիվ 6/24591-12, թիվ 6/25095-12 հայտերով այլ վայրերում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիաները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով, վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.12.2013 թվականի որոշմամբ Դատարանի 17.04.2013 թվականի վճռի՝ Ընկերության հայցը բավարարելու մասի դեմ բերված Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.04.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-4.1-րդ կետերը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 37-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, խախտել է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ լիցենզիա ստանալու հայտի մերժման համար <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված դեպքերի շարքում օրենսդիրն ընդգրկել է նաև <<օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ դեպքերը>>, որոնք կարող են նախատեսված լինել ցանկացած օրենքում: Հետևաբար <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված լիցենզիա ստանալու հայտի մերժման օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ դեպքերից է հանդիսանում նույն օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքը: Իսկ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բացառությունը վերաբերում է միայն լիցենզիա ստանալու հայտի մերժման ընթացակարգին, իսկ նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը չի կարող լիցենզիա ստանալու հայտի մերժման հիմք չհանդիսանալ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն կարևոր հանգամանքը, որ մինչև այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու համապատասխան հայտը Նախարարություն ներկայացնելը, Ընկերությունն արդեն իսկ զրկված է եղել նման գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, ինչն էլ հաստատված է ՀՀ վարչական դատարանի 27.03.2012 թվականի վճռով:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամանակային սահմանափակումն առանց խտրականության կիրառվում է լիցենզավորված բոլոր սուբյեկտների նկատմամբ՝ անկախ այդ սուբյեկտների ունեցած լիցենզիաների թվից: Փաստորեն, սխալ մեկնաբանելով նշված օրենքի դրույթները՝ Վերաքննիչ դատարանն անհավասար մոտեցում է ցուցաբերել մեկից ավելի լիցենզիաներ ունեցող և ընդամենը մեկ լիցենզիա ունեցող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ և <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված դրույթը դարձրել է չգործող նորմ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է <<ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 23.12.2013 թվականի որոշումը>>:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ ՎԴ/0763/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 27.03.2012 թվականի վճռով ուժը կորցրած ճանաչելու միջոցով դադարեցվել է Ընկերությանը (ըստ լիցենզիայի գործունեության վայրը՝ Երևան քաղաքի Էրեբունի թիվ 18 հասցեում գտնվող տարածք) 26.12.2008 թվականին տրված թիվ Կ-XX-001190 լիցենզիայի գործողությունը:

2) Լիցենզիա ստանալու մասին 02.10.2012 թվականի թիվ 24591 հայտով Ընկերությունը խնդրել է Նախարարությանն այլ վայրում՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք, Մ. Մաշտոցի թիվ 104 հասցեում դեղատնային գործունեություն իրականացնելու համար տրամադրել լիցենզիա **(հատոր 1-ին, գ.թ. 97):**

3) Լիցենզիա ստանալու մասին 02.10.2012 թվականի թիվ 24593 հայտով Ընկերությունը խնդրել է Նախարարությանն այլ վայրում՝ քաղաք Աշտարակ, Ն. Աշտարակեցու 12, թիվ 32ա հասցեում դեղատնային գործունեություն իրականացնելու համար տրամադրել լիցենզիա **(հատոր 1-ին, գ.թ. 98):**

4) Լիցենզիա ստանալու մասին 08.10.2012 թվականի թիվ 25095 հայտով Ընկերությունը խնդրել է Նախարարությանն այլ վայրում՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արշալույս համայնք, 1-ին փողոց, թիվ 46 հասցեում դեղատնային գործունեություն իրականացնելու համար տրամադրել լիցենզիա **(հատոր 1-ին, գ.թ. 96):**

5) Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա հրամանով մերժվել է Ընկերության կողմից քաղաք Աշտարակ, Ն. Աշտարակեցու 12, թիվ 32ա հասցեում ևս դեղատնային գործունեություն իրականացնելու համար ներկայացված հայտը **(հատոր 1-ին, գ.թ. 51-53):**

6) Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2758-Ա հրամանով մերժվել է Ընկերության կողմից ՀՀ, Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք, Մ.Մաշտոցի թիվ 104 հասցեում ևս դեղատնային գործունեություն իրականացնելու համար ներկայացված հայտը **(հատոր 1-ին, գ.թ. 57-59):**

7) Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2759-Ա հրամանով մերժվել է Ընկերության կողմից ՀՀ, Արմավիրի մարզ, Արշալույս համայնք, 1-ին փողոց, թիվ 46 հասցեում ևս դեղատնային գործունեություն իրականացնելու համար ներկայացված հայտը **(հատոր 1-ին, գ.թ. 54-56):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստանալու հայտը մերժելու՝ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում ամրագրված իրավական հիմքերի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. իրավաչափ է արդյոք այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստանալու հայտի մերժումն այն հիմքով, որ հայտատուի նախկին լիցենզիայի գործունեությունը <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով դադարեցվելուց հետո մեկ տարվա ժամկետը չի լրացել:

<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը

սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ***լիցենզիան*** լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ է, ***լիցենզավորումը*** գործընթաց է՝ կապված լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ, ***հայտատուն (դիմողը)*** իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ է, որը դիմել է լիցենզավորող մարմին՝ լիցենզիայի ստացման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակ ստանալու համար:

<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե

1) դիմողի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում նույն օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

3) դիմող իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորմանենթակա գործունեության տեսակով.

4) դիմող ֆիզիկական անձն իրավունք չունի զբաղվել հայցվողլիցենզավորմանենթակա գործունեության տեսակով.

4.1) լիցենզիայի տրամադրումը հակասում է միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին.

5) օրենքով կամլիցենզավորմանկարգերով նախատեսված են այլ դեպքեր:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով չնախատեսված հիմքերով լիցենզիայի հայտի մերժումն արգելվում է, իսկ 7-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով:

<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու մասին հայտի մերժումն իրականացվում է նույն օրենքի 29-րդ հոդվածով՝ լիցենզիաների հայտերի մերժման համար նախատեսված դեպքերում և կարգով, բացառությամբ այդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքերի:

<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջը տարածվում է միայն լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների վրա, որոնք նույն օրենքի համաձայն պետք է իրականացվեն միայն լիցենզիայում նշված վայրում, իսկ 8-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է <<Վ>> տառը, ապա յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար տրվում է առանձին լիցենզիա:

<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմել միայն լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լիցենզավորման, այսինքն՝ լիցենզիաների տրման,

դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման իրավական գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով: Նշված օրենքի 33-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ այլ վայրում ևս զբաղվելու համար առանձին լիցենզիա ստանալու իրավական կառուցակարգերը: Ընդ որում, օրենքի նշված հոդվածում օրենսդրի կողմից նախատեսված կարգավորումները կիրառելի են միայն այն դեպքում, երբ հայտատուն ունի լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեությամբ զբաղվելու պաշտոնապես հաստատված իրավունք (լիցենզիա) և ցանկանում է այլ վայրում ևս իրականացնել լիցենզավորման ենթակա նույն գործունեությունը: Միաժամանակ, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածում նախատեսված կարգավորումները տարածվում են միայն լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների վրա, որոնք օրենքի համաձայն պետք է իրականացվեն միայն լիցենզիայում նշված վայրում:

Օրենսդիրը, սահմանելով, որ լիցենզավորման ենթակա են միայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում ընդգրկված գործունեության տեսակները, միաժամանակ ամրագրել է նաև, որ եթե նշված աղյուսակի 10-րդ սյունակում՝ լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեության անվանման դիմաց, նշված է <<Վ>> տառը, ապա լիցենզավորման ենթակա գործունեության այդ տեսակը պետք է իրականացվի միայն լիցենզիայում նշված վայրում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածում <<Վ>> տառով նշվում են գործունեության այն տեսակները, որոնց իրականացման համար տրվող լիցենզիայում նշված է այդ գործունեության իրականացման թույլատրելի վայրը, իսկ այլ վայրում նույն գործունեությամբ զբաղվելու դեպքում անհրաժեշտ է ստանալ նոր լիցենզիա *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունն ընդդեմ <<Ամելիք Բանկ>> ՓԲԸ-ի թիվ 3-1894(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում՝ <<Առողջապահության բնագավառ>> վերտառությամբ 3-րդ բաժնի <<Դեղատնային գործունեություն>> վերտառությամբ 2-րդ կետի 10-րդ սյունակում նշված է <<Վ>> տառը: Հետևաբար դեղատնային գործունեության՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակի իրականացման համար տրվող լիցենզիայում նշվում է դրա իրականացման թույլատրելի վայրը, իսկ այլ վայրում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու դեպքում անհրաժեշտ է ստանալ նոր լիցենզիա:

Անդրադառնալով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավադրույթով օրենսդիրը լիցենզիայի գործողության դադարեցումից բացի տնտեսվարող սուբյեկտների համար լրացուցիչ բացասական իրավական հետևանքներ առաջացնելու նպատակ է հետապնդում՝ ժամանակային սահմանափակում նախատեսելով նոր լիցենզիա ստանալու համար հայտ ներկայացնելու վերջիններիս իրավունքի իրացման նկատմամբ: Այսպես, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից բխում է, որ նույն հոդվածով սահմանված որոշ հիմքերով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմել լիցենզավորող մարմին միայն լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո: Եթե համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձը կամ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված այլ սուբյեկտը նոր լիցենզիա ստանալու համար դիմել է լիցենզիայի գործողությունն օրենքով սահմանված որոշ հիմքերով դադարեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ապա լիցենզավորող մարմինը պարտավոր է մերժել վերջինիս լիցենզիա ստանալու հայտը:

Այսպիսով, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամ-

րագրված իրավադրույթի խախտման հիմքով նոր լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) լիցենզավորման ենթակա որոշակի գործունեությամբ զբաղվող անձի լիցենզիայի գործողությունը դադարեցվել է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով,

բ) նոր լիցենզիա ստանալու համար այդ անձը դիմել է լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է: Իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից է նաև իրավահավասարության սկզբունքը: Վճռաբեկ դատարանը, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը վերլուծելով իրավահավասարության համընդհանուր սկզբունքի լույսի ներքո, արձանագրում է, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սահմանափակումը կիրառելի է բոլոր այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնց լիցենզիայի գործողությունը դադարեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով, անկախ այն հանգամանքից, թե տվյալ տնտեսվարող սուբյեկտի լիցենզիայի գործողության դադարեցումից հետո վերջինս շարունակում է հանդիսանալ լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեությամբ զբաղվող անձ, թե՝ ոչ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լիցենզիաներից մեկի գործողության դադարեցումից հետո տնտեսվարող սուբյեկտի կողմից դեղատնային գործունեությամբ զբաղվող անձ հանդիսանալը բավարար չէ, որպեսզի <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սահմանափակումը կիրառելի չլինի տվյալ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա, թիվ 2759-Ա հրամանները: Այդ վարչական ակտերով Նախարարը մերժել է այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու մասին Ընկերության կողմից 02.10.2012 թվականին և 08.10.2012 թվականին ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանի 27.03.2012 թվականի վճռով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով դադարեցվել է Ընկերությանը տրված 26.12.2008 թվականի թիվ Կ-XX-001190 լիցենզիայի գործողությունը: Նախարարը գտել է, որ տվյալ դեպքում <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով Ընկերությունը կարող է դիմել նոր լիցենզիա ստանալու համար միայն 26.12.2008 թվականի թիվ Կ-XX-001190 լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո, ուստի ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 37-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Ընկերության կողմից ներկայացված հայտերը ենթակա են մերժման **(հատոր 1-ին, գ.թ. 2-17):**

Դատարանն իր 17.04.2013 թվականի վճռով բավարարել է Ընկերության վերը նշված հայցապահանջը և անվավեր է ճանաչել վերոգրյալ վարչական ակտերը՝ պատճառաբանելով, որ դրանք ընդունվել են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ, 33-րդ և 37-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, քանի որ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել միայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-4.1-րդ կետերով նախատեսված հիմքերով, իսկ դրանց բացակայության պայմաններում վարչական մարմինն իրավունք չունի հղում կատարելու <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածին:

Վերաքննիչ դատարանը 23.12.2013 թվականի որոշմամբ մերժել է Նախարարի վերաքննիչ բողոքը և անփոփոխ է թողել Դատարանի 17.04.2013 թվականի վճիռը հետևյալ պատճառաբանությամբ. *<<(...) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված*

հայտի մերժման այլ դեպքերը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած անձանց նկատմամբ կիրառելի չեն, որպիսի պարագայում Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումն առ այն, որ գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու մասին հայտը կարող է մերժվել միայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-4.1-րդ կետերով նախատեսված հիմքերով, որոնցում որպես հիմք նախատեսված չեն Նախարարի հրամաններում նշված՝ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը կամ դրանում ամրագրված դրույթները (...)>>:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Նախարարը պարտավոր էր մերժել Ընկերության կողմից ներկայացված՝ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստանալու հայտերն այն հիմքով, որ վերջինիս նախկին (26.12.2008 թվականի թիվ Կ-XX-001190) լիցենզիայի գործունեությունը <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով դադարեցվելուց հետո մեկ տարվա ժամկետը չի լրացել: Հետևաբար Դատարանը, անվավեր ճանաչելով Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա, թիվ 2759-Ա հրամանները, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, խախտել են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը: Ինչ վերաբերում է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավադրույթին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ իրավանորմով նախատեսված բացառությունը չի վերաբերում այն դեպքերին, երբ տնտեսվարող սուբյեկտի լիցենզիայի գործողությունը դադարեցվել է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն բոլոր դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտի լիցենզիայի գործողությունը դադարեցվել է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով, վերջինս իրավունք չունի դիմել նոր լիցենզիա ստանալու համար մինչև լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց հետո օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետը լրանալը, քանի որ հակառակը կհակասի իրավահավասարության սկզբունքին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների իրավական վերլուծությունն անհամատեղելի է իրավահավասարության սկզբունքի հետ, քանի որ նման իրավական վերլուծության պարագայում ստացվում է, որ համապատասխան լիազոր մարմինը պարտավոր է միատեսակ իրավիճակում հայտնված, սակայն մի դեպքում մեկ լիցենզիա, մեկ այլ դեպքում մեկից ավելի լիցենզիա ունեցող անձանց նկատմամբ դրսևորել չհիմնավորված տարբերակված մոտեցում՝ մի դեպքում կիրառելով տնտեսվարող սուբյեկտների նոր լիցենզիա ստանալու համար հայտ ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամանակային սահմանափակումները, մյուս դեպքում՝ ձեռնպահ մնալով դրանից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սահմանափակումը կիրառելի է բոլոր այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնց լիցենզիայի գործողությունը դադարեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ տնտեսվարող սուբյեկտի լիցենզիայի գործողության դադարեցումից հետո վերջինս շարունակում է հանդիսանալ լիցենզավորման ենթակա համապատասխան գործունեությամբ զբաղվող անձ, թե՝ ոչ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լիցենզիաներից մեկի գործողության դադարեցումից հետո Ընկերության կողմից դեղատնային գործունեությամբ զբաղվող անձ հանդիսանալը չի նշանակում, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ

մասով ամրագրված սահմանափակումն Ընկերության նկատմամբ կիրառելի չէ: Տվյալ կարգավորումը տարածվում է բոլոր տնտեսվարող սուբյեկտների վրա, որոնց լիցենզիայի գործողությունը դադարեցվել է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով, հետևաբար դեղատնային գործունեության մեկից ավելի լիցենզիաներ ունեցող Ընկերությունը նոր լիցենզիա ստանալու համար իրավունք ուներ դիմել լիցենզավորող մարմին՝ Նախարարություն, թիվ Կ-XX-001190 լիցենզիայի գործողության դադարեցումից միայն մեկ տարի հետո:

Մինչդեռ, Ընկերությունն այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու հայտերը Նախարարություն է ներկայացրել 02.10.2012 թվականին և 08.10.2012 թվականին, այսինքն՝ մինչև իր նախկին՝ թիվ Կ-XX-001190 լիցենզիայի գործողության դադարեցումից հետո մեկ տարվա ժամկետը լրանալը: Տվյալ դեպքում լիցենզավորող մարմինը <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պարտավոր էր մերժել Ընկերության կողմից ներկայացված այլ վայրերում ևս դեղատնային գործունեությամբ զբաղվելու հայտերը նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով, քանի որ Ընկերության՝ թիվ Կ-XX-001190 լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց հետո մեկ տարվա ընթացքում նոր լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելու իրավունքը սահմանափակված է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն անհիմն կերպով են հանգել այն եզրակացության, որ Նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա, թիվ 2759-Ա հրամաններն ընդունվել են օրենքի, մասնավորապես՝ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ, 33-րդ և 37-րդ հոդվածների խախտմամբ: Հետևաբար Նախարարի վերոնշյալ հրամանները <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չեն կարող համարվել ոչ իրավաչափ վարչական ակտեր և ենթակա չեն անվավեր ճանաչման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից դատական ծախսերի կազմում ներառված է նաև պետական տուրքը: Սույն գործով նկատի ունենալով, որ Նախարարությունը վերաքննիչ բողոքի համար վճարել է 30.000 ՀՀ դրամ, վճռաբեկ բողոքի համար՝ 60.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նախարարության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.12.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ի հայցը՝ ՀՀ առողջապահության նախարարի 28.11.2012 թվականի թիվ 2757-Ա, թիվ 2758-Ա և թիվ 2759-Ա հրամաններն անվավեր ճանաչելու կամ վերացնելու պահանջների մասով, մերժել:

2. <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ից հօգուտ ՀՀ առողջապահության նախարարության բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

<<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ից հօգուտ ՀՀ առողջապահության նախարարության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2085/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2085/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Սոգլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լյուբով Փիլոյանի ընդդեմ Քաղաքապետարանի, Ընկերության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի հիման վրա Լյուբով Փիլոյանին հատկացման ենթակա 332,6քմ մակերեսով հողամասի մասով Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, դրա հիման վրա Քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.05.2008 թվականին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Ընկերության անվամբ 01.07.2008 թվականին կատարված պետական գրանցումը մասնակիորեն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լյուբով Փիլոյանը պահանջել է մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի հիման վրա իրեն հատկացման ենթակա 332,6քմ մակերեսով հողամասի մասով, առ ոչինչ կամ անվավեր ճանաչել Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, դրա հիման վրա Քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.05.2008 թվականին կնքված «Հողամասի

ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Ընկերության անվամբ 01.07.2008 թվականին կատարված պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.08.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.02.2014 թվականի որոշմամբ Լյուբով Փիլոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 02.08.2013 թվականի վճիռը մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի հիման վրա Լյուբով Փիլոյանին հատկացման ենթակա 332,6քմ մակերեսով հողամասի մասով Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, դրա հիման վրա Քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.05.2008 թվականին կնքված պայմանագիրը և Ընկերության անվամբ 01.07.2008 թվականին կատարված պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասով, բեկանվել է և փոփոխվել՝ այդ մասով հայցը բավարարվել է, իսկ մնացած մասով Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերությունը և Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ է ներկայացրել Լյուբով Փիլոյանը:

2.1. Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 5-րդ, 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը և 30-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել սույն գործի փաստերին, ճիշտ չի մեկնաբանել համապատասխան իրավական ակտերի նորմերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով իրավական վեճի հիմքում ընկած միակ խնդիրը Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշման իրավաչափության հարցի պարզումն է, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը պետք է պատասխաներ այն հարցին, թե արդյո՞ք նշված վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: Փոխարենը Վերաքննիչ դատարանը, դուրս գալով սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակներից, Քաղաքապետի թիվ 357-Ա որոշման իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում անդրադարձել է այդ վարչական ակտի իրավաչափության հարցին՝ անհիմն կերպով բացառելով դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ այդ վարչական ակտը որևէ ձևով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել և չի վիճարկվում սույն գործի շրջանակներում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի գնահատել Քաղաքապետի թիվ 623-Ա որոշումը, որի իրավաչափության ստուգման պահանջի բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը պարտավոր էր ընդունել այդ վարչական ակտի իրավաչափ լինելու փաստը, ինչը չի արել:

Վերաքննիչ դատարանը սխալմամբ գտել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճիռը չի կատարվել, և այն պարտադիր ենթակա է կատարման: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն կարևոր

հանգամանքը, որ Լյուբով Փիլոյանի կառուցապատման իրավունքը ծագել է ոչ թե ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի, այլ Քաղաքապետի թիվ 2594-Ա որոշման հիման վրա, որը հետագայում թիվ 357-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչվել: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճիռն ընդամենը նախատեսել է Լյուբով Փիլոյանի համար արդեն իսկ ծագած կառուցապատման իրավունքի իրացման եղանակներ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերաբերում է ոչ թե Լյուբով Փիլոյանի և Քաղաքապետարանի միջև որևէ ժամանակահատվածում իրավահարաբերության ճանաչմանը, այլ Քաղաքապետի կողմից 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումից բխող՝ Ընկերությանը տրամադրված իրավունքների իրավաչափության հարցին:

Ավելին, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճիռը կատարված լինելու հանգամանքը հաստատվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 21.04.2006 թվականի թիվ 3-851(ՎԴ) որոշմամբ:

Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ, որով խախտվել են նաև Լյուբով Փիլոյանի իրավունքները կամ օրինական շահերը, սակայն չի պատճառաբանել, թե կոնկրետ որ փաստական և իրավական հիմքերից ելնելով է նման հետևության հանգել: Բացի այդ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունն իրավունք ունի վստահելու վիճարկվող վարչական ակտի գոյությանը, որպիսի պայմաններում սխալ հետևություններ կատարելու արդյունքում մրցակցության մեջ է դրել սեփականության բացարձակ իրավունքը կառուցապատման ենթադրյալ իրավունքի հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ հայցը բավարարելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.08.2013 թվականի վճռին:

2.2. Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 27-րդ և 66-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի անվավերության հիմք կարող է հանդիսանալ միայն այն օրենքի սխալ կիրառումը, որի հիման վրա կայացվել է այդ վարչական ակտը, և իր որոշմամբ չի մատնանշել, թե հատկապես որ օրենքն է սխալ կիրառվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը, օբյեկտիվորեն գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշմամբ Լյուբով Փիլոյանի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել, քանի որ այդ վարչական ակտի կայացման օրվա դրությամբ Լյուբով Փիլոյանի կառուցապատման իրավունքն արդեն իսկ դադարած է եղել Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշման ուժով: Եթե նույնիսկ այդ վարչական ակտով Ընկերությանը տրամադրված հողամասի նկատմամբ Լյուբով Փիլոյանը երբևէ ունեցել է որևէ իրավունք, ապա այն դադարել է Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշմամբ, իսկ Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշումը որևէ կերպ անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել և չի վիճարկվում սույն վարչական գործի շրջանակներում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վիճելի հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը հատկացվել է Լյուբով Փիլոյանին ոչ թե ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով, այլ Քաղաքապետի որոշմամբ, այսինքն՝ այդ վճռով հաստատված հաշտության համաձայնության հիմքում ընկած է եղել Քաղաքապետի որոշումը: Հետագայում Քաղաքապետը դադարեցրել է Լյուբով Փիլոյանի կառուցապատման իրավունքը և այն փոխարինել դրամական փոխհատուցմամբ:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը որևէ իրավական գնահատական չի տվել Դատարանի այն իրավաչափ եզրահանգմանը, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Լյուբով Փիլոյանի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվել: Վիճարկվող վարչական ակտով պետությունը՝ որպես սեփականատեր, օրենքի սահմաններում իրականացրել է իրեն պատկանող գույքի օտարում:

Վերաքննիչ դատարանը որևէ գնահատական չի տվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.09.2006 թվականի վճռին, որով պարտադրվել է Լյուբով Փիլոյանին «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքել փոխհատուցման պայմանագիր և նրան վտարել Երևան քաղաքի Արամի թիվ 38 հասցեում տրամադրված տարածքից:

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել նաև այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Արամի թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Լյուբով Փիլոյանի սեփականության իրավունքը դադարել է, ինչը հաստատվում է օրինական ուժի մեջ մտած Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 31.07.2007 թվականի վճռով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.08.2013 թվականի վճռին:

2.3. Վճռաբեկ բողոքների պատասխանների փաստարկները

Ընկերության և Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքներն անհիմն են և ենթակա են մերժման:

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող դատական ակտը պատճառաբանված չլինելու, ինչպես նաև վիճարկվող վարչական ակտերով Լյուբով Փիլոյանի իրավունքները խախտված չլինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքների փաստարկներն իրավաչափ չեն: Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ «լեգիտիմ ակնկալիք» եզրույթի գործածմամբ մատնանշել է Լյուբով Փիլոյանի՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի ուժով իրեն հատկացման ենթակա 332,6քմ մակերեսով հողամասի նկատմամբ «օրինական սպասելիք», այսինքն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունք ունենալու փաստը:

Ընկերությունը և Քաղաքապետարանը, իրենց վճռաբեկ բողոքներում Քաղաքապետի ընդունած վարչական ակտերը հակադրելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտին, նախապատվությունը տվել են այդ վարչական ակտերին՝ վտանգելով արդարադատության պատշաճ իրականացումը:

Սույն գործում առկա է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ վճռում թույլ տրված գրավրիպակը շտկելու մասին որոշումը, որի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի՝ հաշտության համաձայնությունը հաստատելու մասում «որոշումներից» բառի փոխարեն պետք է կարդալ «որոշումից» բառը: Դրանով իսկ հստակ սահմանվել է, որ կողմերի հետագա փոխհարաբերությունները կարող են վերաբերել միայն Քաղաքապետի այն որոշմանը և դրա հիման վրա կնքված այն պայմանագրին, որը դրվել է հաշտության համաձայնության հիմքում: Հետևաբար Քաղաքապետի 13.03.2006 թվականի թիվ 357-Ա և 26.04.2006 թվականի թիվ 623-Ա որոշումները չեն կարող իրավաչափ համարվել:

ՀՀ կառավարության 05.10.2001 թվականի թիվ 950 որոշման ուժով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ն իր գործողություններով ամմիջականորեն իրավունքներ և պարտականություններ է ստեղծել Քաղաքապետի համար: Հետևաբար Վերաքննիչ դատարանը ոչ թե նույնացրել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին Քաղաքապետարանի հետ, այլ ընդամենը փաստել է վերջինիս անունից «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործելու փաստը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 21.04.2006 թվականի որոշմամբ հաստատված հանգամանքը՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի կատարված լինելու վերաբերյալ, չի կարող սույն գործով նախադատելի համարվել: Բացի այդ, ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներով հաստատվել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճիռը մինչև օրս չի կատարվել:

Լյուբով Փիլոյանը չի ժխտել, որ վիճելի հողամասը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության սեփականությունը, հակառակ դեպքում կբացառվեին բոլոր գործընթացները, որոնք վերաբերում են ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնությունը կնքելուն:

Ընկերության և Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքների այն փաստարկները, որոնք վերաբերում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի միջև հակասությունների առկայությանը և Լյուբով Փիլոյանի կողմից փոխհատուցում ստացած լինելու հանգամանքին, անհիմն են:

3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Քաղաքապետի 25.11.2005 թվականի թիվ 2594-Ա որոշմամբ Լյուբով Փիլոյանին Երևան քաղաքի Արամի փողոցի թիվ 38 հասցեում կառուցապատման իրավունքով տրամադրվել է 332,6քմ մակերեսով հողամաս՝ որպես վերջինիս սեփականությունը հանդիսացող, նույն հասցեում գտնվող, Երևան քաղաքի Գլխավոր պողոտայի կառուցման նպատակով պետության կարիքների համար վերցված անշարժ գույքի դիմաց տրվող փոխհատուցում **(հատոր 3-րդ, գ.թ. 73):**

2) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի թիվ 05-3374 վճռով հաստատվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և Լյուբով Փիլոյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որի համաձայն՝ «(...) Մենք հայցվոր՝ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը, հայտնում ենք, որ Լյուբով Փիլոյանին՝ համաձայն Քաղաքապետի որոշման, Հյուսիսային պողոտայի իրացման գոտում տրամադրվել է կառուցապատման իրավունք: Հետագայում մեր և Լյուբով Փիլոյանի միջև իրավահարաբերությունները կկարգավորվեն քաղաքապետի որոշումից բխող կնքվելիք պայմանագրի դրույթներից: Ես՝ պատասխանող Լյուբով Փիլոյանս, ընդունում եմ, որ Քաղաքապետի կողմից կայացվել է ինձ կառուցապատման իրավունքով հողամաս հատկացնելու որոշումը և համաձայն եմ, որ իմ և «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի միջև հետագա իրավահարաբերությունները կարգավորվեն Քաղաքապետի որոշման դրույթներով (...)» **(հատոր 3-րդ, գ.թ. 74-77, գ.թ. 51):**

3) Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչվել Քաղաքապետի 25.11.2005 թվականի թիվ 2594-Ա որոշումը, իսկ Քաղաքապետի և Լյուբով Փիլոյանի միջև կնքված «Երևանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման նպատակով Հյուսիսային պողոտային հարակից օտարման գոտում հողամասի վարձակալության մասին» պայմանագիրը համարվել է վաղաժամկետ լուծված, որոշվել է համարժեք գնա-

յին առաջարկ ներկայացնել Լյուբով Փիլոյանին և դիմել ՀՀ վճռաբեկ դատարան՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի թիվ 05-3374 վճիռը վերանայելու և բեկանելու համար **(հատոր 3-րդ, գ.թ. 106):**

4) ՀՀ վճռաբեկ դատարանի 21.04.2006 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքը թողնվել է առանց բավարարման **(հատոր 1-ին, գ.թ. 15-17):**

5) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.09.2006 թվականի վճռով վճռվել է Լյուբով Փիլոյանին՝ որպես Երևան քաղաքի Արամի թիվ 38 հասցեի 1/3 մասի սեփականատիրոջ, պարտադրել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքել փոխհատուցման պայմանագիր 37.363.733 ՀՀ դրամով և նրան վտարել Երևան քաղաքի Արամի թիվ 38 հասցեում տրամադրված 332,6քմ մակերեսով տարածքից **(հատոր 3-րդ, գ.թ. 52-61):**

6) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 31.07.2007 թվականի թիվ 2-2950/2007թ. վճռով հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ քաղաքացիներ Լյուբով Փիլոյանի, Տիգրան Փիլոյանի, Լամարա Ղանդիլյանի և Վլադիմիր Փիլոյանի սեփականության իրավունքները Երևան քաղաքի Արամի թիվ 38 հասցեում գտնվող շինությունների և հողամասի նկատմամբ, դրանք պետության կարիքների համար վերցնելու կապակցությամբ, դադարել են, և սեփականության իրավունքով տիրապետվում են Հայաստանի Հանրապետության կողմից **(հատոր 4-րդ, գ.թ. 73-76):**

7) Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշմամբ որոշվել է Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեում գտնվող, Ընկերությանը պատկանող շինությամբ զբաղեցված 10.000քմ մակերեսով հողամասին կից՝ կառուցապատման ծրագիրը լիովին իրականացնելու համար, ընդլայնման նպատակով լրացուցիչ 780,46քմ մակերեսով հողամասն առանց հրապարակային սակարկությունների, ուղղակի վաճառքի միջոցով տարածագնահատման 1-ին գոտու կադաստրային արժեքով օտարել Ընկերությանը **(հատոր 4-րդ, գ.թ. 9-10):**

8) «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» 21.05.2008 թվականի թիվ Հ.58/2-ՊՓ պայմանագրի համաձայն՝ Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեին կից գտնվող 780,46քմ մակերեսով հողամասը 46.827.600 ՀՀ դրամով վաճառվել է Ընկերությանը **(հատոր 4-րդ, գ.թ. 68-70):**

9) Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեին կից գտնվող 780,46քմ մակերեսով հողամասը 01.07.2008 թվականից սեփականության իրավունքով գրանցված է Ընկերության անվամբ՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01006-3-15 մատյանի 00221 համարի տակ **(հատոր 4-րդ, գ.թ. 140):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իրավաչափ է վարչական մարմնի իրավասության շրջանակներում ընդունված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի տնօրինմանն ուղղված վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի բավարարումն այն պայմաններում, երբ տվյալ հողամասի նկատմամբ հայց-

վորի ենթադրյալ գույքային իրավունքները դադարել են չվիճարկված և ոչ իրավաչափ չճանաչված մեկ այլ վարչական ակտով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (*տե՛ս, Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթհեմն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32):*

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում

է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ, որպես ընդհանուր կանոն, դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՝ ոչ *(տե՛ս, Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում, չի կարող անվավեր ճանաչվել այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք *(տե՛ս, Սվետլանա Օհանյանն ընդդեմ Երևանի*

քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Լյուբով Փիլոյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի հիման վրա իրեն հատկացման ենթակա 332,6քմ մակերեսով հողամասի մասով, անվավեր կամ առ ոչինչ ճանաչել Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, ինչպես նաև դրա հիման վրա Քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.05.2008 թվականին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Ընկերության անվամբ 01.07.2008 թվականին կատարված պետական գրանցումը: Փաստորեն, սույն վարչական գործի շրջանակներում որպես հիմնական պահանջ՝ վիճարկվում է Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշման իրավաչափությունը, որով որոշվել է Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեում գտնվող, Ընկերությանը պատկանող շինությամբ զբաղեցված 10.000քմ մակերեսով հողամասին կից՝ կառուցապատման ծրագիրը լիովին իրականացնելու համար, ընդլայնման նպատակով լրացուցիչ 780,46քմ մակերեսով հողամասն առանց հրապարակային սակարկությունների, ուղղակի վաճառքի միջոցով տարածագնահատման 1-ին գոտու կադաստրային արժեքով օտարել Ընկերությանը, իսկ որպես ածանցյալ պահանջներ՝ այդ վարչական ակտի հիման վրա կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրի և Ընկերության անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը:

Սույն գործով Դատարանը Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, ինչպես նաև դրա հիման վրա կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Ընկերության անվամբ կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու Լյուբով Փիլոյանի պահանջը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշմամբ Լյուբով Փիլոյանի իրավունքները կամ օրինական շահերը չեն խախտվել: Մասնավորապես՝ Դատարանը գտել է, որ վիճելի հողամասի նկատմամբ Լյուբով Փիլոյանի կառուցապատման իրավունքը դադարել է Քաղաքապետի 16.03.2006 թվականի 357-Ա որոշմամբ, որը երբևէ չի վիճարկվել և ներկայումս էլ չի վիճարկվում, որևէ այլ կերպ ոչ իրավաչափ՝ անվավեր չի ճանաչվել: Հետևաբար սույն գործով վիճարկվող վարչական ակտով Լյուբով Փիլոյանի որևէ իրավունք չի խախտվել, քանի որ, եթե նույնիսկ Ընկերությանը տրամադրված հողամասի նկատմամբ Լյուբով Փիլոյանը երբևէ ունեցել է որևէ իրավունք, ապա այն դադարել է մինչև սույն գործով վիճարկվող թիվ 2249-Ա որոշման ընդունման պահը: Այլ կերպ ասած՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին՝ 15.05.2008 թվականին, վիճելի հողամասի նկատմամբ Լյուբով Փիլոյանը որևէ իրավունք չի ունեցել, և վիճելի հողամասը սեփականության իրավունքով պատկանել է Հայաստանի Հանրապետությանը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելով, գտել է, որ Դատարանն անհիմն է մերժել Լյուբով Փիլոյանի հայցը՝ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, ինչպես նաև դրա հիման վրա Քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.05.2008 թվականին կնքված պայմանագիրը և Ընկերության անվամբ 01.07.2008 թվականին կատարված պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասով, և եզրահանգել է, որ հայցն այդ մասով ենթակա է բավարարման: Իր այդ եզրահանգումը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է այն հանգամանքով, որ Քաղաքապետարանն առանց ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով Լյուբով Փիլոյանին տրամադրվելիք 332,6քմ մակերեսով հողամասի հատկացման հարցը լուծելու (որով լուծում կստանար Լյուբով Փիլոյանի «լեգիտիմ ակնկալիքը»), իրավասու չէր նշված տարածքն օտարել այլ անձի: Հետևաբար Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը պետք է ճանաչվի անվավեր, քանի որ այն կայացվել է օրենքի խախտմամբ (սխալ կիրառման հետևանքով)՝ խախտելով Լյուբով Փիլոյանի իրավունքներն ու օրինական շահերը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի

փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք՝ Լյուբով Փիլոյանի հայցը մասնակիորեն բավարարելու մասով, անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրում է, որ սույն գործով բերված վճռաբեկ բողոքներով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը, ըստ էության, հանգում է հետևյալին. իրավաչափ է արդյո±ք Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը մասնակիորեն ենթակա է անվավեր ճանաչման, թե՝ ոչ:

Վճռաբեկ դատարանը մեկ անգամ ևս փաստում է, որ անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը վարչական դատավարության կարգով վիճարկելու դեպքում, մասնավորապես՝ անձը պետք է հիմնավորի, որ այդ վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը: Եթե գործի քննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ հայցով դատարան դիմած անձի որևէ իրավունք չի խախտվել, կամ վիճարկվող վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը որևէ կերպ չեն առնչվում տվյալ անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, ապա պետք է վճիռ կայացնի վերջինիս հայցը մերժելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Լյուբով Փիլոյանը չի կարող հանդիսանալ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը դատական կարգով վիճարկելու իրավական շահագրգռվածություն ունեցող անձ, այսինքն՝ իր առերևույթ խախտված իրավունքների պաշտպանության նպատակով տվյալ վարչական ակտը վիճարկելու «իրական (ռեալ)» իրավունք ունեցող «շահագրգիռ անձ», քանի որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Լյուբով Փիլոյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով երաշխավորված որևէ իրավունք կամ օրինական շահ չի խախտվել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստական հանգամանքների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Քաղաքապետի 25.11.2005 թվականի թիվ 2594-Ա որոշմամբ Երևան քաղաքի Արամի փողոցի թիվ 38 հասցեում Լյուբով Փիլոյանին կառուցապատման իրավունքով տրամադրվել է 332,6քմ մակերեսով հողամաս՝ որպես Լյուբով Փիլոյանից պետության կարիքների համար վերցված անշարժ գույքի դիմաց տրվող փոխհատուցում: Լյուբով Փիլոյանին կառուցապատման իրավունք տրամադրող Քաղաքապետի 25.11.2005 թվականի թիվ 2594-Ա որոշման հիման վրա ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն իր 16.12.2005 թվականի վճռով հաստատել է Լյուբով Փիլոյանի և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որով կողմերը համաձայնության են եկել այն հարցի շուրջ, որ Քաղաքապետի որոշման համաձայն Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի իրացման գոտում Լյուբով Փիլոյանին տրամադրվել է կառուցապատման իրավունք, և իրենց հետագա հարաբերությունները կկարգավորվեն Քաղաքապետի որոշումով և այդ որոշումից բխող կնքվելիք պայմանագրի դրույթներով: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից կայացված նշված վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո Քաղաքապետն ընդունել է մեկ այլ՝ 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշումը, որով Քաղաքապետի 25.11.2005 թվականի թիվ 2594-Ա որոշումը չեղյալ է ճանաչվել, և որոշվել է համարժեք գնային առաջարկ ներկայացնել Լյուբով Փիլոյանին:

Փաստորեն, Լյուբով Փիլոյանին պատկանող անշարժ գույքը պետության կարիքների համար վերցնելու դիմաց Քաղաքապետի 25.11.2005 թվականի թիվ 2594-Ա որոշմամբ հողամասի կառուցապատման իրավունքի տեսքով նրան տրամադրված փոխհատուցումը Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշմամբ փոխարինվել է դրամական հատուցմամբ: Այսինքն՝ Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշման ուժով Երևանի քաղաքի Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեին կից գտնվող 332,6քմ մակերեսով հողամասի նկատմամբ Լյուբով Փիլոյանի կառուցապատման իրավունքը՝ որպես Լյուբով Փիլոյանից պետության կարիքների համար վերցված անշարժ գույքի դիմաց տրվող փոխհատուցում, դադարել է և նախատեսվել է համարժեք փոխհատուցում մեկ այլ եղանակով, մասնավորապես՝ դրամական փոխհատուցմամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց *(տե՛ս, օրինակ, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշումը, որով չեղյալ է ճանաչվել Լյուբով Փիլոյանին տրամադրված կառուցապատման իրավունքը, սույն գործով չի վիճարկվում, ավելին, գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ նշված ակտը վիճարկման արդյունքում օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ է ճանաչվել, հետևաբար սույն վարչական գործի քննության ընթացքում դատարանները պետք է ելնեն Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշման իրավաչափության կանխավարկածից՝ չբացառելով դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությունը:

Նման պայմաններում ելնելով Քաղաքապետի 16.03.2006 թվականի թիվ 357-Ա որոշման իրավաչափության կանխավարկածից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի շրջանակներում չի հիմնավորվել այն հանգամանքը, որ Լյուբով Փիլոյանն ապօրինի կերպով է զրկվել Երևանի քաղաքի Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեին կից գտնվող 332,6քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի, այն է՝ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշման ընդունման օրվա դրությամբ Լյուբով Փիլոյանը Երևանի քաղաքի Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեին կից գտնվող 332,6քմ մակերեսով հողամասի նկատմամբ որևէ գույքային իրավունք չի ունեցել: Ասվածը հիմնավորվում է նաև օրինական ուժի մեջ մտած՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 31.07.2007 թվականի վճռով, որով հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ պետության կարիքների համար վերցնելու կապակցությամբ Երևան քաղաքի Արամի թիվ 38 հասցեում գտնվող շինությունների և հողամասի նկատմամբ Լյուբով Փիլոյանի սեփականության իրավունքը դադարել է, և այն (հողամասը) սեփականության իրավունքով տիրապետվում է Հայաստանի Հանրապետության կողմից:

Հետևաբար Քաղաքապետը, սույն գործով վիճարկվող 15.05.2008 թվականի թիվ

2249-Ա որոշմամբ Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի թիվ 16/1 հասցեին կից գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասն օրենքով սահմանված կարգով Ընկերությանն օտարելով, գործել է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով ոչ միայն չեն խախտվել Լյուբով Փիլոյանի իրավունքները կամ օրինական շահերը, այլև ավելին՝ այդ վարչական ակտը, վերը նշված պատճառաբանությունների լույսի ներքո, չի առնչվել Լյուբով Փիլոյանի իրավունքներին կամ օրինական շահերին:

Ինչ վերաբերում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի, այն է՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի կատարման անհրաժեշտության մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված դատական ակտի կատարման կամ չկատարման հանգամանքը սույն վարչական գործի քննության և լուծման համար էական նշանակություն չունի, քանի որ Լյուբով Փիլոյանին կառուցապատման իրավունքը տրամադրվել է ոչ թե ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով, այլ Քաղաքապետի որոշմամբ, կառուցապատման իրավունքը դրամական փոխհատուցմամբ ևս վերացվել է Քաղաքապետի որոշմամբ, մինչդեռ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնությամբ Լյուբով Փիլոյանը և «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը սահմանել են իրենց միջև հարաբերությունների հետագա կարգավորման եղանակը, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 21.04.2006 թվականի թիվ 3-851(ՎԴ) որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ [ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով հաստատված] հաշտության համաձայնության կողմերը ոչնչով կաշկանդված չեն իրենց միջև առաջացած կամ առաջացող տարաձայնություններն առանձին հայցապահանջներով դատական քննության առարկա դարձնելու հարցում:

Անդրադառնալով Լյուբով Փիլոյանի՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի ուժով իրեն հատկացման ենթակա 332,6քմ հողամասի նկատմամբ «օրինական սպասելիք» ունենալու՝ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դրանք նույնպես անհիմն են, քանի որ Լյուբով Փիլոյանի օրինական սպասելիքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի ուժով կարող է դրսևորվել միայն դրանով հաստատված հաշտության համաձայնության շրջանակներում, մինչդեռ նշված հաշտությամբ համաձայնություն է կայացվել կողմերի՝ հետագայում իրենց հարաբերությունները Քաղաքապետի որոշման դրույթներով և Քաղաքապետի որոշումից բխող կնքվելիք պայմանագրի դրույթներով կարգավորելու մասին: Այլ կերպ ասած՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռով Լյուբով Փիլոյանին 332,6քմ մակերեսով հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունք տրամադրված չլինելու պայմաններում, այդ վճռի ուժով 332,6քմ մակերեսով հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի «օրինական սպասելիք» Լյուբով Փիլոյանի մոտ չէր կարող ձևավորվել, հետևաբար ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի կատարումը և/կամ այդ վճռով Լյուբով Փիլոյանի մոտ ձևավորված օրինական սպասելիքը սույն վարչական գործի քննության և լուծման համար էական նշանակություն չունեն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ հիմքերը բացակայում են, քանի որ սույն գործի քննությամբ չի հիմնավորվել, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, բացի այդ, այն չի առնչվում սույն գործով հայցվող Լյուբով Փիլոյանի իրավունքներին կամ օրինական շահերին և չի խախտում դրանք: Հետ-

նաբար Դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը չի կարող անվավեր ճանաչվել, և Լյուբով Փիլոյանի հայցը ենթակա է մերժման: Միևնդեռ Վերաքննիչ դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ հիմքերի բացակայության հանգամանքը հաշվի չի առնվել, ինչի արդյունքում էլ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով է հանգել այն եզրակացության, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ, ինչպես նաև խախտում է Լյուբով Փիլոյանի իրավունքները և օրինական շահերը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը սույն գործի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի կարող համարվել ոչ իրավաչափ վարչական ակտ և ենթակա չէ անվավեր ճանաչման: Միաժամանակ հաշվի առնելով, որ վիճարկվող վարչական ակտն անվավեր չճանաչելը կանխորոշում է սույն գործով ներկայացված մյուս հայցապահանջների մերժման հարցը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.05.2008 թվականին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և Ընկերության անվամբ 01.07.2008 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ևս ենթակա չեն անվավեր ճանաչման:

Սույն գործով Լյուբով Փիլոյանի՝ վիճարկվող վարչական ակտի անվավեր ճանաչման հարցում իրավական շահագրգռվածություն ունեցող անձ չհանդիսանալու պայմաններում Վճռաբեկ դատարանը բողոք բերած անձանց մյուս փաստարկներին չի անդրադառնում:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքների պատասխաններում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայում և բեկանում է միայն վարչական ակտն անվավեր ճանաչելու և դրանից բխող ածանցյալ հայցապահանջների մասով հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով ներկայացված են վարչական ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու պահանջներ, ինչպես նաև դրանցից բխող ածանցյալ պահանջներ, որոնք Դատարանի վճռով ամբողջությամբ մերժվել են: Լյուբով Փիլոյանը Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկել է ամբողջությամբ, սակայն Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի վճիռը՝ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու և դրանից բխող ածանցյալ պահանջները մերժելու մասով, թողնվել է անփոփոխ, իսկ վարչական ակտն անվավեր ճանաչելու և դրանից բխող ածանցյալ պահանջները մերժելու մասով բեկանվել և փոփոխվել է՝ հայցն այդ մասով բավարարվել է: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքները ներկայացված են Վերաքննիչ դատարանի որոշման միայն հայցը բավարարելու մասի դեմ, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայման և բեկանման ենթակա է միայն այդ մասով: Իսկ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու և դրանից բխող ածանցյալ պահանջները մերժելու մասով Վերաքննիչ դատարանի որոշումը Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում՝ վճռաբեկ բողոքներում այդ հայցապահանջի մասով հիմքեր և հիմնավորումներ ներկայացված չլինելու պատճառով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով նկատի ունենալով, որ Քաղաքապետարանը և Ընկերությունը վճռաբեկ բողոքների համար վճարել են 60.000-ական ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքները ենթակա են բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել բողոք բերող անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանի և Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Լյուբով Փիլոյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Սոգլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը բավարարել, իսկ Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.02.2014 թվականի որոշման՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2005 թվականի վճռի հիման վրա Լյուբով Փիլոյանին հատկացման ենթակա 332,6քմ մակերեսով հողամասի մասով Երևանի քաղաքապետի 15.05.2008 թվականի թիվ 2249-Ա որոշումը, դրա հիման վրա Երևանի քաղաքապետարանի և «Սոգլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի միջև 27.05.2008 թվականին կնքված պայմանագի-

րը և «Սոգլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի անվամբ 01.07.2008 թվականին կատարված պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասով Լյուբով Փիլոյանի հայցը բավարարելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 02.08.2013 թվականի վճռին:

2. Լյուբով Փիլոյանից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Լյուբով Փիլոյանից հօգուտ «Սոգլասիե-Արմենիա» ՍՊԸ-ի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4901/05/11
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4901/05/11**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ստյոպիկ Պողոսյանի ներկայացուցիչ Անահիտ Աթոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.08.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սերժիկ Պողոսյանի ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյանի՝ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սերժիկ Պողոսյանը պահանջել է ժառանգության իրավունքի վկայագիրը ճանաչել անվավեր:

ՀՀ վարչական դատարանի 05.02.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.06.2013 թվականի որոշմամբ Սերժիկ Պողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վարչական դատարանի 05.02.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 17.03.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Դրոյի 3-րդ շենքի թիվ 28 հասցեում գտնվող բնակարանի 1/2 մասով անվավեր է ճանաչվել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Ստյոպիկ Պողոսյանին 27.11.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված սեղանամատյանում 12277 համարի տակ, ժառանգական գործ թիվ 310):

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.08.2014 թվականի որոշմամբ Սերժիկ Պողոսյանի և Ստյոպիկ Պողոսյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 17.03.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ստյոպիկ Պողոսյանի ներկայացուցիչ Անահիտ Աթոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սերժիկ Պողոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածը և 220-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել վերաքննիչ բողոքի հիմքերը, չի պատճառաբանել, թե ինչ հիմնավորմամբ է մերժում վերաքննիչ բողոքը:

Նոտարական գործողության իրավաչափությունը կարող է վիճարկվել երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ անձը իմացել կամ կարող էր իմանալ վիճարկվող նոտարական գործողության կատարման մասին: Հայցվորը դիմել է դատարան 16.09.2011 թվականին, իսկ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվել է 27.11.2009 թվականին, այսինքն՝ երկու տարի երկու ամիս անց:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ներկայացված վիճարկման հայցն ընդհանրապես ենթակա չէր վարույթ ընդունման, քանի որ նոտարի կողմից տրված ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ չէ, իսկ գործի քննության պահին գործող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են բողոքարկվել նոտարի անգործությունը, ինչպես նաև նոտարական գործողությունները՝ բացառությամբ գործարքի վավերացման գործողության:

Ստորադաս դատարանի այն պատճառաբանությունը, որ վկայագիրը տրվել է ոչ ճիշտ և ոչ լիարժեք տեղեկությունների հիմքով, ինչը վկայագրի անվավերության հիմք է հանդիսանում, լիովին անհիմն է և զուրկ իրավական հիմքից: Մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ թեև նոտարը հանդիսանում է հանրային ծառայություններ իրականացնող անձ, այդուհանդերձ, դրանից չի հետևում, որ նրա կողմից տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը հանդիսանում է վարչական ակտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Դատարանի վճիռը հայցը մասնակիորեն բավարարելու մասով անփոփոխ թողնելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 08.08.2014 թվականի որոշումը և այդ մասով հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Հայցին կցված ամուսնության վկայականի համաձայն՝ Սամվել Պողոսյանը 20.06.1946 թվականին ամուսնացել է Ալվարդ Առաքելի Առաքելյանի հետ, իսկ Ալվարդ Առաքելի Առաքելյանը, համաձայն 3 եղբայրների ծննդյան վկայականների և 1958 թվականի դատարանի վճռի, Լուսիկ Առաքելի Թովմասյանն է: Ստյոպիկ Պողոսյանը 1995 թվականից մինչև օրս մշակում է Կոտայքի մարզի Նուռնուս համայնքում սեփականության իրավունքով Սամվել Պողոսյանին հատկացված հողամասը, ինչը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, նշանակում է, որ Ստյոպիկ Պողոսյանը հանդիսանում է Սամվել Պողոսյանի ժառանգությունն ընդունած անձ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 27.11.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (գրանցված սեղանամատյանում 12277 համարի տակ, ժառանգական գործ թիվ 310) համաձայն՝ քաղաքացի Սամվել Սմբատի Պողոսյանի՝ մահացած 15.09.1996 թվականին, գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում որդին՝ Ստյոպա (Ստյոպիկ) Սամվելի Պողոսյանը: Ժառանգական գույքը, որի համար տրվել է ժառանգության իրավունքի վկայագիրը, բաղկացած է Երևանի Դրոյի փողոցի 3-րդ շենքի թիվ 28 բնակարանից **(հատոր 1-ին, գ.թ. 45):**

2) Սույն գործով Սերժիկ Պողոսյանի հայցի առարկան Ստյոպիկ Պողոսյանին 27.11.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված սեղանամատյանում 12277 համարի տակ, ժառանգական գործ թիվ 310) անվավեր ճանաչելն է, իսկ հայցի փաստական հիմքը Սերժիկ Պողոսյանի՝ ժառանգատու Սամվել Պողոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ լինելու հանգամանքն է **(հատոր 1-ին, գ.թ. 2-3):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական դատարանում վիճարկելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք անձը դատարան դիմելու պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է՝ 28.11.2007 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) համաձայն իրավունք ուներ վիճարկման հայցով պահանջելու անվավեր ճանաչել ժառանգության իրավունքի վկայագիրը.

2. արդյո՞ք ՀՀ իրավական համակարգում ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ է:

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանում վարչական գործերով դատավարությանկարգը սահմանվում է նույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ կիրառելի են («mutatis mutandis») վարչական դատավարությաննկատմամբ և չեն հակասում նույն օրենսգրքին և վարչական դատավարությանէությանը:

Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Նույն օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

Նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Նույն օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

Նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են բողոքարկվել նոտարի անգործությունը, ինչպես նաև նոտարական գործողությունները, բացառությամբ գործարքի վավերացման գործողության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **վարչական մարմիններ՝** Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար.քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Եթե, վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա նույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական

ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, նույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է նույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ:

Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն նույն օրենքով:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան:

Օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 8-րդ հոդվածներում սահմանել էր վարչական դատարանի իրավասության շրջանակը: Ինչպես ցանկացած դատարան, վարչական դատարանն իրավասու էր իրականացնել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված էր հատուկ տեսակի իրավասությամբ: 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 8-րդ հոդվածներում օրենսդիրը սահմանել էր այն սուբյեկտների ցանկը, ովքեր կարող էին դիմել ՀՀ վարչական դատարան, ինչպես նաև՝ ՀՀ վարչական դատարանի ընդդատության շրջանակը, իսկ նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն էր: 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում օրենսդիրը սահմանել էր հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների վարչական դատարան դիմելու հայցատեսակները, ինչպես նաև՝ հատուկ վարույթները և դրանց դատավարական առանձնահատկությունները:

Վկայակոչված իրավանորմերը սահմանում էին, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար իրավունք ուներ դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում էր, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ուներ և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ուներ դիմելու վարչական դատարան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձի մոտ վարչական դատարան դիմելու իրավունքի առկայության հարցը պետք է դիտարկվեր հետևյալ պայմանների համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ իրավական նախադրյալները.

- սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարում,
- համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայություն,

- հանրային իրավահարաբերություններից ծագող իրավական վեճի առկայություն,
- 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-68-րդ հոդվածներով կամ հատուկ վարույթներով նախատեսված հայցի առկայություն:

Օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում, որպես առանձին հայցի տեսակ, նախատեսել էր վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածում ամրագրված վիճարկման հայցին՝ նշելով, որ վիճարկման հայցի առարկան է միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու կամ փոփոխելու պահանջը: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*տե՛ս, Սամվել Մելքումյանն ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձինք Նազիկ, Սեդա Մելքումյանների, Ասպրիկ, Հրաչյա, Հրայր, Համլիկ Մելքոնյանների, ՀՀ կառավարության աջակցեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):*

Այսպիսով, 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ էր, որն ուղղված էր դատական ակտով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն: Հետևաբար վիճարկման հայցով հայցվորն իրավունք ուներ պահանջել վերացնելու իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը: Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքի առկայության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, թե՝ ոչ:

Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասում վարչական ակտը սահմանել է որպես իրավական ակտ, որն ընդունում է վարչական մարմինը՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արդեն իսկ անդրադարձել է վարչական ակտին բնորոշ հատկանիշներին: Համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտին բնորոշ հատկանիշներն են վարչական մարմնի անհատական ակտ լինելը, արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի ոլորտում ընդունված լինելը, կոնկրետ գործի կարգավորումը, իրավունքների և պարտականությունների սահմանումը, փոփոխումը, վերացումը կամ ճանաչումը *(տե՛ս, Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ նոտարի կողմից անձին տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ համարվելու համար պետք է օժտված լինի վարչական ակտին բնորոշ վերը նշված բոլոր հատկանիշներով: Այսպես, Վճռաբեկ դատարանը ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ դիտարկելու համար նախևառաջ անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյոք այն ընդունվում է հանրային իրավունքի ոլորտում վարչական մարմնի կողմից:

Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում վարչական մարմնի հասկացությունը նախ սահմանել է ինստիտուցիոնալ առումով՝ ամրագրելով, որ վարչական մարմիններ են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինները, տարածքային

կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, այնուհետև վարչական մարմնի հասկացությունը սահմանել է գործառութային առումով՝ նշելով, որ վարչական մարմիններ են նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև օրենսդիրը սահմանել է որ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս նոտարը իրականացնում է հանրային գործառույթ, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ, հետևաբար նոտարը ինստիտուցիոնալ առումով վարչական մարմին չէ, նոտարը օժտված չէ նաև այլ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կարգավիճակով, այսինքն՝ նոտարը ՀՀ իրավական համակարգում գործառութային առումով նույնպես վարչական մարմին չէ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ ժառանգական իրավունքի կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ՝ ի տարբերություն վարչական ակտի, որն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում:

Հետևաբար նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում չի կարող հանդիսանալ վարչական ակտ, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ անձն իրավունք չուներ պահանջելու վիճարկման հայցով վերացնել իր ենթադրյալ իրավունքները և ազատությունները խախտող ժառանգության իրավունքի վկայագիրը, քանի որ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից նախատեսված հայցի տեսակ էր, որն ուղղված էր դատական ակտով միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելուն կամ փոփոխելուն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոտարի կողմից հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է նոտարների հանրային-իրավական կարգավիճակը և պայմանավորում է նրանց գործունեության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացման իրավական անհրաժեշտությունը: Ըստ այդմ, օրենսդիրը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը կարող են բողոքարկվել դատարան: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը քննվում են վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Օրենսդիրը 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Նոտարի գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 28-րդ գլխի 161-րդ հոդվածով սահմանել էր նոտարական գործողության կամ նոտարական անգործության վիճարկելու վերաբերյալ գործերի քննության կարգը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվե-

լով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում:

Այսպիսով, օրենսդիրը նոտարական գործողության կատարման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերն ընդդատյա էր համարել վարչական դատարանին, քանի որ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա էին հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Հետևաբար այն դեպքերում, երբ վեճը վերաբերում էր ոչ թե հանրային իրավահարաբերություններին, այլ մասնավոր իրավահարաբերություններին, մասնավորապես՝ ժառանգական իրավունքին, ապա տվյալ գործերը վարչական դատարանում քննության ենթակա չէին:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ երբ հայցի առարկան ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելն էր, ապա անձը դատարան չէր կարող ներկայացնել վիճարկման հայց, քանի որ անձը վիճարկման հայցով կարող էր պահանջել ամբողջությամբ կամ մասնակի վերացնել վարչական ակտը, իսկ ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ չի հանդիսանում:

Ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիտարկվել նաև որպես նոտարական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը:

Սույն գործով Սերժիկ Պողոսյանը, դիմելով դատարան, պահանջել է ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 27.11.2009 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված սեղանամատյանում 12277 համարի տակ, ժառանգական գործ թիվ 310) անվավեր ճանաչել:

Դատարանը հայցը մասնակի բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ 27.11.2009 թվականին տված թիվ 12277 ժառանգության իրավունքի վկայագիրը տրվել է ոչ ճիշտ և ոչ լիարժեք տեղեկությունների հիմքով, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիման վրա, վերջինիս անվավերության հիմք է հանդիսանում:

Վերաքննիչ դատարանը, Ստյոպիկ Պողոսյանի վերաքննիչ բողոքը մերժելով, նշել է, որ տվյալ դեպքում Դատարանի կայացրած գործն ըստ էության լուծող դատական ակտով վարչական գործին տրվել է ճիշտ լուծում, սակայն Դատարանի կողմից դատական ակտը սխալ (թերի) է պատճառաբանվել: Վերաքննիչ դատարանը, վերլուծելով իրավահարաբերության պահին գործող «ՀՀ-ում սեփականության մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումները, եզրակացրել է, որ Սամվել Պողոսյանը հանդիսացել է Երևանի Դրոյի փողոցի թիվ 3 շենքի 28-րդ կոոպերատիվ բնակարանի սեփականատեր՝ առանց պետական գրանցման, օրենքի ուժով և, հաշվի առնելով, որ Լուսիկ Պողոսյանը 1946 թվականին ամուսնացել է Սամվել Պողոսյանի հետ, ամուսնությունը գրանցված է եղել ՔԿԱԳ-ում, հետևաբար բնակարանի համար նախատեսված փայն ամբողջությամբ վճարելուց հետո այն դարձել է նրանց համատեղ սեփականությունը: Անդրադառնալով հայցի մյուս հիմքին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ նախ՝ նոտարը ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս իրականացնում է հանրային գործառույթ, սակայն

միաժամանակ օժտված չէ պետական մարմնի կարգավիճակով, այսինքն՝ նոտարը ՀՀ իրավական համակարգում ոչ ինստիտուցիոնալ, ոչ գործառույթային առումով վարչական մարմին չէ, և երկրորդ՝ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ ժառանգական իրավունքի կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ՝ ի տարբերություն վարչական ակտի, որն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում: Հետևաբար նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ չէ, ինչն էլ նշանակում է, որ Դատարանն իրավասու չէր անվավեր ճանաչել 27.11.2009 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված սեղանամատյանում 12277 համարի տակ, ժառանգական գործ թիվ 310) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ սույն գործով Սերժիկ Պողոսյանի հայցի առարկան Սամվել Պողոսյանին պատկանող անշարժ գույքի մասով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելն է, իսկ հայցի հիմքն իր՝ ժառանգատու Սամվել Պողոսյանի ժառանագությունն ընդունած ժառանգ լինելու հանգամանքը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե նոտարի գործողությունների վիճարկումն է, այլ՝ անմիջականորեն ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճը, հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վեճը վերաբերում է ոչ թե հանրային իրավահարաբերություններին, այլ ժառանգական իրավահարաբերություններին, որպիսի պարագայում այն ենթակա չէր քննության վարչական դատարանում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը Դատարանի կողմից վճռի կայացման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով ենթակա էր կարճման:

Վերը նշված հիմնավորումներով Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկներին չի անդրադառնում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, ելնելով վերը շարադրված դիրքորոշումից, գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը մասնակիորեն կարճելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը մասնակիորեն է կարճում սույն գործի վարույթը, քանի որ Դատարանի վճիռը բողոքարկվել է միայն հայցը բավարարելու մասով, որպիսի պարագայում համապատասխանաբար և՛ վերաքննության, և՛ վճռաբեկության կարգով վերանայման օբյեկտ հանդիսացել է բողոքարկված դատական ակտի միայն այդ մասը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճա-

րած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման, գտնում է, որ Սերժիկ Պողոսյանից հօգուտ Ստյոպիկ Պողոսյանի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Միաժամանակ Սերժիկ Պողոսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.08.2014 թվականի որոշումը և գործի վարույթն ըստ հայցի Սերժիկ Պողոսյանի ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյանի՝ ժառանգության իրավունքի վկայագիրն 1/2 մասով անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճել:

2. Սերժիկ Պողոսյանից հօգուտ Ստյոպիկ Պողոսյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Սերժիկ Պողոսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9190/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/9190/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ««Այգեպատ» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ի դեմս Մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ Նախարարություն), երրորդ անձ ««Այգեպատ» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ընկերությանը պատկանող թիվ 12176 գրանցմամբ «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱՐՄԱՆԻ» և թիվ 12179 գրանցմամբ «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները հայցադիմումին նախորդող հինգ տարվա ընթացքում հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չօգտագործմամբ արտահայտված իրավահարաբերության առկայությունը (բացակայությունը) ճանաչելու, և որպես հետևանք՝ «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱՐՄԱՆԻ» և «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանների թիվ 12176 և թիվ 12179 գրանցումները հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չեղյալ հայտարարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է ճանաչել այն իրավահարաբերության առկայությունը, որի համաձայն՝ Ընկերությունն իրեն պատկանող թիվ 12176 գրանցմամբ «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱՐՄԱՆԻ» և թիվ 12179 գրանցմամբ «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները հայցա-

դիմումին նախորդող հինգ տարվա ընթացքում հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չի օգտագործել և, որպես հետևանք, միաժամանակ պահանջել է «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ АРМАНИ» և «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանների թիվ 12176 և թիվ 12179 գրանցումները հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չեղյալ հայտարարել:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 27.11.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.04.2015 թվականի որոշմամբ՝ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ հայցը բավարարելու մասի դեմ բերված մասով վերաքննիչ բողոքը մերժվել է, և այդ մասով Դատարանի 27.11.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ, իսկ դատական ծախսերի մասով Դատարանի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Նախարարությունից հօգուտ Կազմակերպության բռնագանձվել է 8.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 21-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 81-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 144-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 146-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թեև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է, որ ապրանքայիննշանի գրանցումը կարող է ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ հայտարարվել, սակայն այստեղ կարևոր պայման է, որ տվյալ անձը պետք է շահագրգռվածություն ունենա ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու մեջ: Տվյալ դեպքում սույն գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հանդիսանում է շահագրգիռ անձ:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված այն փաստարկներին, որ Դատարանը պարտավոր էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը և 89-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, այն է՝ նախնական դատական նիստի ժամանակ պետք է ոչ պատշաճ պատասխանողին (տվյալ դեպքում՝ Նախարարությանը) փոխարիներ պատշաճ պատասխանողով՝ Ընկերությունով, ինչը չանելու արդյունքում Դատարանը և Վերաքննիչ դատարանը թույլ են տվել դատավարական խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել Դատարանի կատարած եզրահանգումն առ այն, որ թիվ 12176 «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ АРМАНИ» և թիվ 12179 «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» ապրանքային նշանները «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բովանդակությանը համապատասխան չեն օգտագործվել և իրական օգտագործման մեջ չեն դրվել իրավատեր Ընկերության կողմից, քանի որ տվյալ ապրանքային նշանների օգտագործման իրավունք ունեցող Ընկերությունը վերոհիշյալ ապրանքային նշաններն իրականում չի օգտագործել որոշակի ժամանակահատվածում (սույն վարչական գործով հայցադիմումը ներկայացնելուն նախորդող հինգ տարի ժամանակահատվածում) անընդմեջ կամ որոշակի պարբերականությամբ

արտադրվող կամ տնտեսական շրջանառության մեջ դրվող ապրանքների նկատմամբ, որոնց համար գրանցված են տվյալ ապրանքային նշանները, իսկ իրացման մակարդակի մասին ընդհանրապես մեկնաբանություններ կատարելու անհրաժեշտություն տվյալ դեպքում չկա, քանի որ վերը նշված փաստական հանգամանքների, ապացույցների հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ Ընկերությունն ընդհանրապես, ինչպես նաև որոշակի պարբերականությամբ այդ ապրանքների արտադրություն ընդհանրապես չի իրականացրել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ինչպես նաև Դատարանը հաշվի չեն առել, որ Ընկերությունը, 2011 թվականին պայմանագիր կնքելով չինական ընկերության հետ և պարտավորվելով մատակարարել վիճելի ապրանքային նշաններով ապրանք, արդեն իսկ օգտագործել է ապրանքային նշանները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ վերաքննիչ բողոքը մերժված մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործով հիմնական պահանջը հիմնված է ճանաչման հայցատեսակի վրա: Հայցվորը չի ներկայացրել այնպիսի հայցադիմում, համաձայն որի՝ երրորդ անձը խախտել է հայցվորի որևէ իրավունք: Եթե հայցադիմումի հիմքում ընկած լիներ իրավունքների խախտումը, ապա հայցադիմումը պետք է ներկայացվեր ընդհանուր իրավասության դատարան, քանի որ առկա կլիներ երկու (ֆիզիկական կամ իրավաբանական) անձերի միջև վեճ: Սակայն տվյալ դեպքում որևէ վեճ առկա չէ, հայցվորը գրանցումների սեփականատիրոջ նկատմամբ չունի որևէ պահանջ և չի դիտարկում այն իբրև վեճի առարկա:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «ցանկացած անձի կողմից» օրենսդրական եզրույթից բխում է, որ նման հայցադիմում կարող է ներկայացնել ցանկացած անձ, հետևաբար բողոք բերած անձի այն պնդումը, որ դատարանները պետք է անդրադարձ կատարեին հայցվորի շահագրգիռ լինելու հանգամանքին, անհիմն է:

Ապրանքային նշանի օգտագործման ապացույցների ներկայացման բեռն օրենսդիրը դիտավորյալ դրել է նշանի սեփականատիրոջ վրա, ինչը ևս մեկ անգամ վկայում է հանրային իրավահարաբերության առկայության մասին:

Ապրանքի արտադրման պրոցեսը որևէ առնչություն չունի բուն ապրանքային նշանի հետ: Այսինքն՝ արտադրանքը չի կարելի նույնականացնել ապրանքային նշանի հետ կամ հակառակը:

Միաժամանակ, Երրորդ անձը չի ներկայացրել ապրանքային նշանների օգտագործումը կամ իրական օգտագործման մեջ դրված լինելը հաստատող և ոչ մի ապացույց:

Բացի այդ, միևնույն փաստական հանգամանքներով թիվ ՎԴ/9691/05/13 վարչական գործով կայացված 16.11.2015 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը համարել է, որ ընդդատության խնդիր առկա չէ և մերժել է նշված գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը:

Պնդելով, որ Ընկերության բերած վճռաբեկ բողոքն անհիմն է՝ Կազմակերպության ներկայացուցիչը խնդրել է այն մերժել և դատարանի որոշումը թողնել անփոփոխ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

30.10.2007 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունն Ընկերության անունով ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման 33-րդ դասի հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի համար թիվ 12176 և թիվ 12179 գրանցման համարներով գրանցել է համապատասխանաբար «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ АРМАНИ» և «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները **(հատոր 1-ին, գ.թ. 34-35):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի միատեսակ կիրառության համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը կարո՞ղ է արդյոք դատարան ներկայացվել «իրական (ռեալ)» իրավունքներ չունեցող անձի կողմից,

*2. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «**գանկացած անձ**» եզրույթի կիրառումից հետևո՞ւմ է արդյոք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով դատարան դիմելու իրավունք ունեն նաև այն անձինք, որոնց իրավունքների խախտում կամ խախտման առաջացման հնարավորություն առկա չէ:*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիք՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձը ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր ու կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա *(տե՛ս, Լը Քոմպտեն ևմյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթհեմն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը,պարբ. 32):*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը: Նշվածից հետևում է նաև, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգիռ անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի **«իրական (ռեալ)» իրավունքներ,** որոնք խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անձանց՝ իրենց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունք տրամադրելով հանդերձ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, վերջիններիս համար, սակայն, չի ընձեռում հանրության շահերը պաշտպանելու հնարավորություն, այն է՝ չի թույլատրում

անձանց իրականացնել վարչական մարմինների վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության իրավաչափության օբյեկտիվ վերահսկողություն: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար, պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ որոշում, գործողություն կամ անգործություն, այլև նշված ոչ իրավաչափ որոշման, գործողության կամ անգործության արդյունքում անձանց սուբյեկտիվ իրավունքների խախտում կամ խախտման առաջացման վտանգ:

Այսինքն՝ **վարչական արդարադատություն, բացառությամբ նույն օրենսգրքով սահմանված դեպքերի, կարող է հայցել միայն այն անձը, ով հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ**, կամ այլ կերպ ասած՝ այն անձը, ում սուբյեկտիվ իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական արդարադատություն հայցող անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերից յուրաքանչյուրով պետք է պարզվի՝ արդյոք հայցվորը հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, այսինքն՝ «շահագրգիռ անձ», քանի որ միայն իրավական շահագրգռվածության առկայության պարագայում անձը կարող է ակնկալել իր խախտված իրավունքների դատական պաշտպանություն: Ընդ որում, իրավունքների խախտման, կամ այլ կերպ ասած՝ դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ լինելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է հենց հայցվորը:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքայինննշանի գրանցումը կարող է **ցանկացած անձի** կողմից ներկայացված հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ հայտարարվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել կամ իրական օգտագործման մեջ չի դրվել ապրանքային նշանի իրավատիրոջ կամ նույն օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից: Ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա իրավատերը կամ նույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքայինննշանի օգտագործման իրավունք ունեցող անձը:

Վերը նշված իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանով օրենսդիրը նախատեսել է դատարանի կողմից ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հիմքերը, այն է՝ ապրանքայինննշանի գրանցման թվականից հաշված՝ հինգ տարի անընդմեջ, կամ հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանը չօգտագործվելը կամ իրական օգտագործման մեջ չդրվելը: Ընդ որում, նշված հիմքերի առկայության դեպքում դատարանի կողմից ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելն օրենսդիրը հնարավոր է համարել ցանկացած անձի կողմից ներկայացված հայցի կամ հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում:

Այդուհանդերձ, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վարչական դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտների վերաբերյալ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը դատարան դիմելու իրավունքը չի կապել անձանց իրավունքների ենթադրյալ խախտման հետ՝ հնարավորություն տալով «ցանկացած անձի» ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ պահանջ ներկայացնել դատարան, այնուամենայնիվ, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում

ամրագրված **«ցանկացած անձ»** եզրույթը չի կարող մեկնաբանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասից անկախ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն է այն ընդհանուր օրենքը, որով սահմանվում է վարչական գործերով դատական պաշտպանության իրավունքի իրականացման հիմքերը և կարգը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատարան դիմելու իրավունքը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով «ցանկացած անձին» վերապահելու իրավակարգավորումից չի կարող հետևել, որ անձն իրավական շահագրգռվածության բացակայության պարագայում ևս կարող է ակնկալել դատական պաշտպանություն: Ցանկացած պարագայում դատարան դիմելը ենթադրում է խախտված իրավունքների վերականգնում՝ լինի դա մասնավոր իրավահարաբերությունից ծագած վեճի արդյունք, թե հանրային իրավահարաբերությունից ծագած վեճի արդյունք: Բացի այդ, դատական պաշտպանության իրավունքը չի կարող լինել ինքնանպատակ, և անձը չի կարող դիմել դատարան, եթե առկա չէ վերջինիս «իրական (ռեալ)» իրավունքների խախտում կամ խախտման վտանգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի համար Ընկերության անվամբ գրանցվել են թիվ 12176 գրանցման համարով «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱРМАНИ» և թիվ 12179 գրանցման համարով «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները:

Դատարանը, գտնելով, որ սույն գործով վիճահարույց է Ընկերության՝ որպես ապրանքային նշանների իրավատիրոջ կողմից դրանք «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված 5 տարվա ժամկետում օգտագործելու փաստը, իսկ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն՝ նշված փաստի ապացուցման բեռը կրում է Ընկերությունը, գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա եզրակացրել է, որ թիվ 12176 գրանցման համարով «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱРМАНИ» և թիվ 12179 գրանցման համարով «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բովանդակությանը համապատասխան չեն օգտագործվել և իրական օգտագործման մեջ չեն դրվել Ընկերության կողմից, որպիսի իրավահարաբերության առկայությունը ճանաչելու պահանջ է ներկայացրել Կազմակերպությունը: Վերոգրյալի հիման վրա Դատարանը Կազմակերպության հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի կողմից կատարված եզրահանգումները, միաժամանակ հերքել է բողոքաբերի փաստարկներն առ այն, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «ցանկացած անձ» հասկացության ներքո պետք է նկատի ունենալ ցանկացած շահագրգիռ անձ՝ պատճառաբանելով, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդիրն արգելել է որևէ օրենսդրական նորմի կամայական մեկնաբանումը և լրացումը, քանի որ իրավական ակտը պետք է մեկնաբանվի դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների վերաբերյալ վերն արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախքան Ընկերության կողմից «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված 5 տարվա ժամկետում ապրանքային նշաններն օգտագործելու իրավահարաբերության առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալը սույն գործով պետք է պարզվեր, թե Կազմակերպությունն արդյոք հանդիսանում է դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ, այսինքն՝ «շահագրգիռանձ», որն է վերջինիս իրավական շահագրգռվածությունն Ընկերությանը պատկանող թիվ 12176 գրանցման համարով «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱРМАНИ» և թիվ 12179 գրանցման համարով «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները հայցադիմումին նախորդող հինգ տարվա ընթացքում հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չօգտագործմամբ արտահայտված իրավահարաբերության առկայու-

թյունը (բացակայությունը) ճանաչելու և որպես հետևանք՝ «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՑԱԿ ԱՐՄԱՆԻ» և «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI ԱՅԳԵՊԱՏ» համակցված ապրանքային նշանների թիվ 12176 և թիվ 12179 գրանցումները հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չեղյալ հայտարարելու առումով, իր որ խախտված իրավունքի դատական պաշտպանություն է հայցում Կազմակերպությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Կազմակերպության կողմից չեն ներկայացվել այնպիսի վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, որոնցով կհիմնավորվեին վերջինիս սուբյեկտիվ իրավունքների խախտման փաստի կամ խախտման առաջացման վտանգի առկայությունը, ներկայացված հայցի առումով իր իրավական շահագրգռվածությունը, Դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ հանդիսանալը: Հետևաբար Կազմակերպությունը սույն գործով Դատարան դիմելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքը կրող սուբյեկտ չէ, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները բավարար են անձի շահագրգռվածությունը հաստատված համարելու համար, Վճռաբեկ դատարանը գնահատում է անհիմն:

Ինչ վերաբերում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նշված դատավարական իրավունքի նորմի խախտման պայմաններում դրանք չեն կարող լինել քննության առարկա:

Վերոնշյալ պատճառաբանություններով մասնակիորեն հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատականծախսերի բաշխմանվերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Նկատի ունենալով, որ սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.08.2015 թվականի որոշմամբ հետաձգվել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.08.2015 թվականի որոշմամբ հետաձգված 80.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով, ենթակա է բռնագանձման Կազմակերպությունից: Բացի այդ, նկատի ունենալով, որ Ընկերությունը վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրք, Կազմակերպությունից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերության հայցն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, երրորդ անձ ««Այգեպատ» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ի՝ ««Այգեպատ» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ին պատկանող թիվ 12176 գրանցմամբ «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ ԱРМАНИ» և թիվ 12179 գրանցմամբ «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանները հայցադիմումին նախորդող հինգ տարվա ընթացքում հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չօգտագործմամբ արտահայտված իրավահարաբերության առկայությունը (բացակայությունը) ճանաչելու, և որպես հետևանք՝ «ԱՐՄԱՆԻ ARMANI ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ АРМАНИ» և «ԱՅԳԵՊԱՏ AYGEPAT ARMANI АЙГЕПАТ» համակցված ապրանքային նշանների թիվ 12176 և թիվ 12179 գրանցումները հայկական կոնյակ (բրենդի) ապրանքի նկատմամբ չեղյալ հայտարարելու պահանջների մասին, մերժել:

2. Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերությունից հօգուտ ««Այգեպատ» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 80.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.08.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ5/0029/05/14
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ5/0029/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ջաջուռի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Գյուղապետարանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձինք Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների՝ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գյուղապետարանը պահանջել է անվավեր ճանաչել Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյանների անվամբ իրավունքների միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 25.08.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյանների անվամբ Ջաջուռ համայնքում կատարված հողատարածքի գրանցումը՝ 0,04հա մակերեսի մասով, ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.12.2014

թվականի որոշմամբ Գյուղապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.08.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գյուղապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի (1998 թվականի խմբագրությամբ) 2-րդ և 21-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 31.12.1998 թվականի թիվ 867 որոշմամբ հաստատված <<Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման>> կարգի 3-րդ կետը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումներով Գասպարյանները ստացել են հողամասեր, որոնք ներկայումս էլ տիրապետվում են վերջիններիս կողմից, և այդ հանգամանքը Գյուղապետարանի կողմից չի վիճարկվում: Մինչդեռ նշված որոշումները չեն առնչվում թիվ 005-009 ծածկագրով 0,16հա մակերեսով հողամասին, և դրա նկատմամբ Գասպարյանների սեփականության իրավունքը գրանցելու որևէ իրավական ու փաստական հիմք առկա չէ, քանի որ նշված 0,16հա մակերեսով հողամասը Գասպարյաններին հատկացնելու վերաբերյալ որոշում գոյություն չունի: Փաստորեն, Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով նույնացրել է թիվ 005-009 և թիվ 010-012 կադաստրային ծածկագրերով երկու տարբեր հողամասերը՝ հաշվի չառնելով այն, որ թիվ 005-009 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ Գասպարյանների սեփականության իրավունքը սխալմամբ գրանցվել է թիվ 010-012 կադաստրային ծածկագրով հողամասի համար տրամադրված քաղվածքի հիման վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 29.12.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը՝ չբավարարված մասով, բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 27.02.2003 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 841069 վկայականի համաձայն՝ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ գրանցված է Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների ընդհանուր սեփականության իրավունքը ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում գտնվող թիվ <<08-094 5-9>> կադաստրային համարով 0,16հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ: Նշված պետական գրանցումը կատարվել է հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների հիման վրա **(հատոր 1-ին, գ.թ. 8-10):**

2) ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի ղեկավարի կողմից 18.06.2001 թվականին ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքից (գրանցում թիվ 118) տրված քաղվածքի համաձայն՝ Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների անվամբ գրանցված է 0,12հա մակերեսով հողամաս (ծածկագիր՝ թիվ 010-012), որի վրա առկա է բնակելի տուն՝ օժանդակ շինու-

թյուններով: Ընդ որում, նշված գրանցման համար հիմք են հանդիսացել հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումները **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական դատավարությունում ապացույցների գնահատման օրենսդրական չափանիշների պահպանման և դրա հիման վրա պատճառաբանված դատական ակտ կայացնելու դատարանի պարտականության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին.

սեփականության իրավունքի վիճարկվող պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելիս Դատարանը պահպանել է արդյո՞ք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ ապացույցները գնահատելու և դրա արդյունքում հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (<<ex officio>>): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով (...) և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է (...) համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գոր-

ծի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների (...) վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերը՝ շարադրելով դատարանի եզրահանգումները յուրաքանչյուր փաստի ապացուցված լինելու վերաբերյալ և գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար պիտանի՝ դատավարության մասնակիցների ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը, եզրահանգում՝ որևէ ապացույց անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու մասին՝ հղում կատարելով այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող, շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը եկել է նման եզրահանգման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերե-

լիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ, օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մաս, 126-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետ, 130.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը,

թե դատարանը պատշաճորեն կատարել է արդյոք դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո *(տե՛ս, օրինակ, Սալովն ընդդեմ Ուկրաինայի գործով ՄԻԵԴ 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով ՄԻԵԴ 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ)*:

Վերոնշյալ հարցի վերաբերյալ 09.04.2007 թվականի թիվ ՍԴՈ-690 որոշմամբ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ նշելով, որ պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում ևս բազմիցս անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս, օրինակ, Ռազմիկ Մարտությանն ընդդեմ Սյունիքի և Ագահիտ Մարտությանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը)*:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը, որը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանին ընձեռված իրավական հնարավորությամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված):

Իր նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ <<Ջորջ ընդ Բրանդն>> ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վար-*

չական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը *(տե՛ս, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արփաշատի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ <<Միքանդ>> ՍՊԸ-ի թիվ ՎԴ3/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Գյուղապետարանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյանների անվամբ իրավունքների միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ կատարված սեփականության իրավունքի գրանցումը: Իր այդ պահանջի հիմքում Գյուղապետարանը դրել է այն հանգամանքը, որ թիվ 005-009 ծածկագրով հողամասի նկատմամբ Գասպարյանների սեփականության իրավունքի վիճարկվող գրանցումը կատարվել է Ջաջուռ համայնքի ղեկավարի կողմից 18.06.2001 թվականին տրված քաղվածքի հիման վրա, մինչդեռ նշված փաստաթուղթը թիվ 005-009 ծածկագրով հողամասին չի առնչվում:

Դատարանի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյանների անվամբ Ջաջուռ համայնքում կատարված հողատարածքի գրանցումը՝ 0,04հա մակերեսի մասով, ճանաչվել է անվավեր: Դատարանն իր 25.08.2014 թվականի վճիռը հիմնավորել է այն պատճառաբանությամբ, որ ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի ղեկավարի կողմից 18.06.2001 թվականին տրված քաղվածքի համաձայն՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումներով Ֆերդինանտ Գասպարյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացվել է 0,12հա մակերեսով հողամաս, մինչդեռ Գասպարյանների սեփականության իրավունքը գրանցվել է ոչ թե 0,12հա, այլ՝ 0,16հա մակերեսով հողամասի նկատմամբ: Հետևաբար, ըստ Դատարանի վճռի, իրավաչափ է միայն Գասպարյանների անվամբ 0,12հա մակերեսով հողամասի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, իսկ 0,04հա մակերեսով հողամասի նկատմամբ կատարված պետական գրանցումը ենթակա է անվավեր ճանաչման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ Դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ 27.02.2003 թվականին Կադաստրի կողմից կատարված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ 0,12հա մակերեսով հողամասի մասով, իրավաչափ է, և հայցը ենթակա է բավարարման միայն նշված մակերեսից ավել գրանցված մասով: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ *<<(...) Դատարանի կողմից չեն խախտվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջները, (...) Դատարանը եկել է ճիշտ եզրահանգման՝ կայացնելով հիմնավորված դատական ակտ (...)>>:*

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով քննության առարկա է հանդիսանում Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս,

Դավիթ և Հասմիկ Գասպարյանների անվամբ իրավունքների միասնական թիվ 4–094–4 մատյանի 61–րդ համարի տակ ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում գտնվող 0,16հա մակերեսով հողամասի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցման իրավաչափությունը, որը պարզելու նպատակով Դատարանը պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատեր գործում առկա բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Այսպես, մասնակիորեն բավարարելով Գյուղապետարանի հայցը՝ Դատարանն իր 25.08.2014 թվականի վճռի հիմքում դրել է հետևյալ ապացույցները.

1) ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի ղեկավարի կողմից 18.06.2001 թվականին նույն համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքից տրված քաղվածքը, որի համաձայն՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների հիման վրա Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների անվամբ գրանցված է 0,12հա մակերեսով հողամաս,

2) 27.02.2003 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 841069 վկայականը, որի համաձայն՝ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4–094–4 մատյանի 61–րդ համարի տակ գրանցված է Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների ընդհանուր սեփականության իրավունքը ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում գտնվող 0,16հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:

Համադրելով սույն գործով ձեռք բերված նշված ապացույցները՝ Դատարանը հանգել է այն եզրակացության, որ սեփականության իրավունքի վիճարկվող պետական գրանցումը, մասնակիորեն՝ 0,04հա մակերեսի մասով, իրավաչափ չէ և պետք է ճանաչվի անվավեր, քանի որ այդ պետական գրանցման համար հիմք հանդիսացող հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների համաձայն՝ Ֆերդինանտ Գասպարյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացվել է ոչ թե 0,16հա մակերեսով, այլ 0,12հա մակերեսով հողամաս:

Մինչդեռ սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների հիման վրա Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյաններին հատկացված հողամասի և հետագայում վերջիններիս անվամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4–094–4 մատյանի 61–րդ համարի տակ գրանցված հողամասի ծածկագրային տվյալները չեն համապատասխանում միմյանց: Այսպես՝ ըստ ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի ղեկավարի կողմից 18.06.2001 թվականին նույն համայնքի տնտեսությունների թիվ 2 գրքից տրված քաղվածքի՝ ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների հիման վրա Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյաններին հատկացված 0,12հա մակերեսով հողամասը կրում է թիվ <<010–012>> ծածկագիրը, իսկ վերջիններիս անվամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4–094–4 մատյանի 61–րդ համարի տակ սեփականության իրավունքով գրանցված 0,16հա մակերեսով հողամասը՝ թիվ <<08–094 5–9>> ծածկագիրը:

Այսպիսով, սույն գործի փաստերից հետևում է, որ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4–094–4 մատյանի 61–րդ համարի տակ Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների անվամբ սեփականության իրավունքով գրանցված ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ

համայնքում գտնվող հողամասը և հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների հիման վրա նրանց հատկացված հողամասը տարբերվում են ոչ միայն մակերեսների չափերով, այլ նաև ծածկագրային տվյալներով, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Սույն գործով ձեռք բերված ապացույցները գնահատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հաստատված համարելու սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, թե հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումներով Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյաններին ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում հատկացված հողամասը և վերջիններիս անվամբ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ սեփականության իրավունքով գրանցված հողամասը նույնական են արդյոք, թե՝ ոչ: Այլ կերպ ասած՝ սույն գործով ձեռք բերված ապացույցները չեն հաստատում ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքի առկայությունը, ինչպիսին է հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումներով Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյաններին ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում հատկացված հողամասի և վերջիններիս անվամբ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ սեփականության իրավունքով գրանցված հողամասի նույնական լինելը:

Փաստորեն, սույն գործով Դատարանը Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյանների անվամբ իրավունքների միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքում գտնվող 0,16հա մակերեսով հողամասի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցման իրավաչափությունը հաստատելու կամ հերքելու նպատակով չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում առկա բոլոր ապացույցները դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից գնահատելու և դրա արդյունքում հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջը: Հետևաբար մասնակիորեն անվավեր ճանաչելով սեփականության իրավունքի վիճարկվող գրանցումը՝ Դատարանը չի պահպանել գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու և հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջը՝ խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների պահանջները, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքին համապատասխան Դատարանը պարտավոր էր ձեռնարկել համարժեք միջոցներ սույն գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը: Մասնավորապես՝ Դատարանը պարտավոր էր ձեռնարկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համարժեք միջոցներ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքը, այն է՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումներով Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ և Հասմիկ Գասպարյաններին ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ

համայնքում հատկացված հողամասի և վերջիններիս անվամբ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ սեփականության իրավունքով գրանցված հողամասի նույնական լինելը, հաստատելու կամ հերքելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ: Նշված եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն փաստարկը, որ սույն գործով ներկայացված և Դատարանի կողմից հետազոտված ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական թիվ 4-094-4 մատյանի 61-րդ համարի տակ Ֆերդինանտ, Սիլվարդ, Արմեն, Արթուր, Մայրամ, Մարտիրոս, Դավիթ, Հասմիկ Գասպարյանների անվամբ սեփականության իրավունքով գրանցված հողամասի և հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.08.1991 թվականի թիվ 9 և 27.07.1992 թվականի թիվ 19 որոշումների հիման վրա նրանց հատկացված հողամասի ծածկագրային տվյալների տարբերություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ դատավարական իրավունքի նորմերի խախտումները հաշվի չեն առնվել Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալի մասով ապացույցներ պահանջելու և դրանց հիման վրա գործի փաստերն ի պաշտոնե պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը նոր քննության ուղարկվում է 0,12հա մակերեսով հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն նշված մասով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը՝ 0,12հա մակերեսով հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.12.2014 թվականի որոշումը և գործը՝ 0,12հա մակերեսով հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/10507/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԴ/10507/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ջոյա Սիմեոնիդուի ներկայացուցիչ Տիգրան Խուրշուդյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.12.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Ջոյա Սիմեոնիդուի հայցի ընդդեմ Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք), երրորդ անձինք Արմեն Գալստյանի, Նունե Ալոյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր)՝ Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշումը և որպես հետևանք՝ Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի անվամբ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 31.03.2010 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ջոյա Սիմեոնիդուն պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշումը և որպես հետևանք՝ Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի անվամբ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 31.03.2010 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան) 19.06.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.12.2014 թվականի որոշմամբ Ջոյա Սիմեոնիդուի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.06.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Զոյա Սիմեոնիդուի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի ներկայացուցիչը:

2.1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 8-րդ հոդվածները և 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածները, խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 25-րդ, 26-րդ հոդվածները և 27-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, սույն գործի փաստական հանգամանքներն ու ձեռք բերված ապացույցները, այդ թվում՝ վկաների ցուցմունքները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չգնահատելու, ինչպես նաև «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի դրույթները սխալ մեկնաբանելու արդյունքում անտեսել է, որ Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշումն ընդունվել է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող բնակելի տունն ինքնակամ կերպով կառուցվել է Զոյա Սիմեոնիդուի կողմից 1992 թվականին պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա: Զոյա Սիմեոնիդուն այդ բնակելի տունը կառուցելուց անմիջապես հետո բնակություն է հաստատել այնտեղ և հաշվառվել Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/34 հասցեում: Հետագայում՝ 1994 թվականին, Զոյա Սիմեոնիդուն դուրս է եկել հաշվառումից և մեկնել է Հունաստանի Հանրապետություն: Զոյա Սիմեոնիդուի մեկնելուց հետո Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող տանը բնակվել են վերջինիս ծնողները, իսկ նրանց մահից հետո Զոյա Սիմեոնիդուի և նրա եղբոր՝ Վալոդյա Գալստյանի գիտությամբ ու թույլտվությամբ՝ վերջինիս որդին՝ Արմեն Գալստյանն իր կնոջ՝ Նունե Ալոյանի հետ: Փաստորեն, ինչպես Արմեն Գալստյանի կամ Նունե Ալոյանի, այնպես էլ նրանց իրավանախորդներից որևէ մեկի անվամբ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող հողամասում երբևէ հողահատկացում չի եղել: Այսինքն՝ ի սկզբանե այդ բնակելի տան և դրանով ծանրաբեռնված հողատարածքի վերաբերյալ գույքային իրավունքներ սահմանող կամ հաստատող փաստաթուղթ առկա չի եղել:

Այլ կերպ ասած՝ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեի հողամասը վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին ամբողջությամբ հանդիսացել է համայնքային սեփականություն, իսկ այնտեղ գտնվող շինությունն ամբողջությամբ ունեցել է ինքնակամ կառույցի կարգավիճակ, հետևաբար այն չէր կարող օրինականացվել Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի անվամբ՝ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հիմքով: Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող տան՝ որպես ինքնակամ կառույցի օրինականացման գործընթացը պետք է իրականացվեր ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Զոյա Սիմեոնիդուին՝ որպես կառույցն իրականացրած անձի վերապահելով այն գնելու նախապատվության իրավունքը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ վկաներ Գեղեցիկ Գալստյանը, Հայաս-

տան Թովմասյանը Ջոյա Սիմեոնիդուի հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք են, իսկ Արթուր Մարտիրոսյանը և Սիվսես Մարտիրոսյանը Ջոյա Սիմեոնիդուի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք են, եզրահանգել է, որ վերոնշյալ անձինք, գտնվելով Ջոյա Սիմեոնիդուի հետ նման կապի մեջ, կարող են լինել շահագրգռված գործի ելքով, հետևաբար վերջիններիս ցուցմունքները դիտել է անարժանահավատ: Փաստորեն, Վերաքննիչ դատարանը վկաների ցուցմունքների անարժանահավատ լինելու վերաբերյալ նման եզրահանգման է եկել՝ ընդամենը վկայակոչելով այդ վկաների և Ջոյա Սիմեոնիդուի միջև ազգակցական կապի առկայության փաստը, և ընդհանրապես չի անդրադարձել այն հարցին, թե սույն գործով վկաների ցուցմունքները գործի լուծման համար էական են, թե՝ ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.12.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.2. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Ջոյա Սիմեոնիդուի վճռաբեկ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատել է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ և որոշման պատճառաբանական մասում նշել է իր կողմից պարզված հանգամանքները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքներն ու իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է բողոքարկվող որոշումը կայացնելիս:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետին հասցեագրված 27.07.2009 թվականի դիմումով Արմեն Գալստյանը խնդրել է «28.06.2008 թվականի թիվ ՀՕ-117-Ն օրենքի համաձայն օրինականացնել Մ. Խորենացի 231/34 հասցեի օրինական գույքին կից շինությունը և հողամասը» **(հատոր 2-րդ, գ.թ. 10):**

2) Կադաստրի աշխատակազմի Մարաշ տարածքային ստորաբաժանման 18.08.2009 թվականի թիվ 6973ա գրության համաձայն՝ Երևան քաղաքի Մ. Խորենացի թիվ 231/34 հասցեով Արմեն Գալստյանի անվամբ անշարժ գույք սեփականության իրավունքով գրանցված չէ **(հատոր 2-րդ, գ.թ. 17):**

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 16.09.2009 թվականի թիվ 20-Ել-10953 գրության համաձայն՝ տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու փողոցի վիճելի հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 206,96քմ, որն ամբողջությամբ տնօրինվում է առանց փաստաթղթերի **(հատոր 2-րդ, գ.թ. 26):**

4) Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի 22.09.2009 թվականի թիվ Ե/570 գրությանը կից ցուցակի համաձայն՝ Երևան քաղաքի Մ. Խորենացու փողոցի վիճելի հասցեում գտնվող 206,96քմ մակերեսով հողամասը, որին տրամադրվել է «Խորենացու փող. թիվ 231/97» հասցեն, փաստացի զբաղեցված է Արմեն Գալստյանի կողմից **(հատոր 2-րդ, գ.թ. 18-19):**

5) Երևան քաղաքի Էրեբունի համայնքի թիվ 3 տեղամասի տնօրենի կողմից Արմեն Գալստյանին 13.10.2009 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/34 տան շինարարական աշխատանքները կատարվել են մինչև 1997 թվականը **(հատոր 2-րդ, գ.թ. 27):**

6) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Երևան քաղաքի Օրջոնիկիձեի

շրջանի բաժնի կողմից 01.08.1990 թվականին տրված թիվ 335967 ամուսնության վկայականի համաձայն՝ Արմեն Գալստյանը և Նունե Ալոյանն ամուսնացել են 01.08.1990 թվականին, որի մասին ամուսնության ակտերի գրանցման գրքում կատարվել է թիվ 559 գրառումը **(հատոր 2-րդ, գ.թ. 12):**

7) Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ, 05.11.2009 թվականին ընդունել է «Մ. Խորենացու փողոցի Հ.231/97 բնակելի տան նկատմամբ Արմեն Վալոդյայի Գալստյանի, Նունե Օգսենի Ալոյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» թիվ 8820-Ա որոշումը, որի 1-ին կետով վերականգնվել է Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արմեն Գալստյանի, Նունե Ալոյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 206,96քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 206,96քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, իսկ նույն որոշման 4-րդ կետով Մ. Խորենացու փողոցի թիվ 231/34 հասցեի բնակելի տանը տրամադրվել է հասցե՝ «Խորենացու փողոցի թիվ 231/97 տուն» **(հատոր 2-րդ, գ.թ. 28-29):**

8) Համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 31.03.2010 թվականի թիվ 2764915 վկայականի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշման և 23.11.2009 թվականի թիվ 7235-2009 հողամասի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան քաղաքի Մ. Խորենացու փողոցի թիվ 231/97 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի սեփականության իրավունքը Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ ԷԿ-12 մատյանի 000198-րդ համարի տակ **(կադաստրային գործի պատճեն):**

9) Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից 19.09.2013 թվականին տրված թիվ 24/1-8/U-316 տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Մ. Խորենացու փողոցի թիվ 231/97 հասցեի տունը Ջոյա Սիմեոնիդուն կառուցել է իր ուժերով և իր միջոցներով, ուր բնակվել է մինչև 1994 թվականի դեկտեմբերը (հիմք՝ հարևանների հայտարարությունը) **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

10) Վալոդյա Գալստյանի և Կարեն Հայրապետյանի ստորագրությամբ 12.09.2013 թվականի հայտարարության համաձայն՝ Ջոյա Սիմոնիդուն 1992-1994 թվականներին գրանցված է եղել և բնակվել է Մ. Խորենացու փողոցի թիվ 231/34 տանը **(հատոր 1-ին, գ.թ. 12):**

11) Սույն գործի քննության ընթացքում վկաներ Մովսես Մարտիրոսյանը, Գեղեցիկ Գալստյանը, Արթուր Մարտիրոսյանը, Հայաստան Թովմասյանը ցուցմունք են տվել այն մասին, որ Երևան քաղաքի Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող հողամասը դեռևս 1990-ական թվականների սկզբին ձեռք է բերել Ջոյա Սիմեոնիդուն և այդ հողամասում կառուցել է բնակելի տուն՝ բնակվելով այնտեղ մինչև Հունաստանի Հանրապետություն մեկնելը **(հիմք՝ դատական նիստերի արձանագրություններ, հատոր 2-րդ, գ.թ. 62-67, 84):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ օրենսդրական համակարգում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի

նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման իրավական կառուցակարգի, ինչպես նաև վարչական դատավարությունում ապացույցների և, մասնավորապես, վկայի ցուցմունքի արժանահավատության գնահատման հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի սխալ կիրառման, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով կարող է վերականգնվել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի տիրապետող ֆիզիկական անձի սեփականության իրավունքն այն պայմաններում, երբ տվյալ ֆիզիկական անձը, փաստացի տիրապետելով այդ անշարժ գույքը, չի ունեցել համապատասխան իրավունքներ դրա նկատմամբ,

2. վարչական դատավարության շրջանակներում հարցաքննված վկայի ցուցմունքը կարող է արդյո՞ք դիտարկվել որպես անարժանահավատ ապացույց միայն այն հիմքով, որ նշված ցուցմունքով ներկայացված փաստական տվյալները վերաբերում են այդ վկայի մերձավոր ազգականներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Երևան քաղաքի վարչական տարածքում մինչև 15.05.2001 թվականը կառուցված և նույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (...) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա նույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված Երևանի քաղաքապետի որոշումը, որում պարտադիր նշվում են իրավունք ձեռք բերող ֆիզիկական անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին), բնակելի տան հասցեն, տեղեկատվություն բնակելի տան կառուցման տարեթվի մասին, տեղեկատվություն այն մասին, որ անշարժ գույքը բավարարում է նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները: (...) Նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում Երևանի քաղաքապետի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում, բացառությամբ, եթե նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը կարգավորել է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված որոշակի կատեգորիայի անշարժ գույքի նկատմամբ այդ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման և պատշաճ ձևակերպման հետ կապված հարաբերությունները: Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը (քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կամ հողհատկացման հիմքերը) չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքը համարվում է այն որպես սեփական գույք տիրապետող ֆիզիկական անձանց սեփականությունը:

Նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով նշված օրենքի կարգավորման առարկային՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են օրենքով սահմանված կարգով կառուցված բնակելի տների (օրինական կառույցների), դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերի և (կամ) հողհատկացման հիմքերի պահպանված չլինելու դեպքում օրինական կառույցի

սեփականատիրոջ իրավունքների վերականգնման հարցերը: (...) Վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման համար միայն այդ հասցեում հաշվառվելը և բնակվելը բավարար չեն «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար, քանի որ օրենքը կարգավորում է ոչ թե սեփականության իրավունքի ծագման, այլ արդեն իսկ ծագած սեփականության իրավունքի վերականգնման խնդիրը *(տե՛ս, Նարինե, Լիանա և Օֆելյա Թովմասյաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Գագիկ Թովմասյանի և այլոց թիվ ՎԴ/1864/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010 թվականի որոշումը):*

Այսպիսով, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքի նկատմամբ վերականգնվում է այն ֆիզիկական անձի սեփականության իրավունքը, ով փաստացի տիրապետում է այդ անշարժ գույքը՝ որպես սեփական գույք: Ընդ որում, վերոնշյալ իրավակարգավորումը վերաբերում է այն ֆիզիկական անձանց, ովքեր ոչ միայն փաստացի տիրապետում են համապատասխան անշարժ գույքը, այլ նաև հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, որոնց սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման գործընթացն իրենից ներկայացնում է համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթ, քանի որ եզրափակվում է համապատասխան վարչական ակտով, այն է՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ: Այսպես, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Երևանի քաղաքապետի կողմից ընդունված համապատասխան անհատական իրավական ակտը (որոշումը), որով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով ճանաչվում է ֆիզիկական անձի սեփականության իրավունքի առկայությունը դրա վերականգնման միջոցով, հանդիսանում է վարչական ակտ, քանի որ այն համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված վարչական ակտի հասկացության սահմանմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին իրավունք է վերապահում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը:

Օրենսդիրը հստակ սահմանել է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեության՝ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել

փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու համար ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման համար անհրաժեշտ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար Երևանի քաղաքապետը կարող է որոշում կայացնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքները վերականգնելու մասին միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում եկել է այն եզրահանգման, որ դիմում ներկայացրած ֆիզիկական անձի, ինչպես նաև այդ դիմումում նշված անշարժ գույքի կարգավիճակը լիովին համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին *(տե՛ս, Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավակարգավորումների միջոցով օրենսդիրը հետապնդում է հստակ նպատակ, այն է՝ որոշակի պահանջների բավարարող և իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի տիրապետող և դրա սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ հանդիսացող ֆիզիկական անձանց հնարավորություն տալ վերականգնելու իրենց սեփականության իրավունքն այդ անշարժ գույքի նկատմամբ: Հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր պահանջներից մեկն այն է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ կարող է վերականգնվել միայն այդ անշարժ գույքը փաստացի տիրապետող այն ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը, ովքեր հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ:

Հետևաբար վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, inter alia, այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձը հանդիսանում է արդյոք այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդ, թե՝ ոչ:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկա կարող է լինել յուրաքանչյուր անձ, որին հայտնի է կամ կարող է հայտնի լինել տվյալ գործին վերաբերող որևէ փաստական հանգամանք: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանում որպես վկա հանդես գալիս առանձին հարցի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք ունեն անձինք՝ (...) իրենց հետ արյունակցական մինչև 2-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձանց (...) վերաբերյալ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը նախազգուշացնում է վկային սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Դատարանը վկայից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով: Իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների արժանահավատության հարցին, իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա *(տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ «Զարյա» արտադրական կոոպերատիվի թիվ 3-81 (ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):*

Իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով: Մասնավորապես՝ եթե վկայի ցուցմունքը գնահատելիս դատարանը նախևառաջ պետք է հաշվի առնի վկայի անձնական հատկանիշները (ունակ է արդյոք նա ընկալել և վերարտադրել համապատասխան փաստը, ինչ փոխհարաբերությունների մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց հետ և այլն), ապա գրավոր ապացույցների պարագայում դատարանը նախևառաջ պետք է պարզի այդ ապացուցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին *(տե՛ս, Արմեն Կոտղինյանն ընդդեմ Սեդա Խուրշուդյանի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Ամփոփելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի ճիշտ լուծման նպատակով դատարանը պարտադիր կերպով

պետք է ստուգի ապացույցների արժանահավատությունը, քանի որ միայն արժանահավատ ապացույցն է հնարավորություն տալիս հաստատելու կամ հերքելու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Գործով ձեռք բերված որոշ ապացույցների ոչ հավաստիության վերաբերյալ կարող է վկայել դատարանի կողմից միևնույն հանգամանքի կամ փաստի վերաբերյալ հակասական, միմյանց բացառող տեղեկությունների, տվյալների ստացումը: Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել՝ առաջին հերթին ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից), այսինքն՝ ապացույցների արժանահավատությունն առաջին հերթին կախված է տեղեկատվության աղբյուրի որակից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույցների արժանահավատությունը կախված է նաև գործով ձեռք բերված տարբեր ապացույցների՝ միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից, քանի որ գործով ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը միայն կարող է վերհանել ապացույցների միջև եղած հակասությունները և արդյունքում որոշել ապացույցների հավաստիությունը: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության վերաբերյալ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել՝ տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Այսպիսով, ապացույցների հավաստության և փոխադարձ կապի տեսանկյունից դրանց գնահատման նպատակն այն է, որ վերացվեն ձեռք բերված և հետազոտվող ապացույցների միջև առկա հակասությունները, փարատվեն ստացված ապացուցողական տեղեկատվության ողջ համակցության հետազոտման արդյունքում կատարված եզրահանգման հավաստիության վերաբերյալ բոլոր կասկածները: Պարզելով ապացույցների արժանահավատությունը՝ դատարանը որոշում է դրանց բավարար լինելը, բացահայտում է ձեռք բերված և հետազոտված ապացույցների հիման վրա որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացություն անելու հնարավորությունը, ինչը թույլ է տալիս ստուգել նաև գործով հավաքված ապացույցների լրիվությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ վկայի ցուցմունքը համարվում է վարչական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու ինքնուրույն միջոց՝ դատական ապացույցի առանձին տեսակ, որին վերաբերող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ վկան, որպես ապացուցողական տվյալների ստացման աղբյուր, գործի ելքում իրավաբանական շահագրգռվածություն չունեցող այն ֆիզիկական անձն է, որը կանչվում է դատարան՝ գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին իր կողմից անմիջականորեն ընկալված կամ այլ անձանց կողմից իրեն հաղորդված տեղեկությունները դատարանին հայտնելու համար: Վկայի ցուցմունքների գնահատումը դրանց տրամաբանական վերլուծությունն է, որի նպատակն է գործի իրական փաստական հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկությունների վերհանումը: Գնահատելով վկայի ցուցմունքները՝ դատարանը վերլուծում է վկայի անձնական հատկանիշները, նրա փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ, վկայի կողմից տեղեկությունների ընկալման, պահպանման և փոխանցման ողջ գործընթացը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը որոշ դեպքերում անձանց ազատել է որպես վկա ցուցմունք տալու պարտականությունից՝ սահմանելով վկայի իմունիտետ: Որոշակի կատեգորիայի անձանց ազատելով որպես վկա ցուցմունքներ տալու պարտականությունից՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում ապահովել կոնկրետ հասարակական հարաբերությունների գաղտնիությունը, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և պաշտպանվող որոշակի արժեքների պահպանումը և անխոչընդոտ իրացումը: Նման իրավակարգավորումը, ըստ էության, բխում է հանրային և մասնավոր շահերի փոխպայմանավորված հարա-

բերակցությունից: Հանրային շահը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուրն աջակցի իրավապահական գործառույթներ իրականացնող մարմիններին՝ իրավախախտումները բացահայտելու և կանխելու գործում՝ ցուցմունք տալով: Միևնույն ժամանակ, այդ աջակցությունը չպետք է ապահովվի՝ անձանց պատճառելով անընդունելի բարոյական զրկանքներ: Սահմանելով ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը կոնկրետ դեպքերում՝ ՀՀ Սահմանադրությունը և ձյուղային օրենսդրությունը վերացնում են ցուցմունք տալու հարցում հանրային և մասնավոր շահերի միջև հակասության դրսևորումներից մեկը՝ նախապատվություն տալով անձնական շահերին:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ամրագրված է վկայի հարաբերական իմունիտետը, որի դեպքում իմունիտետով օժտված վկան ինքն է որոշում՝ օգտվել ցուցմունք տալու ընթացքում որոշակի հարցերի պատասխանելուց հրաժարվելու իր իրավունքից, թե՝ ոչ, ինչը հիմնված է սահմանադրական այն դրույթի վրա, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկայի հարաբերական իմունիտետի դատավարական ինստիտուտը վերաբերում է բացառապես վկայի՝ իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքին և չի կարող մեկնաբանվել այնպես, որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ վկայի տված ցուցմունքներն անպայմանորեն համարվեն անարժանահավատ ապացույցներ: Այլ կերպ ասած՝ վկայի կողմից տրված ցուցմունքներն ինքնըստինքյան չեն կարող դիտվել որպես ոչ արժանահավատ ապացույցներ միայն այն հիմքով, որ այդ ցուցմունքները վերաբերում են այդ վկայի ամուսնուն կամ մերձավոր ազգականին: Հետևաբար վկայի՝ դատավարության մասնակիցների մերձավոր ազգականը կամ դատավարության մասնակցի ամուսինը հանդիսանալու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ վկայի տված ցուցմունքներն արժանահավատ ապացույց չհամարելու և գործով ձեռք բերված ապացույցների կազմից հանելու համար:

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ ապացույցի հավաստիության մասին կարելի է եզրահանգում կատարել նախևառաջ այդ տեղեկատվության աղբյուրի բնույթն ու հատկանիշները բացահայտելու միջոցով: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ յուրաքանչյուր դեպքում գործով վկայի ցուցմունքները գնահատելիս դատարանը պարտավոր է հաշվի է առնել հետևյալ հատկանիշները.

- վկայի փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ,
- փաստերի մասին վկայի իրազեկության աղբյուրը,
- այն պայմանները, որոնց առկայությամբ վկան ընկալել է որոշակի փաստեր (այսինքն՝ տեղը, ժամանակը, անձի ֆիզիկական և հոգեկան վիճակը, տարիքը),
- վկայի սուբյեկտիվ հատկանիշներն այն առումով, թե նա իր ունակություններով ի վիճակի է արդյոք ճիշտ ընկալել իրադարձություններն ու գործողությունները, ընկալածը պահել հիշողության մեջ և ճիշտ վերարտադրել ու հաղորդել դատարանին:

Նշված հատկանիշների վերհանումը դատարանի կողմից հնարավորություն է տալիս գնահատելու վկայի կողմից հայտնած տեղեկությունների հավաստիության աստիճանը:

Միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ դատարանը, նախազգուշացնելով վկային սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, կարող է ակնկալել, որ վկայի հայտնած տեղեկությունները արժանահավատ են, քանի դեռ հակառակը չի հիմնավորվել:

Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած ապացույցի, այնպես էլ վկայի ցուցմունքների արժանահավատության վերաբերյալ վերջնական գնահատական տալու նպատակով դատարանը պարտավոր է վկայի ցուցմունքները համադրել գործով հավաքված այլ ապացույցների, այդ թվում՝ այլ անձանց ցուցմունքների հետ: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են հարուցվում՝ կապված գործով հրավիրված վկաների ցուցմունքների

հավաստիության ու արժանահավատության հետ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել վկաների ցուցմունքներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով՝ դատական ակտում պարտադիր պատճառաբանելով, թե ինչու են այս կամ այն ցուցմունքները դիտվել որպես ոչ արժանահավատ և իրականությանը չհամապատասխանող:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի դիմումի հիման վրա, որով վերջիններս՝ որպես ամուսիններ, խնդրել են Երևանի քաղաքապետին «28.06.2008 թվականի թիվ ՀՕ-117-Ն օրենքի համաձայն օրինականացնել Մ. Խորենացի թիվ 231/34 հասցեի օրինական գույքին կից շինությունը և հողամասը»: Երևանի քաղաքապետը 05.11.2009 թվականին ընդունել է «Մ. Խորենացու փողոցի Հ.231/97 բնակելի տան նկատմամբ Արմեն Վալոդյայի Գալստյանի, Նունե Օգսենի Ալոյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» թիվ 8820-Ա որոշումը, որի 1-ին կետով վերականգնվել է Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արմեն Գալստյանի, Նունե Ալոյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 206,96քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 206,96քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ: Այսպես, նշված որոշմամբ Երևանի քաղաքապետը, հիմք ընդունելով այն, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ գրանցված իրավունք առկա չէ, այդ հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, գտել է, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող հողամասի և բնակելի տան նկատմամբ ենթակա է վերականգնման Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի սեփականության իրավունքը՝ ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի:

Դատարանը 19.06.2014 թվականի վճռով մերժել է Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին Զոյա Սիմեոնիդուի պահանջը՝ պատճառաբանելով, որ սույն վարչական գործով հաստատվում է, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող բնակելի տունը կառուցվել է մինչև 15.05.2001 թվականը, այն չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի գոտիներում և փաստացի զբաղեցված է Արմեն Գալստյանի կողմից: Այսինքն՝ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող բնակելի տունը և հողամասը համապատասխանում են «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Հետևաբար, ըստ Դատարանի 19.06.2014 թվականի վճռի, վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենքի պահանջների պահպանմամբ, իրավաչափ է, և այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են: Բացի այդ, Դատարանը, հետազոտելով սույն վարչական գործով հարցաքննված վկաների և Զոյա Սիմեոնիդուի միջև առկա արյունակցական կապը, իր 19.06.2014 թվականի վճռում նշել է, որ *«(...) Գեղեցիկ Գալստյանը, Հայաստան Թովմասյանը հանդիսանում են [Զոյա Սիմեոնիդուի] հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, իսկ Արթուր Մարտիրոսյանը և Մովսես Մարտիրոսյանը հանդիսանում են [Զոյա Սիմեոնիդուի] հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող, որոնք կարող էին ՀՀ վարչական դատավա-*

րության օրենսգրքի 33-րդ հոդվածի հիմքով հրաժարվել որևէ հարցին պատասխանելուց, (...) գտնվելով [Զոյա Սիմեոնիդուի] հետ նման կապի մեջ՝ կարող են լինել շահագրգռված գործի ելքով (...)»:

Վերաքննիչ դատարանն իր հերթին 04.12.2014 թվականի որոշմամբ հիմնավոր է համարել Դատարանի վերոգրյալ եզրահանգումներն այն մասին, որ Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշումն ընդունվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ նշել է, որ *«(...) Երևանի Մ. Խորենացու թիվ 231/97 (...) հասցեում գտնվող գույքը Զոյա Սիմեոնիդուի կողմից կառուցված լինելու վերաբերյալ գործի նյութերում առկա բոլոր ապացույցները կրում են միջնորդավորված բնույթ, իսկ նշված փաստը հավաստող որևէ ողղակի ապացույց սույն գործի նյութերում առկա չէ: (...) Նշված հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Զոյա Սիմեոնիդուի իրավունքի խախտված լինելու փաստը չի հիմնավորվում սույն գործի նյութերով (...)»:* Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ սույն գործով վկաներ Մհվսես Մարտիրոսյանի, Գեղեցիկ Գալստյանի, Արթուր Մարտիրոսյանի և Հայաստան Թովմասյանի տված ցուցմունքներն արժանահավատ չեն, քանի որ վերջիններս 1-ին և 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ են գտնվում Զոյա Սիմեոնիդուի հետ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, 04.12.2014 թվականի որոշմամբ անփոփոխ թողնելով Դատարանի 19.06.2014 թվականի վճիռը, գտել է, որ Դատարանը սույն գործում եղած ապացույցները գնահատել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչի արդյունքում կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում համապատասխան ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ, որի հիման վրա տվյալ ֆիզիկական անձն իրավական հնարավորություն է ստանում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը:

Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) <<Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է, որ այն դեպքում, երբ նույն օրենքի ուժով վերականգնվում է գրանցված ամուսինների ընդհանուր սեփականությունը, ապա համապատասխան դիմումը կարող է ներկայացնել ամուսիններից մեկը:

Երևանի քաղաքապետը կարող է որոշում կայացնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքները վերականգնելու մասին միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում եկել է այն եզրահանգման, որ դիմում ներկայացրած ֆիզիկական անձի, ինչպես նաև այդ դիմումում նշված անշարժ գույքի կարգավիճակը լիովին համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի

տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի՝ որպես ամուսինների, դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացված, սույն գործով վիճարկվող Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի թիվ 8820-Ա որոշմամբ լուծվել է Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի ընդհանուր սեփականության իրավունքի վերականգնման հարցը: Սույն գործի քննության ընթացքում հիմնավորվել է, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող անշարժ գույքի օրինականացման վերաբերյալ Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի կողմից Քաղաքապետին հասցեագրված դիմումի ներկայացման պահին նշված հասցեում գտնվող անշարժ գույքը փաստացի տիրապետել են Արմեն Գալստյանը և Նունե Ալոյանը: Բացի այդ, սույն գործի քննության ընթացքում հիմնավորվել է նաև, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող անշարժ գույքը լիովին համապատասխանում է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին:

Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը պարզելու, այսինքն՝ սույն գործը լուծելու համար էական նշանակություն ունի այն հարցը, թե Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձինք՝ Արմեն Գալստյանը և Նունե Ալոյանը, փաստացի տիրապետելով Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող անշարժ գույքը, հանդիսանում են արդյոք այդ անշարժ գույքի սեփականատերեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, թե՝ ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում վկաներ Մհվսես Մարտիրոսյանը, Գեղեցիկ Գալստյանը, Արթուր Մարտիրոսյանը, Հայաստան Թովմասյանը ցուցմունք են տվել այն մասին, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող հողամասը դեռևս 1990-ական թվականների սկզբին ձեռք է բերել Ջոյա Սիմեոնիդուն և այդ հողամասում կառուցել է բնակելի տուն՝ բնակվելով այնտեղ մինչև Հունաստանի Հանրապետություն մեկնելը: Մինչդեռ թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանն արժանահավատ չեն համարել այդ ցուցմունքներն այն հիմքով, որ նշված վկաները 1-ին և 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ են գտնվում Ջոյա Սիմեոնիդուի հետ:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ վկայի հարաբերական իմունիտետի դատավարական ինստիտուտը վերաբերում է բացառապես վկայի՝ իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքին. վկայի՝ դատավարության մասնակիցների մերձավոր ազգականը կամ դատավարության մասնակցի ամուսինը հանդիսանալու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ վկայի տված ցուցմունքներն արժանահավատ ապացույց չհամարելու և գործով ձեռք բերված ապացույցների կազմից հանելու համար: Ինչպես ցանկացած ապացույցի, այնպես էլ վկայի ցուցմունքների արժանահավատության վերաբերյալ վերջնական գնահատական տալու նպատակով դատարանը պարտավոր է վկայի ցուցմունքները համադրել գործով հավաքված այլ ապացույցների, այդ թվում՝ այլ անձանց ցուցմունքների հետ:

Հետևաբար, թեև սույն գործով վկաներ Մհվսես Մարտիրոսյանի, Գեղեցիկ Գալստյանի, Արթուր Մարտիրոսյանի և Հայաստան Թովմասյանի ցուցմունքները գնահատելիս պետք է հաշվի առնվեն այդ վկաների փոխհարաբերությունները դատավարության մասնակիցների, այդ թվում՝ սույն գործով հայցվոր Ջոյա Սիմեոնիդուի հետ, սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված վկաների ցուցմունքները չեն կարող համարվել անարժանահավատ ապացույցներ միայն այն հիմքով, որ վերջիններս Ջոյա Սիմեոնիդուի մերձավոր ազգականներն են: Տվյալ դեպքում նշված վկաների ցուցմունքների հավաս-

տիության ու արժանահավատության հետ կապված կասկածներն անհրաժեշտ է փարատել այդ վկաների ցուցմունքները գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրելու միջոցով: Մինչդեռ ստորադաս դատարաններն անհիմն կերպով վկաներ Մովսես Մարտիրոսյանի, Գեղեցիկ Գալստյանի, Արթուր Մարտիրոսյանի և Հայաստան Թովմասյանի ցուցմունքները համարել են որպես ոչ արժանահավատ ապացույցներ՝ չգնահատելով այդ ցուցմունքները սույն գործում առկա ապացույցների համակցության մեջ և այդպիսի գնահատման արդյունքում չպատճառաբանելով, թե ինչու են այդ ցուցմունքները դիտվել որպես ոչ արժանահավատ և իրականությանը չհամապատասխանող:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վկաներ Մովսես Մարտիրոսյանի, Գեղեցիկ Գալստյանի, Արթուր Մարտիրոսյանի և Հայաստան Թովմասյանի կողմից տրված ցուցմունքների բովանդակությունից հետևում է, որ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (վերտառությամբ) «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով սեփականության իրավունքի վերականգնման իրավունքը պատկանում է ոչ թե Արմեն Գալստյանին և Նունե Ալոյանին, այլ՝ Ջոյա Սիմոնիդուին: Հետևաբար նշված վկաների ցուցմունքների գնահատումը կարևոր նշանակություն ունի սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող և ապացուցման առարկան կազմող այնպիսի հարցի պարզման համար, ինչպիսին է Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի մոտ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման իրավական նախադրյալների առկայությունը կամ բացակայությունը: Նշված հարցի պարզումն իր հերթին կանխորոշում է սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ Երևանի քաղաքապետի 05.11.2009 թվականի «Մ. Խորենացու փողոցի Հ.231/97 բնակելի տան նկատմամբ Արմեն Վալոդյայի Գալստյանի, Նունե Օգսենի Ալոյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» թիվ 8820-Ա որոշման և դրա հիման վրա Արմեն Գալստյանի և Նունե Ալոյանի անվամբ Երևան քաղաքի Մ. Խորենացու թիվ 231/97 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 31.03.2010 թվականին կատարված իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկաներ Մովսես Մարտիրոսյանի, Գեղեցիկ Գալստյանի, Արթուր Մարտիրոսյանի և Հայաստան Թովմասյանի կողմից տրված ցուցմունքները սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապացույցներ պահանջելու և դրանց հիման վրա գործի փաստերն ի պաշտոնե պարզելու նպատակով սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի

Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9439/05/13
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/9439/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի նոյեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տեսչության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Մանուկ Նազարյանի (այսուհետ՝ Ձեռնարկատեր)՝ 369.364 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ձեռնարկատիրոջից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 369.364 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 28.10.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.04.2015 թվականի որոշմամբ Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.10.2014 թվականի վճիռը բեկանվել է, և հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 5-րդ հոդվածի 5-րդ կետը, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 29-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ վարչական մարմինը մինչև Ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորություն հաշվարկելը պետք է պարզեր՝ արդյոք վերջինս գործունեություն ծավալում է, թե ոչ, անհիմն է:

Ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը հարկային տեսչության չի հանձնվել, հետևաբար նրա նկատմամբ կիրառելի են մինչև 01.01.2013 թվականը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթները, և նա պարտավոր էր կատարել նույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ պարբերության պահանջը, այն է՝սահմանված ժամկետում վճարել ամսական նվազագույն սոցիալական վճարի 5.000-ական ՀՀ դրամները:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ամհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը Ձեռնարկատիրոջ կողմից 2007 թվականի վերջերին Տեսչությանը հանձնած լինելու փաստի ապացուցման բեռը կրել է Ձեռնարկատերը, սակայն վերջինս որևէ ապացույց Դատարանին չի ներկայացրել, հետևաբար այդ փաստը հաստատված չի կարող համարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.10.2014 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մանուկ Նազարյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, պետական գրանցում է ստացել 16.10.2006 թվականին և ստացել անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման թիվ 01 Ա 103234 վկայականը **(հատոր 1-ին, գ.թ. 79).**

2. Ձեռնարկատերը 27.10.2006 թվականին հաշվառվել է որպես ապահովադիր **(հատոր 1-ին, գ.թ. 6).**

3. Տեսչության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով Մանուկ Նազարյանի պարտավորությունն առ 24.09.2013 թվականը կազմում է 369.364 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 5).**

4. ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մանուկ Նազարյանը հաշվառումից հանվել է 31.10.2013 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 80):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է

էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ապացույց ներկայացնելու պարտականության և ապացուցման բեռի հարաբերակցության վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական ու կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

1. արդյո՞ք ապահովադիր հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունը հաշվարկելու համար հարկային մարմինը պարտավոր է պարզել ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը,

2. անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն վճարների գծով պարտավորության դիմաց գումար բռնագանձելու պահանջներով վարչական դատավարությունում ո՞վ պետք է կրի անհատ ձեռնարկատիրոջ պետականագրանցման վկայականը հարկային մարմնին հանձնելու փաստի ապացուցման բեռը:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է՝ 26.12.1997 թվականին, ուժի մեջ է մտել՝ 31.12.1997 թվականին, ուժը կորցրել է՝ 01.01.2013 թվականին) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սոցիալական վճարներն ապահովադիրների կողմից պարտադիր կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող միջոցներ են:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5.000 դրամ, մինչև հաջորդ ամսվա 15-ը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սոցիալականվճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովադրից գանձվում է տույժ՝ ապառքի 0,15 տոկոսի չափով:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովադիրները ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում գրանցվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում պարտավոր են գրանցվել և հաշվառվել լիազորված մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ անհատձեռնարկատիրոջ պետական հաշվառումը՝ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակության և գործունակության ճանաչումն է պետության կողմից, ինչպես նաև գրանցամատյանում անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունների ճանաչումը պետության կողմից:

Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու դեպքում այդ մասին, համաձայն

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, նշում է արվում պետականհաշվառման գրանցամատյանում:

Վերը շարադրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պետությունը ճանաչում է անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը վերջինիս ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում հաշվառման պահից մինչև նրա հաշվառումից հանելու մասին պետական հաշվառման գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահը, ուստի լիազորված մարմնում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գրանցվելու և հաշվառվելու փաստով անհատ ձեռնարկատերը՝ որպես ապահովադիր, կրում է օրենքով սահմանված պարտադիր վճարներ կատարելու պարտականություն: Այսինքն՝ ձեռնարկությունների պետական ռեգիստրի մարմիններում հաշվառման և լիազորված մարմնում գրանցվելու պահից սկսած մինչև հաշվառումից հանելու պահն անհատ ձեռնարկատերը հանդիսանում է ապահովադիր և պարտավոր է կատարել ապահովադրի համար օրենքով սահմանված բոլոր, այդ թվում նաև պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարելու պարտականությունը:

Ապահովադիր հանդիսանալու ժամանակահատվածում պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարելու պարտականություն չկրելու միակ պայման օրենսդրի կողմից սահմանվել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի մինչև 25.07.2012 թվականը գործող խմբագրությամբ 5-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ պարբերությամբ (ուժը կորցրել է 19.03.2012 թվականին ընդունված և 25.07.2012 թվականից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-152-Ն օրենքով), որի համաձայն՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր լիազորված մարմնին հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը (ձեռներեցը) նույն պարբերությամբ սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար Ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը կարող է նշանակություն ունենալ միայն 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող մասով, այն էլ այն դեպքում, երբ վերջինս պետականգրանցման վկայականը ժամանակավոր հանձնել է լիազորված մարմնին, իսկ 25.07.2012 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքի պարզման անհրաժեշտությունն ընդհանրապես բացակայում է, քանի որ պետական ռեգիստրի մարմիններում Ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում գործում է ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու կանխավարկածը, որի պարագայում վերջինս պարտավոր է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կատարել իր պարտականությունները:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 01.01.2013 թվականից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» թիվ ՀՕ-179 ՀՀ օրենքը ճանաչվել է ուժը կորցրած: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 2013 թվականի ընթացքում կամ մինչ այդ առաջացած եկամտահարկի կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները 01.01.2013 թվականից հետո դադարած չեն համարվում, և դրանք ենթակա են կատարման «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մանուկ Նազարյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, պետական գրանցում է ստացել 16.10.2006 թվականին և որպես ապահովադիր 27.10.2006 թվականին հաշվառվել է Տեսչությունում: ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մանուկ Նազարյանը հաշվառումից հանվել է 31.10.2013 թվականին, ինչը նշանակում է, որ Մանուկ Նազարյանի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունը և գործունակությունը ծագել է 16.10.2006 թվականին և դադարել 31.10.2013 թվականին: Գործում առկա՝ Տեսչության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով Մանուկ Նազարյանի պարտավորությունն առ 24.09.2013 թվականը կազմում է 369.364 ՀՀ դրամ:

Դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, հաստատված չի համարել անհատ ձեռնարկատիրոջ վկայականը հարկային տեսչությանը հանձնած լինելու փաստը, միաժամանակ հիմնավոր համարելով սոցիալական ապահովության վճարների գծով 369.364 ՀՀ դրամի չափով Ձեռնարկատիրոջ պարտավորությունների առկայությունը, 28.10.2014 թվականի վճռով Տեսչության հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը, որպես Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարելու և Դատարանի 28.10.2014 թվականի վճիռը բեկանելու հիմնավորում, նշել է, որ «վարչական մարմինը մինչև Ա/Ձ Մանուկ Նազարյանի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելը, պետք է պարզեր՝ արդյոք վերջինս գործունեություն ծավալում է, թե ոչ»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով Ձեռնարկատիրոջ պարտավորությունն ամբողջությամբ կազմված է ամսական նվազագույն գումարներից, որոնք Տեսչության կողմից հաշվարկվել են, քանի որ նշված վճարների գծով Ձեռնարկատիրոջ պարտավորություն չունենալը հաստատող որևէ իրավական հիմք առկա չի եղել այն պատճառով, որ Ձեռնարկատերը, հաշվառված լինելով պետական ռեգիստրի մարմիններում, հանդիսացել է ապահովադիր և պարտավոր է եղել վճարել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Ընդ որում, եթե 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող մասով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը կարող էր որոշիչ նշանակություն ունենալ, այն էլ այն պարագայում, եթե վերջինս պետականգրանցման վկայականը ժամանակավոր հանձնած լիներ լիազորված մարմնին, ապա 25.07.2012 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը, այդ պահին գործող իրավակարգավորման համաձայն, ընդհանրապես նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ պարբերությունն այլևս իրավական ուժ չուներ, իսկ պետական ռեգիստրի մարմիններում Ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում գործում է ապահովադրի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կանխավարկածը, որի պարագայում վերջինս պարտավոր էր վճարել պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ վարչական մարմինը մինչև Ձեռնարկատիրոջ նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելը պետք է պարզեր՝ արդյոք վերջինս գործունեություն ծավալում է, թե ոչ, անհիմն է:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, թե կոնկրետ հայցատեսակով (վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման, ճանաչման) պայմանավորված՝ ով է կրում ապացուցման բեռը:

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն: Միաժամանակ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասում, որպես ընդհանուր կանոն, նախատեսել է վարչական դատավարությունում գործի ելքը պայմանավորող որևէ փաստի չապացուցված մնալու իրավական հետևանքները՝ սահմանելով, որ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է նաև վարչական դատավարությունում գործող տարբեր հայցատեսակների հիման վրա հարուցված գործերի շրջանակներում ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վերը նշված հատուկ կանոնները կիրառելի չեն, քանի որ Տեսչության ներկայացրած հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հայցատեսակներից չէ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բոլոր այն դեպքերում, երբ վարչական դատարանի վարույթում քննվող գործերով կիրառելի չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոնները, ապա դատարանը պետք է ղեկավարվի ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնով, համաձայն որի՝ կողմերը պարտավոր են դատարանին ներկայացնել իրենց տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով հիմնավորում են իրենց պահանջները կամ առարկությունները, իսկ դրանք չապացուցելու դեպքում կրելու են բացասական հետևանքները:

Վերը նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապացույց ներկայացնելու պարտականության և ապացուցման բեռի հարաբերակցությանը:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն, համաձայն որի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ վարչական մարմինը բոլոր դեպքերում, անկախ ապացուցման բեռը կրելու կամ չկրելու հանգամանքից, ունի իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած ապացույց ներկայացնելու պարտականություն, ինչը, սակայն, չի նշանակում, որ այդպիսիք ներկայացնելու անհնարինության դեպքում վարչական մարմինը պետք է կրի չապացուցված փաստով պայմանավորված բացասական իրավական հետևանքներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից ակնհայտ է, որ գործի ելքը պայմանավորող փաստի չապացուցված մնալու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է ոչ թե ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող, այլ ապացույցներ ներկայացնելու պարտականություն ունեցող և այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը, հետևաբար նշված փաստը չապացուցելու բացասական հետևանքները պետք է դրվեն այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը ողջամտորեն կարող է կրել միայն այն կողմը, ում պնդմամբ վիճելի փաստը տեղի է ունեցել, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը կիրառելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել, թե դատավարության մասնակիցներից որ կողմն է կրում գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, եզրահանգել է, որ սույն գործի ելքը պայմանավորող փաստի, այն է՝ անհատ ձեռնարկատիրոջ վկայականը 2007 թվականի վերջին Տեսչությանը հանձնած լինելու ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը, և գտնելով, որ տվյալ փաստական հանգամանքը վերջինիս կողմից չի ապացուցվում, ինչի հետևանքով վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, դրա բացասական հետևանքները դրել է Տեսչության վրա:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու վարչական մարմնի պարտականությունը, իսկ 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված է վարչական մարմնի ապացուցման պարտականությունը, որը վերջինս կրում է անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Միաժամանակ օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտը սահմանելիս նույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով, այդ թվում նաև՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի գործողությունը չի տարածվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների վրա, հետևաբար դրանցով սահմանված պարտականությունները վարչական մարմնի կողմից պահպանված չլինելու փաստը հաստատված համարելու պարագայում անգամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հետևանքը չի կարող վրա հասնել:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, երբ գործի ելքը պայմանավորող փաստի ապացուցման բեռը կրող կողմը չի կարողանում ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում դրված որևէ փաստ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ուղղակի արդյունք է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստական հանգամանքնե-

րի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու, ինչպես նաև անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված իրավակարգավորումները վարչական դատավարությունում կիրառելի չեն, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածներում սահմանված պարտականությունը վարչական մարմնի կողմից չկատարելը չի կարող առաջացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական հետևանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի ելքը պայմանավորող փաստ, առնվազն 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանի համար հաշվարկված պարտավորության մասով, հանդիսացել է անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը Ձեռնարկատիրոջ կողմից հանձնած լինելու փաստը, ուստի դրա ապացուցման բեռը պետք է կրի այն կողմը, ում պնդմամբ տվյալ փաստը տեղի է ունեցել, այսինքն՝ Ձեռնարկատերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"): Դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Սույն գործով ապահովելով վերը նշված հոդվածի պահանջների կատարումը՝ Դատարանը ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները (կատարել է հարցումներ, Ձեռնարկատիրոջից պահանջել է ներկայացնել «Հայփոստ» ՓԲԸ-ից տեղեկանք՝ հարկային տեսչություն առաքանի ուղարկելու վերաբերյալ) անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը Ձեռնարկատիրոջ կողմից 2007 թվականի վերջերին հարկային տեսչությանը հանձնած լինելու փաստը հաստատող ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ, սակայն այդպիսիք հնարավոր չի եղել ձեռք բերել, հետևաբար տվյալ փաստի չապացուցված մնալու բացասական հետևանքները պետք է դրվեին Ձեռնարկատիրոջ՝ որպես այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Դատարանը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, կիրառելով վարչական դատավարությունում ապացուցման բեռի բաշխման հետ որևէ առնչություն չունեցող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը և 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, վերը նշված փաստի ապացուցված չլինելու բացասական հետևանքը դրել է Տեսչության վրա և, առանց պատճառաբանելու, թե հատկապես ինչու պետք է կիրառվեն հենց այդ նորմերը, անհիմն կերպով բեկանել է Դատարանի հիմնավոր դատական ակտն ու մերժել Տեսչության հայցը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի պահանջը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որպիսիք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ սույն գործով Տեսչությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 11.081 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Մանուկ Նազարյանի կողմից: Միաժամանակ Մանուկ Նազարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 11.081 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.04.2015 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 28.10.2014 թվականի վճռին:

2. Մանուկ Նազարյանից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության բռնագանձել 11.081 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Մանուկ Նազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 11.081 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.12.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0079/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0079/05/12**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի ապրիլի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ն. Ռ. Վ. Ա. Դ.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գնել Մուղնեցյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.11.2014 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4-րդ կետը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4-րդ կետը:

ՀՀ վարչական դատարանի 05.11.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վարչական դատարանի 05.11.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.05.2013 թվականի որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշման դեմ Կոմիտեի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Դատարանի 25.04.2014 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.06.2014 թվականի որոշմամբ կատարվել է դատավարության մասնակցի փոխարինում նրա իրավահաջորդով՝ Կոմիտեն փոխարինվել է Նախարարությամբ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2014 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 25.04.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նախարարությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-29-րդ, 37-րդ, 145-րդ և 177-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը սույն վարչական գործի քննությունն իրականացրել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալի շրջանակներում: Մասնավորապես՝ Դատարանը հստակորեն անդրադարձել է Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4-րդ կետում արձանագրված խախտման փաստի վիճարկմանը վերաբերող փաստարկներին և գնահատել է դրա վերաբերյալ վարչական գործում առկա ապացույցները: Դատարանն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կատարել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի՝ վիճարկվող վարչական ակտի 4-րդ կետում արձանագրված խախտման առկայության կամ բացակայության ապացուցման բեռի բաշխում: Բացի այդ, Դատարանը քննարկման առարկա է դարձրել համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը և չի նշանակել փորձաքննություն՝ լսելով ու հաշվի առնելով կողմերի կարծիքները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է Կոմիտեն, մինչդեռ վերջինս չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր վիճարկվող ակտի կայացման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների առկայությունը, հետևաբար դրա բացասական հետևանքները պետք է կրի Կոմիտեի իրավահաջորդ Նախարարությունը: Ավելին, Կոմիտեն գործի քննության ընթացքում չի ներկայացրել վարչական վարույթի (ստուգման) նյութերը՝ պատճառաբանելով, որ դրանք չեն պահպանվել: Հետևաբար վարչական մարմնի կողմից վարչական վարույթի ընթացքում ուսումնասիրված նյութերի բացակայության պայմաններում փորձաքննություն նշանակելու դեպքում պետք է ուսումնասիրության առարկա դառնան այնպիսի հաշվապահական հաշվառման փաստաթղթեր և այլ նյութեր, որոնք սույն գործում առկա չեն: Մինչդեռ Ընկերության պարտավորության չափը չի կարող որոշվել այն փաստաթղթերի և նյութերի հիման վրա, որոնք վարչական մարմինը միջամտող վարչական ակտ կայացնելիս չի հետազոտել, և այդ ապացույցներով չի հաստատվել լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար անհրաժեշտ փաստական կազմը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.11.2014 թվականի որոշումը և հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող որոշմամբ բեկանելով Դատարանի 25.04.2014 թվականի վճիռը, իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ Դատարանը սույն գործի նոր քննությունը չի իրականացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակներում: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր 05.11.2014 թվականի որոշմամբ հիմնավոր կերպով գտել է, որ Դատարանը չի կատարել սույն գործի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ալավերդյանի 14.04.2011 թվականի թիվ 1013952 հանձնարարագրի համաձայն՝ Տեսչության համապատասխան աշխատակիցներին հանձնարարվել է Ընկերությունում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում **(հատոր 1-ին, գ.թ. 39):**

2) Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4-րդ կետի համաձայն՝ ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գծով Ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ՝ ընդամենը 7.513.150 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 18-25):**

3) Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4-րդ կետով արձանագրվել է հետևյալը. «(...) 2010 թվականի ԱԱՀ-ի ամսական հաշվարկների և հաշվապահական տվյալների համադրումից պարզվեց, որ Ընկերությունը, խախտելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները, 2010 թվականի փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, սեպտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար հարկային տեսչություն ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկներով ավել հաշվանցում, ավել հետաձգում և նախորդ ժամանակաշրջաններում հետաձգված ԱԱՀ-ի գումարներից ավել դեբետագրում է ցույց տվել, (...) դրան հակառակ՝ նույն տարվա հունվար, հուլիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսների համար հարկային տեսչություն ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկներով պակաս հաշվանցում է ցույց տվել (...): Արդյունքում նշված ամիսների հաշվարկներով պակաս ԱԱՀ-ի գումար է հաշվարկվել (...) ընդամենը՝ 4.398.100 ՀՀ դրամ, դրան հակառակ՝ նշված ամիսների ԱԱՀ-ի հաշվարկներով ավել ԱԱՀ-ի գումար է հաշվարկվել (...) ընդամենը՝ 281.100 ՀՀ դրամ, որը ենթակա է պակասեցման: Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի՝ նույն օրենքով նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարները պակասեցնելու (հաշվանցելու) հետևանքով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը՝ 4.398.100 ՀՀ դրամ, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով՝ 2.199.050 ՀՀ դրամ: (...) Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի՝ ԱԱՀ-ի հաշվարկները սխալ կազմելու համար Ընկերությունից ենթակա է գանձման տուգանք այդ խախտման հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկի գումարի 10%-ի չափով՝ 178.900 ՀՀ դրամ: (...) Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու համար յուրաքանչյուր օրվա համար ընկերությունից ենթակա է գանձման տույժ՝ ժամկետին չմուծված հարկի գումարի 0,15%-ի չափով՝ 737.100 ՀՀ դրամ: (...) ԱԱՀ-ի գծով ընդամենը ենթակա է գանձման 7.513.150 ՀՀ դրամ, ենթակա է պակասեցման 281.100 ՀՀ դրամ (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 21):**

4) Գործի դատաքննության ընթացքում կողմերը հայտնել են, որ սույն գործով փոր-ձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չկա **(հիմք՝ 17.02.2014 թվականի դա-տական նիստի արձանագրություն, հատոր 6-րդ, գ.թ. 36-37, 81):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վա-րույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշա-նակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատա-րանի կողմից վերադաս դատական ատյանի սահմանած ծավալին համապատասխան գործի նոր քննության իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատա-կան պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նա-խատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29-րդ, 145-րդ և 177-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություննե-րով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վարչական գործի նոր քննության արդյունքում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման գործը ոչ լիարժեք քննելու հիմքով այն պայմաններում, երբ ստորադաս դատական ատյանը գոր-ծի նոր քննությունն իրականացրել է վերադաս դատական ատյանի կողմից սահմանված ծավալի շրջանակներում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վարչական դատարանի դատա-կան ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկելով վարչական դատարան՝ նոր քննության, և սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թող-նելով անփոփոխ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստորադաս դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վերադաս դատա-րանի որոշման հիման վրա՝ վերադաս դատարանի սահմանած ծավալով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերադաս դատական ատյանի սահմանած ծավալով գործի նոր քննության իրականաց-ման հարցին, արձանագրել է, որ վարչական դատավարությունում գործի նոր քննության ծավալը պայմանավորված է վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատ-ճառաբանություններով և եզրահանգումներով: Վերջիններս ընդգծում են այն սահման-ները, որոնց շրջանակներում պետք է իրականացվի գործի քննությունը դատական ակտի բեկանումից հետո: Այդ դատողությունների և եզրահանգումների բնույթը չի կարող լինել սահմանափակված միայն դատավարական իրավունքի կամ միայն նյութական իրավուն-քի նորմերի կիրառման շրջանակով: Բողոքի ցանկացած հիմքի և դրանում ներառված ցանկացած փաստարկի վերաբերյալ դատարանի եզրահանգումները կարող են պայ-մանավորել գործի նոր քննության սահմանները: Հետևաբար, եթե վերադաս դատական ատյանում բարձրացված հարցի վերաբերյալ դատարանը եկել է որոշակի հետևության և դրանով պայմանավորել գործի նոր քննության ծավալը, ապա ստորադաս դատական

ատյանում գործի նոր քննությունը պետք է իրականացվի նույն ծավալի շրջանակներում (նույն սահմաններում) *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի թիվ ՎԴ3/0011/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):*

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վարչական վերաքննիչ դատարանի լիազորությունը բխում է Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությամբ ամրագրված ոչ լրիվ վերաքննության հայեցակարգի բովանդակությունից. այն նպատակ ունի լրացնելու վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու վարչական վերաքննիչ դատարանի իրավազորության բացակայությունը, կանխելու վարչական վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը, ապահովելու դատական ատյանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը, երաշխավորելու դատավարության մասնակիցների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ վարչական վերաքննիչ դատարանի որոշումը պետք է հստակ եզրահանգումներ բովանդակի գործի նախորդ քննության ընթացքում թույլ տրված նյութական և (կամ) դատավարական նորմերի խախտումների և դրանց վերացմանն ուղղված դատավարական գործողությունների վերաբերյալ: Ընդ որում, գործի նոր քննության արդյունքում կայացված վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով վերանայելու ընթացքում վարչական վերաքննիչ դատարանը նախ և առաջ պետք է ստուգի, թե վարչական դատարանը գործի նոր քննությունն արդյո՞ք իրականացրել է վերադաս դատական ատյանի կողմից սահմանված ծավալի շրջանակներում, թե՝ ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4-րդ կետը: Վիճարկվող վարչական ակտի 4-րդ կետով Ընկերության նկատմամբ առաջադրվել են ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորություններ՝ ընդամենը 7.513.150 ՀՀ դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանը 05.11.2012 թվականի վճռով մերժել է Ընկերության հայցը, իսկ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 02.04.2013 թվականի որոշմամբ բեկանել է ՀՀ վարչական դատարանի նշված վճիռը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր 02.04.2013 թվականի որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ ՀՀ վարչական դատարանը սույն գործով պատշաճ քննություն չի իրականացրել, իր դատական ակտում որևէ հիմնավոր գնահատականի չի արժանացրել Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4-րդ կետում արձանագրված խախտման փաստի վիճարկմանը վերաբերող Ընկերության փաստարկները և որևէ կերպ չի գնահատել ի հիմնավորումն դրանց ներկայացված վարչական գործում առկա ապացույցները՝ Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը: Ըստ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ ՀՀ վարչական դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխան կողմերի միջև կատարելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի ապացուցման բեռի բաշխում, չի պարզել Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4-րդ կետում արձանագրված խախտման (այդ թվում նաև՝ արձանագրված ԱԱՀ-ի չափի վերաբերյալ) առկայության կամ բացակայության փաստը: Միաժամանակ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով գործում առկա ապացույցների ծավալն ու բնույթը, գտել է, որ գործի նոր քննության ընթացքում գործում առկա ապացույցները գնահատելու և վիճարկվող վարչական ակտի

4–րդ կետում արձանագրված խախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով պետք է քննարկվի համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը:

Դատարանի 20.06.2013 թվականի որոշմամբ հարուցվել է սույն վարչական գործի նոր քննության վարույթ, իսկ գործի նոր քննության արդյունքում 25.04.2014 թվականին կայացված վճռով Ընկերության հայցը բավարարվել է՝ Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4–րդ կետը ճանաչվել է անվավեր: Դատարանն իր վճռում նշել է, որ *«(...) դուրս չգալով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից սահմանված գործի նոր քննության ծավալից՝ անհրաժեշտ է պարզել այն հանգամանքը, թե արդյոք սույն վարչական գործով վիճարկվող ակտի 4–րդ կետով կատարված հղումները, արձանագրված խախտումները, խախտման ժամանակը և իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել, համապատասխանում են սույն վարչական գործով առկա փաստական հանգամանքներին, թե՝ ոչ (...)»:* Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ սահմանված գործի նոր քննության սահմանները, նախ և առաջ արձանագրել է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռը կրում է Կոմիտեն: Այնուհետև, ուսումնասիրելով գործում առկա ապացույցներն ու վիճարկվող վարչական ակտի 4–րդ կետի վերաբերյալ Կոմիտեի դիրքորոշումները, Դատարանը հանգել է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտում նշված գումարների հաշվարկը չի համապատասխանում սույն վարչական գործով Ընկերության կողմից ներկայացված հաշվապահական փաստաթղթերին և հաշվարկներին՝ ընդգծելով, որ *«(...) Կոմիտեի կողմից որևէ կերպ չմասնավորեցվեց, թե որ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի մասին է խոսքը: (...) [Կոմիտեի] կողմից չվկայակոչվեց որևէ հաշվապահական փաստաթուղթ՝ կապված կատարված հաշվարկների հետ, որով կհիմնավորվեին առաջադրված գումարները՝ նշելով միայն Ընկերության գլխավոր հաշվապահ Արմեն Մուրադյանի 17.05.2011 թվականի հայտարարությունը (...)»:* Հետազոտելով այդ հայտարարությունը՝ Դատարանը գտել է, որ դրանում նշված հաշվարկների և վիճարկվող վարչական ակտում նշված հաշվարկների միջև ևս առկա են հակասություններ, որոնք Կոմիտեի կողմից չեն պարզաբանվել: Բացի այդ, Դատարանի գնահատմամբ՝ Ընկերության գլխավոր հաշվապահ Արմեն Մուրադյանի 17.05.2011 թվականի հայտարարությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ Ընկերության նկատմամբ պարտավորություններ առաջադրելու համար, և այն պետք է համադրել սույն վարչական գործում առկա մյուս ապացույցների հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունները՝ Դատարանն իր 25.04.2014 թվականի վճռում հանգել է այն եզրակացության, որ սույն գործի նոր քննությամբ չի հիմնավորվել Ընկերության կողմից «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի խախտման փաստը, հետևաբար Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ստուգման ակտի 4–րդ կետը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասի իմաստով ոչ իրավաչափ է և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերաքննիչ դատարանի 05.11.2014 թվականի որոշմամբ Դատարանի 25.04.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Դատարանը, հարուցելով գործի նոր քննության վարույթ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում չի իրականացրել սահմանված ծավալով գործի լիարժեք նոր քննություն: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը սույն վարչական գործի նոր քննության ընթացքում խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5–րդ, 25–րդ, 27–րդ և 124–րդ հոդվածները՝ բավարարվելով միայն այն պատճառաբանությամբ, որ սույն վարչական գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում Ընկերության կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի պահանջները խախտելու փաստը: Մինչդեռ ըստ Վերաքննիչ դատարա–

նի՝ *«(...) փվյալ դեպքում սահմանված ծավալով գործի նոր քննություն իրականացնելիս Դատարանը պետք է մանրամասն վերլուծության ենթարկեր գործում առկա Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (...) ու դրանք (...) համադրելով գործում առկա մյուս ապացույցների հետ՝ (...) եզրակացություն աներ գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստերի (...) առկայության կամ բացակայության մասին, ինչը (...) Դատարանի կողմից չի կատարվել (...)»:* Բացի այդ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ «ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ սույն գործով կայացրած որոշմամբ նշված՝ «համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցի քննարկումը» Դատարանի կողմից չպետք է մեկնաբանվեր որպես դատավարության մասնակիցների հետ այդ հարցի քննարկման անհրաժեշտություն և եզրափակվեր այդ քննարկմամբ, այլ այդ հարցի քննարկման անհրաժեշտությունը Դատարանի մոտ պետք է առաջանար գործում առկա ապացույցների՝ Ընկերության կողմից ներկայացված, ըստ վերջինիս պնդման, վիճելի հարցին վերաբերող հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հետազոտման արդյունքում՝ դրանց վերլուծության նպատակով Դատարանի մոտ հատուկ գիտելիքներ պահանջող հարցեր ծագելու դեպքում, որոնց պարզաբանման համար էլ Դատարանը պետք է գար իր նախաձեռնությամբ համապատասխան փորձաքննությունը նշանակելու եզրահանգմանը, մինչդեռ տվյալ դեպքում, գործում առկա՝ վերը նշված ապացույցների գնահատման՝ դրանցից յուրաքանչյուրի մասով վերլուծության բացակայության պայմաններում, վճռում բացակայում է նաև Դատարանի այն եզրահանգումը, որ այդ նպատակով չեն ծագել այնպիսի հարցեր, որոնց պարզաբանման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ»: Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ *«(...) Դատարանը հետամուտ չի եղել սահմանված ծավալով գործի նոր քննության լիարժեք իրականացմանը, (...) չի գնահատել գործում առկա ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ մատնանշված ապացույցները, ըստ համապատասխան ժամանակահատվածների որևէ վերլուծության չի ենթարկել դրանցում պարունակվող տեղեկությունները, որի հետևանքով նոր միայն հնարավոր կլիներ հաստատված համարել կամ հերքել վիճարկվող ակտի 4-րդ (...) կետով արձանագրված (...) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները խախտելու կամ նման խախտում թույլ չտալու փաստը (...)»:*

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, 02.04.2013 թվականի որոշմամբ բեկանելով ՀՀ վարչական դատարանի 05.11.2012 թվականի վճիռը և գործն ուղարկելով նոր քննության, սահմանել է գործի նոր քննության ծավալ, որը հանգում է հետևյալին. ըստ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշման՝ գործի նոր քննության ընթացքում ստորադաս դատարանը պետք է պարզեր Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4-րդ կետում արձանագրված խախտման առկայության կամ բացակայության հարցը: Սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող այդ հարցը պարզելու նպատակով ստորադաս դատարանը պարտավոր էր՝

ա) գնահատել սույն գործով վիճարկվող վարչական ակտի 4-րդ կետում արձանագրված խախտման փաստի վիճարկմանը վերաբերող Ընկերության փաստարկները և ի հիմնավորումն դրանց ներկայացված վարչական գործում առկա ապացույցները՝ Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը.

բ) քննարկել համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանը սույն վարչական գործի նոր քննության ընթացքում պատշաճ կերպով հետևել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշման պահանջներին և գործի նոր քննությունն իրականացրել

է այդ որոշմամբ սահմանված ծավալի շրջանակներում (սահմաններում) հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վիճարկման հայցով ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության հարցը պարզելու համար դատարանը պարտավոր է անմիջականորեն գնահատել այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված և գործում եղած ապացույցները, ապա դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ լուծել վիճարկման հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը: Հետևաբար, եթե վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված և գործում եղած բոլոր ապացույցները հետազոտելուց հետո վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը:

Վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով,կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն *(տե՛ս, ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):*

Տվյալ դեպքում Դատարանը սույն վարչական գործի նոր քննության ընթացքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ առաջ քաշված՝ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը պարզաբանելու նպատակով նախ և առաջ հանգել է այն եզրակացության, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռը կրում է Կոմիտեն, որն էլ պարտավոր է ապացուցել Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4-րդ կետի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների առկայությունը: Մինչդեռ սույն գործի քննության ընթացքում Կոմիտեն

չի ներկայացրել բավարար ապացույցներ՝ ի հիմնավորումն իր կողմից ընդունված վարչական ակտի իրավաչափության: Այսինքն՝ Դատարանն իրավացիորեն եզրահանգել է, որ սույն գործի քննության ընթացքում Կոմիտեն չի ապացուցել Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4–րդ կետի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների առկայությունը, մասնավորապես՝ նշված վարչական ակտի վիճարկվող կետով Ընկերության նկատմամբ առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորության օրինականությունը և հիմնավորվածությունը: Այնուհետև Դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով սույն գործում առկա՝ Ընկերության կողմից ներկայացված գրավոր ապացույցները՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, եզրահանգել է, որ Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4–րդ կետում նշված գումարների հաշվարկը չի համապատասխանում այդ գրավոր ապացույցներում առկա հաշվարկներին, ինչի բացասական հետևանքները պետք է կրի Կոմիտեն:

Ինչ վերաբերում է սույն գործի նոր քննության ընթացքում համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցին, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանը, պահպանելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալը, պատշաճ կերպով հետամուտ է եղել նաև այդ հարցի քննարկմանը: Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 17.02.2014 թվականի դատական նիստում կողմերի հետ քննարկել է փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը, և Ընկերության ու Կոմիտեի ներկայացուցիչները հայտնել են Դատարանին, որ այդպիսի անհրաժեշտություն չեն տեսնում: Փաստորեն, Դատարանը սույն գործի նոր քննության ընթացքում կողմերի հետ քննարկել է համապատասխան փորձաքննություն նշանակելու հարցը և լսելով կողմերի կարծիքները՝ եզրահանգել է, որ սույն գործով փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը բացակայում է: Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցի քննարկումը Դատարանի կողմից չպետք է մեկնաբանվեր որպես դատավարության մասնակիցների հետ այդ հարցի քննարկման անհրաժեշտություն, այլ այդ հարցի քննարկման անհրաժեշտությունը պետք է առաջանար գործում առկա ապացույցների, Ընկերության կողմից ներկայացված վիճելի հարցին վերաբերող հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հետազոտման արդյունքում՝ դրանց վերլուծության նպատակով Դատարանի մոտ հատուկ գիտելիքներ պահանջող հարցեր ծագելու դեպքում: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա և Ընկերության կողմից ներկայացված հաշվառման փաստաթղթերի հետազոտության և դրանց վերլուծության արդյունքում եզրահանգում կատարելու համար ինքնին հատուկ գիտելիքներ չեն պահանջվում, իսկ վարչական մարմնի կողմից վարչական վարույթում ձեռք բերված ապացույցները սույն գործի քննության ընթացքում ներկայացված չլինելու պայմաններում բացակայում է սույն գործում առկա ապացույցների և վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների միջև որևէ համեմատական վերլուծություն իրականացնելու հնարավորությունը, ինչը կարող էր հատուկ գիտելիքներ պահանջել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանը, սույն գործի նոր քննության ընթացքում կողմերի հետ քննարկելով համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը և հաշվի առնելով այդ հարցի շուրջ կողմերի արտահայտած կարծիքները, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով սույն գործում առկա ապացույցները, իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ սույն գործով համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը ոչ միայն սույն գործի նոր քննությունն իրականացրել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 թվականի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակներում, այլ նաև սույն գործի նոր քննության արդյունքում իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտը՝ 4–րդ կետի մասով, ոչ իրավաչափ

վարչական ակտ է և մասամբ ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ սույն գործի նոր քննությամբ չի հիմնավորվել Ընկերության կողմից «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտման փաստը:

Վճռաբեկ դատարանի՝ վերը նշված եզրահանգման համար հիմք է հանդիսանում հետևյալը.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ, պետք է նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք համապատասխան վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու այդ ստուգման ակտը: Մինչդեռ, տվյալ դեպքում, Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտի 4-րդ կետը չի պարունակում նշում այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել ԱԱՀ-ի գծով Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու համար: Մասնավորապես՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտում բացակայում են ստուգմամբ արձանագրված՝ Ընկերության կողմից «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտման փաստը հաստատող համապատասխան հիմնավորումները. այդ ակտից պարզ չէ, թե ինչ փաստական հանգամանքների վրա է հիմնվել Տեսչությունը թիվ 1013952 ակտի 4-րդ կետով ԱԱՀ-ի գծով Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու համար: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը մասնակիորեն՝ 4-րդ կետի մասով, ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ և այդ հիմքով ենթակա է անվավեր ճանաչման:

Այսպիսով, վերոգրյալ փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իր 05.11.2014 թվականի որոշմամբ անհիմն կերպով է հանգել այն եզրակացության, որ Դատարանը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 որոշմամբ սահմանված սույն գործի նոր քննության ծավալին համապատասխան չի իրականացրել սույն գործի լիարժեք նոր քննություն: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իր 05.11.2014 թվականի որոշմամբ հաշվի չի առել, որ տվյալ պարագայում Դատարանի 25.04.2014 թվականի վճիռը բեկանելու և սույն գործը կրկին նոր քննության ուղարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Դատարանը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.04.2013 որոշմամբ սահմանված ծավալի շրջանակներում պատշաճ կերպով կատարել է սույն գործի նոր քննություն և իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Տեսչության 27.09.2011 թվականի թիվ 1013952 ակտը մասնակիորեն՝ 4-րդ կետի մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ոչ իրավաչափ վարչական ակտ է, և պետք է ճանաչվի անվավեր:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.03.2015 թվականի որոշմամբ հետաձգվել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարը՝ 20.000 ՀՀ դրամը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է բռնագանձման Նախարարությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.11.2014 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 25.04.2014 թվականի վճռին:

2. ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1109/02/13
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/1109/02/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հոկտեմբերի 21-ին,

քննարկելով ըստ հայցի Անուշ Մարալյանի ընդդեմ Էմին Գեղամյանի և Ստյոպա Մանուկյանի՝ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու և գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու, ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.03.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Անուշ Մարալյանի ներկայացուցիչ Դիանա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անուշ Մարալյանը պահանջել է մասնակի՝ 1/2 մասով, անվավեր ճանաչել Էմին Գեղամյանի և Ստյոպա Մանուկյանի միջև 29.04.2013 թվականին կնքված <<INFINITI QX4 3.3>> մակնիշի 16 UL 920 պետհամարանիշի ավտոմեքենայի (այսուհետ՝ Ավտոմեքենա) առուվաճառքի պայմանագիրը և կիրառել անվավերության հետևանքներ՝ Ավտոմեքենայի 1/2 մասի նկատմամբ ճանաչել Անուշ Մարալյանի սեփականության իրավունքը և հրապարակային սակարկություններով վաճառել այն՝ ստացված գումարը հե-

տագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Դավթյան) (այսուհետ՝ Դատարան) 12.02.2015 թվականի որոշմամբ ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ Ստյոպա Սանուկյանի և Էմին Գեղամյանի միջնորդությունը բավարարվել է և դատավոր Ա. Դավթյանի կողմից հայտնվել է ինքնաբացարկ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.03.2015 թվականի որոշմամբ Դատարանի 12.02.2015 թվականի որոշման դեմ Անուշ Մարալյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անուշ Մարալյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140 [1]-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140[1]-րդ հոդվածը հստակ սահմանել է, որ բողոքարկման ենթակա են այն միջանկյալ դատական ակտերը, որոնց բողոքարկման հնարավորություն նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով: Տվյալ դեպքում ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ դատավորիինքնաբացարկի մասին որոշումը ենթակա է բողոքարկման: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը, իր 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-918 որոշմամբ անդրադառնալով ինքնաբացարկի որոշումների բողոքարկման իրավական հնարավորության խնդրին, նույնպես արձանագրել է, որՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի հիմքերով դատավորիինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.03.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում դատավորի ինքնաբացարկ հայտնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության մասին Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք բողոքարկման իրավունքը դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչներից մեկն է,

2. արդյո՞ք դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140[1]-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով: Ընդհանուր իրավասության դատարանի բողոքն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն նույն օրենսգրքով **և այլ օրենքներով** նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, **Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով** և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված **հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել:** Ինքնաբացարկը պետք է լինի պատճառաբանված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան երեք օրով: Նույն հիմքով հայտնված ինքնաբացարկի միջնորդությունը չի քննարկվում: Հայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի դեպքում դատական նիստը հայտարարվում է փակված: Դատավորի ինքնաբացարկի դեպքում դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով: Ինքնաբացարկի արդյունքում փոխարինված դատավորը կամ նորացված դատական կազմը գործի քննությունն իրականացնում է սկզբից:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել:**

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին:

Ամդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմ-

նական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 27.11.2008 թվականի թիվ ՍԴՈ–780 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՈ–1037 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի 1–ին մասով և Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերը նշված իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ եզրակացրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտը իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը *(տե՛ս, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունն ընդդեմ «Գրեյթ Վելլի» ՍՊԸ–ի թիվ ՎԴ/4267/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.03.2015 թվականի որոշումը):*

ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ–918 որոշ–

մամբ արձանագրել է, որ քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորման բնագավառում դատավորի ինքնաբացարկի ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21–րդ, 22–րդ, 23–րդ, ինչպես նաև 24–րդ հոդվածների դրույթներով և, միաժամանակ, այդ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածով, որով սահմանված են դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը: Այդ հոդվածների նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ.

– դատավորի ինքնաբացարկի հիմք կարող են լինել այնպիսի փաստերը և հանգամանքները, որոնք ողջամիտ կասկած կարող են հարուցել տվյալ գործով դատավորի անկողմնակալության հարցում (ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին պարբերություն),

– նման հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել,

– ի թիվս այլոց, դատավորի ինքնաբացարկ հայտնելու կոնկրետ հիմքերը հստակեցված են ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին, 2–րդ, 3–րդ և 4–րդ կետերում,

– ինքնաբացարկ հայտնելիս դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, կարող է կողմերին առաջարկել իր բացակայությամբ քննել ինքնաբացարկի անտեսման հարցը,

– դատավորի ինքնաբացարկը պետք է լինի պատճառաբանված,

– ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի հիմքերով դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել (ՀՀ դատական օրենսգրքի 91–րդ հոդվածի 4–րդ մաս):

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «... քաղաքացիադատավարական հարաբերություններում դատավորի ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում օրենսդրորեն ամրագրվել են հետևյալ մոտեցումները.

– ինքնաբացարկի վերաբերյալ որոշումը դիտարկվում է որպես գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտ,

– դատավորի ինքնաբացարկի մասին որոշման կայացումը ոչ թե դատավորի հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը,

– դատավորի՝ իր անմիջական պարտականության կատարումից հնարավոր խուսափելը բացառելու իրավական միջոց է հանդիսանում նրա կողմից կայացված ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորությունը,

– ինքնաբացարկի հանգամանքների օբյեկտիվ բացահայտման և դատարանի իրավազորության երաշխավորման կարևոր նախադրյալ է դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ գործին մասնակցող անձանց կողմից միջնորդություն ներկայացնելու ինստիտուտը,

– դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական դատական բողոքարկման կարգ ու պայմաններ (ժամկետներ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսել՝ չբացառելով նման բողոքի քննությունը գործով կայացրած դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Միևնույն ժամանակ գնահատելով վերը նշված իրավակարգավորումների ազդեցությունն արդար և անկողմնակալ դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացման երաշխիքների վրա՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ–918 որոշման մեջ արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23–րդ հոդվածի 3–րդ կետը սահմանում է, որ ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին և նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է դատավորի ինքնաբացարկին, որը նա պարտավոր է իրականացնել օբյեկտիվ հիմքերի առ–

կայության դեպքում, ինքնաբացարկի միջնորդության մերժումը չի կարող բողոքարկման առարկա չդառնալ: Ավելին, միջազգային փորձի և տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ **ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կարգի և ժամկետների որոշումն օրենսդրի հայեցողության հարցն է:** Որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը նույնպես ապահովում է դատարանի իրավազորության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը:

Ներկայացված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը և, միաժամանակ, ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ **ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում և** արձանագրել է, որ դա բխում է նաև «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» ԵԽ նախարարների կոմիտեի թիվ R 95 (5) հանձնարարականի դրույթներից (հոդված 3):

Այսպիսով, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ ինքնաբացարկի մասին դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավորի ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորության առկայության անհրաժեշտությունը կոչված է երաշխավորելու արդար դատաքննության իրավունքի իրացումը բոլոր այն դեպքերում, երբ դատավարության կողմը ողջամիտ կասկածներ ունի գործը քննող դատավորի կողմից իր ինքնաբացարկի հարցի լուծման իրավաչափության հարցում: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինքնաբացարկի մասին դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված կանոններով:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ վերը նշված մոտեցումն ակնհայտորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետից և 140[1]-րդ հոդվածի 2-րդ կետի իրավական բովանդակության վերլուծությունից, համաձայն որոնց՝ ՀՀ-ում քաղաքացիական դատավարության կարգը սահմանվում է թե՛ նույն օրենսգրքով, թե՛ **Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով,** ինչպես նաև դատարանի գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **թե՛ նույն օրենսգրքով, թե՛ այլ օրենքներով նախատեսված դեպքերում**: Այսինքն՝ որպես վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման անհրաժեշտ նախադրյալ՝ հանդես է գալիս այն հանգամանքը, որ կարելի է բողոքարկել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով (այլ կերպ՝ ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այնպես էլ օրենսդրական այլ ակտերով) նախատեսված՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը. հակառակ պարագայում՝ վե-

րաքննությունը բացառվում է: Ըստ այդմ՝ նույնիսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով անմիջականորեն նախատեսված չլինելու պայմաններում **ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի** կիրառման արդյունքում ակնհայտ է դառնում, որ դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը, որպես ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության չլուծող դատական ակտ, կարող է ենթակա լինել վերաքննության կարգով բողոքարկման:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ օրենսդրական կարգավորումները, դրանց շուրջ կատարված իրավական վերլուծությունները և նպատակ ունենալով դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

1. դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան կայացված որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով.

2. դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշման բողոքարկումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման կանոններով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործը հարուցվել է Ա.Մարալյանի հայցի հիման վրա **(հատոր 1-ին, գ.թ. 2-8):**

Ստյոպա Մանուկյանի և Էմին Գեղամյանի կողմից 11.02.2015 թվականին միջնորդություն է ներկայացվել Դատարան՝ ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ **(հատոր 1-ին, գ.թ. 70-73):**

Դատարանն իր 12.02.2015 թվականի որոշմամբ միջնորդությունը բավարարել է և ինքնաբացարկ է հայտնել **(հատոր 2-րդ, գ.թ. 81-82):**

Դատարանի 12.02.2015 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Ա.Մարալյանը **(հատոր 2-րդ, գ.թ. 89-93):**

Վերաքննիչ դատարանի 03.03.2015 թվականի որոշմամբ Դատարանի 12.02.2015 թվականի «Դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու մասին» որոշման դեմ Ա.Մարալյանի բերած վերաքննիչ բողոք վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված հիմքով, այն է՝ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման: Իր այդ դիրքորոշումը Վերաքննիչ դատարանը, մասնավորապես, պատճառաբանել է հետևյալ կերպ. *«... դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու մասին որոշումը բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ դրույթ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ գլխով նախատեսված չէ»:* **(հատոր 2-րդ, գ.թ. 97):**

Ինքնաբացարկի վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման հնարավորության և դրա իրացման իրավական (օրենսդրական) կառուցակարգի մասին վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու ՀՀ վճռաբեկ դատարանի առաքելության պատշաճ իրացման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանի 12.02.2015 թվականի «Դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու մասին» որոշումը չի կարող համարվել բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ: Սույն գործով դատավարության մասնակիցները պետք է հնարավորություն ունենան վիճարկելու այդ որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյանում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքա-

ցիական դատարանում, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է, և դատավորի ինքնաբացարկի մասին դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն կզրկի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքից: Այլ կերպ ասած՝ սույն գործով դատավարության մասնակցին՝ Ասուշ Սարալյանին, չի կարելի զրկել Դատարանի 12.02.2015 թվականի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ասուշ Սարալյանն ունի Դատարանի 12.02.2015 թվականի որոշումը Վերաքննիչ դատարանում բողոքարկելու իրավունք, որը վերջինս արդեն իրացրել է՝ Վերաքննիչ դատարան ներկայացնելով համապատասխան վերաքննիչ բողոք:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքաբերը չի բողոքարկել այնպիսի դատական ակտ, որը ենթակա չէ վերաքննության կարգով բողոքարկման, այլ հակառակը՝ տվյալ անձը, իրացնելով կայացված դատական ակտի օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու իր իրավական հնարավորությունը, օրենքով սահմանված կարգով ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, սահմանափակել է բողոք բերած անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը՝ վերջինիս զրկելով իր վերաքննության իրավունքի իրացման հնարավորությունից: Ըստ այդմ՝ տվյալ դեպքում առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված հիմքը, և Վերաքննիչ դատարանի 03.03.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241[1]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.03.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1017/02/14
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Կ. Հակոբյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/1017/02/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի մարտի 11-ին

քննարկելով <<Ռեքվիեմ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գ. Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.08.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ <<Մեգարոն>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ վարձակալության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ճանաչել իր ենթավարձակալության իրավունքը Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի թիվ 46Ա հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքների նկատմամբ:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բարսեղյան) (այսուհետ՝ Դատարան) 02.07.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.08.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է և սահմանվել է ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ և 10-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ և 6-րդ հոդվածները, 210-րդ հոդվածի 4-րդ կետը, 213-րդ հոդվածը, չի կիրառել <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի <<դ>> կետը և 31-րդ հոդվածի <<գ>> կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի կանոնը պահպանելու համար անհրաժեշտ է, որպեսզի բողոքին կցված լինի կա՛մ պետական տուրքը վճարելու մասին ապացույցը, կա՛մ պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունը, քանի որ դրանցից մեկի առկայությունն ինքնին բացառում է մյուսի անհրաժեշտությունը: Հետևաբար պետական տուրքը վճարելու մասին ապացույցի կամ համապատասխան միջնորդության առկայությունն արդեն իսկ բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը կատարված լինելու համար, ինչն էլ իր հերթին բացառում է նույն օրենսգրքի 213-րդ հոդվածով սահմանված վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը վերադարձրել է ներկայացված վերաքննիչ բողոքը՝ առանց մերժելու կամ բավարարելու բողոք բերած անձի՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է <<բեկանել Վերաքննիչ դատարանի 14.08.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Ընկերության վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը՝ բավարարել>>:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) արդյո՞ք Վերաքննիչ դատարանն իրավասու է վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ իր որոշման եզրափակիչ մասում որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոք բերած անձի՝ <<Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին>> միջնորդությանը և որևէ եզրահանգում չի արել այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ.

2) արդյո՞ք բողոք բերած անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն այն պարագայում, երբ դատական ակտը բողոքարկել է միայն դատական ծախսերի մասով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը, որով ըստ էության չի լուծվում գործը, կայացվում է որոշման ձևով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, որոշումը կայացնելու ամսաթիվը, վեճի առարկան.

2) գործին մասնակցող անձանց անունը (անվանումը).

3) հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում.

4) շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքներ և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ.

5) եզրահանգումը քննարկվող հարցով.

6) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարված չլինելու հանգամանքը և պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության բացակայությունը: Վերաքննիչ բողոքի վերադարձման հիմք է նաև պետական տուրքը վճարված չլինելու դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության մերժումը Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքին կցված է կամ բողոքում ներառված է պետական տուրքի վճարման արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն, ապա Վերաքննիչ դատարանը **պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը և դրա քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը Դատարանի 02.07.2014 թվականի վճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք՝ միաժամանակ միջնորդելով հետաձգել պետական տուրքի վճարումն այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունը ֆինանսական և այլ խնդիրների պատճառով հնարավորություն չունի այն վճարել **(գ.թ. 65)**:

Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը, որոշման պատճառաբանական մասում նշել է, որ բողոք բերած անձը չի ներկայացրել Ընկերության գույքային դրության վերաբերյալ որևէ ապացույց, հետևաբար բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 14.08.2014 թվակա-

նի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշման մեջ բացակայում է որևէ նշում Ընկերության վերաքննիչ բողոքին կից ներկայացված պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի 14.08.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշումը չի պարունակում որևէ եզրահանգում վերաքննիչ բողոքին կից ներկայացված միջնորդությունը մերժելու կամ բավարարելու՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում թեև անդրադարձել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությանը, սակայն այդ միջնորդության քննարկման արդյունքում որևէ որոշում չի կայացրել միջնորդությունը մերժելու կամ բավարարելու՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, ինչն անձի դատական պաշտպանության իրավունքի խախտում է: Մասնավորապես՝ շահագրգիռ անձը, իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմանը ներկայացվող պարտադիր պահանջ է քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրահանգումը, հետևաբար այդպիսի եզրահանգման բացակայության պայմաններում բացակայում է նաև դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բացակայել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն **իրավունք ունեն** դիմել համապատասխան պետական մարմիններ՝ **պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:**

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի <<ա>> կետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող է սահմանվել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատում:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության <<գ>> կետի համաձայն՝առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ **ելնելով կողմերի գույքային դրությունից**:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր որոշումներում անդրադառնալով տվյալ իրավական խնդրին, նշել է, որ <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության <<գ>> կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ելնելով կողմերի գույքային դրությունից, և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի

6–րդ հոդվածի 1–ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև *(տե՛ս, Արմենակ և Գուլյա Սահակյանների հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդի գումարը փոխհատուցելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի թիվ 3-734(ՎԴ) որոշումը, <<Պայքար և Հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 վճիռը, կետ 44)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 22–րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից: Միաժամանակ, <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 31–րդ հոդվածը նման արտոնություն կիրառելու հնարավորություն ընձեռել է դատարաններին կամ դատավորներին այն դեպքերում, երբ թեև բացակայում են նույն օրենքի 22–րդ հոդվածով սահմանված հիմքերը, սակայն ելնելով կողմերի գույքային դրությունից՝ անհրաժեշտ է սահմանել նման արտոնություն՝ երաշխավորելու անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը *(տե՛ս, Շամամ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառումը պետք է հիմնվի դատարանի ներքին համոզման վրա (սուբյեկտիվ չափորոշիչ), որը, սակայն, ձևավորվում է ապացույցների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի հետազոտման վրա (օբյեկտիվ չափորոշիչ): Բացի այդ, ներքին համոզման հիման վրա ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի բաղկացուցիչ մաս, չպետք է լինի կամայական, այլ պետք է ուղղված լինի քաղաքացիական դատավարության նպատակների իրականացմանը, որոնցից ամենահիմնականը՝ իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է *(տե՛ս, <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ-ն ընդդեմ Հասմիկ, Ռոբերտ, Անահիտ Ափինյանների, Սիրանուշ Ծատինյանի թիվ ԵԿԴ/0536/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.06.2014 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության առկայության պայմաններում դատարանները պետք է նշված միջնորդությունները քննության առնեն և լուծեն՝ հաշվի առնելով նաև գործի հանգամանքները: Այսպես, օրինակ, օրենսդիրը, ամրագրելով հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք վճարելու պարտականություն, տարբերակված մոտեցում է դրսևորել պետական տուրքի չափի հարցում՝ հիմք ընդունելով վիճելի իրավահարաբերության բնույթը՝ գույքային կամ ոչ գույքային: Դատարանները միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրությունը գնահատելիս որպես ուղղորդող չափանիշ հիմք են ընդունում նաև վճարման ենթակա պետական տուրքի չափը, հետևաբար վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելը յուրաքանչյուր դեպքում օբյեկտիվորեն անհրաժեշտ է կամ միջնորդություն հարուցած անձի գույքային դրության վերաբերյալ փաստարկները կարող են հիմնավորվել քննվող գործի շրջանակներում ձեռնարկված դատավարական միջոցներով (օրինակ՝ որպես հայցի ապահովման միջոց՝ արգելանք է դրվել անձի դրամական միջոցների վրա):

Վերոգրյալից հետևում է, որ միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրու-

թյան գնահատումը չի կարող իրականացվել՝ անտեսելով գործի հանգամանքները, հետևաբար դատարանները նման միջնորդություններ քննության առնելիս պետք է ուսումնասիրեն նաև համապատասխանաբար հայցադիմումները, վերաքննիչ և վճռաբեկ բողոքները:

Սույն գործով Ընկերության կողմից 01.08.2014 թվականի ներկայացված վերաքննիչ բողոքի <<Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը>> բաժնում նշվել է. <<<<ՌեՔվիեմ>> ՍՊԸ-ն իր վարձակալության իրավունքը ճանաչելու պահանջի մասին հայցադիմում դատարան չի ներկայացրել: <<ՌեՔվիեմ>> ՍՊԸ-ն դատարանում գործը վարելու լիազորագիր Կարինե Մարգարյանին երբևէ չի տվել, առավել ևս՝ չի լիազորել ստորագրել հայցադիմումը: Դատարանը հայցվոր <<ՌեՔվիեմ>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով չի ծանուցել գործի քննության վայրի և ժամանակի մասին>>: Միաժամանակ, վերաքննիչ բողոքում բողոք բերած անձը նշել է, որ Դատարանի կողմից հայցադիմումը չվերադարձնելու արդյունքում Ընկերությունը կրելու է պետական տուրքի վճարման պարտականություն **(գ.թ. 63-64)**:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բողոք բերած անձի փաստարկներին, գտնում է, որ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվել է հայց չհարուցելու պայմաններում անհիմն կերպով պետական տուրքի պարտավորություն կրելու հիմքով, այսինքն՝ դատական ծախսերի մասով:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքի հասկացությունը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում նույն օրենքի **7-րդ հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից** օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը պետական տուրքի գանձման օբյեկտ, այսինքն՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված **գործողություն է** դիտարկում, մասնավորապես, դատարան տրվող հայցադիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների **քննությունը:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.05.2010 թվականի թիվ ՍԴՈ-890 որոշմամբ անդրադառնալով վկայակոչված իրավանորմերին՝ նշել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքն առանձնացնում է գույքային պահանջի և ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքերը՝ դրանց համար սահմանելով հաշվարկման միմյանցից էապես տարբերվող կարգ, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է այդ պահանջների բնույթով և առանձնահատկություններով: Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքը համամասնական տուրք է, և հաշվարկվում է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող տուրքը պարզ տուրք է, և գանձվում է հաստատագրված գումարի չափով: Եթե հայցադիմումը ներառում է գույքային և ոչ գույքային պահանջներ, ապա օրենքը, այդ պահանջներից յուրաքանչյուրի քննությունը դիտարկելով որպես օրենքի իմաստով ինքնուրույն և առանձին գործողություն, պահանջում է, որ պետական տուրք վճարվի միաժամանակ և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջների

առնչությամբ (հոդվ. 32-րդ, մաս 4-րդ)՝ այդպիսով հետապնդելով իրավաբանորեն հիմնավոր փաստարկված նպատակ:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի իրավակարգավորումներին, գտնում է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույքային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար, այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը, օրինակ՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում:

Վերը քննարկված իրավիճակը կարող է արտահայտվել նաև այն դեպքում, երբ անձը դատական ակտը բողոքարկում է միայն դատական ծախսերի մասով: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի քննությանը և լուծմանը, ընդհակառակը՝ շահագրգիռ անձը տվյալ դեպքում վիճարկում է այդ պահանջի լուծման արդյունքում բաշխված դատական ծախսի իրավաչափության հարցը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում: Ընդ որում, դատական պրակտիկան զարգացել է հենց նշված ուղղությամբ, որպիսի հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի <<ՀՀ-ում դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին>> մասին 29.01.2013 թվականի թիվ 129 որոշման մեջ: Համաձայն նշված որոշման 10-րդ կետի՝ եթե բողոքարկվում է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով, ապա ներկայացված բողոքի համար պետական տուրք չի վճարվում:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդությանն անդրադառնալով միայն որոշման պատճառաբանական մասում, որևէ եզրահանգում չկատարելով միջնորդության վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում, միաժամանակ անտեսել է նաև այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը բողոքարկվել է դատական ծախսերի մասով, հետևաբար բողոք բերած անձը վերը շարադրված պատճառաբանությունների հիմքով ազատված է պետական տուրքի վճարումից, որպիսի պայմաններում բացակայում է նաև նման միջնորդություն ներկայացնելու և այն քննության առնելու անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից չի ապահովվել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ խախտելով Ընկերության՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241[1]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.08.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/8923/05/11
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/8923/05/11**
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հունվարի 14–ին
քննարկելով ըստ հայցի ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Գայանե Սողոմոնյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.05.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Գայանե Սողոմոնյանի ներկայացուցիչ Սողոմոն Թրաշյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Գայանե Սողոմոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 26.12.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.05.2014 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք բերելու դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բողոք բերելու իրավունքը վերականգնելու մասին Գայանե Սողոմոնյանի ներկայացուցիչ Սողոմոն Թրաշյանի միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գայանե Սողոմոնյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի 26.12.2013 թվականի վճիռը Գայանե Սողոմոնյանին չի ուղարկվել և վերջինս վերաքննիչ բողոքը սահմանված մեկամսյա ժամկետում ներկայացնելու հնարավորություն չի ունեցել, քանի որ վճռի մասին տեղեկացել է Տեսչության աշխատակցից միայն 2014 թվականի ապրիլին, որից հետո կարողացել է փաստաբան Ներսես Հարությունյանից ստանալ վճիռը և դիմել այլ փաստաբանի՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.05.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածը, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է սփորև ներկայացված պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R (95) 5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով *(տե՛ս, Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգատով ՄԻԵԴ 28.05.1985 թվականի վճիռը, պարբ. 57):*

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի *(տե՛ս, Սփարբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93գանգատով ՄԻԵԴ 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51,55):*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը՝ բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո գործն ըստ էության լուծող դատական ակտը հանձնվում է դատավարության մասնակիցներին: Դատավարության մասնակիցներից որևէ մեկի ներկա չլինելու դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինակը հրապարակման կամ դրան հաջորդող օրն ուղարկվում է նրան:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարում նշել, որ բողոք բերող անձը որպես բողոքի իրավական հիմք նշել է 07.01.2014 թվականից գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասը, սակայն նկատի ունենալով, որ Դատարանի վճիռը կայացվել և հրապարակվել է 26.12.2013 թվականին, Վճռաբեկ դատարանն անդրադառնում է դատական ակտի կայացման պահին գործող համապատասխան իրավանորմերի վերլուծությանը:

Գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության, գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, **այն մասնակիցներին ուղարկելու**, առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման վերաբերյալ լրացուցիչ դատական ակտի նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: **Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:**

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքը դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պետք է իրականացնի՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի և այլոց թիվ ԱՐԱԴ/0716/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ գործն ըստ էության լուծող դատական ակտը գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ ՀՀ դատավարական օրենսդրության իրավակարգավորումներով սահմանված է վճռի (գործն ըստ էության լուծող դատական ակտի) հրապարակմանը գործին մասնակցող անձանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը վերջինիս ուղարկելու դատարանի պարտականությունը: Ընդ որում, օրենսդիրը դատական ակտը գործին մասնակցող անձի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ վերջինիս ներկայացուցչին ուղարկելու հանգամանքը չի նախատեսել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության այլընտրանք, հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելը դատարանի հայեցողությունն է, սակայն այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության պատշաճ կատարում, եթե գործին մասնակցող անձը նման միջնորդությամբ չի դիմել դատարան:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, այլ ուղղված է անձի՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովմանը: Ակնը կարող է լիարժեք իրականացնել վերաքննիչ բողոք բերելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ ծանոթ է ստորադաս դատարանի կողմից իր իրավունքների (պարտականությունների) կամ օրինական շահերի վերաբերյալ կայացված դատական ակտին և դրա բովանդակությանը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով Գայանե Սողոմոնյանի միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բողոք բերելու իրավունքը վերականգնելու մասին, պատճառաբանել է, որ բողոք ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետն իրենից անկախ պատճառներով բաց թողնելու բողոքաբերի փաստարկն առ այն, որ վերջինս Դատարանի 26.12.2013 թվականի վճռի մասին տեղեկացված չի եղել և իր ներկայացուցիչ Ներսես Հարությունյանից վճիռը ստացել է միայն 2014 թվականի ապրիլին, ծանրակշիռ ու հիմնավոր չէ և չի կարող հիմք հանդիսանալ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու համար, քանի որ գործով կայացրած 26.12.2013 թվականի վճիռը փոստային առաքմամբ ուղարկվել է Ներսես Հարությունյանին և վերջինիս կողմից այն ստացվել է 10.01.2014 թվականին, իսկ գործում բացակայում է Գայանե Սողոմոնյանի հայտարարությունը Ներսես Հարությունյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչությունը, հայցադիմում ներկայացնելով դատարան, որպես Գայանե Սողոմոնյանի հասցե՝ նշել է Երևանի Բաղրամյան թիվ 1, 56-րդ շենք: Գայանե Սողոմոնյանին նշված հասցեով ուղարկված դատական ծանուցագրերը փոստային ծառայությունից հետ են վերադարձվել «անհայտ» գրառմամբ **(գ.թ. 22-րդ, 28-րդ):** Գայանե Սողոմոնյանի գտնվելու վայրն անհայտ լինելու պատճառով Դատարանը 28.06.2012 թվականի որոշմամբ հայտարարել է Գայանե Սողոմոնյանի և նրա գույքի հետախուզում: 05.12.2012 թվականին Գայանե Սողոմոնյանը դիմում է ներկայացրել Դատարան **(գ.թ. 44-րդ),** որով հայտնել է, որ բնակվում է Երևանի Եղբայրության 24 բնակարան թիվ 14 հասցեում, **սակայն Դատարանը դատական նիստերի ժամանակի և վայրի մասին շարունակել է վերջինիս ծանուցել Երևանի Բաղրամյան թիվ 1, 56-րդ շենք հասցեով (գ.թ. 69-րդ, 81-րդ)՝** միաժամանակ ծանուցագրեր ուղարկելով նաև վերջինիս ներկայացուցիչ Ներսես Հարությունյանին: Դատարանը 26.12.2013 թվականին վճիռը հրապարակելուց հետո ևս վճռի օրինակն ուղարկել է Ներսես Հարությունյանին, իսկ Դատարանի 26.12.2013 թվականի վճիռը Գայանե Սողոմոնյանին հրապարակման կամ առնվազն դրա հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգքի 112-րդ հոդվածի ուժով պարտավոր էր կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի պահանջը՝ վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով **գործին մասնակցած անձանց** ուղարկելու վերաբերյալ: Սույն գործով գործին մասնակցած անձ (գործի քննության պահին գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատավարության մասնակից) է հանդիսանում Գայանե Սողոմոնյանը, որին վճռի օրինակը չի ուղարկվել, ինչի հետևանքով էլ վերջինս զրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման հնարավորությունից, որպիսի հանգամանքը, սակայն, անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով, սահմանափակել է բողոք բերած անձի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.05.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/7268/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/7268/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 15-ին

քննարկելով ըստ հայցի Հովհաննես Չամսարյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության <<ճանապարհային ոստիկանություն>> ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն)՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.02.2015 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշման դեմ Հովհաննես Չամսարյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ Հովհաննես Չամսարյանը պահանջել է Ոստիկանության 31.12.2013 թվականի թիվ ԱԷ 643088 վարչական տույժ նշանակելու մասին որոշումը (այսուհետ՝ Վարչական ակտ) ճանաչել անվավեր, միաժամանակ միջնորդել է հարգելի համարել ու վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետը:

Դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) 24.12.2014 թվականի որոշմամբ մերժվել են բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.02.2015 թվականի որոշմամբ Հովհաննես Չամսարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի «Բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 24.12.2014 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հովհաննես Չամսարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 37-րդ հոդվածները և 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ հայցվորի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի, 19-րդ հոդվածով երաշխավորված՝ գործի արդարացի քննության իրավունքները, այլև ՀՀ Սահմանադրության 1-ին և 6-րդ հոդվածներով երաշխավորված՝օրենքի որոշակիության սկզբունքը: Վերաքննիչ դատարանն առանց հետազոտելու գործում եղած ապացույցները հաստատված է համարել մի փաստ, որի ապացուցումը պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքներ. մասնավորապես թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը հաստատված են համարել, որ 31.12.2013 թվականի թիվ ԱԷ 643088 վարչական տույժ նշանակելու մասին որոշան մեջ առկա ստորագրությունները պատկանում են իրեն: Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելը մերժելու վերաբերյալ Դատարանի դիրքորոշմանը, չի պարզել, թե արդյոք առկա են բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար հիմնավոր պատճառներ: Այնինչ վարչական ակտի վրա առկա ստորագրություններն իրենը չեն, և վարչական ակտի մասին ինքը տեղեկացել է 28.12.2014 թվականին՝ կատարողական վարույթի նյութերին ծանոթանալու արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա պնդելով, որ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ բողոք բերած անձը պահանջել է <<վերացնել թիվ ՎԴ/7268/05/14 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 27.02.2015 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը և կայացնել նոր դատական ակտ>>:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ վիճարկման հայցադիմումի վարույթ ընդունելու փուլում վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու վերաբերյալ փաստը վիճելի լինելու դեպքում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդության բավարարման իրավական հնարավորության մասին Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

1. վիճարկման հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու վերաբերյալ փաստը հաստատելու իրավական հնարավորության բացակայության պատճառով հայցադիմումի ընդունումը մերժելու միջոցով դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումն արդյո՞ք համապատեղելի է անձի դատական պաշտպանության իրավունքի հետ,

2. վիճարկվող վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու վերաբերյալ փաստը վիճելի լինելու հետևանքով այդ ակտի ուժի մեջ մտնելու օրը որոշելու և դատավարական ժամկետը հաշվարկելու անհնարինության պարագայում արդյո՞ք առկա է ժամկետը

վերականգնելու միջնորդություն ներկայացնելու ու այն բավարարելու անհրաժեշտություն և հիմք:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշմամբ նշել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն

իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով *(տե՛ս, Աշինգդենն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգատով ՄԻԵԴ 28.05.1985 թվականի վճիռը, պարբ. 57):*

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի *(տե՛ս, Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգատով ՄԻԵԴ 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55):*

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի՝ դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Ազգային-դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ 12.05.2004թ. R(2004)6 հանձնարարականում սահմանվել է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների հնարավոր խախտման վերաբերյալ հայցերի քննության առարկա դարձնելու չափանիշները. Մասնավորապես՝

– անդամ երկրները պետք է արդյունավետ ընթացակարգեր նախատեսեն ըստ էության քննության առնելու և լուծում տալու մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներին,

– բողոքների ընդունման և քննության ընթացակարգերը պետք է դիտարկվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում,

– ներպետական համակարգերում դատական բողոքները պետք է հանգամանալից ու հիմնավոր քննության առարկա դառնան,

– Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանությունն ազգային-իրավական համակարգում պետք է արդյունավետ ձևով երաշխավորված լինի և այլն:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային

պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65–րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Նույն օրենսգրքի 66–րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Հայց ներկայացնելու ժամկետները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72–րդ հոդվածով, որի 1–ին մասի 1–ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Վիճարկման հայցադիմումը դատարան ներկայացնելու դատավարական ժամկետ սահմանելով՝ օրենսդիրը թեև նախատեսել է դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմք, այդուհանդերձ այդ ժամկետները բաց թողնված լինելու կամ չլինելու հարցի գնահատումը թողել է դատարանի հայեցողությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները սահմանելու հետ միաժամանակ օրենսդիրը սահմանել է ինչպես դատավարական ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքները, այնպես էլ այդ ժամկետները վերականգնելու ինստիտուտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերը նշված իրավակարգավորումները կիրառելի են այն պարագայում, երբ վիճարկման հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում վիճարկվող վարչական ակտի մասին անձի իրազեկված լինելու փաստն անվիճելի է: Մինչդեռ այն դեպքերում, երբ անձը վիճարկում է վարչական ակտն առձեռն ստորագրությամբ ստանալու փաստը, ինչի պարզումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտական գիտելիքների օգնությամբ, մասնավորապես՝ փորձաքննության կատարմամբ, վերը նշված իրավակարգավորումները կիրառելի չեն:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստո-

րագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Ակնհայտ է, որ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահին օրենսդիրը պայմանավորել է այդ ակտի մասին վարչական վարույթի մասնակիցների իրազեկման հանգամանքով, ինչը նշանակում է, որ ակտի հասցեատիրոջ համար ևս վարչական ակտը կարող է ուժի մեջ մտնել իրազեկվելու հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, գտել է, որ վարչական ակտի վիճարկման պարագայում անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման մասին, այլ խոսքով, օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո *(տե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբալթյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը):*

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59-րդ, 60-րդ հոդվածների և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համակարգային վերլուծությունից հետևում է, որ հայցադիմումը դատավարական ժամկետների պահպանմամբ ներկայացված լինելու հանգամանքը հնարավոր է անսխալ որոշել միայն այն դեպքում, երբ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվա մասին փաստն անվիճելի է:

Ցանկացած այլ դեպքում, երբ դատական պաշտպանություն հայցող անձը վիճարկում է վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրը և դատարանին տեղեկություն հայտնում իր իրազեկման օրվա մասին, որը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, ըստ էության, դատարանին հայտնի միակ տեղեկությունն է լինում, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, որպես իրազեկման օր, դատարանը պետք է հիմք ընդունի նշված օրը, հետևաբար վիճարկման հայց ներկայացնելու համար դատավարական ժամկետների հաշվարկն էլ պետք է կատարվի այդ օրվանը հաջորդող օրվանից և, եթե այդ պարագայում վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը բաց չի թողնվել, այն վերականգնելու միջնորդությունը դառնում է առարկայազուրկ, որի պատճառով միջնորդությունը քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բաց թողնված ժամկետը հարգելի համարելու դատավարական ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշմանն ի հավելումն նշել, որ այն դեպքում, երբ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը վիճելի է, այսինքն՝ առկա է դատական պաշտպանության դիմած անձի կողմից դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ ողջամիտ կասկած, անձը գործնականում պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պարտավոր է քննարկման առարկա դարձնել և գնահատել դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները, որովհետև այդ փաստը վիճելի մնալու դեպքում անձին դատական պաշտպանության տրամադրման մերժումը կհանդիսանա

դատարանի մատչելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում, ինչի հետևանքով կխախտվի այդ իրավունքի բուն էությունը, քանի որ անձն այլևս կզրկվի իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու հնարավորությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումները լրացուցիչ երաշխիք են հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը չսահմանափակելու իրավաչափ նպատակի իրագործման համար, քանի որ դատավարական նորմերի ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում գործնականում ապահովվում է դատավարական ժամկետները բաց չթողնելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները քննարկելու և համապատասխան եզրահանգում կատարելու օբյեկտիվ հնարավորություն:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև 72-րդ հոդվածը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրությամբ ու Կոնվենցիայով երաշխավորված՝ վերը նշված հիմնարար իրավունքների և ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Հովհաննես Չամսարյանը 19.12.2014 թվականին Դատարան է ներկայացրել վիճարկման հայց՝ խնդրելով անվավեր ճանաչել Ոստիկանության Վարչական ակտը, և միաժամանակ միջնորդել է հարգելի համարել և վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետն այն հիմնավորմամբ, որ Ոստիկանության կողմից Վարչական ակտն իրեն երբևիցե տրամադրված չի եղել ո՛չ առձեռն և ո՛չ էլ փոստային ծառայության միջոցով, իսկ Վարչական ակտի՝ վարորդի կողմից ստորագրելու համար նախատեսված տեղում թեև առկա է ստորագրություն, սակայն այն իրեն չի պատկանում:

Դատարանը 24.12.2014 թվականի որոշմամբ մերժել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Հովհաննես Չամսարյանի միջնորդությունն ու հայցադիմումի ընդունումը՝ գտնելով, որ հայցվորի կողմից Վարչական ակտը ստորագրությամբ 31.12.2013 թվականին ստանալու փաստն ակնառու է, հետևաբար հայցվորը 31.12.2013 թվականից տեղեկացված է եղել վիճարկվող որոշման մասին և բաց է թողել վիճարկման հայցով դատարան դիմելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետը **(գ.թ. 18-19):**

Դատարանի վերը նշված պատճառաբանությունը Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել, գտնելով, որ <<Ոստիկանության 31.12.2013 թվականի թիվ ԱԷ 643088 վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կայացվել է 31.12.2013 թվականին, մինչդեռ հայցադիմումը ներկայացվել է 20.12.2014 թվականին և բաց է թողնվել նշված որոշումն անվավեր ճանաչելու պահանջով Դատարան դիմելու երկամսյա դատավարական ժամկետը, հետևաբար հայցվորը կորցրել է նաև նշված ժամկետով պայմանավորված դատավարական գործողություններ կատարելու իրավունքը>>, 27.02.2015 թվականի որոշմամբ մերժել է Դատարանի 24.12.2014 թվականի որոշման դեմ Հովհաննես Չամսարյանի բերած վերաքննիչ բողոքը **(գ.թ. 37-40):**

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը որոշման պատճառաբանական մասում նշել է՝ <<վիճարկվող որոշումն ընդունվել է Հովհաննես Չամսարյանի վերաբերյալ, հետևաբար, ստորագրությամբ առձեռն հանձնումն ուղղակիորեն հանգում է այն իրողությանը, որ վիճարկվող որոշումը հանձնվել է հենց հասցեատիրոջը, տվյալ պարագայում՝ Հովհաննես Չամսարյանին, ինչն էլ նշանակում է, որ Դատարանն օբյեկտիվորեն կարող էր վստահ լինել,

որ վերջինս պատշաճ տեղեկացված է եղել վիճարկվող վարչական ակտի մասին դեռ 31.12.2013 թվականին: Հետևաբար անհիմն է բողոքաբերի այն պնդումը, որ Դատարանը քննության առարկա չի դարձրել այն փաստը, որ վարչական ակտի վրա առկա ստորագրությունն իրեն է պատկանում>>:

Վերաքննիչ դատարանը Վարչական ակտի մասին Հովհաննես Չամսարյանի իրազեկված լինելու փաստի պարզումը, ըստ էության, կապել է Դատարանի <<օբյեկտիվ>> ենթադրության հետ: Այնինչ, ենթադրությունը չի կարող դրվել դատական ակտի հիմքում, քանի որ Վարչական ակտն առձեռն՝ ստորագրությամբ Հովհաննես Չամսարյանի կողմից ստանալու փաստը տվյալ դեպքում կարող էր քննարկման առարկա դառնալ միայն գործի քննության ընթացքում:

Նման պայմաններում մերժելով Դատարանի 24.12.2014 թվականի որոշման դեմ Հովհաննես Չամսարյանի բերած վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը, սահմանափակել է Դատարանի մատչելիության իրավունքը, որը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ համատեղելի չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, քանի որ համաչափության առումով չի ապահովում ողջամիտ հարաբերակցությունը ձեռնարկվող միջոցների ու հետապնդվող նպատակների միջև:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Վարչական ակտը Հովհաննես Չամսարյանի կողմից ստորագրված լինելու, ուստիև վիճարկման հայցադիմումը դատավարական ժամկետների խախտմամբ ներկայացված լինելու փաստը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով կարող էր հաստատվել բացառապես հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո իրականացված գործի քննության ընթացքում, որպիսի հանգամանքը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով կարող էր հիմք հանդիսանալ գործի վարույթը կարճելու համար: Իսկ մինչ այդ հանգամանքի պարզումը և հաստատումը Դատարանը պարտավոր է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայով երաշխավորված՝ դատական պաշտպանությանիրավունքը տրամադրել Հովհաննես Չամսարյանին՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ անձի ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու համար:

Վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված դատավարական ժամկետը հաշվարկելու ելակետ է համարվում վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը:

Ինչպես վերը նշվեց, վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահն օրենսդիրը պայմանավորել է այդ ակտի մասին վարչական վարույթի մասնակիցների իրազեկմամբ, հետևաբար հայցադիմումը Հովհաննես Չամսարյանի կողմից դատավարական ժամկետում ներկայացված լինելու հանգամանքը Դատարանը կարող էր հաստատված համարել վարչական ակտն ուժի մեջ մտնելու փաստն անվիճելի լինելու դեպքում միայն:

Տվյալ դեպքում հայցադիմումին կից Դատարան ներկայացված միջնորդությամբ Հովհաննես Չամսարյանը հայտնել է, որ Վարչական ակտի մասին ինքը տեղեկացել է 22.10.2014 թվականին՝ հարուցված կատարողական վարույթի նյութերին 28.11.2014 թվականին ծանոթանալու արդյունքում: Փաստորեն, հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվա մասին Դատարանին հայտնի միակ տեղեկությունը եղել է այն, որ Հովհաննես Չամսարյանի համար Վարչական ակտը կարող էր ուժի մեջ մտնել 29.11.2014 թվականին, հետևաբար այդ ժամկետից սկսած պետք է իրականացվեր դատավարական ժամկետի հաշվարկը, որպիսի պարագայում հայցադիմումը ներկայացնելու դատավարական ժամկետի վերջին օրը կհանդիսանար 29.01.2015 թվականը, ուստի մինչև այդ ժամկետի լրանալը վիճարկման հայցադիմում ներկայացնելու դեպքում դատավարական ժամկետը բաց թողնված չի կարող համարվել, ինչը նշանակում է, որ այդ ժամկետը հարգելի համարելու անհրաժեշտություն և հիմք առկա չի լինի:

Սույն գործով վիճարկման հայցադիմումը Հովհաննես Չամսարյանը փոստին է հանձնել 19.12.2014 թվականին **(գ.թ. 17)**, որը Դատարանում ստացվել է 20.12.2014 թվա-

կանին **(գ.թ. 2)**, այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված երկամսյա ժամկետում, հետևաբար հայցադիմումը ենթակա է եղել վարույթ ընդունման, իսկ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը, տվյալ դեպքում, որպես առարկայազուրկ, ենթակա չէր քննարկման:

Վերոգրյալ հիմնավորումներով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 27.02.2015 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.02.2015 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 24.12.2014 թվականի <<Բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4009/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4009/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մարտի 18-ին,

քննարկելով <<Լուվի>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի ներկայացուցիչ Աշոտ Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.10.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշման դեմ՝ ըստ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 29.04.2014 թվականի թիվ 158 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության հետբացթողումային հսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) 29.04.2014 թվականի թիվ 158 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) 14.08.2014 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 08.09.2014 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.10.2014 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 08.09.2014 թվականի <<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները, <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, <<Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը և սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է թերի քննության արդյունքում՝ զրկելով Հասմիկ Հովհաննիսյանին դատական պաշտպանության դիմելու և այն իրացնելու իրավունքից:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ սույն գործով հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից, մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հասմիկ Հովհաննիսյանն Ընկերության տնօրենն է, այսինքն՝ գործադիր մարմինը, և <<Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի ուժով իրավասու է առանց լիազորագրի ստորագրել Ընկերության անունից դատարան ներկայացվող հայցադիմումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ մի դեպքում ՀՀ վարչական դատարանը գտել է, որ հայցադիմումը ներկայացվել է պատշաճ հայցվորի կողմից, քանի որ ՀՀ վարչական դատարանը, իր 14.08.2014 թվականի <<Հայցադիմումը վերադարձնելու մասին>> որոշմամբ մատնանշելով Հասմիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայցադիմումում և կից փաստաթղթերում առկա թերությունները, որևէ կերպ չի անդրադարձել հայցադիմումը ստորագրած անձի լիազորությունների հարցին: Մինչդեռ մեկ այլ դեպքում՝ 08.09.2014 թվականի որոշմամբ, Դատարանը գտել է, որ հայցը ներկայացվել է ոչ պատշաճ հայցվորի կողմից, և մերժել է հայցադիմումի ընդունումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է <<բեկանել թիվ ՎԴ/4009/05/14 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 20.10.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը և կայացնել նոր դատական ակտ>>:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

1. արդյո՞ք վարչական դատարանը պարտավոր է մատնանշել հայցադիմումում առկա ձևական սխալները,

2. արդյո՞ք վարչական դատարանն իրավասու է միայն հայցադիմումի ձևական կողմի ուսումնասիրության արդյունքում մերժել հայցադիմումի ընդունումը՝ հայցադիմումը դրա իրավունքն անկհայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված լինելու հիմքով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը, ի թիվս այլ պայմանների, բովանդակում է հայցվորի անունը, ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն, եթե հայցը ներկայացրել է օրենքով դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև պաշտոնը, հայցի էության հակիրճ նկարագրությունը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը, հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները, հայցվորի պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները, ինչպես նաև նույն օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը, եթե համապատասխան վիճարկվող ակտը կամ դրա պատճենը հնարավոր է ներկայացնել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի <<իրական (ռեալ)>> իրավունքներ *(տե՛ս, Կարինե Զլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են *(տե՛ս, Սվետլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):*

Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն տեսակետը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ <<շահագրգիռ անձ>> հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՝ ոչ:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու այն հիմքին, որ հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավա-

կարգավորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված <<ակնհայտություն>> եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակներևություն: Այսինքն՝ սույն իրավական կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու՝ չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ակնհայտորեն նման իրավունք չունեցող անձի կողմից հայցադիմում ներկայացվելու պարագայում հայցադիմումը վարույթ չի ընդունվում, քանի որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլում ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայցվորն այդ գործով շահագրգիռ անձ չի հանդիսանում *(տե՛ս, Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադարձ կատարելով սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու համար վարչական դատարանը նախ և առաջ պետք է պարզի, թե տվյալ դեպքում հայցադիմումը կոնկրետ ում անունից է ներկայացվել և արդյոք տվյալ սուբյեկտը հանդիսանում է իր առերևույթ խախտված <<իրական (ռեալ)>> իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեցող շահագրգիռ անձ, թե՝ ոչ:

Եթե իր առերևույթ խախտված <<իրական (ռեալ)>> իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեցող շահագրգիռ սուբյեկտը կոնկրետ դեպքում իրավաբանական անձ է, ապա իրավաբանական անձի՝ առերևույթ խախտված <<իրական (ռեալ)>> իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեն օրենքով և վերջինիս կանոնադրությամբ նախատեսված մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք կարող են ինքնուրույն, առանց լիազորագրի ստորագրել և դատարան ներկայացնել հայցադիմումը, ինչպես նաև դատարանում հանդես գալ տվյալ իրավաբանական անձի անունից կամ օրենքով սահմանված կարգով լիազորել այլ անձի՝ տվյալ իրավաբանական անձի անունից հայց ներկայացնելու և նրա դատավարական ներկայացուցչությունն ապահովելու նպատակով:

Այսպիսով, իր առերևույթ խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու՝ իրավաբանական անձի իրավունքն իրականացվում է վերջինիս համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ երրորդ անձանց համապատասխան լիազորություններով օժտելու եղանակով: Բոլոր դեպքերում, երբ հայցը ներկայացվում է իրավաբանական անձի անունից, հայցադիմումը նախ պետք է նշում պարունակի այն մասին, որ գործով հայցվորն իրավաբանական անձն է՝ մատնանշելով վերջինիս անվանումը և օրենքով սահմանված այլ տվյալները: Այնուհետև, հայցադիմումը պետք է նշում պարունակի այն մասին, թե ով է տվյալ իրավաբանական անձի անունից ներկայացնում այն, մասնավորապես՝ օրենքով և այլ նորմատիվ ակտերով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրավաբանական անձը ներկայացնելու լիազորությամբ օժտված անձը, թե՝ վերջինիս ներկայացուցիչը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հայցադիմումին ներկայացվող վերոգրյալ ձևական պահանջների պահպանումը կարևոր նշանակություն ունի դատարանի կողմից

հայցադիմումը ներկայացրած իրական սուբյեկտին պարզելու և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման հարցը լուծելու համար:

Այնուհանդերձ, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ դատարան հայց ներկայացնելու իրավունքը կոնկրետ իրավաբանական անձին պատկանելով հանդերձ՝ դատարան ներկայացվող հայցադիմումի ներածական և (կամ) եզրափակիչ մասերում որպես հայցվոր նշվում է ոչ թե տվյալ իրավաբանական անձը, այլ վերջինիս համապատասխան մարմինը (պաշտոնատար անձը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման դեպքերում վարչական դատարանը կարող է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում կայացնել միայն հայցադիմումի և կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրության արդյունքում ձևավորված այն համոզմունքի հիման վրա, որ հայցն իրականում չի ներկայացվել իրավաբանական անձի անունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքը բացահայտելու համար վարչական դատարանը պետք է ուսումնասիրի ներկայացված հայցադիմումի ոչ միայն ձևական կողմը, այլ նաև վերջինիս բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ պարզելու համար, թե հայցադիմումը կոնկրետ ում անունից է ներկայացվել, դատարանը պետք է ոչ միայն ուսումնասիրի հայցադիմումի ներածական կամ եզրափակիչ մասերը, այլ նաև՝ դրա բուն բովանդակությունը (հայցի էության հակիրճ նկարագրությունը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը, հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները, ինչպես նաև հայցվորի պահանջը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի ընդունելիության փուլում ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի միայն ընդհանրական ուսումնասիրության արդյունքում է վարչական դատարանն իրավասու հանգել այն եզրակացության, որ հայցը ներկայացվել է ոչ թե շահագրգիռ իրավաբանական անձի, այլ վերջինիս համապատասխան պաշտոնատար անձի՝ որպես ֆիզիկական անձի անունից, որն այդ գործով չի կարող պատշաճ հայցվոր հանդիսանալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտը **(հատոր 1-ին, գ.թ. 34-38):** Նշված ակտով Ընկերության կողմից ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս հայտարարագրելու համար Ընկերության նկատմամբ մաքսատուրքի և ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ՝ ընդամենը 1.257.245 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 45-50):**

ՀՀ վարչական դատարանի 14.08.2014 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայցադիմումը վերադարձվել է՝ դրանում թույլ տրված սխալները վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ ՀՀ վարչական դատարանի կողմից որպես հայցադիմումում թույլ տրված սխալ՝ մատնանշվել է հայցադիմումին կից ներկայացված որոշ փաստաթղթերի ոչ հայերեն (օտարալեզու) լինելը **(հատոր 1-ին, գ.թ. 28):**

Դատարանը 08.09.2014 թվականի որոշմամբ մերժել է Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելն այն հիմքով, որ հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից: Իր այդ որոշումը Դատարանը պատճառաբանել է այն հանգամանքով, որ Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտը վերաբերում է Ընկերությանը, իսկ ներկայացված հայցադիմումում որպես հայցվոր նշվել է Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանը, որն էլ ստորագրել է հայցադիմումը: Այսինքն՝ հայցադիմումը ներկայացվել է ոչ թե Ընկերության, այլ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի անունից, մինչդեռ սույն գործով հայցվոր կարող էր հանդիսանալ Ընկերությունը, որի անունից հայցադիմումը կարող էր ներկայացնել դրա իրավունքը (լիազորությունը) ունեցող անձը **(հատոր 1-ին, գ.թ. 56-57):**

Վերաքննիչ դատարանը, 20.10.2014 թվականի որոշմամբ մերժելով Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը և անփոփոխ թողնելով Դատարանի 08.09.2014 թվականի <<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը, գտել է, որ Դատարանն իրավացիորեն է եզրահանգել, որ տվյալ դեպքում հայցը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում մասնավորապես դրել է հետևյալ հանգամանքները՝ ինչպես 07.08.2014 թվականին ներկայացված, այնպես էլ վերադարձից հետո՝ 01.09.2014 թվականին, ներկայացված հայցադիմումներով որպես հայցվոր նշվել է Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանը, հայցադիմումի վերջում ևս որպես հայցվոր նշված է <<*Հասմիկ Հովհաննիսյան*>>, բացի այդ, հայցադիմումը կրկին ներկայացնելու դիմումի մեջ հատակ նշվել են <<*իմ կողմից ներկայացված վիճարկման հայց*>> բառերը, իսկ որպես դիմող նշվել է Հասմիկ Հովհաննիսյանի անունը:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ նշված փաստերն իրենց համակցության մեջ ակնհայտորեն վկայում են, որ հայցադիմումը ներկայացվել է ոչ թե Ընկերության, այլ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի կողմից, որի պարագայում իրավաչափ է Դատարանի 08.09.2014 թվականի որոշման եզրահանգումն առ այն, որ հայցը ներկայացրել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը (Ընկերության տնօրենը), քանի որ վիճարկվում է ոչ թե Ընկերության տնօրենի, այլ՝ Ընկերության նկատմամբ կազմված ակտը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ <<*(...) ընդամենը պետք է հայց ներկայացվի Ընկերության, այլ ոչ թե տնօրենի կողմից, որի պարագայում այն կարող է սխորագրվել ցանկացած լիազոր անձի կողմից, ինչպես նաև՝ տնօրենի կողմից, առանց հատուկ լիազորության: Ընդ որում, եթե խնդիր կառաջանա ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետների բաց թողնելու հետ, ապա Ընկերությունը զրկված չէ վերը նշված փաստերի հիմքով ժամկետները հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից (...)*>> **(հատոր 2-րդ, գ.թ. 42-44):**

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վարչական գործով Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտը դատական կարգով վիճարկելու իրավական շահագրգռվածություն ունի Ընկերությունը, քանի որ նշված վարչական ակտով լրացուցիչ դրամական պարտավորություններ են առաջադրվել հենց Ընկերության նկատմամբ: Այլ կերպ ասած՝ սույն վարչական գործով Ընկերությունը հանդիսանում է <<շահագրգիռ անձ>>, քանի որ Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտով կարող են առերևույթ խախտված լինել Ընկերության <<իրական (ռեալ)>> իրավունքներն ու օրինական շահերը: Այսինքն՝ Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտի վիճարկման պահանջով վարչական դատարան դիմելու իրավունքը վերապահված է Ընկերությանը: Հետևաբար ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտի վիճարկման հայցը կարող էր ներկայացվել Ընկերության անունից, և հիմնավոր կերպով գտել են, որ սույն գործով պատշաճ հայցվոր կարող էր համարվել Ընկերությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկվող դատական ակտի հիմնավորվածությունն ու օրինականությունը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք սույն վարչական գործով դատարան ներկայացված հայցադիմումը ներկայացվել է Ընկերության, թե՝ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի անունից: Այլ կերպ ասած՝ սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի այն հանգամանքի բացահայտումը, թե արդյոք 07.08.2014 թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացնելով Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտի վիճարկման հայցադիմում՝ Ընկերության տնօրենը գործել է անձամբ իր, թե՝ Ընկերության անունից:

Այսպես, <<Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ ընկերության գործադիր

մարմինն առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ:

Վկայակոչված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից առանց լիազորագրի հանդես գալու, նրա շահերը ներկայացնելու իրավունք ունի այդ ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը, նախագահը և այլոք: Հետևաբար սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից դատարան ներկայացվող հայցադիմումներն առանց լիազորագրի կարող են ստորագրվել վերջինիս տնօրենի կողմից:

Այսպիսով, սույն վարչական գործով դատարան ներկայացված հայցադիմումն Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի կողմից ստորագրված լինելը չի նշանակում, որ հայցադիմումը ներկայացված է Հասմիկ Հովհաննիսյանի անունից, քանի որ վերջինս որպես Ընկերության գործադիր մարմին՝ տնօրեն, կարող է դատարան հայց ներկայացնել նաև Ընկերության անունից: Ընկերության տնօրենի վերոգրյալ իրավազորությունը նախատեսված է նաև Ընկերության կանոնադրության 8.6-րդ կետում, որի համաձայն՝ Ընկերության տնօրենն իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ **(հատոր 2-րդ, գ.թ. 22-30):**

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված մյուս փաստարկներին, որոնք հիմնավորում են հայցադիմումը ոչ թե Ընկերության, այլ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի անունից ներկայացված լինելու հանգամանքը, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դրանք բավարար չեն այդպիսի եզրակացության հանգելու համար: Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված փաստարկները վերաբերում են ներկայացված հայցադիմումի ձևական կողմին, մինչդեռ նշված հայցադիմումի և կից փաստաթղթերի բովանդակության ուսումնասիրությունը վկայում է, որ այն իրականում ներկայացվել է հենց Ընկերության անունից՝ վերջինիս համապատասխան մարմնի (պաշտոնատար անձի)՝ տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի միջոցով:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ սույն գործով մինչև Դատարանի կողմից 08.09.2014 թվականի <<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը կայացնելը, ՀՀ վարչական դատարանը 14.08.2014 թվականի որոշմամբ վերադարձրել է Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի ներկայացրած հայցադիմումը՝ դրանում թույլ տրված սխալները վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ ՀՀ վարչական դատարանի կողմից որպես հայցադիմումում թույլ տրված սխալ մատնանշվել է միայն հայցադիմումին կից ներկայացված որոշ փաստաթղթերի ոչ հայերեն (օտարալեզու) լինելը **(հատոր 1-ին, գ.թ. 28):**

Մինչդեռ, տվյալ դեպքում, ՀՀ վարչական դատարանը, առաջնորդվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, իր 14.08.2014 թվականի <<Հայցադիմումը վերադարձնելու մասին>> որոշմամբ պարտավոր էր որպես հայցադիմումի մեջ առկա ձևական սխալ մատնանշել նաև այն, որ սույն գործով պատշաճ հայցվոր կարող է համարվել Ընկերությունը, իսկ հայցադիմումի ուսումնասիրությունից միանշանակ պարզ չէ՝ այն ներկայացվել է Ընկերության, թե՝ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի անունից: ՀՀ վարչական դատարանը պետք է իր որոշմամբ առաջարկեր Ընկերության տնօրենին ճշտել նշված հանգամանքը և հայցադիմումը կազմել այնպես, որ դրա ձևական մասում որպես հայցվոր մատնանշված անձը համընկնի գործով շահագրգիռ անձի, այն է՝ Ընկերության հետ: Մինչդեռ ՀՀ վարչական դատարանը, իր վերը նշված որոշմամբ պարտավոր լինելով նշել հայցադիմումում առկա բոլոր ձևական սխալները, որևէ անդրադարձ չի կատարել ներկայացված հայցադիմումում առկա վերը նշված ձևական սխալներին, որոնք հետագայում Դատարանի համար հիմք են հանդիսացել եզրակացնելու, որ հայցադիմումը չի ներկայացվել գործով պատշաճ հայցվորի՝ Ընկերության անունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանը, 07.08.2014

թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացնելով Վարչության 29.04.2014 թվականի թիվ 158 ակտի վիճարկման հայցադիմում, իրականում գործել է ոչ թե իր, այլ՝ Ընկերության անունից և ի շահ Ընկերության: Փաստորեն, Ընկերությունը, գործելով իր մարմնի՝ տվյալ դեպքում տնօրենի միջոցով, հայց է ներկայացրել դատարան՝ դրանով իսկ իրացնելով իր առերևույթ խախտված իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իր իրավունքը:

Թեև ներկայացված հայցադիմումի միայն ձևական կողմի ուսումնասիրությունը վկայում է, որ հայցադիմումի մեջ որպես հայցվոր նշված է Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի անունը, սակայն Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հայցադիմումի միայն ձևական կողմի ուսումնասիրությունը բավարար չէ եզրակացնելու համար, որ հայցադիմումը ներկայացվել է ոչ թե Ընկերության, այլ վերջինիս տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի անունից, քանի որ դատարանն իրավասու է հանգել այդպիսի եզրակացության հայցադիմումի և կից փաստաթղթերի ձևական մասի և բովանդակության, այլ ոչ թե միայն դրանց ձևական կողմի ուսումնասիրության արդյունքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

ա) Ընկերության տնօրեն Հասմիկ Հովհաննիսյանի կողմից 07.08.2014 թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումի և կից փաստաթղթերի ձևական մասի և բովանդակության համատեղ ուսումնասիրությունը վկայում է, որ հայցադիմումն իրականում ներկայացվել է Ընկերության անունից և ի շահ Ընկերության այդպիսի իրավասություն ունեցող սուբյեկտի միջոցով,

բ) ՀՀ վարչական դատարանը, 14.08.2014 թվականի որոշմամբ վերադարձնելով նշված հայցադիմումը և օրենքով սահմանված կարգի խախտմամբ չկատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցադիմումում առկա ձևական սխալները մատնանշելու իր պարտականությունը, հետամուտ չի եղել հայցադիմումում առկա բոլոր թերությունները մատնանշելու հարցում, չի առաջարկել Ընկերության տնօրենին հայցադիմումի ձևական կողմը հստակեցնել այնպես, որ դրանում որպես հայցվոր նշված անձը համապատասխանի սույն գործով պատշաճ հայցվոր հանդիսացող սուբյեկտին՝ Ընկերությանը, չի ուղղորդել Ընկերության տնօրենին հայցադիմումում հստակորեն լրացնել հայցվոր իրավաբանական անձի համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով պահանջվող տեղեկությունները՝ անվանումը, գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, նրա համապատասխան պաշտոնատար անձի (տնօրենի) անունը, ազգանունը, հասցեն և պաշտոնը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սույն գործով կիրառելի չէ, և Դատարանն իրավասու չէր մերժել հայցադիմումի ընդունումը՝ այն՝ դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված լինելու հիմքով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.10.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 08.09.2014 թվականի <<Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/5014/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/5014/05/09**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մայիսի 13-ին,

քննարկելով ըստ հայցի Սպարտակ Մարտիրոսյանի ընդդեմ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի (այսուհետ՝ Նոտար), երրորդ անձինք Նշան և Սամվել Մարտիրոսյանների՝ Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, և 22.07.2009 թվականի մերժումն անվավեր ճանաչելու և Նոտարին Երևան քաղաքի Ազատ Վշտունու փողոցի թիվ 96 հասցեի բնակելի տան 3/16 մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.09.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին>> որոշման դեմ ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) ներկայացուցիչ Դանիել Մխեյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սպարտակ Մարտիրոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, 22.07.2009 թվականի մերժումը, ինչպես նաև պարտավորեցնել Նոտարին Երևան քաղաքի Ազատ Վշտունու փողոցի թիվ 96 հասցեի բնակելի տան 3/16 մասի նկատմամբ տալ ժառանգության իրավունքի վկայագիր:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 18.07.2014 թվականի որոշմամբ Նոտարը փոխարինվել է իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով, իսկ նույն թվականի մեկ այլ որոշմամբ Նոտարը ներգրավվել է որպես գործով երրորդ անձ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.09.2014 թվականի որոշմամբ Կառավարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիո-

րեն՝ Դատարանի 18.07.2014 թվականի <<Պատասխանողին իրավահաջորդով փոխարինելու մասին>> որոշումը վերացվել է մասնակիորեն՝ Նոտարին Երևան քաղաքի Ազատ Վշտունու փողոցի թիվ 96 հասցեի բնակելի տան 3/16 մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալուն պարտավորեցնելու հայցապահանջի մասով Նոտարին իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով, փոխարինելու մասով: Մնացած մասով վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի որոշումը՝ Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, և 22.07.2009 թվականի մերժումն ավավեր ճանաչելու հայցապահանջների մասով Նոտարին իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով փոխարինելու մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ հանգել է սխալ եզրակացության, որ դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է նաև նյութահիրավական իրավահաջորդության բացակայության պարագայում՝ անտեսելով, որ դատավարական իրավահաջորդությունը հիմնված է նյութահիրավական իրավահաջորդության վրա, որպիսին սույն գործի շրջանակներում բացակայում է: Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բովանդակությունից ևս բխում է, որ օրենսդիրն ի սկզբանե նախատեսել է այնպիսի իրադրության հնարավորություն, երբ նյութահիրավական իրավահաջորդությունը բացառվում է, հետևաբար բացառվում է նաև դատավարական իրավահաջորդությունը:

Այնուամենայնիվ, եթե Սպարտակ Մարտիրոսյանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է սույն գործով Նոտարին փոխարինել իրավահաջորդով, ապա <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ նոտարական պալատի կանոնադրության և ոլորտը կարգավորող իրավական այլ ակտերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Նոտարի դատավարական իրավահաջորդ պետք է ճանաչել ոչ թե Հայաստանի Հանրապետությանը, այլ ՀՀ նոտարական պալատին, որն իրավասու է նոտարների շահերի պաշտպանությամբ հանդես գալ ՀՀ դատական ատյաններում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերաքննիչ բողոքը մերժելու մասով վերացնել Վերաքննիչ դատարանի 29.09.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին>> որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ընդհանրապես դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման վարչադատավարական ինստիտուտների կիրառման և մասնավորապես՝ վարչական գործի քննության ընթացքում նոտարի լիազորությունները դադարած անձին պատշաճ

պատասխանողով փոխարինելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք իրավական հիմքերի և իրավաբանական հետևանքների տեսանկյունից դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման վարչադատավարական ինստիտուտները նույնական են,

2. արդյո՞ք ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, թե հանդես է գալիս որպես մասնավոր իրավահարաբերության մասնակից,

3. արդյո՞ք նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործի քննության ընթացքում գործով պատասխանող նոտարի լիազորությունների դադարման, այդ թվում նաև՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում վերջինս պետք է փոխարինվի իրավահաջորդով, թե՝ պատշաճ պատասխանողով,

4. նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործի քննության ընթացքում զբաղեցրած պաշտոնից ազատված նոտարի փոխարեն ո՞վ պետք է ներգրավվի վարչական դատավարությանը՝ որպես պատշաճ պատասխանող:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության մասնակիցներն են կողմերը՝ հայցվորը և պատասխանողը, ինչպես նաև երրորդ անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողն այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (իրավաբանական անձի կամ վարչական մարմնի վերակազմակերպում, ֆիզիկական անձի մահ կամ պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր) դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով, որի վերաբերյալ կայացնում է որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավահաջորդություն

հնարավոր է դատավարության յուրաքանչյուր փուլում, իսկ 5-րդ մասի համաձայն՝ այն գործողությունները, որոնք կատարվել են դատավարության ընթացքում մինչև իրավահաջորդի՝ գործի մեջ մտնելը, նրա համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործի քննության նախապատրաստման կամ դատաքննության ընթացքում հայցվորի միջնորդությամբ կամ նրա համաձայնությամբ դատարանը փոխարինում է պատասխանողին:

2. Եթե դատարանը հանգում է այն համոզման, որ հայցը ներկայացվել է ոչ այն պատասխանողի դեմ, որը պետք է պատասխանի ըստ հայցի, ապա դատարանը կարող է հայցվորի համաձայնությամբ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինել պատշաճ պատասխանողով: Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին փոխարինելուն, ապա դատարանը կարող է այդ անձին ներգրավել որպես երկրորդ պատասխանող:

3. Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուց կամ գործում որպես երկրորդ պատասխանող ներգրավելուց հետո գործի վարույթը սկսվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլից:

4. Պատասխանողին փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու մասին դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի համաձայն՝

1. Նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված հայցը բավարարելու դեպքում դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու վերաբերյալ, իսկ նման պահանջի և համապատասխան հիմքերի առկայության դեպքում նաև պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը:

2. Նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու դեպքում դատարանը պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը:

3. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում նոտարական գործողության հետևանքով հայցվորին պատճառված վնասը հատուցելու մասին:

4. Նոտարական գործողության հետևանքով ծագող քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բոլոր գործերը, ներառյալ՝ վավերացված գործարքների կողմերի միջև առաջացած վեճերը, ընդդատյա են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, եթե դրանք, նույն գլխի համաձայն, քննության ենթակա պահանջներից ածանցվող պահանջներ չեն:

<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), նույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա:

<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է նույն

օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն նույն օրենքով:

<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան:

<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարը Քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում միայն իր կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար: Նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար Հայաստանի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում:

<<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարական պալատն ինքնակառավարման սկզբունքի և նոտարների պարտադիր անդամակցության վրա հիմնված՝ նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն է: Նոտարական պալատն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, նույն օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոտարական պալատը ներկայացնում և պաշտպանում է նոտարների շահերը, նրանց օգնություն է ցույց տալիս նոտարական գործունեություն իրականացնելիս, (...) իրականացնում է նույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՀ նոտարական պալատի կանոնադրության 1-ին կետի համաձայն՝ ՀՀ նոտարական պալատն ինքնակառավարման սկզբունքի և նոտարների պարտադիր անդամակցության վրա հիմնված՝ նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն է, որի նպատակը նոտարների շահերը ներկայացնելը և պաշտպանելն է, նոտարական գործունեություն իրականացնելիս նրանց օգնություն ցույց տալը և այդ գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը:

ՀՀ նոտարական պալատի կանոնադրության 2-րդ կետի համաձայն՝ պալատն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք է բերում պետական գրանցման պահից, (...) կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

ՀՀ նոտարական պալատի կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ նույն կանոնադրության 1-ին կետում ամրագրված նպատակների իրականացմանն ուղղված՝ պալատը ներկայացնում և պաշտպանում է պալատի անդամների իրավունքները և շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպությունների հետ հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով կարգավորել է վարչական դատավարությունում դատավարական իրավահաջորդության ծագման հիմքերի, կատարման կարգի և իրավական հետևանքների հետ կապված հարաբերությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ դատավարական իրավահաջորդությունը վիճելի իրավահարաբերություններից կողմերից մեկի դուրս գալու դեպքում դատավարության կողմի փոխարինումն է նրա իրավահաջորդով: Ընդ որում, դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում, իսկ իրավահաջորդին դատավարությանը թույլատրելը ձևակերպվում է դատարանի համապատասխան որոշմամբ՝ առանձին դատական ակտի տեսքով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է դատավարական իրավահաջորդության ծագ-

ման հիմքերը. այսպես՝ վարչական դատավարությունում իրավահաջորդությունը տեղի է ունենում դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու հետևյալ դեպքերում.

1. իրավաբանական անձի վերակազմակերպում,
2. վարչական մարմնի վերակազմակերպում,
3. ֆիզիկական անձի մահ,
4. պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր:

Այսպիսով, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 1–ին մասում թվարկել է այն փաստակազմերի սպառիչ ցանկը, որոնց գործնականում առկայությունը հնարավորություն է ընձեռում վարչական դատարանին՝ կիրառելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 1–ին մասում նախատեսված իրավական հետևանքը, այն է՝ դատավարության կողմին փոխարինել նրա իրավահաջորդով: Այսինքն՝ վարչական դատարանն իրավասու է դատավարության կողմին նրա իրավահաջորդով փոխարինելու մասին որոշում կայացնել միայն վերը նշված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում: Հետևաբար վարչական դատարանն իրավասու չէ դատավարության կողմին փոխարինել նրա իրավահաջորդով՝ հիմնվելով այնպիսի փաստակազմերի վրա, որոնք նախատեսված չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 1–ին մասում: Ավելին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ հոդվածի 5–րդ մասի բովանդակությունից բխում է, որ դատավարական իրավահաջորդությունը ենթադրում է, որ իրավահաջորդը շարունակում է մասնակցել վարչական դատավարությանը դատավարական իրավահարաբերությունների ամբողջ ծավալով՝ իրավանախորդի ունեցած բոլոր իրավունքներով ու պարտականություններով: Քանի որ դատավարական իրավահաջորդության դեպքում իրավահաջորդը շարունակում է մասնակցել վարչական դատավարությանը, ուստի այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են մինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը, վերջինիս համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածով կարգավորել է վարչական գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու դատավարական կառուցակարգի առանձնահատկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածով ամրագրված իրավադրույթներից բխում է, որ ոչ պատշաճ պատասխանողը դատավարության մասնակից այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան, սակայն հետագայում գործի հանգամանքներով ժխտվել է դատավարության այդ մասնակցի՝ վիճելի պարտականության կրող լինելու, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության սուբյեկտ հանդիսանալու ենթադրությունը: Այլ կերպ ասած՝ եթե վարչական գործի քննության ընթացքում ժխտվում է այն ենթադրությունը, որ պատասխանողը հանդիսանում է վիճելի իրավահարաբերության սուբյեկտ, ապա այդ դեպքում վերջինս ճանաչվում է ոչ պատշաճ պատասխանող և պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով, այսինքն՝ վիճելի իրավահարաբերության ենթադրյալ սուբյեկտով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումը կարող է կատարվել վարչական դատարանի նախաձեռնությամբ կամ հայցվորի միջնորդությամբ, բայց բոլոր դեպքերում միայն հայցվորի համաձայնությամբ, որը բխում է տնօրինչականության սկզբունքից: Փաստորեն, ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումն առանց հայցվորի համաձայնության հնարավոր չէ, իսկ եթե հայցվորը համաձայն չէ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուն, ապա վարչական դատարանը կարող է պատշաճ պատասխանողին, այսինքն՝ այն սուբյեկտին, որը պետք է պատասխանի ըստ ներկայացված հայցի, ներգրավել որպես երկրորդ պատասխանող: Բացի այդ, վարչական գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողի կատարած գործողությունները դա-

տավարությանը մասնակից դարձված պատշաճ պատասխանողի համար նշանակություն չունենն և վերջինիս համար որևէ իրավունք կամ պարտականություն չեն առաջացնում: Պատշաճ պատասխանողի համար ծագում են նոր վարչադատավարական իրավահարաբերություններ, հետևաբար պատշաճ պատասխանողի համար գործի քննությունը սկսվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլից՝ անկախ նրանից, թե դատավարության որ փուլում է բացահայտվել ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման անհրաժեշտությունը:

Վերոգրյալ իրավական վերլուծությունից ակնհայտ է, որ քննարկվող վարչադատավարական ինստիտուտների՝ դատավարական իրավահաջորդության և ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման միջև առկա են էական տարբերություններ՝ ինչպես ըստ հիմքերի, այնպես էլ ըստ դատավարական հետևանքների: Եթե դատավարական իրավահաջորդության հիմքը կողմի՝ նյութական իրավունքներում կամ պարտականություններում տեղի ունեցած իրավահաջորդությունն է, ապա ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումն իրար փոխարինող անձանց միջև, որպես կանոն, ոչ մի նյութահիրավական կապ չի ենթադրում: Այսպիսով, դատավարական հետևանքների տեսանկյունից՝ դատավարական իրավահաջորդության դեպքում վարչադատավարական իրավահարաբերությունները պահպանվում են, իսկ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դեպքում վարչադատավարական իրավահարաբերությունները դադարում են, և ծագում են նոր վարչադատավարական իրավահարաբերություններ:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նոտարի իրավական վիճակին վերաբերող կարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ առաջին՝ նոտարի գործունեության նպատակը ոչ թե նոտարի շահերն են, այլ՝ հանրության շահերը: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունում նոտարներն իրականացնում են հանրային նշանակության գործառույթներ, որոնք սահմանվում են օրենքով: Երկրորդ՝ նոտարները, ինչպես պետական մարմինները և պաշտոնատար անձինք, իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են ոչ թե մասնավոր անձանց ներհատուկ կամքի ազատ արտահայտմամբ, այլ գործում են հանրային իշխանությանը ներհատուկ ընթացակարգերի շրջանակներում: Երրորդ՝ նոտարները նշանակվում են պաշտոնատար անձանց համար օրենքով հատուկ սահմանված կարգով: Չորրորդ՝ նոտարները կարգապահական պատասխանատվության են ենթարկվում, նրանց լիազորությունները դադարում են նույնպես օրենքով սահմանված հատուկ հիմքերի առկայության պայմաններում և հատուկ կարգով: Այսինքն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Միաժամանակ, նոտարը մի շարք իրավահարաբերություններում հանդես է գալիս նաև որպես անհատ ձեռնարկատեր, ինքնուրույն, իր ռիսկով իրականացնում է գործունեություն, որի նպատակը շահույթ ստանալն է, իր ունեցած պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով և կրում է պատասխանատվություն՝ իր կողմից այլ անձանց պատճառված վնասի համար: Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային–իրավական և մասնավոր–իրավական բնույթ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարա–

բերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հենվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում: Տվյալ իրավահարաբերությունների հանրային լինելու մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերն ընդդատյա է համարել վարչական դատարանին, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

Տվյալ իրավահարաբերություններում հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է նոտարների հանրային-իրավական կարգավիճակը և պայմանավորում է նրանց գործունեության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացման անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ օրենսդիրը <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը կարող են բողոքարկվել դատարան: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը քննվում են վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի <<Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը>> վերտառությամբ 31-րդ գլխի 220-222-րդ հոդվածներով սահմանել է նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերի քննության կարգը:

Այսպիսով, ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարը՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ, իրականացնում է հանրային գործառույթներ՝ նպատակ հետապնդելով ապահովել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի գործնականում իրացումը և պաշտպանությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխում ամրագրված իրավադրույթների բովանդակությունից բխում է, որ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործերի շրջանակում նոտարը հանդես է գալիս պատասխանողի դերում, որի դեմ կարող են ներկայացվել հետևյալ հայցապահանջները՝

1) նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ,

2) նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ,

3) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ նշված գործի քննության ընթացքում նոտարն ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից, կամ նրա լիազորություններն օրենքով սահմանված կարգով դադարում են, ապա դադարում է նաև վերջինիս՝ հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքից բխող հանրային-իրավական կարգավիճակը: Հետևաբար նոտարի պաշտոնից ազատված կամ նոտարի լիազորությունները դադարած անձը նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված վարչական գործերի շրջանակներում այլևս չի կարող համարվել պատշաճ պատասխանող՝ (1) նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև (2) նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջների մասով: Այդ դեպքում վարչական դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-

րդ հոդվածով սահմանված կարգով լուծել այդ նոտարին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին դատավարությանը որպես երկրորդ պատասխանող ներգրավելու հարցը: Այսինքն՝ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում նոտարի դեմ ներկայացված՝ (1) նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև (2) նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով իր զբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարը պետք է ճանաչվի ոչ պատշաճ պատասխանող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված կարգով փոխարինվի պատշաճ պատասխանողով: Տվյալ պարագայում վարչական դատարանն իրավասու չէ նոտարի պաշտոնից ազատված կամ նոտարի լիազորությունները դադարած անձին փոխարինել նրա իրավահաջորդով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում դատավարական իրավահաջորդության այդպիսի հիմք նախատեսված չէ, իսկ վարչական դատարանն իրավասու է դատավարության կողմին նրա իրավահաջորդով փոխարինելու մասին որոշում կայացնել միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում, մինչդեռ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում թվարկելով վարչական դատավարությունում դատավարական իրավահաջորդության հիմքերը, դրանց շարքում չի նախատեսել նոտարի՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու պատճառով դատավարությունից դուրս գալու վերաբերյալ որևէ դրույթ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն դեպքում, երբ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործով պատասխանող նոտարն ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից, կամ նրա լիազորությունները դադարում են, ապա նոտարի դեմ ներկայացված՝ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով պատշաճ պատասխանող պետք է համարվի ՀՀ նոտարական պալատը, որը պետք է ներգրավվի դատավարությանը կամ որպես նոտարին փոխարինող պատշաճ պատասխանող կամ որպես երկրորդ պատասխանող հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ նոտարական պալատը նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն է, որը, ի թիվս ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև իր կանոնադրությամբ սահմանված գործառույթների, օժտված է նաև նոտարների շահերը ներկայացնելու և պաշտպանելու իրավասությամբ: ՀՀ նոտարական պալատն իրավասու է ներկայացնել և պաշտպանել նոտարների շահերը այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ունեցած հարաբերություններում, այդ թվում նաև դատարանում: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջի քննության շրջանակներում ՀՀ նոտարական պալատն իրավասու է դատարանում ներկայացնել և պաշտպանելու իր զբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարի շահերը, քանի որ նշված հայցապահանջներով վիճարկվում է նոտարի՝ հանրային-իրավական կարգավիճակից բխող գործողությունների իրավաչափությունը: Հետևաբար նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում նոտարի՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ լիազորությունների դադարման դեպքում նոտարի դեմ ներկայացված՝ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով վարչական դատարանը պարտավոր է իր զբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարին ՀՀ վարչական դատավարության կարգով փոխարինել պատշաճ պատասխանողով՝ ՀՀ նոտարական պալատով:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում առկա այն իրավակարգավորումներին, որ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված հայցը բավարարելու դեպքում դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու վերաբերյալ, իսկ նման պահանջի և համապատասխան հիմքերի առկայության դեպքում նաև պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու դեպքում դատարանը պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ նշել, որ ՀՀ իրավական համակարգում անձանց համար երաշխավորվում է արդար դատաքննության և խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցների իրավունքները, ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունն անձի համար երաշխավորում է տվյալ անձի իրավունքների ենթադրյալ խախտման համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, այդ թվում նաև դատարան դիմելու իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածը պետք է մեկնաբանեն այնպես, որպեսզի գործնականում հնարավոր լինի ապահովել անձանց իրավունքների առավելագույն պաշտպանություն: Այսինքն, եթե դատարանը պարզի, որ առկա են նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարման մերժումը ոչ իրավաչափ ճանաչելու բավարար հիմքեր, նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարման մերժումը պետք է ճանաչվեն ոչ իրավաչափ, ինչը նշանակում է նաև, որ հետագայում ՀՀ իրավական համակարգում գործող որևէ նոտար իրավասու չէ նույն անձի վերաբերյալ միևնույն փաստական և իրավական հիմքերով կատարելու հայցվող նույն նոտարական գործողությունը կամ մերժելու հայցվող նույն նոտարական գործողության կատարումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ դատարանն իրավասու չէ պարտավորեցնել պաշտոնաթող նոտարին կատարելու հայցվող գործողությունը, քանի որ Նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության շրջանակում բացի տվյալ վարչական գործով պատասխանող նոտարից գոյություն չունի որևէ այլ իրավունքի սուբյեկտ, որն իրավասու է կատարելու հայցվող նոտարական գործողությունները: Հետևաբար վարչական դատարանը չի կարող պարտավորեցնել հանրային-իրավական կարգավիճակից զրկված նախկին նոտարին, ով այլևս իրավասու չէ կատարել նոտարական գործողություններ, կատարելու հայցվող նոտարական գործողությունները: Վարչական դատարանն իրավասու չէ նաև ՀՀ նոտարական պալատին պարտավորեցնել կատարելու հայցվող նոտարական գործողությունը, քանի որ ՀՀ նոտարական պալատն իրավասու չէ կատարել նոտարական գործողություններ: Նկատի ունենալով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության շրջանակում նոտարի՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ լիազորությունների դադարման դեպքում ներկայացված՝ նոտարին հայցվող գործողությունը կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը ենթակա է մերժման:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Սպարտակ Սմբատիրոսյանի կողմից 02.12.2009 թվականին ներկայացված հայցադիմումի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, <<22.07.2009 թվականի մերժումը>>, ինչպես նաև պարտավորեցնել Նոտարին Երևան քաղաքի Ազատ Վշտունու փողոցի թիվ 96 հասցեի բնակելի տան 3/16 մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալուն **(հատոր 1-ին, գ.թ. 2-7):**

Դատարանի 12.04.2010 թվականի որոշմամբ սույն վարչական գործի վարույթը կասեցվել է **(հատոր 1-ին, գ.թ. 118):** Սույն վարչական գործի կասեցված վարույթը վերսկսվել է Դատարանի 01.10.2013 թվականի որոշմամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 68):**

17.06.2014 թվականի թիվ ԴԴ9-71922 գրությամբ ՀՀ վարչական դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, խնդրել է ՀՀ արդարադատության նախարարությանը տեղեկություններ հայտնել այն մասին, թե արդյոք դադարեցվել է Նոտարի նոտարական գործունեությունը **(հատոր 2-րդ, գ.թ. 111-112):** Ի պատասխան նշված գրության՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 15.07.2014 թվականի թիվ 02/5039-14 գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 29.04.2014 թվականի թիվ 30-Ա հրամանի՝ Նոտարն ազատվել է զբաղեցրած պաշտոնից **(հատոր 2-րդ, գ.թ. 113-114):**

Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասը և <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 18.07.2014 թվականի <<Պատասխանողին իրավահաջորդով փոխարինելու մասին>> որոշմամբ սույն վարչական գործով պատասխանող Նոտարին փոխարինել է իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով **(հատոր 2-րդ, գ.թ. 116):** Դատարանի նույն թվականի մեկ այլ որոշմամբ Նոտարը ներգրավվել է սույն վարչական գործին՝ որպես երրորդ անձ **(հատոր 2-րդ, գ.թ. 117-118):**

Վերաքննիչ դատարանի 29.09.2014 թվականի որոշմամբ Կառավարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 18.07.2014 թվականի <<Պատասխանողին իրավահաջորդով փոխարինելու մասին>> որոշումը վերացվել է մասնակիորեն՝ Նոտարին Երևան քաղաքի Ազատ Վշտունու փողոցի թիվ 96 հասցեի բնակելի տան 3/16 մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալուն պարտավորեցնելու հայցապահանջի մասով Նոտարին իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով, փոխարինելու մասով: Մնացած մասով վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի որոշումը՝ Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, և 22.07.2009 թվականի մերժումն ավավեր ճանաչելու հայցապահանջների մասով Նոտարին իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով փոխարինելու մասով, թողնվել է անփոփոխ **(հատոր 3-րդ, գ.թ. 51-56):**

Վերաքննիչ դատարանն իր 29.09.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին>> որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. *<<(...) (ա) Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը 3/16 մասով անվավեր ճանաչելու մասին պահանջը դասվում է նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ պահանջների տարատեսակին, և այդ պահանջի մասով Նոտարի դատավարական իրավահաջորդ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը. (բ) 22.07.2009 թվականի մերժումն անվավեր ճանաչելու մասին պահանջը դասվում է նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ պահանջների տարատեսակին, և այդ պահանջի մասով Նոտարի դատավարական իրավահաջորդ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը...>>:*

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո, միաժամանակ հաշվի առնելով վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և բողոքում ներկայացված պահանջը, Նոտարի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, և 22.07.2009 թվականի մերժումն անվավեր ճանաչելու պահանջների մասով համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված սույն վարչական գործով Դատարանն անհիմն կերպով Նոտարին փոխարինել է իրավահաջորդով՝ այն հիմքով, որ վեր-

ջինս ազատվել է իր զբաղեցրած պաշտոնից, մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանել է դատավարական իրավահաջորդության հիմքերը, որոնք վերաբերում են դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու հետևյալ դեպքերին՝ (ա) իրավաբանական անձի վերակազմակերպում, (բ) վարչական մարմնի վերակազմակերպում, (գ) ֆիզիկական անձի մահ, (դ) պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր: Հետևաբար սույն վարչական գործի քննության ընթացքում Նոտարի՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս դատավարական իրավահաջորդության համար, քանի որ օրենսդիրը, թվարկելով դատավարական իրավահաջորդության հիմքերը, դրանց շարքում իրավահաջորդության այդպիսի հիմք չի նախատեսել: Այսպիսով, սույն գործով Նոտարի դեմ ներկայացված 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակիորեն՝ 3/16 մասով, և <<22.07.2009 թվականի մերժումը>> անվավեր ճանաչելու պահանջների մասով Նոտարի՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ լիազորությունների դադարման դեպքում վերջինիս դատավարական իրավահաջորդության հարց առհասարակ չի կարող բարձրացվել, քանի որ այդպիսի իրավահաջորդության իրավական հիմքը բացակայում է:

Նշված փաստական հանգամանքները համադրելով վերոգրյալ իրավական վերլուծությունների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նոտարը, ՀՀ արդարադատության նախարարի 29.04.2014 թվականի թիվ 30-Ա հրամանով ազատվելով իր զբաղեցրած պաշտոնից, զրկվել է իր հանրային-իրավական կարգավիճակից: Հետևաբար սույն գործի շրջանակում Նոտարի դեմ ներկայացված նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով Նոտարն այլևս չի կարող համարվել պատշաճ պատասխանող և պետք է փոխարինվի պատշաճ պատասխանողով՝ ՀՀ նոտարական պալատով: Փաստորեն, Դատարանը պարտավոր էր Նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ հարուցված սույն վարչական գործի շրջանակներում Նոտարի դեմ ներկայացված 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակիորեն՝ 3/16 մասով, և <<22.07.2009 թվականի մերժումը>> անվավեր ճանաչելու պահանջների մասով Նոտարին ճանաչել ոչ պատշաճ պատասխանող և նրան փոխարինել պատշաճ պատասխանողով: Ընդ որում, տվյալ դեպքում պատշաճ պատասխանող է համարվում ՀՀ նոտարական պալատը, որը <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի և իր կանոնադրության ուժով իրավասու է դատարանում ներկայացնել և պաշտպանել Նոտարի շահերը՝ նաև վերջինիս նախկին հանրային-իրավական կարգավիճակից բխող գործողությունների իրավաչափության վիճարկման հայցապահանջի մասով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանի 18.07.2014 թվականի <<Պատասխանողին իրավահաջորդով փոխարինելու մասին>> որոշումը նշված հայցապահանջների մասով անհիմն է և ենթակա է վերացման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի որոշմանը՝ վերաքննիչ բողոքը բավարարելու մասով, չի անդրադառնում վճռաբեկ բողոքում այդ մասով հիմքեր, հիմնավորումներ և պահանջ ներկայացված չլինելու պատճառով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.09.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին>> որոշման՝ վերաքննիչ բողոքը մերժելու մասը և այդ մասով կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 18.07.2014 թվականի <<Պատասխանողին իրավահաջորդով փոխարինելու մասին>> որոշման՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 09.10.2007 թվականին տրված թիվ 11041 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 3/16 մասով, և 22.07.2009 թվականի մերժումն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջներով ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին իրավահաջորդով՝ Հայաստանի Հանրապետությունով, փոխարինելու մասը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6072/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/6072/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 29-ին,
քննարկելով Շուշանիկ Տրդատյանի ներկայացուցիչ Արտուր Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.12.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Շուշանիկ Տրդատյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 19.08.2014 թվականի միջամտող վարչական ակտը՝ իր ընտանիքին վերաբերող մասով, և պարտավորեցնել Հանձնաժողովին կազմելու բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագիծ և այն ներկայացնելու ՀՀ քաղաքաշինության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հաստատմանը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.11.2014 թվականի որոշմամբ Շուշանիկ Տրդատյանի հայցադիմումը՝ Հանձնաժողովի 19.08.2014 թվականի միջամտող վարչական ակտը՝ իր ընտանիքին վերաբերող մասով անվավեր ճանաչելու պահանջի մասով, ընդունվել է վարույթ, իսկ մնացած՝ Հանձնաժողովին բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագիծ կազմելուն և այն Նախարարի հաստատմանը ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասով, Շուշանիկ Տրդատյանի հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.12.2014 թվականի որոշմամբ Շուշանիկ Տրդատյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.11.2014 թվականի <<Հայցադիմումը մասով վարույթ ընդունելու, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշման 2-րդ կետը՝ հայցադիմումի ընդունումը մի մասով մերժելու մասին, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շուշանիկ Տրդատյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները և սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 26.11.2009 թվականի թիվ 1402-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Հանձնաժողովի կողմից համապատասխան հրամանի նախագիծ կազմելը չի կարող առաջացնել փաստական հետևանքներ և զուտ կազմակերպատեխնիկական բնույթ է կրում, անհիմն է, քանի որ նման մոտեցման պայմաններում Հանձնաժողովը սահմանափակված չի լինի ժամանակի մեջ, և հրամանի նախագիծ չկազմելու, այն Նախարարին չներկայացնելու դեպքում կամ այլ կերպ ասած՝ իր գործառույթները չիրականացնելու դեպքում, անձը կզրկվի դատարան դիմելու, դատարանում լսված լինելու և արդյունավետ դատական պաշտպանության միջոցի իրավունքներից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով Հանձնաժողովը չի կատարել կամ մերժել է կատարել Շուշանիկ Տրդատյանի կողմից հայցվող գործողությունը, ինչի հիման վրա էլ վերջինս կարող է դիմել վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված գործողության կատարման հայցով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 24.12.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 06.11.2014 թվականի <<Հայցադիմումը մասով վարույթ ընդունելու, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշման 2-րդ կետը՝ հայցադիմումի ընդունումը մի մասով մերժելու մասը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գործողության կատարման հայցի՝ վարչական դատարանում քննության ենթակա լինելու չափանիշների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. իրավաչափ է արդյո՞ք վարչական դատարանի կողմից գործողության կատարման հայցով դատարան դիմած անձի հայցադիմումի ընդունումը մերժելը՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, եթե հայցվորը վարչական մարմնից պահանջել է կատարելու որոշակի գործողու-

թյուններ, որոնք, ողղված չլինելով վարչական ակտի ընդունմանը, կարող են ապահովել անհրաժեշտ պայմաններ իր իրավունքների իրականացման համար կամ վերացնել վերջինիս իրավունքների իրականացման խոչընդոտները:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ սահմանադրական դատարանը, իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշմամբ անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնահարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. <<(...) հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես

էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (...): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է (...) իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: (...) Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության (...)>>:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթներին, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ դրանք, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ և հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը: Փաստորեն, վկայակոչված իրավանորմերը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների պաշտպանության համար իրավունք ունի դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում է, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի, և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու վարչական դատարան *(տե՛ս, Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):*

ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը վերը վկայակոչված որոշմամբ գտել է, որ օրենսդիրը ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչությամբ սահմանել է վարչական դատարան դիմելու իրավունքի իրականացման հստակ իրավական նախապայմաններ, ըստ որի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է իրականացնել դատարան դիմելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ եթե խոչընդոտներ են հարուցվել կամ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է հա-

մարում հավելել, որ օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 10-րդ հոդվածներում սահմանել է վարչական դատարանի իրավասության շրջանակը: Ինչպես ցանկացած դատարան, վարչական դատարանն իրավասու է գործադրել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված է հատուկ տեսակի իրավասությամբ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Ըստ Հայաստանի Հանրապետության գործող վարչադատավարական օրենսդրության՝ վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող հայցատեսակներից է գործողության կատարման հայցը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված գործողության կատարման հայցի հասկացության վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հայցատեսակով հայցվորը կարող է վարչական մարմնից պահանջել՝ (ա) կատարելու որոշակի գործողություններ կամ (բ) ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, **որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը**: Փաստորեն, գործողության կատարման հայցով դատարան դիմած անձը կարող է վարչական մարմնից պահանջել դրսևորելու վարչական ակտի ընդունման հետ չկապված՝ ինչպես ակտիվ վարքագիծ՝ կատարելու որոշակի գործողություններ, այնպես էլ պասիվ վարքագիծ՝ ձեռնպահ մնալու որոշակի գործողությունների կատարումից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավադրույթը ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի վերոգրյալ մեկնաբանությունների լույսի ներքո դիտարկելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործողության կատարման հայցով անձը վարչական մարմնից կարող է պահանջել դրսևորելու միայն այնպիսի վարքագիծ (թե՛ ակտիվ, թե՛ պասիվ), որը չդրսևորելը խախտում է կամ անմիջականորեն կարող է խախտել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: Հետևաբար, գործողության կատարման հայցով անձը կարող է վարչական մարմնից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնց համապատասխանաբար կատարումը կամ չկատարումը կարող է ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ վերացնել վերջինիս իրավունքների իրականացման խոչընդոտները:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործողության կատարման հայցով դատարան դիմած անձի հայցադիմումի ընդունելիության փուլում վարչական դատարանը պարտավոր է պարզել, թե պահանջվող վարքագիծը վարչական մարմնի կողմից չդրսևորելը կարող է արդյո՞ք առերևույթ ոտնձգել վերջինիս իրավունքներին և օրինական շահերին: Մասնավորապես՝ վարչական դատարանը գործողության կատարման հայցադիմումի ընդունելիության փուլում պարտավոր է բացահայտել, թե հայցվորի կողմից ակնկալվող վարքագիծը կարող է արդյո՞ք. (ա) առերևույթ ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ (բ) առերևույթ վերացնել այդ իրավունքների իրականացման խոչընդոտները:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատարանն իրավասու է մերժել գործողության կատարման հայցով դատարան դիմած անձի հայցադիմումը վարույթ ընդունելը՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով միայն այն դեպքում, եթե հայցվորի կողմից ակնկալվող վարքագիծը չդրսևորելն ակնհայտորեն որևէ կերպ չի կարող խախտել տվյալ անձի իրավունքները, մասնավորապես՝ ակնկալվող վարքագիծը չի կարող ապահովել անհրաժեշտ պայմաններ անձի իրավունքների իրականացման համար կամ վերացնել այդ իրավունքների իրականացման խոչընդոտները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով դիմելով դատարան՝ Շուշանիկ Տրդատյանը պահանջել է անվավեր ճանաչել Հանձնաժողովի 19.08.2014 թվականի միջամտող վարչական ակտը՝ իր ընտանիքին վերաբերող մասով, և պարտավորեցնել Հանձնաժողովին կազմելու բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագիծ և այն ներկայացնելու Նախարարի հաստատմանը **(գ.թ. 3–8):**

Սույն գործով Դատարանի 06.11.2014 թվականի <<Հայցադիմումը մասով վարույթ ընդունելու, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշմամբ Շուշանիկ Տրդատյանի հայցադիմումը՝ Հանձնաժողովին բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագիծ կազմելուն և այն Նախարարի հաստատմանը ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասով, վարույթ ընդունելը մերժվել է: Իր այդ որոշման հիմքում Դատարանը դրել է այն պատճառաբանությունը, որ *<<(...) վիճարկվող հրամանի նախագիծը չի համարվում վարչական ակտ, հետևաբար որևէ անձի, այդ թվում՝ հայցվորի համար որևէ իրավունք կամ պարտականություն չի սահմանում, չի փոփոխում, չի վերացնում և չի ճանաչում (...)>>* **(գ.թ. 31–32):**

Վերաքննիչ դատարանն իր 24.12.2014 թվականի որոշմամբ մերժել է Շուշանիկ Տրդատյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 06.11.2014 թվականի <<Հայցադիմումը մասով վարույթ ընդունելու, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մի մասով մերժելու մասով, թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ *<<(...) Նախարարի հրամանի նախագիծը նախապատրաստելուն և այն Նախարարի հաստատմանը ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջը վարչական դատավարության կարգով քննության ենթակա չէ (...)>>:* Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Հանձնաժողովին հրամանի նախագիծ կազմելուն և այն Նախարարի հաստատմանը ներկայացնելուն պարտավորեցնելու՝ Շուշանիկ Տրդատյանի հայցապահանջը դասվում է ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման, այլ նույն օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված գործողության կատարման հայցատեսակի շարքին, միևնույն ժամանակ գտել է, որ Նախարարի հրամանի նախագծի նախապատրաստումն ինքնին որևէ փաստական հետևանքի չի հանգեցնում բնակապահովման կարիք ունեցող անձանց համար: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ հրամանի նախագծի նախապատրաստումն ու դրա ներկայացումը Նախարարին վարչարարության ինքնուրույն դրսևորում չի հանդիսանում, իսկ հայցի առարկա կարող են հանդիսանալ միայն վարչական մարմնի իրականացրած վարչարարության արդյունքները, որոնցով խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել անձի իրավունքները և ազատությունները **(գ.թ. 58–62):**

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի շրջանակներում Շուշանիկ Տրդատյանի կողմից ներկայացվել է վիճարկման և գործողության կատարման հայցի տարրեր պարունակող հայցադիմում, որը գործողության կատարման հայցապահանջի մասով հանգում է հետևյալին. պարտավորեցնել Հանձնաժողովին կազմելու բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագիծ և այն ներկայացնելու Նախարարի հաստատմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շուշանիկ Տրդատյանը, վերը նշված հայցապահանջով դիմելով դատարան, հետապնդել է օրենքով հստակ սահմանված վարչադատավարական ընթացակարգի միջոցով իր իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության ապահովման նպատակ՝ պահպանելով դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ իրավական նախապայմանները: Այլ կերպ ասած՝ Շուշանիկ Տրդատյանի կողմից ներկայացված գործողության կատարման հայցապահանջով վերջինս Հանձնաժողովից պահանջել է դրսևորել այնպիսի ակտիվ վարքագիծ, որը չդրսևորելն առերևույթ կարող է խախտել նրա իրավունքները և ազատությունները, մասնավորապես՝ պահանջվող վարքագիծն առերևույթ կարող է ապահովել անհրաժեշտ պայմաններ Շուշանիկ Տրդատյանի իրավունքների իրականացման համար:

Այսպես, ՀՀ կառավարության 26.11.2009 թվականի <<Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 10.06.1999 թվականի թիվ 432 և 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 1402-Ն որոշման հավելվածի 1-ին կետի համաձայն՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման ու հատկացման աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը՝ իր կողմից ստեղծված հանձնաժողովի (...) միջոցով:

ՀՀ կառավարության 26.11.2009 թվականի թիվ 1402-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի գործառույթներից է, ի թիվս այլոց, բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հրամանի նախագծի նախապատրաստումը:

Վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) բաշխման ու հատկացման աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է Նախարարը՝ իր կողմից ստեղծված Հանձնաժողովի միջոցով, որը, ի թիվս այլ գործառույթների, նախապատրաստում է բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին Նախարարի հրամանի նախագիծը: Հետևաբար Շուշանիկ Տրդատյանի կողմից պահանջվող գործողության կատարումը ընդգրկված է Հանձնաժողովի գործառույթների շրջանակներում: Ավելին, Հանձնաժողովի կողմից բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագծի կազմումը և այն Նախարարի հաստատմանը ներկայացնելը կարող են առերևույթ ապահովել անհրաժեշտ պայմաններ Շուշանիկ Տրդատյանի իրավունքների իրականացման համար, քանի որ առանց Հանձնաժողովի կողմից համապատասխան հրամանի նախագիծ կազմելու և այն Նախարարի հաստատմանը ներկայացնելու Շուշանիկ Տրդատյանը զրկված կլինի բնակարանային ապահովման իր ենթադրյալ իրավունքներն իրականացնելու հնարավորությունից:

Փաստորեն, Շուշանիկ Տրդատյանը Հանձնաժողովից պահանջել է կատարելու այնպիսի գործողություններ, որոնք առերևույթ կարող են ապահովել անհրաժեշտ պայման-

ներ իր իրավունքների իրականացման համար: Հետևաբար, Շուշանիկ Տրդատյանի կողմից ներկայացված գործողության կատարման հայցապահանջը համապատասխանում է վարչական դատարանում քննության ենթակա լինելու չափանիշներին, ինչն անհիմն կերպով հաշվի չի առնվել ո՛չ Դատարանի, ո՛չ Վերաքննիչ դատարանի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով Շուշանիկ Տրդատյանի կողմից ներկայացված գործողության կատարման հայցապահանջը ենթակա է վարչական դատարանում քննության, ուստի Դատարանն իրավասու չէր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով մերժել Շուշանիկ Տրդատյանի հայցադիմումի ընդունումը՝ գործողության կատարման հայցապահանջի մասով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.12.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքը մերժելու մասին>> որոշումը և կայացնել նոր դատական ակտ. մասնակիորեն՝ ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովին բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում Շուշանիկ և Նիկոլայ Տրդատյաններին, Նորայր Տրտատյանին ընդգրկելու վերաբերյալ հրամանի նախագիծ կազմելուն և այն ՀՀ քաղաքաշինության նախարարի հաստատմանը ներկայացնելուն պարտավորեցնելով պահանջի մասով Շուշանիկ Տրդատյանի հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնել ՀՀ վարչական դատարանի 06.11.2014 թվականի <<Հայցադիմումը մասով վարույթ ընդունելու, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին>> որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ3/0347/05/13
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան

Վարչական գործ թիվ **ՎԴ3/0347/05/13**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մարտի 04-ին,

քննարկելով ըստ հայցի <<Ֆասթ Սփլայ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Արտաշատի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն), Կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 13.08.2013 թվականի թիվ 1215455 ուսումնասիրության արձանագրությունն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին, և ըստ Տեսչության հակընդդեմ հայցի՝ Ընկերությունից գումար բռնագանձելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.04.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին>> որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչ Համլետ Մնացականյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր կամ առ ոչինչ ճանաչել Կոմիտեի 13.08.2013 թվականի թիվ 1215455 ուսումնասիրության արձանագրությունը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 3.898.915 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.02.2014 թվականի որոշմամբ ըստ Ընկերության սկզբնական հայցի՝ 13.08.2013 թվականի թիվ 1215455 ուսումնասիրության արձանագրությունն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասով, վարչական գործի վարույթը կարճվել է:

Դատարանի 17.02.2014 թվականի վճռով հակընդդեմ հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.04.2014 թվականի որոշմամբ <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> Դատարանի 17.02.2014 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.07.2014 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 03.04.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին>> որոշման դեմ Ընկերության ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.10.2014 թվականի որոշմամբ սույն վարչական գործի վարույթը կասեցվել է, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի նույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.02.2015 թվականի որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, 130-րդ, 131-րդ, 135-137-րդ և 141-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումն ակնհայտ անօրինական է և անհիմն, քանի որ Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքի ընդունումը, հաշվի չի առել, որ դրանով բողոքարկվել է ոչ միայն Դատարանի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> 17.02.2014 թվականի որոշումը, այլև Դատարանի 17.02.2014 թվականի վճիռը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, Դատարանի նշված որոշումը չդիտելով որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ և մերժելով դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը, Ընկերությանը զրկել է դատական պաշտպանության իրավունքից: Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը խաթարում է արդարադատության բուն էությունը և արգելափակում է գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի որոշումների բողոքարկման հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է <<բեկանել Վերաքննիչ դատարանի 03.04.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին>> որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության>>:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության մասին Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակու-

թյուն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. արդյո՞ք բողոքարկման իրավունքը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչներից մեկը,

2. արդյո՞ք գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունը համատեղելի է անձի դատական պաշտպանության իրավունքի հետ,

3. արդյո՞ք գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից առավել նման է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, թե՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին,

4. արդյո՞ք գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության.

2) լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը.

3) նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.

4) դատավարության մասնակից հանդիսացող անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը.

5) դատավարության մասնակից հանդիսացող իրավաբանական անձը լուծարվել է.

6) հայցվորը հրաժարվել է հայցից, բացառությամբ նույն օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից.

7) վեճն ըստ էության սպառվել է.

8) գործի վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել (բացառությամբ նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի), և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է.

9) եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը.

10) դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը ներկայացնում է դիմում հայցից հրաժարվելու վերաբերյալ, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետում հրավիրում

է դատական նիստ՝ այն քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ կրկնում է հայցից հրաժարվելու իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցերը:

Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու դեպքում նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել վարչական դատարան, բացառությամբ այն դեպքերի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում, կամ գործի վարույթը կարճվել է նույն օրենսգրքի 96–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով նախատեսված հիմքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցը բավարարելու դեպքում կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝

1) վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.

2) վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին.

3) դատավարության մասնակիցներին և այլ անձանց որոշակի գործողություններ կատարելուն կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին.

4) իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության կամ վարչական ակտի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն առ ոչինչ լինելու մասին.

5) այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին.

6) ֆիզիկական կամ իրավաբանական անձին որոշակի իրավունքներից զրկելու կամ նրա վրա որոշակի պարտականություններ դնելու մասին.

7) այն մասին, թե որ վարչական մարմնի իրավասությանն է վերապահված տվյալ հարցը:

Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցը մերժելու դեպքում վճիռ է կայացնում այդ մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125–րդ հոդվածի 6–րդ մասի համաձայն՝ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը վճիռ է կայացնում գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին, որը բովանդակում է հաշտության համաձայնության բառացի շարադրանքը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը:

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանելու դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված

դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտը իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական գործի վարույթը կարճելու հիմքերը՝ ամրագրելով, որ գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը կայացնում է որոշում: Միաժամանակ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածում ամրագրելով գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը չի դիտարկել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ: Օրենսդիրը սույն իրավակարգավորման շրջանակներում կատարել է ընդամենը մեկ բացառություն՝ ամրագրելով, որ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ՝ այդ դատական ակտը համարելով գործն ըստ էության լուծող դատական ակտի տարատեսակ:

Այսպիսով, օրենսդիրը, սահմանելով, որ գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը կայացնում է որոշում (բացառությամբ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով, որի դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ), միաժամանակ չի սահմանել, թե ինչպիսի դատական ակտ է հանդիսանում գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի երկու տեսակ՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ <<Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները>> վերտառությամբ 125-րդ հոդվածում գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ, նախատեսված չէ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը <<հետաձգված բողոքարկումն>> է: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում չի սահմանել, որ գործի վարույթը կարճելու որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում ամրագրելով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը՝ դրանց թվում չի նշել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, կարգավորելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ դրանով իսկ բացառելով դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, այսինչ, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական

իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքից:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի վարույթի կարճումը վարույթն ավարտելու ինքնուրույն ձև է, որն իր դատավարական ձևակերպումն ստանում է որոշման տեսքով, ուստի կարճելու մասին որոշումը կարող է բնորոշվել որպես վարույթը եզրափակող դատական ակտ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ և 97-րդ հոդվածների և ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը: Ավելին, վարչական գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե առկա է նույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքը: Համադրելով նշված հոդվածներով ամրագրված իրավադրույթները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշման կայացումը, օրենքով նախատեսված որոշ խիստ սահմանափակ դեպքերից բացի, արգելափակում է անձի՝ իր խախտված իրավունքների պաշտպանությամբ կրկին նույն հայցով դատարան դիմելու իրավունքի իրացումը և իր առաջացրած իրավական հետևանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին:

Համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ: Այս որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա իրավակարգավորումներով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին, նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, ՀՀ սահմանադրական դատարանն էական է համարում այն հարցադրումը, թե գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկելիության տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին**,** թե գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին բնորոշ իրավակարգավորումներին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշմամբ դատավարությունը՝ որպես այդպիսին, և վարույթը՝ որպես ընթացակարգ, ավարտվում են, որպիսի պայմանը բացառում է վարույթի հետագա վերսկսումը: Բացի դրանից, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր առաջացրած իրավական հետևանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Հետևաբար մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ և ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման

կանոններով՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և դրա կարևոր բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական բնույթը, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումները, գտնում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները և նպատակ ունենալով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում, արձանագրում է.

1. գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածին համապատասխան կայացված որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով,

2. գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերելի են (mutatis mutandis) խնդրո առարկա որոշմանը,

3. գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վարչական վերաքննիչ դատարանի կողմից կայացրած որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ վճռաբեկ դատարան՝ վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի՝ վճռաբեկության կարգով վերանայման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ գլխով սահմանված կանոններով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր կամ առ ոչինչ ճանաչել Կոմիտեի 13.08.2013 թվականի թիվ 1215455 ուսումնասիրության արձանագրությունը **(հատոր 1-ին, գ.թ. 2-5):** Բացի այդ, սույն վարչական գործով ներկայացնելով հակընդդեմ հայց՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 3.898.915 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 41-42):**

Դատարանի 17.02.2014 թվականի որոշմամբ սույն վարչական գործի վարույթը մասնակիորեն՝ Կոմիտեի 13.08.2013 թվականի թիվ 1215455 ուսումնասիրության արձանագրությունն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասով, կարճվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով **(հատոր 1-ին, գ.թ. 120-123),** իսկ Դատարանի 17.02.2014 թվականի վճռով Տեսչության հակընդդեմ հայցը բավարարվել է **(հատոր 1-ին, գ.թ. 124-129):**

Ընկերությունը Վերաքննիչ դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոք, որով բողոքարկվել է ինչպես Դատարանի 17.02.2014 թվականի վճիռը, այնպես էլ Դատարանի

նույն թվականի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> որոշումը **(հատոր 2-րդ, գ.թ. 8-11):**

Վերաքննիչ դատարանի 03.04.2013 թվականի որոշմամբ Դատարանի 17.02.2014 թվականի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> որոշման դեմ Ընկերության բերած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքով, այն է՝ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման: Իր այդ դիրքորոշումը Վերաքննիչ դատարանը, մասնավորապես, պատճառաբանել է հետևյալ կերպ. *<<(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> որոշումը հանդիսանում է միջանկյալ դատական ակտ, իսկ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն այն դեպքում, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված է փվյալ ակտի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը: Մինչդեռ, վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը նշված հոդվածով սահմանված չէ որպես բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ: Հետևաբար Դատարանի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> 17.02.2014 թվականի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ (...)>>* **(հատոր 2-րդ, գ.թ. 26-27):**

Գործի վարույթը կարճելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հնարավորության և դրա իրացման իրավական կառուցակարգի մասին վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու ՀՀ վճռաբեկ դատարանի առաքելության պատշաճ իրացման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանի 17.02.2014 թվականի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> որոշումը չի կարող համարվել բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ: Սույն գործով դատավարության մասնակիցները պետք է հնարավորություն ունենան վիճարկելու այդ որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյանում՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է, և գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքից: Այլ կերպ ասած՝ սույն գործով դատավարության մասնակիցներին չի կարելի զրկել Դատարանի 17.02.2014 թվականի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն ունի Դատարանի 17.02.2014 թվականի <<Վարչական գործի վարույթը մասնակի կարճելու մասին>> որոշումը Վերաքննիչ դատարանում բողոքարկելու իրավունք, որը վերջինս արդեն իրացրել է՝ Վերաքննիչ դատարան ներկայացնելով համապատասխան վերաքննիչ բողոք:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքով Ընկերությունը չի բողոքարկել այնպիսի դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման, քանի որ դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը, և տվյալ անձը պետք է այդ դատական ակտի օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորություն ունենա: Հետևաբար տվյալ դեպքում առկա չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքը, և Վերաքննիչ դատարանի 03.04.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին>> որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150–152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.04.2014 թվականի <<Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին>> որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սփորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սփորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6478/05/14
Նախագահող դատավոր՝ Հ. Բեդևյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/6478/05/14**
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի հուլիսի 27-ին

քննարկելով վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.01.2015 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Անահիտ Եփրեմյանի ներկայացուցիչ Նարեկ Ներսիսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Անահիտ Եփրեմյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության՝ ՀՀ կառավարության 20.11.2008 թվականի թիվ 1405-Ն որոշումը մասնակիորեն՝ Երևանի Տիգրան Մեծի պողոտա թիվ 15 հասցեի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Դարբինյան, դատավորներ՝ Ա. Թովմասյան, Ա. Ծատուրյան, Ռ. Խանդանյան, Ա. Միրզոյան) 26.11.2014 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է հայց ներկայացնելու ժամկետը բաց թողնված լինելու և այն վերականգնելու միջնորդության բացակայության հիմքով:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) (նախագահող դատավոր՝ Ա. Դարբինյան, դատավորներ՝ Ա. Թովմասյան, Ա. Ծատուրյան, Ռ. Խանդանյան, Ա. Միրզոյան) 16.12.2014 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժվել են:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.01.2015 թվականի որոշմամբ Դատարանի 16.12.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Անահիտ Եփրեմյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Եփրեմյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը, 39-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, 133-րդ հոդվածը, 137-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վարչական դատարանը չունի վերաքննության լիազորություն, այդ լիազորությունը պատկանում է վարչական վերաքննիչ դատարանին:

Բացի այդ, վերաքննության իրավունքը միևնույն դատարանին վերապահելը չի նպաստում իրավունքի զարգացմանը, քանի որ սահմանափակում է վերաքննության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունը: Տվյալ դեպքում իրավունքի սուբյեկտը զրկվում է գործի քննության օբյեկտիվությունից, անաչառությունից, արդարադատության իրականացման հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքը բերվել է դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման դեմ, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի չէր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 23.01.2015 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության մասին Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանը համարում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով նույն դատարանի կողմից վերանայման ենթակա լինելու մասին իրավակարգավորումը համապատասխանում է բողոքարկման իրավունքի գործնականում իրացմանն ուղղված օրենսդրական կարգավորումների համակարգային տրամաբանությանն ու իրավաչափ նշանակությանը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորվածությունը և լիարժեք իրացման պատշաճ կառուցակարգերի

անհրաժեշտությունը, ինչպես նաև դատական պաշտպանության ինստիտուտի էության ու բովանդակության, դրա օրենսդրական կարգավորման արդյունավետության ու սահմանադրականության հնդիրների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ–719 և 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ–780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:

ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ դատական օրենսգրքի 35–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը: Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ վարչական դատարանիդատականակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

ՀՀ դատական օրենսգրքի 39–րդ հոդվածի 1–ին մասի 1.1–րդ կետի համաձայն՝ վարչական վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է վարչական դատարանի կայացրած դատականակտերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

12) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

13) հայցադիմումը վերադարձնելու մասին.

14) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

15) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

16) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

17) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

18) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

19) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

20) նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

21) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

22) ինքնաբացարկի մասին դատական ակտերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերն ուղարկվում են վերաքննիչ դատարան: Բողոք բերողը վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է դատավարության մասնակիցներին, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած վարչական դատարան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի համաձայն՝ նույն գլխով նախատեսված գործերը, ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին:

Օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովել Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության հիմնարար սկզբունքների գործնականում իրացումն իրավակիրառ պրակտիկայում, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանել է, որ ՀՀ իրավական համակարգում օրենքները, ոչ միայն պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, այլ նաև չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին: ՀՀ սահմանադրական դատարանը, իր 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192 որոշման մեջ անդրադառնալով օրենքների՝ Սահմանադրական դատարանի որոշումներին համապատասխանելու իրավական խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության և արդյունավետության հիմնախնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներով, Կոնվենցիայում և միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է

պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունն ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Սակայն դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի

կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում սահմանված է դատական եռաստիճան համակարգ, որը գործում է դատական ներհամակարգային աստիճանակարգության հիման վրա, ինչը ենթադրում է վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայման հնարավորություն:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական արդարադատության բնագավառում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները, ՀՀ դատական օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական դատարանի և վարչական վերաքննիչ դատարանի կառուցվածքային առանձնահատկությունները և գործառութային հատկանիշներն ու հնարավորությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է նաև Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի իրականացման կարգը և պայմանները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131–րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Բողոքարկումն այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը <<հետաձգված բողոքարկումն>> է: Նախատեսելով, որ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերվում է վարչական վերաքննիչ դատարան, միաժամանակ, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ օրենսդիրը նախատեսել է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով:

ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 1–ին մասն ամրագրում է, որ ՀՀ իրավական համակարգում ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենսդիրը, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ նախատեսելով բացառություն, կարգավորել է բացառապես երկու հարց. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննող մարմնի, ինչպես նաև այդ մարմնի կազմի հետ կապված հարցերը: Իսկ մի շարք այլ կարևոր հարցեր, ինչպիսիք են վերաքննիչ բողոքների քննության կարգը, այդ բողոքները քննելու ընթացքում վարչական դատարանի լիազորությունները, բողոքների քննության արդյունքում ընդունվելիք ակտերի հնարավոր տարբերակներն առհասարակ կարգավորված չեն: Այսպիսով, օրենսդիրը նախատեսելով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը վարչական վերաքննիչ դատարանում անմիջականորեն բողոքարկելու իրավունքը, վերապահում է կատարել նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքների հարցում, միաժամանակ, չկարգավորելով թե ինչ ընթացակարգով է վարչական դատարանը քննելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները:

Սույն գործով քննության առարկա հարցը դիտարկելով ՀՀ սահմանադրական դա-

տարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վարչական վերաքննիչ դատարանում բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունը, ինչպես նաև նմանատիպ գործերով վարչական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքների քննության և լուծման որևիցե ընթացակարգ և/կամ լիազորություն նախատեսված լինելու բացակայությունն արգելափակում է ոչ միայն դատարանի մատչելիության իրավունքը, այլև անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտը բողոքարկելու իրական հնարավորությունից: Երկրորդ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ բացառություն նախատեսելիս ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրը բավարար հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ օրենսդրական կանոնակարգումները զարգացնելու առումով, ինչպես նաև չի ապահովել իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, ճշգրտության և կանխատեսելիության որակները: Երրորդ՝ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությանը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները կամ դրանց գործնականում իրացման արգելք հանդիսանալ: Ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորումը, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում Վճռաբեկ դատարանը հատուկ կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և գործնականում կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքության համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերադաս դատական ատյանում բողոքարկման իրավունքի երաշխավորումը կընդլայնի դատական պաշտպանության արդյունավետության և օբյեկտիվության նկատմամբ հանրային վստահությունը, կապահովի խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը, թույլ կտա վերադաս ատյանի դատարանին վերացնել ստորադաս ատյանի թույլ տված դատական սխալները, ուղղված կլինի վերադաս դատական ատյանների մատչելիության ապահովմանը և կնպաստի դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությանը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական բողոքարկման իրավունքը վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է, որը հետևողականորեն պետք է իր արտացոլումը գտնի իրավակիրառ պրակտիկայում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորումը չի համապատասխանում ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև չի համապատասխանում իրավական որոշակիության, ճշգրտության և կանխատեսելիության պարտադիր որակներին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ գլխով նախատեսված վերաքննիչ վարույթի հստակ կանոնակարգման պայմաններում նույն օրենսգրքի 196-րդ հոդվածում առկա իրավակարգավորումն իր տրամագծո-

րեն հակառակ կարգավորմամբ արգելափակում է դատարանի մատչելիության իրավունքը՝ անձին ոչ իրավաչափորեն զրկելով դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտը վերադաս դատարանում բողոքարկելու իրավունքից:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության հիմնարար սկզբունքները, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումները և նպատակ ունենալով բողոքարկման իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում, արձանագրում է.

1. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով՝ վարչական վերաքննիչ դատարան,

2. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները ենթակա են քննության և լուծման վարչական վերաքննիչ դատարանի կողմից կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով,

3. նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկումն իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար սահմանված ընդհանուր իրավակարգավորումներով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերելի են խնդրո առարկա որոշմանը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 23.01.2015 թվականի որոշմամբ Դատարանի 16.12.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ամահիտ Եփրեմյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքով, այն է՝ բողոքարկվել է այն դատական ակտը, որն ընդդատյա չէ վերաքննիչ դատարանին: Իր այդ դիրքորոշումը Վերաքննիչ դատարանը, մասնավորապես, պատճառաբանել է հետևյալ կերպ. *(...) նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և լուծում է վարչական դատարանը, ուստի Ամահիտ Եփրեմյանի վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման (...)* **(գ.թ. 53-54):**

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության մասին վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու ՀՀ վճռաբեկ դատարանի առաքելության պատշաճ իրացման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Դատարանի 16.12.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը չի կարող համարվել վերաքննիչ դատարանում բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ: Սույն գործով դատավարության մասնակիցները պետք է հնարավորություն ունենան վիճարկելու այդ

որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյանում՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է, և նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտի բողոքարկման իրավական հնարավորության բացակայությունն անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտը վերադաս դատական ատյանում բողոքարկելու իրավունքից: Այլ կերպ ասած՝ սույն գործով դատավարության մասնակիցներին չի կարելի զրկել Դատարանի 16.12.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Եփրեմյանն ունի Դատարանի 16.12.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը Վերաքննիչ դատարանում բողոքարկելու իրավունք, որը վերջինս արդեն իրացրել է՝ Վերաքննիչ դատարան ներկայացնելով համապատասխան վերաքննիչ բողոք:

Վերը նշված վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Անահիտ Եփրեմյանի կողմից կատարված գործողությունները (վերաքննիչ դատարան՝ Դատարանի 16.12.2014 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու տեսքով) չի կարելի որակել որպես այնպիսի դատական ակտի բողոքարկում, որը ենթակա չէ բողոքարկման, քանի որ տվյալ անձը վերադաս դատական ատյանում այդ դատական ակտի օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու իրավական հնարավորություն պետք է ունենա: Հետևաբար քննարկվող պարագայում առկա չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքը, և Վերաքննիչ դատարանի 23.01.2015 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարան

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.01.2015 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 53 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 700:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում
ՀՀ, Երևան, Արշակունյաց 2:
Հեռ.՝ (374 60) 623-288, 623-219
Էլ. փոստ՝ info@tigran-mets.am